

ՀԱՆԴԻՍ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ԵՒ

ՊԱՏՄԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐԲ.

ՄՈՍԿՈՒԱ.

ՋՈՒԼԱՐԱՆ ԵՒ ՏՊԵՐԱՆ Օ. Օ. ՀԵՐԲԵԿ.

1889.



Ս. ԷՐՄԷ

ՃԱՐԱՅԱՐԱՂԻ

10

ԷՄԻՆԵՆՏ

Дозволено цензурою. С.-Петербургъ, 26 Августа 1889 г.

Ս. ԷՐՄԷ

Ս. ԷՐՄԷ

Ս. ԷՐՄԷ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

I. ՄԻ ԿՏՈՐ՝ հանած իմ տպելու պատրաստ աշխատասիրութիւնից, Պ. ՊՌՕՇԵԱՆՆՅ	1
II. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ	11
III. ԾԵՐ ՄԱՐԿՈՍԸ, պատկեր. ԼԷՕ	20
IV. ՎԵՐՋԻՆ ՓԱՓԱԳ, բանաստեղծութիւն. Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆ	42
V. ԿԱՃԵՏԱՅ ԾՌԵՐ, լիշողութիւն. Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆ	43
VI. ԸՆԿԵՐ ԻՄ, բանաս. Նադսնից, Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ	66
VII. ՀԱՍՕ, պատկեր. Գ. ՉՈՒԻՍՐ	67
VIII. ԵՐԵՔ ԱՐՄԱԻԵՆԻ, բանաս. Լերմոնտովից. ԳԱՄԱՌՔԱԹԻՊԱ	123
IX. ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ. ՍՕՆԷՏ. ԻՆՉՊԷՍ ՔԱՂՅՐ ԵՐԱԶ, բանաս. Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ	126
X. ՊՈՅԵՏ, բանաս. ԱՂ. ԾԱՏՈՒՐԵԱՆ	129
XI. ՀԱՅԻ ՃՈՒՏ, երգ. ԱՇԸՂ ԶԻՒՄՆ	130
XII. ԵՐԵՔ ԶՐՈՅՅ I. Վախկոտ. II. Գիւղի մուրացկան. և III Զինուոր Դիւրբիւի, Գիւի ղը-Սօպասանից. ԱՂ. ԾԱՏՈՒՐԵԱՆ	131
XIII. ԵՐԳ, բանաս. ՆժԴԵՀ	165
XIV. ՄԵՐ ԴԱՇՏՆ ՈՒ ՀՈՎԻՏ.... բանաս. Գ. ԲԱՐԻՍՈՒԴԱՐԵԱՆ	166
XV. ՍԻՐՈՅ ՎՇՏԵՐ. ԶԱՐԱՏԱՆԶ ԶՈՀ. ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻՆ (Հայնէից), բանաս. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ	168
XVI. ԼԱ՛Ի ԲԺՇԿԵՅԻՆ, պատկ. ՆԱՐ-ԴՈՍ	172
XVII. ՊՕԷՏ ԵՒ ԱՍՏՂԵՐ. ՍՊԻՏԱԿ ԶԳԵՍ. բանաս. Թարգ. Ս. ԹԱՆԴԵԱՆ	204

XVIII.	ԱՐՁԱԳԱՆՔ. ՏԱՃԿԱ. - ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅՔ, <i>բանաս.</i> <i>Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ</i>	210
XIX.	ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ, <i>Յր. Բո-</i> <i>ղենշտէղտից. Յ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ</i>	214
XX.	ԹԷ ՈՎՔԵՐ ԷՒՆ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՅ ԵՒ ՆՈՅԱ ԺԱՄԱ- ՆԱԿԱԿԻՅ ՀԱՅ ՍԵՐՆԴԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԸ, <i>ԼՕՐԴ.</i>	245
XXI.	ԵՐԿՈՒ ԽՕՍՔ. ՅԱՌԱՋԱԲԱՆ, <i>Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ</i>	260
XXII.	ԱԶԳԱՑԻՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ. ԼԱՊՏԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ. <i>Ս. ՆԱԶԱՐԵԱՆՅ</i>	276
XXIII.	ԱՐԿՈՂԴ ԸԶԼՈՅԱՆ... <i>Գ. ԵՊ. ԱՅՎԱԶԵԱՆ</i>	288
XXIV.	ՅՈՒՑԱԿ ՍՏԱՅԵԱԼ ԱՂԽԻՑ... <i>Մ. ԹԱՂԻԱԴԵԱՆ</i>	289
XXV.	ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ— <i>Տեղեկութիւն ի զիրս պատմու-</i> <i>թեան Ստեփանոսի Տարօնեցոյ, Աստղիկ կոչեցելոյ. Ն.</i> <i>Ն. ԲԻԻԶԱՆԴԵԱՆ</i>	291
XXVI.	ԲԱՆՔ Ի ՊՕՂՈՍ ԿՐՕՆԱԻՈՐԷ, <i>Ղ. Վ. ՓԻՐՂԱԼԷ-</i> <i>ՄԵԱՆ</i>	333
XXVII.	ԱԶԴ. ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.	335

I.	ՎԱՐԺԱՊԵՏ, <i>պատկեր</i> } <i>ԱԽՏԱՍԵՐԿԵԱՆ</i>	1
II.	ՎԱՐԹԷՎՕՐ, " }	14
III.	ՍԱՏԱՆԱՑԻ ՕԶԻԼ, <i>պատկեր</i> } <i>ՍԻԿԼԻԿ</i>	33
IV.	ԽՕՌԹԼԱԽ, " }	55
V.	ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.	63



ՄԻ ԿՏՈՐ՝

ՀԱՆԱԾ ԻՄ ՏՊԵԼՈՒ ՊԱՏՐԱՍ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆԻՑ:

.... Քրդերի վրանները վայր էին թողած հինաւուրց Արագած լեռան թմբանը՝ Զրոչըս կոչուած ջրվէժի ձորի զլինին:

Փոքրիկ զեասիր, որ ուռզում է ոչ միայն մերձակայ Ղաչաֆար գիւղի, այլ և Աբարանու դաշտի մի քանի գիւղերը, նաև օձապտոյտներ տալով, ձորակներ ճղելով, դաշտերով սլանալով, պահպանում է Արագածի արևելահարաւային ստորտտի մարդաբնակութիւնը, այդ փոքրիկ զեասան, ասում եմ, իւր յիշեալ ջրվէժով մի գեղահարաշտեասարան է ներկայացնում:

Մօտ 300 օսնաչափ բարձրութիւնից քարափի սրածայր և խորդ ու բորդ վերջաւորութիւններից դէպի անդունդը էլ ջուր չես տեսնում, մի ծուխ կամ գոլորշի բռնած ունի ձորակը և այդ մի կտոր տեղից չի հեռանում: Այդ ծուխը, այդ ամպը ոչ այլ ինչ է, եթէ ոչ գետակի ջուրը, որ սասակութեամբ գահավիժուելով բարձրիցը՝ ցնդում է օդի մէջ և մանր հիւլէներով փոշիանում, նորից մեղմօրէն ցած իջնելու, ջուր դառնալու և գետակի փոխուելու համար: Հազարերանգ են այդ ջրային հիւլէները, աչքը չի կշտանալ բնութեան այդ խաղին նայելով. արեգակի ճառագայթները ներս են թափանցում ջրի փոշիացած ամենամանր մասնիկների մէջ և ամէն մի աննշան կտորին մի նոր գոյն են տալիս, գոյն՝ որ գեո. մարդուս հանձարն

անկար է դանուել նմանը գանել, կամ անուեն տալ: Ես չգիտեմ, օրը քանի քանի այցելուներ և տուրիստներ կրգային այդ բանաստեղծական վայրն ուխտ անելու, քանի՞ արկածախնդիր նկարիչների վրձիններ կրգործէին, գոնէ, մի մասն իւր բնական գոյնով և գեղեցկութիւնով թղթի կամ պաստառի վերայ առնելու և նորանով գեղարուեստասէր միլիոնասէրերից իւրեանց կեանքի սպահովութիւնը միանգամից դուրս կորզելու, բայց կրակարանային, բայց չէին գանիլ գործնական կեանքի մէջ այն աչք շացնող գոյները:

Վայրենի Քուրդը, Զօբանքարեայ կոչուած Ղաջար թաթարների ցեղը, որոնք իւրեանց կեանքը շարունակ անպատանդութեամբ են անց կացնում և բացի ոչխարապանութիւնից և անասունից ուրիշ բանից զուսները դուրս չի գալիս, որոնք տարուայ կէս մասն Արագածի վերայ են թափառում, նորանք էլ ոչխարն արօտի թողած՝ ժամերով նստում են այդ ջրվէժի ձորաբերանին և բերանները բոց շուարածի պէս անհուն տարածութեան վերայ փռուած ամպակոյտին նայում, մանաւանդ եթէ քարի գլխին ցցուել է հովիւն ու իւր սնդի ներդաշնակ դայլայլիկը միտխառնել ջրվէժի խուլ և մեղմ մեղեդու հետ:

Ուրիշ ո՞վ կայ հապա բացի Քրդից և Զօբանքարից այդ հրաշալի բնութեան պարզեւր վայելող, կրհամարձակի՞ արդեօք տեղացի չայր յառաջ գնալ դէպի իւր արտի գլուխը, ուր որ ջրվէժն է, կրվատահանայ իւր գառն ու մաքին քշել դէպի այն անմահական ջուրը: Աւելորդ է, թող նա չըմտածի և չերայլի այդ երջանկութեան հասնել, քանի Քուրդն ու Զօբանքարէն սարի վերայ են: Առածը շատ ճիշտ է ստել, անասուի ազնիւ պտուղն արջերը կուտեն, Քուրդն ո՞վ, բնութեան այսպիսի պարզէն ո՞վ, Քուրդն ո՞ւր, Արագածն ո՞ւր, աշխարհն ո՞ւմը, լեռնն ո՞ւմը, վերան արածող անհամար ոչխարն ու անասունն ո՞ւմը: Այն մեծանխտ սարը, որ մի երեսը գէմ է տուել Փամբակու և

Ծագկոցածորի պղնձաւէտ և մարմնաշատ լեռներին, միւս կողմից աչք չի հեռացնում Բաղրատունեաց մայրաքաղաքի աւերակներիցը, որի տականջները տարին 12 ամիս լսում են շայի սրբավայրի սուրբ Էջմիածնի տաճարից առ Վերնային Տեսութիւնն ուղղուած սաղմոսերգութիւնները, այն սարն այսօր վայրադ Քրդերի և մարդակեր Զօբանքեարի սեպհականութիւնն է դարձել: Այն հիւթալից խոտը որ մի ժամանակ Անեցւոց ու Նիրակեցի հայերի ձմեռն անց կացրած՝ դարուն ընկած կաթնատուններին է զիրացրել և սպիտակափայլ ատամները ոսկեգօծել, այսօր Քրդի ու Զօբանքեարի ոչխարի ու տաւարի գինն է բարձրացրել: Եւ իրաւամբ, որ ոչխարն այնքան համեղ և սննդարար միս կունենայ, ինչպէս Արագածի վերայ արածողը: Թէ մարդ ես, խաբիր փորձառու մտադործին, որ լեռնից կամենաս, քշիր քո հօտը և երգում-կրակ անելով՝ հաւատացրու, թէ Արագածի վերայ արածողներին է բաւական է, որ մի անգամ ոչխարից ատամներին մտիկ տայ և ահա քո սուտը լոյս ցերեկի նման երևան կըզայ: Մեր երկրում խաբիր կամ ուրիշ խոսք միայն Արագածին է պարզե տուած ի վերուստ, այդ խոսի շնորհիւն են ոսկի ատամները, այդ խոտի ոյժն է մնին համ տուողը: Ես չըզիտեմ, ասում են՝ շատ բնագէտներ քննել և չեն կամեցել հաւատալ, թէ խոտով և ոչ իսկական ոսկւով են ոսկեգօծած Արագածում արածած ոչխարների ատամները:

Այս ոսկու դոյնն, այս խոտի ծաղկի հոտն է, երևի, որ կաթի մէջն ևս անց է կենում: Արագածի իւղի դեղնութիւնն և համը ոչ մի իւղ չի ունենում, բաւական է, որ իւղ սիրող ճաշակի աէր մարդը հաւաստիանայ, թէ ծախուածը Արագածի ծաղկի իւղ է և նա մէկին երկու կրվճարի ու ձեռքից չի թողնիլ:

Չեմ ասում, թէ Հայեր չլիան Արագածից շահուող մերձակայ Նիրակը, Աբարանը և Թալինը իւրեանց գիւղե-

րոմն յատուկ ամարանոց ունին Արագածի վերայ, բայց որ նոքա իւրեանց սեպհական հողի վերայ միշտ ճնշուած ու Հարստահարուած են:

Զմեռը չես գանիլ այդ անկոչ հիւրերին. Բրդի ու Զօբանքեարի ուժից վեր է տանել Արագածի խստութիւնը և դառն եղանակները. քանի մի գազաչափ ձիւնը ծածկում է այն սքանչելի տեսարանները և անմատչելի ու անհնար է անում լեռան թմբանն ապրելու. հարածուում են Քուրդն ու Զօբանքեարէն դէպի Արարատեան գաշափ տաք տափաբակը: Արագածի ստորոտումը կան միշտ և մնում են իւր բնիկ որդիքը՝ Նայերը:

Գարնանը ձորերի և խորխորանների միջից դեռ ձիւնը ի սպառ չըբարձուած, ձիւնը հալուած անգերումն երեք օրուան մէջ նոյն գեղադէշ տեսարանն է յոռաջ գալիս: Եւ ահա սկսուում է թափառական վրանաբնակների շուն: Միմեանց քամակից երկու շաբաթի չափ շարունակ գալիս են Քրդերի և Զօբանքեարանների խուժանը և իւրեանց տեղերը բռնում: Քանի տաքը սաստկանում է, նորանք լեռը բարձրանում են. յուլիս ամսի վերջին հասնում են նոքա Արագածի երկձիղի կատարը:

Ոչ միայն Սեարանցիների և Նիրակեցիների սրտերն են թունդ ու դող ընկնում այդ վայրենիների երևելովը, այլ և նոյն գիւղերինը, որտեղից բարբարոսների այդ հրոսակները չուելուս անց են կենում: Մէկ էլ տեսար գատարի ունեցան Մասեաց ստորոտուս գանուած Քրդերի և սուրբ Իջման տաճարի հանդի հարևան և հանդը աւերիչ Զօբանքեարանների ձմերոցները, այն գեանափոր մկան ու աղուէսի ծակերը, ուր ձմեռուան բերանին Արագածից դառնալովներս էին թափուէլ անասուններից ոչնչով չըզանազանող այդ երկոտանի գազանները: Պէտք է խոստովանած, Զօբանքեարի բնակարանը առաւել յարմար և վայելուչ է Քրդի գեանափորից:

Կով, կզն, ուղտ, էջ, ձի, բոլորը բարձուում են մի մի կապերա համեափ փոխարէն վրաները ծածկած: Մէկի վերայ եղեգնեայ արաշուխի կամ վրանի փէշերքն են բարձած, միւսի վերայ երկար վրանասախներն են, ամբողջ տան կահ կարասիքը, որ գոյանում է մի քանի չուլ ու փալասից, մի երկու մեծ կաթսաներից կաթը կորացնելու համար և մի փայտէ կամ խեցի խնոցուց: Մի երկու օրուան պաշար՝ կորեկի կամ գարու ալիւր հազիւ թէ նշմարվում է մազէ տոպրակների կամ ոչխարի պարկի մէջ:

Մեծ ու փոքր, ծեր ու երիտասարդ, տղայ ու աղջիկ, որոնք քայելու ոյժ ունին, մի մի փայտ ձեւքներին, առաջ են վարում անասուններին:

Եթէ կամենում ես Քրդի ու Չօբանքեարի կանանց զարգ ու զարգարանքը, պճնասէր հարսների պաճուճանքը տեսնել, վեր կաց վաղ առաւօտեան և մի գիւղի ափին կանգնիր: Ահա փայտը ձեռքին ոչխարն առաջ արած՝ քշում է Քրդի ջահէլ հարսը օտից գլուխ կարմիր խամ խալաթի մէջ կորլուած. նորա լայն և առաջը բաց կարմիր ջո-Քոյէ քղանցքը յետ են գնացել և տակնուց երևեցնում են նոյնպէս կարմիր, կանաչ կամ դեղին գունով շապիկն ու կարմիր շերտ վարաիկը, քրդուհու գլուխը սրածայր լեռան կատարի նման զոյնզոյն մետաքսեայ թաշկինակներ են փաթաթած առանց ճաշակի:

Քրդուհին հակապատկերն է իւր դրացի Հայ և թուրք կանանց, նա չի ծածկում իւր երեսն, քիթ ու բերանը, նա ազատ համարձակ խօսում է ամենքի հետ:

Խոշոր և կոպիտ, արևակէց է նորա բաց և հաստ երեսը, բայց բնութեան այդ անտաշ զաւակը գեղեցիկ տիպ ունի. մարդիս չեն զբաւում Քրդուհու մինչև փորը բաց կուրծքն և նռան նման երևեցող ամուր ստիկքը, կամ մինչև ծունկը վեր բարձրացած մերկ և հաստ ոտքերն ու սրունքը. երիտասարդին այրում են քրդի հարսի թանձր և սև յոյքերը,

երկայն և խիտ արտեւանունքը և սաթանման թուխ աչքերի խոշոր և փայլուն բիբերը մանաւանդ եթէ նա արհեստական կերպով սև գեղով ներկել է իւր աչքի կոպերը շատ վայելում է Քրդի նորատի կնոջը կամ աղջկանը արծաթեայ կամ պղնձեայ դինար, որ ցցած ունի իւր քթի ծայրին, քաղաքակրթեալ երիտասարդին սրտախաշ՝ դէպի ինքն կրդրաւի քրդուհին իւր արիննախաշ այտերին և լայն ճակատին շինած խայերով, իւր ծամերի ծայրերին իբրև աւելորդ զարդ հիւսած բրդեայ գունաւոր երկզով:

Բոլորովին ուրիշ սպաւորութիւն են անում նայողի վերայ Զօբանքեարի ջահել աղջիկն ու նորահարսը: Առաջինը երեսը բաց, կարմիր կամ ծիրանադոյն մետաքսեայ թաշկինակը յեա է կապել իւր ճակատին և ծայրն իւր երկայն հիւսած ծամերի վերայով թիկունքից փայր թողել. նա հագել է կանաչ կամ կարմիր մետաքսեայ կարճ արխաւուղը՝ կուրծքը բաց, որպէս զի երեւցնի նորա տակից դեղին մետաքսեայ մինչև ծունկը երկայն ոսկեթել ծուպերով կարած շապիկը՝ ամբողջած սպիտակ փղոսկրեայ պարանոցի առաջի կողմից մի հատ ոսկէ կոճակով, որպէս զի մի մասնաջափ յեա բացուած մարմարոնեայ լուսանման կրծոսկրը երեւցնելով՝ խաշի հարեանի խզիթ-տղամարդ՝ երկու երեք մարդու միւս աշխարհքն ուղարկող, կէս գալ երկայն և ձեռնաչափ լայն խանչալը կապած տաւարը քշող որդու սիրտը, որ մի օր գայ իրան փակցնի ու կին շինի:

Զօբանքեարի աղջիկը ոտքով չի գնում չուելիս. նա իւր նագելի հարսի՝ իւր եղբօր ամուսնու հետ բազմել է արքայավայել կերպով ուղտին բարձած անկողնով լեքը մտփրաշի վերայ ծալապատիկ և այն տեղից սևեռում է իւր խաժանին աչքերը դէպի սրտի ուղած կէտը:

Օրիորդի չափ ազատութիւն չի վայելում ամուսնացած նորատի տիկինը, նա մի քանի շղարշներով ծածկած ունի իւր գլուխն ու երեսը: Սյս գոյնգոյն քօղերովն և մինչև

պորտը կարճ կարմիր մետաքսի շապկոմն ու լայն դեղին զանաւուզ վարտիկոմն է գանազանվում իւր հետ բարձա-
կից օրիորդից: Մի զբարձութիւն և հեշտութիւն է պատ-
ճառում հեռուից նայող երխտասարգին ուղտի վերայ բազ-
մոդների գրութիւնը. ահա նոքա ուղտի քայլավորների
քմահաճութեամբ կորացրին իւրեանց գաւաին ու փորը
և նորից բնական լիրք ստացան. այդ ժամանակն օրիորդը
զբաւիչ է իւր ծածանող կզակոմն, իսկ տիկինն իւր բաց
ու խուփ լինող ձիւնանման փորոմն ու թիկունքով:

Ոչ պահաս իւր վերայ բազմաճներից զարդարուած է
զոզարիկ բեռը կող շառ ուղտը, նորա երասանակը մա-
նուած և կարմրագոյն թելերից հիւսուած՝ զլիսն էլ մի
փնջած բրդեայ ծոպաւոր փունջուխ՝ բաժինք է բերել իւր
վերայ նստած նորահարսը, նոյնպիսի փնջուր էլ կախուած
են համեաի երկու կողմից և պարանոցից՝ մօտն էլ մի մեծ
զանգակ զօզանջերով՝ միւս ուղտերի նախանձն է շարժում:

Բայց զուր կնք ոգևորուում այդ մի քանի խաբուսիկ
երևոյթներով, այժմ աչքներս դարձնենք դէպի մազէ խա-
լարները, որ բարձուած են եզների և իշանոց վերայ.
ինչքան պէտք է գարմանանք, լսելով չուայների միջեց
ծծկեր լամուկների (քրդի երեխաների) սուր և ճշլի վնդըս-
տոցները. զգուելի, քան թէ ցաւալի է թուում տեսնել
այն թշուառ, ախտոտ ու փախքոտ երեսները, այն ճագոտ
աչքերը, որ ճագասցրած՝ այս ու այն կողմն են նայում:

Հաղար էլ թող ճչան ու մղկտան այն սպազայ աւա-
զակներն ու կանկապո- (քրդի կնացու) էզերը, նորանց
լսող չի լինել, թեռի (տոպրակի) միջեց հանող չքիայ, մինչև
որ նշանակեալ իջևանը չըհաննեն:

Շատերին, կարծեմ, անհաւատոալի կըթուի, մանաւանդ
Բուրդ ու Չօրանքերաց չքաննողներին, եթէ ասեմ, որ
այդ սուր ճիչ ու ազազակ հանողները երեխաներ են, որոնք
դեռ չեն օանաւորուել, կամ թէ երկար ճանապարհ չեն

կարող զնալ. ամէն մի պարկի մէջ շորս հոգի միասին լըրած, գլխները դուրս թողած, բեռն արած, բարձած են անասունների վերայ: Դիմա քեզ եւ թողնում երևակայել, թէ ի՞նչ մաքրութիւն կրչինի, եթէ իջեանումը ջուարների բերանները բանաս ու դուրս թողնես այդ մարդի՞, թէ խողի ճուտերին: Չուր կայ իջած տեղը, չըկայ, մի և նոյն է, նորանց անմաքրութիւնները խրեանց վերայ չորանում է՝ կրկին ախտոտուելու համար, նորանց լուսցող չըկայ. Քրդի կամ Զօբանքեարի մօր շատ հոգսը չէ իւր զաւակի անմաքրութիւնը, նա մաքրակենցաղութեան վերայ զաղափար չունի. ինչպէս ասացի, չըպէտք է խարուենք Զօբանքեարի աղջկանց և հարսների արտաքլին փայլեց. մանաւանդ, որ մենք ծանօթացանք հարուստ դասակարգի հետ, աղքատն ամէն տեղ աղքատ է և ախտոտ:

Քուրդը հօ էլ մի հարցնիլ, նորանից մաքրութիւն մի պահանջել. նորանցն այն է, որ եկան, իջան մի տեղ, իսկոյն ոչխարը կթեն ժանդոտ կաթսաների մէջ, տաքացնեն ու պանիր անեն մերձակայ գիւղերումը ծախելու համար, և հէնց այդ անմաքուր Քրդի կանանց մէրած պանիրն է, այն հնադարեան անկլայեկ կաթսայի մէջ մերան տուած պանիրն է, որ մեզ համար թանգ և զնահատելի է, Քրդի պանիրը դոված է, մենք հասկացողութիւն անգամ չունենք, թէ ի՞նչ անօթների մէջ են շինուում, ի՞նչ ձեռներ են շարժուում կաթի մէջ պանիրը կտրացնելուս, ապա թէ ոչ բերաններս չէինք զնիլ, ապա թէ ոչ մեզանից շատերը մագաժաժ կըլինէին, զեզները կըզար, կուխտէին յաւիտեանս պանրի ճաշակը չառնել, միայն թէ Քրդի պանիր չուտին: Այո, Քուրդը այս ազնուութիւնն ունի, որ պանրացու կաթի սերը չի քաշել, արաժանը վերան կըմերի, իսկ անիրաւ Զօբանքեարէն կամ Ղաջար թաթարների ու պարսիկների միւս ցեղերը մինչև տասն անգամ կաթի երեսը չքաշեն, պանրի մերանը չեն տալ:

Բայց ո՞ր տեղից են ճարուժ վառելիք, կրհարցնես ինձ անշուշտ, ընթերցող, այդ չուողները, մեզ յայտնի է, որ ճանապարհին անտառ չըկայ. մի՞թէ բերում են իւրեանց հետ, որ իջնելուն պէս սկսում են ամէն գերդաստան մի մի տեղ կրակ վառել, կաթը տաքացնել, կամ սև ալիւրից մի քանի բուռը ջրի մէջ շաղախել, երկաթի բովը կրակի վերայ տաքացնել, խմորը տափակացնել, բովի վերայ խանձել ու իրար ձեռքից յափշտակել և լափել, քան թէ ուտել:

— Ո՛չ, չուողները ոչինչ պաշար չունեն՝ ոչ վառելիքի և ոչ ուտելիքի, մեր աշխարհքն էլ անտառազուրկ և խոպան դաշտերի ընդարձակութեամբ է նշանաւոր: Չուողները գիտեն, որ աշնանն իւրեանք այդ տեղով անց են կացել, ուրեմն և իւրեանց անասունների աղբերը այժմ չորացած կրգտնեն: Էնց ինչպէս իջան, միջմի նման կանայք ու երեխայք բոկոտն և պատառուն ցնցոտիներով դաշտի երեսն են սփռուում և չորացած քակոր, կամ Բլիւն են ժողովում, կամ թէ մերձակայ գիւղերի այգիներն են քարուքանդ անում, ծառերը կոտրատում և վառում:

Ձմերոցներից մինչև Սրագած հասնելը երկու երեք շաբաթ է տևում և այդ կարճ միջոցումը, այդ մորեխները, այդ ապականիչ ու աւերիչ լաճուկ ու լակոպները մեր գիւղերը կիսաքանդ են անում, մեր արտերը ոտնատակ են տալիս. դեռ Քրդի ոչխարն ու տաւարն այնքան վնասներ չեն պատճառում, որքան անիրաւ Չօբանքեարանների ուղտերը:

Սրտերն այդ ժամանակն իւրեանց մանուկ և թարմ շրջանի մէջ են, գետնի երեսից մի թզաչափ բարձրացած, նայողին խելքամաղ են անում, հեղասահ զեփիւռը շարունակ ծածանելով նոցա վերայով հանդարտ և մեղմ ծոզի է նմանեցնում, մարդի երեսի ծիծաղում է մարդին կեանք տուող այդ ամենաօգտակար հացաբոյսը: Բայց ահա Չօբանքեարի մի հատ ուղտը իւր սափակ փափուկ ոտքը մէջը կոխեց, արտի մի կողմից միւսն անց կացաւ, կորաւ

բոլոր զեղեցիութիւննր, արար դասացած ձեռքի նմանութիւն ստացաւ, ուղտի ոտի տակն ընկած քնքուշիկ ցօղունը հոյի հետ հաւասարուեցաւ՝ միւս անգամ չուղղուելու նպատակաւ:

Քանի պահապան կամենաս, կարգիր, որքան ուզես հայհոյիր աներես Քրդին կամ Զօբանքեարսին, նորա հոգը չէ, շատ կրխօսես, դազանակն ու դաշոյնը վերադ կրխազան, մանաւանդ Զօբանքեարան, այդ աւագակ ու աւերիչ ցեղը տարի չի անցնիլ որ արտերին ու այգիներին մեծամեծ վնասներ հասցնելուց յետոյ մի քանի արիւններ էլ չանեն, տարի չի լինիլ, որ նոցանից մի քանիսը Սիբիր չըզատապարտուին, բայց երբ կրխրատուին, երբ երկիւզ կանեն, նորանք ստեղծուել են վնասներ տալու, դողութիւն անելու և արիւն խմելու համար:

Յօշականը, Աշարակը և ճանապարհի վերայ ընկած շատ գիւղեր օձիք են պատառում Զօբանքեարաների և Քրդերի ձեռքից: Մաս ուրախ կր լինէին այս գիւղերը, եթէ չուողները բաւական համարէին իւրեանց արտերն ու արօսները տրորելով, միայն թէ գիւղը չըմանէին, բայց այդ անկարելի է. չօռ ու ցաւ հօ ուտելու չէ՞ն, ուզին, չուզին, պէտք է այդ գիւղերիցն առնեն իւրեանց աղււրը, և ընծու չըմանեն, որ դուրս դնալիս եթէ ոչինչ էլ չըզողանան, ձորերի և պարտէզների նորատունկ ծառերը կրխտրատեն վասելու համար:

Այս է ահա այդ երկու ցեղերի բան ու գործը. աշնանը Արագած սարից իջնել և աւերածութիւններ անելով ձմերոցները քաշուել, գարնանը նոյն կերպիւ գէպի Արագած բարձրանալ:

ՊԵՐՃ ՊՈՒՅԵԱՆՑ:



***-Ի ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻԻՆՆԵՐԻՑ

ՎԱԶՈՂ ՋՐԻՆ.

Իսասկ ջուր վազուկ, արգեօք ի՛նչ կլինէր,
Որ քո ալիքներ ասնէր իմ ցաւեր,
Կամ ի՛նչ կլինէր, թէ իմ վիշտ ու լայ
Ինչպէս ծուխ օգոււմ ցրուէին յանկարծ:

Կամ ինչ՞ու համար ուրախութիւնը
Թռչում է շուտով, մընում է ցաւը.
Թո՛ղ քո ալիքներ ցնդեն իմ վշտեր,
Լուսնան սիրտս թո՛ղ քո մասնիկներ:

Սիրտս խոցուած է զանազան կողմից,
Արիւն ու շարաւ կթափի երակից.
Լուս՛, մաքուր ջուր, սրբէ՛ ինչպէս հուր,
Թո՛ղ փայլի սիրտս, չըմնայ մի մուր:

Դու սրբեցիր ինձ՝ երբ որ ես ծնայ,
Ես քո մէջ իսասկ ձեռքով թաղուեցայ.
Դու լուացող ես հոգու ու մարմնի,
Լուս՛ իմ սիրտս, թո՛ղ քեզ պէս փայլի:

Թող մաքուր լինիմ, ինչպէս դու սուրբ ես,
Թող որջ աշխարհին երեւիմ քեզ պէս:



Մ Տ Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

I.

Անցան օրերս տխրութիւնով՝ չըտեսայ մի բարեկամ.
 Լէք է աշխարհ կոծով-սուգով՝ չկայ ծաղիկ անթառամ.
 Ո՛չ որ չասի թէ սիրտ ունիմ՝ ինձ գրաւած իբրու գանձ.
 Ո՛չ որ չասի թէ աշխարհումս՝ ես հարուստ եմ գերապանծ:

Քաղցր ու դառը խառնըված է այն ջըռմը անբաժան,
 Որ տալիս է մեզ բնութիւն, չոկայ որոշեալ պայման.
 Կեանքի պատկերն ամենայն օր նկարում է արևը,
 Քանի չի հասել դեռ կէս օրը՝ ուրախ է և տխուրը:

Ընդհակառակ՝ կէս օրից յետ, երբ արևն ի խոնարհ
 Ուրախի էլ կոտորած է սիրտը՝ լինում է թոյլ ու տկար.
 «Գու ըսպասիր նորա գլխին՝ նա ուշ գնէ քո ոտքին»,
 Սովըցնում է մեզ Մովսէսը, սա է պատգամ երկնային:

Այլ դու, ո՛վ մարդ, այս աշխարհքում ընոնաւորուած յոյսերով
 Ի՞նչ ես օրդ դատարկ անցնում՝ հառաչելով ու լալով:
 Աշխարհքումս թշուառութիւն, ուրախութիւն, մի կերպով
 Խիստ սուր կանցնեն, ինչպէս արծիւն օդն է կտրում իւր թևով:

Այս կոշտ հողը շատ է եղել մեղպէսներին օթևան.
 Երկինքը շատ թափեց անձրև, լուաց հազար գերեզման.
 Թէ որ կուզես արեգակը կեանք է, կեանքը՝ արեգակ,
 Մին էլ կտրեց ճառագայթը, մտաւ յանկարծ անպի տակ:

Խոր գիշերը լուութիւնով՝ ծածկեց կէսը աշխարհի,
 Էլ չի երգում սոխակն ուրախ, լսիր վայերը բուփ.
 Արծաթաճերն երկնից գաճէն երբ ցոլացնէ իւր լոյսը,
 Գու կտեսնես նորա լուսով մակգիրը արձանի:

«Մարդուս կեանքը սին երազ է, մահը խաւար գիշեր է,
 «Թէ գործ ունիս արժանաւոր՝ լուսնի շողից պայծառ է,
 «Քո դամբանը նա յաւիտեան և դարերու մութի մէջ
 «Կրցողացնէ, ինչպէս լուսին՝ լոյս տուող միշտ ու անվերջ:

«Շնչում ես օդ, քանի աստղը հորիզոնում փայլում է,
 «Մտաւ յանկարծ նա ովկիան՝ կեանքիդ թեղը կտրած է.
 «Թէ վախճան ես դու որոնում, ինչպէս շատերը քեզ պէս,
 «Կեանք գտանել, որ միշտ մնաս, ապրես արեւու երես,
 «Վսիր ֆրիստոսի խօսքերին, թէ անվախճան այս են կեանք,
 «Որ հաւատած Աստուած, ֆրիստոս, թէև շատք չեն բաւական»:

II.

Ախ փոքրոգի մարդ հողածին, ախ խաղալիկ կրքերի,
 ինչպէս տերև ծառի վերան, ենթակայ ես հողմերի,
 Արշալուսոյ եթէ քաղցրիկ՝ ցօղը քեզի փաղաքշեց,
 Միւս օրն ահա արևի տակ՝ քո երեսը պերճ փայլեց:
 Թէ երկինքը քեզ ամլացաւ՝ մրրիկը քեզ եկաւ հիւր,
 Փոխվեցաւ շուտ սիրուն դեմքդ, չկայ հանգիստ քեզ և գիր,
 Ուղեորը ղեկը ձեռին՝ եթէ արթուն կընաւէ,
 Ծովի կատաղած բիւր ալիքը նորա համար ոչինչ է:
 Նա գիտէ, որ սովորաբար փոթորիկի քամակից
 Դուրս է գալիս երկնից դժխոյն խաւար ամպերի տակից.
 Ղեկավարը ժիր իւր գործին՝ շատ է տեսել ալիքներ,
 Նորա նաւի առագաստը՝ շատ են ուռցրել գիժ հողմեր:
 Բայց անվտանգ, հաստատ յուսով շատ անգամ նա իւր կեանքում
 Ձգեց խարխիս ու կանգնեցաւ հանդարտ նաւահանգստում:
 Ծովեզերքից կնատ մարդիկ տեսնելով այս վտանգը,
 Գուշակեցին բազում անգամ անշուշտ նաւի կորուստը.
 Սովոր են միշտ այնպիսիքը՝ ցամաք հողի երեսին
 Վնել հանգիստ գլուխը դրած սիրուն կուսի ծունկերին:
 Նոցա համար անծանօթ է փոթորիկի օգուտը,
 Ձգիտեն, թէ կայծակները՝ միշտ մաքրում են մեր օդը,
 Ձգիտեն, որ անչափ քաղցր է՝ մրրկից յետ զեփուտը,
 Խաւար օրով յայտնրվում է մեզ արևի պատիւը:
 Ձէ մարդ, թէ Ֆլո գիտէ հանգիստ՝ բազդը իւր մօտ հիւր ունի,
 Վայ եթէ մին հանդիպեցաւ նա կատաղի մրրկի,
 Գնաց շիջաւ այնուհետև՝ նորա յոյսը ու կեանքը,
 Բայց ով սովոր էր վտանգի՝ չի պղտորի և սիրտը:

III.

Պատուհանում նստած միայն զմայլմունք է իմ հոգին,
 Հորիզոնում պայծառ լոյսը տեսանելով արևին.
 Մայր է մտնում, առանց նորա՝ խաւար ու գէջ գիշեր է.
 Ինչո՞ւ համար չեմ մտածում, որ այսօր իմ վերջն է.
 Ուստի՞ գիտեմ, որ առաւօտ ինձ համար այլ կլինի,
 Ինչո՞ւ չքնաղ արեգակին բարեաւ մնաս չասացի:
 Ա՛խ դու, թո՛յլ մարդ, ան, հողածին, չես կամենում մտածել,
 Որ քեզ նոյնպէս, ինչպէս այլոց, կուգայ երկրից ելանել:
 Ծայրակարմիր հորիզոնում այս երեկոյ խաղացին
 Արեգակի ձառագայթքը, զուարճացաւ քո հոգին.
 Էգուց կարող է նոյն շողը հանդիպել քո գիակին,
 Երբ պատանած սուրբ կտաւօք քեզ թաղել կպատրաստին:
 Ա՛յն, թաղել:

Դեռ կծագի նա քո վերայ, կըխփէ շող դամրանիդ,
 Նա կհասնի քեզ այգորել, քան մերձաւոր սիրելիդ.
 Նորա լուսոյ շառաւիղքը այսօր աչքդ է ցոլացնում,
 Էգուց նոյնը կըկատարվի մահարձանիդ երեսում:
 Ուրեմն միայն այս աշխարհքում սս է, որ ինձ չի թողնում,
 Մինչև ի մահ և մահից յետ պայծառ դիմօք հանդիպում.
 Ա՛խ, փարելի դու իմ ընկեր, իմ սիրական անխարդախ,
 Մի՛ մոռանար իմ դամբանը, թէ ես ննջեմ քունն խաղաղ,
 Երբ իմ սիրտը այսպէս քնքոյշ զգացմունքներով լցուած
 Թփթփում էր՝ պատուհանից աչքս դէպի դուրս ձգած:
 Ա՛հ պայծառ երկնից դժխոյն իւր շառաւիղքն ամփոփեց,
 Զերևեցաւ աւել աչքիս՝ յետքից կարմիր գոյն թողեց:
 Ես նստած եմ դարձեալ նոյն տեղը նկատում եմ աշխարհի
 Մերենական գործողութիւն. Գիշերավարն կփայլել,
 Արծաթաճերն չի երևում, թուխպ ամպերը ծածկեցին,
 Արուսեկի նուազ լոյսն էլ իմ աչքիցը խլեցին....
 Ո՛վ ընուլթեան դու Արարիչ, իսկոյն դուայ իմ սիրտը,
 Ի՞նչ պատկեր էր, որ ես տեսայ, ի՞նչ էր սորա իմաստը.
 Արարիչը ասաց ինձի ընուլթեանը բերանով,
 Թէ քո կեանք էլ պիտի անցնի լուսաւորաց Կանոնով:



Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Թ .

Քանի բանաստեղծն չունի մուսայից
Մի բան երգելու յատուկ հրաման,
Նորա քնարը միշտ մունջ է մնում,
Ինքը անհողի, անգոր ու անձայն:

Բայց երբ երկնքից կփայլէ հոգուն
Անաղօս լոյսը պայծաս արևին,
Նա կմուսնայ բոլոր աշխարհը,
Այլ չի պատկանիլ նա այս աշխարհին:

Գրիչը ձեռին թղթի դաշտումը
Կվազէ արագ, ինչպէս եղջերու,
Ո՛չ ոք չէ կարող նորա հակասակ
Ի զուր փորձ փորձիլ կամքը կտորելու:

Նա այն ժամանակ սուր ունի հատու,
Կըրակ է թափում այրող բերանից.
Մուսան նորանով խօսում է մեր հետ,
Սիրտ է զմայլում նորա երգերից:

Նա այն միջոցին ոչինչ այլ բան չէ,
Բայց եթէ թարգման մուսայի խօսքին,
Նորա տասձր, որ նա լսում է,
Մեզի բաշխում է զինչ գոհար անզին:

Ոչինչ դատաւոր, ոչինչ իրաւունք
Ձեռն այնքան սուրբ, ճիշդ, ջինջ, քան հայելի,
Որքան դատաստան բանաստեղծ հոգուն
Մի բան ասելում՝ թէ չար, թէ բարի:

Ողջ մին է նորան՝ եթէ թագակիր,
Եթէ սոսկական քաղաքացի լոկ.
Պատճառ՝ ուղիղը խօսելից յետոյ
Պէտք է սպասիլ գառնալու մերկի բոկ:

Յ Ո Յ Ս.

Շատ տարիներ, շատ օրեր
Անցան դժբաղդի գլխից.
Շատ նեղութիւն, չարչարանք,
Կրեց նա այս աշխարհից.
Այլ իւր հոգին որպէս թէ
Զգաստացած մի ձայնից՝
Յորդորում էր ժիր լինել,
Զրվախենալ վտանգից:
Նա անգադար ասում էր.
Կգայ մի օր, մի վայրկեան,
Դու մոռնալով քո ցաւեր
Կասես. ո՞ր էն, ե՞րբ անցան:

Այս խօսքերն, որ մեր հոգին
Միօրինակ կրկնում է,
Նորան սուրբ գիրք ու հաւատ
Յոյս մեծ անուն տալիս է:
Բայց ի՞նչ բան է այս յոյսը,
Արդեօք երբէք իւր օրում
Մարդու լցեց փափազը,
Թէ լոկ գրեթումն է յիշվում:

Գժբաղդը շատ տարիներ՝
Մանկութենից ծերութիւն
Անցուց, շտեսաւ լաւ օրեր,
Հանգիստ ու աղատութիւն:
Սպասելով այն յոյսին,
Մինչ նա տանը նստած էր,
Յանկարծ բաղխեց նորա գուռ
Մի այլանդակ չոր պատկեր:

Տեսաւ դժբաղդն նորանում
Մի ծեր մարդու կերպարանք,

Զեռին բռնած սուր մանգաղ
Ու սպիտակ մահու պատանք:
Ատամները խիստ սուր են,
Հակատը լերկ մազերից,
Բազուկները չոր ոսկոր,—
Մարդ ստկում է տեսնելից:

Եկաւ դժբաղդի մօտը,
Նա իւր գանդաղ քայլերով
Տուեց նորան մի նամակ,
Ծրարը կնքած սևով:
Բայեց խեղճը դողալով.
Բայց ի՞նչ կարդաց, ի՞նչ տեսնէ—
Յոյս, յոյս, գլխից մինչև ցած՝
Վերջումը մահ է գրած:

Գժբաղդը այն միջոցին
Ասաց հոգուն. իմ ընկեր,
Ո՞ւր է քո մեծ խոստմունքը,
Ո՞ւր նկարած քո պատկեր:
«Յուսա՛, յուսա՛» — լսելով
Անկաջ մահի՞ճ ծերութեամբ
Եւ մինչ սպասէի լալով
Կարօտս անուշ տեսութեամբ:

Այս այլանդակը շտապեց,
Կեանքիս թելը կտրելու.
Աւա՛ղ, էլ չեմ տեսնելու
Ես իմ որդու երեսը:
«Շուտ է առնել զատաստան», —
Ասաց գաղանն անբաղդիս, —
«Երթանք, երթանք գերեզման,
«Այս է յոյսը աշխարհիս»:



ՕՏԱՐԻ ԳԵՐԵՉՄԱՆԻ ՎԵՐԱՅ.

Չեմ կարող այժմ խաղաղ նայել մեր թշուառ կրքին,
 Որին շատ անգամ պաշտեցինք, իբր ստրուկ նորա կամքին.
 Սուրբ ու աչնիւ զգացմունք մեր սրտիցը հեռի է,
 Մեր ամբողջ ուշ ու միտքը չարութիւնովը լի է:
 Թշուառ կրքերից մինը, որ մեր խեղճ կեանքն է պատել,
 Այն է որ մենք չգիտենք ընկերը սիրել ու պաշտել,
 Թէև լինէր այնպիսին մեզ համար միշտ բարեկամ,
 Կարեկից ու վշտակից ամեն վայրկեան, ամեն ժամ.
 Թէև ամենայն բոպէ մեր տխրութեան ժամերում
 Մխիթարէր ամեն կերպ՝ արտասուքը աչքերում.
 Թէև յաշող ժամանակ մեղ մօտ լինէր ու խնդար,
 Մեր քաջարազդ գործերը՝ գովելով ու բախանար.
 Թէ նորանում տեսնէինք հայելոյ մէջ տիպը մեր,
 Թէ մեր հոգւոյ երկրորդը նա անշփոթ ցողացնէր.
 Թէև հապար մենք խոստամունք խոստանայինք ջերմ սրտով,
 Թէ մինչ մահերուս օրը չէինք մոռնալու հոգւով,—
 Ի վեր այսր ամենի, եթէ այսպէսն մեռանի,
 Մեր սուգն ու կոծը շատ շատ մի եօթնեկով կըլքծնի,
 Եւ թէ իսկոյն նոր ծանօթ մեզ պատահի փողոցում,
 Նորա տեղը աներկբայ նա կըբռնէ մեր սրտում.
 Նորա երկու կեղծաւոր և կամ քաղցր խօսքերը
 Կըզօշտեն մեր աչքը, կմոռնանք հին ընկերը:
 Երևի թէ մեր ուխտը, որ սերտ սիրով կապեցինք,
 Մընաց դադաղում փակած՝ երբ ընկերին թաղեցինք:
 Խաւար ու գեշ հողի տակ նա միայնակ պառկած է,
 Ոչ ոք նորան այց չերթալ, որ մի նորան հարցանէ,
 Արդեօք սիրտը չ՞ենդվում մնալ այն տեղ անընկեր,
 Երբ աշխարհի երեսին այս բանը անհնար էր....
 Միայն բուն է ընդհատում գերեզմանի լուրձիւն,
 Չի ուղարկում նորան լոյս երկնից արևը սիրուն.
 Անբաղդի դին թաց չեղաւ ընկերի արտասուքով,
 Նորան մոռցան..... Պարում են տօնի շքեղ զգեստով:

Ապա ո՞վ է գիշերը, որ երբեմն սրտագող
 Վազում է դէպ այն շիրիմ, կամենում է մտնել հող...
 Արդեօք նորա ընկերն է, որ իւր սէրը յիշելով
 Եկել է նորա հողը ցողել ջերմ արտասուքով:
 Չէ՛, մենք չունենք աղնիւ կիրք. մեզնի համար ողջ մին է
 Բարեկամ, թէ թշնամի, երբ նա արդէն մեռած է:
 Այն եկողը չգիտէ, ո՞վ է պառկած այն տեղը,
 Որք՝ ոսկերքն են փթում հարստացնել սև հողը:
 Նա իւր անձն է պաշտպանում, գող է կամ փախստական
 Եւ կամ անտուն, անտեղի, աղքատ մարդ է անպաշտպան:
 Ահա թէ ո՞վ այց կերթայ մեր սիրելւոյ դամբանին,
 Այն, կերթայ շաղղակեր և ատելի բորենին:—
 Բայց ափսոս որ մենք կոյր ենք, չենք տեսնում այս բանը,
 Թէ ինչ որ մենք արեցինք, կանէ և մեր ընկերը.
 Նա ևս մեզ կմոռնայ, մեր յիշատակ չի պատուել:
 Մեզնի պատած կոշտ հողը չի ցողել աչքի ցօղով:
 Կանցնեն դարեր, տարիներ, մեր շիրիմը կըկորչի.
 Պառկի՛ր խաւար հողի տակ, յոյս մի՛ կապիլ ոչ դի.
 Ոչ որ քեզնի այց չի գալ, որ ոսկերքը սփոփվին...
 Ծածկած է քո օթևան... Դու ընկեր ես վշտերին...
 Քեզ հետ նորա կրիստեն, որ պատահմամբ հիւր եկան
 Ահա ինչպէս ես այսօր՝ ծածկված քօղով տիրութեան:



ՎԵՏԵՐՈՐԳԻ—ՄԻՆՆԱՐ.

Եւրոպացոց առ հասարակ քաղաքական մի ծէս էր,
Որ այր մարդը հանդիպելիս՝ կնոջ ձեռը կպաչէր.
Զկար թէև խենեշուժեան մի անպարկեշտ նշանակ,
Բայց վեցերորդ Պիոս պապը դուրս տուեց մի մեծ կոնդակ.

«Որ ոչ մի մարդ այնուհետև կին մարդու կամ աղջկայ
«Չըյանդգնի ձեռը պաչել ըստ հասարակ կանոնին.
«Թէ լոկ նայելն աղջկերանց և կամ կնիկների վերայ
«Սաստիկ մեղք է, արդէն ընդդէմ Աստուածային օրէնքին»:

Նա պատժում էր, նզովում էր հրապարակաւ մարդերը,
Որ իւր խօսքը չէին պաշտում ու իւրեանց հին կանոնով
Վարվում էին միշտ համարձակ, ինչպէս իւր քարտուղարը
Բռնրվեցաւ այս յանցանքում ու դատվեցաւ ժողովով:

Քարտուղարը խելօք մարդ էր, նա գիտէր որ Պիոսը,
Թէ կին գտնէ, պիտի անշուշտ պաչէ նորա ոտները.
Բարկացել էր նորա վերայ, իւր ամօթի փոխանակ
Աշխատում էր ողջ քաղաքին պապը առնել խայտառակ:

Զգիտեմ ինչու. բայց գիտեմ որ Գերմանիոյ թագուհին
Հիւր էր եկել պապի մօտը մի օր, երբ նա տանը չէր.
«Պարտէզումը նա ձեմում է» — ծառաները ասացին.
Թագուհին էլ գնաց պարտէզ, որ գտնվում էր տան մօտին:

Իմ պապը երբ տեսաւ նորան, տեսաւ չքնաղ երեսը,
Եփ էր գալի երակներում.... արիւնը.
Թէպէտ նա միշտ անսխալ է ու Քրիստոսի փոխանորդ,
Սակայն բռնեց ձեռքը տիկնոջ, քաշեց նորան իրեն մօտ:

Երբ առանձին ջերմ համբոյներ նորա ձեռին տալիս էր,
Քարտուղարը ծառի յետքից՝ պարզ ամենը տեսնում էր.
Նա իւր մտքում ուրախացաւ, ասաց՝ ա՛ ա՛ դու էլ ընկար.
Առաւ ածուխ, գրեց պատին. «վեցերորդը՝ մի՛ շնար»:

Պապը տեսաւ որ իւր գործը քարտուղարը իմացաւ,
Այն կոնդակը որ տուել էր, բոլորովին չքացրաւ.
Քարտուղարը այն մասին գրեց, որ պապը վեցերորդ էր,
Մանաւանդ այս համարները խորհրդական են թիւեր:

ԾԵՐ ՄԱՐԿՈՍԸ.

Ս.

Ես շատ եմ սիրում գերեզմանատանը ման գալ: Բանից-
գործից երբ պրծնում եմ և ընկերներս հարցնում են, թէ
ո՞ւր գնանք, ոչինչ չեմ պատասխանում, գնում ենք դէպի
քաղաքի դուրսը: Մտնում ենք մեռածների քաղաքը, շու-
տ ենք գալիս: Մէկ էլ տեսնում ես օրը մթնեց. ի՞նչ երկար
ենք մնացել գերեզմանատանը: Այսքան ժամանակ ի՞նչ էինք
անում, ի՞նչ մեծ բանի վերայ էինք, որ չենք էլ խնայել,
թէ արեգակը հինգ չուան տեղն անցել է պրծել:—Աչինչ
բան չենք արել, կարդացել ենք գերեզմանների գրերը:

Մեծ մեծ, լաւ լաւ պատմութիւններ չըկան հանգստա-
քարերի վերայ գրած: Ինքը, հանգստաքարը, ի՞նչ մեծ բան
է, որ վերան ինչ գրուի: Եւ ակըր մեռելի համար ի՞նչ գրես:
«Այստեղ է Մարկոսը», «Այս տապանի ծոցում ննջում է
Սարգիսը, ննջում է, մինչև որ Գաբրիէլն փողն ձայնը լսի»:
Կամ թէ տեսնում ես մի փոքրիկ քարի վերայ երկու-երեք
շարք կայ գրած մեռածի մօր լեզուից: Կարճ է գրածը, այն
է, ինչ որ խեղճ մօր սրտումն է եղել. մայրը, ո՞վ կ'իմա-
նայ, ինչեր է ասել, դուրս է եկել սա: Գիրն ինչ բան է,
որ կարողանայ այրուած սրտի բանն իմանալ ու մեզ հաս-
կացնել:

Քանի՞ քանի տեսակ քարեր կան: Կասես թէ գերեզմա-
նատունն էլ մի քաղաք է: Քաղաքում կայ երկու-երեք
յարկանի տուն, այստեղ էլ կայ մեծ, բարձր գերեզմանա-
քար. շատ հեռուից էլ սպիտակին է տալիս: Կայ փոքր,
կոկիկ տուն, նոր հարսի զարդարած անդուկի պէս. կայ
այդպիսի քար էլ: Քաղաքումը կայ խեղճերի թաղ. տունը
հողից շինած, փորը գետնին կպած, կողքի վերայ ծռուած:

Այստեղ, զերեզմանոցումն էլ, կան հանդիսաներ, որ հէնց դրան են նման: Զորս կամ հինգ քար շարած հողի վերայ մի հատ քիչ բաձր քար դրած գլխատակին, միւսը ոտնատակին: Կես այս տեսակները նորերն են, երբ հանուում են, տեղն էլ չես ճարում. հողը, խտար, քարի կտորները միասին վրայ են թափվում, ծածկում խեղճին: Աշխարհի բանն է այսպէս. եկել է այսպէս, կրգնայ էլ այսպէս:

Իսցց ի՞նչ դուրս եկաւ: Գերեզմանատունն է, էլ ի՞նչ խօսքեր են հարկաւոր:

Բ.

Գերեզմանատունն է, այն, այստեղ սուսուփուս հարիւրաւոր քարեր կան կանգնած:

Արեգակը թեքվում է դէպի այն մեծ սև սարերը, որոնց կտրում կուլ է գնում, երբ խանն անում է պրծնում: Նստում ես մի քարի վերայ, գդակդ գնում կողքիդ: Մտիկ ես տալիս հեռու, հեռու անդիր: Նաթթամէջի օր է, գնացող կողքը քիչ է: Կտում ես, զերեզմանատան մի ծայրում հանգարտ խօսում են, թխթխկացնում. քարտաշներն են, օրհնելով մեռնողին, քար են տաշում. իրանց արհեստն է: Մտիկ ես անում մեծ մեծ սարերին, մեծ ու փոքր թումբերին, և չես էլ կշտանում: Ի՞նչ կայ, ինչ՞ով ես զարմացել: Սարեր են, կանգնել են իրանց համար. մեծ մեծ ծմակներ են, կանաչել են, իրանց համար սևին են տալիս: Գեան էլ իւր ճանապարհն է գնում. հրէ՛ն, նեղ ձորում կուշ եկած, ծումուած դէպի ցած է գալիս: Գալը չես էլ տեսնում. արևի լուսից շողշողում է, սպիտակ է, խմանում ես որ գետ է:

Այս մի կողմը շուռ տուր երեսդ. հին, ալեոր չոր սպառաւթն է բարձր պատի նման կանգնել. քարեր են, միմեանց գլուխ են բարձրացել, պնդուել. նրանց դօշին խոտ չկայ բաւ. ո՛չ — մի դեղնած, ջուրը ցամաքած թուփ ճա-

կատը պնդացրած կախ է ընկած: Այն միւս կողմում տեսնում ես սարի լանջը. քարեր, քարեր, քարքարոտ տեղեր, հազարից մի կանաչ է երևում: Մեր գերեզմանոցն էլ այնպէս չոր, քարքարոտ, ծուռուճուռ տեղ է, որ էլ չես իմանում, թէ ինչն են այստեղ բերում մեռելներին... Ոչ մի ծաղիկ, ոչ մի ծառ, ոչ զլուխը թէթեւ, սիրար բաց լիզուն կրակ կտրած մի թռչուն...

Այսպիսի տեղեր երկրի ո՞ր կողմում չըկան. աշխարհք է էլի, Աստուծու ստեղծած աշխարհքը: Բայց ի՞նչպէս է, որ ամեն օր տեսնում ես, հարիւր անգամ, հազար անգամ աչքիդ առաջն է գալիս, էլի չես նեղանում: Ոչ թէ չես նեղանում, սիրադ կուչ եկած, սեւացած ժամանակն էլ որ նստում ես, աչքդ դէս ու դէն տանում, հոգիդ կշտանում է, փառաւորվում: Կ'ասես, նոր ես տեսնում, կ'ասես, նոր ես սիրում:

Նոզը, հոդն է այսպէս անում:

Մի մարդ հինգ, վեց, տասն տարի կենում է մի խեղճ, քանդուած տան. լաւ թէ վատ ապրում է, տաքանում է վերան, սէր է տալիս, սէր է առնում: Եթէ դուրս անես այդ տանից, այդ հոդն կտուրի տակից, ի՞նչ կը լինի ճարը:

Գ.

Նոզը, երկիրը քոնն է, չես կարող նորան մոռանալ: Ծնուել ես հոդեղ վերայ, ի՞նչ սիրա կը լինի քո մէջ, որ նորան աշխարհի ամեն հոդերից քաղցր շասես: Քեզ օրինակ լինի մայրդ: Մօրդ հազար մայրերից շատ ես սիրում: Մայրդ, կասեմք, միշտ հիւանդ է, արի ու անբոց է զցել տունը. գիշեր-ցերեկ հանգիստ չունի, չի թողրւմ որ դու էլ հանգստանաս: Ա՛խ, Աստուած, քանի՛ մի վեր կենաս, քանի՛ մի ահանջ դնես նորա վայ-վույնն, նորա թոյլ կիսակաուր ձայնին, որ սիրադ կտոր կտոր է անում: Նեղա-

նում ես, զժգոհ ես: Բայց խկի մաքումդ կ'ասես, թէ քո մօրից լաւ մայր կայ: Ամենեւին: Հողն էլ այսպէս բան, քո երկինքդ էլ այսպէս է:

Այս մաքերը նստել էին իմ մէջ մի օր, երբ նստած Հանդստանում էի մի զերեղմանաքարի վերայ:

Մարդիս մաքերը... Նորանց դու չես կանչում, չես էլ իմանում թէ ինչպէս էր, որ իրանք իրանք եկան, զուգոյ, սիրող թափուեցան: Տեսար, քեզ վերցրին, տարան:

Ընկերս Հեռացել էր: Ղէս ու դէն նայեցայ, աչքս ընկաւ մի տապանաքարի: Նոր քար չէր տեսածս: Սեւացի էր, կողքի վերայ կուացել: Չորս կողմը վայրենի բանջար էր բաճրացել, ծածկել էր քարի կէտը: Բանջարի միջով տեսայ քարի վերայ մի բան նկարած: Վեր կացայ, մօս գնացի:

Երբու երեխայի պտտկերներն էին: Ի՞նչ ասեմ: Բան Հասկացոյ, վարպետ մարդը աննէր, կրծիճաղէր: Պատկեր քանդողն ուզեցել է մի բան դուրս բերի. բայց ի՞նչ է դուրս եկել: Ղէշ պատկերներ են. մեր քարտաշի լայն ու կուլիտ երկաթի գրէշը դրանից աւել ի՞նչ շինէր: Քիթը երեսից մեծ, աչքերն, ասես, գրչով չի շինած. կ'ասես, քարը տաշելիս մի կտոր կտարուել է, ընկել, փոս արել: Չեռքերը մեծ մեծ, կողքին դրած: Մի խօսքով ասենք, մարդի շատ քիչ նման բաներ:

Հէնց այդ անհամ, անշնորհք պատկերներն որ տեսայ, սիրտս տակն ու վրայ եղաւ: Տէր Աստուած, մարդիս սիրտն ինչքան բարակ, փափուկ բան է: Եթէ այս կուլիտ պատկերները չըլինէին, ո՞վ դիտէ, դուցէ այդ երեխաների ծնողները դարդամահ լինէին: Սիրտը կրակ ընկած, աշխարհը գլխին մթնած, աչքի մէկն արիւն, միւսն արտասուէք, Հայրը կամ մայրը զնացել են քարտաշի մօս: Պէտք, քեզ մատաղ, այսպէս քաշիր պատկերը. իմ Տիգրանը նոր փռուած վարդ էր. աչքերը սև սև, ծիծաղը բերանին, մտերը կ'ա-

սես արեւշուճ: Նոր շորեր էի կարել, կարմիր-կապոյտ թւ-
լիւրով նախշիկ էի, երեք օր հագաւ, սե՛ր գառաւ... Իմ
Մեխակը մի սիրուն ծխա էր, ձեռիցս թռնաւ... Բերանիցը
կաթնահամ էր գալիս, ծոցս տաքցնում էր, թովաւում
էր: Ուստա՛, լաւ քաշիր, որ պնամ երեսս պնամ քարի վե-
րայ, սիրտս քիչ հովանայ... ան, Աստուած»:

Այսպէս է ասել: Եւ ուստան արել է: Որքան արտա-
սունք կը լինեն թափած այս անշուրհք պատկերների վե-
րայ: Մեր ինչներին է, թէ այսպէս ազեղ են քանդուած:
Մտիկ անկնք, տեսնկնք, որ նրանք հօր ու մօր, հղոր ու
քրոջ սիրտ են հովացրել: Քարը որ այսպէս, հապա ի՛նչ
կը լինի այն հողը, որ իր ծոցում պինդ պահում է խեղճ
երեխաներին... Այդ հողը լեղել են, այդ հողը համբուրել
են: Զօր ու մօր համար այդ քարի ու հողի պէս թանկ
բան չի եղել աշխարհում: Նրանցով երգում են կերել,
ինչպէս որ մի ժամանակ երգում են կերել իրանց երեխա-
ների կարմիր ու կանաչ արևով:

Եւ ահա նայիր, տես: Այդ երկու պատկերների պիմաց,
բանջարի ու խոտի տակ երևում է մի գերեզման. ոչ քար
կայ վերան, ոչ գիր: Բայց ո՞վ չի խմանալ, որ դա հէնց
երեխաների ծնողինն է: Զողը նորան էլ է տարել, որ էյ
սիրտը չը մորմոքուի: Զողը, որ իրան է քաշում, ձգում,
բերում հեռու հեռու աշխարհներում տպրած, իրան մո-
ռացած, հոգեվարքի մարդուն:

Գ.

Այսպէս մի հասարակ բան այսքան բաներ է պատմում:
Ես այդ պատմութեան ականջ էի դնում պուլսս կախ
արած: Բայց ընկիրս եկաւ, ինձ խօսեցրեց:
— Նա ինչ է շինում, հարցրեց:

Աչքս դէպի աջ շարժեցի, տեսայ մի մարդ, չոքած մի

գերեզմանի վերայ, ձեռքով հող է քանդում, գերեզմանի կողքերն ածում:

Կառ տնադեցի, հասկացայ: Այդ գերեզմանը ճանապարհի տակին էր, մի նեղ, խոր տեղ, անձրևի ջուրն էր քանդել, ձոր շինել: Գլխաքարը ջուրը քշել էր տարել, գերեզմանը կիսատ էր մնացել:

Գնացինք դէպի այդ մարդը: Ծեր էր, շատ ծեր: Երկու բուռ հողը վերցնում էր անքոնքարով: Միրուքն ու գլուխը սպիտակած, — բամբակը քիզ օրինակ: Մէջքը կռացել էր, աչքերը խոր ընկած, իսկի չէին էլ երևում սպիտակ հաստ հաստ յօնքերի տակից: Բերանը ծուռել էր, շրթունքները խոր ընկած, ճնօարը գուրս ցցուած: Խեղճ մարդ էր, մի փափախ ունէր գլխին պատառ-պատառ դառած, մէջի բուրդը կախ-կախ եղած: Զուխայի վերայ ճախարակի լսեռնի չափ ծակեր կային. իսկ մէջքը ձղած էր կախ ընկած, սև արխարուղն էր երևում, բրդի հաստ գեղին թերով կապած կապկապած: Ախրը բարձիկ, վզի կաշին սևացած ծալծալուած:

Սրանից էլ աղքատ մարդ... Հարաւ էլ չունէր: Տեսանք, որ դօշի բաց տեղը մի հին աղլուխ կար կապած:

Ե.

Գլուխը կախ իր բանին էր: Մի անգամ ձակատը բարձրացրեց, մեզ նայեց: Եղունգներով ձանկուում էր փափուկ հողը, ածում էր քարերի մէջ տեղը: Քիչ որ հող էր ածում, վեր էր կենում, ոտով կոխ աալես, պնդացնում:

— Այդ ի՞նչ ես անում, ապեր, հարցրի ես:

Նա թողեց գործը, մտիկ արաւ և մի բան ասաց, որ չը հասկացանք: Բերանումը քիչ առամ էր մնացել, պարզ չէր խօսում:

— Հանդիսար քանդուել է, ուզում ես շինես, հա՛:

— Հն՛, քանդուել է:

— Թի, լահ չըկայ՝ որ հողը քանդէիր:— Մենք մօտեցանք նորան:

— Չրկայ, աղա՛, ո՞ր տեղից ճարեմ: Մասներով եմ քանդում, մի կիրպ շինում եմ:

— Դա ո՞ւմն է:

Ծիրը ծանր թառանջ քաշեց:

— Իմ որդունն է: Մի տարի երկու ամիս կայ, որ մեռել է: Լաւ տեղ չըկայ... Այստեղ անձրևի ջուրն ամեն տարի քանդում է:

— Տեղը վաս տեղ է, տեսնո՞ւմ ես, էլ ուրիշ գերեզման չըկայ: Ամեն տարի պէտք է գաս շինես...

— Հն՛, թէ՛ որ ամեն տարի մնամ է՛...

Ես փոշմանեցի ասած խօսքիս: Ծիրն այնպէս լացի ձայնով պատասխանեց, որ այնպէս խմացայ թէ սիրտը ճաքուեց: Լաւ ասաց, ինքը հիմա ոտը դրած էր գերեզմանում. իրանից յետոյ ո՞վ էր գալու այս գործի ետեւից:

— Ի՛նչ մի ուրիշ, լաւ տեղ թողէիր, ի՛նչ կը լինէր: Բերել ես այս ձորի մէջ...

— Տեղն ո՞վ է մեզ տուել, աղա՛: Անհող, անբաժին մարդիկ ենք: Սրանից աւել արժան չէր, չըհասաւ:

— Տղա՞ մե՞ծ տղայ էր, հարցրեց ընկերս:

— Է՛... բաս ի՛նչ, չե՞ս տեսնում... Մեծ տղամարդ էր, մէջքիս սիւնը կտորեց, հետը տարաւ... Էլ ասում ես, թէ ինչ գառնայ:

Յետոյ տեսաւ, որ մենք լուցինք, էլի սկսեց քանդել, շինել: Բայց ձեռքերը զոդզոդում էին: Խեղճի սիրտը լցուել էր, ես էր գալիս: Մենք չը լինէինք էլ, նա իրանը կ'ասէր: Եւ ասաց.

— Աչքիս ճար ու ճրագն էր, հանգաւ, խաւարեց, զնայ. մեզքն ու կրակը վերաս ածեց: Աստուծու ողորմած աչքին մեռնեմ...

Գլուխը սգաւորի պէս թափահարեց, էլի թառանջ քաշեց:

— Մենակ դ՞ու ես մնացել:

— Զէ՛, չէ՛, ազա. երեխերք կան, որդուս երկու երեխան ու անացին:

— Խեղճ, խեղճ ապեր, էլ ի՞նչպէս կ'ապրես դու:

Նա լռեց, աչքը անկեց մեզ վերայ. չը գիտէր, թէ ինչ ասի:

— Ապրել... ապրել ո՞վ է տուել, աղաներ: Զեռքից օտքից ընկած, աչքիս լոյսը պակասած, մէջքս կոտրած, ծանր բան չի վեր առնում: Ինչո՞վ հայ աշխատեմ:

— Երեխերքը պատիկ են հա՛մ:

— Պատիկ չը լինեն, ինձ ինչ օգուտ: Կնիկ արմատն ինչ աշխատանք անող է... Ամօթ. չը լինի ասելը, երկուսն էլ աղջիկ են... Տղայ երեխայ չը կայ... Փառք Իրան, հազար փառք:

Մենք նստեցինք: Ծերն էլ նստեց, որ հանդստանայ: Յետոտ ձեռքը տարաւ, կոշտացած, կուչ եկած ճակատից քրտինքը ծլլացրեց իր գոգի մէջ:

Կ'ասես, թէ փշի վերայ էինք նստել: Ա՛ւմ բերան խօսք կըզար: Բաւական ժամանակ լուռ մնացինք:

9.

Բայց իմ մտքիցս չը հեռացաւ ծեր աղքատի ասածը. «անհող, անբաժին մարդիկ ենք»: Ի՞նչպէս թէ անհող, անբաժին... Ես էլ չունէի հող. բայց որ չունէի, ուրեմն գերեզմանատանն էլ չէր ինձ մի բաժին ընկնիլ: Անց կը լինի: Ես ու ես միտք եմ անում... Զէ՛, ուրիշ բան կար այդ խօսքերի մէջ. խեղճը, երեւի, մի բան խմանում է, որ ասում է: Այս պատճառով հարցրի.

— Լաւ, ապեր, ասացիր անհող, անբաժին ես հա՛մ:

Ծերը ձեռքերը յետ տարաւ, ուսերը վեր քաշեց:

— Մեղաւորին ո՞վ է տուել արքայութիւն: Ես... իմ ինչին է սազ դալիս:

— Հէնց ես էլ այդ եմ ասում: Որ լաւն խմանաս, ես էլ քեզ պէս եմ:

— Ձէ, աղան, քո բանդ ուրիշ է: Հոգն ինձ նմանին է հէնց հարկաւոր: Քո ինչի՞դ է: Ի՞նչ տանդ նստած ես աշխատում, բայց իմը դատումն է, ես տան գոան նստելով չեմ կարող ապրել:

— Ինչո՞ւ:

— Սխր ես վարով-վաստակով եմ ապրում:

— Ուրեմն զիւղացի ես, հասկացայ: Ա՞ր զիւղեց ես:

— Ձեռ ճանաչել, հեռու է: Սռաւօտ սուրբ լուսին որ ճանապարհ բնինես, միւս օրը արեգակի վերջին կրհասնես: Լաւ տեղ է, շատ: Այն կապոյտ սարի քամակին է: Ես Մեծ-Շէնացի եմ:

— Նո՞ր ես եկել:

— Ձէ, աղա, երեք տարուց մի բան պակաս կը լինի:

— Այն ժամանակը լաւ ես եղել, հո՞:

— Է՛, էլ մի տար... Սա էր պատճառը, այս մեռած-փչացածը, ինչպէս որ մեռել է, փչացել... Արաւ, իրանն արաւ... Է՛հ, ի՞նչ անեմ: Դատ լաւ է արել... Աստուած սորս գատաստանը քաղցր անէ:

— Ս,մէն, ամէն, ասացինք մենք քաղցր կերպով:

Խօսքը երկարացաւ: Ծերի լեզուն բաց արինք: Նա ի՞նչ գլխի պատմութիւնը մեզ արաւ:

Է.

— Ես էլ մի մարդ էի, պատմեց նա.— ամեն իրիկուն երեք կով էր կթվում մեր գոանը: Մին ու կէս լոյծ եղն էլ ունէի: Հօրից, պապից հողեր էին մնացել: Կիսուորի հետ վար էի անում, Աստուծու տուածից... շատը չըկար,

բայց քիչ էլ չէր: Լացը-թացը տանից էր. աւել մնացածը ծախում էի, տկրորութիւնը ծածկում: Երբ մեռաւ մեծ որդիս, Աբրահամը—սա չէ, մեր զիւղումն է—Համարեա աջ կուսա կորուսց: Պակասուեցայ. բայց էլի փառք Իրան, օրն անում էի, օրն ուտում:

Այս մէկը, անունը Բաղդասար է, այնքան ժիր չէր: Իմ ետիցս չէր գալիս, ուշը, խելքը տուել էր որսի: Ծրերով սարերիցը տուն չէր գալիս: Այնպէս էլ գնտակ խփող էր... ամենքի բերանը բաց էր մնացել: Քեզ ինչ ասեմ. օրինակ, գնդակի ծակովը գնդակ էր անց կացնում: Վար ու վաստակն իմ վզին մնաց: Անում էի, ճարս ինչ էր... Գիւղայու ձեռքն Աստուած դալար պահէ, ընկեր ընկերի ձեռք է տալիս, չոքած տեղիցը բարձրացնում, որովհետև ամենքը միմեանց նման են, ցաւները մէկ է: Ստում էի՛ կրմեծանայ, խելքը գլուխը կրգայ: Սխր որսկանը ո՞ր տեղի աշխատանքը տուն կրբերի... Եկաւ մեծացաւ, Հարսանիք արինք. սեանայ դորս Հարսանիքը, ինչպէս սեացել է...

Երեխատէր դառաւ, բայց էլի այնպէս մնաց: Իր տաւարը Հանգում բառաչում, իր մաճը սուանց մշակի քաշ քաշվում. իր գոմն ու մարագը դարտակ, բոստանը խողերը քանդած, մի խօսք, տունը չոքած... Նս էի մնացել, ես էլ ռախի-ձեռից ընկած. ո՞ր մէկի ետքիցը գնայի: Իրիկունը տուն էր գալիս ցխաթաթախ, ձեռքերը ճանկոտած, կամ մի բան էր հետը բերում արնաթաթախ, կամ թէ չէր էլ բերում:

Խօսում էի, լեզուս չորանայ, երեսին վաս էի խօսում: «Որդի՛, Աստուծուն մտի՛կ արա, այս տունը, այս տեղը քեզ են աչք դրած: Սխր այդ որսկանութիւնն ամեն մարդի բան չէ. դա տուողի է. սուրբերը որին սիրում են, տալիս են, նա է որսկանը: Թէ չէ, այդքան Աստուծու ստեղծած անմեղ խեղճերի արիւնը որ թափում ես, որտեղ պիտի թաղցնես: — Ամեն մէկն իր փոքրիկ-փոքրիկ ճտերն ունի,

սոված, ծարաւ ես թողում, դա Աստուած չի վեր առնիր: Նորան ասած թէ այն պատին—մէկ էր:

Մեր զիւղի մօտ մեծ, թանձր ծմակում մի բարձր մեծ քար կայ. անունը Հէնց Մեծ-քար ենք ասում: Գրա կողքին, ծմակի խոր տեղը, քարեր կան կոյա-կոյա արած: Նաո Հին ժամանակից է, Օվջի-Փիրում ենք ասում: Զօրից, պապից, քահանայից լած խօսք է, ծուռը չըկայ, դա արգար մարդ է կղել, որսկան. որսկանութիւնը նորան տուած է կղել: Սյնքան լաւ մարդ աշխարհ չի եկած: Տես ինչ է կղել, որ Աստուծու Հրամանով անխօս անասունների լեզուն նա իմացել է: Ինչպէս ես խօսում եմ, դու Հասկանում ես, այնպէս էլ նա. կենդանի չի լինիլ որ նորա լեզուն իմացած չըլինի: Մի օր Օվջի-Փիրումը գնում է սարը, մի լաւ նախշուն կղնիկ է տեսնում: Նեան ու աղեղը Հանում է: Աստուածութիւնն այնպէս է տուել, որ ինչ կենդանու վերայ ընկնում է՝ կղել նորա աչքը, կենդանին կապուած, շղթայուած է մնում տեղն ու տեղը: Որսկանի աչքն այդպէս է, որսի սիրտը դու չըմեռած ճաքացնում է: Օվջի-Փիրումը նետը եղնիկի դօշին է կպցնում, ինքն առաջ գնում, որ ուրիշ որս ճարի: Յեա դառնալիս լսում է ծմակի մէջ ի՞նչ բառաչ-բառանչոց է ընկել: Ականջ է գնում, իսկոյն Հասկանում է թէ ո՞վ է, ի՞նչ է: Նեան ու աղեղը դէն է գցում, սկսում է երգել. «այս սարումը մի դազան է վնգվնգում, արնի հոտիցն է վնգվնգում: Խեղճ կղնիկ, որը ունենալդ օրը սեացած Օվջի-Փիրումը չէր իմանում»: Ասում է սա, գնում տեսնում որ կղնիկի արնաթաթախ դօշը լեզում են իր անտէր ճտերը, լաց են լինում: Օվջի-Փիրումը հոգին բերանը հաւաքած՝ գալիս է տունն ու մեռնում..

Այս ճշմարիտ պատմութիւնն ամէն անգամ ասում էի որդուս, ասում էի, որ խելքի գայ:

Ը.

Հազար ասի՛, ասի՛, նա էլի իրանն էր անում: Օրը սևացածի գլխին, դու մի ասիր, պատիժ կար:

Մի իրիկուն հանգից եկայ տուն, տեսնեմ, որ ինքը գեռ տանը չէ: Գիշեր շատ էր անցել. Եամփուր-Նիոքը¹⁾ բարձրացել էր, սարի գլուխը հասել: Հեռի սրբութիւնիցս, մի աւանակ ունէի, գնացի գոմը, որ քորեմ, ապուռ տամ. մէկ էլ տեսնեմ, շինամէջը զայմազալ ընկաւ: Ճղճողոց կար, շներն այնպէս հաչում էին, որ միտս եկաւ պարսիկների գալը կուռի տարին: Սիրտս թրմփթրմփաց, նաւթի ճրագը ձեռիս բռնած, կայնի կոթ կար, վեր առի, դուրս վազեցի մեր հարեանի կտուրը: Խօսք խօսքի էր խառնուել: Մէկն ասում էր. «շուտ տարէք տուն», միւսը թէ՛ «լաւ է, որ կուռը պոկ չի տուել»: Սա ի՞նչ է, Աղբամաճ Աստուած: Գողղողում եմ, սիրտս փորս է ընկել: Գիտէի, գիտէի որ լաւ բան չէ:

Բերին, բերին: Երկու մարդ շալակած բերին, տուն գցեցին: Սա ինքն էր, այս կարմիրը սև կտրածը: Աւշերս գնաց, սուզը, վայնասունը տունս ընկաւ: Ի՞նչ էր: Արջի էր պատահել, հրացանը վատ տեղին էր կպցրել: Արջն իր տակն էր կոխել, ճմռել. մէջքի այս տեղեցը, թիւ կողմիցը մի կտոր միս էր պոկ տուել: Այնքան լաւ է խելքը գլխիցը չի ընկնում: Տեսնում է, որ արջը գնում է մե՞ք քար բերի, որ խփէ սպանէ, Աստուած ուզում է, վեր է կենում փախչում: Մեր մարդիկը գտնում են արնաքամ դառած, բերում:

Քանի՛, քանի՛ անգամ մահուան դուռը գնաց, յետ դառաւ: Ո՞ւմ մէջ էր սիրտ մնացել: Այնքան արտասունք թափեցի, այնքան պէս ու գէն ընկայ, որ աչքիս լոյսը պա-

1) Համաստեղութիւն:

կասեց, ոտներս դող ընկաւ: Չարչարուեցանք, տանջուեցանք. այնպէս բաներ էր անում, ասում էինք խելքը փախել է իրանից: Ել սուրբի փէշը բռնիր, էլ ինչպեղ անուն հանած զրբաց կայ, դնա՛ մօտը: Ի՞նչ ասեմ, ի՞նչ. սե ջուրը եկել էր, որ մեզ տանի: Ուստի բժիշկ բերինք, տեսաւ:

Կալից - կուտից ընկանք: Ո՞վ էր դրանց մտիկ անողը: Հարևան - բարեկամի տուէնք, շան բուռնովը մի բան ստացանք: Ախր մինչև որ քո ձեռքովդ, քո մասներովդ մի մի չը շինես, չըսարքես, աչքդ մի բան կրտսնէ՞: Իմ ոսկի արտերից, իմ ձեռքով վարած այնքան վարից այդքան չէր եկել, որ բերին մեզ տուէն... Եհ, Հէնց այդ օրից, Հէնց այդ հարամ ձեռքից քանդուեց, քարաքար եղաւ տունս ու օջախս... Տէրը որ քաղցր չի նայում, մարդս ի՞նչ շուն է, որ կարենայ ոտը ոտի սուաջ դնէ... Փառք Իրան... Մեղաւորը մենք էինք:

Թ.

Չորս ամիս վերմակին քացի տարով՝ տնքաց: Ի՞նչ տնքալ բառանչ-բառանչ էր գալիս, ձայնը երկինք էր հասել: Աչքնե՛րիս լոյսը թափվում էր, որ տեսնում էինք: Թագաւոր տղաս, աչքիս կանաչ-կարմիրը մի զիակի նման վեր հանած, փոքր երեխէքը չորս կողմը կտրած... Աստուած ի՛նչ չը բաշխեց, ես ի՞նչ շուն եմ, այդ որբերին բաշխեց: Լաւացաւ, վեր կացաւ, տունը տեղը աչքի տակ զցեց:

Աշուն էր, լաւ էլ անձրև էր եկել: Մտքումս ասում եմ՝ Հիմա փառք Աստուծուն, լուծն ուսին կրդնի, անբան-անդործ մնացած եզներն առաջը կ'անի, սամին ձեռքին, փոկը մէջքին հանդ կրդնայ, իր մաճը կրբունի: Փառք Աստուծուն. հիւանդութիւն շատ էր քաշիլ, սիրտը շատ էր ցաւել, բայց լաւ պրծաւ. խելքը դլխին, խօսքը կատարեալ, մի քիչ ձախ կուսն էր թուլացել. դա էլ ի՞նչ անկնք, աջն է Աստուծու կողմը. աջ ձեռքը քանի գործում

է, անող մարդը ձախի հետ ինչ գործ ունի: Երկար չքաջեց, կռան յաւն էլ անցաւ: Բայց ինքը չի անում իմ մաքերը: Հանգ չըզնայց. մարդը մշակ չէր...

Էլի ես, էլի ինձանով էր միամիտ: Գիտէր, որ քանի ձեռքումս ոյժ կայ, տանը չեմ նստիլ: Գնացի ես... Բայց երանի թէ այդ օրը ռաս կոտորուել էր, տանիցը չէի դուրս գնացեր:

Վարտանդը հեռու էր, սարի միւս երեսին: Հին դոմեր կան շինած, այնտեղ էլ գիշերը մնում էինք: Ի՞նչպէս մէկ էլ գիւղը յետ դառնաս: Օր է, մթնում է, լուսանում. օրը փոքր բան չէ: Հինգ օր մնացի, մինչև որ վերջացաւ: Եզները տուն ղրկեցի, ինքս գնացի Սարիշէնը. այդտեղ մի քոյր ունէի, սասցի, տեսնեմ, կենդանի՞ է թէ մեռած: Գնացի տեսայ, փառք Աստուծու, ապրուստ էր, ապրուստ էին անում: Աստուած է, ապրուստը մարդու երգիկից չի ներս ընկնիլ, մարդը պիտի հացի ետքեցը զնայ: Ասացի, թէ եկել եմ, եկիլ, մի օր, երկու օր մնամ, համ քիչ կըհանդատանամ, համ էլ քոյրս է, սրտի գարզը կ'իմանամ: Ախր մա՞րդ կայ, որ գարզ չունենայ: Մէկ էլ այն, որ մեր գիւղը հեռու էր, պէտք էր գնացողն սպասէի, որ ես էլ հարը գնամ:

Գլուխներդ ինչ յաւեցնեմ: Երկու-երեք օրից եկայ գիւղը, տեսնեմ ի՞նչ... Մեծ բան կայ, մեծ քանդուածք կայ... Գեռ գիւղը չըմտած, ճանապարհին ինձ ասացին, թէ Բողբասարը Ծաղիկը ծախել է: Հիմա սև բախտիս սչքալոյս էին տալիս... Զրհաւատացի: Ծաղիկն իմ ամենախաւ եզնս էր, այնպէս խելօք լծկան էր, այնպէս քաշում էր լուծը: Աչքեր ունէր, մէկը մի աստղ, կ'ասես, միշտ ծիծաղում էր: Որ բառաշում էր, հողիս տեղն էր գալիս. մարդ չըկար, որ լսէր ու «Չա՛ն» չասէր: Ճակատը տափակ, լայն, սպիտակ խնձորը վերան. ոտները հասա-հաստ, պողեր ունի, կ'ասես, գիւղի մէջից հանած: Տանս սխնն էր, աղաներ: Առանց նրան մեջքս կոտորուած էր:

Ոտս դրի մեր շեմքին, հարցրի, ի՞նչ ասեմ, աչքերս կայծ ու կրակ արին: Ծախուհիլը գրուստ էր: Լացս կհաւ, լաց եղայ. բայց ինձանից ասաջ մեր տանն էին շատ լացիկ: Չորանայ այս լեզուս, հէնց իմ անէծքն էր, որ խեղճ ուրդուս չորացրեց: Ելի խօսեցի, խօսեցի... Ի՞նչպէս լռեմ. տունը գլխիս շուռ էր գալիս. հիմա էլ որ միաս եմ բերում, մոռլսը քթովս գլխիս է տալիս: Ձէք իմանում է՞, բոլորի աչքը նորա վերայ էր. երեք աչքահուլունք էի կապիլ վզին:

Տղաս տուն կհաւ: Սյնպէս բաներ ասաց, այնպէս խօսեց, չեմ իմանում... մինչև այն օրը լսած չէի:—Ասաց բոլորը պէտք է ծախեմ, գնանք քաղաք, այնտեղ ապրենք:—Սյ տղայ, ասացի, գլխիդ ձի՞ է քացի տուել, թէ քաջքերն են կոփել, ի՞նչ ես խօսում:—Ասաց չէ՛, իմ ասածն է լաւը. այստեղ ի՞նչ ունենք, ո՞վ է այստեղից խէք տեսել: Հարիւր տարի մնանք, հարիւր կաշի մաշենք, էլի այն ցրիւ կեած, պատառ-պատառ դառած արեխններն են մեզ վրայ: Կը գնանք, ես արհեստ կըսովորեմ, մի մտորու կաքից կը հասնեմ: Դու էլ ոտից ձեռքից ընկիլ ես...

Չար սատանայ... Թուք լինի երեսիդ: Ինչ անեմ, ինչ չանեմ: Ճար չի լինում, կպիլ է, բաց չի թողում:

Որդի, Աստուծուն նայիր, որդի, գլխիցդ վերև երկինք կայ. մեր տունը մի քանդիր, մեր հալալն ու հարամը ցրիւ մի՛ տալ, մեր չոր, տաքցրած օջախը ցրւում ես, որ գնաս ուրիշ տեղ կանաչ խոտի վրայ կրակ անես... Քաղաքում ի՞նչ ունենք, ասած է՛ ես աղա, դու աղա, բաս մեր ցորենն ո՞վ կ'աղայ: Բայց մի քարի ասած, կամ նրան—մի և նոյն է: Ողորմածահողին այսպէս իր ասածին էր, հողը խօսքս չըտանի:

Ախր, ասում եմ, այստեղ մեռած ունինք, գերեզման, ժամ պատարազ ունինք. հինգը, տասը մեզ ճանաչում են: Սյնտեղ, այն դարիւր տեղը ո՞վ է մեզ մի ջան՝ կամ չոռ:

ասողը: Խեղճ չենք: Պատասխանս յետ է տալիս, ասում է, առողջութիւն, աջողութիւն ուզի. որ սրանք լինեն, ամեն ինչ լաւ կ'անցնի:

Խելքս գլխիցս ընկել էր:

Փ.

— Է... ժամանակ, ժամանակ...

Ծերն այս խօսքերն ասաց, ձեռքերը ծնկներին դրաւ, մտքի տակն անցաւ: Սչքերը չռեց, մի երկու անգամ գլուխը ծանր թափահարեց: Քիչ այդպէս կացաւ, յետոյ էլի սկսեց խօսել:

— Մեծի խօսքը քամի դառաւ, ասես, բերանից չի դուրս եկել: Սատուծու խէրը փախաւ, ցաւն ու չորը շատացաւ: Քուռակը ձիու առաջն ընկաւ, հորթը կովին: Կտրուեց, սուր դանակով այսպէս կտրուեց... Կովը չքերի դառաւ, չորացաւ. եզնը լուծի տակ չօքեց, արտը խորշակ տարաւ: Նրանց ամենքի մեղքը մեր վզին ընկաւ... Ժամանակը փոխուեց... Ո՞վ էր տեսել այնպէս բան... Հօրից, մօրից ո՞վ էր լսել: Վայ իմ մեղքին, կոյր չըմնացի, որ չըտեսնեմ:

Հարիւր տարի Սւազենց տունը կանգնած էր. մտնող, դուրս եկողը կար ու կար, հայր-թացն անպակաս. կարասը, հացի տաշար տեղը դրած, աղաքսակը աղով լեքը, խոնկը պուճախում. մեծի, պատիկի բերանում օրհնանք, ծուխը միշտ մլըում: Քանդուեց, քարի տակ դառաւ մի երկու շաբթի մէջ: Այնպէս քանդուեց, այնպէս ցան ու ցրիւ եկաւ, որ մեզանից ոչ ոք չիմացաւ, թէ ով ինչ տարաւ, ինչ թողեց: Տուն շինելն է դժուար, տուն քանդելուն ի՞նչ կայ: Արիւն-քրտինք թափես տաս-քսան տարի, չես կարող մի շին տուն դնես. բայց մի օրում հինգ այդպէս տուն կը քանդուի:

Ես իմ հօրից մնացածը յիտուն, վաթսուն տարի պնդացրի, պահեցի. բերանիցս կտրեցի, երեխաս զրկեցի. ի՞նչ, ի՞նչ օրեր

քաշեցի: Գիւղի մարդն ի՞նչ կը լինի: Զիւնի, բորանի տակ, ուս ու ձեռք սառած, փայտացած. արջի, դայի թի տակից ճիւղեր էի կոտորում, բերում, որ անասունս քաղցած չմնայ: Կայծակը զլիսն կրակ անում, անձրևը շռչում, դետերը վարարած, արիւն կտրած, ահը շատացած, աշխարհը չարացած, բայց ես գնացիլ եմ բանիս: Ար ի՞նչ է, մարդիկ տեսնեն, չասեն, թէ Աւագենց Մկրտումի տղայ Մարկոսը չըկարողացաւ հօր տունը շէն պահի: Ար ասում եմ ժամանակն է պսպէս, աղաներ, չե՛ ծիծաղէք: Մենք էլ ենք երեխայ եղել, ջահիլ եղել. բայց մեր վարից ու տաւարից աւել բան չենք ճանաչել. հօրից, մօրից զեղուած, ծանկում ենք հասակ քաշել: Գիտէ՞ք, որ ժամանակից եմ ծիրն ու լուծը ճանաչել: Մօր ծծից նոր կարած երեխայ էի. միտս է, տանը մարդ չըկար, որ գնայ հօտաղ: Ի՞նչ էին անում: Ինձ դնում էին կողովի մէջ, լուծից կախ անում, մի երկար ճիւղոս ձեռքիս գնում: Աջ ու ձախ խիկ սփորեցրել էին, պսպէս հօտաղութիւն էի անում... Բայց ինձանից զոյացածը արածս-սարքածս քանդեց: Ականջն ի վեր շատ ձայն տուի. ի՞նչ օգուտ: Հարիւր տարուայ հաստատ պահած օջախը քարուքանդ արին, սորա ու նորս ճանդը գցեցին: Տակին եղած-չեղածը հաւաքեցին, բերը կապեցին, որ տանեն քաղաք:

Հանդս-անդաստանս ձեռքիցս ընկաւ, կալս ու մարագս խափանուեցան. կամնս ու սամիս, ո՞վ գիտէ, թէ ո՞վ տարաւ. իմ այն չորս ջուխա կամներս, որ սուր-սուր կայծքարով ես ինքս էի շինել, պնդացրել: Իմ այն սիրտը բաց, ծոցը լայն արտերը. մի կողմիցը նայում էիր, միւսը չէր երևում: Կռուով, մահակով, ազաղակով եմ պահել տափերս... Մի սև շուն ունէի, եօթը տարի մեր գունար նստել էր: Ետեներիցս դալիս էր. ծեծեցին, շնահօտը բարձրացրին, կնճկոնճարով, ազին հողին քսելով յետ դառու, կորաւ: Աչքիս մէկն արիւն, միւսն արտասուէք Նահատա-

կին-Խուժն անցանք: Հարսս յեա նայեց, աչքերը ար-
տասունքոտ մրմնջաց. «է, իմ երեսս ոտիդ ստկը, այ սուրբ
Նահատակ. մէկ էլ ով ողջ, ով մեռած կը դայ, քեզ կրտսնէ:
Սյնպէս գնալ չե լինիլ, ինչպէս մենք կինք գնում: Պարզ
տեսնում էի. փոքրիկ երեխաներն, ինքն, իմ օրդիս, ա-
ռաջ էին գնում, ճշմարիտ է, բայց վայ այն գնալին: Ես
քանի քանի անգամ ուզեցի յեա դառնալ: Բայց էլ ո՞ւմ
մօտ գնայի: Հասանք Յուրտ-Սղբրի մօտ. ասացի, կարօտս
տունեմ. ընկայ վրան, շնո խմեցի: Բայց ո՞ր մէկից կարօտ
տունէի: Շնո կարօտ ունէի:

Եկանք, կիանք... Բարձրացանք Խանի-Սարի գլուխը: Երե-
խերքը, Հարսը յեա նայեցին, ասես, թէ երկնքի գոները
տեսան: «Հրէ՛ն, շէնի սարը, Հրէ՛ն: Ծիծաղեցին, ուրա-
խացան: Սյրտեղեց, ճշմարիտ է, երևում են մեր Հան-
դերը: Տլոր-Թալան, Ալեքսանայ տափը, կ'ատես, ձեռքի մէջ
են դրած: Իրանք գնացին, ես նստեցի, մնացի, որ շատ
տեսնեմ: Թուզար պատում էր մեր արօսները: Թուզար
կախ էր ընկել, երևում էր, որ անձրև է գալիս: Վերջին
անգամ երեսխ խաչ Հանեցի, գլուխ տուի, վեր կացայ
գնացի:

Մեր կողմերն էլ չէին երևում:

ԺԱ.

Քաղաք Հասանք միւս օրը, օրուայ Հէնց այս ժամա-
նակին: Անցնող-տեսնողը մեզ այնպէս էր նայում, կ'ատես,
մենք Հայ քրիստոնեայ չենք, աշխարհի միւս երեսիցն ենք
գալիս: Կնայինք մի տուն, որ մեր գիւղի խօջան էր ցոյց
տուել: Մի կերպ վեր թափուեցանք, ճրագ էլ չըկար,
որ լոյս տար. մթնումը մի մի կտոր Հայ կերանք, քնեցինք:
Ի՞նչ քնել: Մինչև կէս գիշեր աչքս Հուպ չեկաւ: Միբոս
ուզում էր դուրս դայ բերանիցս. մթի՛ն, մի ծակ չըկայ,

որ երկնքին նայեմ. մեր երդիկը ո՞ր էր: Գիշերը երբ աչքս բաց էի անում, մեծ-մեծ փայլուն աստղերն էին ինձ մտիկ անում, մեր զեարը վշվշում-թշթշում էր: Չըսովորած մարդու համար շնա զժուար էր քաղաքը:

Երկա՛ր, շնա երկար կր լինի, որ նստեմ, մի մի պատմեմ գլխներովս եկածը: Երկու օր պատմեմ, քիչ է դարձեալ: Մինչև տեղներս տաքցնելը, մինչև կիսատ-պռատը դրստելը հոգիներս մաշուեց: Որդիս սկսեց քարտաշուծիւն սովորել. իրիկունը ցիաթաթախ, թողաթաթախ տուն էր դալիս, առաւօտը շուտ դնում: Մեզ նման մարդկանց համար չարչարանք որտեղ չըկայ: Հացն ան, ջուրն ան, փայտն ան. ամեն ինչ առնովի է, փող է հարկաւոր... Ունեցած չունեցածը կերանք, վերջացրինք:

Տղաս մի տարումը արհեստ սովորեց: Ասացինք դէհ, քարը մեր գլուխը, լաւ որ չըլինի, վատ հօ կ'ապրենք: Բայց մեր մեծիւն ասել են. դու քո մտքինդ թո՛ղ, տես, Վերեկինն ինչ է միտք անում: Մի երկու-երեք ամիս չանցած, ճՀ... խեղճ որդուս սև խաբարը լսեցինք: Մի մեծ քար է ուզում բարձրացնի, ուժը չի յաղթում, մեջքը կոտորում է: Բերին տուն: Մենք ու մենք մենակ էինք, ո՞վ պիտի մեր դռնովը մտնէր, սիրտ տար մեզ: Այնքան սուգ արինք, այնքան գլխներս ծեծեցինք, վայ տուլինք... ոչ հոգի մնաց, ոչ մարմին: Մէկը չըկար, որ գնայի, ոտներն ընկնէի, գուցէ խեղճ երեխայիս ճար լինէր: Մեր վայ-վայնասունը մնաց մեր կորի տակ: Վերջն ինչ ասեմ, ձեզ մատաղ. որն էլ հազարից մի անգամ դալիս էր տեսնում, խրատում էր, որ իզուր դէս-դէն չընկնենք: Ասում էին, մենք էլ տեսնում էինք, որ փորումը աղիք էր կտրուել: Երկու-երեք օրումը մոմի պէս հալուեց, ճրագի պէս անցաւ թաղաւորի նման տղաս: Մնացինք դռներին, անտէր, անտիրական, որբ...

Աղաներ, իմ դարդերս ինձ հետ են, ո՞ր մէկն ասեմ, ո՞ր

մէկը թողեմ: Սոված մնացինք: Մի մատի չափ հող չունէինք, որ վրան հաւաք լինէինք: Աղաչում, լալով աղաչում էինք, որ մեզ մի շնաբոյն էին տալիս: Հիմա էլ հէնց այդպէս ենք: Իմ այնքան հողերը այս ու այն մարդիկ խլել էին, տիրացել, որը ծախուել էր, որը զօռով առել էին... Անտէր էջը գայլի ճանդը շուա կրնինի. սա այսպէս է: Մի երկու խամհաս էր մնացել, ծմակի մէջ, արևից փախած սեղ: Մեր քոխան քանի անգամ եկաւ, պահանջեց, որ հարկ տամ. ո՞րտեղեց էի գտել: Ամեն ինչից ձեռք վերցրի, որ զլուխս ազատեմ:

— Էլ ինչի՞ հա այստեղ մնում. գնա՛ գիւղդ, ասացի ես:

— Հերու ամառը գնացել էինք, էլի յետ դառանք: Էլ գիւղին մենք չենք սազ գտլիս: Ոչ այստեղացի ենք, ոչ այնտեղացի: Բոյնը կորցրած թոչունի պէս այս կողմին ու այն կողմին գլուխ ենք զարկում, ամեն տեղեց փոշման յետ դառնում: Բայց էլի Աստուած պահէ մեր մարդկանց. կալել կուտը հաւաքեցին, մեզ առին:

— Տեսնո՞ւմ ես, էլի նրանք քեզ կ'օգնեն. այստեղ քեզ պէս քանիսները կան, գիտե՛ս:

— Իս էլ կայ: Բայց, աղա՛, դա մի՛ ստիր: Այնտեղ էլ մի կրտան, երկու կրտան. մարդ են: Մէկ էլ որ ասում եմ, դարդս մէկը չէ... Հարսս չի մնում, փախչում է... Աստուծու պատիժն է... Հարուստի տան բան էր անում. զիշերը մենակ է մնում թէ ինչ... Հնարք է գիպչում... է՛հ...

Մերը ձեռքը թափ տուեց, լսեց:

— Ձէ՛, ապեր, լաւ չես անում:

— Ես... է՛, աղա, էլի ասեմ... Այս գերեզմանը... այս գերեզմանի խաթրին եմ մնում... Օտար հող է, մէն մենակ. սիրաս հեռը տարել է, ասում եմ, ես էլ մտնեմ այստեղ, նրա կողքով պառկեմ... Վերջին յոյսս էր...

Նա ուզում էր էլ խօսել, բայց խօսքը կարեց. վեր կայաւ, փէշը թափ տուեց, հեռացաւ:

«Ոհօ-հօ» մրմնջաց մի քանի անգամ, ուշքն ու միտքը գցած ճանապարհի վրայ: Մենք էլ վեր կացանք, մտիկ տուինք:

Ճ.Բ.

Նանդասարանի տակով մեծ ճանապարհն է գնում: Քաղաքի ճանապարհն է, միշտ գնացող երդն անպակաս է: Բայց այս անգամ շատ մարդ չընկար, միայն երեք հոգի կանգնած էին, երեսները դէպի ցած, դէպի գետի ձորը: Սէկը մի կնիկ էր, երկուսը փոքր աղջկերբ: Երեք շալակ չոր ցախ կար մօտները դրած: Երեխերը հանդարտ էին, գլխները կախ, բայց կնիկը ձևաքերը շարժում էր դէս ու դէն օդի մէջ, կռանում էր, բարձրանում: Զարմացանք, խելքը գլխին մարդու բաներ չէր անում:

Մենք վերի ճանապարհովը գնացինք: Տեսանք, ծեր Մարկոսը ցածացաւ, ընկաւ ճանապարհը, գնաց նրանց մօտ: Կնիկայ աչքին երևաց, ինչոր բան ասաց: Նա էլի ձևաքերը այնպէս շարժեց, մի անգամ կռայաւ, գլխի շորը ձգեց, կախ արաւ: Յետոյ երեք հոգին գնացին դէպի իրանց շալակները, շալակեցին:

Մեր ճանապարհն էլ ցածանում էր, միանում մեծի հետ, շուտով դուրս եկանք նրանց առաջը:

Երեք հոգին գնում էին շալակի տակ տնքանքալով: Կնիկայ երեսը տեսանք, վախեցանք, նա գեղնած էր, ոտիորները ցից-ցից կանգնած, կ'ասէիր թէ հինգ շաբաթ հացի համ չէ առել: Երբեքն էլ հօ Սատուած ցոյց չտայ ուրիշին: Աղջիկներից մէկը մեծ էր, միւսը փոքր, դրանք էլ քիթ ու յօնք կախ արած, աչքներկոյր աղու-լեզի էր ծլլում: Սրանց շորերը հարուստների գոներից էին հաւաքած, մեծերի վրայ են եղել ձևած, պատիկներին են հաղցրել, աւել մնացածը թիւրով կապկապտակ: Մի ոտին աղայ-երկտայի կօշիկ, միւս ոտին, ո՞վ է խմանում, ինչ են քարշ տալիս: Մերը վիզը ծռած ետևներկոյր գնում էր:

Մենք էլի նրան խօսեցրինք:

— Սա՞ է հարսը:

— Հա՛, աղա՛, սա է նրանք էլ թոռներս են:

— Ո՛ր են տանու՛մ շալակները:

Ծերը մէկ էլ թառանչ քաշեց, ճօթռօտած փափախը երկու մատով վեր բարձրացրեց:

— Է՛... ցաւ են տանու՛մ իրանց համար, չո՛ւ են տանու՛մ... Սա է ապրուստը, մի երկու կոպէկ կրտան, մի կտոր հաց կ'առնենք:

Աղբուս կապուեց, էլ չուզեցի խօսել, մարդի զարդերը նորից տակն ու վրայ անել: Սաացի, լաւ է հեռանալ, գնալ: Բայց ընկերս հարցրեց, ասաց՝ էղուց-միւս օրը ձիւն ձմեռն է գալու, այն ժամանակ ի՛նչ կ'անեն:

— ձարը որ կտրուի, ի՛նչ պէտք է անեն, աղա՛, քեզ մատաղ: Սոված փորը, ասած է, ինչ որ ասես, կ'անի: Սոված չեն մեռնիլ: ցրիւ կրպան, գոները կընկնեն, ո՞վ գիտէ, ի՛նչ կրպառնան: Բայց ողորմած Ստողածն այն օրը ինձ մի մահ ուղարկի, որ չտեսնեմ: Սյւքանն էլ ապաշխարանք համարիր, Ողորմած Տէր, խեղճ եմ, մեղաւոր եմ, ինձ ազատիր:

Սաաց, աչքերը բարձրացրեց, երկնքին գցեց: Յետոյ գլուխը կախ արաւ ու գնաց...

110.



ՎԵՐՋԻՆ ՓԱՓԱԳ¹⁾.

Երբ ցուրտ դիակդ, կեանքից զրկուած,
Մանի տապան, իմ անզին,
Վերջին շունչս քեզ նուիրած,—
Եւ ինձ տեղ տուր քո կողքին:

Թող Գաբրէլի փողը հընչէ,
Թող գայ ահեղ դատաստան,
Իմ նազելի, մեզ այդ փոյթ չէ
Սիրոյ զրկում անսասան:

Թէ ինձ հասնի երանութիւն
Սյն լուսեղէն աշխարհի,—
Մեր հողէ ծածք, հողէ անկիւն
Քանցը ինձ քան մասն Անմահի:

Ս. ՏԱՀԱԶԻԶԵԱՆ:

1) Պատահմամբ մեր ձեռքը ընկնելով յարգելի բանաստեղծի այս գրուածքը, մենք ուրախութեամբ ըստ ենք ընծայում և խնդրում մեծ. հեղինակի ներողամտութիւնը, որ այդ արիւթ, շխանդելով կանխապէս տպագրելու թոյլտուութիւն:

Ծան. Հրատ.

Կ Ա Ճ Ե Տ Ա Յ Ծ Ռ Ե Ր

(իմ յիշողութիւններից)

«Գնանք ս. Գրիգոր» — ասաց ինձ զրացիս՝ մի ամառ-նային երեկոյ:

— Բայց արդէն ժամը մէկն ¹⁾ է և երէկ գիշերն էլ զրեթէ չեմ քնացել... ոտով պիտի երթաք:

— Ի հարկէ ոտով և ժամը երեքին, զի լուսինը ճիշդ այն ատեն պիտի երևայ: Մենք վեց հոգի ենք և ամէն պատրաստութիւն տեսած ենք: Կ'ուզէք, մի քիչ քնացէք, յետոյ կ'արթնցնենք ձեզ:

Ես խօսք տուի: Իսկ ինչ վերաբերում է քնին՝ — այդ անկարելի էր, զի ես ընդունակ չեմ ապսպրել հոգուս, որ հանգչի հաճոյքիս համեմատ:

Ճիշտ ժամը երեքին շարժուեցանք աներնէս: Պէտք կղած կարասին, ուտելիք և ըմպելիք բարձինք մէկ իշու վերայ: Ուխտաւոր ընկերներս իմ նախածանօթ վաճառականներն ու արհեստաւորներն էին:

Այգեստանի քնած փողոցները անցնելուց յետոյ, սկսեցինք երգեր գեղգեղել: Բարեկամներս Ապօլլօնի թշնամիներէն չէին. նոքա չէին մոռացել գտնել մի գեղեցիկ ալճանկ և քրդական սրինգ:

— Տղենէր, «Ծիծեռնակ» սկսէք, — հրամայեց սրինգ փր-չողը:

Ամբողջ խումբը թնդացուց անմիջապէս դաշտային օդը երկու գործիների ընկերակցութեամբ: Գեղեցիկ է յուզել դաշտի լուսթիւնը՝ աստղալից՝ ու լուսնկայ գիշերները:

¹⁾ Թիւրքիայում ժամերը հաշուում են միշտ արեամուտի վայրկեանից: Տարուայ ամէն եղանակին այդ վայրկեանին ընդունում են նոքա ժամը 12, ինչպէս մեզ մօտ լինում է այդ՝ ճիշտ կէսօրին:

Ս, յսպէս երգելով, խօսելով, կատակելով անցանք Սրբկայ ու Զրուանդանց զիւղերը: Վերջինիս արեւելեան ծայրը շինուած է մի կամարակապ աղբիւր: Սյրակղ Հուաքուում են յաճախ զիւղի թիւք բնակիչները՝ իրենց նամազը կատարելու:

— Ս, ման, աղէներ, ծարաւից կրպպակիմ, — ձայնեց Կարապետ «ախպերը» — էն թուրքն էստեղ նամազ կ'անի, ճար չըկայ — պէտք է Զորովանից աուուի ջուրը խմեմ:

— Ձէ, տօ, ջուր կըխմի — ի՛նչ նամազ: Մըկայ նամազի ժամանակ է որ...

Բայց մենք արդէն մօտեցանք աղբիւրին և ընկերներիս միաբերան «սխշամլարըն խայր օլտու» (բարի երեկոյ) բարեկին — անձանօթի «Օրհնեալ լինիք, զաւակներս» պատասխանը տրեցաւ:

— Վայ, Սրապիոն Հայր սուրբ, — բացականչեցին յանկարծ բոլորը — Սատուած օղնօկան, Սատուած օղնական, էս որ թարաֆէն (կողմէն) եկար էսա քո փմկլա (խնքոս) տիրացուի հետ:

— Օրհնեալ լինիք, — վրարերեց իմ անձանօթ Հայր սուրբը մի Հայրական զորովով — օրհնեալ լինիք, Սատուած ձեզ պահպան... Ոսկրակայ կրգամ, քաղաք կարևոր զործեր ունիմ, Ս. աջնորդը պէտք է տեսնեմ...

— Էդ «էֆէնդին» ո՞վ է, որ չեմ ճանչնար:

Ընկերներս տեղեկութիւն տուին:

— Ռհ, ոհ, ինչ պատուական մարդ է, ի՛նչ անուշ մարդ է, — անապարեց Հայր սուրբը հազիւ հող երեստ տեսնելով:

— Հայր սուրբ, դու ի՛նչ գիտես, որ մեր էֆէնդին պատուական է, — հարցուցին քմծիծաղ ուղեկիցներս:

— Վա, օրհնեալ լինիք... մտրդս երեսով կըձանչցուի... Ի՞նչպէս ես, էֆէնդի, հազար բարով, վեր իմ աւայ, վեր իմ զլխիս... Ղուրբան, մէկ հատ չեգարայ չիս շնորհեր — շատ թիրխաքի (զիւրազրդիւ, սրանեղ) եմ...

— Ո՛հ, ի՞նչ անուշ թիւթիւն է... կաշա՞ղ է թէ բէ-
ժի,—հարցուց նա ինձ, ծխի առաջին ամպը բերնից հա-
նելով:

«Վաչաղ» (փախսասական) է կոչուում այն թիւթիւնը,
որի ցանոզները դադանի ու էժան ծախում են ուղղորդիւն:
Իսկ օրէնքով նա պիտի ծախուի միմիայն Թիւրքիայի
ճիւղատան մենալաճառութեան արտօնատէր — եւրոպա-
կան «բէժի» ընկերութեան: Այդ մենալաճառութիւնը հաս-
տատուեցաւ 1885-ին, որով յօգս ցնդեցաւ այնտեղի պատ-
ուական ճիւղատաների համ ու հոտը:

— Վաչաղ է, հայր սուրբ, — պատասխանեցի նրա
հարցման:

— Սևոս ախպեր, հայր սուրբին մէկ հաս րազի տո՛ւր,
ճամբորդ է, թո՞ղ քիչ աաքնայ,—գոչեց Փանոս ախպերը:

— Ո՛հ, ո՛ւհ... արա՞ղ էլ ունիք, օրհնեա՛լ լինիք, Ս.ս-
առուած պահէ, — գողգոլաց վարդապետը, բերնից ջուր
թափելով:

Նա ստեց կամ, աւելի լաւ է ասել, յափշտակեց Սևոս
ախպոր ձեռքից արազի լեցուած թասը:

— Կենացնիդ, որդիք, ուխտերնիդ ընդունելի լինի, Տէր
Սատուած ձեր գործոց յաջողութիւն տայ, անթառամ
պսակի արժանանաք, Քրիստոս Սատուած ձեզ ձեր մու-
րաաին հասցնէ... Ո՛ղջ մնաս, էՖէնդի, հազա՛ր, հազա՛ր
բարով, դու մեր մուսաֆիրն ես, բարի ես եկել...

Մէկ րոպէից յետոյ բաժնուկեցանք իմ անձանօթից, ընդ-
հատելով նրա անվերջ բարեմաղթութիւնները, որ դուրս
էին ցայտում իր բերնից իբրև մի ռուսուտը: Հայր սուրբը
իր ամբողջ էութեամբ այնքան խոնարհ ու հեղ էր երևում,
որ անկարելի էր «հոգ ու մոխիր» չքկարծել նրան:

— Ս.ման, Սրապիոն հայր սուրբ,—ասում էր ճանա-
պարհին ուստայ Թորոսը—ամէն մէկ մաղի տակ հազար հաս
ստանայ ունի:

— Իրան,—բացահանչեցի ես զարմացմամբ:

— Դրա նազը (պատմութիւնը) շատ երկար է,—վերայ բերաւ ուստայ Դաւիթը—բայց ի՞նչ անես, որ զիւղացիք շատ կը յարգեն զինքը: Ամէն անգամ, երբ զիւղերթայ, է՛լ բան չի թողներ խեղճ զիւղացոց մօտ: Է՛լ գուլայ, է՛լ կտաւատ, է՛լ ձէթ, է՛լ չորցած բանջար, է՛լ մեղրամոմ... նա՛ բիւյլիմ (ի՞նչ զիտեմ)...

— Ի՞նչն է ուզում թէ զիւղացիքն են տալիս,—հարցուցի հեռաքրքիր:

— Է՛րմ, Սրապիոն հայր սուրբը այնքան միամիտ չէ, որ ինքն ուզէ: Գիւղացի կանայք սուրբի տեղ կ'ընդունեն իրեն... Զեբի մէջ միշտ մէկ նուկի աղ ունի: Շաբաթը մի անգամ տակի շորերը կը հանի, որ թափ տան թորվան (թոնիր) մէջ:—Աւար, խեղճ հայր սուրբ,—կրթուան միամիտ կանայք—էսաքանտար ոջի՛ւ... Աստուած ուր (իր) խոքուն տիրութեն անի... ես ինոր օտաց զուրբան էլնեմ, քան զԳէորք ճգնաւոր¹⁾ ջոջ է մեր հայր սուրբ:

— Ո՞րտեղէն է այդչափ ոջիւ,—հարցուցի:

— Ի՞նչ ոջիւ...—խնդացին ընկերներս միաբերան—չապկի մէջ աղ կը լեցնէ, որ ոջիւ տեղ ծախէ: Բայց նրա նազը շատ էրկեն է, թող մնայ պարապ ժամանակ: Աշխրքի մէջ նրա պէս կեղծաւոր մարդ չըկայ...

— Ե՛րգ, ե՛րգ, տղեներ,—բռնացին այս ու այն կողմ:

Մինչ «տղեները» շարունակում էին Սրուանձտեանց եպիսկոպոսի «Թէ հայրենեաց զողորիկ քնարք»-ը, քաշեցի յուշիկ Գրիգոր Բաբայր բազկից:—Վաղաչեմ, ասացի, փոքր ինչ տեղեկութիւն տուր ձեր Սրապիոն հայր սուրբի վրայ: Այդ վարդապետին ես մինչև այժմ քաղաք հանդիպած չեմ: Մի՞թէ չի գար այնտեղ:

— Շատ քիչ: Ամառը նա կը մնայ վանքի մէջ, իսկ ամբողջ ձմեռ կը պարտաի զիւղէ զիւղ, ժողովարարութիւն

1) Տես Վիմ անագատայ Գէորգ ճգնաւորը վեպիկ:

կ'անի: Ինքն էլ արդէն զիւղացի է և չափազանց տգէտ. հազիւ հազ կրկարդայ մի բան, իսկ գրել, կարելի է ասել, բնաւ չըզգիտէ: Եթէ դուք իր ստորագրութիւնը տեսնէք—չէք կարող երբէք ջոկել Սրապիոնն է թէ ինչ «կուրաբար»: Մի անգամ, երբ Երուսաղէմայ ուխտագնացութենէն նոր էր վերադարձել, մեր եկեղեցին «ձաշոց» կարդաց: Զէ՞ ինքը կարդալ չըզգիտէ.—խեղճ տիրացուները, կարծելով թէ, նա գրելը լաւ չի տեսներ՝ քիչ քիչ մոմերը քթին մտաացուցին ու «գեխան» էր որ աչքն էլ խճէին:—Որդի՛ք, կրթուայ հայր սուրբը քմճիծաղ, որդի՛ք, կ'ուզէք ս. Գրիգորայ մէշէքը (անտառները) վառէք, խճէք աչքս... Է՞ կարդալ չեմ գիտեր, էս...»:

— Սրգեօք չէ քարոզում կրբեմն զիւղերում:

— Հապա չէ:—Բայց կրանի թէ երբէք բերանը չը բանար այնտեղ: Ի՛նչ նախապաշարում, ի՛նչ փտած գաղափարներ ասես, որ չի մտցնէր զիւղացոց զլուս... Ե՛լ մագէ կամուրջ, էլ կարէ կարաս, էլ զժոխքի ո՞ր արհաւիրք կ'ուզես, որ չի տեղացնէր նոցա վրայ: Ես ինքս մի անգամ Գարմանգեղ հանդիպեցայ նրա քարոզին: Գարմանգեղոցոց ամենայն հռանդհամբ կըհամոզէր, թէ ս. Գրիգոր Լուսաւորիչը 3333 սատանայ հանեց Սրարատի փորից...:

Բայց խումբն արդէն հասաւ երգի

«Եւ կըծին և կըծնին

«Այս դաշտին մէջ ոչ խոտ, վարդ,

«Այլ վարդանայ ինկած երկիր

«Պիտի ծաղկի սուրբ հաւատ»:—

անմահական տողերին և էս ստիպուեցայ պահ մի լուսութիւն պահպանել:

— Ուստայ Թորոս, —կանչեց խօսակիցս իր առաջը գնացողին—մէկ հատ պատմէ՛ մեր էֆէնդիին Ալմաստ խաթունի (տիկնոջ) «հոգ վեր ¹⁾ զլիւիդ»-ը:

1) «Վերս — վրայ, վերայ: Այս նախդերը Վասպուրականցիք գնում են միշտ բառերից առաջ. «վեր զլիւս», «վեր քթիս և այլն»:

— Ի՞նչ «Հոգ վեր գլխիդ»,—պատասխանեց զարմացմամբ առաջինը:

— Է՛ն Սրապիոն վարդապետի Տիրամօր եկեղեցին խօսած քարոզը:

— Հա... Ծ՛օ, օրանդէն միտդ եկաւ էտա նազը:

— Պատմէ, պատմէ, զուբբան,—է՛Ֆէնդին լսած չէ:

— Էս խօսքը մէկ տասն տարուան բան է, — դարձաւ դէպի ինձ ուստայ Թորոսը, — Տիրամօր եկեղեցին, չեմ գիտեր ի՞նչ խաչից կ'էջնի, Սրապիոն Հայր սուրբը քարոզ մը կրիտօսի: Թարմայի (վերնատան) մէջ իմ լուսահոգի մէքն էլ նստուկ կ'էջնի: Կանայք կրտսեանն, որ վարդապետի ամէն մէկ խօսքի վրայ՝ մէքս իր ձեռքի ձկոււար բերնին, ջոջ մտան էլ ահանջին կրմտացուցի ու Հեան էլ «Հոգ վեր գլխիդ, Հոգ վեր գլխիդ» կ'ասի: — Քա՛, սե կապեմ, Ալմաստ խաթուն, էն ի՞նչ կ'անես», — կը Հարցուցնե կանայքը զարմացած: — «Նորագար կ'անեմ էսա մեր սեախոքու¹⁾ գլուխ...», — «Տէ՛ր, ոյրսմա — կ'ասէ ձուձունենց Թառիկ խաթունը ապշած — քա՛, կնիկ, ծռե՛ր ես, ի՞նչ է էիեր...»: — «Մու ջուվաբ (պատասխան) տուր, Նարդիս խաթուն, — կրբոտայ մայրս — քե մեռնեմ, ինսանի (մարդու) բերնէն էսա՞ (ցոյց տալով իր ահանջը) զասն ի (Հեռու է), թէ խալիի ահանջը»: — Հարբաթ, ուր (իր) ահանջը, Ալմաստ խաթուն»: — «Վէ՛ որ ըսկունի (սյսպէս), ինչո՞ւ էտա խորածխեղաուած մօրուար զաշ (առաջ) ուր խօսքերը «-ը ա-հանջ չի մտուցեր, սորայ (յետոյ) խալիս...»: — «Վալւահ, ազորթ կ'ասի Ալմաստ խաթունը», — կրվիայեն ամէն կողմից կանայքը...:

Սրապիոն Հայր սուրբը այն աստիճան արաստովոր տպաւորութիւն թողեց վրաս, որ ես անհրաժեշտ համարեցի այնուհետեւ՝ թէ՛ անձամբ ծանօթանալ նրա Հեա և թէ՛

¹⁾ Սեախոքի (սեահոգի) սյսպէս են անուանում Վասպուրականցիք հոգեորականներին. «Հ» գրի տեղ նրանք արտասանում են միշտ՝ «խ» — խաց, խոբի, խինդ և այլն:

ստոյգ տեղեկութիւններ հաւաքել նրա մասին: Ինձ յաջողեցաւ երկուսն էլ: Եւ ահա՛ մի ուրուագիծ (էպիլ) նրա կենսագրութիւնից:

Սրապիոն հայր սուրբը Հայոց Չորի Վերին-Բժնիկրտ գիւղեցն էր: Տասերեք տարեկան հասակում նա որբանում է ու յանձնում իր հօրեղբօր, որ խնամակալ էր նոյնպէս նրա ժառանգութեան: Հօրեղբօր մէջ ծագում է յանկարծ մի «գեղեցիկ» միաք.—եթէ մեր Կաղօյին (այդպէս էր այն ժամանակ վարդապետի անունը) «ուաղ» անկնք գլխներիցս—շատ աջայիբ (հիւնալի) բան կը լինի»:—«Սրի՛ ուղարկենք Ախթամար»,—միտն է բերում նա ու ինքն իրեն վարմանում իր խելօք գլխի վրայ: Եւ մարդը վճռում է:

Կաղօյի Ախթամարայ մոնթ (տիրացու) և յետոյ վարդապետ վառնալը ի հարկէ նախ՝ կ'ազատէր ու էս Մեղոյին, այսինքն՝ նրա հօրեղբօր, տղայի վրայ ծախսեր ու հոգեր անելուց, երկրորդ՝ այդ մի գիւրութիւն կրտար տիրելու որբի արտերին և երրորդ՝ նրա բարեպաշտական զգացումը քիչ մոխթարութիւն պիտի չըստանար, երբ նա ուշև ուշով մտածէր, թէ իր յատուկ նախաձեռնութեամբ հայ եկեղեցու պաշտօնեաների թիւը մէկով էլ աւելացաւ... Բացի այդ նա բաւականին փառասէր էր, այդ ու էս Մեղծն:—«Սիր բիւթիւն դիւնիան (ամբողջ աշխարհը) պէտք է ասի, թէ Ախթամարայ մէջ ու էս Մեղոյենց տնէն էլ վարդապետ կայ»,— ոգևորւում էր նա ծածուկ, մէջքը ծռում, աւամները բաց անում և երկու ձեռքով պինդ բռնում իր քաշալ զրուխը, որ մի գուցէ յանկարծ գոլորշիանայ այնտեղից իր — ինչպէս ինքն էր ասում— բիրինջի ախկըը (առաջնակարգ խելքը)...

Եւ առանց այդ բարեպաշտութեան ու փառասիրութեան չէ կարելի բացատրել այն հանգամանքը, որ սրանից քառասուն, յիսուն տարի առաջ միմիայն Վասպուրականի վանքերի ու անապատների մէջ աւելի քան 300 վեգարաւոր կար:

Ռէս Մեղոյի վճիռը վճիռ էր: Կազմոյին նա տարաւ ան-
միջապէս Ախթամար ու ձրեց այնտեղ: Որքը չ'ընդդիմացաւ:
Կազօն մօտ տաս տարի մնաց կզգում իբրև մօնթ, իբրև
Հացթուխի օգնական, վարդապետների փոքրաւոր և այլն,
ինչ ուզում էք, հասկացէք: Նա ամենեւին հակում չու-
նեցաւ այդտեղ գրադիտութիւն սովորելու: Հաղիւ նա կա-
րողանում էր, կաշուից դուրս դալով, կպցնել իրարու
տպապրուած տատերը՝ կարդալիս: Ուստի նա աւելի բարւոք
համարեց դոց (անգիր) սովորել տարիների ընթացքում՝
եկեղեցու մէջ կարդալու հասուածներն ու երգերը: Եւ
նրա ձայնն էլ—ոչի՛նչ, փնաս չունէր:

Կազօն վերջը անաստեց Ախթամարի այն ժամանակուայ
Բլըուլ մականուանեալ Կաթողիկոսին — որ դեռ ևս չէր
համաձայնում նրան սարկաւազ ձեռնադրել — ու տեղա-
փոխուեցաւ Լիմ անապատը: Սյստեղ նա կրկնապատկեց
իր եռանդը, երկար ժամանակ վարեց մինչև խկ խոհա-
րարի, հացթուխի ու մատանապետի պաշտօնները: Չէր
ուզում, որ միաբանները կամ վանահայրը մի շեւղ տես-
նէին իր աչքում, քծնում էր, շողքորթում ու լիզում
ամէնի ոտները, որպէս զի քաղցրացնէր նրանց աչքը ու
ինքն էլ արժանանար նրանց փառքին, ունենար իր վե-
ղարն ու փոքրաւորը (ախր չէ՞ նա էլ մարդ էր, ինսանի
որդի էր) ... Վերջապէս, էլ ինչ գլիններդ ցաւցնեմ, հա-
զար «վայ ու վազլախով» նա դառնում է՝ ճիշտ երեսուն
տարեկան հասակին՝ Լարդապետէ՛եք, — ինչպէս արտասանում
էր միշտ ինքը, մեր Սրապիոն հայր սուրբը:

Վարդապետ ձեռնադրուելուց ստաջ նրան շատ քիչ էր
պատահում գնալ իրենց զիւղը: Իսկապէս այդ նրան չէր
պատճառում մէկ առանձին բուսականութիւն: Նրա սիրտը
վանքի մէջն էր, նա ձգտում էր դէպի մի բան և արտաքոյ
այդ բանի, — ամենայն ինչ անկարևոր էր նրա համար: Նո-
րան պէտք էր վեղար, ահա այն բաղդաւոր միջոցը, ա-

ուանց որի նա չէր կարող հանգիստ սրտով նայել աշխարհի գործերի վրայ: Իսկ այժմ, երբ նա հասաւ իր նպատակին, այժմ նա ազատ էր անօրինել իր ժամանակը իր հաճոյքի համեմատ, ունենալ իր համոզումները, ճաշակը և կենցաղավարութեան օրէնքները: Նա գնում էր գիւղ ու տեսնում շինականների կեանքը: Նրանց թշուառութիւնները նրան շատ չէին վիրաւորում, որովհետեւ երբ նա համեմատում էր նրանց ազատ կենցաղավարութիւնը, նրանց ախորժակով ցամաք հաց ուտելը, նրանց ընտանեկան քաղցրութիւնները՝ իր անապատական կեանքի հետ, — շատ աւելի թշուառ էր համարում իր անձը: Նա նախանձում էր նրանց, սարսափելի կերպով նախանձում էր: Նա էլ էր ուզում ախորժակով հաց ուտել, բայց անապատի հացի մէջ համ չըկար: Նա էլ էր ուզում ազատ կեանք վարել, բայց Վանահայրը անողոք էր դէպի նա: Նա էլ էր ուզում, տոչորում, մեռնում էր, որ մի գեղեցիկ կին և որդիք ունենայ, բայց այդ արդէն ուշ էր: Նա ընկնում էր յուսահատութեան մէջ ու ողբում իր «նզովեալ» գլուխը...

Սյդ տրագիկոմէդիան լինցաւ վերջապէս նրանով, որ նա որոշեց մոռացութեան տալ իր դարձերը որկրամոլութեամբ: Նա չունէր որեւէ տաղանդ, որ կարողանար Առաջնորդ դառնալով կամ այլապէս՝ հարստանալ: Ուստի և որոշեց անապատի «պտղի» ու «տասանորդ» ժողովոյ լինել: Կարճ միջոցում նա ցոյց տուեց իր մեծ ընդունակութիւնները այդ բանում ու զգալի կերպով շատցուց Վանայ հասոյթները: Սյնուհետեւ նա ամբողջ երեսուն տարի ձեռք չըքաշեց այդ պաշտօնից թէ՛ Լիմ, թէ՛ Կատուց և թէ՛ (վերջին ժամանակներս) Վ. վանքի մէջ դանուած ատեն: Ամէն վանք մեծ ուրախութեամբ պատրաստ էր ընդունել նրա ծառայութիւնը, թէև հաստատ գիտէր, որ նա առնուազը իր հաւաքածի քառորդը իրեն էր յատկացնում: Եւ վանական հաստատութիւնը այդ բանից չէր վնասուում,

զի Սրապիոնն հայր սուրբը կրկնապատիկն էր ժողովում: Վ. վանքը նա տեղափոխուեցաւ ծովային կեանքից ձանձրացած լինելու պատճառով: Բացի այդ, նա այնտեղ շատ աւելի ազատ էր իր ճաշակով ապրելու:

Չընայելով իր այդ բարեկեցիկ կեանքին, Սրապիոնն հայր սուրբը վերին աստիճան ազահ ու լալիան բնաւորութիւն ունէր: Երբ նա մի տեղ ուտելու կամ խմելու բան տեսնէր, անպատճառ բերնից ջուր պիտի թափէր ու դողդղար: Սյդ էր պատճառը, որ քաղաքացիք նրան չէին սիրում ու մերժում էին նրան իրենց հիւրասիրութիւնը: Բայց նա ունէր և ուրիշ յանցանքներ:

Նրա կացած վանքում ես անցուցի ամբողջ մէկ ամիս և ծանօթացայ իր ներքին կեանքի շատ ու շատ կողմերին, որ չէ կարելի յառաջ բերել...

Բայց անհամեմատ պատիւ ունէր Սրապիոնն հայր սուրբը տգէտ ուսմկի, շինականների մէջ: Ճիշտ է, այնտեղ էլ կրեւում էին երբեմն կրբեմն նրա թոյլ կողմերը, բայց այն աստիճան ուսումնասիրել էր նա նոցա սիրտը շահելու եղանակները, որ կրբէք չէր ձգում նրանց մէջ իր վարկը: Սյդ մարդը զարմանալի կերպով տիրապետած էր նրանց էութեան վրայ, չընայելով որ նա արտաքուստ ծայրահեղ, հասարակ ու անշնորհ էր կրեւում: Ընթերցողը պէտք է զարմանայ, լսելով, որ գիւղացոց մեծամասնութիւնը նրան սրբի պէս էին պաշտում:

— Մի անգամ նստած ենք Սրապիոնն հայր սուրբի հետ Վ. վանքում ու «մատաղ» ենք ուտում: Մեզ հետ կային նաև եօթ-ութ հոգի ուրիշ անձինք, ի թիւս որոց և մի հարիւրամեայ գիւղացի խուլ ծերունի: Դա նախածանօթ էր վարդապետին և մինը նրա պաշտողներից: Բաժակ առաջարկուեցաւ հայր սուրբի կեանքը: — Ծերունին առեց իր դողդոջուն ձեռքով դաւաթը և նայելով վարդապետին արտասուալից ու կողկողազին, ասաց. «Հայր սուրբ, մեղայ

Աստուծոյ... թող մազ մ'էլնէի, քո վրադ էլնէի... մազ մ'էլնէի, ոտիդ տակն էլնէի...»: Կըյուսամ, ընթերցողը հասկացաւ, թէ ի՞նչ էր ուզում ասել Տերունին: — Նա ուզում էր ասել. «Աւելի սիրելի էր ինձ մարմնիդ մազերից մէկը լինել ու քեզ հետ արքայութեան արժանանալ, քան Աստուծուց ստեղծուած մի գեղեցիկ, բայց բազմամեզ ու զժողովի բաժին՝ հասարակ մահկանացու...»:

Մյդ աստիճան իշխել էր մեր Սրապիոն հայր սուրբը պարզ գիւղացու բարեպաշտական զգացումներին:

Մենք արդէն մօտեցել էինք անզգալի կերպով Ս. Գրիգորայ ստորոտին և քառորդ ժամէն յետոյ մտանք վերջապէս վանքի բակը: Այնտեղ պարկոտած էին քանի մի խումբ գիւղացի ընտանիքներ: Մի անկեան մէջ միայն շարունակուում էր Նատալիցոյ ընթրիքը: Պէտք է սասած, որ այս երբեմն հռչակաւոր ու փարթամ վանքը այժմ կիսաւեր վիճակի մէջ է և հազիւ երկու երեք սենեակ ունի ուխտաւորներին համար: Մեծ զժուարութեամբ կարողացանք մտնել սոցանից մինը, ուր տասի չափ քնած մարդ զտանք: Մենք, որ հօթ հողի էինք, չէինք կարող այնտեղ սեղաւորուիլ և, յետ երկար մտածութեան, որոշեցինք, որ մեզնից չորսը պարկեն գետնին, իսկ երեքը քնանան նստած՝ փոքրիկ նստարանի վրայ: Թէև կեանքիս մէջ առաջին անգամն էր, որ փորձում էի նստած քնել, այնուամենայնիւ գերազասեցի այդ նոր եղանակը:

Բոլոր ընկերներս՝ հազիւ հինգ լուպէ անցած՝ մտան կատարելապէս Մորփէոսի գիրկը: Արդէն ժամը վեցն էր: Սարսափելի յոգնութիւն էի զգում ծնկներիս մէջ, մարմինս էլ ամբողջովին տքում էր: Չընայելով նախորդ զիշերուան անքնութեան, մի ժամէն աւելի չարչարուեցայ գիտակցութիւնս մեռցնելու համար: Վերջապէս ընկայ մի կարճ մոռացութեան մէջ ու թմրեցայ:

Երկա՞ր չեն ամրան գիշերները: Կէս ժամ չ'անցած՝ ցատկեցայ սենեակի իրարանցումէն: Սրդէն ամէնքը ոտքի վրայ էին: Բակի աղբիւրի մէջ լուացւում էին ուխտաւոր կանայքն ու օրիորդները՝ ամէնքն էլ պաճաղարդեալ ու կիսաքուն: Գեղեցիկ են Վանայ աղջիկները արշալոյսին: Ես սիրում էի տեսնել նրանց թարմ—արիւնալից գէմքերը, երբ նոր էին աւարտած նրանք իրենց լուացումը՝ Վասպուրականի մշտապաղ, ականակիտ ջրերով:

Պուրս ելանք բակից զետեղուեցանք մերձակայ ձորակներից մէկի տափարակի վրայ, ճիշտ ու ճիշտ զըզըջող հեղեղատի գլխին: Թէ՛յ խմելէն վերջ, ելանք վանքի բոլորտիքն ու բարձունքը զիտելու: Վանքն արդէն պարփակուած է Վարազայ սարի երկու շղթաների մէջ, փոքրիկ բարձրաւանդակի մը վրայ: Զորը լեցուած է թփերով ու հաստահիմն ծառերով: Սյդ բուսականութիւնը աւելի առատ է հիւսիսային շղթայի վրայ, մի հանգամանք, որով բացատրւում է անձնիւր ուխտաւորի տենչը՝ նախ այդ կողմի բարձունքը վերելակելու: Բարձրացանք մացառների մէջէն, նեղ ու ոլորապտոյտ շաւիղներով: Հսկայական ծառեր, թաւալզոր եղած ժամանակի ժանիքներէն ու մարգիանց անհոգութենէն՝ պատնէշում են տեղ տեղ այդ անձուկ ու յոգնեցուցիչ ծառուղիները: Ծառերի ճիւղերը այնչափ խճողուած ու սիրով զրկախառնուած են իրարու հետ, որ անհնար է առանց տասարի ուղի մը բանալ քովի պրակների մէջ: Վտանգաւոր է նոյնպէս գլխահակ ու խոկալով բարձրանալ նոյն իսկ շաւիղների միջով, զի կողքի ծառերը ամենայն համարձակութեամբ մարդու աչք են խճում իրենց երկայն ու փշտոս ստերը: Քսան ըոպէից յետոյ հասանք վերջապէս մի փոքրիկ բարձրաւանդակի:—Սյդտեղ է ս. Լուսաւորչի «աղօթքապեղին»:

Սրդարեւ, շատ ճաշակաւոր են եղիլ մեր սրբերը: Ով որ մի անգամ տեսել է Նարեկացու չնաշխարհիկ ձգնա-

րանը և վերին Վարապայ, Սորփայ, Կարձկանի ս, Գէորդայ, Ռշտունեաց Կարմրակայ, Ախթամարայ և Հայաստանի շատ ուրիշ մենաստանաց ու եղբայրանոցաց զմայլեցուցիչ տեսքն ու դիրքը,— չի պարսաւի սքանչացումն նաև յիշեալ «տղօթբատեղի» համար:

— Աւար, տղեներ, հողիս ելաւ,— դռնեց յոգնած Աւտոն ու ընկաւ կապարի պէս՝ նստելու մատուան առաջ բեւեռուած մի քարի վրայ:

— Միս, ի՛նչ խորոտ (զեղեցիկ) է,— վկայեցին ընկերներս միաբերան՝ դիտելով ս. Գրիգորայ ձորը իր համայն ամբողջութեամբ, հանդերձ պէսպէսազոյն ուխտաւորներով ու դիմացի Կոխպանից զիւղով:

Աղօթատեղին մի փոքրիկ մատուռ է, որի մէջ չէ մոռացուած նաև փոքրիկ սեղան մը ու խորան՝ ս. պատարազը մատուցանելու համար: Ո՛չ ժամանակը և ո՛չ մարդկային ձեռքը չեն խախտած դեռ ևս նրա «անշարժ վէմը»: Պատերի վրայ չէ մնացել գրեթէ մի անբիծ տեղ: Ածուխը դրոշմել է ամենուրեք իր փոշին՝ ուխտաւորների անունները մոռացութեան չըպատապարտելու համար: Այդ ձգնարանը ունի նաև իր յատուկ աղբիւրը, որ չէ այնչափ բարեհամ:

— Կ'ուզէ՞ք, Կոխպանց էլ երթանք,— հարցուց ինձ ուստայ Թորոսը, իր անունն էլ ածուխով գրելուց յետոյ:

Ես նրան յայանեցի թէ ցանկալի էր ինձ ամէն տեղ երթալ, բայց չէի ուզի նրանց յոգնեցնել: Սակայն շուտով ես համոզուեցայ, որ դիւրին չէր այդ օրը անհաշիւ կերպով պրտըտիլ, զի հարկ էր անպատճառ քաղաք պերադառնալ: Ուրեմն ինձ անհնար եղաւ զոհացնել հետաքրքրութիւնս այդ պատմական տեղը տեսնելու համար: Այդ պատճառով ես շատացայ միայն, պատմելով մատուան առաջ մեր ընկերներին մի անմոռանալի դէպք, որ ոչ նուազ անմոռանալի պիտի կացուցանէր դարաւոր Կոխպանց դիւղի անունը:

Արդ, Փաւստոս Բիւզանդացին նկարագրում է մեզ իր թրթռուն լեզուով՝ Մեհրուժանայ շատ խժգժական արարքներ Հայաստանում: Նա պատմում է ի մէջ այլոց, թէ ինչ ձևով նահատակեց սա Նամիրամակերտի ժայռերի վրայ Ռշտունեաց Գարեգին իշխանի տիկին Համազասպուհուն՝ հաւատք չուրանալու համար: Թողնելով իր ուրիշ կանանց հետ նաև իր կողակիցը Վանայ բերդում՝ Գարեգինը մազապուրժ եղաւ Մեհրուժանի ճիրաններից: Հաւատափոխի բոլոր ճիգերը ընդունայն անցան Համազասպուհուն Մազդեզանց կրօնը ընդունել տալու համար:— Նա հրամայեց կախել խեղճ կնոջը գլխիվայր՝ բերդի մի սեպացած ժայռից, որ նայում էր Բզնունեաց ծովին: Մերկացուցին զայն «իբրև ի մօրս», նա սպիտակ էր մարմնով ու պայծառ՝ համայն տեսքով: Նրա կախեալ մարմինը փաղփաղում էր վերևից, որպէս ձիւնը իր սպիտակութեամբ: Հողին աւանդելէն յետոյ, մարմինն էլ սկսաւ քիչ քիչ քայքայուիլ... Տիկնոջ գորովագութ դայեակը, կանգնած կիսաշունչ՝ իր անզուգական սանի դիակի տակ՝ հաւաքում էր ծոցի մէջ նրա վայր թափուող ոսկերոտին:— Այդ սուրբ նշխարներն էին ահա, որ տարաւ նա իր դողդոջուն ձեռքերով՝ հանգստացնելու բարձրագիր Կոխպանից ստորերկրեայ խաւերի մէջ¹⁾:

— Իրա՞ւ Մեհրուժան ասածդ հայ էր, — հարցուց ինձ ուստայ Դաւիթը մի ձայնով, որ աւելի փորից, քան կոկորդիցն էր դուրս ելնում:

Ես ախամայ նայեցի նրա երեսին: Երբէք վրէժխնդրութիւնը, ատելութիւնն և պատուազգացութիւնը այդչափ մարմնացած չէին հանդիսացել ինձ: Նրա խոշոր աչքերը, կարծես, դուրս պիտի թռչէին իրենց սահմանաւ խոռոչներից: Բիրբերն արդէն ծածկուած էին մի խոնաւութեամբ, նոցա փայլն աւելի ևս սաստկացնելու համար: Կապտացած

1) Տես Փաւստոս Բիւզանդացու (Վ.Նեոսիկ) երես 178—179:

չթուներնրը դողդողում էին, երեսն համայն դաշկապատ էր:

— Աստուած մեր տունն աւեր չանի, — արտասանեց Մարտիրոս ախպիրը, կարծես զինովութիւնից սթափուած — մարդ որ իր ձեռքով իր տունն աւերի, էլ ուրիշին ինչ կանաս ասել...

Կէս ժամից յետոյ մենք արդէն իջած էինք վայր: Ուխտաւորների թիւը խիստ մեծցած էր: Այս ու այն կողմ սկսած էին երգն ու պարը: Խարոյիների ծուխը՝ մերթ սև, մերթ կապոյտ՝ ամպացած էր գլխներիս: Երթեւեկ ուխտաւորների թիւը թէև այդ օրը չափազանց շատ էր, սակայն մեծ մասը, տեղի սահաւութեան պատճառով, տեղափոխուած էր Վարազայ վանքը, որ ժամու կէս միայն հեռու է այդտեղէն՝ դէպի արևմուտք: Այդ է պատճառը, որ դոյն օրը Վարազ աւելի շատ բազմութիւն է լինում քան ի ս. Գրիգոր: Եւ իրաւունք ունի Վարազ, զի շատ դիւրութիւններ է ընծայում զըւարճասէր ուխտաւորներին:

— Ինանք Սալնապատ, — որոշեցին ընկերներս:

«Սալնապատ»-ը մի զուլալ ու անմահական աղբիւր է լեռան պատուանդանի տակ, շատ մերձ վանքին: Այդ ջրի առակելութիւնը ցոյց տալու համար բաւական է յայտնել ձեզ, որ Վանայ մեծաւորները՝ արհամարհելով քաղաքի շատ պատուական ջրեր՝ իշու բեռներով տանել են տալիս շարունակ զայն, «խկական» ջրի համը վայելելու համար: Եւ քանի՜ արպարացի է այդ:

Այնուհետև մենք, ճեղքելով երկսեռ ուխտաւորների թանձրութիւնը, մտանք նորէն վանքի բուն եկեղեցին: Արդէն արտաքուստ էլ շատ անշուք է նա իր դժգոյն ու խարխրած պատերով: Նրա ներսն էլ, արտաքինի նման, մի մեղամաղձութիւն է գրոշմում մարդու սրտի վրայ. դձուձ ու դատարկ է զաւիթը¹⁾, խիստ մութ՝ տաճարը: Պատ-

¹⁾ Վասպուրականի Հին եկեղեցիները միշտ երկու մասին են լինում՝ լազկացած — տաճարից և գաւթից: Առաջինի մէջն է մատուցում պատարագը, իսկ ժողովուրդը կանգնում է վերջինում:

մու՛մ են, թէ երբ, քանի մի տարի առաջ, նորոգում էին զաւթի կիսափուլ պատերէն մէկը, զանուեցաւ մէկ զոյգ հողաթափ, իբր սեպհականութիւն ս. Լուսաւորչի: Հաւաստում են, թէ այդ չնաշխարհիկ անտիկան վերստին շարեցին նոյն ուրմի մէջ:

— Տղենե՛ր, փորս անօթի է, տեղ զանենք մեզի,—ասաց Փանոս ախպերը, վանքէն դուրս գալուց յետոյ:

Մի զարմանալի զուգադիպութեամբ նոյն վայրկինին Վարագ էր երթում Նասախցիների այն խումբը, որ բռնած էր մեր առաւօտեան տեղը: Յական թօթափել վապեցինք նոյն տեղ և քանի մի ածուխ աւելցնելով, բորբոքեցինք կիսասպառ օջախը:

— Աւտօ, քե մեռնեմ, ձուկն ես պիտի եփեմ,—աղաչում էր ուստայ Թորոսը:

— Լա՛ւ, ջայնմամ քո գլուխ... ինչ կ'ուզես, արա՛,— պատասխանեց Աւտօն այնպիսի մէկ անուշութեամբ, որ կարծես մեծ օրհնէք էր, որ տալիս էր նրան:

Մի շնտ համով ծիծաղ արձակեցինք ամէնքս:

— Քո գլուխ ջայնամ... — վրայ բերաւ քաղցր, բայց խիստ ամօթխած սրտով խեղճ մարդը:

— Աղօթքատեղէն չորս հատ սունկ եմ քաղեր, մէկ ջրէֆ¹⁾ պէտք է եփեմ, որ հիչ կերած չէ՛նէք,—ասաց Աւտօն խոհարարի մը անձնապաստանութեամբ: Եւ արդարև, այդ մի պարծենկոտութիւն չէր, ինչպէս փորձն ապացուցեց:

— Լաւ երնջիկի միս էլ ունինք, էն ի՛նչ պիտի անէք,— խօսեցին քանիններ:

— Վովկասի խորոված,— պատասխանեցի ես—ինչ կ'ուզէք, արէք, բայց մէկ երկու շեշ մեր երկրի Դեաֆաֆ պիտի ուտեցնեմ ձեզ:

¹⁾ «Ջրբուրք» եփում է սունկից, ձուկից, տիսից ու իւղից. դա նոցա սովորական արգանակն է:

Ուստի պատրաստուեցան քանի մի դալար ոստեր, իմ տենչալի «խորովածն» էլ հասցնելու:

Նեո նոր էինք սկսել Վանայ շոր «տառեխ»-ի վրայ բաժակներ պարպել, երբ ապուշ դէմքով գիւղացի մը մօտեցաւ մեր սեղանին: Նա նայում էր մեզ մի զարմացական ծիծաղով և ճիշտ այնպիսի «իրաւունքով» ու հանդարտութեամբ, ինչպէս այդ կրպատահի փողոցներում՝ որ և է կատակերգական դէպքին «Թամաշայ» անկիս: Քանի մի ըոպէ ընկերներս բնաւ ուշադրութիւն չըդարձուցին նրա վրայ, զի, պէտք է խոստովանել, այդ մի սովորական բան էր նոցա համար: Եւ յիրաւի, ով մի անգամ պրարտած է Տաճկաստանի դիւղեր, — շատ լաւ գիտէ, թէ որչափ բնական, եթէ չ'ասեմ քաղաքավար, մի սովորոյթ է շինականների համար՝ հաւաքուիլ ճաշող հիւրերի շուրջ և ոչ միայն հանգիսատես լինել նոցա կեր ու խումին, այլ նոյն իսկ նրանց կերած պատառները համրել: Եւ, շատ անգամ պէտք կը լինին խիստ մասնաւոր միջոցներ՝ գլխներիցդ հեռացնելու նոցա: Ես առաջարկեցի մի գաւաթ գինի տալ այդ անկոչ հիւրին:

— Ծօ, դու ո՞ր թարաֆէն ես, — հարցուցին նրան:

— Շատխու եմ, աղայ...

Աւտօն մի քիչ փսփսաց Թորոս ախպօր ականջին:

— Ծօ, տղայ, դու ձիկ պիտի խաբես, — դիմեց նրան վերջինը — ես խաբար չեմ, որ դու Վաճկեսայ Տրուերէն ¹⁾ ես...

— Զէ, վալլահ, ես Շատխու եմ, — պատասխանեց ծոճրակը քորկերով մեր անծանօթը, բայց մի այնպիսի յիմար դերասանութեամբ, որ իրմէ շատ ապուշներն էլ կարող էին հասկանալ:

— Ծօ, խոյ (հայ) ոէս Սախօն հարս կայ, թէ մեռած է, — հարցուց Մարտիրոս ախպերը:

¹ Վաճեո գիւղը իր գաւառակով ընկնում է Էստախի, այսինքն հին Զերմաճորի, հարաւային կողմը: «Ծոճ» բառը Վասայ լեզուով «խենթ» անել է:

Գիւղացին նայեց նրան միայն մի յիմար ծիծաղով, առանց պատասխանի յարմար մի խօսք դանկելու:

— Ծօ, ձեր էնա «գիտոսիկ», կ'ասեն, Սաամբօյն է, աղօրթ է,—հարցուց Աւանն արագ արագ:

Բայց «գիտոսիկ» բառը լսելուն պէս, խեղճ Կաճեացին արդէն ճողորկեցաւ, առանց իր անտարբեր ծիծաղը թողնելու:

— Ինչո՞ւ խրանեցուցիք այդ խեղճ մարդը,—հարցուցի ես զարմանօք:

— Ընդհակառակ, ես շատ կ'ուզէի, որ հետը քիչ մը խաբար տայինք,—պատասխանեց ինձ Մարտիրոս ախպերը—շատ զուարճալի են էդ անպիտանները: Կարելի է դուք լսած չէ՞ք Կաճեաց ծռերի պատմութիւնները:

— Նստ քիչ:

— Դէ, Աւան, մարիթաթդ (շնորհք) նշանց տալու ժամանակն է,—բողացին «տղեները» չորս կողմից:

— Էսա մեր Աւանն,—գարձաւ դէպի ինձ Թորոս ուստան—շատ կ'առնի կուտայ (յարաբերութիւն ունի) Կաճեաց ծռերու հետ: Էն շատ լաւ կրպատմի ինոնց նազը:

Եւ Աւանն սկսեց... Էլ խորոված, էլ ջլբուր, ամէնն էլ մոռցայ: Երբ Աւանն յոգնուժ էր, միւսներն էին շարունակում, բայց այնպիսի մի լեզուով, որ անկարող եմ ես այստեղ փոխադրել, առանց նոցա համն ու հոտը խանգարելու: Ճաշի ժամանակը հերիք չըլինելով այդ պատմութիւնների համար, մենք մի անսպառելի ակորժանօք շարունակեցինք զայն նաև քաղաք վերադառնալիս: Կեանքիս մէջ շատ քիչ անգամ էր պատահել ինձ այդչափ ծիծաղել: Եւ մենք ոչ թէ ծիծաղում էինք, այլ ծիծաղու մեռնում էինք, կամ, աւելի ճիշտն ասած, մեռնում էի: «Սաման, Կաճեացիք»,—կրկնում էի ես հազար անգամ, փորս բռնելով ու շնչարգել լինելով:

Թոյլ տուէք ուրեմն, յարգելի ընթերցող, շարել այս-

տեղ՝ սոսկ գրական լեզուով՝ մի քանիսը այդ «մասաչներից» (առակ): Հազար ներողութիւն, որ չեմ կարող բուն Կաճեացոց լեզուով գրել: _____

— Խումբ մը Կաճեացիք Վան գալով և շուկայի մէջ ձմերուկի շեղջեր տեսնելով, հարցնում են զայնս վաճառողներին, թէ ի՞նչ են արդեօք այդ առարկաները: Պատասխան են ընդունում, թէ դրանք «իշու սերմեր» են և թէ մէն մի ձմերուկ կարող է հարիւրաւոր քուռակներ ի լոյս ածել: Ա.ո. այդ՝ ցոյց է տրւում նոցա մի կարած ձմերուկ սև սերմերով հանդերձ: Կաճեացիք փառք տալով Ասածուն, ընտրում ու գնում են անմիջապէս նոցանից ամենախոշորը: Հայրենիք վերագառնալիս, նոքա նստեում են հանգչելու ձորի մի գլխին, դնելով գետնի վրայ նաև իրենց «իշու սերմը»: «Նշու սերմը» գլորւում է յանկարծ ձորի անդունդը ու քանի մի պատառ լինում: Ճիշտ այդ վայրիկնին դուրս է ցատկում նոյն տեղից մի նապաստակ և փախչում կայծակի արագութեամբ, անտես առնելով Կաճեացու «Քե մեռնեմ, այ քուռակ, էսա դելին (կողմ) էկուր, ես եմ քո տէրը» ողորդական խօսքերը: Տուն հասնելով, յուսահատ Կաճեացին հաղորդում է իր կնոջ օրուան ցաւալի պատմութիւնը:— «Ափսոս, բացականչում է կինը, ափսոս որ քուռակը ձեռքդ չ'ընկաւ. ի՞նչ լաւ կրլինէր, որ ես վրան հեծնէի երբեմն, քաղաք գնալիս»:— «Ի՞նչպէս թէ հեծնէիր,— կրբոսայ կատաղած էրիկը (այր)— չէ՞ դեռ քուռակ էր, մէջքը պիտի ցաւցնէ՛իր այն խեղճ անասունին»: Այս ասելը, փայտը կնոջ գլխին հասցնելն ու զայն մահուան դուռը ձգելը մէկ վայրիկնի գործ կրլինի:

— Տղայ մը ձեռքը փարչել մէջ խոթելով, այլ ևս չէ կարողանում դուրս հանել: Ամբողջ գիւղը անզօր է լինում այդ մասին մի ձար գտնելու: Գիւղը հասնելով վերջապէս իրենց «ուսումնական» խրատտուն, որ սովորաբար

«գիտոսիկ» է կոչուում,— պատուելիւում է. «Ատրէք զձեռք, կոտրէք զփարչ և հանէք ապա զձեռք (գաստակը)»: Խորհուրդը անմիջապէս կատարուում է...

— Դիւզացին տեսնում է արտի մէջ մէկ ձի, որ ճանաչելից նեղուկիով, զլուսը շարժելիս է լինում: Այդ նրան բարեգուշակ բան չէ երևում: Երկար մտածելէն յետոյ նա հարցնում է անասունին. «Ա՛ ձի, դու ինձ պիտի ուտես»,— անասունը շարունակելով իր գլխի շարժելը (վերէն վար) նրան կարծել է տալիս, թէ «Այո»:— «Մեր տէրտէրն էլ կ'ուտես»— երևոյթը կրկնուում է:— «Մեր ուէսն էլ կ'ուտես»— նոյն պատասխանը:— «Մեր զիւղը ամբողջապէս կ'ուտես»— այո՛, հաստատում է միշտ ձին: Սարսափահարը շինականը ողին ի բռին նեւուում է զիւղ... Ահագի՛ն իրարանցում զիւզացիների մէջ գալոց զժբաղդութեան վրայ: «Գիտոսիկը», յետ խորին ու քրտնաջան մտածութեան, վճիռ է արձակում զաղթել անմիջապէս այդ զիւղից: Քահանան էլ աւելցնում է, թէ անհրաժեշտ է իրենց եկեղեցին էլ հետերնին տանել... Հաստ պարանը պատում է եկեղեցու շուրջ և ջիւղեռանդներն, քահանայի առաջնորդութեամբ, լծուում են պարանին ու քաշում, որչափ ոյժերնին կրպատէ...: Հինգ բոպէից յետոյ ամէնքն էլ քարաշէն տաճարի փլտտակների տակն են: Ողջ քնացածները պարտ անձին են համարում ազատել աւերակների տակէն տէրտէրի ս. դիակը: Երկար խուզարկութիւնից յետոյ գտնուում է մի զլուս մօրուքաւոր դէմքով: Նատերը կարծում են, թէ այդ պիտի լինի փնտուուած իրը, սակայ ոչ ոք լաւ չէ յիշում, թէ արդեօք իրենց տէր-բարան մօրուք կրճում էր, թէ չէ... Որոշում են հարցում ուղղել այդ մասին այրիացեալ տիրուհուն:— «Ալլահ, չեմ յիշեր, մօրուս ունէր, թէ չէ,— պատասխանում է սգաւոր «տիրուխնին»— միտս գալիս է միայն, որ հաց ուտելու ժամանակ լուսահոգու կղակին մի բան էր շարժում...»

— Գիւղացու եղը Հիւանդացած լինելով, Հարկաւոր է լինում մորթիլ զայն: Մեծ դանակը զետեղուած է լինում առաստաղի մօտ գտնուած պահարանում: Յետ երկար մտածութեան վճռում են եղը շուաններով մինչև պահարանը բարձրացնել ու այնպէս ղենել:

— Կարձեալ մի ուրիշ տղայի ձեռքը փարչի մէջն է մնացել: Դժուարանալով այս անգամ էլ «գիտոտիկի» դաժան խորհրդին հետեւիլ, ճգնում են մի այլ միջոց գտնել: Պառաւի մէկը օգնութեան հասնելով, փորձում է բազկի փոխանակ փարչը կտորել ու այնպէս ձեռքն ազատել: Անասելի՛ ապշութիւն համայն Կաճեացիների մէջ... Խնձով արդեօք արտայայտել դէպի այդ «խմաստուն» պառաւը իրենց բուն երախտագիտական զգացումները: Երկնր խորհրդակցելուց յետոյ վճռում են առաստաղից այնպէս կախել խեղճ պառաւին, որ նրա ոտները ճիշտ հասնեն նստած հանդիսականների գլխին: Պառաւը մեծ դոհունակութեամբ ընդունում է իրեն մատուցանելի պատիւը: Լինզ ըստ է չանցած, երևում են խեղզուած պառաւի աստմները... «Մեռնենք ատամներացդ, ի՛նչիս (ի՛նչպէս) կըծիճղայ» — զմայլում են պառաւի նողկալի «ծիճաղի» վրայ մեր թեթեամիտ մարդասպանները:

— Կաճեացի մը տեսնում է, որ շատ թանկ գնով է ծախւում աղը: Սյդ շատ է մտատանջում նրան և նա յղանում է մի միտք—ցանեղ այդ համեղ հանքը, որ առատութեամբ ու աժան գործ ածուի: Մէկ ամսից յետոյ նա ման է գալիս աղի արտի մէջ ու իր աշխատանքի պտուղները որոնում: Սյս կողմ, այն կողմ,—բան չէ երևում: Նա փորձում է շուռ տալ այնտեղ գտնուած մի մեծ քար. երևում է մի զեղեցիկ կարիճ... «Լատկացայ, հասկացայ,—ասում է նա ինքն իրեն—մի՛ ասա որ աղը քարոտ տեղ աւելի լաւ է բռնում եղեր»:—Ողևորուած, կարիճը գնում է իր լեզուին և նրա թոյնից այրուելուն պէս, լեզուն

չըթուներնիրն քարսկըով, դէն է պցուս: «Մտ աղը հալա չըմեծացած,—պատմում է նա իր դրացիներին—որ այսօր քան սարթ (ուժեղ) է, ի՛նչ գեղեցիկ բան պէ՛տք է լինի մէկ երկու ամսից յետոյ»:

— Կաճեացիք Վան գնալով, տեսնում են, որ քաղաքացիք ձմեռուայ համար կաղամբ են թթուեցնում: Նրանք էլ չեն ուզում յետ մնալ այդ սովորութիւնից: Ամբողջ գիւղը միանում է և ընդհանուր ոյժերով գնում քանի մի հարիւր լիտր կաղամբ, աղ ու քացախ: Նրանք մտածում են, որ աւելի լաւ կը լինի այդ «թթուն» հասարակաց սեպհականութիւն անել: Ուստի «Գիտոսիկը» անհրաժեշտ է համարում սովորեցնել նրանց ամենադիւրին ճանապարհը, այսինքն՝ ձգել այդ բոլոր գնածները իրենց գիւղի լճի մէջ: Կաղամբը այնտեղ «կըհաննի», կըթթուի և յետոյ ամէն մարդ կարող է իր բաժինն ուտել... Սնցնում է աւելի քան երկու ամիս: Գիտոսիկը խորհուրդ է տալիս գիւղացիներից մէկին գնալ մտնել լիճը և եթէ կաղամբը հասած է (թթուած), ձեռքերով նշան տայ, որ ուրիշներն էլ գնան: Մարդը ուրախ ուրախ վազում է լիճ, մտնում մէջը ու խեղդուելիս լինելով, շարժում է ձեռքերը... «Հասած է, հասած է լահանան (կաղամբը)»,—պոռում են ամէնքը ու թափւում լիճ:

— Կառավարութեան հարկահանները շատ են նեղացնում խեղճ «ճուրին»: Այդ նրանց խիստ անհաճոյ բան է երևում և մտածում են վերջ տալ դրան: Մէկ օր նրանք համայնքով խնդիր են տալիս հարկահաններին, որ սրանք անձամբ այլ ևս Կաճեա չըմտնեն, այլ սպասեն մինչև այս ինչ օր և նրանք իրենց ամբողջ տուրքերը միասին կ'ուղարկին իրենց ձեռքով: Նշանակած օրը գալիս է և «ճուրը» ժողովելով գիւղի բոլոր տուրքերը, կապում են մի շորի մէջ ու ուղևորւում դէպի դայմագամը (գաւառապետ): Գիւղից նոր դուրս ելած, նրանք հանդիպում են մի նա-

պատտակի: Նրանք յաջողում են ձերբակալել նրան ու կապելով նրա պոչից յիշեալ կապոցը, խնդրում են նրանից տանել զայն ուր որ հարկն է...

— Կաճեացիների մի խումբ իրենց քահանայի ընկերակցութեամբ գնում են Կ. Պօլիս բազը որոնելու: Տղաներ, պատուիրում է տէր-բաբան, չըլինի որ յայտնէք այստեղ ձեր որ կողմից լինելը: Նոյն խանի մէջ բնակւող պանդուխտ վանցիները շատ շուտ են հասկանում նրանց անսարուեստ դերասանութիւնը: Հանելուկը լիովին փորատելու համար նոքա տէր-բաբային ընծայ են բերում մի պնակով սև, խոշոր չամիչ, կիսով չամի խառն սև միջատների հետ: «Տղաներ,— պատուիրում է ըստ սովորութեան տէր հայրը— տղեներ, առաջ ոտնաւորները կերէք, անոտները զաթի (արդէն) ձեր ծառէքն են»: Կատարւում է պատուէրը ու լուծւում տարակոյսը...

Երբ ես նոյն գիշեր խիստ յոգնած ծնկներով մտայ անկողին, Կաճեացայ ծռերն էին, որ խնդայնում էին ինձ խնկթի պէս, մենաւոր սենեակիս մէջ: Վերջին զաղափարը, որ ես յիշում էի քուն մտնելուց առաջ՝ Կաճեացոց ծռութիւնն էր միայն: Եւ երբ միւս առաւօտ արթնցայ—առանց զգալու սակայն թէ արթնցայ—ինքզինքս դարձեալ Կաճեացոց քաջագործութեանց վրայ խոկալու մէջ գտայ: Եւ եթէ չեմ սխալւում, երազումս էլ դրանից զատ ուրիշ բան չը տեսայ:

S. ՓԻՐՈՒՄԵԱՆՑ:



* * *

(Նադսոնից)։

Ընկեր իմ, եղբայր, դու վաստակաբեկ եղբայր իմ տանջուած,
 Ով որ էլ լինիս դու, մի վճատիր.
 Թող չհեծէ թշուառ անարդարութեամբ, չարիքով լցուած,
 Դառն արտասուէքով ողողուած երկիր,
 Թող որ խորտակուած ոտնակոխ լինի քո սուրբ իդէալ,
 Թող անմեղների արիւնն յորդանայ,—
 Հաւատա՛, եղբայր, կըգայ ժամանակ—կըկորչի Բաալ,
 Եւ նորից երկրին սէ՛ր կըտիրանայ։

Ո՛չ շղթաների դաժան բեռի տակ, ո՛չ փուշ պսակով
 Եւ ո՛չ ծանր խաչ կորացած ուսին,—
 Նա աշխարհ կըգայ մի նոր զօրութեամբ և մի նոր փառքով,
 Բաղդի պայծառ ջահն անյողգողգ ձեռին,
 Եւ էլ չի լինի աշխարհում արցունք, ոչ թշնամութիւն,
 Ոչ մոռցուած շիրիմ և ոչ ըստրուկներ,
 Ոչ կարօտութիւն, անլոյս, մահառիթ սև կարօտութիւն,
 Ոչ սուր, ոչ մահու խայտառակ սիւներ։

Ընկեր իմ, ցնորք չէ և ոչ պատիր յոյս այս մեծ, գերապանծ
 Գալուստը սիրոյ, զերթ այգ լուսավառ.
 Չորս կողմըգ նայի՛ր,—չարը ճնշում է արգէն չափազանց
 Եւ խիստ է արգէն գիշերը խաւար։
 Տառապանքներից աշխարհը կ'ընկճուի և կըթուլանայ
 Նա անմիտ կռուից, արեան մէջ խեղդուած,—
 Եւ դէպի սէրը, մեծ սէրն անձնալուծ, աչքը կ'ամբառնայ,
 Աչքը՝ վշտալի աղերսով լցուած....

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ։

1887. 24 գեկտեմբերի
 Փոսկուա.



Հ Ա Ս Օ

պատկեր

(Նուէր իմ վաղամու ընկեր Նէորդ Պապուկեանցի անմուսաց յիշատակին)։

I.

Կար մի՞թէ մէկը ամբողջ Ղ. գիւղում, որ չճանաչէր Հասոյին, այդ չարածճի Սամօնեց Հասոյին. կրբէ՛ք: Ամբողջ գիւղը ճանաչում էր այդ «սատանի պոջ» Հասոյին, ճանաչում էր նրան մանկութիւնից. ամենին ծանօթ էր այդ բարձրահասակ, վայելչակազմ, առոյգ պատանին. իսկ նրա թուխ, արևատ, նուրբ և գեղեցիկ գծազրած երեսը, նրա խոշոր, սևորակ, լայն թերթերուկներով պատած աչքերը, նրա խիտ մազերը, նրա կէս հպարտ, կէս հեղնական ժպիտը, որ միշտ խաղում էր նրա նեղ շրթունքների ծալքերում, նրա գուռոց, հրամայողական հայեացքը և վերջապէս նրա մաշուած, անգունացած արխալուղը և մորթեայ քօթօղը, որ նա կրում էր մի ճիշտ իշխանական հպարտութեամբ,— ծօ, դա մի այնպիսի սովորական, առօրեայ մանրամասնութիւններ էին, առանց որոնց Ղ—եցին անկարող էր երևակայել իրեն Սամօնեց Հասոյին: Այո՛, այդպէս էր Հասօն և ճիշտ այդպէս ճանաչում էին Հասոյին Ղ—եցիք համարեա այն օրից, երբ նա փոքրիկ, փողոցում ընկած լակոտից դարձաւ արդէն հասունացած 11 տարեկան պատանի:

Եւ դեռ ոչինչ ոչ մի կենսական երևոյթ, չէր վրդովել Հասոյի հոգու խաղաղ, պատանեկան անդորրութիւնը. ամեն ինչ այնտեղ դեռ լուռ էր և քնած: Հասօն դեռ շատ քիչ էր շփուել արտաքին կեանքի և նրա մութ, տգեղ

կողմերի հետ: Այն աշխարհը, ուր ապրում էր մինչև այժմ Հասօն, շատ նեղ և սահմանափակ էր, թէև գեղեցիկ և հրապուրիչ: Նա գիտէր միայն իւր գիւղը, իւր շրջակայ ապառաժոտ, ամպամած սարերը, ծիրացած, խոժոռուած վիթխարի ժայռերը, կարծես, անվերջ, անծայր, միշտ մութ, միշտ խորհրդաւոր լուռ անտառը, գիտէր կատաղի հոսանքով սարերից ցայտող ջրվէժները, գիտէր պարզ աղբիւրի անվերջ, միատեսակ խուլ մրմունջը, կիզիչ արևի թմրեցնող տաք ճառագայթները և հարաւի, այդ հրաշալի հարաւի գիշերային մութ-կապուտակ, կարծես, զմրուխտեայ երկինքը իւր անհամար վառվռուն աստղերով և իւր լուսնի մեղմ, փայփայող սպիտակ լուսով: Այդ ամենը գիտէր և ճանաչում էր Հասօն. համարեա նոյն իսկ օրօրոցից հարաւային կուսական շքեղ բնութեան պատկերը խոր տպաւորուել էր նրա սրտում: Այդ բնութեան ծոցում անց էր կացրել նա իւր ամբողջ կեանքը. այդ բնութիւնը և ինքը Հասօն, նրա ներքին «ես»ը այնպիսի սերտ կապերով էին կապուած միմեանց հետ, որ, կարծես, լրացնում էին փոխադարձաբար միմեանց գոյութիւնը աշխարհային ներդաշնակ կազմակերպութեան մէջ: Եւ ի՞նչպէս կարող էր լինիլ այլապէս. Հասօն բնութեան, պարզ բնութեան հարազատ որդին էր. նա Ղ. գիւղի խաշնարածն էր: Ահա ամբողջ 10 տարի է, ինչպէս նա հովվում է գիւղական խաշը: Նա հոգւով ու սրտով սիրում է իւր պարապմունքը. նա ճիշտ մայրական սիրով վերաբերվում է դէպի իւր փոքրիկ հօտը: Ամեն մէկին իւր ոչխարներից նա ճանաչում է, գիտէ նրանց մորթու և կազմուածքի այս կամ այն առանձնայատկութեան շնորհիւ. ամեն մէկը այդ ոչխարներից կրում է իւր առանձին, սեպհական անունը, որով կնքել էր նրան Հասօն նոյն իսկ փոքրիկ գառան լոյս-աշխարհ գալու առաջին օրից: Եւ ինչպէս քնքոյշ և սիրալիր էին այդ անունները, — «աւորակ», «սօսիկ», «աստղիկ», «Գօտո» — այդ ամենը Հասօյի

ամենամօտ և հարազատ ընկերներն էին, նրա սիրելիները: Եւ որքան բազդաւոր էր զգում իրեն Հասօն, որքան հպարտանում էր նա նրանցով:

Դեռ վաղ առաւօտեան, երբ ծագող արևը թափելով իւր վերջին ճիգը աշխատում էր պատռել հազար ու մի գոյներով ներկուած, շառագունած արշալոյսը, Հասօն, առնելով իւր հեռ լաւաշ ու պանիր, քշում էր իւր հօտը դէպի մերձակայ, կանաչով լի սարերը. և որքան ուրախ, որքան զուարթ էր լինում նա այդ ըոպէներին: Երկար ցուպը ձեռին նա արագ արագ դնում էր առաջ, այծի ճարպիկութեամբ ոտանում էր քարից քար, ձորից ձոր, և նրա անհոգ, ուրախ երգի բարձրաձայն ելևէջները խուլ երկարատե արձագանքներով կրկնվում էին սարերի հեռաւոր փեշերքներում:

Եւ ի՞նչ էր այդ երգը. ոչ լաց, ոչ գանգատ բազդի անողորմ, ծանր հարուածներից, ոչ սփոփանք կեանքից մաշուած, թուլացած հոգու և ոչ խաբուսիկ յոյս ապագայի: Այ այդպէս չէր Հասօյի երգը. նա ազատ էր ինչպէս քամին, որ անդադրում շուացնում էր սարերի անդունդներում և լանջերում, նա ազատ էր ինչպէս լեռնային արծիւր, որ սարի ապառաժոտ գագաթից ահա ձգել է իւր սրտոնս հայեաքը դէպի վայր և անվրդով, վեհանձնօրէն, իբրև հսկայական լեռների ազատ արքայ, նայում է այնտեղ ցածում խճճուող մարդկութեան չնչին, հազիւ հազ նկատելի միջատների վերայ:

Այո՛, այդպէս էր երգում և Հասօն. .

II.

Հասօն բնիկ Ա—եցի չէր. շատ, շատ տարիներ սրանից առաջ մի մուլթ գիշեր նրա Ոսկեհատ մայրը, շունչը կտրած, ուժից ընկած, ոտաբորբիկ մտել էր Ա. գիւղը. նրա զրկին էր և կոթնամանայ Հասօն: Խեղճ Ոսկեհատը ապաստա-

րան էր փնտռում. ամբողջ երկար օրեր և գիշերներ նա իբրև վայրենի գազան պտտել էր մութ անտառներում, ձորերում, անդունդներում: Սարսափելի գիշերներ... Այդ անցեալի յիշողութիւնները անջնջելի գրոշմուեցին խեղճի ուղեղում. նա փախչում էր իւր փոքրիկ Հասօյի հետ անսիրտ, անգութ թշնամուց. նա փախչում էր հարձանքից, մահից: Քանի՞ քանի անգամ նա մոլորուել էր անձանթ, անվերջ, խիտ անտառներում, քանի քանի անգամ մութը, անձրևը, փայլալը վրայ են հասել այն իսկ բուսէին, երբ անպաշտպան Ոսկեհատը դռնվում էր մութ, սևի տուող անտառներում: Ինչպէս կատաղաբար մռնչում է քամին: Այդ ի՞նչ է, կարծես, երեխայի լաց լինի դա: Ո՛հ, ինչպէս սուր է այդ ձայնը: Ոսկեհատը շտապով կռանում է և նայում փոքրիկ Հասօյի երեսին. ոչ, Հասօն անշարժ է, նա հանդիստ քնած է մօր գրկում: Խեղճ, խեղճ՝ Հասօ. նա ոչինչ, ոչինչ չգիտէ, նա զեռ փոքրիկ է, շատ փոքրիկ... Իսկ անտառում կրկին լսուեց քամու կատաղի, մերթ լացող, մլաւող, մերթ ոռնող շփվոցը: Ոսկեհատը դողալով կանգ է առնում մի մեծ ծերացած ծառի տակ. այնտեղ, վերևում խուլ սօսափխնով շփվում են միմեանց ծառերի թերթիկները, կարծես, հառաչելով ճռճում են հսկայի լայնատարած ճիւղերը, որքան ցած են կռանում նոքա քամու զօրութեան տակ: Ահա նոքա իրենց թաց, սառն թերթիկներով խփում են Ոսկեհատի տաքացած, քրտնած երեսին. նա դուրս է գալիս ծառի տակից և գիշերային մթութեան մէջ շարունակում է իւր ուղին: Մութ է, սարսափելի մութ է ամպամած երկինքը. ոչ մի աստղ երկնակամարի անհուն տարածութեան վերայ: Ոսկեհատը անդադար խփում է ծառերի չորացած թփերին, սուր, անտաշ քարերը խոցում են, ծակոտում են նրա բոբիկ օսները: Ահա մի ինչ որ տաքութիւն զգաց նա իւր կրունկի մէջ. արի՛ւն է դա, վէ՛րք— Ոսկեհատը չի էլ նայում. նա շտապում է, շտապում

է որքան կարելի է շուտ հեռանալ այն աեղեց, այն տեսարաններէից: Նա փախչում է իւր ծննդավայրէից:

Յանկարծ սեւ, միմեանց մօտ կուտակուած ամպերում ցոլաց փայլակը, լուեց ուժգին որոտումը և մի ակնթարթում անտառը լուսաւորուեց մի տարօրինակ վառ-կաթնագոյն լուսով. հեռուում երեւաց մի կոյտ սպիտակ սրբատաշ քարերի. դա Հին, թողած և արդէն մոռացուած մահմեդական մզկիթի խարխուլ աւերակներն էին: — Ի՞նչ է այդ, մտածեց վախեցած Ոսկեհատը. նա լսել է պառաւներէից, որ գիշերները անտառներում շրջում են յաւերժահարսներ, դէտեր, չմկրտուած երեխաների անմեղ հոգիներ, զրոգներ: Նա ամբողջ մարմնով դողում է, նա շուտ շուտ խաչակրէքում է երեսը և նրա չորացած, այրուող շրթուները մեքենայաբար արտասանում են աղօթքի հատուկոոր խօսքերը: Իսկ փոքրիկ Հասօն դարթել է մօր գրկում և լալիս է. նա քաղցած է, այդ աղերսայի լացը մորմոքում է խեղճ մօր սիրտը. նա շտապով բաց է անում իւր կուրծքը և տալիս է ստինքը երեխային. վերջինը ազահուժեամբ սկսում է ծծել. իսկ ստինքը չորացել է, վախից սպառել է մօր կաթը և անտառի մթութեան մէջ կրկին լսել է լինում խեղճ, քաղցած երեխայի սրտամաշ լացը: Բայց ո՞ր է շտապում ողորմելի Ոսկեհատը. այն ի՞նչ զարհուրելի տեսիլ է, որ անդադար մղում է նրան առաջ և միշտ առաջ: Ինչօր խեղճը ահ ու սարսափով յետ է դարձնում իւր արտասուքից թաց, արիւնխախտն աչքերը. ո՞ւմ է որոնում նրա անհանդիստ, շրջմոլիկ հայեացքը առաւօտեան թանձր մշուշի մէջ. ի՞նչ է մտաբերում խեղճը այն բոպէին, երբ նրա անդունդացած, դալիած երեսը սկսում է ծոմնուել ներգային ցնցումներից: Այո՛, նա չէ մոռացել այն զարհուրելի պատկերը. իբրև կենդանի տեսիլ, իբրև ներկայի իրողական փաստ իւր ամէն մի մանրամասնութեամբ կանչեա՞ծ է նրա առաջ անցեալը, այդ մօտ, ախուր անցեալը: Երեք օր սրանից

առաջ Ոսկեհատը երջանիկ էր, նա ունէր տուն, տեղ, դա-
ւասինը, դեռ կենդանի էր նրա Մրտօն, նրա աչքի լոյս, սիրելի
Մրտօն. իսկ այժմն... այո՛, նա լաւ յիշում է այդ երե-
կոն, այդ սարսափելի երեկոն: Դեռ նոր էին վերագարձել
արտերից գիւղացիք, երբ քրդերի մի ասպատակ խումբ
մտաւ գիւղը. աւազակները սկսեցին իսկոյն և եթ ամէն
ինչ սրի քաշել: Օգը լցուեցաւ լաց-աղաղակով, անէծքով,
աղաչանքներով. մի րոպէից հրդեհը սկսեց լափել թալանած,
կողրպտած գիւղը: Աղիողորմ տեսարան: Զիւնների խրխըն-
ջոցը, ոչխարների մայերը, կովերի բառաչումը խառնուելով
երեխաների ճիճվոցի և կանանց բարձրաձայն լաց ու կոծի
հետ կազմում էր մի անորոշ, սրտամաշ քաօս, ուր թա-
գաւորում էր աւազակ քրդի յաղթողական—«Ալլահ»ը:—
Դիւղը պաշարուած ու թալանուած էր. դէս ու դէն ընկած
էին թշուառ հայերի ջախջախուած, այնլանդակուած դիակ-
ները. մէկ քանիսը գիւղացիներից դեռ պաշտպանվում էին
յարձակուողների դէմ և թանգ գնով էին ծախում իրենց
կեանքը բարբարոսին:

Դիւղի հրապարակում պատրաստ էր կարաւանը, որ բազը
կացած էր աւարի առնուած աղջիկներից, երիտասարդներից
և տնային կահ կարասիքից. և դեռ գիւղի ծայրում Փրկչե
քարաչէն մատրան մօտ մի խումբ գիւղացիներ կռվում
էին քրդերի հետ: Սյնտեղ էր և Մրտօն. նա առիւծական
քաջութեամբ հրացանը ձեռին դարձաւ վերջին անգամ իւր
ընկերներին, և գէնքերի շառաչելնի միջից որոտաց նրա ահ-
ռելի, յաղթալից աղաղակը.

— Մեռնեք, ախպէրք, մեր Քրիստոսի սուրբ հաւատի
համար... Աուրբան նրա արդար անուան, — և նա յարձակու-
եցաւ Միրզա-բէյի վերայ, որ խմբի առաջնորդն էր. այդ
րոպէին հեռուից նրա աչքին ընկաւ Ոսկեհատը:

— Փախիր, Ոսկեհատ-ջան, Հասոյիս, Հասոյիս պահիր...
փախիր անտառը...

Այդ եղաւ նրա վերջին պատուէրը:

Ոսկեհատը փախաւ: Ահա երեք օր է, ինչպէս նա թափառում է անտառներում, նա հեռու, հեռու թողեց իւր մայրենի Հ— շէնը, թողեց նրա ծխացող աւերակները, պղծուած մատուռները, այրուած, քանդուած խրճիթները:

Մինչև այժմ, երևի, ընկած են սպանուածների դիակները և փթում են բաց օդի տակ, գիւղական շները հաւաքուել են և լիզում են նրանց հրեսը, մարմինը, վէրքերը. ագռաւները զուժաբեր կրկուում են վերևում և ճախրելով նստում են մեռածների երեսների վերայ և կծում են նրանց լայն բացած, անշարժ ապակեայ աչքերը:

— Ո՛ւր է Մրտօն, — անցնում է Ոսկեհատի լարուած, բորբոքուած ուղեղով, — Ի՞նչ պատահեց նրան, յաղթե՞ց թէ... թէ նա էլ մեռած ընկած է այնտեղ, մատրան մօտ, և ագռաւները, շները լիզում են: Մրտօ, Մրտօ...

Եւ Ոսկեհատը սարսափելով նայում է յետ:

Կամաց կամաց նօսրանում է առաւօտեան մշուշը և տեղի է տալիս արեգակի առաջին լուսաւոր ճառագայթներին: Անտառը զարթնում է, առաւօտեան գով գեփիւռը անցնում է տերևների միջով և նրա սօսափիւնը խառնուելով զարթնած թռչունների ուրախ, գուարթ ճլվլացի հետ, լցնում է պարզ հազար ու մի բուրումներով լի օդը հազիւ հազ ըմբռնելի, բայց գեղեցիկ, քաղցրահնչեւն մեղեդիով: Բնութիւնը ուրախ է, նա տօնում է իւր առաւօտը. նա չգիտէ և չէ էլ կամենում իմանալ Ոսկեհատի ցաւերը և տառապանքները:

Մի քանի րոպէից արեգակի կարմիր շրջանակը սկսում է լողալ պարզ կապոյտ երկնակամարում, և հեռու, հեռու լուսաւորում է մի շարք տնակներ, խրճիթներ. դա գիւղ է:

Ուժասպառ Ոսկեհատը անզօր ընկնում է մի հին, փթած, արդէն բորբոսնած թփի տակ, իսկ փոքրիկ Հասօն հանգիստ քնած է նրա գրկում. անհոգ, անմեղ մանկական ժպիտը խաղում է նրա շրթունքներին: Ոսկեհատը սկսում է նիրհել թու-

լուծիւնը, տանջանքը, յոգնածութիւնը կամաց կամաց յաղ-
թում են նրա ամուր կազմուածքին. նա էլ չէ կամենում
չարունակել իւր ուղին. նա աւելի և աւելի կռացնում է իւր
զլուխը և ընկնում մի կիսաբուն թմրութեան մէջ: Խեղճ
Ոսկեհատ...

Իսկ այնտեղ, Հեռու, Հեռու դեռ այրվում է շ—շէնը.
կրակուած անակների վլատակների ասկից դեռ երևում է
բոցը և հրային երկար, սրածայր լիզունները դեռ լիզում են
կիսաքանդ շէնքերի ողորմելի մնացորդները: շ—շէնը դառ-
նում է մոխիր, և թանձր, սև ծուխը մեծ բուլաներով բարձ-
րանում է երկինք, տանելով իւր Հեռ մեռնողների լացը,
անէծքը, հառաչանքը, աղօթքը և յաղթողների հրհռոցը,
ուրախութիւնը, հայհոյանքը և խոպոտ, բերկրալից աղա-
ղակները:

III.

Ղ. դիւղի ուսը ունէր միայն մէկ աղջիկ: Աստուած
իբրև ճերութեան մխիթարութիւն, իբրև պահպան հրեշ-
տակ էր պարգևել այդ աղջկան ուսին և նրա կնոջը: Նրան
կանչում էին Նուռիկ: Եւ քնչպէս անխելք սիրում էին Նու-
ռիկին ծերունի ուսը և նրա պառաւ կինը: Օրօրոցից մինչև
օրս նոքա ամիսփել էին Նուռիկի մէջ իրենց յոյսը, սէրը,
ապաւէնը և անցած, գնացած երջանիկ օրերի ամենա-
քաղցր յիշողութիւնները: Նուռիկը նրանց համար նոյն
խակ իրենց սեպհական կեանքի ու գոյութեան և նպատակն
էր և շարժառիթը. ապրել առանց իրենց «մինուճար» Նու-
ռիկին նշանակում էր չապրել, մեռնել: Եւ Նուռիկը դարձաւ
այդպիսով իւր ծնողների զիցուհին, աստուածուհին, որի
առաջ նրանք երկրպագում էին և աղօթում. նոքա մի զար-
մանալի ճշտութեամբ գուշակում էին երևիայի աչքերից
ու նայուածքից նրա ամեն մի ցանկութիւնը և իսկոյն
կատարում էին, կատարում էին իբրև մի սրբազան պար-

տականութիւն, իբրև օրէնք: Դժուար է ասել, ո՞վ էր աւելի սիրում Նուռիկին. ծերունի ունը, թէ նրա պառաւ Աննան: Նոքա, կարծես, մրցում էին իրար հետ այդ անհուն, ետական, կոյր սիրոյ արտաքին արտայայտութիւնների մէջ. նոքա կտրում էին իրենց բերնից, որ կշտացնեն իրենց Նուռիկին:

Երբ երեկոյեան դէմ ունը դառնում էր աուն, նա խիղջն մտնում էր վոքբրիկ, դեռ երեկոյ Նուռիկի սենեակը և վերցնելով նրան օրօրոցից սկսում էր ձգձգել իւր կոշտ, արևատ, մազոտ ձեռներն վերայ:

— Նանի, նանի, իմ Նուռիկ, նանի, նանի, իմ աստղիկ,— միթմրթմում էր ունը և նրա երեսին սկսում էր խաղալ երջանկութեան բերկրալից ժպիտը:

— Վամոց, կամոց. երեխի կուռը կըհանես,— նկատում էր այդպիսի բողբոջներին մի անբաւական ձայնով Աննան:

— Է՛հ, ի՞նչ ես դարտակ դարտակ դուրս տալիս. էդքան խօզիտեմ,— նկատում էր ունը և շարունակում էր ձգձգել երեկոյին:

— Նանի, նանի, ի՛մ հոգեակի,— լսվում էր սենեկում նրա ամուր ձայնը:

Իսկ Նուռիկը յանկարծ սկսում էր լալ:

— Սնըմիդ մեռնեմ, Նուռիկ-ջան, չարըդ տանեմ, դաւակ-ջան,— բացականչում էր Աննան:

— Խօ ասի, խօ ասի ախր... էդ ա է,— և առնելով երեկոյին ունի ձեռքից հեռանում էր իւր սենեակը:

Ռէսը ամօթահարուած, լուռ ու մունջ քաշվում էր անկիւնը: Նա զգում էր իւր մեղքը Նուռիկի առաջ. նա զգում էր, որ ճշմարիտ մի քիչ պինդ էր սեղմել երեկոյի կուռը, բայց չէր ուզում խոստովանուել դրանում իւր կնոջ, Աննայի, առաջ:

— Է՛հ, ինչ ասեմ քեզ, ու միշտ կտարած գտալի պէս մէջ ես ընկնում,— նկատում էր նա ատամների միջից:

— Երեկան քաղցած է ու դրա համար էլ լալիս է. դու

լաւ է, որ կերակրէիր նրան: Իմ մեղքը ի՞նչ է,— շարունակում էր նա մի քանի րոպէից:

— Վա՛հ, ես չեմ նայում երեխիս. ես, տէր Աստուած, մի սրան մտիկ արէք: Հողի ունե՛ս, խղճմտանք ունե՛ս, որ էդպէս սուտուց-սուտուց դուրս ես տալիս,— զայրանում էր Աննան:

Իսկ ուէսը հեռուից իւր լայն բրդոտ յծնքերի տակից նայում էր, ինչպէս Նուռիկը իւր փոքրիկ հաստիկ ձեռններով փաթաթվում էր Աննայի վզին և դնելով իւր գլուխը նրա կրծքին, սկսում էր հանդիստ նիրհել: Ռէսը ակամայ հեռացնում էր իւր հայեացքը այդ տեսարանից. նա սկսում էր նախանձել Աննային: Եւ իրաւ, այդ իրենց զաւակի սիրահար ծնողները ընդունակ էին նախանձել անգամ միմեանց, եթէ այդ սիրոյ առարկան, Նուռիկը, պատահմամբ սիրէր նրանցից մէկին աւելի կամ պակաս, քան թէ միւսին: Ամեն մէկը նրանցից աշխատում էր բռնել երեխայի սրտում առաջին տեղը. թէ ոչ— նոքա կը համարէին իրենց զրկուած, մերժուած:

Սյդպէս մեծացաւ Նուռիկը. նա արդէն 17 տարեկան էր:

Եւ, ճշմարիտ, անկարելի էր չաիրել այդ չքնաղ, գեղեցիկ Նուռիկին: Բնութիւնը, կարծես, թափել էր իւր ամեն ճիգը, իւր ամեն զիտութիւնն և կարողութիւնը այդ արարածի ստեղծագործութեան ժամանակ և ընծայել էր աշխարհին գեղեցկութեան մի կատարելատիպար: Առասպելական դիցուհիներից ամեն մէկը, կարծես, աշխատել էր պարգևել Նուռիկին այն, ինչ որ հպատակ էր նրա գերբնական ուժին և զօրութեան: Գեղեցիկ էր Նուռիկը, սաստիկ գեղեցիկ. երկարահասակ, սև, մութ-սև, խիտ և միշտ արձակուած մազերով, որոնք իբրև փրփրաւոր ալիքներ պատում էին նրա փղոսկրեայ, ուղիղ գծագրած վիզը և նրա սպիտակ, մի քիչ դուրս ցցուած, գլորակ ճակատը, երկու մեծ սևօրակ, միշտ վառվռուն աչքերով, որոնք խոստանում

էին այնքան սէր, այնքան կիրք և երջանկութիւն, բարակ, ճկուն իրանով և երկու փոքրիկ, սրած ոտներով,—Նուռիկը յիշեցնում էր Նիրակի զեղեցկուհիներին և թողնում էր տեսնողի վերայ մի այնպիսի խոր, անդիմադրելի ապաւորութիւն, որ տեսնողը զմայլած կանգ էր առնում և երկար-երկար նայում էր հեռացող Նուռիկի ետևից, վախենալով շարժուել և զարթել այն դիւթիչ երազից, որ ահա երևան է դալիս նրա աչքերին:

Իսկ նրա ձայնը այդ ձայնը մի անգամ լսողը երբեք չէր կարողանում մոռանալ նրան: Երբ որ երեկոցեան դէմ Ղ. դիւղի աղջիկները հաւաքվում էին մի տեղ, տան կտրի վերայ և սկսում էին իրենց կէս թըքական, կէս հայ պապերից աւանդուած երգերը, երգեր, որոնք ձգում էին լսողին մի տխուր, անբացատրելի մեղամաղձոտ արամադրութեան մէջ, որոնք չէին քարոզում ոչ եռանդ, ոչ յոյս և որոնք սովորեցնում էին հնազանդել և համբերել միայն, համբերել անվերջ, մինչև հոգու վերջին շունչը,—Օո, այդպիսի բուպէներին Նուռիկը հրաշալի էր: Նրա մեղմ, փայփայող շոյող ձայնը զանազանվում էր ուրիշների ձայներից, փակում էր նրանց և լողալով այնտեղ, եթերքի բարձրութեան մէջ իւր յստակ ելևէջներով, կորչում էր վերջապէս պարզ, թափանցիկ օդի անհուն տարածութեան մէջ:

Բայց ի՞նչ էր երգում նա, ո՞ւմ համար էր այդպէս անկանոն բաբախում նրա սիրտը:

Նա երգում էր, թէ ինչպէս առաւօտեան վարդը կամաց կամաց բարձրացնում է իւր գլխիկը և, նկատելով ծագող արևը, շտապում է պահել նրանից իւր վերայ ընկած սառն, փայլող ցօղի կաթիլը: Նա երգում էր, թէ ինչպէս արևը չորացնում է այդ ցօղը և վարդը անզօր փակում է իւր թերթիկները և տխրագին, խղճօրէն կռայնում է գլխիկը ցած, սև հողին: Նա երգում էր, թէ ինչպէս կարկաջուն առուակի ափին բուսնում է կանաչ եղէզը և իւր սրածայր թեր-

Թիկներով շոյում է ջրի խաղաղ մակերևոյթը, ինչպէս խօսում է առուակը եղէգնի հետ, ինչպէս փոքրիկ Թռչնակը գզուշութեամբ մօտենում է ափին և ցայտկով քարից քար խրում է կտուցը առուակի զովարար ջրի մէջ: Նա երգում էր, ինչպէս ծիծառը անդադրում ճախրում է օդում և շինում է իւր բունը և մթին յոգնած փակում է իւր փոքրիկ աչքերը և պահում է գլխիկը Թևի տակ, ինչպէս նոր ծագող արևի ճառագայթները ընկնում են սարերի գագաթի շուրջը, իբրև մի լուսափայլ պսակ և ինչպէս գոյնզգոյն երանգներով ներկվում է անտառը, ժայռերը, վիթխարի սարերը և ինչպէս կամաց կամաց մի քանիսը այդ ճառագայթներից հասնում են ջրի մակերևոյթին և ցոլացնում են նրան ծիածանագոյն փայլերով:

Այդպէս էր երգում Նուռիկը. նրա անմեղ, կուսական ձայնը փառաբանում էր միայն Աստուծուն և Նրա գեղեցիկ աշխարհը:

IV.

Երեկոն հասնում էր:

Հօրիզոնը սկսել էր մթնել. մութ ստուերները շուտ շուտ կուտակուելով միմեանց մօտ փաթաթում էին մի Թանձր քողով Ղ. գիւղը: Յերեկուայ լոյսը կամաց կամաց տեղի էր տալիս երևիցիան նօսր մթութեան: Արևի ճառագայթներից տաքացած օդը սկսում էր ցրտել. փիւրուզեայ երկնակամարում տեղ տեղ վառվում էին պլպլող աստղերը. իսկ հեռուում երևում էր ծագող կիսալուսնի ցոլացող եղջիւրը շրջապատած արծաթափայլ, փետրաւոր ամպերով:

Գիւղը լուռ էր: Ընթրիքի ժամանակ էր:

Գիւղի ամենամօտ սարի ստորոտից իջնում էր Հասօն: Նա զանդաղ քշում էր իւր առաջից փոքրիկ հօտը: Նա անհոգ ձգել էր ուսերին արխալուղը, կպցրել էր գլխին իւր անբաժան քրդի քօլօղը և երգելով մտնում էր գիւղը: Ժա-

մանակ առ ժամանակ նա ընդհատում էր իւր երգը, դառնում էր ոչխարներից մէկին և կարգալով նրա գլխին մի քարոզ, քշում էր նրան մի քիչ առաջ և կրկին շարունակում իւր գնացքը: Նա ստէպ ստէպ նայում էր ծագող լուսնին, պսպղուն աստղերին, նայում էր երկար ու բարակ, կարծես, աշխատում լինէր ըմբռնել աշխարհի կազմակերպութեան գաղտնիքը և կրկին երգում: Նրա ձայնը ազդու, ուժգին ելևէջներով կրկնվում էր սարի փեշերքներում և թուլանալով վերջ ի վերջոյ լռում էր այնտեղ, սարի դազաթի մօտ:

Հասօն մօտեցաւ զիւղի աղբիւրին: Ոչխարները ուրախ ուրախ մայելով մտան ջուրը: Հասօն կռացաւ և առնելով ափերի մէջ ջուր՝ սկսեց խմել: Երբ նա բարձրացրեց զլուխը՝ աղբիւրի միւս ափին տեսաւ մի սպիտակ ստուեր: Նա ուղղեց իւր սուր, արծուի հայեացքը այդ կողմը և ժպտաց, նա ճանաչեց Նուռիկին:

Ռէսի աղջիկը, սափօրը ուսին, ամօթխած կանգնած էր ափի մօտ և սպասում էր իւր հերթին, նա կէկ էր ընթրիքի համար ջուր առնելու:

Ոչխարներից մէկը մօտեցաւ Նուռիկին և մեղմ մայեց: Նուռիկը սկսեց շոյել նրա թաւշեայ բուրդը:

— Բարի երեկոյ, աղջի՛,—նկատեց Հասօն:

— Ասծու բարին քեզ,— շնջեց Նուռիկը:

— Ի՞նչ է, ջուր ես առնում,— դարձաւ նա կրկին Նուռիկին:

— Հա՛, իրիկնահացի համար է,— և Նուռիկը կարմրեց: Հասօն չէր հեռացնում նրանից իւր սուր գիտող հայեացքը:

— Բէ՛ր ինձ, ես կըտամ,— առաջարկեց իւր ծառայութիւնը Հասօն:

— Ձէ՛, ինչո՞ւ, ես էլ կ'առնեմ:

— Բէ՛ր, ասում եմ:

— Ձէ՛:

— Պահ: Էդ որ օրից նազուռ ես դարձել—ծիծաղեց Հասօն:
Նուռիկը ոչինչ չպատասխանեց:

— Հը՞ նազուռ Նուռիկի,—կրկնեց իւր հարցը Հասօն:

— Հասօ, ինչո՞ւ ես այդպէս խօսում:

— Բահ... ինչպէ՞ս ախր խօսեմ. քաղքոււմը, աղջիկ, չեմ սովորել, որ տէրտէրի նման դրոց խօսքեր ասեմ, խօսք եմ ասում, ոնց զխտեմ: Բաս թէ չուզես ինձ նման խեղճ հովուի հետ խօսել, էդ էլ քօ բանն է... ինքդ խօսուի աղջիկ ես,—կծու, հեգնօրէն նկատեց Հասօն և նրա նեղ շրթունքները աւելի ևս սեղմուեցան:

Այդ խօսքերը դիպան Նուռիկի ինքնասիրութեան ամենանուրբ լարերին:

— Նուրս ես տալես էլի,— շնջեց նա և բարկացած վայր դրեց ջրի սափորը:

— Ձէ՛, Նուռիկ, չէ՛. դու զորթ ասա, Աստուծու անունով, ինչո՞ւ ես փախչում ինձնից: Էն օրն էլ... մի՞տդ է, երբ ես մօտեցայ մեր աղջկերանցը, դու շուռ եկար ու փախար:—Նուռիկը կրկին լուռ էր:

— Ախր ես ի՞նչ եմ արել քեզ, ի՞նչ վատութիւն եմ արել: Այդ հարցը այնքան պարզ էր արտասանուած, այնքան ազերսազին, որ սուր ցաւով թափանցեց Նուռիկի սիրտը:

— Ախր ես... ես... ի՞նչ եմ արել քեզ, ի՞նչ վատութիւն եմ արել,—կրկնուեց Նուռիկի ականջում:

Հասօն լուռ, զլիտիոր սպասում էր նրա պատասխանին:

— Դո՛ւ, Հասօ, դեւ ինձ ոչինչ, ոչինչ չես արել,—նկատեց վերջապէս մի թոյլ, ճնշուած ձայնով Նուռիկը և խեղճ լուռ:

Ոչխարները հեռանում էին աղբիւրից:

— Հապա, հապա ինչո՞ւ չես նայում ինձ,—մի բոպէից հարցրեց Հասօն:

— Ե՛ս. ո՛չ ոչ,—մրթմրթաց Նուռիկը և կարմրեց:

— Հապա՛ ինչո՞ւ միշտ խօսում ես Սազոյի հետ:

— Սաղօյի:

— Հնա, հէնց էլ սարսաղ Սաղօյի հետ:

Նուռիկը կռայցաւ և լցրեց իւր սափորը:

— Ինչե՛ր ես մոզմնում, Հասօ, ե՛րբ եմ խօսել նրա հետ:

— Բաս սո՛ւա եմ ասում: Լսի՛ր, Նուռիկ, ախր դու չե՛ս տեսնում, վո՛նց եմ ասնջւղում ես, ախր դու, Նուռիկ, իմ սրտի ընտրածն ես, իմ ուզածն ես: Ես սիրում եմ քեզ, Նուռիկ, այն օրից, երբ մեր մատրան ու Քաչքարի ուխտան էր. երբ ես սուաջին անգամ տեսայ քեզ մօրդ հետ, իմ սիրտը ուղեց քեզ, ես ընտրեցի քեզ, Նուռիկ, և խեղճ Հասօն այն օրից մինչև օրս չունի հանդիսա: Արիւն ու լեզի է դնում սրտովս, Նուռիկ-ջան, էլ քուն չունեմ գիշերները. ցնորուածի նման թափառում եմ սարերում, ձորերում և փնտռում եմ քեզ: Պատահում է, որ լսում եմ քո անոցը ձայնը, դու կանչում ես ինձ, ես վազում եմ դէպի քեզ և մնում եմ կրկին մենակ սարերում, ոչ ոք չի լինում:

Հասօն լռեց, լուս էր և Նուռիկը. միայն նրա կուրծքն էր, որ անկանոն և արագ արագ բարձրանում էր նրա հագուստի ծալքերի սակ: Մի բողեկց Հասօն գլխակոր մօտեցաւ նրան:

Վերջինը շուարած էր: Հասօյի կրքոտ ձայնը խոր սպաւորուել էր նրա սրտում, նրա անմեղ, անխորձ, կուսական սրտում և այդ սիրտը համակրում էր Հասօյին: Այդ սիրտը ևս նոյն ուխտի օրը առաջին անգամ ուժգին բարակեց, երբ Նուռիկը տեսաւ զեղեցիկ հովուի սևորակ աչքերը. այդ սիրտը արդէն կորցրել էր իւր սովորական անդորրութիւնը, զրկուել էր իւր անվզովի պատանեկան քնից:

— Լսի՛ր, Նուռիկ-ջան, լսի՛ր, հոգիս, — շարունակեց Հասօն, — ես ինքս էլ ուէսի որդի եմ. իմ հայրենիքս այստեղ չէ. նա հեռու է, շատ հեռու: Իմ հօրս սպանեցին քրդերը... Ծօ ես կ'առնեմ մի օր վրէժս, — և Հասօյի ձայնը անպօր կարուեց: Սղբիւրի մօտ սօսենու սօսափիւնն էր միայն, որ խանդա-

րում էր գիշերուայ լուռթիւնը: Լեռուից լսվում էր շների կրկարատե հաչոցը:

— Ես հարուստ էի, Նուռիկ, ինձ թալանեցին և աղքատեցրին, — շարունակեց Լասօն, — ևս ունէի մի քոյր. ևս կրբէք, կրբէք չեմ տեսել նրան: Մայրս միշտ պատմում է նրա մասին. ասում է, թէ դու շատ ևս նմանում նրան:

— Բայց ո՞ւր է նա, — շնչեց Նուռիկը հետաքրքրուած:

— Ո՞ւր է նա, չգիտեմ. նրան գողացել են, քշել են քրդերը թէ թրքերը, չեմ յիշում — և Լասօյի ձայնը կրկին կարուեց: Արտասուքի նման մի բան ցոլաց կրիտասարգի աչքերում: Նուռիկը տխուր նայում էր գետնին:

— Դեռ չտեսած նրան, ևս սիրեցի նրան, սիրեցի և քեզ, Նուռիկ: Իսկ դու, դու փախչում ևս ինձնից... ինչո՞ւ: — Կրկին այդ «ինչո՞ւ» խոցեց Նուռիկը սիրտը:

Նա անշարժ կանգնած էր, նա զեռ գտնվում էր Լասօյի տխուր պատմութեան ներդործութեան տակ: Լասօն հանեց իւր մաշուած, մորթեայ քօլօղը, սրբեց ճակատի քրտինքը և, մօտենալով Նուռիկին, բռնեց նրա ձեռից. այդ ձեռը տաք էր և դողում էր:

— Թո՞ղ, թո՞ղ ինձ, Լասօ, ուշ է. մերոնք սպասում են ինձ, կ'իմանան, որ ևս մէկի հետ խօսել եմ, և իմ անունը, իմ նամուսը կրկնորուի: Ամօթ է, Լասօ, թո՞ղ: — Նա փորձեց ազատուել Լասօյի ձեռքից. սափորը զլորուեց արօտի վերայ և դարդակուեց: Լասօն նորից ջուր առաւ և տուեց Նուռիկին:

— Ասա՛, Նուռիկ, ասա՛. Աստուած վկայ է մեզ:

— Ի՞նչ ասեմ քեզ, Լասօ: Ես, ևս... — և նրա ձայնը ներքին յուզմունքից յանկարծ կտրուեց և նա դանդաղ քայլերով հեռացաւ աղբիւրից:

Սյդ բողեին լուսնեակի ճառագայթները ընկան նրա վերայ. իբրև յաւէրժահարս, իբրև դիւթական մի տեսիլ անցաւ Նուռիկը Լասօյի առաջով: Մի քանի բողեից նա կանգնեց

և դարձրեց իւր երեսը աղբիւրին. այնտեղ, սօսիների ստուերի տակ, իբրև արձան, անշարժ կանգնած էր Հասօն:

— Հասօ, հոգիս, ես սիրում եմ քեզ. սիրում եմ վազուց, — համարեա շնջեց Նուռիկը և խիղջն անհետացաւ մօտակայ բլրի ետևը: Հասօն, կարծես, զարթեց խոր քնից: Սյդ շոքը թուեց նրան երաժշտական մեղեգի, երգի զմայլեցուցիչ դայլալիկներ: Սյո՛, նա չէ սխալվում, նա պարզ լեց այդ ձայնը. այդ արտասանողը Նուռիկն էր: Նա վազեց նրա ետևից: Իսկ Նուռիկը արդէն անհետացել էր: Ուրախ, երջանիկ վերադարձաւ իւր խրճիթը այդ դիշեր Հասօն: Նա սիրում էր և բաղբաւոր էր իւր առաջին սիրով:

V.

Գասպարեկց Սազօն, որին Հասօն սարսազ էր կոչում, պատկանում էր գիւղացիների այն շարքին, որոնց մէջ օրէ ցօր նուազում է և անհետանում, դժբաղբաբար, պարզ գիւղական տիպարը: Սյդպիսիներին էլ չէ հրապուրում, չէ քարշում ոչ հողը, ոչ վարուցանքը, ոչ խոփը, ոչ գերանդին: Նորա միշտ խորշում են դժուար Ֆիզիքական աշխատանքից. նորա փչանալով այս կամ այն պատճառով, փչանալով բարոյապէս, հեռանում են բնութիւնից և նրա առատ պարգևներից: Սյդ բնութիւնը սկսում է սարսափել խորթ թուիլ նոցա աչքին: Շատ սակաւ է պատահում, որ այդպիսի այլափոխութեան պատճառն ու շարժառիթը լինէին ազնիւ և համակրելի. մեծամասնութիւնը թողնում է զիւզն ու գիւղական կեանքը նոյն իսկ ծուլութեան և ագահութեան շնորհիւ: Սյդպիսիները որոնում են աւելի հեշտ և ձևնտու միջոցներ ապրուստի. նորա աշխատում են, չարչարվում են քիչ և պահանջում են իբրև վարձ աւելի շատ: Սյդ մի տեսակ գիւղական «bon-vivant»ները ամենաանհամակրելի տիպարներն են, որոնք գոյութիւն ունին հայ կեան-

քուս: Եթէ զգաց, օրինակի համար, այդպիսի մէկը մի ինչ որ հակուսն զէպի հեշտասիրութիւն, վերտութիւն, այդ օրից արդէն նա մնաս բարև է ասում իւր բոլոր լաւ, բարի, մարդկային զղացմունքներին և դառնում է զիշաախ թաշուն, սարդ, որ ձգելով իւր սարսափելի ոստայնը սխտում է ծծել շրջապատողների արիւնն ու քրահնքը: Եւ ինչ միջոցներ, ասես, գործ չեն գնում դոքա իրենց նպատակին հասնելու համար. ամեն միջոց դառնում է նրանց համար սուրբ և գործադրելի: Վաշխառութիւն, խաբեբայութիւն, գողութիւն, ամեն ինչ բանեցնում են նրանք, և եթէ այսպէս կամ այնպէս հասնում են իրենց անձկալի նպատակին, Սստուած իմ, ինչեր չեն բերում նոքա իրենց խեղճ, միամիտ համազիւղացիների զլիին, զբիանք, հարստահարութիւն, տանջանք, — այդ ամենին ասնում է և համբերում առանց այն էլ համբերող զիւղացին: Եւ ի՞նչպէս այլապէս. նա ոտից մինչև գլուխ պարտքի մէջ է, ո՛չ հացը, ո՛չ տունը, ոչինչ, ոչինչ նրանք չէ: Սյդ ամենը վաղուց արդէն անցած է վաշխառուի ձեռք, և այդ անվերջ պարտքի տարեկան տոկոսը միայն համարեա զերսզանցում է զիւղացու բոլոր գոյքը. և նա, այդ զիւղացին, կամայ ախանց դառնում է մի տեսակ հլու հպատակ, անխօս սարուկ, մի զրաստ, որին իւր ցանկացածի համեմատ բանեցնում է խորամանկ վաշխառուն: Նա չէ սպանում նրան միանգամից, ոչ այդքան խելք ունի վաշխառուն. նա կամայ կամայ է ծծում նրա կենսատու ուժերի հիւթը, նա սիստեմաբար է մեռցնում նրան:

Եւ ահա այդ զիւղական հասարակութեան հիւանդ, վարակիչ անդամները մի քանի տարուց ամենաճարպիկ կերպով հիւսած ոստայնը ձգում են զիւղի մէջ, պինդ քարշում կապկպում են նրա թերերը և մինչև վերջը չեն թողնում նրա մէջ ընկած զոհերին. իսկ ընկնում են համարեա ամենքը. քչերը, շատ քչերը են ազատվում նրա զիշաախ ճանկերից: Սյնուհետև վաշխառուն դառնում է ամբողջ

զիւղի լիսգօր աէրն ու իշխանը. նրա կամքը—օրէնք է, նրա խօսքը—սուրբ պատուիրանք. ամենից աւելի յարգանք վաշխելոյը—նա է, ամենից շատ խօսողը զիւղա-Համայնական ժողովներում—նա է, ոէսի վերայ ազդողը, ոէսին ընտրող չընտրողը—կրկին նա է: Նա մի գօրութիւն է, ուր կենտրոնացած են լինում և նիւթական և բարոյական ազդիչ կարողութիւնը: Վայ նրան, ով կը յանդգնի չհպատակել այդ գօրութեանը. ամեն կերպ հալածում է նրան թշնամի վաշխառուն, ամեն կերպ նեղում է և ստորացնում նրան հաւասակ զօրեղ ոյժը: Սյդպէս են զիւղի ցաւ սարգերը:

Եւ զարմանալին այն է, որ այդպիսիների կողմը բացի մտրմուսուր ուժից, համարեա միշտ լինում է և հոգեւորը: Գիւղի աէրաէրը այդպիսիների ամենալաւ բարեկամն է. շատ մուծ, ցած զործեր գաղաւթողի կատարվում են վերջնի միջնորդութեամբ: Երկու ոյժ միանում են, քաջ դիտենալով, որ անպարտութիւնը հաւաքականութեան և համերաշխութեան մէջ է: Վաշխառուն յայտնի, անունով մարդ է, նա բարեկամ է գործակալի, բարեկարգչի և հոգեւոր կառավարութեան անդամների հետ. իսկ զիւղական անուս քահանան շատ անգամ պարտաւորուած է լինում սոսլ այս կամ այն բացատրութիւնները այդ հոգեւոր կառավարութեան առաջ, և ահա վաշխառուն, որ մի եկեղեցասէր և բարեպաշտ մարդ է, Տառաիւֆի խմորից շինած, տալիս է այդ «բացատրութիւնները» քահանայի փոխարէն: Եւ ի՞նչ հոգեւոր կառավարութիւնը մնում է զոհ, բարեկարգիչը, գործակալը նոյնպէս, զիւղական քահանան նոյնպէս և, ինչպէս տեսնում էք, այդ ամենք էլ, մնալով զոհ և բաւական, ոչինչ չեն խանգարում աշխարհային կազմակերպութեան մէջ և սա շարունակում է իւր սովորական, կանոնաւոր բնթացքը:

Սյդ տեսակ մարդկանց էր պատկանում և Գասպարենց Սագօն: Գիւղում կանչում էին նրան «տարսող», բայց չնա-

յելով դրան նա 40 տարեկան հասակում կարողացաւ ստեղծել իրեն համար մի այնպիսի անկախ հասարակական դիրք, որ դարձաւ զիւզի «երևելիներ»ից մէկը: Նրա մասնագիտական պարապմունքը վաշխառութիւն էր: Սկսելով ոչնչից հակառակ բնական օրէնքներին, նա ստեղծեց ոչնչից բաւական մեծ կարողութիւն: Չար լեզուները, որոնք զոյուցիւն ունին ամեն անգ և որոնք կային, զժբաղդաբար, և Ղ. զիւղում, պատմում էին, որ այդ կարողութեան հիմքը դրուած է ամենացած միջոցներով, որ Սագօն ժամանակով պարապելիս է եղել կեղծ գրամներ ցրուելով և այլ այս տեսակ փեղցփեղ ստութիւններ: Բայց ի՞նչէր ասես չեն պատմում այդ շար լեզուները... Սագօն երջանիկ էր: Նա ապահովուած էր, ունէր անուն, հարստութիւն, բարեկամներ, համակրողներ, ունէր տուն, հող և վայելում էր աշխարհքի ամեն բարիքը: Մինք մի քիչ անարդար դանուեցանք, երբ ասացինք, թէ Սագօն բոլորովին երջանիկ էր,— դա սխալ է: Սագօն նոյնպէս ունէր իւր ցաւը, նա, որ այնպէս սիրում էր կանանց սեռը, մինչև իւր կեանքի 40 ամը զեռ չէր ամուսնացած: Իրա պատճառը հետևեալն էր: Սագօյին ստեղծելիս բնութիւնը, երևի, պարապուած է եղել աւելի ծանրալիշու հարցերով և, ինչպէս հարկն է, չէ նայել Սագօյի վերայ: Նա, կարծես, շտապով հաւաքել է հողը, երկու-երեք անգամ վայր ի վերոյ գծազրել է նրա երեսը և փչելով երեսին տուել է հողի և կեանք: Այդպէս էր ծնուել Գասպարենց Սագօն: Երևակայեցէք երկու ծուռ ու կարճ ոտներ, երկար ձեռներ, ահադին, ահաձ փոր, գլորաձև գլուխ, հաստ և միշտ կարմիր վիզ, դուրս ցցուած ծնօտներ, շաշ աչքեր, մեծ բերան հաստ շրթունքներով, որտեղից երևում էին մի շարք սև, ծուռ ու մուռ ատամներ, և մի փառաւոր հայկական քիթ: Երևակայեցէք այդ ամենը և դուք համարեա ձեր աչքով տեսած կըլինիք Ղ.— եցի Գասպարենց Սագօյին: Այդ քվազիմօզոն զեռ չէր կարողացել ի հարկէ

ոչ մի գիւղական գեղեցիկուհու սրտում վառել սիրոյ կրակը
և մնացել էր ամուսնի:

Ինքը Սագօն իւր կողմից քանիցս վտրձել էր զլուս Հա-
նել իւր դիտաւորութիւնները, բայց միշտ անյաջող: Նա Հաս-
կանում էր, որ իւր տգեղութիւնն էր դրա արգելքը, Հաս-
կանում էր և Համբերում...

VI.

Անցան տարիներ, և Հարուստ, վաշխառու Սագօն զգաց
իւր ոյժը: Նա Հասկացաւ, Համոզուեց, որ այժմ աղջիկնե-
րից ամեն մէկը ուրախութեամբ կը դառնայ իւր կիներ: Բայց
նա սկսեց ջոկել, սպասել, այժմ նրա պահանջները աւելացել
էին. նա կամենում էր ջաշիլ կին, լաւ կին, լաւ տնից,
ուզով-նամուսով: Նա մինչև անգամ ընտրել էր մէկին և
սպասում էր մի պատեհ առթի, որ ուղարկէ աղջկայ Հօր
մօտ խնամախօսներին. իսկ մինչ այդ նա ձգել էր գործի
մէջ իւր բարեկամ տէրտէրին: Տէր Պօղոսը, իբրև ոչ պաշ-
տօնական մօցիքուլ, պիտի պատրաստէր այն ասպարէզը,
ուր պիտի գործէր յետոյ ինքը Գասպարեկց Սագօն,— և
տէր Պօղոսը թափում էր ամեն ջանք: Գործը Հիշտ չէր.
նա պահանջում էր խելք, Համբերութիւն, աշխատանք և
ճարպիկութիւն. այդ ամենից զուրկ չէր յարգելի տէր Պօ-
ղոսը: Նա արդէն մի քանի անգամ, կարծես, բոլորովին ան-
նպատակ բացել էր աղջկայ Հօր Հեա այդ խօսակցութիւնը.
գովել էր կարողութեան չափ Հարսնացուին և այդպիսով
իմացել էր նրա Հօր «լեզուի տակին»ը—ինչպէս ինքը տէր
Պօղոսն էր ասում:

— Գիտե՞ս, բալա-ջան, — ասում էր նա մի երեկոյ նստած
Սագոյի տանը սեղանի առաջ, ուր ուրախ ուրախ եւի էր
գալիս ինքնատուր,— գիտե՞ս, այստեղ մի արգելք կայ, բալա-
ջան (տէր Պօղոսը միշտ այդպէս էր անուանում Սագոյին), մի

արգելք կայ, որ ճնողները հեշտ չեն բաժանուել աղջկանից:

Եւ նա առանց շտապելու մտայրեց իւր իւզայի կարմիր շրթունքներին թէյի բաժակը, մի քանի անգամ ուժգին փչեց, ապա իւր շրթունքներին զօջի ձև, ձգեց շաքարի կտորը բերանը և կամաց կամաց խմելով, շարունակեց իւր խօսքը:

— Հմի էգ ա, որ ճնողները կրկամենան ասն փեսայ առնել, ախր մինուճարն է:

— Յիտոյ,— հարցրեց Սագօն:

— Հմի տեսնում ես էլի,— փչեց վերջին անգամ իւր զօյանման շրթունքներով աէր Պօղոսը,— տեսնում ես, որ արգելք կայ: Բայց ես շատ աշխատեցի համոզել հօրը, առացի, թէ Սուրբ Գրքումն էլ դրուած է— «կանայք արանց իւրեանց հետեւեցին», առացի, թէ խօ աղջիկը կրկին մեր գիւղումն է լինելու, միշտ կրտսնուէք:

— Իսկ նա,— հետաքրքրուած հարցրեց Սագօն:

— Է՛հ, ո՛ւմ ես ասում, էլի իւր էշն է քշում: Ձէ՛, չէ ու չէ՛. մեր ուէսին խօ դիտեա:— Խօսքը Նուռիկի մասին էր:

— Բաս ի՞նչ անենք:

— Համբերենք, բալա-ջան, համբերու թիւնը կեանք է, ասում է Գանիէլ մարգարէն, տեսնենք, վերջը ի՞նչ կը լինի:

Սագօն ընկաւ մտատանջութեան մէջ. նա դիտէր, որ այդպէս է պատասխանելու աղջկայ հայրը, դուշակում էր այդ և որոնում էր մի ելք այդ անելանելի դուր թիւնից դուրս դուրս համար: Նա վախենում էր Նուռիկին թողնել իւր ձեռից. նրա երեսի ծամուկը երևում էր, որ այդ դիլեմման, այդ հանելուկը մաշում է նրա թոյլ մտածողական ոյժերը:

— Հը՛, ասում ես համբերենք, տերաէր-ջան, բաս թէ փախաւ ձեռներկոյս... Ի՞նչ կ'անենք այն ժամանակ... Ես խօսելում եմ Նուռիկին...

— Փախաւ... ո՞նց թէ փախաւ,— հարցրեց տէր Պօղոսը, սրբելով մեծ կարմիր թաշկինակով իւր փառաւոր մօրու քնու ճակատը:

— Հենց այնպէս... եթէ ուրիշը ուզի նրան:

— Պահ, տնայէն, հանաք ես անում, թէ զորթ ես ասում: Սխր մի լաւ նայիր շուրջդ. ո՞վ կայ մեր դիւղում: Մի ցոյց տուր մէկին, քեասիրը խօ չի ուզի ուէսի աղջկանը:

— Ո՞նց թէ ով, ուէսը հարուստ է, կարող է քեասիրին էլ տալ իւր աղջկանը:

— Էդ ի՞նչեր ես դուրս տալի, Սադօ-ջան, ասր մի մտածիր. լսումս բան է, որ հարուստի փեսան քեասիր լինի: Էդ ո՞ր դրքումն է գրած. հարկւրներով պասի եմ կատարել ու էդ թաւուր բան չեմ տեսել: Չէ՛, չէ՛, բալա-ջան, հանդիսա կաց, աղջիկը մերն է ու մերը: Առազելը բան չկայ. համբերենք, գործը կը շինուի ինքն իրան:

Տէրտէրը դարդակեց իւր վեցերորդ բաժակը: Կնքնատուր մարեղու վերայ էր: Սադօն լուռ գլուխը ձգել էր սեղանին և մտածում:

— Այդպէս, բալա-ջան, այս շաբաթ կը շինենք գործդ ու ցինը կը վերջանայ,— ծիծաղեց տէրտէրը, թափ տուեց Սադօյի ուսը և վեր կացաւ տեղից: Սադօն ոչինչ չպատասխանեց:

Այդ բոպէին Նուռիկի պատկերը կենդանի կերպով կանգնած էր նրա առաջ. նա տեսնում էր նրա աչքերը, ժպտը, երեսը: Նուռիկը հրապուրում էր նրան իւր կուսական դիւթիչ թարմ գեղեցիկութիւնով: Սադօն զգում է անգամ նրա ներկայութիւնը. ահա նրա մերկ, գեղեցիկ մարմինը, կուրծքը, նրա կրակոտ աչքերը. և այդ մարմինը անզուսպ քարշում է նրան դէպի ինքը, նա զրգոում է նրան:

— Նուռիկ, դու խմը կը լինի... անպատճառ խն, ինձ Սադօ կն ասում, Գասպարեկեց Սադօ,— մի խուր, ճ'նշուած ձայնով շնչեց Սադօն և պինդ զարնելով սեղանին, վեր կացաւ տեղից աէր Պօղոսին ճանապարհ ձգելու: Իսկ դրսում արդէն մթնել էր. գեշերը տարածել էր իւր սև քօղը աշխարհիս վերայ և փոքրիկ Ա. զիւղը կամաց կամաց ընկղմվում էր հանդիսա քնի մէջ:

VII.

Գիշեր է:

Պարզ զուճրուխտեայ երկնականարում հանդարտ լողում է լուսնեակը: Նրա մեղմ լոյսը ավուսելով փոքրիկ Ն. գիւղի վերայ, ընկնում է գիւղից դուրս, դաշտային անհուն, լայնածաւալ տարածութեան մէջ և, հասնելով սարերի ստորոտներին, բարձրանում է սրածայր, երերուն ցոլքով մինչև նրանց բարձրաբերձ դագաթները և կորչում է եթերային կապուտակ մթնոլորտում: Իբրև ստուերներ երևան են գալիս սարերում մութ ձորերը, անդունդները, անցքերը և իրենց մթութիւնով աւելի պարզ, աւելի նշմարելի են կացուցանում լուսաւորուած մասերը:

Անշարժ է գիշերուայ պարզ, թափանցիկ օդը, անշարժ են երկարաձիգ սօսիները և ուռիները, անշարժ է չինարը, անշարժ, կարծես, քարացած է ողջ անտառը: Քամու նշոյլ անգամ չկայ: Բնութիւնը լուռ է: Սյր շքեղ հարաւային բնութիւնը, կարծես, անոյշ նիրհում է գիշերուայ կրքոտ, ջերմագին զգուանքների մէջ. երբեմն երբեմն միայն մի ինչ որ անորոշ հնչիւն, մի ձայն յանկարծ ընդհատում է այդ խորհրդաւոր լուութիւնը և իսկոյն լուում է հեռու, հեռու գիւղից դուրս: Երբեմն-երբեմն միայն քամու ալեքը խփվում է ծառերի անշարժ կախուած թերթիկներին, կարծես, իւր համբոյրն է տալիս նրանց և, բարձրացնելով մի բույգ միայն նրանց խուլ սօսափիւնը, կորչում է անհուն տարածութեան մէջ:

Գիւղի ծայրում, համարեա ամենավերջը, գտնվում է Հասօյի խրճիթը. դա մի փոքրիկ գետնափոր տնակ է, որ ժամանակի մաշող ժանիքների ազդեցութեան տակ կռացել, քայքայուել է և համբերութեամբ սպասում է իւր օրհասին: Նրա տափարակ, հողէ կարի վերայ բուսնում է արօտ, այգաւող ծիծառը մեծացնում է իւր փոքրիկներին, այգաւող ամրանը անց է կացնում իւր ժամանակը և Հասօն: Նա այժմս

էլ ծախսապատիկ նստած է այդտեղ և տրորելով իւր կոշտ, սևացած ձեռներում իւր սնրաժան քօրօղը, ատամների միջև մի ինչ որ երգում է: Նրա միտքը պտտում է շատ, շատ հեռու. նա չէ լսում, չէ հասկանում անդամ իւր երգածը. ահա քանի օր է նրա ուղեղը չէ դադարել զործելուց: Մի հարց միշտ զբաղեցնում է Հասոյին. նա աշխատում է մարսել, պարզել իրեն տանջող այդ միտքը—բայց իզուր, նրա մտածողութեան ընթացքը խառն ու շփոթ է: Մտքերը հետևում են միմեանց առանց ներքին կապակցութեան, առանց կանոնաւոր հոսանքի. յանկարծ անցեալ օրուայ մի աննշան փաստից յետոյ Հասոն յիշում է իւր մանկութիւնը, իւր տղայական խաղերը և կամ մօր պատմած արկածները: Անցնում է մի քանի րոպէ և նրա ուղեղում արդէն ծագում են նոր մտքեր, նոր յիշողութիւններ. ահա մեղմագին կարկաչում է վտիտ աղբիւրը, ահա Նուռիկը սափորը ձեռին կանգնած է այնտեղ և ջուր է առնում. լուսինը շեշտակի խփում է նրա երեսին—որքան չքնաղ է, որքան գեղեցիկ է այդ երեսը.—ահա նա ձայն է տալիս Հասոյին. նա մօտենում է նրան և իւր մինչև արմունկը մերկ ձեռներով փաթաթվում է Հասոյի վզով: Գիշերուայ լուռութիւնը ընդհատվում է նոցա ջերմ, առաջին սիրոյ համբոյրի ձայնով:

Ի՞նչ է դա, երանգ, ցնորք, թէ... թէ Հասոն չէ սխալվում և այդ ամենը այս րոպէիս կատարվում է նրա աչքերի առաջ: Հասոն կամաց կամաց սթափվում է:

Յնորքների և երազների աշխարհը փշրվում է:

Նա պինդ արորում է իւր ճակատը, ուղղում է իւր գանգուր սև մազերը և գանդաղ վեր է կենում տեղեցը: Նա կանգ է առնում մի րոպէ կտրի վերայ, ձգում է իւր մեղմադձոտ, թախծալի հայեացքը պարզ ամառնային երկնքի վերայ, նայում է լուսնեակին, աստղերին, արծաթափետուր ամպերին և կտրից գանդաղ ցած է իջնում:

Նոցա խրճթի երգիկից օղակաձև քուլաներով բարձրա-

նում է ծուխը. Ոսկեհատը կանգնած թոնրի մօտ մի ինչ որ եփում է. Հասօն լուռ մանում է ներս, լուռ հանում է իւր արխարուղը և նոյնպէս լուռ նստում է թոնրի մօտ:

Պառաւ Ոսկեհատը ձգում է իւր դեռ փայլուն, միշտ վազվզող հայեացքը նրա երեսին:

Խրճթի մի անկիւնում շարժվում է մի ինչ որ կենդանի բան. մերթ ընդ մերթ այնտեղից լսվում են թոյլ անզօր ձայներ, — դա Հասօյի զառնուկն է: Նա նոր լոյս աշխարհ է եկել: Վեռ երեկ Հասօն այնպէս քնքշաբար նայում էր զառնուկին, հոգում էր նրա պէտքերը, փաղաքշում էր նորան, իսկ այսօր ուշադրութիւն անգամ չէ դարձնում աղերսագին բառաչող զառնուկի վերայ:

Բոպէները անցնում են լիակատար լուրթեան մէջ:

Թոնրում այրուող փայտերը մի աղերսագին ճրթճռթոցով փշշում են, ճայթում են, կոտրատվում են և թողնելով կայծերի հրեղէն մի կոյտ՝ ծածկվում են թանձր մոխրով: Այդ մոխրի մակերևոյթին խաղում է կապտադոցն մարող կրակը և մօլի, շարժուն ցուքերով երևում է դէս ու դէն:

— Լսիր, մայր, — յանկարծ ձայն տուեց Հասօն, — դու ինձ պատմում էիր, թէ հայրս ժամանակով ոչ ոք է եղած այնտեղ՝ մեր հայրենիքում. զո՞րթ ա...

Ոսկեհատը նախ երկար նայեց Հասօյի անզուսպած երեսին և յետոյ արդէն պատասխանեց.

— Հն, եղած է, որդի-ջան, ի՞նչի ես հարցնում:

— Հէչ, կեպէս:

— Զէ, աստ:

Եւ Ոսկեհատը մօտեցաւ Հասօյին:

Վերջինը պինդ սեղմել էր իւր նեղ շրթունքները. հիզնական ժպիտը տխուր խաղում էր այդ շրթունքների ծալքերում:

— Հը, ինչի՞ ես հարցնում:

— Ինչի՞. նրա համար, որ ես էլ կարողանամ պարծի-

նալ հօրովս, որ խմանան ուրիշները, թէ ես էլ հասարակ, վարձկան հովիւ չեմ, այլ ուէսի որդի:

Եւ նա պինդ ծիծաղեց. այդ ծիծաղը սառն էր և շինծու:

Ոսկեհատը կրկին անհանգիստ նայեց նրա երեսին:

— Կարօն ասում է,— շարունակեց, կարծես, ինքն իրեն Հասօն,— որ այստեղ, Ղ. գիւղում ոչ մի մարդ չէ տալիս իւր աղջկը հովուին: Հա... Կարօն այդպէս ասաց. իսկ ես... ես չեմ հաւատում:

Ոսկեհատը վայր դրեց ձեռի ամանը և սկսեց մտիկ տալ Հասօյին:

— Ձեռ հաւատում, ակար եթէ աղջկը սիրէ ինձ, նա կըզատնայ իմ կինը. լինի դա հէնց ուէսի աղջկը: Սխր օձ կարող է գօռով տալ ուրիշին աղջկանը. նա խօ ինձ է սիրում, էլ ի՞նչ:

Եւ նա յանկարծ անզօր լուեց:

Թոնրում կրկին ճրթճոթացին այրուող վայտերը:

— Ինչո՞ւ ես այդպէս խօսում, Հասօ-Չան,— նկատեց մայրը:

Որդին լուռ նայեց իւր մօր խորշումած երեսին:

— Հը, ասա՛, ասա՛, որդի-Չան,— նա մօտեցաւ Հասօյին և սկսեց քնքշաբար շոյել նրա խիտ մաղերը,— հը, ասա, բարա-Չան, ասա, իմ աչքի լոյս Հասօս...

— Ինչո՞ւ,— նկատեց մի յուզուած ձայնով Հասօն,— ինչո՞ւ. նրա համար, որ ահա քանի ամիս է քօ խեղճ Հասօն քուն չունի. նրա համար, որ Սաչ-քարի ուխտի օրից սրտովս ամեն օր արինն ու լեղի է գնում. նրա համար, որ այս սիրտը խոցուած է, մայրիկ-Չան, հալ ու մաշ է եղած...

Եւ արաստուքի հեղեղը ցայտեց Հասօյի աչքերից:

Սյն հոգեկան ծանր բեռը, որ ամիսներով ծանրացել էր նրա սրտին, այժմ, թեթեւանում էր վազող արաստուքների հետ միասին: Լացը մեղմացրեց նրա սրտի կսկիծը. խուլ հեծկլտանքները ավուր հնչում էին սենեկի լուծեան մէջ:

— Գու ուզում ես մէկին,— շնջեց Ոսկեհասար:

— Ուզում եմ... աւելի, մայրիկ,— ես սիրում եմ նրան: Սյս բռպէիս անգամ տեսնում եմ ես նրա պատկերը.. Ա՛յ, նա կանգնած է սօսկնու տակ և ձայն է աւրիս ինձ: Սյո՛, մայրիկ-ջան, ես ուզում եմ: Իսկ որքան է սիրում նա քեզ. ես շատ եմ պատմել նրան քո մասին, ասել եմ թէ որքան բարի ես գու և որքան անբաղդ ես. պատմել եմ նրան մեր հայրենիքի, մեր չէնի մասին, մեր անցեալ կիսմիջի, մեր կրած չարչարանքների, լացի մասին: Ախ, մայրիկ-ջան, մայրիկ-ջան, ես պատմել եմ նրան, թէ ինչպէս քրդերը սպանեցին հօրս և ինչպէս Նոյեմզար քրոջս քշեցին Պարսկաստան. խօսցնեմք է նա: Ա՛խ, եթէ դու տեսնէիր, ինչպէս լաց էր լինում նա... Նա, մայրիկ-ջան, սիրում է մեզ բոլորիս, նա խոստացաւ դառնալ իմ կինը:

Ոսկեհասար շուարած լսում էր Հասոյի անկեղծ խոստովանանքը:

— Հա՛, մայրիկ-ջան, նա սիրում է, և դեռ Կարօն ասում է, որ նրան ինձ չեն տալ: Սյսօր դիւզում խօսում էին, թէ ինչպէս սարսաղ Սաղօն խնամախօսներ է զրկել նրա հօր մօտ և ինչպէս մեր ոէսը տուել է իւր խօսքը:

— Ի՞նչպէս, դ՞ու, դ՞ու, Հասօ, ուզում ես Նուռիկին:

— Հա, մայրիկ-ջան:

Հասօն վեր կացաւ տեղից և իբրև անդրի կանգնեց մօր առաջ և հաստատ կրկնեց.

— Հա, մայրիկ-ջան:

Վայրենի բնութեան աւելի վայրենի, անտաշ որդին խոստովանում էր իւր առաջին սէրը: Ներքին, ջերմ կրակը վառվում էր նրա լայն բացած աչքերում, արիւնը խփել էր տաքացած երեսին և ներկել էր վերջինը մի ալ վարդի գունով: Նա հպարտօրէն բարձրացրել էր իւր գլուխը, անվախ վիայում էր իւր սէրը և չէր ամաչում իւր արարքից:

— Հասօ, որդի-ջան, այդ ի՞նչեր ես խօսում:

— Ի՞նչ, — հարցրեց Հասօն միայն:

— Ախր ոէսը հարուստ է, անուանի, իսկ մենք...

— Իսկ մենք աղքատ. բայց երիտասարդութիւնս, ոյժերս, աշխատանքս. այդ ոչնչ՞նչ: Հը՞, ես կրբանեմ, օր ու զիշեր կրբանեմ: Ինձ խօ կըտան մի թիզ հող. ես կրցանեմ, կրվարեմ, և մենք Նուռիկի հետ քաղցից չենք մեռնիլ:

Ոսկեհատը տխրագին ժպտաց:

Նրանում խօսեց այդ բոպէին դառն փորձերի ձայնը:

— Դու մոռանում ես, Հասօ, — նկատեց նա մի բոպէից, — դու մոռանում ես, որ ոէսը նամուսի, ամօթի խաթրի չի տալ իւր աղջկանը քեզ: Ի՞նչ կ'ասէ զիւղը, ժողովուրդը. մասխարայ լինել ուրիշների առաջ նա չի ուզել. խալտի բերան ընկնելը լավ չէ, որդի:

— Ախր Նուռիկը սիրում է ինձ:

— Սիրում է, ո՞վ է նրան հարցնողը:

— Կարօն է այդպէս ասաց, դ՞ու էլ մայրիկ և այդ լսու է, ճշմարիտ է: Ասա, մեզք չէ՞. մի՞թէ այդպէս է լինում աշխարհում, մի՞թէ մարդիկ այդքան անխիղճ են: Տես, ոչ խարներս, անտառի զաղանները, թռչունները, նոքա անգամ սիրում են իրենց ուղածին: Մի՞թէ մարդիկ վատ են զաղաններից: Մայրիկ, մայրիկ, դու էլ, Կարօն էլ, այնպէս չէք խօսում. չէ՛, չէ՛...

— Մարդիկ, մարդիկ, — շնջեց դառն հեգնութեամբ Ոսկեհատը, — մարդիկ, այո՛, նոքա վատ են զաղաններից, որդի, նոքա սպանեցին քո հօրը, նոքա թշուառեցրին մեզ. Իսկ ի՞նչ արին քրոջդ...

Եւ վաղեմի, ախուր յիշողութիւնները զարթեցին պառաւ Ոսկեհատի ուղեղում: Այդ լեռնական հայ կնոջ մէջ չկար ճիշտ հայիական, հլու, ստրկական համբերութիւնը: Այդ գաղթականը, որ օտար հողի վերայ գտել էր իւր ապաստարանը, զիտէր և սիրել և ասուէ: Արէժինդրութեան ոգին դեռ չէր մարել նրանում. մի օր նա յոյս ունէր առ-

նել իւր վրեժը թշնամիներէց: Նա հաւատում էր, որ այդ օրը երբ և իցէ կրգայ:

— Լսիր, Հասօ, մարդիկ անխիղճ են—ես լաւ եմ ճանաչում նրանց. եթէ նոքա տեսնեն քեզ ընկած ճանապարհին՝ հիւանդ, քաղցած, ծարաւ, օգնութեան փոխարէն կ'անցնեն վրայովդ. այդպէս են մարդիկ: Ստիր նրանց, տաիր ամենքին. թող այդ երիտասարդութեան ցնորքդ, այդ սուս սէրը: Սէրը թողել է մեր աշխարհը. նա չկայ, մնացել է սուտը, լացը և անէծքը: Գնանք այսանդից, գնանք մեր հայրենի շ—չէնը, համբուրենք նրա սուրբ հողը և վրեժներս ասնենք մեր թշնամիներէց: Ես կրգամ հետդ, ես պտուսեմ եմ, ուժից ընկել. բայց կրգամ հետդ. թող իմ ոսկորները հանգչեն մեր շ—չէնում. գնանք, Հասօ...

Սլեզարդ մագերը արձակած, կանգնած էր Ոսկեհատը թոնրի մօտ, կանգնած էր անշարժ: Կրակի բոցը լուսաւորում էր նրա հողադոյն երեսը, լայն, ուռած երակները և խորշամած ճակատը մի կարմիր բոցեղէն լուսով. սուր փոսփորային կրակը ցոլում էր նրա լայն բացած, մի կէտի ուղղած աչքերը: Սյդ գրութեան մէջ Ոսկեհատը յիշեցնում էր պտուս վհուկներին, որոնք կանգնած խարոյկների առաջ, սրբագործում են իրենց հմայութիւնը:

Ոսկեհատը գողում էր: Սյսքան տարի պահած, լաւձ ոխը յանկարծ երևան էր եկել և պահանջում իւր կատարումը: Էին ցաւերը նորոգուել էին:

— Լսում ես, Հասօ, գնանք և. Միրդա-բէյի արիւնք կրփոխարինէ Մրտոյիս արիւնք: Միս, Մրտոս, Մրտոս. քո առանց գերեզմանի և սուրբ թաղման մնացած հողիդ վերջապէս կրհանդստանայ, էլ նա չե թափառիլ մութ գիշերները: Գնանք, գնանք մեր շ—չէնը, Հասօ:—Եւ Ոսկեհատը յետ ձգեց իւր արձակած մագերը և ուղղեց իւր սուրբ համարեա անմիտ հայեացքը Հասօյի կողմը: Նա, կարծես, չէր տեսնում իւր որդուն:

Իսկ Հասօն լուռ, շուարած նայում էր նրան: Նա առաջին անգամ էր տեսնում իւր մօրը այդ դրութեան մէջ. նա չգիտէր, որ երկար, քսան երկար տարիներ վրէժխնդրութեան միտքը չէր թողել պառաւ Ոսկեհատին: Նա չգիտէր, որ նա գիշերները ցնորուածի պէս վեր էր կենում և, դուրս գալով խրճիթից, սկսում էր կարգալ իւր կատաղի անէծքը. նա չգիտէր, որ ժամանակի ընթացքում այդ միտքը դարձել էր Ոսկեհատի *idée fixe*՝ը, այն թելը, որ կապում էր նրան կեանքի Հետ: Եւ այժմ, երբ նա տեսաւ, լսեց մօր խօսքերը, նրա յորդորը, նա զարմացաւ, թէ որքան կամք, ոյժ և զօրութիւն է մնացել դեռ այդ թոյլ պառաւած մարմնի մէջ. նա արիւն է անձկում, արիւն և վրէժ:

— Բայց ի՞նչ կրգայ մեր ձեռքից, մենք երկուսովս ենք միայն, — նկատեց Հասօն մի անհաստատ ձայնով:

— Ի՞նչ ամաչէ՞ր, ամաչէ՞ր, ռէսի որդի. Հեռու, Հեռու ինձնից, թուլամորթ. դու իմ ուղին չես, դու վախճում ես քրդերից: Հեռու, թէ ոչ իմ մայրական անէծքը կրթափութի գլխից, — եւ Ոսկեհատը բարձրացրեց իւր ոսկրոտ, չորացած ձեռները դէպի երկինք: — Ի՞նչ, և դու, դու... Հարցնում ես. մենք կրտսանենք Միրզա-բէյին, մենք կրիմենք նրա սաք սաք արիւնը: Ա՛հ, խա, խա, խա, ի՞նչ լաւ կր լինի. Մրտօս Հանգիստ կըբնի յաւիտենական քնով, էլ չի վըզովիլ նա ինձ երազումս, էլ տխուր չի շարժիլ իւր արիւննօտ գլուխը: Ա՛ն, Միրզա-բէյ.

Եւ խելագար պառաւի ծիծաղը Հեռու տարածուեց զիշերուայ լուսթեան մէջ: Սյդ սուր, երկարատե ծիծաղը սարսուռ ձգեց Հասօյի վերայ:

— Մայրի՛կ, մայրի՛կ, ի՞նչ ես ասում, Հանգստացէ՛ր:

Ոսկեհատը սարսափած յետ քաշուեց խրճիթի մտթ անկիւնը. կարծես, մի զարհուրելի տեսիլ երևեց նրա աչքերին:

— Ա՛ն, կրկին, կրկին այստեղ ես, Միրզա-բէյ. դու այստեղ էլ Հանգիստ չես տալիս խեղճ Ոսկեհատին. Հեռու,

Հեռու ինձնից, մարդասպան. կորի՛ր, զնա՛, տնա՛, այնտեղ
մշուշի մէջ կանգնած է Մրտա: Ի՞նչ սպանեցիր նրան, նա
սաստում է քեզ. անս, արիւնը կաթ-կաթ վազում է նրա
պլիքից... Հեռու, Հեռու Միրզա-բէյ: Ոսկեհատը մենակ չէ.
նա մեծցրեց օտարութեան մէջ իւր որդուն. Հասօն այստեղ
է. Հասօ, Հասօ, — ճշաց Ոսկեհատը, — օգնի՛ր, օգնի՛ր ինձ,
Միրզա-բէյը խեղդում է, խեղդում է մօրը:

Հասօն վաղեց նրա մօտ, բռնեց նրա ձեռից, և մի ակնթար-
թում Ոսկեհատը սթափուեց:

— Կրկին, կրկին այս զարհուրելի երազը... Ի՞նչ ասացի
ես, — հարցրեց նա թոյլ ճնշուած ձայնով:

— Ահ, ո՛ւր եմ ես, ինչպէ՛ս ուժգին շուացնում է քա-
մին. ցուրտ է, ես մրսում եմ:

— Մայրիկ, դու վրէժ էիր պահանջում:

— Վրէժ. ո՛չ, ո՛չ դա ցնորք է, երազ որ ժամանակ ժա-
մանակ տանջում է ինձ... Այսօր լուսնի նորն է, երևի.
մոռացի՛ր, որբի, իմ խօսքերը, մի՛ յիշըր այլ ևս:

— Եւ նա ծանր կերպով հառաչեց: Հա, ես մոռացայ...
Է՛խ, պառաւել է խեղճ Ոսկեհատը, մոռացիտ է զարձեւը...
Հա, դու ասացիր, որ Նուռիկը սիրում է քեզ...

Հասօն ոչինչ չպատասխանեց:

— Հա, այդպէս... լաւ է, լաւ... իսկ ո՛հնր. նա կրմբո՛ւ
քեզ, նա հարուստ է իսկ մենք, մենք... դու...

Եւ Ոսկեհատի ձայնը յանկարծ կարուեց. նրա աչքերի
ծանրացած կողերը փակուեցան, տաք քրտինքը ծածկեց
նրա մաշուած, կնճիռներով պատած երեսը, մարմինը, և
նա անզօր ընկաւ Հասօյի ձեռների վերայ:

Կրկին խրճթում տիրեց լռութիւն:

Իսկ թոնրում կրկին ուրախ ուրախ այրվում էին կրա-
կած, սևացած փայտերը, և կրկին մոխրի մակերևոյթին
խաղում էր կապտագոյն, մոլի կրտիկ:

VIII.

Գիւղում ճշմարիտ որ սկսել էին խօսել Սաղօյի ապագայ ամուսնութեան մասին. իբրև հարսնացուի տալիս էին Նուռիկի անունը: Սրէ ցօր այդ լուրը աւելի և աւելի տարածվում էր գիւղական հասարակութեան մէջ և վերջինը արդէն համարիս համոզուած էր, որ դա մօտակայ ապագայի փաստ է: Ետերը ափսոսում էին, որ Նուռիկը արդէն ծերացած վաշխառուի ճանկն է ընկնելու, շատերը, ընդհակառակը, երանի էին տալիս նրան և անմիջապէս սկսում էին հաշուել Սաղօյի հարստութիւնը, և համարիս ամենքը նախանձում էին Նուռիկին, նախանձում էին նրա բաղդաւորութեանը: Այդ լուրը, որ վերջին ժամանակ դարձաւ ամբողջ Ղ. գիւղում առօրեայ զրոյցի, «ասէ-կօսէ»ի նիւթ, հիմնուած էր մի անուրանալի փաստի վերայ: Ետերը տեսել էին, ինչպէս տէր Պօղոսը եկել էր ուէսի տունը, երկար մնացել էր այնտեղ և զուրս դալիս ինքնաբաւական կերպով, ուրախ ուրախ շփել էր իւր ձեռները: Այդ ամենը այնպիսի փաստեր էին, որ երկբայեղը աւելորդ էր անգամ: Ինչո՞ւ ապա տէրտէրը շփեց իւր ձեռները, այն էլ ուրախ ուրախ. իս տէրտէրը ի զուր չի անիլ այդ: Եւ գիւղում ամենքը համոզուած էին, որ եթէ տէր Պօղոսը շփել է իւր ձեռները, ուրեմն անպատճառ մի բան կայ և այդ «մի բանը» զբաղեցրեց ամենքին:

Տէր Պօղոսը իրաւ գնացել էր ուէսի մօտ, համոզել էր նրան և նրանից խօսք էր առել ծերունի ուէսը տալիս էր իւր ազդեկը Սաղօյին:

Եւ Գասպարինց Սաղօն անչափ ուրախ էր. նա առատապէս վարձատրեց զօչազ տէր հօրը: Առանց նրան Սաղօն հազիւ թէ կարողանար զլուխ բերել այդ գժուարին զործը. իսկ այժմն նա հասել էր իւր անձկալի նպատակին և զգում էր իրեն երջանիկ, բոլորովին երջանիկ:

Երջանիկ էր և զօչաղ տէր Պօղոսը. նա ստացել էր իւր «ժամոցը» և բացի դրանից Սագօն խօսք էր տուել բարեխօսել բարեկարգչի առաջ տէրտէրի մի քանի պաշտօնական ակներև ղեղճումների մասին: Եւ այսպէս, այս փոքրիկ պատմութեան մէջ գործող հերոսներից շատերը բաւական և երջանիկ էին. միայն Նուռիկն էր, որի սրտով արիւն էր գնում: Այն կցկտուր լուրերից, որոնք հասնում էին նրա ականջին, նա զուշակում էր իւր համար մի անբաղդութիւն: Նեո կղերութիւնը չիմացած նա տանջվում էր և նրա սիրտը կտրատվում էր. տանը այս վերջին օրերս շատ են փսփսում Սագօյի մասին. այդ ի՞նչ է... Ի՞նչո՞ւ այդպէս շուտ շուտ են յիշում նրա անունը: Այդ հարցը օրը քանիցս ծագում էր Նուռիկի ուղեղում և տանջում էր նրան: Նրա ներքին անդորր աշխարհը պղտորուած, տակն ու վերայ էր եղած. կեանքի կանոնաւոր հոսանքը դուրս էր եկել ավերից և ընտրել մի նոր, արտուղի շաւիղ:

Ոչ որ չկար նրա մօտ, որի առաջ նա կարողանար յայտնել իւր գաղտնիքը, իւր մտքերը, որին նա կարողանար ցոյց տալ իւր խոցուած, ցաւող սիրտը. նա երբէք չէր համարձակուել խօսել այդ մասին իւր ծերունի հօր հետ, իսկ մայրը այս վերջին օրերս ակներև խորշում էր որ և իցէ բացատրութիւններից: Եւ Նուռիկը մնում էր բոլորովին մենակ:

Շատ անգամ նրա մտքովն անցնում էր Հասօն: Նա մտաբերում էր այն երեկոն, ազբիւրի մօտ, երբ առաջին անգամ նրա սիրտը բարախեց սուրբ սիրոյ առաջին անշէջ կրակով, երբ առաջին անգամ նրա անմեղ, կուսական շրթունքները այրուեցին ջեմ համբոյրներից:

Յիշեց այդ ամենը Նուռիկը և նրա սրտի խորքում մի բան սաստիկ, սուր ցաւեց, ի՞նչ էր այդ. մի՞թէ նա մնաս բարև էր ասում իւր երջանիկ անցեալին, իւր ոսկի խաբուսիկ կրագներին. մի՞թէ նա մոռացութեան էր տալիս իւր

սէրը, զգուանքը, փաղաքշանքը. մի՞թէ նա մոռացաւ իւր սիրելի Հասոյին և այսպէս վաղ երգում է իւր վերջին, հրա-
ժարական ողբը: Ոչ, ոչ, Նուռիկը գեռ յիշում է այդ ան-
ցեալը. նա գեռ ապրում է այդ անցեալով. որքան լուսափայլ
էր նա, որքան երազական, գիւթիչ ցնորքներ էր խոստանում
նա: Եւ ահա մի րոպէում կորցնել այդ ամենը, կորցնել յա-
ւիտեան... Ո՞վ է նա, որի անկոչ, օտար ձեռը յանդգնում
է փշրել ցնորքների այն լուսաւոր աշխարհը, ուր ապրում
էր Նուռիկը. ո՞վ է նա, որ անսպասելի կերպով խորտակում
է փայփայած, սիրած յոյսերը: Ո՞վ է նա, ո՞վ...

Այդ միտքը անդադրում ծագում է Նուռիկի ուղեղում:

— Զլինի թէ Սազօն է, — սարսափած խոստովանում է
նա ինքը իրեն, — այդ անշնորհք Սազօն, Աստուած իմ, մի՞թէ
նա է, մի՞թէ իմ ծնողներս այնքան անսիրտ են, որ կըհա-
նեն, կրտան ինձ նրան, այդ խեղճերի արիւնը ծծող Սազօյին:
Զէ՛, չէ՛. ինձ կըմեղքանան, ես խօ սիրում եմ արդէն, սի-
րում եմ ուրիշին:

Եւ նա ծանր հառաչում է:

— Սազօն, պառաւ Սազօն, Աստուած իմ, — և նա մի ինչ
որ զառանցանքի մէջ փակում է իւր արտասուլալի աչքերը
և անձնատուր է լինում իրեն յուղող, տանջող մտքերի
քառսին:

— Սարսաղ Սազօ, — մտաբերում է նա յանկարծ Հա-
սոյի խօսքերը և արտասուլալնոր ժպտում:

— Հասօն և Սազօն, ծերը և երիտասարդը. հա, հա, հա, —
ծիծաղում է նա մի անբական, ցնցողական ելևէջներով: —
Սազօն... իսկ որքան գեղեցիկ է իմ Հասօս, իմ սիրելիս, իմ
աչքի լոյս Հասօս: — Կրկին սենեկի լուռութեան մէջ լսվում
է Նուռիկի հիւանդոտ, ներգային ծիծաղը:

Մութը հասնում է: Հօրիպոնը պատել է մութ, մոխրա-
գոյն, ծանր լոզացող ամպերով, որոնց ստուերը սև, անկա-
նոն շրջանակներով ընկնում է գետնի վերայ: Ոչ մի աստղ

չէ ցորում արձճային երկնականարում: Քամին կատաղի սուշում է ամայի փողոցում և բարձրացնելով փոշու քուլաները ուժղին խփում է ցանկերին, դռներին և անցնելով երգիկի մէջ սկսում է իւր ախուր, սիրտ մաշող երգը: Մառերը կռանում են գետնին և նրանց տերւեները հառաչելով ճրճոտում են քամու սաստիութիւնից: Երկինքը աւելի և աւելի մթնանում է:

Մօտ մօտ կուտակուած սևագոյն ամպերում ցորում է փայլակը, ուժղին որոտում և անձրևի խոշոր կաթիլները թրջում են հողը: Նուռիկը դուրս եկաւ բակը:

Մի քանի լուպէից մութ, կեղտոտ ջրի հեղեղը սկսում է կատաղի հոսանքով լցուել մօտակայ ձորը: Նուռիկը լուռ նայում է նրա ալիքներին: Եւ որքան նմանութիւն բնութեան այս երևոյթի և Նուռիկի հոգեկան տրամադրութեան մէջ, այնտեղ էլ այստեղ էլ տիրում է ալէկոծութիւն, բայց կըզայ արդեօք Նուռիկի համար փրկարար, կենսատու անձրևը, կըպարզուի նրա ապագայի հօրիպոնը, ինչպէս մի ժամից պարզուեց հանդարտուած բնութիւնը և մութ կապոյտ երկնամարում ցորաց գիշերուայ վառ, փայլող աստղը:

Կըցոյայ, կըվառուի արդեօք և Նուռիկի աստղը:

IX.

Կէս գիշեր էր:

Ղ. գիւղի անկանոն, գառիվայր փողոցները դարձել էին մի մի ցելս ու ջրի լճակներ: Այդ խառնուրդը ահագին շքանակներով փռուել էր այստեղ ու այնտեղ իսկ անձրևը գեռ շարունակում էր ջրել առանց այն էլ թաց հողը, նրա կաթիլները խուլ շվշվոցով հասնում էին գետնին, թափվում լճակների մէջ և գծադրում էին նրանց մակերևոյթին երեւոուն, միշտ մեծացող շքանակներ:

Սմէն ինչ թաց էր, թաց էին փոքրիկ, կուսած խրճիթները, թաց էին ցանկերը, ծառերը, և նոցա թերթիկները

պինդ կպչելով միմեանց անդադար վայր էին ձգում անձրևի խոշոր կաթիլները:

Երկինքը ամպամած էր:

Երևում էր, որ շքեղ ամառը գտնվում է հողեվարքի մէջ. նա ապրում է իւր վերջին, հրաժարական օրերով: Մի քիչ ևս և աշունը կրփոխարինէ նրան. կրդեղնեն ծառերը տերևները, արօար, կրչորանայ բուսականութիւնը, կրթառամեն գեղեցիկ ծաղիկները, կրքնէ խոր քնով թիթեռը, բզէզը, հեռու, հեռու կրթուչի ծիծառը և միայն սև ադաւաւը, նստած մերկ ծառի ճիւղին, կրբարևէ իւր տխուր կրկոցով աշնան գալը: Գիւղի հրապարակը դեռ լուսաւորուած է, բայց է մանրավաճառի խանութը, բայց է և օղեսունը. սորա դուռը երկար ճրճոցով անդադար բացվում ու փակվում է, ներս թողնելով իւր մշտական այցելուներին: Մտաւ այնտեղ ահա ժամանակից առաջ ծերացած Գիզօն, նա փաթաթուել է իւր հնամաշ ցնցոտիների մէջ և սրթսրթում է, նրա կապտած երեսը և քիթը, նրա կարմրած, ցաւոտ յօնքերը ցոյց են տալիս, որ նա Բաքոսի երկրպագուներից ամենաջերմեռանդն է: Նա պինդ սեղմել է իւր ափում մի ինչ որ բան և անհաստատ, թոյլ քայլերով մտնելում է «ղաբաղչի» Ասուատուրին: Ասուատուրը արդէն զխտէ ի՞նչ է ուզում Գիզօն, նա առնում է նրա ձեռից փողը և տալիս նրան օղի: Գիզօն բարձրացնում է լուսին բաժակը. երկար՝ համարեա զմայլած, նայում է նրան և յետոյ, կարծես, մեղքանալով, կամաց կամաց խմում է օղին: Նա քանիցս ախորժակով շարժում է իւր կապտած շրթունքները, փակում է կարմրած աչքերը և կրկին խմում: Գիզօն անտուն, անաէր մի մարդ է. ոչ ոք չգիտէ, ճրաեղից է նա: Ահա քանի տարի է, ինչպէս նա Ա. գիւղումն է, նա ամառները գիշերում է Աստուծոյ պատի, այսինքն բաց երկնքի տակ, դնելով զլուսը մի քարի վերայ: Իսկ ձմեռները, ձմեռները նա անց է կայնում օգետան մէջ

իւր ժամանակը և դրա փոխարէն անում է այս և այն ծառայութիւնները «ղաքաղչի» Ասուատուրի մօտ: Վաղըց պղպէս է ապրում Գիգօն. ապրիլ է նա այլապէս, թէ ոչ—նա չգիտէ անգամ:

Ահա և կողմ Դանիէլը. դա բնիկ Ղ—եցի է. ամենքը յիշում են, թէ ինչպիսի կարողութեան տէր մարդ էր դա ժամանակով: Սյժմ նա ոչինչ չունի, բացի մեծ, միշտ քաղցած ու ծարաւ ընտանիքից: Սա էլ սովորական հիւրերից մէկն է: Նա ճանաչում է Գիգօյին, Գիգօն էլ նրան: Դանիէլը մօտ 55 տարեկան մարդ է. նա խմում է լուռ ու մունջ, խմում է շատ, բայց շուտ չէ հարբում: Նա չէ սիրում խօսել, ծիծաղել. նա երբէք չէ ժպտում. նրա դէմքը միշտ մռայլ և խոժտուած է: Սյղպէս չէ Գիգօն. նա շատ շուտ է հարբում. նրա կազմուածքը թոյլ է. օղու գորդշիւները իսկոյն ազդում են նրա վերայ, թմրեցնում են, և նա սկսում է խօսել, հրհրալ, վիճել. նա սկսում է պատմել ամենքին իւր անցեալը, պատմում է զանազան ծիծաղաշարժ դէպքեր, անցքեր, կրկին խմում է, սկսում է համբուրիկ ամենքին, մերթ հայհոյում է «ղաքաղչի» Ասուատուրին, մերթ դովում և վերջ ի վերջոյ սկսում է լալ, լալ բարձրաձայն: Սյսպէս է Գիգօն: Բայց երկու հակառակ բնաւորութիւնները կրկին բարեկամներ են և սիրում են միմեանց. երկուսն էլ, չնայելով այն ահագին զանազանութեան, որ կար դրանց մէջ, վերջ ի վերջոյ եկել են օղետան դուռը և այստեղ թաղում են իրենց ցաւերը, վշտերը, յոյսերը և անցեալը:

Սյդ օրն էլ Ասուատուրի մօտ կային շատ հիւրեր: Խօսակցութիւն, ծիծաղ, հայհոյանք լսվում էր ամեն կողմից, երբ օղետան դուռը բացուեցաւ և ներս մտաւ Հասօն: Նորան հեռուում էր Կարօն, Հասօյի ընկերը և դրացին: Անձրևը թրջել էր նրանց: Նոքա մօտեցան վառուղ բուխարուն: Հիւրերը դարձրին իրենց երեսները նրանց կողմը: Հասօն և Կարօն շատ քիչ էին լինում Ասուատուրի մօտ:

— Մի շեշ օղի,—պատուիրեց Հասօն և, Հանկըվ իւր թաց քօլօղը, սկսեց թափ տալ նրան:

— Գի՞տես, այդ կուզը ով է,—զարձաւ նրան Կարօն:

— Ո՞րը:

— Ա՛յ, այն, որ քունջուճը նստած է. դա ժամանակով ամենահարուստն էր մեր գիւղում: Մի օր ընկաւ խեղճը Սազօյի ձեռք, մտաւ սարտքերի մէջ և ահա մուրացկան է այժմս:

— Տեսնես, քանի-քանի այդպիսիներին զրկիլ է այդ անիծածը,—նկատեց Հասօն:

— Է՛հ, զրա արարքը վերջ չունի:

— Ուրեմն եկող շաբաթ Նուռիկի Հարսանի՞քն է:

— Բաս, Հանսօք եմ անում. տէրտէրից իմացայ:

Հասօն ոչինչ չպատասխանեց, միայն նրա երեսի գոյնը փոխուեց. նա լուռ նայեց Կարօյի կողմը և միանգամից դարտակեց իւր բաժակը:

— Ուրեմն աղջիկը փախաւ էլի ձեռիցս,—և նա ծիծաղեց:

— Փախա՞ւ, ինչպէ՛ս:

— Բաս. Սաղօն առաւ:

— Մի՛ տար էլի:

— Ո՞նց թէ չտամ:

— Հենց այնպէս:

— Փախցնե՞մ:

— Ինչպէս ուզում ես: Ի՛է, կենացդ, Հասօ-ջան, սաղ ընես ուրախ:

Եւ բաժակները կրկին պարպուեցան:

Մի րոպէ անցաւ լուռթեան մէջ:

— Ախր դժուար է,—նկատեց Հասօն:

— Ի՞նչ դժուար բան կայ, կտրիճ չե՞ս. արի՛ ու մի՛ տար:

— Ո՞նց թէ չտամ:

— Է՛հ, եղբայր, աղջիկը սիրում է քեզ—պրծաւ ու գնաց:

Արի այս զիշեր փախցնենք ու տաննք Հարւան գիւղը, թրքերի թաղը, այնտեղ կըմանք մի քանի օր, յետոյ էլ...

— Զէ, չէ, — ընդհատեց նրա խօսքը Հասօն, — փախցնելը կոտրել Նուռիկի անունը, նամուսը, չէ, ես չեմ ուզում:

— Ծալիւր ձեռներդ ու նայիր, թէ ոնց Սագօն Նուռիկի տէրը կը դառնայ — եւ Կարօն Հեգնօրէն ծիծաղեց:

— Մի՛ ծիծաղել, Կարօ, ես ինքս էլ չգիտեմ, ինչ եմ խօսում, ես տանջվում եմ: — Օղու երրորդ բաժակը նոյնպէս դարտակ էր արդէն:

— Ինչու եմ ծիծաղում, հէր օրհնած, ասում եմ փախցնու:

— Զէ, չէ:

— Է՛հ, քո բանն է, ախպէր, ոնց գիտես:

Եւ նոքա լռեցին: Հասօն ընկաւ մտատանջութեան մէջ: Այսօր վաղը Նուռիկը կը դառնայ ուրիշն կինը, Նուռիկը, նրա Նուռիկը. Եւ ի՞նչ կարող է անել Հասօն. ոչինչ: Սագօն հարուստ է և իշխում է ամենքի վերայ. իսկ Հասօն նա զրոյ է: Բայց ոչ, Հասօն կարող է մի կերպ դրսեւ բանը. Ա՛յ Կարօն խրատ է տալիս փախցնելը փախցնել բռնի. ի հարկէ Նուռիկի անունը կը կոտորուի, բայց ի՞նչ արած ախր. Եւ Հասօցի հայեացքը ընկաւ դարտակ շէշ վերայ: Նա նայեց իւր շուրջը, նայեց Կարօյին և յանկարծ նա ինքը և Կարօն, և օղետունը և այդ կիսահարբած հիւրերը և կարգին դարսած շէշերը սարսափելի զղուելի թուեցին նրան: Նա, որի օգնութեանը կարելի է, որ կարօտ է Նուռիկը, նստած գինեանում պարսպ անց է կացնում իւր ժամերը. ամօ՛թ, ամօ՛թ... Եւ Հասօն յանկարծ վեր կացաւ տեղեց:

— Է՛յ, ո՛ւր ես շտապում, կայ, մէկն էլ ես մեծարեմ, — նկատեց Կարօն:

— Զէ, չէ. զլուխս է ցաւում, — և նա շտապով դուրս եկաւ օղեանից: Կարօն հետեւեց նրան:

— Նորերից են, — նկատեց Գիլօն, — է՛յ, Ասուատուր, է՛յ, սրբազան, էս քո նոր ընծաներն են: Բարով վայելիս:

Եւ նա պինդ ծիծաղեց:

Ամբօխը հրհռաց Գիլգոյի սրախօսութեանը:

X.

Խոր քնով քնած է Ղ. գիւղը:

Միշերուայ պարզ, կապուտակ երկնակամարում հանգիստ լողում է լուսնեակը և ամեն ինչ բնութեան մէջ ներկում է մեղմ կաթնադոյն լուսով: Նրա լոյսը ընկնում է աների տափարակ տանիքների վերայ, խաղում է հովիտներում, ձորերում, լայնածաւալ, համարեա մերկ դաշտերում, խաղում է Ֆանտաստիկական ստուերներով ծառերի սաղարթներում, ընկնում է գիւղական խարխուլ եկեղեցու քարաշէն քմբէթի վերայ և ցողացնում է նրան պսպղուն փայլերով:

Երբեմն երբեմն միայն գիշերուայ լուսութեան մէջ լսվում է քնաթաթախ շների հատուկտիր հայտոյր և աքաղաղների երկարատև ձայնը: Միւղի մօտակայ լճակում անընդհատ կռնչում են գորտերը, զեփիւռը մեղմ հոսանքով անցնում է լճակի վերայով և շոյում է նրա հանգիստ, խաղաղ մակերևոյթը, կանաչ եղէգնի միջեց յանկարծ թռչում է զարթնած վայրենի բազը և իւր թևերի շվշվոցով ընդհատում է գիշերուայ խոր լուսութիւնը:

Այն նեղ, զառիվայր փողոցով, ուր ապրում էր Հասօն, գնում է մի մարդ, նա գիտմամբ անցնում է այնպիսի տեղերով, ուր չէ ընկել լուսնի լոյսը, նա գնում է պատերի մօտով և թագնվում է ստուերում, նա ստէպ ստէպ կանգ է առնում և յետ նայում, այդ մարդը—Հասօն է:

Նա մօտենում է մի տան պատշգամբի և երկար սուլում է: Նա բարձրանում է պատի վերայ, զգոյշ գիտում է իւր շուրջը և իջնում է բակը, նա կանգ է առնում պատի ստուերի մէջ և կրկին սուլում է, սասն փոքրիկ դուռը, որ նասուլում է գէպի բակը, կամաց բացվում է և այնտեղից դուրս է գալիս մի մարդ, փաթաթուած սպիտակ շորերով, դա Նուռիկն է:

— Հասօ, Հասօ դո՞ւ ես,—լսվում է նրա շոյոյր:

— Նուռիկի,— միայն պատասխանում է Հասուն:

— Ինչո՞ւ ուշացար. կարծեցի, թէ չես գալու:

— Ե՛ս, չգամ. ինչե՞ր ես ասում, Նուռիկ:

Եւ Հասուն մօտեցրեց իրեն Նուռիկին և սկսեց շոյել նրա արձակուած մազերը:

— Ուրեմն դու... դու մարդո՞ւ ես գնում:

— Չէ, Հասո. ինձ տալիս են... զօռօվ:

— Ասա՛, որ չես ուզում նրան:

— Ո՞ւմ ես ասում, էլ լսող չկայ:

Եւ Նուռիկը տխրագին կուսրեց իւր գլուխը. նրա խիտ մազերը իբրև օձիկներ փաթաթեցին նրա մերկ պարանոցը և մարմարոնեայ կուրծքը:

— Իսկ մայրդ,— հարցրեց Հասուն:

— Է՛հ...— հառաչեց Նուռիկը,— նա հօրս բերնից է խօսում. նա վախեցաւ, երբ ասացի, թէ քեզ եմ ուզում:

— Ուզում են բաժանել էլի մեզ:

Նուռիկը ոչինչ չպատասխանեց:

Բակում հաչեց շունը:

Նուռիկը վախեցած նայեց յետ:

Բակում ոչ ոք չկար:

Նոքա քաշուեցան պատի տակ:

— Քո մարդը Սաղօ՞ն է լինելու էլի,— կրկին հարցրեց Հասուն: Նուռիկը կրկին մնաց լուռ:

— Բայց կրգաս ինձ հետ

— Ինչպէ՞ս, փախչել...

— Հա՛, գիւղի ծայրում Կարօն սպասում է մեզ. կրգաս, ասա:— Նուռիկը կարծես մունջ լինէր: Սյդ բոպէին նա գտնւովում էր տարակուսանքի մէջ, երկու հակառակ ուժեր մրցում էին միմեանց հետ. մէկը ասում էր— գնա՛ քո ընտրածիդ, այնտեղ է դրախտ, երջանկութիւն, սէր և բաղդ. իսկ միւսը անդադար փսփսում էր— փախչել հայրական օջախից, մասխարայի լինել, մի մատ մե՞զը դառնալ խալիի բերնում...

Ինչպէս կընայե՞ն յետոյ խալիսի աչքին... Իսկ ծնողքդ.. նոքա կըմեռնեն վշտից և ամօթից.. դու, որին այդպէս սիրում են նոքա, մի՞թէ դու ապերախտ կըգտնուես նոցա առաջ: Չէ՛, չէ՛. իսկ եթէ սիրում են, ապա ինչո՞ւ, ինչո՞ւ տալիս են քեզ այդ Սաղօյին,—սկսում էր կրկին խօսել առաջին ձայնը և խեղճ Նուռիկը երկբայում էր:

— Ասա՛, Համաձայն ես:

— Ո՞ւր կ'երթանք:

— Ո՞ւր. Խազանըու զիւլի թըքերի մօտ, այնտեղ ես ինձ բարեկամներ ունեմ, մեզ կըպահեն:

Նուռիկը ընկաւ մտատանջութեան մէջ:

— Չէ, Հասօ, ես չեմ վախճիլ. իմ նամուսս թանգ է ինձ Համար:

— Չե՞ն ուզում էլի,—Հարցրեց Հեգնօրէն Հասօն:

Սյդ ձայնը սթափեցրեց Նուռիկին:

— Չէ, Հոգիս յօժար է, Հասօ, բայց.. ես չեմ կարող:

— Ե՛հ, լա՛ւ, լա՛ւ. մնաս բարև, Նուռիկ, մենք էլ չենք տեսնուիլ:

— Ինչո՞ւ, դու գնում ես:

— Հա՛, գնում եմ Հայրենիք:

Նուռիկը լռեց: Սյդ բոպէին նրա Հոգեկան պատերազմը վերջացաւ. այն զսպող, խելքի ու մտքի ձայնը լռել էր, խօսում էին միայն կիրքն ու զգացմունքը:

Հասօն կամաց կամաց Հեռանում էր նրանից: Նա չտուեց անգամ իւր վերջին հրաժարականը. նա իրեն խաբուած, անպատուած էր Համարում: Եւ ո՞վ էր խաբողը, նրա Նուռիկը, նրա սիրելի Նուռիկը:

— Հասօ, կաց, Հասօ,—աղերսագին կօչեց Նուռիկը:

— Ել ի՞նչ, ամեն բան վերջացաւ,—նկատեց նա դառնազին:

— Մնաս բարեաւ:

Եւ Նուռիկի ձեռները փաթաթուեցին Հասօյի վզով:

— Հասօ, ի՞մ անդին, ի՞մ աչքի լըյս Հասօ...

— Թող գնամ. Կարօն սպասում է:

— Գնան, չէ՛, չէ՛, Հասօ. ինձ էլ տար, գալիս եմ, —
չնչեց Նուռիկը ուժասպառ:

— Ի՞նչ. Նուռիկ, դու գալիս ես Հետս:

Նուռիկը խեղճ չպատասխանեց:

— Ձէ՛, չէ՛, գնա՛, Հասօ, գնա՛ մենակ, — միթմնթաց նա
մի բոպէից:

Եւ Հասօն դանդաղ Հեռացաւ:

Նուռիկը մնաց կանդնած սօսենու տակ. նա անգոր յին-
ուեցաւ ծառին և սկսեց խաչակնքել Հեռացող Հասօյին:
Սյր բոպէին մի միտք ծագեցաւ նրա ուղեղում.

Իսկ եթէ, եթէ նա գնում է իրան սպանելու: — Հասօ,
Հասօ, — բացականչեց նա:

Իսկ Հասօն Հեռու էր: Նա լսեց Նուռիկի ձայնը, բայց
յետ չնայեց:

— Հասօ, Հասօ...

Իսկ Հասօն արդէն ցանկի վերայ էր: Նա այնտեղեղ տեսաւ
վերջին անգամ իւր Նուռիկին, ծանր կերպով ախ քաշեց և
արտասուքի երկու կաթիլ ցորացին այդ հակայի աչքերում:
Հասօն լալիս էր. նա ողբում էր իւր երջանիկ անցեալը, իւր
ոսկի երազները: Նա իջաւ ցանկից փողոց: Այնտեղ Կարօն
սպասում էր, նստած մի ձիու վերայ և միւսի սանձը բռնած:
Հասօն լուռ հեծաւ ձին և ուժգին մտրակեց նրան, կար-
ծես, մեղաւորը անխօս կենդանին լինէր:

— Ի՞նչ է, չեկա՞ւ, — Հարցրեց Կահօն:

Հասօն ոչինչ չպատասխանեց: Նա կրկին մտրակեց ձիուն
և անհետացաւ գիշերուայ մթութեան մէջ:

Կարօն հետևեց նրան:

XI.

Ամբողջ Ղ. գիւղը գտնվում էր մի անսովոր շարժողութեան մէջ. ամեն տեղ նկատվում էր մի տեսակ իրարանցումն և ժիր կեանք: Եկեղեցու զանգակները ուրախ ուրախ հնչում էին և պատարադի հրաւիրում: Նրանց ձայնը գիւղին շատ հեռու էր տարածվում: Սմենքը գիւղում պատրաստվում էին մի ինչ որ հանդէսի. զսբաղջի Ասուատուրը վաղուց բացել էր իւր կրպակ-շիրախանան և բարձում էր սայլի վերայ մի տիկ օղի:

— Ենորհաւոր ընէի, բաղդաւոր լինեն, աղա,—նկատեց նա, ցածր գլուխ տալով:

Ասուատուրի առաջը կանգնածը ինքը ուէն էր:

Արբաժ Գիգօն նոյնպէս այդտեղ էր: Նա քծնելով հեռուում էր ուէսին:

— Աղա-Չան, բարի սհաթի:

Ռէսը շարտեց գետին մի արծաթ փող:

— Ծերօն, տար տուն օղին, ես կըզնամ եկեղեցի, շուտով կըսկսուի,—նկատեց ուէսը:

Եւ իրաւ, ժողովուրդը խումբ խումբ դիմում էր եկեղեցի. կանայք, նորահարսներ, տղայ և աղջիկ, — այդ ամենքը ցանկանում էին ներկայ լինել Նուռիկի պսակադրութեան հանդիսին:

Ահա հեռուից երևեց և հարսանեաց յուղարկաւորութիւնը: Առաջից գնում էին զուռնաչիները, նրանց հետևում էր մի խումբ երիտասարդներ, յետոյ հարսն ու փեսան, շրջապատուած ստուար ամբօխով և յուղարկաւորութեան վերջում հարիւրաւոր մեծ ու փոքրիկ երեխաներ, որոնց ձիչը և հրհռոցը ծածկում էր ամեն ինչ: Առաջաւորները անդադար հրացանն ու տորձանակ էին արձակում:

Հրապարակում, եկեղեցու մօտ, սպասում էր ծերունիների հետ նորապսակներին կնքահայրը:

Հանդէսը մօտեցաւ եկեղեցու բակին:

Փետայ-Սաղօն, ըստ երևոյթիւն, ուրախ էր. լայն ժպիտը փռուել էր նրա իւզալի երեսին և աւելի ևս այլանդակում էր այդ տգեղ երեսը:

Նուռիկի դէմքը անգոյն էր. նա ցած էր թողել իւր սև, գլորակ, արտասուքից կարմրած աչքերը և դանդաղ, համարեա մեքենայաբար շարժվում էր ամբօխի միջով: Երբեմն երբեմն միայն նա վախով, անհանգիստ նայում էր դէս ու դէն և կրկին տխուր կռացնում իւր գլուխը: Երևում էր, որ նրա շրջմովի հայեացքը որոնում էր մէկին ամբօխի մէջ:

Իսկ այդ մէկը, Հասօն, չկար: Նա չէր զիշերել անդամ Ղ. զիւղում: Նա և Կարօն քշել էին իրենց ձիերը մօտակայ թրքաբնակ զիւղը, մի ժամ մնացել էին այնտեղ և լուսաբացին մտել էին անտառ:

— Հանդէսը դանդաղ մտաւ եկեղեցի:

Տէր Պօղոսը փռուաւոր զգեստաւորուած սկսեց պսակը:

Ղ. զիւղում վաղուց գոյութիւն ունէր մի հինաւուրց սովորութիւն. նորապսակները եկեղեցուց ուղղակի զնում էին մօտակայ Խաչքարը, որ գտնվում էր անտառի սկզբում և այնտեղ փետան ժողովողի առաջ մատաղ էր անում:

Ինքը Խաչքարը, որ մի սպիտակ, սրբատաշ և արդէն մաշուած տառազրութիւններով խաչաձև քար էր, գտնվում էր քարանձաւի մէջ, որի վերին մասը, առաստաղը, ուղղակի բարձրանալով դէպի վեր, կաղմում էր մի խոր, մոլթ անդունդի պատը: Ոչ ոք չէր մտել այդ անդունդը:

Գիւղում պատմում էին, որ զիշերները այնտեղից դուրս են գալիս երեք ուրուական և շրջում անտառում: Սւանդութիւնը աւելացնում էր, որ այդ երեք մեռած թուրքեղբարց հողիներ են, որոնք սպանել են միմեանց մի կնոջ համար: Այդ անդունդի մօտ էր և Խաչքարը: Անտառը այստեղ աւելի խիտ էր և համարեա անանցանելի. հսկայա-

կան, դարևոր ծառերը մօտ մօտ կուտակուել էին և վայրի բաղկող պատել էր նրանց արմատն ու ճիւղերը: Պատկեց յետոյ հանդէսը սովորութեան համեմատ եկաւ Խաչ-քարի մօտ:

Սագօն հանեց իւր խանչալը, կուացաւ և սիսեց մորթել դառին: Սյր բոպէին քարանձաւի վերևում կրկեցաւ մի ձիաւոր, սև նժոյզը անհանգիստ խաղում էր նրա տակին: Ոչ ոք չնկատեց նրան: Զիաւորի երեսը կիսով չափ ծածկած էր սև եափնջու ծայրով: Նա մօտեցաւ քարանձաւի մուտքին: Նրա առաջ կատարվում էր զոհաբերութիւնը և նրա ոտները տակ կուացել էր փեսան: Սև ձին յանկարծ խրինջաց:

Մտքոխը նայեց զէպի վեր:

— Սագօ,— որոտաց անտառում ձիաւորի ձայնը,— Սագօ, դու լայեցիր ինձանից իմ ուղածը, իմ Նուռիկիս... Ա՛յ, ստացիր փոխարէնը:— Զիաւորը բարձրացրեց հրացանը, արձակեց, և Սագօն խուլ հառաչանքով զլորուեց դետնին: Մտքոխը մնաց շուարած, քարայած:

Երբ նա ուշքի եկաւ, ձիաւորը անհետացել էր արդէն. հեռուէց, անտառի խորքից լսվում էր նրա ձիու սմբակների տրոփիւնը: Նրան հեռուում էր մի ուրիշ ձիաւոր, երկուսն էլ հագնուած էին լեռնական քրդերի պէս:

— Փեսան... փեսան... մեռնում է,— ճչաց մէկը:

Մտքոխը շարժուեց:

— Զո՛ւր, ջո՛ւր...

— Ո՛վ էր, ասացէք, ո՞վ էր,— կատաղում էր ուէսը:

— Զիաւորներ... բռնեցէք, բռնեցէք...

— Նոքա մտան անտառը, այժմ հնար չկայ:

— Բայց ո՞վ էր ախր, ո՞վ,— գոռում էր տէրը Պօղոսը:

Մտքոխին մօտեցաւ կուզ Դանիէլը:

— Հը՛, տղէ՛րք, ի՞նչ կայ,— հարցրեց նա:

— Զտեսա՞ր, սպանեցին, փեսին սպանեցին:

— Հա՛, հա՛, հա՛, Սագօյին... էդպէս էլ արդար դատաստան,— հրհրաց Դանիէլը:

Նրա հարբած էր: Նրա աչքերը ցոլացին ներքին բաւակա-
նութեամբ: Նրան ազքատացնողը, նրա անհաշտ թշնամին
իրբև սառն դիակ փռուած է նրա ոտների տակ:

— Հեռացրէ՛ք դրան,—զոռաց ունիւր:

Դանիէլին հեռացրին:

— Բայց ո՞վ էր այդ ձիաւորը,—հազար ու մէկ անգամ
հարցնում էր ամբօխը:

Ոչ ոք չէր ճանաչել սպանողին:

— Քրդերը կամ թքերը կը յինեն,—նկատեց մէկը:

— Քրդերը... Հա՛. Հա՛. Հա՛. էդ խելօքին տեսէ՛ք,—
ծիծաղեց կուզ Դանիէլը, նորից մօտենալով ամբօխին,—Հա-
սօն է սպանողը, է՛յ, խելօք Բաւիթներ, Հասօն...

— Հասօն,—կրկնեց զարմացած ամբօխը:

— Հա՛, Հասօն, հովիւ Հասօն,—շարունակեց Դանիէլը:—
Բաս, նրա ձեռքին մատաղ, բաս ինչօւ խելից ուրիշի ու-
ղածը... այ շանսատակ,—և նա թքից մեռածի երեսին:

Նուռիկը այդ միջոցին ուշաթափուել էր զարհուրելի տե-
սարանից: Կամաց կամաց, ամբօխը ցրուեց: Սազօյի դիակը
բարձեցին ձիու վերայ և տարին դիւրջ:

— Մ՛յ անիծած է այս տեղը... Բաս մեր պապերը սո՛ւտ
էին ասում,—նկատեց թքերով երէք անգամ և շուտ շուտ
խաչակիքելով իւր երեսը մի պառաւ կին, եւ նա ոսկրուտ
ձեռով ցոյց տուեց անդնդի կողմը: Տէր Պօղոսը գեռ մնացել
էր կանգնած սպանութեան տեղում. նա մոռացել էր ան-
գամ հանել իւր շուրջառը:

Տատանուելով մօտեցաւ նրան կուզ Դանիէլը և ասաց.

— Է՛յ, աէրտէր-ջան, շուրջառդ հիմի շուռ տուր, մե-
ռել ունես, շտահդ պի՛նդ պահիր, էլ վաչխառու Սազօն չկայ:
Խեղճ Դանիէլը խմում է նրա հոգուն, որ շուտով գեհնին
արժանանայ ու սատանայի փայ դառնայ... Է՛յ, Սազօ, Սազօ,
հը, զրկեցիր ինձ, տես, քեզ էլ շանսատակ արին. օխայ, ա-
նունիդ մեռնեմ, Հասօ-ջան, էդքան էլ արդար դատաստան:

Եւ Դանիէլը սասանեց օղում իւր զողացող ձեռով: Վեր-
ջապէս ահէր Պօղոսն էլ թողեց քարանձաւը և հեռացաւ:

Սյնտեղ մնաց միայն կուզ Դանիէլը և սկսեց անկապ խօսել, հրհռաւ նա ուրախ էր. Սագօն մեռած էր, սպանուած էր: Քարանձաւի յատակի վերայ նշմարվում էին արեան բծեր, այդտեղ ընկած էր և Նուռիկի կրծքից մի սպիտակ ծաղիկ, արեան կաթիլը թրջել էր այդ ծաղիկի թերթիկները:

Մնցան տարիներ:

Հասօն էլ չերևաց Ղ. գիւղում: Սյդ օրից ոչ ոք չէր տեսել նրան: Նուռիկը մի տարուց զնաց մարդու. նա այժմն ընտանիքի մայր է, ունի զաւակներ և երջանիկ է: Երբեմն երբեմն նա յիշում է իւր անցեալը. նա զիտէ, որ Սագօյին սպանողներ շասօն և Կարօն էին, նա պատմում է այդ անցքը, իբրև հեքիաթ, իւր փոքրիկ երեխաներին:

Հասօյի մայրը կարողացաւ տանել իւր կսկիծին: Հասօն կորաւ և այն վերջին կապը, որ կապում էր խեղճ Ոսկեհատին կեանքի հետ, կտրուեց:

Ել ի՞նչի համար էր ապրում պառաւ Ոսկեհատը: Նա մեռաւ.....

XII.

Ղզլ—քիսի դաշտավայրի անկիւնում, որ կազմում է Թրքաստանի սահմանակից նահանգներից մէկը, գտնվում էին մի հին ամրոցի աւերակներ: Սյդ ամրոցը շինած է սարի գլխին և շրջապատուած խիտ, դարևոր անտառով, որի միջեց երևում է միայն մղկիթի երկար, կարծես, օդեղէն աշտարակը: Սյդ աւերակները իրենց ամայի տեսքով սարսափ էին ձգում հազրուադիւտ ճանապարհորդի վերայ: Ժողովուրդը մոռթ, սև գոյներով էր ներկում այդ ամայի ամրոցի անցեալի տխուր պատմութիւնը. զարհուրելի ոճրագործութիւնների տեսարան էր եղած այդ ամրոցը. արիւնը սրսկել էր նրա սրբա-

տաշ քարէ պատերը և յատակը: Այժմն այդ ամրոցը թողած է. ոչ ոք չէ բնակվում նրանում. ժամանակով զեղեցիկ պատերը քանդուել են, փուլ են եկել, և կամարակապ անցքերի սիւները փշրուել են. իսկ վայրի կանաչը և սաստակոտ մացառները սռատ բուսել են ամրոցի խարխուլ աւերակներում, և բաղեղը կաշելով մամռապատ պատերին բարձրանում է գէպի վեր:

Ամրոցի ամայի և լայնարձակ սրահներում և անցքերում տիրում է մի աղօտ լոյս, որ հեռաւոր անկիւններում փոխվում է լիակատար մթութեան: Գերեզմանական լուծեան մէջ կրբեմն-կրբեմն լավում է բուռի անասորժ, երկարատե ձայնը, և նրա աչքերը, իբրև փոսփորային կրակներ, ցոլում են մշտական մթութեան մէջ:

Տխուր ցած են նայում ամրոցի աւերակները իրենց գոռոզ բարձրութիւնից: Լուսինը բարձանալով երկնականաբում շեշտակի սփռում է իւր ճառագայթները ամրոցի զլսաւոր մոտքի մէջ և շարժուն, Ֆանտաստիկական ստուերներով խաղում է խոնաւ, ժամանակից կանաչած, բորբոսնած պատերի վերայ: Կէս գիշեր է:

Իաշտային լուծեան մէջ յայնի լավում է ձիան սմբակների տրոփիւնը. ձին վազում է գէպի ամրոցը: Ահա բլրի ետեից երևեց մի ձիաւոր. նա շտապով ուղղեցրուեցաւ գէպի ամրոցի զլիւսւոր մոտքը, իջաւ ձիուց և, կապելով նորան մօտակայ ծառից, հաստատ քայլերով ներս մտաւ: Երևում էր, որ ամայի ամրոցը լաւ ծանօթ էր նրան. նա վառեց պատի արանքում դրած ճրագը. իսկ վախեցած բուն ծանր շարժելով իւր թևերը թռչում է կիսաքանդ սիւնից և հեռանում մութ անկիւնը:

— Ոչինչ, այսօր լաւ կրճաշենք, որսը վատ չէր, — նկատեց ինքն իրեն նորեկը և, հանելով իւր երկար սև կափնջին, փռեց գետնին, մի կողմ դրեց հրացանը և սկսեց հաւաքել ծառի չորացած ճիւղերը: Երիտասարդի հագուստը քրդական էր:

— Այսօր նա ուրախ կը լինի, ինքը դեռ չզիտէ, որ որսը մեր ձեռքումն է, — նկատեց նա մի քանի րոպէից և վառեց խարոյկը:

Հրեղէն բոցը սկսեց լափել ծառի չոր ծղնօտները, նա լեղում է սևապաշտ ոստերը, ճրթճոթացնում է և թողնելով ամեն կողմ ցայտող կայծեր՝ երկար, սրածայր լեզուներով բարձանում է դէպի վեր: Խարոյկի լոյսը երերուն ստուերներով խաղում է ամայի ամրոցի պատերի վերայ և ներկում է նրանց մի կարմիր, բոցավառ գոյնով:

— Ինչու են ուշանում մերոնք, — հարցրեց ինքն իրեն երիտասարդը և մօտեցաւ ամրոցի մուտքին:

— Նա էլ դեռ չկայ, — աւելացրեց նա:

Յանկարծ գիշերուայ լուսթեան մէջ լսուեցաւ բուռի անասորժ ձայնը: Երիտասարդը մտիկ տուեց և մի րոպէից պատասխանեց սուլելով: Հեռուում նշմարուեցան մի քանի ստուերներ և ամրոցի մուտքին մօտեցան մօտ քսան ձիաւոր: Նոքա լուռ ու մոռնջ իջան ձիերից, մտան ամրոցի ներքին յարկը: Նոյա հետ կային երկու ձի և ոտները կապկպած մարդիկ. դոքա քրդեր էին:

— Ռւր է նա, — հարցրեց խմբի միջից մէկը:

— Ղեռ չէ եկել. երեկուանից չեմ տեսել նրան, — պատասխանեց նա, որ եկել էր ամենից առաջ:

Խօսում էին հայերէն:

Նորեկներից ամեն մէկը հագնուած էր իբրև լեռնական քուրդ և ոտից մինչ և գլուխ զննուած էր:

— Հսկեցէք սրանց, թող ինքը գայ և յետոյ արդէն...

Խօսողը չմերձացրեց իւր խօսքը և մօտենալով խարոյկին սկսեց տաքացնել իւր ձեռները: Նա կը լինէր մօտ 28 կամ 30 տարեկան, բարձրահասակ, սևամորթ և ուժեղ: Երևում էր, որ նա իւր կեանքը անց է կացրել բնութեան ծոցում: Նրա արևառ երեսը, մեծ, սև, կոշտ ձեռները ցոյց էին տալիս, որ նա ծանօթ է Ֆիլիքրական դժուար աշխատանքին, — այդ երկ-

տասարդը մեզ ծանօթ Կարօն էր: Այն օրից, երբ Հասօն սպանեց Սագոյին Խաչքարի մօտ և անհետացաւ Ղ. դիւղեց, այն օրից Կարօն միշտ հետևել էր նրան:

— Լաւ հսկեցէ՛ք զբանց, — կրկնեց իւր պատուէրը Կարօն և ինքը փռուելով գետնին, սկսեց զիտել խարոյկի բոցի վաղ-վղող սառուերները:

Խումբը լուռ շարուեցաւ օթեանի անկիւններում և փրփուում էին: Մի քանի ըրպէից ամրոցի զլխաւոր մոռաքում երևեց մի մարդ, հրացանը ուսին, նա դանդաղ մտաւ օթեանը: Խումբը վեր կացաւ տեղից և զլուխ տուեց նրան. իսկ նորեկը, կարծես, չնկատեց այդ: Նա զլխակոր, մի ծանր մտատանջութեան մէջ անցաւ խմբի առաջով և անհետացաւ ամրոցի հեռաւոր մութ անցքերից մէկում:

— Նա տխուր է, — փսփսաց մէկը:

— Աչինչ, կ'ուրախացնենք, — պատասխանեց Կարօն և վեր կենալով հետևեց նորեկին:

Մի ըրպէից նոքա վերադարձան մեծ սրահը:

— Ի՞նչ ես ասում, Կարօ, ե՞րբ և ո՞ւր, — հարցրեց նորեկը վրդովուած և միևնոյն ժամանակ ներքին բերկրութիւնից զողացող ձայնով:

— Այսօր, Ղազան — լուր մեծ ճանապահուում կոխը երկար տուեց, մեզանից երկուսը ընկան:

— Ո՞վ:

— Ասլանը և Քոթոթը:

— Իսկ ո՞ւր է նա:

— Ահա, — և Կարօն ցոյց տուեց կաշկանդուածների վերայ: Դրանցից մէկին, որ մօտ 60 տարեկան մարդ էր, մօտեցրին նորեկին: Վերջնի աչքերում ցոլաց կատաղի կիրքը:

— Վերջապէս, — մրթմրթաց նա, — թողէ՛ք ինձ մենակ, — դարձաւ նա խմբին, — Կարօ, դու մնա՛:

Խումբը ցրուեցաւ: Ամրոցում տիրեց խորին լռութիւն:

— Շնորհակալ եմ Քեզնից, Աստուած իմ, շնորհակալ

եմ,—և նորեկը բարձրացրեց իւր սև, դեղեցիկ աչքերը դէպի երկինք և մնաց մի րոպէ անշարժ: Արտասուքի շիթը փայլեց նրա աչքերում:

— Բաւական է, Հասօ, բաւական. քուրդը տեսնում է:

— Իրաւ է,—նկատեց Հասօն և տուեց իւր դէմքին մի սառն արտայայտութիւն:

Նորեկը Հասօն էր, մեր վաղեմի ծանօթ Հասօն: Աւրջին տարիները նա անց էր կացրել Քրքաստանի լեռնապատ դաշտերում և անտառներում: Սազոյի սպանութիւնից յետոյ նա դուրս էր եկել Հասարակութիւնից և դարձել էր աւազակապետ: Նրա անունը տարածուել էր շրջակայքում քրդերին և թրքերին նա սարսափ էր ազդում: Հասան բէյը (այդպէս էին կանչում նրան այստեղ) հարուստների և երջանիկների ամենաանհաշտ թշնամին էր, իսկ թշուառների և անբազդների ամենաջերմ պաշտպանը:

— Լսիր, Կարօ,—դարձաւ նրան Հասօն,—ինձանից խլեցին իմ սէրը, իմ հօրը, իմ քրոջս: Իսկ մայրս, ողջ է նա... Ո՞վ դիտէ, զուցէ դռնէ դուռ ման գալով, չոր հաց է մուրում: Եւ այս մարդը փշոեց իմ ընտանիքի կեանքը, նրա շնորհիւ փակուած է անհաւատների հարեմում իմ Նոյեմ-զար քոյրս: Նա դեռ չգիտէ, թէ ով եմ ես. ինձ ամենքը կանչում են Հասան-բէյ, իսկ իմ ոէս Մրաօյի որդի լինելս յայտնի է միայն քեզ: Եւ ահա վարկեց իմ ժամը. Աստուած լսեց ինձ, Կարօ: Երբ խումբս յաջող ասպատակութիւնից յետոյ անհող ուրախանում էր, երբ երգն ու զինին թագաւորում էին նրանց շրջանում, ես հեռանում էի, ես առանձնանում էի. ինձ զզուելի էր թւում այդ, ես աղօթում էի, ես խնդրում էի, որ Աստուած լսէ ինձ և Նա լսեց: Ես ապրում էի այս վերջին տարիները միայն մի նպատակի համար, մի միտք միայն պաշարել էր իմ ուղեղը, իմ ամբողջ գոյութիւնը: Ծերունի մօրս խօսքերը խորը դրոշմուել էին սրտումս. ես վրէժ էի վառագում, ես արիւն էի ուղում

արեան փոխարէն և ես Հասայ նպատակիս: Ես պարտական եմ քեզ այդ, Կարօ. այսօր, միայն այսօր ես երջանիկ եմ: Այդ մարդը ձեռումս է, նա ինձ է պատկանում, միայն ինձ:

Եւ Հասօյի աչքերը ցոլացին մի վատ, վայրի կրակով:
— Քակի՛ր զրան:

Մի բոպէից ծերունի քուրդը կանգնած էր աւազակապետի առաջ:

— Միրզա-բէյ, ճանաչո՞ւմ ես ինձ:

— Ես... ոչ... լսած եմ, թէ դու Հասան բէյն ես:

— Հա՛, այստեղ ինձ այգպէս են կանչում. իսկ իմ անունս Հասօ է:

— Ի՞նչ հայ ես, ուրեմն, — մի արհամարհական ձայնով նկատեց ծերունի քուրդը և հեզնական ժպիտը խաղաց նրա խորշումած երեսին և շրթունքների նեղ ծալքերում:

— Հա՛, ես հայ եմ, քուրդ, և քո բարեկամի որդին:

— Հայերը իմ բարեկամն չեն, — նկատեց ծերունին:

— Ձէ՛, մէկը կար. յիշո՞ւմ ես Մրտօյին:

Ծերունին դողաց ամբողջ մարմնով:

— Մրտօյի, Հ— շէն զիւղի ուսի՞ն:

— Հա, որին դու սպանեցիր, քուրդ, անիծուած...

Վերջինը լուռ էր, ոչ մի խօսք, ոչ մի շարժուածք. նա հասկացաւ, որ իւր օրհասական ժամը հասել է, և նա սառնասիրտ գնում էր դէպի մահ:

— Ճանաչեցիր այժմ, Միրզա-բէյ, — ծիծաղելով ասաց Հասօն:

Ծերունի քուրդը կրկին լուռ մնաց:

— Խօսիր, խօսիր, անիծուած, — աղաղակեց Հասօն: — Խօսիր, մտաբերո՞ւմ ես Մրտօյին, Նոյեմզարի՞ն. ո՞ւր է նա, ասա՛, ասա՛, անհաւատ շո՛ւն:

— Փառք Ալլահին, — միայն արաստանեց քուրդը:

Եւ մի քանի հարուած իջան ծերունու ալեղարդ գլխին. նրա «չալման» քաղուեց և արծաթափայլ մազերը բնկան ուսերին:

— Աստուած իմ, ահա նա ձեռումն է, և իմ ներքին կրակս կրկին լափում է ինձ, կրկին ես չունեմ բաւականութիւն. անխճուած կեանք: Նուռի՛կ, Նուռի՛կ, այս բոլորը դու արիր, Նուռի՛կ:— Եւ Հասօն ծածկեց ձեռներով իւր երեսը և հեռացաւ ամրոցի մութ անկիւնը:

Կրկին ամրոցում տիրեց խորին լռութիւն: Կարօն խաչած իւր ձեռները յենուել էր պատին և դիտում Միրզաբէյին: Խարոյկի աղօտ լոյսը սփռւում էր միայն իւր շուրջը, և կիսամութ ստուերը սքողել էր ամրոցի ներքնաստուեր: Կարօն բերեց փայտ և նորից վառեց մարող խարոյկը:

— Բայց նա պիտի մեռնի,— նկատեց ճնշուած ձայնով Հասօն և մօտեցաւ Կարոյին:— Կարօ, — շարունակեց նա վճռողաբար.— այսօր լուսաբացին ես կըթողնեմ ձեզ և կըհեռանամ: Թէ ո՛ւր կըգնամ, ես չեմ կարող ասել... Այս օրից ես ձեր աւաղակապետը չեմ. աւաղակ էի ես առաջ. ո՞վ դիտէ... Ոսկին չէր ինձ հրապուրողը, ես հեռանում եմ ձեզանից համարեա աղքատ... Դուք կարող էք շարունակել ձեր ասպատակութիւնները և կամ հաշտուելով հասարակութեան հետ անցնել Հայաստան—այդ ձեր գործն է....

— Բայց ո՞ւր ես գնում, Հասօ:

— Ո՛ւր,— չգիտեմ. մի՛ հարցնիր ինձ, իմ կեանքս ատելի է ինձ. ես, կարծես, անխճուած լինիմ, ես ոչ մի տեղ հանգիստ չունիմ...

— Հասօ, ինչո՞ւր ես խօսում:

— Իմ խօսքս խօսք է, Կարօ. վաղը ես կըբաժանուեմ ձեզանից, դու կըլինես իմբի առաջնորդը: Պաշտպանի՛ր թոյլին, հարստահարուածին, կոտորի՛ր, անխնայ կոտորի՛ր հարստահարողին... Հայերին ձեռք չտաք...

— Աէ, Հասօ, ես կըգնամ քեզ հետ,— աղաչեց Կարօն:

— Պէտք չէ. վաղը դու ինձ արդէն չես տեսնիլ. իսկ այժմ թող ինձ մենակ և գնա՛, յայտնի՛ր իմբին իմ հրամանս:

Կարօն մնացել էր անշարժ:

— Գնա՛, ես հրամայում եմ քեզ, — գոռաց Հասօն, — ես գեռ ձեր իշխանն եմ... գնա՛րս...

Եւ Կարօն զլուխ տուեց Հասօյին և դուրս եկաւ ամբողջից: Հասօն մօտեցաւ Միրզա-բէյին:

— Դու այս բոպէիս մեռնելու ես, եթէ ուզում ես ապրելը ասա՛, ասա՛, ո՛ւր է քոյրս, ո՞ղջ է նա:

— Թո՛ղ լինի Ալլահի կամքը, մեծ է նրա զօրութիւնը, գիտուր:

— Թող լինի ուրեմն, — որոտաց Հասօյի ձայնը և նրա ատրճանակի գնտակը կպաւ Միրզա-բէյի գանգին:

Սրբիւնը սրսկուեց Հասօյի շորերի վերայ: Խուլ, խուլորտ հեծկտանքով փոռուեց գետնին անշնչացած Միրզա-բէյը:

Հասօն գլխակոր, ատրճանակը ձեռին, կանգնած էր իւր տեղում և գիտում մեռնողի երեսը: Դրսում սկսում էր լուսանալ:

Խարոյկը մարել էր և ամբողջում տիրում էր խաւարը: Երկար նայեց Հասօն Միրզա-բէյի սրուած, սառած երեսին, ուր մահը գրել էր արգէն իւր կնիքը և դանդաղ, երերելով, հեռացաւ դիակից: Ոչ ոք չտեսաւ, թէ ինչպէս նա դուրս եկաւ ամբողջից և մտաւ մօտակայ անտառը:

Այդ օրից Հասօն կորաւ...

Գ. ՉՈՒԲԱՐ.

1888.



ԵՐԵՔ ԱՐՄԱԻՆՆԻ

(Լեոնիժովից) .

Աւազուտ դաշտում Արաբիային
 Սրմաւի երկք գոռոզ ծառ կային,
 Ու նոցա տակի գետնից աղբերակ
 Կարկաչեցնում էր ջուրն իր սառնորակ .
 Ստուերախիտ սաղարթն հովանի էր վրան,
 Տօթից, աւազից էր պատրսպարան:

Շատ շատ տարիներ անյայտ գլորուեցան,
 Խոնջացած պանդուխտք բնաւ չի մօտեցան,
 Զապաւինեցան նոցա խորշակէն,
 Բերան թաց չարին պաղ աղբերակէն .
 Ցամքեցնում էին շողք արեգակին
 Ծառերի սաղարթն և ջուրն այն ակին:

Ըսկրսան ծառերն Տէրէն գանգատել—
 Մի՛թէ խամրելու աշխարհք ենք կկել .
 Բըսանք, ծաղկեցանք մենք աննրպատակ,
 Տօթի, փոթորկի յար միշտ նըպատակ,
 Ոչ մի պանդխտի չեղանք ապաստան...
 Անարգմնր է, Տէ՛ր, քու սուրբ դատաստան:

Հազիւ լըուեցան. ահա՛ հեռուից
Փռչին դէպի վեր բարձրացաւ գետնից,
Զիւղիւ լըսուեցան զանգակի ձայներ,
Երևան եկան ճամկաւոր հակեր.
Ինչպէս ծովի մէջ տատանած նաւակ
Շարք-շարք գալիս էր ուղտի երամակ:

Սապատողներէն դէպի վայր կախուած
Եերտաւոր և խայտ վրանների քրզանց,
Ու երբ որ թուխ ձեռք էր այն բարձրացնում,
Ցորուն աչքեր էր տակից երևում.
Ու թամբաղեղին կրճքով դէմ ընկած,
Սրաքը զըրգում էր ձին մոլեգնած:

Զին տիգ կանգնում էր յեանտաքի վըրան,
Ոստնում նետահար յովաղի նրման.
Ճերմակ թիկնոցի ծալքերը ուսին,
Երբեղ ծածանում էին փարիսին,
Ու ոտնաձայն աղաղակներով
Զէնքը խաղցնում էր՝ ուժգին չափ-տալով:

Սյուպէս աղմըկով հասաւ կարաւանն.
Ծառերի ներքև հարուեցաւ վըրան.
Դատարկ անօթներ լըցուեցան ջրբով,
Եւ արմաւենիք թաւ զազաթներով
Նորեկ հիւրին բարև ևն տալիս,
Աղբիւրն էլ նոցա իր ջուրն է տալիս:

Հազիւ թէ մութը ինջել էր գետնին,
Կացինը դիպաւ նոցա արմատին,
Եկորքը ծառերը վայր կործանեցին.
Սըտահակ տըղերք կաշին քերթեցին.
Փայտը մանրեցաւ սուր սուր դանակով,
Խարոյկ դիզեցաւ, այրեցաւ կրակով:

Երբոր արևմուտք մէզը մեկնեցաւ,
 Քարւանը խոկոյն տեղէն շարժեցաւ,
 Նորա հտեկից չոր գեանի վրջան
 Գորշ թեթև մոխիր եկաւ երևան,
 Մնացորդն արևի շողք ցամքեցուցին,
 Հովերն էլ սաղին-անդին ցրբուեցին:

Ու խոպանացաւ վայրն այն զըւարթ.
 Էլ չին շրջնում աղբիւր ու սաղարթ,
 Խեղճ ակին ոչ ոք չի պատրասարում,
 Աւազն էլ նորան է միշտ տոջրում,
 Գիշատիչ անդղը այնտեղ է գարն
 Ծըւատել-լափել որսն իր նողկալի:

ԳՄԱՌ-ՔԱԹԻՊԱ.



I.

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ.

Յիշում եմ սիրուն զիշեր էր գարնան.
 Լուսին և աստղեր մեզ ժպտում էին....
 Մի զմայլեցուցի՛չ, նազելի՛ զգայման
 Անձնատուր եղած՝ լուռ էր իմ հոգին:
 Նոր սիրտըս զարթած՝ ես սպասում էի
 Սիրոյ առաջին քնքուշ բերկրութեան,
 Եւ յուզվում էի և գողում էի
 Ամէն հրապոյրքից վառ զեղեցիութեան:

Եւ ես յիշում եմ—ձեռքս սեղմեցիր
 Այն սիրուն զիշերն առաջին անգամ.
 «Ես քոնն եմ, զողորիկ ձայնով ասացիր,—
 Ուխտում եմ, որ կեանքս ես պարզե քեզ տամ»:
 Քո մատաղ ձայնիկն իմ հոգին այրեց.
 Ես ճանաչեցի այն օրն ինձ աստուած.
 Դրբախափ նըւազ ականջիս հնչեց—
 Սիրոյ հրեշտակն է,—սիրտըս ինձ ասաց:

Յիշում եմ—տխուր զիշեր էր աշնան.
 Մենք նստած էինք մենակ սենեկում.
 Եւ դու ինձ համար շունչ էիր գարնան,
 Թէև զուրսը ցուրտ՝ անձրև էր մաղում:
 Այրուող շրթունքիս համբոյրների տալով
 Նշնչում էիր դու ինձ ողելից.
 «Մենք երջանիկ ենք, հոգեակի մեր սիրով
 Աւելի քան թէ անմահներն երկնից»...

Ժամանին անցաւ, դու երջանկացար.
 Մենակ մընացի ես իմ վշտի հետ....
 Տանջուող ընկերիդ դու շուտ մոռացար,
 Եւ իմ երազներ չքացան անհետ:
 Քեզանից սիրուն տեսայ շատերին,
 Բայց ուրիշ մէկին սիրել չկարացի.
 Սիրտըս դատարկ է, անցած օրերին
 Ես «մընաս բարև» արդէն ասացի....

1888. 1 յունուարի

Մոսկուա:

II.

Ս Օ Ն Է Տ.

Արի՛, իմ հոգեակ, իմ զերկը արի՛,
 Կախարդի՛ր դու ինձ բոցոտ աչերով.
 Անուշ պատրանքով անցնի օր, տարի—
 Եւ չը յազենամ քո համբոյրներով:

Գըլուխըս կուրծքիդ՝ վառ աչքիդ նայեմ,
 Թող ինձ նախանձին անմահներն երկնից.
 Մի ժպտիդ համար ես կ'հրաժարուեմ
 Առանց զզջարու բոլոր աշխարհից.

Ո՛չ փառքը նորա, ո՛չ անարգ ոսկին
 Գրկախառնութեանդ և ոչ մի վայրկեան
 Երբէք չին արժիլ, հոգեակ իմ անգին:

Արի՛, կախարդի՛ր թէև վաղանցիկ,
 Բայց քաղցր երազով բուռն վախելչութեան,
 Ո՛հ, դու իմ մանուկ դշնոյ զեղեցիկ:

1888. 9 մայիսի

Մոսկուա.

III.

* * *

Ինչպէս քաղցր երազ օրերըդ կ'անցնեն,
Խանդըդ կրմարի, ինչպէս զիշերուան
Մի ձայն մեռանող, հոգուդ կրպատեն
Ամպերը մռայլ զուր երկբայութեան:

Ինչպէս մոլորուած մենակ ուղևոր
Յանկարծ կրկանդնես և հարցում կրտաս.
«Ա՛խ, դու ո՞ւր թռար, իմ օր փառաւոր,
Բնորդ, ի՞նչ ճանապարհ ինձ պիտի ցոյց տաս...»

Եւ նոր կրտեսնես թէ ի՛նչպէս անցան
Անպտուղ, անմիտ քո կեանքի օրեր,
Աննկատելի ի՛նչպէս ծուխ դարձան
Վառ սրտիդ, մաքիդ բոլոր ցնորքներ:

Եւ ուշ կրտեսնես թէ քո առաջին
Ո՛րչափ մեծ գործ կար արութեան դաշտում,
Եւ ինչպէս զետին զըլորուած կազնին
Կրմընաս մենակ, յուսահատ, տրտում...»

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ:

1887. 26 սեպտեմբ.

Մոսկուա.



Պ Ո Յ Ե Տ.

Խօսի՛ր, առաքեալ վեհ ճշմարտութեան,
Քանի չին փակուել քո սուրբ շրթունքներ.
Անարգի՛ր «եսը» գոռող մարդկութեան,
Հարուածի՛ր անինայ նրա սև գործքեր...

Թո՛ղ նա կատաղի, որպէս փոթորիկ,
Կարկուտ ու հեղեղ թափի քո վերան,
Դու այդ համարի՛ր մի անդոր արեք,
Եւ ազատ քայլէ քո փշոտ ճամբան...

Մարանչի՛ր անվախ, որպէս քաջ ղինուոր,
Սուրբ ազատութեան կրակ ու բոց սրտում.
Եւ մի՛ վհատիր, թէ դու էլ մի օր
Պիտ ընկնես կեանքի գոռ պատերազմում:

Այո՛, դու կ'ընկնես— և քո անշունչ զին
Մայր երկրի կրծքում փոշի կըզառնայ,
Բայց քո վեհ քարոզ, քո ազատ հոգին
Յաւիտեան կ'ապրին աշխարհիս վերայ:

Եւ անվերջ դարեր քո հրգօր բարբառ
Կըհնչուի ազնւո, ահե՛ղ թնդիւնով.
Նա կըխորտակէ մահաշունչ խաւար,
Մեղ անչէ՛ջ Լուսոյ տաճար կանգնելով:

Մոսկուա:

Ա.Դ. ԾԱՏՈՒՐԵԱՆ:



Հ Ա Յ Ի Ժ Ո Ւ Տ .

Մի հեռանար դու այն երկրէն, հայի ճուտ,
 Ուր որ նախնիքներէդ յիշատակներ կան,
 Թէ մերկ էլ լինիս, չես զգալ դու ցուրտ—
 Դեռ մոխրի մէջ թաղուած հին-հին կրակներ կան:

Բնակուած երկիրըդ սուրբ է, ո՛վ եղբայր,
 Նախնեացդ արիւնոյն է ներկուած ամեն քար.
 Զոհուած քո ազգի սուրբ անուան համար
 Սյստեղ բերաւոր նահատակներ կան:

Զիւնն, ազգիդ հաւատարիմ ծառայիր,
 Նորա սիրով սիրադ, հոգիդ ջերմ պահիր.
 Քո հայրենիքին վառ յուսով նայիր—
 Իւր մէջը հոգեբուղի աւերակներ կան.....

ԱՇԸՂ ԶԻՒԱՆԻ:



Ե Ր Ե Ք Զ Ր Ո Յ Յ

(Գիւտի դը-Մոպասանից)

I.

Վ Ա Խ Կ Ո Տ

I.

Հասարակութիւնը նրան հռչակել էր «գեղեցիկ Սինօլ»։ Բայց նրա խիստական ազգանունը գերակոմս Գոնտարան Ժօզէֆ դէ-Սինօլ էր։

Իւր հարուստ ծնողների մահից յետոյ, ժառանգելով նրանց անբաւ հարստութիւնը՝ նա միանգամից ընդհանուրի ուշադրութիւնն իւր վերայ դարձրեց։ Նա վայելչակազմ էր, շնորհագիւղ և ճարտարախօս։ Աւելացրէք սրա վերայ և բնական գեղեցիկութիւնը, խրոխտ ու վեհանձն տուաբը, այրական ոլորուն ընչացքները, քաղցր ժպիտը—և դուք կը հասկանաք, թէ ի՞նչու գերակոմս Սինօլ մեծ անուն և համբաւ էր վայելում կանանց սեռի մէջ։ Կանանց նա դիւր էր գալիս մանաւանդ իւր աչքերի, իւր գեղեցիկ աչքերի քնքոյշ և անհամեմատ բարի՝ նայուածքով։

Նա ազատ կրումուտ ունէր բարձր սալօններում, ուր միշտ սիրալիբ ընդունելութիւն էր գտնում և առաջնակարգ պարտողներից մէկն էր համարվում։ Պարահանդէսներում կամ երեկոյթներում վալս պարելու ցանկութիւն ունեցող տիկիներն ու օրիորդները միշտ այս ու այն կողմն էին ընկնում, որ գերակոմսին գտնեն և նրա հետ պարեն։ Եւ հէնց կանանց աշխարհում ունեցած այդ յաջողութիւնն էր պատճառը, որ նրա ծանօթներից շատերը հակակրանքով էին նայում

նրա վերայ: Բայց զերականն այնպիսի մի բարձր դիրք էր բռնել զէպի իւր ծանօթները, այնպիսի հեզնութեամբ էր վերաբերվում զէպի նրանց հակահրանքը, որ միայն յատուկ էր անվհեր և եռանդուն մարդուն:

Գերականի մասին պատմում էին, որ նա իւր կեանքում մի քանի այնպիսի սիրային արկածներ էր ունեցել, որոնք փառք ու պատիւ կարող էին բերել ամեն մի երիտասարդի: Նա շատ հանգարտ ու խաղաղ կեանք էր վարում, ասանց իւր անձն ևնթարկելու բարոյական զանազան ցնցումների և ալեկոծումների... Գերականի բնաւորութեան նկարագրիւր լրացնելու համար, անհրաժեշտ է աւելացնել, որ նա շատ գեղեցիկ սուր գործ ածել զիտէր, իսկ ատրճանակ գործ ածելում— հօ մրցող չունէր:

— Եթէ ինձ վիճակուի մենամարտել, — շատ անգամ ասում էր նա, — ես կ'ընտրեմ ատրճանակ, որովհետև լիովին համոզուած եմ, որ այդ զէնքով անպատճառ կրղլորեմ հակառակորդիս:

Մի զիշեր նա իւր ծանօթ կրկու ջահիլ տիկիներին (նրանց հետ էին և՛ ամուսինները) թատրոնից զէպի տուն ուղեկցելիս, կամեցաւ մի բանով մեծարել նրանց և կէս ճանապարհին խնդրեց ներս մտնել քաղցրավաճառի խանութը պաղպաղակ ուտելու:

Թէ՛ տիկիները և թէ՛ նրանց ամուսինները սիրով ընդունեցին նրա խնդրեքը: Երբ ամենքը շարուած սեղանի շուրջը քաղցր զրոյց էին անում և միևնոյն ժամանակ պաղպաղակով հովացնում սրտերը, զերականը նկատեց յանկարծ, որ հարեան սեղանի մօտից մի պարոն աչքը մեխած՝ նայում է տիկիներից մէկի վերայ և ոչ մի բոպէ աչք չի հեռացնում նրանից: Տիկինն, ըստ երևոյթին, շատ անել վիճակի մէջ էր զգում իրեն, շփոթվում էր և աչքերը կախ զցում: Վերջապէս նա դարձաւ ամուսնուն:

— Ի՛նչ զարմանալի մարդ է այն սեղանի մօտ նստողը:

Որ ասես մի բոպէ աչք չի պոկում ինձանից: Ես նրան ամենևին չեմ ճանաչում, գուցէ դու ծանօթ ես նրա հետ:

Ամուսինը, որ մինչև այդ ժամանակ ոչինչ չէր նկատում, գլուխը բարձրացրեց, նայեց սեղանի մօտ նստողին և հանդարտութեամբ պատասխանեց.

— Ես նրան առաջին անգամն եմ տեսնում:

Երիտասարդ կինը կէս-բարկացած, կէս-հանաբով շարունակեց.

— Իս շատ անհամ բան է: Նա համ իմ ախորժակն է փչացնում, համ իմ պողպատակը...

Ամուսինը միայն ուսերը վեր քաշեց:

— Էհ, բան չունես: Իսկի ուշադրութիւն էլ մի դարձնիր: Եթէ պատահած ամեն մի լքի վերայ ուշադրութիւն դարձես, ո՛ր կ'իրթայ: Էլ մի բոպէ հանգիստ չես ունենալ:

Բայց դերակոմսը գործին ուրիշ աչքով նայեց: Նա չէր կարող թոյլ տալ, որ մի որ և է անծանօթ անբաւականութիւն պատճառ էր իւր հիւրասիրած տիկիններին, վրդովէր նրանց խաղաղութիւնը, փչացնէր նրանց ախորժակը վայելելու այն, ինչով որ ինքը մեծարել էր նրանց: Այդ անպատուութիւնն ուղղակի նրան էր վերաբերում, որովհետև նա էր իւր բարեկամներին հրաւիրել այստեղ, ուր նրանք եկել էին, ի հարկէ, յարգելով դերակոմսի խնդիրքը, նրա անձնաւորութիւնը: Լէնց այդ պատճառով էլ նրա սեպուհ պարտքն էր հաշիւ տեսնել այդ անպատկառ և յանդուգն պարոնի հետ:

Նա յանկարծ տեղից վեր թռաւ, մօտեցաւ լպիրշ անծանօթին և կծու կերպով ասաց.

— Պարոն, ես չեմ կարող տանել ձեր այդ յամառ հայեացքը, որով դուք նայում էք իմ ծանօթ տիկիններին: Ինչ այդ դիւր չի գալիս: Խնդրում եմ, անպատճառ վերջ տաք ձեր այդ արարմունքին:

— Ձեր ի՞նչ գործն է, — կոպտութեամբ պատասխանեց անծանօթը:

— Խորհուրդ եմ տալիս ձեզ զգոյշ լինել պարոն, — զայրոյթից կարմրելով և ատամներն իրար սեղմելով՝ թշուառ դերակոմսը, — այլապէս ես ձեզ կըստիպեմ բաւականութիւն տալ ինձ:

Անճանօթը նրան պատասխանեց միայն մի խօսքով, բայց այնպիսի մի անվայել և վիրաւորական խօսքով, որ բոլոր ներկայ եղողներն մի ակամայ շարժում գործեցին: Մի քանիսներն երեսները շուռ տուին, միւսները քիթները վեր քաշեցին. անկիւնում խմբուած սպասաւորները հոլի նման պտտուեցին կրունկների վերայ, իսկ գործասեղանի մօտ կանգնած երկու գործակատարուհիներն այնպէս վեր թռան տեղից կարծես մի աներևոյթ զօրութիւն երկուսին էլ միատեղ և միաժամանակ վեր նետեց:

Տիրեց խորին լռութիւն: Յանկարծ օդում լսուեցաւ մի շրխոցի ձայն, կարծես, մի բան ճայթեց... Ներակոմսն ապտակեց իւր հակառակորդին: Բոլոր ներկայ եղողները մէջ ընկան, որ կռիւ չպատահի:

Ներակոմսն ու անճանօթը փոխանակեցին այցեատմանը:

II.

Ներակոմսը տուն վերադառնալով՝ սկսեց մի քանի րոպէ շարունակ արագ և անհաստատ քայլերով անցուդարձ անել սենեակում: Վրդովմունքը և զայրոյթը խանգարում էին նրան մտածելու: Նրա ուղեղը զբաղեցնում էր միայն միտք — «Մենամարտութիւն». սակայն այդ միտքը չունէր այն ոյժը, որ կարողանար մի սուանձին յուզմունք առաջացնել նրա սրտում: Մի՞թէ նա չըվարուեց այնպէս, ինչպէս այդ պահանջում էր հասարակական կարծիքը: Մի՞թէ նա ցոյց չտուեց, որ ինքն ազնիւ և պատուասէր մարդ է: Նրա մասին կըխօսեն, նա կըլսի զովասանքներ, վերջապէս նրան կը շնորհաւորեն այդ քաջագործութեան համար, նրան կը հըռ-

չակին անվեհեր ասպետ, քաջամարտիկ հերոս: Եւ նա մի քանի անգամ բարձրաձայն, համարեա աղազակերով կրկնեց միւսնոյն նախադասութիւնը.

— Որքան լե՛րբ էր այդ մարդը:

Յետոյ նա նստեց և սկսեց մտածել:

Հէնց վաղը և եթ հարկաւոր է մարտավիպաների հոգս քաշել: Բայց ո՞ւմ ընտրել: Նա աշխատում էր մէկ-մէկ յիշիլ իւր ծանօթներից ամենայատնի և ամենազբախան մարդկանց: Վերջապէս նա ընտրեց մարքիզ Տուրնուարին և գնդապետ Բուրգէնին, որովհետև նրանց անունները յայտնի էին մամուլում:

Վերակոմսը յանկարծ խիստ ծարաւ զգաց և իրար ետևից երեք բաժակ ջուր խմեց: Յետոյ նա նորից սկսեց անց ուղարձ անել սենեակում: Նրա եռանդը բոպէ առ բոպէ վառվում, բորբոքվում էր: Նա ցոյց կրտայ իւր անվեհերութիւնը, նա ամենասարսափելի պայմաններ կրպահանջէ, այն, ամենասարսափելի պայմաններ, որոնք անխուսափելի մահ կըսպառնան հակառակորդներից մինին և այն ժամանակ, այն ժամանակ այդ անամօթն, անկասկած, կը վախենայ և ներողութիւն կը խնդրէ:

Նա վերջրեց սեղանի վերայ ընկած այցետոմսը և նորից կարդաց. «Ժորժ Լամիլ, Մովսէսի փողոց, 51.»: Նա սկսեց երկար նայել այցետոմսի վերայ տպուած անուանը, չնայելով որ այդ անունը նա կարդացել էր քաղցրավաճառի խանութում, կառքի մէջ, տուն վերադառնալիս, լսապետներին մօտովն անցնելիս, և կարդացել էր ոչ թէ մէկ կամ երկու անգամ, այլ հարիւր անգամ:

Վերակոմսը խոր նայեց տառերի շարուածքին: Ժորժ Լամիլ: Ի՞նչ մարդ էր նա: Ի՞նչով էր պարապում: Ի՞նչու նա այնպէս անպատկառ կերպով նայում էր անծանօթ կնոջը: Ո՞վ էր նա: Սրգեօք քաղաքաւարութեան կանոններին անծանօթ մի օտարական, թէ՞ սքսորանքից վերադար-

ձած մի (հասարակորդ) կօմմունիստ: Ինչ և իցէ այդ անպիտանը քիչ չվըղովեց դերակոմսի սիրտն ու հոգին:

Եւ դերակոմսը բարկութիւնից հազիւ շունչը ետ բերելով՝ նորից շնջեց խուլ ձայնով:

— Ա՛խ, այդ լե՛րբը...

Դերակոմսը դարձեալ մնածմունքի մէջ ընկաւ:

Նա այցեատոմսը ձեռքից չէր թողնում: Այդ թղթի կտորը նրա կատաղութիւնը շարժում էր, նրա սրտում մի ահագին փոթորիկ էր առաջացնում, որի հետ երբեմն-երբեմն միախառնվում էր մի ինչ-որ տարօրինակ, հիւանդոտ զգացմունք...

Սեղանի վերայ դրուած էր զրջահատ: Դերակոմսը բարկութիւնից իրեն կորցրած՝ վրայ ընկաւ, վերջրեց գանակը և դողդոջիւն ձեռքով դանակի ծայրն այնպէս ցցեց խեղճ ծորժ Լամիլի անուան մէջ, որ այցեատոմսի վերայ ահագին ծակ բացուեց:

Այդ լուպէին նրան թւաց թէ պատուեց այն մարդու կուրծքը, որին պատկանում էր այդ անունը...

Սակայն մենամարտութիւնն անխուսափելի էր: Պէտք էր, անպատճառ պէտք էր մենամարտել: Բայց ի՛նչով, ի՛նչ ընտրել—սո՛ւր թէ ատրճանա՛կ: Որպէս անպատուած՝ դերակոմսը յոյս ունէր, որ դէնքի ընտրութիւնն իրեն կը թողնեն: Սրով մենամարտել նա սիրտ չէր անում, իսկ ատրճանակով... ատրճանակով նա յոյս ունէր ահ զցել հակառակորդի սիրտը... յոյս ունէր ստիպել նրան ներողութիւն խնդրելու և այդպիսով ոչ իւր և ոչ էլ ուրիշն արիւնը թափելով՝ ազատուել իւր այդ ծանր վիճակից:

— Պէտք է հաստատամիտ լինել: Պէտք է ցոյց տալ նորան կամքի ոյժ, հոգոյ անվեհերութիւն և նա, երևի, կը վախենայ:

Սակայն սեփական ձայնի հնչմունքը ցնցեց դերակոմսին և նա երկկուղից չորս կողմը նայեց: Նա զգում էր ներդային սաս-

տիկ գրգռումն: Իերակոմնը դարձեալ մի բաժակ ջուր խմեց
և սկսեց շտապով հանուել: Սնկողնն մտնելուն պէս՝ նա
լրապտերը հանգցրեց և աչքերը փակեց:

— Վաղը, — մտածում էր նա՝ անկողնում պառկած —
ամբողջ օրն աղատ եմ, ուրեմն ժամանակ կ'ունենամ դոր-
ծիրս կարգի բերելու: Իսկ այժմ քնե՛մ, քնե՛մ, որ առաւօ-
տեան կարողանամ զուարթ և հանգիստ սրտով ողջունել
արևին:

Նա աչքի կոպերն աւելի սեղմեց: Բայց ի զուր, նրա աչքին
քուն չէր գալիս: Նա մի քանի րոպէ կամ մէջքի վերայ էր
պառկած մնում, կամ ձախ կողքի վերայ էր շուռ գալիս,
կամ աջի վերայ, կամ երեսը թաղում էր բարձի մէջ, սա-
կայն բազմալի քունը չկար ու չկար:

Նա դարձեալ ծարաւ զգաց: Ուղեցաւ վեր կենալ, որ մի
քիչ ջուր խմի, ծարաւը մեղմի, բայց Հէնց նոյն րոպէին
նրա ուղեղում առաջին անգամ առկայծեց մի տարօրինակ
և սարսափելի միտք:

— Մի՛թէ ես վախենում եմ, — մտածեց նա:

Նա ձեռքը դրեց կրծքին: Նրա սիրտը թրթռում էր, որ-
պէս վանդակն ընկած թռչուն:

Ժամացոյցը խփեց մէկը: Այդ անակնկալ ձայնի վերայ նա
մի բարձր ճիչ արձակեց և ռեաֆնէ գնդակի նման վեր թռաւ
անկողնից: Նա մի այնպիսի ուժգին ճնշում զգաց իւր սրտի
վերայ, որ մի ամբողջ րոպէ ստիպուած էր բերանը բաց
շունչ քաշելու:

Նա սկսեց ինքն իրեն մտածել, թէ ի՞նչի հետեանք կա-
րող էր լինել հոգեկան այդպիսի աղմկայոյզ դրութիւնը:

— Մի՛թէ ես վախենում եմ: Ինչ անմտութի՛ւն...

Իերակոմնը համարեա անգիտակցաբար վառեց լրապտերը
և նայեց հայելու մէջ: Որպիսի՛ զարհուրանք: Նա չկարո-
ղացաւ ճանաչել իրեն: Բիբերը սարսափելի լայնացել էին:
Իսկ գէմքը մեռելի գոյն էր ստացել: Այո՛, նրա կերպարան-

քին նայած՝ նա աւելի շուտով մեռածի էր նմանում, քան թէ կենդանի, շարժուն արարածի:

Իերակոմմը շօշափեց իւր զարկերակը և նայեց լեզուին... Յանկարծ մի միտք կայծակի պէս հարուածեց նրան և նա տեղնուտեղը միաց քարացած:

— Գուցէ միւս օրը ես այս ժամին արդէն մեռած լինեմ:
Նրա սիրտն սկսեց սաստիկ թրթռալ:

— Այո՛, ահա հէնց այս մարդը, որ այս րոպէիս հայելու միջից նայում է ինձ վերայ, գուցէ, վաղը չքանայ, և չքանայ անդառնալի կերպով: Օ՛, այդ սարսափելի է: Ես ապրում եմ, ես շնչում եմ, ես ուզում եմ ապրել և... և յանկարծ, քսանուչորս ժամից յետոյ, ինձ պէտք է պառկեցնեն այս անկողնում սառած, անշարժ և անշունչ...

Իերակոմմը նորից անկողին մտաւ, որ փոքր ինչ հանդարտուի. սակայն վայրկեան չանցած՝ նրա հրեակայտութեան մէջ պատկերացաւ մի սոսկալի և սրտաճմլիկ տեսարան— նա տեսաւ իրեն մենամարտութեան տեղից տուն բերուած՝ արիւնաշաղախ, անշունչ ու անզգայ: Սեփական արիւնը նրան սարսափեցրեց: Նա գունատուած վեր թռաւ անկողնից և կայծակի արագութեամբ ներս վազեց գրասենեակը: Սեղանի արկղից հանեց գրանակ, մէքենայաբար կպցրեց նրան և սկսեց սենեակի մի անկիւնից միւս անկիւնն անց ու դարձ անել: Յանկարծ նա ցուրտ զգաց, մօտեցաւ հնչակին, որպէս զի ծառային կանչէ բուխարին վառելու, բայց կանգ առաւ:

— Նա կարող է նկատել, որ ես հիւանդ եմ: Ո՛չ, չի հարկաւոր, աւելի լաւ է ես ինքս մի կիրպ կրակ անեմ:

Եւ դերակոմմն ինքն սկսեց բուխարին վառել: Նրա ձեռքերը դողում էին, որպէս տենդից բռնուած մարդու ձեռքեր, և նա մեծ դժուարութեամբ էր կարողանում ունելիքով ածուխ վերցնել և բուխարին գցել: Նրա գլուխը կարծես կրակն ընկած այրվում էր. իսկ գլխի մէջ պտտուող մտքերն

անկապ, խանդարուած և հիւանդոտ կերպարանք էին ստանուում: Թէպէտ նա այսօր ոչինչ չէր խմած, սակայն հարբածի նման օրօրվում, դէս ու դէն էր ընկնում:

Եւ դերակոմսը հէնց մի գլուխ հարցնում էր իրեն.

— Արդեօք ի՞նչ անել: Ի՞նչ կրպատահի ինձ:

Նրա ամբողջ մարմինը ներդային ցնցման մէջ էր:

Նա մօտեցաւ լուսամուտին և վարագոյրը ետ քաշեց:

Արդէն լոյսը բացվում էր: Ամամռանային հրաշալի՜ առաւօտ: Արեգակի վարդագոյն ճառագայթները լուսաւորում էին հարևան պատերն ու տանիքները: Երկիրքը նոյնպէս վարդագունուած էր: Քնած պտրտէզն սկսում էր սթափուել, կեանք ստանալ:

Կեանք ստացաւ և դերակոմսը:

Արեգակի այդ առաջին ճառագայթների յայտնուելովը դերակոմսի սիրտը լցուեցաւ մի փրկարար, մի բերկրալի և միանգամայն անահնկալ յուսով: Եւ իրաւ, մի՞թէ յիմարութիւն չէր ահ ու գողի մէջ ընկնել, երբ դեռ ոչինչ չէր վճռուած, երբ դեռ նրա մարտավիաները չէին տեսնուած Փօրժ Լամիլի հետ: Գուցէ իսկի մենամարտութիւնը տեղի էլ չունենար:

Դերակոմսը լուացուեց, հագնուեցաւ և հաստատուն քայլերով դուրս գնաց փողոց:

III.

Փողոցով անցնելիս դերակոմսը շարունակ կրկնում էր.

— Պէտք է անվիհեր լինել, պէտք է դործել վճռողաբար: Պէտք է ապացուցանել, որ ես չեմ վախնում:

Նա գնաց իւր ընտրած մարտավիաների մօտ: Մարքիզն ու գնդապետը, ինչպէս ինքն էլ սպասում էր այդ, սիրով ընդունեցին նրա առաջարկութիւնը և գովելով նրա՝ քաղցրավաճառի խանութում ցոյց տուած քաջագործութիւնն

ու մի քանի անգամ էլ իրար վրայ սեղմելով նրա ձեռքը, սկսեցին պայմանների մասին խօսել:

— Ուրեմն դուք ուզում էք, որ մենամարտութիւնը խիստ լինի,— հարցրեց զնգապետը:

— Այո՛, ամենախիստ...— պատասխանեց զերակոմսը:

— Եւ, ի հարկէ, ատրձանակով,— մէջ մտաւ մարքիզը:

— Անպատճառ...:

— Շատ լաւ... Թոյլ տուէք ուրեմն մնացեալ կարգադրութիւնները մենք անենք:

Բայց զերակոմսը վեհանձնութեամբ ոտքի կանգնեց և ձեռքերի շարժումներն իրով և խօսքերն առանձին-առանձին շեշտելով՝ արտասանեց.

— Հեռաւորութիւնը քսան քայլ... Արձակել, երբ նշան կրարուի... Մենամարտութիւնը վերջացած է համարվում միայն այն ժամանակ, երբ մեզանից մէկը ծանր և վտանգաւոր վէրք կրտանայ:

— Գեղեցիկ պայմաններ,— հաւանութիւն տուաւ զնգապետը:— Ինք ատրձանակաձգութեան մէջ հմուտ էք և հաւանական է, որ յաղթանակը դուք կրտանէք:

Մարքիզն ու զնգապետը զնացին Թորթ Լամիլի Հետ տեսակցելու, իսկ զերակոմսը վերադարձաւ տուն, ուր պէտք է գային և՛ մարտավիաները հակառակորդի Հետ ունեցած խօսակցութեան հետևանքների մասին տեղեկութիւններ բերելու:

Հէնց որ զերակոմսը մտաւ իւր առանձնասենեակը և իրեն դարձեալ մենակ զգաց, նրա սրտի յուզմունքը նորից սկսեց սաստկանալ: Նա մի տեսակ անվերջ և վերին աստիճանի անախորժ դող էր զգում թէ՛ ձեռքերում, թէ՛ ոտներում և թէ՛ կրծքի մէջ: Նա ոչ կարողանում էր պառկել, ոչ նստել և ոչ էլ կանգնել:

Նա ուզեց նախաձաշել, բայց անկարող եղաւ գէթ մի պատառ հաց բերանը դնելու: Մի կերպ իրեն կազդուրելու

Համար, դերակոմսը վճռեց գոնէ մի բան խմել: Նա հրամայեց մի շեշ կոնեակ բերել և միմեանց ետեւից վեց փոքրիկ բաժակ դատարիկեց:

Նրա գլուխն սկսեց պտտուել...

Նա ինքնամոռացութեան մէջ ընկաւ... և այդ բանը նորան շատ ուրախացրեց:

— Բաւական է... էլ չեմ խմիր, — մտածում էր նա, — այսպէս լաւ է...

Սակայն Հաղիւ մի ժամ անցած՝ նա դատարիկեց ամբողջ շեշը և անտանելի յուզմունքի մէջ ընկաւ: Նա մի անդրուպիլի ցանկութիւն էր զգում բարձրաձայն գոռալու, յատակի վերայ թաւազլոր դալու, շան նման կծոտելու մէկին...

Գիշերը վրայ էր հասնում:

Յանկարծ նախասնեակում հնչուեցաւ զանգակի ձայնը: Այդ ձայնը նրան այնպէս սարսափեցրեց, որ նա ոյժ չունեցաւ բազկաթուղի վեր կենալու և իւր մարտավկաներին դիմաւորելու:

— Սմէն բան կարգադրուած է համաձայն ձեր առաջարկած պայմաններին, — ասաց գնդապետը ներս մտնելով և ողջունելով դերակոմսին: — Ձեր հակառակորդն սկզբում բողոքեց ձեր դէմ, որ մենամարտութեան պայմաններն ինքներդ էք կամենում որոշել և զէնքերի ընտրութեան իրաւունքը ձեզ էք վերապահում, մինչդեռ այդ իրաւունքը լիովին պատկանում է անպատուուածին, սակայն յետոյ համարեա խեղճ և եթ զիջաւ և համաձայնեց ամեն տեսակ պայման ընդունելու: Նրա մարտավկաները երկու սպաներ են:

— Ենորհակալ եմ... — ատամների միջով հաղիւ շշնջեց դերակոմսը:

— Ներկեք, որ մենք ձեզ մօտ երկար մնալ չենք կարող, — մէջ մտաւ մարքիզը: — Մենք էլի հազար ու մի գործ ունինք կատարելու մենամարտութեան վերաբերեալ: Սմէնից առաջ պէտք է մի հմուտ բժիշկ գտնել, որովհետեւ,

ինչպէս յայնի է, մենարտութիւնը վերջացած է համարվում միայն այն ժամանակ, երբ մենամարտողներից մէկը ծանր վիրաւորվում է. իսկ դուք ինքնիրդ լաւ դիտէք, որ գնդակի հետ հանաք անել չի կարելի: Յետոյ՝ հարկաւոր է մօտակայքում մի բնակարան վարձել, որպէս զի, եթէ կարիք զգացուի, կարելի լինի վիրաւորուածին խնոյն տեղափոխել այնտեղ: Բացի այդ՝ էլի պէտք է... էհ, ո՞ր մէկն ասեմ, քիչ բան կայ, մինչդեռ մենք ընդամենը երկու թէ երեք ժամ միայն ժամանակ ունենք:

— Ենորհակա՛յ եմ—կարծես տենդից բռնուած՝ դողալով արտասանեց դերակոմսը:

— Ի՞նչպէս էք զգում ձեզ, սարոն դերակոմս, — հարցրեց գնդապետը: — Լանգիւստ էք:

— Բոլորովին հանգիստ եմ: Ենորհակալ եմ...

Մարտավիաները հեռացան:

IV.

Դերակոմսը նորից մենակ մնալով, մտածմունքի մէջ ընկաւ: Նա երկար մտածում էր, և ոչ մի կերպ չէր կարողանում մի որոշ եզրակացութեան գալ, մի որ և է կէտի վերայ կանգ առնել...

— Այս ի՞նչ հոգեկան խանգարումն է... այս ի՞նչ ուղեղի շփոթութիւն է... խելագարվում եմ ես, ի՞նչ է... անդադար հարցնում էր նա ինքն իրեն:

Սպասաւորը լուպտերը վառեց:

Դերակոմսն աթոռը քաշեց գրասեղանի մօտ և սկսեց զրել: Թղթի ճակատին գրելով՝ «Իմ կտակը», նա կանգ առաւ: Մի քանի վայրկեանից յետոյ, նա ուզեց շարունակել, բայց ի զո՛ւր — ոչ մի խօսք չկարողացաւ գրել: Նա իրեն միանգամայն անընդունակ էր զգում երկու ամենահասարակ մտքեր իրար կապելու...

Վաղը նրան վիճակուած էր մենամարտելու: Խոյս տալ այդ քանից նա ոչ մի կերպ չէր կարող: Բայց Ի՞նչու խոյս տալ... Այդ Ի՞նչ վախկոտութիւն էր... Ի՞նչ էր պատահել նրան: Ա՛հ որ նա ինքը կամեցաւ մենամարտել... Այո, նա կամեցաւ, նա ինքը կամեցաւ պատժել անպատկառին, ցոյց տալ քաղաքացիական արիութիւն... սակայն այժմ նա զգում էր, որ չնայելով իւր մտքի և կամքի վճռողականութեան, ոյժ չի ունենալու մենամարտութեան տեղը հասնելու, հակառակորդի հետ հանդիպելու: Նա աշխատում էր իւր աչքի առջև պատկերացնել մենամարտութեան տեսարանը, իւր սեփական վարմունքը և հակառակորդի վարմունքը...

Դերակոմսը հոգեկան տանջանքի մէջ էր...

Մռայլ և փոթորկալի՛ց ծով էր ներկայացնում նրա ներքին աշխարհը...

Ժամանակ առ ժամանակ նա զգում էր ներդային ուժգին ցնցումն և այդ բոպէներին, չնայելով որ նա ամեն ճիշդ թափում էր իրեն զսպելու, նրա ատամներն սկսում էին կծկծալ:

Դերակոմսն ուզեց գոնէ ընթերցանութեամբ փոքր ինչ հանդարտեցնել իրեն և ձեռք առաւ Շատովիլեարի «Մենամարտութեան կանոնադիրքը»:

Բայց յանկարծ նրա ուղեղում ծագեց մի ուրիշ միտք:

— Արդեօք իմ հակառակորդը հմուտ է ատրճանակաձգութեան մէջ: Յայտնի՞ է նա, վայելում է որ և է հռչակ: Ի՞նչպէս անեմ, որ այդ լաւ իմանամ:

Նա իսկոյն յիշեց բարոն Նէվոյի գիրքը, ուր մանրամասն խօսվում էր ատրճանակաձգութեան մասին: Դերակոմսը մի քանի բոպէում սկզբից մինչև վերջ աչքի անց կացրեց այդ գիրքը: Ժօրժ Լամիլի անունը ոչ մի տեղ չէր զրուած:

Բայց և այնպէս այդ պարոնը, հրևի, շատ վարժ էր ատրճանակ ձգելում, ապա թէ ոչ նա հրբէք չէր համաձայնուիլ այդպիսի վտանգաւոր զէնքերով և, մանաւանդ, այդպիսի մահաբեր պայմաններով մենամարտելու:

Վերակոմսն սկսեց անցուդարձ անել սենեակում: յետոյ նա մօտեցաւ սեղանի արկղիկին, հասնեց այնտեղից ատրճանակը և մենամարտողի դիրք բռնելով՝ նշան դրեց:

Սյդ ըտպէին այնպիսի մի դող ընկաւ նրա ջանը, որ ատրճանակի բերանն սկսեց դէս ու դէն տատանուել:

— Աչ այդ անկարելի է...— ինքն իրեն քրթմնջաց դերակոմսը:— Ես չեմ կարող մենամարտել...

Նա աչքը մօտեցրեց ատրճանակի բերանին և սկսեց երկար նայել խողովակի ներսը, դէպի խորքը, դէպի այն փոքրիկ սև անցքը, որտեղից դուրս է թռչում շեկացած գնդակը... Նա նայում էր ատրճանակի այդ խաւար, դժոխային խորքը և միևնոյն ժամանակ մտածում իւր ապագայ անզօրութեան, իւր անպատուութեան վերայ. նա մտածում էր այն անվերջ քչփչոցների, այն հազար ու մի ծաղը ու ծանախների, կանանց ատելութեան և լրագրական կծու ակնարկների մասին, որոնց ինքն անկասկած կ'արժանանար, եթէ ցոյց տար իւր վախկատութիւնը, եթէ ցոյց տար, որ ինքը նապաստակի սիրտ ունի:

Նա բարձրացրեց ատրճանակի հրահանը և նրա տակ նկատեց վառօր:

Ատրճանակը լեքն էր:

Վերակոմսն յանկարծ մի տարօրինակ և անբացատրելի ուրախութիւն զգաց:

Եթէ նա վաղն իրեն հանգիստ և վեհանձն չի պահել իւր հակառակորդի առջև, նա կորած է... յաւիտեան կորած է: Նրա ձակատին կրդրոշմուի անպատուութեան կնիքը: Նրա անուան վերայ յաւիտեան անմաքրելի կը մնայ վախկոտութեան սև բիծը: Նրան կը ծաղրեն. նա կ'ընկնի ամենքի աչքում: Հասարակական կարծիքը դադար չի տալ նրան. նա կը հալածուի, կը հալածուի անվերջ...

Սակայն դերակոմսը զգում էր, խոստովանում էր իւր անզօրութիւնը: Նա զգում էր, որ ինքն անկարող է հան-

զինաւ և վեհանձն կերպով կանգնել ատրճանակի առջև...
այո՛, նա այդ զգում էր...

— Բայց... բայց մի՞թէ այդ նշանակում է, որ ես վախ-
կոտ եմ,— յանկարծ գոչեց դերակոմսը։— Ո՛չ, ո՛չ ես վախկոտ
չեմ... ես ուզում եմ մենամարտել... անպատճառ մենամար-
տել... Դերակոմս ժողէ՛՛ զե-Սինոյը ցոյց կրտայ ամբողջ
աշխարհին, որ նա վախկոտ չէ, որ նա քաջ և անվեհեր
մարդ է... այո՛, ցոյց կրտայ...

Եւ այդ նոր միաբը, որ կայծակի նման փայլեց նրա
փոթորկալից ուղեղում, դեռ չէր կազմակերպուել, դեռ մի
որոշ ձև չէր ստացել՝ երբ դերակոմսը մի տենդային շարժումով
ատրճանակի ծայրը կոխեց մինչև կոկորդը և... հրահանք
քաշեց...

Երբ սպասաւորն՝ ատրճանակի ճայթիւնը լսելով՝ ներս
վազեց, դերակոմսն արդէն անշունչ ու անզգայ ընկած էր
բազկաթուռի մէջ։ Սրիւնը ցայտելով դէպի գրասեղանը՝ մի
ահազինն արեան բիծ էր զոյսացրել «Իմ կտակը» խօսքերի
վերայ...



II.

ԳԻՒՂԻ ՄՈՒՐԱՑԿԱՆ.

Վար ժամանակ, երբ նա էլ երջանիկ կեանք էր վարում, երբ նրա օրերն էլ խաղաղ ու անվրդով էին անցում... բայց, աւանդ, այդ ժամանակը երկար չտևեց. նա անցաւ երազի նման, անցաւ անհետ, անդառնալի... Տասնեւհինգ տարեկան Հասակում նրան մի սոսկալի անբախտութիւն պատահեց—Վարվել զիւղից ընթացող կառքը, որ սրարշաւ անցնում էր մեծ փողոցով՝ տակովն արեց խեղճին և ջարդեց նրա երկու ոտները: Եւ այդ օրից նա սկսեց մուրացկանութիւն անել, թրեւ զալ փողոցներում, վախվախելով ձեռք պարզել անցորդներին... Այդ օրից նրա աչքերը դարձան արցունքի աղբիւր, սիրտը—վշտերի ծով... Նա սովորաբար կամ մարդաշատ փողոցներումն էր նստում ու ողորմութիւն խնդրում, կամ քարշ էր գալիս այս ու այն դաստակերտում: Մի զոյգ Հաստ ու երկայն փայտ, անսասան ժայռերի նման նեցուկ էին տուած նրա կոնատակերը և անբախտ Նիկոլը միայն այդ փայտերին յինուած կարողանում էր շարժուել, մէկ տեղից միւս տեղ գնալ:

Նիկոլն ապօրինի զաւակ էր: Նրան գտել էր գիւղեւ քահանան մի նեղ առուում: Նրան խնամում, կերակրում էին՝ ցաւակցելով նրա ողբալի և անտէր վեճակին, սակայն դաստիարակել, ուսում տալ նրան—ոչ ոք չէր ուզում, ամենքը Հեռու էին փախչում և այդպիսով նա մնաց անզրազէտ, կոպիտ ու անտաշ: Այդ պատճառով էլ այն

սոսկալի փորձանքից յետոյ, որին ենթարկուեց թշուառը, նա ոչինչ չէր կարող անել, եթէ ոչ ողորմութիւն խնդրել, հաց մուրալը «ախ ու վախով» անցորդների գլուխը տանել:

Գթասիրտ բարոնեսա Ռավարին թոյլ տուեց նրան ապրելու իւր կալուածքում, մի փոքրիկ գետնափոր հիւղե մէջ, որ լի էր յարդով: Նիկոլի ուրախութեանը շափ չկար: Նա համոզուած էր, որ իւր բարերարութեան հարուստ խոհանոցում միշտ կարող է մի կտոր հաց դանել, մի բաժակ զինի ճարիլ—և նա ճարում էր. իսկ առաքինի բարոնեսան յաճախ պատշգամբից կամ լուսամտուց մի քանի սու էր նետում նրան և այդ բոպէներին Նիկոլին թւում էր, թէ աշխարհս իրենն է: Սակայն այդ երջանկութիւնն էլ երկար չուեց: Նրա սև բախտից, բարոնեսան, նրա միակ պաշտպանը, նրա պահապան հրեշտակը, կարճ ժամանակից յետոյ մեռաւ:

Նիկոլը դարձեալ մնաց անտուն-անտէր և ճարահատեալ նորից սկսեց գիւղեց գիւղ թափառել, սրա-նրա զահէն տանել: Բայց գիւղերում նրան էլ ոչինչ չէին տալիս. նրա վերայ զգուանքով էին նայում, նրան հալածում էին: Եւ իրաւ որ, քառասուն տարուայ ընթացքում նա բաւականին զոգուեցրել էր գիւղացիներին, այնպէս որ սրանք էլ չէին կարողանում ծածկել իրենց արհամարանքն ու ատելութիւնը դէպի այդ անտուն շրջմոլեկը, որն այս ու այն բակը մտնելով, այս ու այն տան գոնիրը ծեծելով՝ ամեն տեղից էլ աշխատում էր մի բան գուրս գըլել:

Նիկոլը թէպէտ պարզ նկատում էր իւր գիւղացիների այդ արհամարահանքը, բայց ի՞նչ անէր, ո՞ւր դնար: Նա չէր համարձակվում ոչ մի քայլ անել, որովհետև բացի այդ փոքրիկ, աննշան հողի կտորից, այդ երեք-չորս գիւղեց, նա ոչ մի տեղ չէր եղած, ոչ մի երկիր չէր ճանաչում:

Նա մինչև անգամ իրեն հաշիւ տալ չէր կարողանում, թէ արդեօք այդ գիւղերից այն կողմն էլ երկիր կ'ար, թէ՞

ամբողջ աշխարհը Հէնց միայն այդ գիւղերովն էր սահմանափակուած: Նիկոլը մինչև անգամ վախենում էր այդպիսի մի հարց տալ իրեն: Եւ ամեն անգամ, երբ գիւղացիները, որոնք բոլորովին բեղարել էին նրանից, տեսնելով նրան դաշտերում թափառելիս՝ բարկացած և արհամարհական ձայնով դռում էին.

— Է՛յ, Նիկոլ, ի՞նչ ես դու ամեն օր մեզ մօտ վեր ընկած. էլ ուրիշ գիւղ չկայ, ի՞նչ է:

Նա անշունչ դիակի պէս լռում էր, ոչինչ չէր պատասխանում և աշխատում էր թաղչել խօսողներին աչքից: Սյդպիսի լուպիներին նրան պաշարում էր մի անբացատրելի երկիւղ, երկիւղ, որ միայն յատուկ է աղքատ ու թշուառ մարդկանց, որոնց ահ ու դող է պատճառում ամեն բան— և՛ նոր-նոր կերպարանքները, և՛ նոր-նոր նկատողութիւնները, և՛ կասկածաւոր հայեացքները, և՛ մանաւանդ ժանդարմները: Սյո՛, ժանդարմներին տեսնելիս Նիկոլը բընազգամբ դողում էր, կուչ էր զալիս թփերի տակ կամ պահվում էր քարակոյտերի ետևը: Սյդպիսի տեղերում նա սովորաբար երեսի վերայ էր պառկում և այնպէս ամուր էր կաշտում զետնից, որ փորձուած ժանդարմի սրատես աչքն անգամ դժուարանում էր նրա հին ցնցոտիները զանազանիլ սևագոյն հողից:

Նիկոլն երբէք ժանդարմների հետ զործ չէր ունեցած: Սակայն այն ահ ու դողը, որ նա զգում էր նրանց տեսնելիս, այն ճարպիկութիւնը, որով նա միշտ խոյս էր տալիս կարգապահութեան այդ դաժանագէմ ներկայացուցիչներին հանդիպելուց, կարծես, այդ բոլորը նրա բնական յատկութիւններին էին, կարծես, նա այդ զբացումները ժառանգել էր իւր անյայտ և նոյնպէս աղքատ ու անտուն-անտէր ծնողներից:

Բարոնեսուայի մահից յետոյ Նիկոլն վիճակը խիստ ծանրացաւ: Նա մնաց անտուն, անօգնական, բաց երկնքի տակ,

չոր գետնի վերայ: Նա չունէր ոչ խորձիթ, ոչ գետնափոր հիւղ, մի խօսքով ոչ մի սեփական ապաստարան, ուր կարողանար գէթ զիշերները հանգիստ տալ իւր տանջուած մարմնին:

Ամառ ժամանակ նա քնում էր, որտեղ պատահում էր. իսկ ձմեռը ցրտից չփետանալու համար, ճարահատուած, նա դիմում էր ամեն տեսակ խորամանկութիւնների: Նա զարմանալի վարպետութեամբ ներս էր սողում մառանները կամ ներքնատները, որտեղից շատ անգամ ամբողջ շաբաթներով ոտք չէր դուրս գնում, մանաւանդ եթէ ուտելու բաւականին պաշար էր գտնում այնտեղ:

Նա մարդկանց մէջ սպրում էր, որպէս անտառի զաղան: Ոչ ոքին չէր ճանաչում, ոչ ոքին չէր սիրում և միայն ատելութիւն ու թշնամութիւն էր յարուցանում զիւղացիների մէջ զէպի իւր անձը: Գիւղի մեծ ու փոքրը նրան անուանում էին զանգակ, որովհետև նա իւր երկու հաստ կռնափայտերի վերայ այնպէս էր օրօրվում, ինչպէս զանգակը իւր օղակի վերայ...

Բայց ահա երկու օր է, Նիկօլի բերանը նշխար չի մտել: Քաղցածութիւնը նրան սպանում է. խեղձի փորը մէջքին է կպել:

Ի՞նչ անի...

Նա ամեն տեղ գնաց, ամենքի մօտ լաց եղաւ, բայց ոչ ոք նրան ոչին չտուեց:

Ամենքը նրան դուրս էին անում իրենց տներից...

Գեղջիկուհիները նկատելով նրան, հէնց հեռուից, առանց սպասելու, որ նա մօտենար իրենց, սկսում էին ձեռքով սպառնալ և անվերջ նախատինքների թափել խեղձի գլխին.

— Ե՛րբ պէտք է ռադ լինես դու մեզանից, այ հրէջ: Երեք օր չի լինիլ, ինչ որ ես քեզ մի ահագին կտոր հաց տուի, աներես:

Նիկօլը մի խորը «մի» քաշելով, ճարը կտրած՝ երեսը շուռ

էր տալին և օրօրուերով իւր կոնափայտերի վերայ, դիմում էր հարեան տունը: Բայց այստեղ էլ նրան միևնոյն կերպով էին ընդունում — նախատինքնէ՛ր և անվերջ նախատինքնէ՛ր... Մի խօսքով նրան սովորաբար ամենքն էլ նախատում էին, ամենքն էլ հէնց մի գլուխ այս էին ասում:

— Խօ չի կարելի ամբողջ տարին հաց տալ քեզ պէս աներես ձրիակերին:

Իսկ տարաբախտաբար խեղճ «աներես ձրիակերը» շարունակ ուտել էր ուզում...
 Նա իւր ծանօթ երեք զիւղն էլ ոտքի տակ էր տուել:

Նա եղել էր և՛ Սանա-Իլերում, և՛ Վարվիլում, և՛ Բիօտում, բայց այդ զիւղերից և ոչ մէկում նա, որ ասես, մի կտոր չոր հաց, մի սև գրօշ անգամ չէր ստացել: Սյժմ՝ նրա միակ յոյսը Տուրնօլ զիւղի վերայ էր, բայց այնտեղ գնալու համար էլ պէտք էր մեծ ճանապարհով ամբողջ երկու մղոն անցնել: Դէ՛ արի ու դարտակ փորով այդքան ճանապարհ գնա՛:

Բայց այսպէս թէ այնպէս պէտք էր անպատճառ գնալ: Քաղցածութիւնը հեռաւորութիւն չի հարցնում:

Դեկտեմբեր ամիսն էր:

Յրտաշունչ քամին կատաղի սուլում էր դաշտերում, ուժգին հարուածներով փշտում էր ծառերի մերկ ճիւղերը և մի ահեղ պատերազմ էր մղում երկնքի հետ՝ անխնայ հալածելով նրա վերայ կուտակուած մոխրագոյն ամպերը:

Թշուառ Նիկօլը դանդաղ, հազիւ հազ շարժելով իւր կոնափայտերը՝ գնում էր լայնատարած ճանապարհով: Ժամանակ առ ժամանակ նա նստում էր այս կամ այն փոս ընկած տեղում և մի քանի ըտպէ հանգստանում: Քաղցածութիւնը սարսափելի տանջում էր նրան: Նրա զխում անընդհատ պտտվում էր այս միտքը.

— «Ռբտեղից մի կտոր հաց ճարեմ»:

Խեղճ՝ Նիկօլն ախ ու վախ քաշելով՝ ամբողջ երեք ժամ թա-

փառեց ցեխոտ ճանապարհի վերայ, և երբ առաջին անգամ տեսաւ գիւղի փոքրիկ այգիները, ուրախութիւնից կրկնապատկեց իւր ոյժը և սկսեց այնպիսի արագ ու հսկայական քայլեր գցել, որ ինքն էլ զարմացաւ իւր այդ արագաշարժութեան վերայ: Եւ ի՞նչպէս չզարմանար, երբ այդպիսի մի քայլուածքը հազրուողիւս երևոյթ էր նրա բազմաշարժար կեանքում:

Առաջին պատահող գիւղացին, որից Նիկօլը վախժախելով ողորմութիւն խնդրեց, զայրացած զուաց.

— Դու էլի էստե՞ղ ես, այ լպստած: Ախար ե՞րբ պէտք է մենք վերջապէս ազատուենք քո ձեռից:

Եւ ուր մտնում էր խեղճ մուրացիկանը, ամեն տեղ հայհոյում, ամեն տեղից դուրս էին անում նրան, առանց մի կողէկ տալու:

Ամբողջ գիւղը պատկերւոյց յետոյ, Նիկօլը ճանապարհ ընկաւ դէպի մերձակայ դաստակերանները: Այդ կողմը տանող ճանապարհների վերայ այնքան ցելի կար կիտուած, որ խեղճի հոգին դուրս էր գալիս, մինչև կարողանում էր իւր կռնափայտերը դուրս քարշել այդ թանձր ցելի միջեց:

Վերջապէս նա տեղ հասաւ... Բայց ափսոս այդքան չարչարանք... Դաստակերտի տէրերը նոյնպէս սկսեցին անխնայ հալածել նրան, կծու կատակներով ծաղրել նրա դառն արցունքները... Մի խօսքով այդ օրը սև էր լուսացել Նիկօլի համար: Այդ օրը կարծես նրա արևը պատրաստփում էր բողբոջին խաւարել: Եւ իրաւ որ, այդ օրը արև չէր երևում— ձմերային ցուրտ և մառախլապատ օր էր, այն օրերից մինը, երբ մտրդու սիրան սկսում է կուչ գալ, խեղճն անզայանում է, խելքը քար է կտրում և ձեռքը դատապարտվում է անշարժութեան, երբ ողորմութիւն տալու դէպք է ներկայանում...

Նրջակայքում ապրող բոլոր գիւղացիների դռները բաղձախելուց և ամեն տեղ էլ անողորմ հալածանքի ու անվերջ

Թուք ու մոլորի հանդիպելուց յետոյ՝ խղճով Նիկիոյ զատարկ ստամոքսով և բոլորովին ուժասպառ պառկեց մի ցեխոտ առուում, որը շրջափակելով Նիկոյի դաստակերտի ընդարձակ բակը, ցանկապատի տեղ էր ծառայում: Նիկոյն երեսի վրայ ընկած այդ ցեխոտ առուում, աշխատում էր չչարժուել, յուսալով որ այդպիսով մի կերպ կըթուլացնէ իւր տանջանքների ազդեցութիւնը և գէթ մի վայրկեան կ'աղատուի քաղցածութեան դառն, սրտամաշ զգայմունքից: Եւ ո՛չ մի անգամ այդ ողորմելին չհարցրեց իրեն, թէ ասխար ինչո՞ւ, ո՞ր մեղքի համար նա դատասարտուած է այդպէս տանջուելու:

Ապրելու բնազդումը նրա մէջ խիստ զարգացած էր: Նա միշտ երազում, միշտ սպասում էր այն խոհրդաւոր, անելութեայթ օգնութեան, որին ամենքն են սպասում իրենց նեղ վիճակում, առանց մտածելու, թէ ո՞րտեղից պէտք է հասնի այդ օգնութիւնը...

Բակում վաղվզում էին 10—15 սև հաւեր: Նրանք կտուցները տկոկացնելով դեմնին՝ շտապ-շտապ հաւաքում էին դէս ու դէն ցրուած հատիկները կամ քրքրելով մանրիկ հողակոյտերը՝ կուլ էին տալիս փոքրիկ, անատեսանելի միջատներին: Երկիրը էր կերակրում էր և՛ հաւերին, այն երկիրը, որ սնունդ է տալիս աշխարհիս բոլոր արարածներին...

Նիկոյն իւր անմիտ, սլցած աչքերով երկար նայում էր նրանց: Յանկարծ նրա գլխում ծաղեց մի չարախորհուրդ մտք. «Ե՛հ, ի՛նչ լաւ կը լինէր ձեռաց մի տապակած հաւ ուտել»:

Նիկիոյ մի քար վերցրեց և նետեց գէպի հաւերը: Ամենից մօտիկ քջուջ անող հաւը թևերը թրփրտացնելով՝ գլորուեց դեմին, իսկ մնացեալները սրտաճաք եղած փախան այս ու այն կողմը: Քաղցած մուրացիանը մի ակնթարթում շարժեց իւր կոնափայտերը և ազահարար յարձակուեց իւր որսի վերայ: Բայց ողորմելին հէնց որ

կուսցաւ արիւննաշաղափ փոքրիկ, սևուլիկ թռչնին վերցնելու, յանկարծ մէկը ետեւից, կարծես, դազանակով, այնպէս հասցրեց մէջքին, որ խեղճը հարուածի սաստկութիւննից վայր ընկաւ և տասը քայլաչափ զլորուելով՝ գնաց ընկաւ առուն: Նրա առջև կանգնած էր դաստակերտի տէր Շիկօն՝ աչքերն արիւն կոխած, փրփուրը բերանին: Կատաղած զազանի նման մոնչելով, նա անխնայ թակում էր անպաշտպան Նիկօլին, թակում էր այնպէս, որպէս կողոպտուած զիւզացիները միայն կարող են թակել:

Շիկօյի գոռում-գոչումները լսելով, վրայ հասան և նրա ծառաները: Սրանք լրացրին պակասորդը՝ աղցան շինելով քաղցած ու կիսակենդան Նիկօլի ոսկորները: Անգութ ծառաներն աշխատում էին իրենց զազանութեամբ գերազանցել տիրոջն:

Վերջապէս, երբ ամենքի բարկութիւնն անցաւ, երբ ամենքն էլ յոգնեցան իրենց այդ կատաղի տուրուզմիոցից, Շիկօն հրամայեց ծառաներին, որ Նիկօլին բանտարկին փայտատանը: Բարբարոս ծառաները տիրոջ աչքին դուր գալու համար, մի ակնթարթում, քաղցած զայլերի նման վրայ թափուեցան խեղճ մոլորացկանի վերայ և ձեռք ու ոտքից բռնելով, զնդակի պէս ներս շարտեցին նրան փայտատուն: Իսկ ծառաներից երկուսը գնացին ժանդարմներին կանչելու:

Թշուառ Նիկօլը ջարդուած ու կիսակենդան ընկած էր ցուրտ փայտատանը: Նա մնաց այնտեղ ամբողջ երեկոն, ամբողջ զիշերն ու առաւօտը: Ժանդարմները միայն կէս օրին յայտնուեցան: Նրանք կարծելով թէ Նիկօլը ներսից ընդդիմադրութիւն ցոյց կը տայ, սկսեցին դուռը մեծ զգուշութեամբ բանալ, որովհետև դաստակերտի տէր Շիկօն հաւատացրել էր, որ իբր թէ մոլորացկանը ինքն էր նրա վերայ յարձակուել, իսկ նա հազիւ հազ կարողացել էր այդ քաղցած աւաղակի ձեռքից ազատուել:

Վերջապէս ներս մտնելով փայտատուն՝ աւաղ ժանդարմը գոռաց.

— Է՛յ, վե՛ր կայ:

Բայց ողորմելին ցաւից իւր կսկծից չկարողացաւ ոչ մի անգամը շարժել: Նա միայն աննպատակ փորձ փորձեց ձեռքը տանել դէպի կոնափայտերը: Ժանդարմներն այդ վերագրելով նրա խորամանկութեանն ու խարդախութեանը, ամուր բռնեցին նրա ուսերից և հայհոյանքներով ու բռունցքներով զօրով ոտքի կանգնեցրին սովատանջ մուրացկանին:

Այդ բուպէին Նիկոլին պաշարեց այն անպատմելի սարսափը, որ միայն անպաշտպան որսն է զգում, տեսնելով իւր քթի տակ կանգնած արիւնածարաւ որսորդին: Նա ամբողջ մարմնով դողում էր, որպէս կատուի առջև անախկալ դուրս պրծած մուկը: Սակայն այդ երկիւղը ունեցաւ իւր օգուտը: Նա օգնեց Նիկոլին մի կերպ պահուելու իւր նեցուկների վերայ:

— Դէ՛հ, դնա՛նք—բարձրաձայն գոչեց աւաղ ժանդարմը:

Դաստակերտի բոլոր բնակիչները հաւաքուել էին տեսնելու, թէ ի՛նչպէս քարշ կրտային այդ անպիտան գողին: Կանայք սպառնում էին նրան բռունցքներով, իսկ աղամարդիկ ծաղրելով գոռում էին ետեւից.

— Վերջապէս ընկաւ. էլ դժուար թէ ազատուի:

Ճանապարհին հանդիպող գիւղացիները կանգ էին առնում և զլուխները շարժելով, ասում էին.

— Երևի մի բան է թոցրել:

Արդէն գիշեր էր, երբ ժանդարմները հասան կօնտօնի գլխաւոր սեղը: Նիկոլն այստեղ ոչ մի անգամ չէր եղած: Նա չէր կարողանում որոշ կերպով ներկայացնել իրեն ո՛չ պատահաճը, ո՛չ էլ պատահելիքը: Նոր-նոր շինութիւնները, նոր-նոր մարդիկ մի անբացատրելի սարսափ էին ազդում նրա վերայ: Նրա շուրջը անվերջ շարժողութիւն էր, բայց Նիկոլը մազի չափ անգամ բան չէր հասկալանում այդ բոլորից և լուռ էր, որպէս դիակը Եթէ նոյն իսկ մի բան էլ ասէր նա, հազիւ թէ նրա ասածից մարդ բան կա-

րողանար հասկանալ: Այսքան տարիների ընթացքում շատ հազիւ էր պատահում, որ նա փոխադարձաբար մի քանի րոպէ ասէր - խօսէր մէկի հետ: Նա համարեա դժուարանում էր բառերով ձևակերպել իւր մթին, խառնիճաղանճ մտքերը:

Նիկոլին գցեցին քաղաքացին բանտը:

Ժանդարմները մտածել անգամ չկամեցան, որ նա երեք օր ոչինչ չէր կերել և անխնամ թողին նրան մինչև առաւօտ...

Միւս օրը, երբ նրանք եկան բանտ, որպէս զի Նիկոլին տանն դատարան հարց ու փորձի ենթարկելու, նա արդէն քնած էր վերջին քնով...

— Թշուառահմն... — բացականչեց ժանդարմներից մինը, սառնասրտութեամբ շօշափելով նրա ցուրտ ղիակը...



III.

ՋԻՆՈՒՈՐ ԴԻԻԲԻԻՒՆ.

Պատերազմը վերջացել էր: Գերմանացիք արդէն գրաւել էին Ֆրանսիան: Երկիրը զողում էր, որպէս յաղթուած ըմբիշ, որ յաղթողի ծնկան տակ ընկած իզուր ճիգ է թափում ազատուելու:

Փարիզից— այդ ընկձուած, քաղցից ու բարոյական տանջանքներից միանգամայն քայքայուած այդ մայրաքաղաքից, այսօր դուրս էին գալիս երկաթուղու առաջին գնացքները, որոնք անցնելով զանազան գիւղերի ու շէնքերի մօտով՝ զխնում էին դէպի նոր սահմանները: Ծանապարհորդները վազօճների լուսամուտներից տխուր ու տրտում նայում էին աւերուած դաշտերին և այրուած տնակներին: Սմէն տեղ՝ թէ՛ տնակների առջև և թէ՛ ցանկապատների մօտ շարէ շար կանգնոտած կամ աթոռների վերայ շէք տուած՝ նստոտած էին պրուսական ղինուորները՝ պղնձէ սրածայր մեխերով սև սաղաւարտները գլխներին և ծխամորձ էին ծխում: Իսկ ոմանք նրանցից զբազուած էին զանազան պարամունդներով: Կային և խմբեր, որոնք իրար հետ այնպէս քաղցր ու հանդիստ զրոյց էին անում, կարծես թէ հէնց այստեղ էին ծնուել ու այստեղ էլ մեծացել: Երբ գնացքը քաղաքների մօտոցն էր անցնում, Ֆրանսիացի ծանապարհորդներն աղիխարշ սրտով նայում էին հրապարակների վերայ զօրախաղութեամբ պարապող պրուսական զօրադն-

գերին, որոնց ձայները, չնայելով երկաթուղու վշոց-շվոցին, դարձեալ հասնում էին ուղևորների ականջներին:

Դիւբիւին, որն իբրև քաջ և անձնանուէր զինուոր, մինչև Փարիզի պաշարման վերջին վայրկեանը հաւատարմութեամբ ծառայել էր մայրաքաղաքում, ազգային պահնորդ զօրազնդում, այժմ գնում էր Բելգիա իւր կնոջ և աղջկայ մօտ, որոնց նա՝ իւր հեռատեսութեան և քաղաքազիտութեան շնորհիւ, ուղարկել էր այնտեղ, քանի դեռ Փարիզը պաշարուած չէր: Քաղցն ու զրկանքը, որ ասես, մազի չափ անդամ չէին նուաղեցրել այդ հարուստ և խաղաղասէր վաճառականի ահազին փորը: Նրա զլսով շատ ու շատ փորձանքներ և փոթորիկներ էին անցել նրա աչքերը հազար ու մի սոսկալի անցքեր ու պատահարներ էին տեսել բայց նա այդ բոլորին դիմացել էր կատաղի անձնուրացութեամբ, միշտ բողբոջելով մարդկային զաղանութեան դէմ: Այժմ, երբ պատերազմն արդէն վերջացել էր, ուղևորուելով դէպի սահմանը, նա առաջին անգամն էր տեսնում պրուսացիների երեսը, չնայելով որ ծառայութեան ժամանակ սրբութեամբ կատարել էր իւր պարտքը և շատ ու շատ ցուրտ գիշերներ, իբրև պահնորդ, փետացել էր դրսում:

Նա կատաղի բարիութեամբ նայում էր այդ սպառազինուած մեծամօրուններին, որոնք փառաւոր կերպով տեղաւորուել էին Ֆրանսիական հողի վերայ, ինչպէս իրենց տանը: Նայում էր և մի տեսակ անզօր, հայրենասիրական տենդի մէջ ընկնում՝ միևնոյն ժամանակ զգալով իւր մէջ ողջախոհութեան այն նոր բնագոյումը, որն այդ օրից Ֆրանսիացիք էլ մոռացութեան տալ չկարողացան:

Վազօնի առանձին բաժնում նստած էին երկու անգլիացիներ, որոնք Ֆրանսիա էին եկել տեսնելու այն անբախտ ու աւերուած վայրերը, ուր կատարուել էին առիւնալի անցքերը: Նրանք նստած էին միմեանց կողքին և իրենց հանդարտ ու հետաքրքիր աչքերով դիտում էին այն

ամենը, ինչ որ հանդիպում էր ճանապարհներին: Նրանք երկուսն էլ խիստ հաստամարմին մարդիկ էին: Համարեա առանց մի բոպէ շունչ առնելու, նրանք հէնց մի գլուխ իրենց շվշվան լեզուով խօսում էին մի ինչ-որ բանի մասին և ժամանակ առ ժամանակ «Ուղեցոյցի» թերթերը դէս ու դէն շուռ տալով՝ աշխատում էին ճանաչել նրա մէջ նկարագրուած տեղերը:

Բայց ահա մի փոքրիկ քաղաքի կայարանի մօտ գնացքը կանգ առաւ: Լազիւ մի քանի վայրկեան անցած՝ յանկարծ թուրը շրխշրիկացնելով, հպարտ-հպարտ վազօնը մտաւ մի գերմանացի սպայ: Նա մի բարձրահասակ տղամարդ էր: Նեղ նշանադրեստը կուչ էր ածում նրա դուրս ցցուած կուրծքը: Մեծ միրուքը նրա երեսը ծածկում էր մինչև աչքերը: Նրա շէկ մազերը կարծես պլպլում էին. իսկ երկար բեղերը, որոնք աւելի բաց-շիկազոյն էին և բրդի պէս խճճուած, նրա մազմզոտ երեսը երկու մասն էին բաժանում:

Անգլիացիներն առաջ մի խորադնին հայեացք ձգեցին գերմանացի սպայի վերայ և ապա սկսեցին ոտքից մինչև գլուխ լաւ տնտղել նրան: Նրանց երեսներին խաղում էր հետաքրքրութեան ժպիտը: Այն ինչ Դիւբլին սուտ ու մուտ անձնատուր եղաւ լրագրի ընթերցանութեան: Ժանդարմ տեսած գողի նման, նա քաշուեց անկիւնը և առանց ձայն-ծպտուն հանելու, նստեց այնտեղ:

Գնացքը շարժուեց:

Անգլիացիներն առաջուայ նման զարձեալ սկսեցին դէսից-դէնից խօսել և «Ուղեցոյցի» մէջ ուշե ուշով որոնել պատերազմի տեղերը: Երբ նրանցից մէկը յանկարծ ձեռքը պարզելով՝ ցոյց տուեց ընկերօջը հեռուում նկատուող փոքրիկ զիւղը, գերմանացի սպան անքաղաքավարութեամբ ոտներն առաջ մեկնելով, իսկ թիկունքը դէմ գցելով նստարանի մէջքին՝ աղջատուած Ֆրանսերէն լեզուով սասաց.

— Ես մի զիւժին Ֆրանսիացիներ կոտորեցի այդ զիւղում և հարիւր հոգուց աւելի զերի տարայ:

Անգլիացիները խիստ հետաքրքրուած՝ բացականչեցին.

— Աօօ, ի՞նչպէս է այդ զիւղի անուէր:

— Վարցբուրգ, — պատասխանեց սպան: — Բայց զիտէ՞ք, ի՞նչպէս էի ես վախկոտ Ֆրանսիացիներին զուրս անում այդ զիւղից: — Ալանջներից բռնած, — շարունակեց նա՝ լըբարար քթի տակ ծիծաղելով և աչքը զցեց Նիւբիւն:

Գնացքն առաջ էր գնում, անցնելով բազմաթիւ զիւղերի ու շէների մօտով, որոնք զրաւուած էին թշնամի զօրքիրով: Ամեն տեղ աչքի էին ընկնում պրուսական զինուորները: Նրանք շարուած էին ճանապարհների ափերին, ցանկապատների մօտ, իսկ շատերն էլ պանդոկների ու սրճարանների առջև խմբուած՝ խօսում, հանաքներ էին անում: Մի խօսքով պրուսական զինուորներն այնպէս էին պատել Ֆրանսիական երկիրը, ինչպէս ճպուռները պատում են Ալժիրի դաշտերը:

Սպան հպարտութեամբ ձեռքը վագօնի լուսամուտից զուրս մեկնելով՝ ասաց.

— Օ՛, եթէ ես զլիաւոր հրամանատար լինէի, ես կը նուաճէի Փարիզը և անխնայ կ'այրէի ու կ'ոչնչացնէի այդ անպէտք մայրաքաղաքը, որպէս զի Ֆրանսիայի հետքն անդամ չը մնար:

Անգլիացիները նրա տեղ ամաչելով, քաղաքավարութիւնից դրդուած միայն արտասանեցին իրենց անմոռանալի. Աօօ, իէ:

— Քսան տարուց յետոյ, — կոպտութեամբ շարունակեց սպան, — ամբողջ Եւրոպան մերը կը լինի... Պրուսիան երկրազնտիս երեսին ամենագօրեղ տէրութիւնն է...

Նրա անմիա և ինքնահաւան ողևորութիւնը հետզհետէ սաստկանում էր և ինչեք ասես չէր զուրս տալիս նա... Սակայն ձանձրացած անգլիացիներն էլ ոչէնչ չէին պատաս-

խանութիւն: Նրանց դէմքերն արտայայտում էին խորին անուշադրութիւն և անտարբերութիւն:

Սպան սկսեց ինքնաբաւական կերպով ծիծաղել...

Յետոյ նա առաջուայ պէս դարձեալ մէջքի վերայ ետ ընկաւ, ոտներն առաջ մեկնեց և սկսեց ինքն իրեն յուզուել, տալին ու վրայ լինել, աջ ու ձախ սոսկալի շանթեր արձակել: Նա շանթեր էր արձակում ընկճուած Ֆրանսիայի դէմ՝ իւր այդ ուժասպառ և հողի հետ հաւասարուած թշնամու դէմ, նա շանթեր էր արձակում մի ժամանակ ջարդ ու փշուր եղած Աւստրիայի դէմ, նա շանթեր էր արձակում դեպարտամէնաների կատաղի, բայց անզօր պաշտպանութեան դէմ...

Գերմանացի սպան մեծամտութեան գաղաթնակէտին էր հասած...

Վերջ ի վերջոյ նա հպարտութեամբ յայանեց, որ Բիւմարկը դիտաւորութիւն ունի Ֆրանսիացիներին խլած թընդանօթներին մի երկաթաշէն քաղաք հիմնել:

Խօսակցութեան բոլոր ժամանակը նա աչքը չէր հեռացնում Դիւբիւից: Բայց որպէս զի աւելի խորը խայթէ նրա ինքնասիրութիւնը, նա ոտները մեկնեց այն կողմը, ուր նստած էր Դիւբիւին:

Դիւբիւին բարկութիւնից ու ամօթից կարմրատակելով, երեսը շուռ տուեց:

Անզխացիներն էլ ամենեւին չէին հեռաբքըրվում, թէ ի՛նչ էր կատարվում իրենց շուրջը: Նրանք միանգամայն անտարբեր էին:

Գերմանացի սպան մի քանի լոպէ լուռ էր:

Բայց ահա նա զրպանից հանեց ծխամորձը և դառնալով Ֆրանսիացուն կոպտութեամբ հարցրեց.

— Դուք ծխախոտ չունի՞ք:

— Ա՛յ—կցկտուր կերպով պատասխանեց Դիւբիւին:

— Երբ դնացքը կանգ կ'առնի, ինչդրեմ, վեր կէէք և առէք ինձ համար:

Միւրիւին ամբողջ մարմնով ցնցուեց...

— Ես ձեզ մի բան կը բաշխեմ՝ ձեր նեղութեան համար, —
աւելացրեց սպան և հեգնօրէն ժպտաց...

Տողեկառքը շուացրեց և կամայկամայ սկսեց ընթացքը
մեղմացնել: Գնացքն՝ անցնելով կայարանի պրուած շե-
նութիւնների մօտով, կանգ առաւ: Գերմանացի սպան խ-
կոյն վեր թուաւ անդից, վազօնի դուռը բացեց և բռնելով
Միւրիւի թեքից՝ ասաց.

— Ղէ, շնու արէք, զնացէք ծխախոտ առէք ինձ հա-
մար: Մուտով...

Ամբողջ կայարանը բռնուած էր սլրուսական զօրքերով:
Զինուորները ցանկապատի երկարութեամբ շարուած՝ հան-
դարա աչքով նայում էին զնացքին:

Միւրիւին արձանացած կանգնած էր դռան մէջտեղում:
Նրա գէմքը կտաւի գոյն էր ստացել...

Տողեկառքը նորից շուացրեց և հէնց որ զնացքը ճա-
նապարհ ընկաւ, Միւրիւին կատաղի ոյժով դուրս խլեց
իւր թեքը գերմանացի սպայի ձեռքից, և մի ակնթարթում
վազօնից ցած թռչելով, առանց ուշք դարձնելու կայարա-
նապետի գոռում-գոչումներին, վազեց դէպի հարևան վա-
զօնը:

Կէս ժամից յետոյ զնացքը կանգնեց մի այլ կայարանի
մօտ: Եւ ահա յանկարծ բացուեց այն վազօնի դուռը, ուր
նստած էր Միւրիւին, և ներս մտաւ գերմանացի սպան:
Նրա ետեւից, փնչացնելով և հտաքրութիւնից աչքերը լայն-
լայն բացած՝ վազօնը մտան նաև երկու անդլիացիները:
Գերմանացին զնաց նստեց Ֆրանսիացու հէնց դէմ ու գէմը
և ծաղրական ժպիտը գէմքին, հարցրեց.

— Դուք չը կամեցաք էլ՞ իմ խնդիրքը կատարել:

Միւրիւին ոչինչ չը պատասխանեց:

Լսուեցաւ շողեկառքի սուլոցը: Գնացքը ճանապարհ ըն-
կաւ:

— Դէ որ այդպէս է, ես ձեր բեղերով կը լցնեմ իմ ծխամորձը, — զայրացած դոչեց սպան և ձեռքը տարաւ դէպի Դիւբիւիի երեսը:

Մնզլիացիներն իրենց անտարբեր և անշարժ աչքերով նայում էին այդ տեսարանին:

Գերմանացին արդէն Դիւբիւիի բեղը գցել էր ձեռքը և բաւականութեան ժպիտը դէմքին՝ հէնց այն է ուզում էր ձգել, երբ յանկարծ Փրանսիանցի զինուորը, որպէս վերաւոր առիւծ, մի սոսկալի մանչիւն արձակեց, աչքերն արիւնով լցուած՝ մի անկնթարթում վեր թռաւ տեղից և բռնելով գերմանացի սպայի կոկորդից, տաշելի նման շարսոց նրան նստարանի վերայ: Դիւբիւիի բերանը փրփուր կոխեց: Ականջատակերն ուռան, և նա կատաղութիւնից իրեն միանգամայն կորցրած՝ մի ձեռքով ամուր սեղմեց սպայի կոկորդը, իսկ միւս ձեռքով սկսեց անխնայ ծեծել ու արիւնլուայ անել նրա քիթ ու պոռնկը...

Գերմանացի սպան աշխատում էր պաշտպանուել, սուրը մերկացնելու փորձեր էր անում, որպէսզի կարողանայ ետ մղել իւր հակառակորդին, բայց իրտեղից—Դիւբիւին իւր ահագին փորի ծանրութեամբ միանգամայն ճնշել տափակեցրել էր նրան և տուր թէ կրտաս՝ առանց շունչ քաշելու, թակում, ջարդում էր, ուշք չը դարձնելով անգամ թէ ի՛նչ տեղին էին դիպչում հարուածները: Գոռողամիտ գերմանացին, ճխլուած գորտի պէս, կպել էր նստարանից և խրրխրուացնելով՝ արիւնախառն թքի հետ բերանից դուրս էր թափում ջարդ ու փշուր եղած ատամները: Նա շարունակ սղատուելու փորձեր էր անում, բայց իզուր—դէն շարտել իւր վերայից այդ կատաղի հաստափորին—անհնար էր:

Մնզլիացիները, որ մինչև այդ րոպէն հեռուից էին նայում, մի քանի քայլ առաջ զնացին, որպէսզի տւելի լաւ դիտեն այդ սոսկալի դրամայի բոլոր տեսիլները: Բաւականութեան

և հետաքրքրութեան ժպտը երևաներին, նրանք կանգնած էին կռուողների առջև և այնպէս էին նայում, կարծես, պատրաստվում էին իրար հետ զրազ գալու, թէ ո՞րը նրանցից յաղթող կը հանդիսանայ:

Բայց ահա Նիւբիւին բոլորովին հալից ընկած՝ ձեռք վերցրեց իւր հակառակորդից և, առանց մի խօսք արտասանելու, գնաց նստեց իւր առաջուայ տեղը—անկիւնում:

Նիւբիւիի այդ յանկարծակի կատաղութիւնն այն ատիճանն ապշեցրեց զերմանացի սպային և այնպէս խորտակեց նրա սանձարձակ ինքնավստահութիւնը, որ նա այլ ևս չը համարձակուեց յարձակուել իւր հակառակորդի վերայ: Նա միայն հազիւ հալ շունչը ետ բերելով՝ խեղզուած ու գողգոջիւն ձայնով շնջեց.

— Եթէ... դուք չէք մենամարտիլ ինձ հետ և... այն էլ ատրճանակով... ես ձեզ կըսպանեմ...

— Համեցէ՛ք, ես պատրաստ եմ... երբ կամենաք, — կորուկ կերպով պատասխանեց Նիւբիւին:

— Մենք մօտենում ենք Ստրասբուրգին... ես այնտեղ կը գտնեմ ինձ համար մարտավիաներ: Մենք բաւականին ժամանակ կ'ունենանք և մինչև գնացքի մեկնելը կարող ենք մենամարտել:

Նիւբիւին, որի քթածակերը յոգնածութիւնից ու վերգովմունքից լայնանում և սեղմվում էին, դարձաւ դէպի անդլիացիները:

— Կը բարեհաճէ՞ք մի թեթև ծառայութիւն մատուցանել ինձ և իմ մարտավիաներս լինել այս գործում:

— Աօօ, ուէզ, — պատասխանեցին անդլիացիները միաձայն:

Գնացքը կանգ առաւ Ստրասբուրգ կայարանի մօտ:

Կերմանացին խեղճ և եթ տախտակամածի (պլատֆորմա) վերայ խմբուած սպաների մէջ ճանաչելով իւր երկու ընկերներին, ուղարկեց նրանց ատրճանակներ բերելու:

Մի քանի րուպէից յետոյ նրանք բոլորն էր արդէն գտնվում էին քաղաքից դուրս: Անդլիացիները շարունակ ժամացոյցին էին նայում ու քայլերը շտապեցնում, երկիւղ կրելով, որ զնացքից կարող են ետ ընկնել:

Սհա նրանք տեղ հասան—պարսպի ետեր, մի տափարակ տեղ:

Մարտավիաները, մանաւանդ անդլիացիները, ժամանակ չը կորցնելու համար, մի րուպէում ամեն ինչ կարգի դրին: Դիւբիւիին իւր հակառակորդից քսան քայլ հեռու կանգնեցնելով, ասրճանակ տուին ձեռքը և ապա իրենք մի կողմը քաշուելով՝ հարցրին.

— Պատրաստ էք:

— Սյո՛, —պատասխանեց նա, նկատելով որ անդլիացիներից մինը ամպհոզվանի է բացել արեգակի կիղիչ ճառագայթներից ազատուելու համար:

— Դէ՛... նշան տուին մարտավիաները միաձայն:

Դիւբիւին արձակեց:

Ատրճանակը որոտաց, և նա թանձր ծուխի միջով նկատեց, թէ ինչպէս զերմանացի սպան օրօրուեց, ձեռքերը վեր բարձրացրեց և զրմփալով՝ փռուեցաւ զետին:

Նա անզնուտեղը սպանուած էր:

Անդլիացիներից մինը բացականչեց. «Աօօ», իսկ միւսը, որ ձեռքում շարունակ բռնած ունէր ժամացոյցը, առաւ Դիւբիւիի թեր և շտապեց դէպի կայարան: Ատխնալով զնացքից ետ ընկնել, նրանք սկսեցին բռուեցքները սեղմած և արմունկները կողքերին կպցրած՝ վազել, ինչպէս որ զինուորներն են վազում:

Անդլիացիներից մէկը հրամանատարութիւն էր անում. «Մէ՛կ, երկու, մէ՛կ, երկու»...

Պէտք էր տեսնել այդ երեք հաստափորների խմբակը:

Երբ նրանք հասան կայարան, զնացքն արդէն մեկնում էր: Երկքն էլ շտապով թռան հէնց առաջին պատահած

վաղօնը և երբ կայարանն աչքից ծածկուեց, անդլիացիները
զըլենները զուրս հանելով լուսամուտից, գլխարկները վերց-
րին և ուրախ-ուրախ օգուժ շարժելով, սկսեցին աղաղա-
կել. «Հի՛ պ, Հի՛ պ, Հի՛ պ»:

Յետոյ հանդարտուելով, մէկը միւսի ետեւից, հանդիսա-
ւոր կերպով մօտեցան Իլւբիւրին և ամուր սեղմելով նրա
ձեռքը, սրտաշարժ ձայնով շնջեցին.

«Կեցցե՛ս դու, ճշմարիտ հայրենասէր, քսի՛ջ զինուոր»:

Ա.Ղ. ԾԱՏՈՒԻԵԱՆ:

Մոսկուա.

Ե Ր Գ.

Մորմեքիչ ձայնէր երգիս լալազին,
Փարատէք թախիժ սրտիս դառնազին.
Աղի արցունքնէր, թափվէք աչերից,
Զսպէք հեկեկանք սեղմված իմ կուրծքից...

Ա՛խ, մինչ կ'ըբ անբախտ, թախծալից ես կեանք
Պիտ վարեմ, պիտ կրեմ հանապազ տանջանք.
Ե՛րբ մատաղ սէրն ինձ պիտի ժպտայ,
Եւ կ'ըբ տառապանք հոգոյս վերջանայ:

ՆԺԴԵՆ.

Թիֆլիս. 89 թ. յունվարի 16.



* * *

I.

Մեր դաշտն ու հողիս ձիւնի մէջ թաղուած,
 Ծածկուած են սպիտակ սառը պատանքով,
 Մէզ, մառախուղով երկինքն է պատած,
 Գետը շվթայած սառցէ կապանքով:
 Սև սև ամպերի թանձր ծալերից
 Արևի շողերն էլ չեն թափանցում,
 Դառնաշունչ հողմը մնայլ հիւսիսից
 Փչում է կատղած և տխուր սուլում:
 Եւ շուրջ տիրում է համր տխուրթիւն,
 Վճիռ վտակներն էլ չեն կարկաջում,
 Ռհ, չարագուշակ է այս լուրթիւն,
 Միայն աղուաններն անախորժ ձջում:
 Մարդիկ քաշուել են իրանց աները
 Եւ տաքանալով օրհնում են կրակը,
 Կարծես մոռացած լինին խեղճերը
 Զերմութեան աղբիւր լոյս արեգակը:—

II.

Բայց կար ժամանակ, այլ էր պատկերը.
 Ուրախ ժպտում էր շքեղ բնութիւն,
 Երկինքը անամպ, ծաղկում երկիրը
 Եւ շուրջ պայծառ լոյս ու կենդանութիւն:
 Հովիտն ու դաշտը կանաչազարդած,
 Նման գեղեցիկ դրախտին փափկութեան,
 Յիշեցնում էին մեզ նախաճնողաց
 Անդրանիկ օրեր սուրբ երջանկութեան:

Եւ կարկաջելով գլորվում էին
 Բիւրեղի նման մաքուր վտակներ,
 Օգը երգերով թնդեցնում էին
 Դեղձանիկ, սոխակ ու ծիծեռնակներ:
 Եւ երջանիկ էր մարդը աշխարհում
 Միշտ գեղաժիժաղ կապոյտ երկնի տակ,
 Ուրախ աշխատում, խաղաղ կեանք վարում—
 Օրհնած էր նորա քրանքի վաստակ:

III.

Բայց այդ երբեմն էր: Սառնամանիքը
 Տիրապետել է բոլոր բնութեան,
 Դրոշմել է վերան իւր սև կնիքը,
 Շուրջ սարածել է քուն մեռելութեան:
 Աստուած իմ, ի՛նչպէս երկար է տևում
 Այս ձմեռը, միթէ սորան վերջ չկայ:
 Արիւնը սառեց մեր հրակներում,
 Կորած ենք, թէ շուտ գարունը չգայ:
 Ի՛նչպէս ցաւում է զիւրադգաց սիրտը,
 Երբ միայն անցեալովն է միտիթարվում,
 Երբ ներկան լցնում է նրա կարօտը.
 Եւ ապագային անվստահ նայում:
 Բայց անստասն է բնութեան օրէիքը.
 Ձմրան պէտք է միշտ գարուն հետևի.
 Զըյուսահաստուխնք, յոյսն է մեր զէիքը,
 Անշուշտ սև օրը երկար չի տևի:

Գ. ԲՍՐԽՈՒԴԱՐԵԱՆ:



I.

Ս Ի Բ Ո Յ Վ Շ Տ Ե Ր.

(Օր. Սօջիա Դ-ին)

I.

Որպէս վառ կոկոն քաղցրաբոյր վարդի,
 Նոր փթթում էիր կեանքի ծաղկոցում,
 Երբ հեզ հայեացքդ շնչեց ինձ հողի
 Եւ սիրոյ կայծը վառուեց իմ կրծքում...

Եւ այդ լուսնից եւ ոգեշնչուած
 Քանի՜ անկեղծ երգ քեզ նուիրեցի,
 Ո՛հ, քանի անգամ, Սէր իմ անմուսաց,
 Զերմ արտասուքով կուրծքդ թացեցի...

Բայց երբ քեզ ժպտաց պայծառ արշալոյս,
 Նոր զարնան արև դու ողջունեցիր.
 Աւանդ խեղճ երգչես... խորտակուեց իմ յոյս, —
 Դու անկեղծ սէրըս ոսկուն զոհեցիր...

1888 թ. 20 մայիսի

II.

Դարձեալ ժպտաց պայծառ զարուն
 Եւ խոր նիրհած աշխարհին
 Նա պարզեց նոր կեանք եռուն,
 Նոր խինդ ու սէր դրախտային:

Եւ ամենքը ազատ, ուրախ
 Զքնաղ գրկում բընութեան
 Ճաշակեցին սէր անխարդախ,
 Սէր փոխադարձ, անսահման:

Միայն հողիս մընաց խաւար
 Գարնան այգ վառ հանդիսում.
 Նա յուսախաբ, նա վշտահար
 Ողբաց սիրոյս աւերում...:

1888 թ. 10 մայիսի.

III.

Սիրավառ սոխակն իւր անուշ երգով
 Սէր էր ներշնչում գեռաբոյս վարդին.
 Սիրահար երգին իւր անկեղծ քնարով
 Սէր էր նուիրում մատաղհաս կուսին:

Եկաւ վառ զարուն. և վարդը ծաղկեց,
 Նրա ջերմ սիրով յաղեցաւ սոխակ.
 Անցան տարիներ... և կոյսը փթթեց,
 Բայց երգչի սէրը մընաց անպսակ...:

1888 թ. 15 ապրիլի.



II.

ՉԱՐԱՏԱՆՋ ԶՈՀ.

Աւանդ, դու մեռար, թանկագին ընկեր,
 Բայց մեռար, որպէս մի զոհ չարատանջ.
 Ո՛հ, ինչո՞ւ խաբուած՝ դու սիրանուէր
 Բացիր քո կուրծքը ամենքի առաջ....

Ինչո՞ւ մանկական անկեղծ հաւատով
 Դու ձեռք պարզեցիր դաւաճաններին,
 Եւ եղբայրական անձնաղոհ սրտով
 Համբոյր դրոշմեցիր չար շրթունքներին....

Ինչո՞ւ չարանենդ խաբերայութեան
 Դու զոհ բերեցիր քո սուրբ խորհուրդներ,
 Եւ քսու մարդկանց կեղծ մտերմութեան
 Դու ընծայեցիր և՛ հաւատ, և՛ սէր:

Մի՞թէ ծանօթ չէր քեզ այս չար աշխարհ,
 Այս անվերջ ծովը գառնութիւնների,
 Ուր ազատ միտքը, ազատ գաղափար,
 Ո՛ղջը զոհուած է զաղեր կրքերի....

Ուր ստրկութիւնը, որպէս կուռ շղթայ,
 Խեղդած է և՛ սիրտ, և՛ վեհ ձգտումներ.
 Ուր սև նենգութեան թոյնը անխնայ
 Մարդկային կեանքը դարձնում է աւեր:

Ուր առաքեալը սուրբ գաղափարի
Քարկոծուած զոհ է անմիտ չարութեան,
Եւ անկեղծ ձայնը ճշմարտասէրի
Ճնշում է անարգ բռնութեան շղթան:

Ուր չկայ անկեղծ ոչ մտերմութիւն,
Ո՛չ բուռն ձգտում անձնազոհութեան,
Ուր անարգուած է սուրբ ճշմարտութիւն
Եւ փառքը շեջած առաքինութեան...:

1888 թ. 25 մարտի.

III.

* * *

(Նմանողութիւն Հայնէին)

Այս աշխարհին, ո՛վ նազելիս, դու մի՛ հաւատար,
Նորա բոլոր խորհուրդները խարդախ են ու չար.
Նա ծաղրում է քո կուսական պատկերը սիրուն,
Պարսաւում է մնասաղ սրտիդ թելերն զգայուն:

Այս աշխարհը, նազելիդ իմ, կոյր է ու անմիտ,
Նա չէ՛ կարող գնահատել քո լացն ու ժպիտ.
Նա ի՛նչ զիտէ, քո մի քնքոյշ ջերմ համբոյրի մէջ
Որքան սիրոյ հուր է եռում — հուր պայծառ, անշէ՛ջ...

Ա.Ղ. ԾԱՏՈՒՐԵԱՆ:

1889 թ. 30 մայիսի.



ԼԱԻ ԲԺՇԿԵՑԻՆ.

I.

Չուհհակ Թորոսը ծեր էր, շատ ծեր. նրա մէջքը ծռուել էր, գլուխն ալեղարդուել էր կրկար, բամբակի նման սպիտակ մօրուքը իւր օձապտոյտ փայլուն մազերով բոլորովին ծածկում էր նրա ներս ընկած կուրծքը և սպզած կամ նստած ժամանակ մինչև ծնկներն էր հասնում: Փափուկ և դրաւիչ էր նրա խորշումած գէմքի գծագրութիւնը, որպիսին ունենում են առհասարակ բարի ծերունիները: Եւ իրաւ՝ Թորոսը շատ բարի, ազնիւ և անմեաս մարդ էր. նա ապրում էր իւր համար սկանջը պէճ և սիրտը հանդիսաւ: Չնայելով որ նա աղքատ էր, բայց ամբողջ թաղը սիրում էր նրան, յարգում էր նրան: Երեխաները մանաւանդ շատ էին սիրում նրան և միշտ «բիձա Թորոս» էին կոչում: Նա անգամ ամառուայ խաղաղ գիշերներին, երբ ցերեկուայ տապից յետոյ օդը կամայ-կամայ սկսում է զովանալ, երբ հովասուն զեփիւռը ժամանակ առ ժամանակ մեղմիկ, քնքրշիկ, կարծես, ամենայն զգուշութեամբ, ակտորժեղի կերպով շոյում է մարգու տաք գէմքը. երբ չղջիկը թեւերը թափահարելով, որպէս ուրուական, մի բոպէ երևում է մարգու աչքին և խկոյն էլ չքանում գիշերային մթութեան մէջ, — բիձա Թորոսը դուրս էր գալիս իւր անից կամ, աւելի ճիշդ ասած, խրճից և նստում էր դրան շէմքին: Իսկոյն թաղի երեխաները հաւաքվում էին, մերկ գեանի

վերայ ծայրագատիկ նստելով՝ շրջապատում էին նրան և միաբերան խնդրում էին, որ մի հէքիաթ ասէ: Եւ բիձա Թորոսը բայ էր անում իւր հէքիաթների տոպրակի բերանը: Նա հէքիաթների բաւական սրաշար և պատմելու զարմանալի ընդունակութիւն ունէր. իւր ունկնդիրներին յափշտակել և ազդել զիտէր. և երեսաները շատ անգամ այնպէս յափշտակվում էին, այնպէս ոգևորվում էին, որ մինչև կէս զիշեր նրանից ձեռք չէին վերցնում: «Մէկն էլ ասա՛, բիձա ջան, մէկն էլ ասա՛», խնդրում էր ամեն մէկը. և բիձա Թորոսը մի հէքիաթ էլ էր ասում, մինչև որ, վերջապէս, երեսաների ամեն մէկի մայրը իրենց դռնից բարձրաձայն կանչում էր իւր որդուն. — «Տիղրան», կամ «Գի՛գօ», կամ «Աւասօ» և այլն, «եկէք, քնեցէ՛ք, կէս գիշեր դարձաւ. եզուց վաղ էք վեր կենալու»: Երբեմն էլ այդպիսի գիշերներին, երեսաների տեղ, նրա շուրջը հարեան տղամարդիկն էին հաւաքվում, օրինակ՝ «խարազ» Պետօն, «նաղշքար» Դաւիթը, «բաղալ» Սարգիսը, «խանջալազ» Ասատուրն և ուրիշները, և սկսում էին խօսք ու զրոյց բանալ անցած-գնացած օրերի մասին: Այդպիսի դէպքերումն էլ միշտ Թորոսն էր կենտրոն կազմում, ամենից շատ տեղեկութիւններ նա էր հաղորդում, որովհետև ամենից ծերը նա էր, ամենից շատ բան նա էր լսել նա էր տեսել:

Շատ, շատ օրեր էին անցել այն ժամանակից, երբ դեռ թարմ էին իւր ուժն ու աշխուժութիւնը և նա պարապում էր իւր արհեստով—ջուլհակութեամբ: Բաւական չլինելով ցերեկուայ իւր աշխատանքից, նա ձմեռուայ երկար գիշերներին էլ տքնում էր. այն ժամանակ, երբ հարեանները տաք անկողնում վաղուց արգէն քուն էին մտած, նա իւր հնադարեան Դաւիթի առաջ նստած, ոտները հորի մէջ կախած՝ մաքորը հինաձի միջով աջ ձեռքից ձախն էր դրում, ձախից — աջը: Ծրագը սլալում էր նրա մօտ՝ մի կտարած արկղի վերայ դրած. նրա աղօտ լոյսը հազիւ լուսաւորում

էր Հինաճն ու խրճիթը և յաասկի, պասերի ու անաս-
տազի վերայ ահագին ուրուագծերով նկարում էր Գաղթեանի
օիւնների մոայլ ստուերները: Եւ երկար, շատ երկար ժա-
մանակ խրճիթի մեռելային լուսթեան մէջ երբեմնակի ընդ-
հատումներով լսվում էր ճախարակների միահաւասար ճըռ-
ճոցը: Այո՛, ոյժի և աշխատանքի այդ դառն և միւլնոյն
ժամանակ քաղցր ժամանակները վաղուց արդէն անցել-
զնացել էին: Թորոսը ծերացել, ուժից ընկել էր, նրա աչ-
քերն այլ ևս այնպէս չէին տեսնում, ինչպէս աշխատաւոր-
րին է պէտք, նրա ձեռքերը դողում էին և այլ ևս չէին
կարողանում մաքոքը կարգին բանեցնել: Նրա գործիները
մնացել էին անգործ.— փոքրիկ, երկապակեայ պատուհանի
վերայ թափած էին մասրաները, խրճիթի անկիւնում իւր
ծոռած անիւով ընկած էր ջահրան, իսկ խրճիթի համարեա
թէ մէջտեղը, երգիլի տակ, կարծես, խոր քուն մտած՝
կանգնած էր Գաղթեանը: Ծրագն այլ ևս չէր պլպլում, նրա
մօտ, նրա ճոճոան ճախարակներն այլ ևս չէին խանդա-
լում խրճիթի զիշերային լուսթիւնը, նրա վերայ թող էր
նստել. նա կանգնած էր խրճիթի մէջ իւր ցից փայտերով,
առանց Հինաճի, որպէս մի կմախք: Ամեն անգամ, երբ Թո-
րոսը նայում էր այդ կմախքին, իսկոյն անցեալի յիշողու-
թիւնները, որպէս հրաշալի երայներ, վերանորոգվում էին
նրա զխում և ճնշում էին նրա սիրտը, որպէս մի ան-
դառնալի, անգին կորուստ: Նաբաթ զիշերները իւր դող-
դոջիւն ձեռքով նա այդ սիրելի կմախքի վերայ երկու յըս-
տակ մտ էր վառում, խունկ ծխում և ծանր, անկանոն
խաչակնքիւով երեսը, ջերմեռանդութեամբ մրթմրթում էր
իւր սովորական ազօթքը:

II.

Նա մէկ աղջիկ ունէր անունը Մարթա: Դա նրա մի-
նուճար որդին էր. այլ ևս ոչ ո՞ք, ոչ ո՞ք չունէր նա աշ-
խարհիս երեսին. Սասուած ամենքին էլ խել էր նրանից
և բաշխել էր միայն այդ աղջիկը: Եւ ի՛նչպիսի անձնուրա-
ցութեամբ, ի՛նչպիսի անհուն սիրով նա կապուած էր դրա
հետ: Մարթան էր նրա կեանքն ու յոյսը, Մարթան էր
նրա ուրախութիւնն ու մտիթարութիւնը: Եւ ի՛նչպէս կա-
րող էր ուրիշ կերպ լինել, քանի որ նրա ծերութեան հա-
սակում Մարթան էր միայն նրան նայողն ու խնամողը,
նրան հագցնողն ու կերակրողը:

Մարթան մօտ քսան և հինգ տարեկան աղջիկ էր: Նա
մի աչքի ընկնող զեղեցիութիւն չէր ներկայացնում, բայց
ով տեսնէր նրա բարձր հասակը, բարակ, ձկուն իրանը,
դէմքը՝ իւր զրաւիչ դժազրութեամբ, իւր միշտ սեղմած,
տժգոյն շրթունքներով և համեստ ու խելացի, բայց միշտ
տխուր, կարծես, թախծալից աչքերով, — իսկոյն և եթ
սրտի խորքում դէպի նա համակրութիւն կրգգար:

Նա զեռ ամուսնացած չէր, չնայելով որ մի քանի դէպ-
քեր էին եղել ամուսնանալու, և երբէք էլ մտադիր չէր
ամուսնանալ: Ի՞նչ էր արդեօք դրա պատճառը, — այդ ոչ
ո՞ք չգիտէր. նա այնպիսի բնաւորութիւններից էր, որոնց
նկրքին, հոգեկան աշխարհն ընդ միշտ փակ է ուրիշների
առաջ: Նա չէր սիրում, երբ հարեան ընկերուհի-աղջիկները
խօսում էին ամուսնութեան մասին և առաւել ևս, երբ
հարցնում էին նրանից, թէ ինչո՞ւ նա չէ ամուսնանում.
այդպիսիներին նրա սովորական պատասխանը լինում էր —
«Ձեզ ի՞նչ»: — «Աղջի՛, ականջներիդ բամբակը հանեցէ՛ք, Մար-
թան կոյս պէտք է դառնայ, կոյս» — կանչում էր ընկերու-
հիներից մէկը, բարձրաձայն հռհռալով: Մարթան այդ խօս-
քերի վերայ աւելի էր սեղմում իւր տժգոյն շրթունքները,

վայր էր թողնում կրկար յօնքերն ու այլ ևս ձայն-ծպտուն չէր հանում: Ծիծաղ, ուրախ տրամադրութիւն ասած բանը, կարծես, բնաւ ծանօթ չէր նրան. միշտ տխուր, միշտ զգաստ, միշտ կենտրոնացած իւր ներքին աշխարհի մէջ, կարծես, արտաքին աշխարհը նրա համար գոյութիւն չունէր, կարծես, մի անգառնալի կորուստ տարել էր իւր հետ նրա երիտասարդական բոլոր աւիւնն ու եռանդը: Նա ոչ ոքի հետ չէր մտերմանում, ոչ մէկի հետ մի տաք, սրտակից խօսակցութիւն չէր ունենում: Հարցնում էին — պատասխանում էր, պատասխանում էր չոր ու ցամաք, իսկ ինքն ուրիշին իւր կողմից ոչ մի հարց չէր առաջարկում: կարծես, ամեն բան զիտէր կամ զխտենալու ոչինչ կարևորութիւն չէր զգում: Պատահում էր երբեմն, երբ ամառը, կիրակի երեկոներին թաղի աղջիկները, միախմբուելով, «գահրա-նաղարա» էին անում ու պարում, նա դուրս էր գալիս խրճից, կանգնում էր աղջիկների շրջանից դուրս և իւր հանգիստ, տխուր հայեացքով նայում էր պարողներին:

Նա հաւատում էր սուրբերին, հաւատում էր ամենաջերմ հաւատով: Նրա ամենապաշտելի սուրբը ս. Գէորգն էր, ուր ամառ, ձմեռ համարեա ամեն շաբաթ զիշեր գնում էր համբուրելու, իսկ ամեն տարի դրա տօնի շաբաթին նա ծոմ էր պահում: ամբողջ վեց օր ոչ հաց էր անում բերանը, ոչ ջուր: Ամեն տարի, Զատիկից մինչև Համբարձումը, երկուշաբթի օրերը նա տօն էլ էր պահում — ոչինչ դործ չէր կատարում, որպէսզի հարինք ցաւը չտարածուի և արտին մինչև հնձելը կարկուտ չխփի: Նրա ուղեղը վարակուած էր ամեն տեսակ նախապաշարմունքներով: Նա հաւատում էր դէերի և սատանաների, հրէշների և հրոսաշքների, թախսմանների և ժողովրդական աղօթքների անպայման զօրութեան: Նա հաւատում էր նոյնպէս, որ իւրաքանչիւր մարդու աջ ուսի վերայ հրեշտակ կայ նստած,

ձախ ուսի վերայ—սատանայ, որ այդ հրեշտակն ու սատանան միմեանց դէմ միշտ պատերազմ են մղում: Հրեշտակը մարդուն դէպի բարին է գրգում, իսկ սատանան—դէպի չարը: այդ պատճառով ղիշերները՝ քնելիս՝ նա միշտ ձախ ուսի վերայ էր պառկում, որպէսզն սատանային ջարդէ:

Նրա սովորական աշխատանքը հինաճ գործերն էր, որ վերցնում էր ասիական դերձակներից: Օրն ի բուն նա աշխատում էր, աշխատում էր առանց դադար առնելու: Նրան կարելի էր տեսնել կամ դուրսը՝ հարեանի պատի տակ՝ վեալարը ձեռքին՝ հինաճ հինելիս, կամ թիւ կծկելիս, կամ Գոլոփայի վերայ թիւ ետ տալիս և կամ թէ՛ ամանը, թախթի վերայ, Կապէեանի առաջ նստած՝ Գոլոփան ու Նուրը ձեռքին՝ հինաճ գործելիս: Չնայելով որ աշխատանքին համեմատ՝ օգուտը շատ քիչ էր, բայց և այնպէս հայր ու աղջիկ կարողանում էին քիչ թէ շատ կուշտ կերակրուել և տաք հագնուել, իսկ խրճիթը, որտեղ բնակվում էին, սեպհական էր:

III.

Գարնանային հրաշալի օրերից մէկն էր, կէս օրին մօտ: Արևի ոսկեղող ճառագայթներն ամենուրեք ախորժեղի ջերմութիւն էին տարածում: Թարմ, կենարար օդը երբեմն երբեմն տատանվում էր հազիւ զգալի զով, համարեա թէ սառն, բայց ախորժեղի հոգմով: Մի քանի կտուրներից ժամանակ առ ժամանակ լսվում էին դառան մայիւններ: Լեռու կանչում էին աքաղաղները. մէկի ձայնին հետևում էր միւսի ձայնը և պարզ, թափանցիկ օդում փոխադարձաբար զիւ արձագանք էին տալիս: Թիթեռը թափահարելով իւր չորս թևերը, տատանուելով, կարծես, նազելով, թռչում էր անցնում: Փողոցում ջրկիրի ձիու աղբի վերայ հաւաքուել էին ծաերն ու հաւերը և, քրքրելով ու միմեանց հեա կռուելով, կտցահարում էին ուռած ու կակղած գա-

յուս Հատիկները: Մըջիւնները դուրս էին եկել իրենց ստորերկրեայ բներից և՛ գեանի վերայ ցրիւ եկած՝ պաշար էին հաւաքում:

Թորոսը պազած էր իրենց խրճիթի հանդէպ՝ հարեանի տան պատի տակ և՛ դլուխը կախ՝ ընկզմուած էր մտածմունքների մէջ: Ի՞նչ էր մտածում նա, — այդ Աստուած զիտէ, միայն նա անշարժ էր: Արևի ճառագայթներն ուղղակի ընկնում էին նրա վերայ և ախորժելի ջերմութեամբ տաքացնում էին նրա չորացած, արիւնասպառ մարմինը: Նրա կողքին ընկած էր ձեռնափայտը, առանց որի նա այլ ևս չէր կարողանում ման գալ:

Խրճիթում, հէնց նրա հանդէպ, փոքրիկ բաց լուսամուտի առաջ, թախիթի վերայ նստած էր Մարթան և հինած էր գործում: Նա գործում էր վարժ և արագ, ձախ ձեռքով Գոլոփան անց էր կացնում հինածի միջով, իսկ աջով շրջում էր չափարչ և խփում էր փայտէ Լոփոն:

Մօտ եօթն ասրեկան գլխաբաց և ոտաբոբիկ մի երեխայ վազելով մօտեցաւ Թորոսին:

— Բի՛ ձա, նանա ասեց՝ Ղարչոն մեռաւ, կէ.ք, — ասաց նա հեթեթալով:

Ղարչոն Թորոսի և Մարթայի շատ մօտ ազգականի երիտասարդ տղան էր, որ երկար ժամանակ տանջվում էր թոքախտով:

Թորոսը դլուխը մեքենայաբար բարձրացրեց և, կարծես թէ սարսափած, նայեց փոքրիկ գուժաբերին:

— Մեռա՞ւ, — արտասանեց նա ողորմելի, գողգոջեն ձայնով և, մեքենայաբար առնելով կողքին ընկած ձեռնափայտը, հազիւ բարձրացաւ տեղից:

Մարթան՝ լուսամուտից այդ գոյժը լսելուն պէս՝ կարծեց, թէ մի ահազին քարով յանկարծ խփեցին իւր գլխին և նրա աչքերի առաջ մթնեց: Թորոն ու Գոլոփան նրա ձեռքերից վայր ընկան:

— Մարթա, Մարթա, Գարչոն մեռել է, — ազիողորմ ձայնով արտասուներից Թորոսը, ներս մտնելով խրճիթը:— Տեսա՞ր ի՛նչ բան եկաւ նրա խեղճ մօր գլխին, տեսա՞ր...

Մարթան ձայն-ձգառուն չհանեց. նա միայն չուսձ աչքերով, կարծես, սաստիկ զարմացած և սաստիկ սարսափած, նայեց հօր դէմքին:

— Ա՛ր կաց, որդի, վեր կաց դնանք, — ասաց Թորոսը:— Կրակ է էլի, կրակ խեղճ մօր համար. երէկ-մէկէլ օրը մի նշնելու աղայ թաղեց, հիմա էլ մէկէլին... Է՛հ, օրհնու՛իք արդար դատաստանն, Աստուած:

Գուժաբեր երեխան ներս մտաւ:

— Բի՛ճա, ասեմ՝ դալիս է՞ք, — հարցրեց նա:

— Գնա, բա՛լա ջան, գնա, ասա դալիս ենք, — պատասխանեց Թորոսը:

Երեխան դուրս թաւաւ:

Մարթան չիմացաւ, թէ ինչպէս վեր կացաւ, շալը ծածկեց գլխին և, վերցնելով փոքրիկ կողպէքը, հօր հետ դուրս եկաւ խրճիթից: Նա կողպէքով դուրը կողպեց, բանալին դբայանը զցեց և հօր հետ ուղևորուեց դէպի մեռելատուն:

IV.

Նոյն օրն և եթ Թորոսը վերադարձաւ իրենց տունը, իսկ Մարթան մնաց մեռելատանը, որպէսզի օգնէ սևեր կարելու: Նա շարունակ մի տեսակ, ինչպէս ասում են, վերքաշուածի պէս էր. համարեա թէ չէր խօսում, աղիլը չէր ուզում շարժուել. կրք մի որ և իցէ բան էին հարցնում, նա դեռ չուսձ աչքերով, կարծես, սաստիկ զարմացած, նայում էր հարցնողին դէմքին, յետոյ յանկարծ, կարծես, նոր ուշքի ընկնելով, պատասխան էր տալիս կարճ և կարուկ:

Ի՞նչ էր պատահում նրան,—այդ ոչ ոք չգիտէր և մինչև վերջն էլ ոչ ոք չիմացաւ. միայն ամենքը տեսնում էին, որ ո՛չ մի ժամանակ նա այդպիսի գլուխթեան մէջ չէր եղել:

Դարչոյին թաղեցին:

Նոյն օրն և եթ, մթանը, Մարթան Հօր Հեա վերագար: ձաւ իրենց տունը, որովհետև եթէ այն զիշերը մեռելատանը մնար, ապա եօթն օր, ըստ սովորութեան, այնտեղ պէտք է զիշերէր, իսկ նա այդ բանը չէր ուզում:

Նրանք Հէնց նոր էին խրճիթի գուռը բացել և մթութեան մէջ ներս մտել, երբ յանկարծ Մարթան մի սարսափելի ճիչ արձակեց.

— Հայրիկ ջան, շները, կատուները...

Նա սարսափած կուչ եկաւ և կպաւ Հօր կողքին:

Հայրը՝ զարմացած և սարսափած՝ մթութեան մէջ շօշափեց նրա գլուխը:

— Մարթա ջան, ի՞նչ ես ասում,—ասաց նա:

— Շները, կատուները... միսը քրքրում են,—կրկնեց Մարթան, աւելի կուչ գալով և աւելի ամուր կպչելով Հօր կողքին:

— Ի՞նչ շուն, ի՞նչ կատու, որդի ջան, ի՞նչ միս, ի՞նչ ես ասում,—բոլորովին զարմացած ու վախեցած՝ Հարցրեց Հայրը և մթութեան մէջ մինչև անգամ աշխատեց մի բան տեսնել:

— Թախիթի տակը, տես, թախիթի տակը... Հապա լամպէն վառիր...

Թորոսը, որի զարմանքն ու վախը հետզհետէ աւելանում էին, մթութեան մէջ խարխափելով, մօտեցաւ սեղանին: Մարթան նրա կողքից պուկ չէր գալիս:

— Մարթա ջան, այստեղ շուն ու կատու չկայ, ի՞նչ ես ասում, այստեղ միս չկայ,—ասում էր Թորոսը մեղմութեամբ, ինչպէս խօսում են երեխայի հետ:

— Կայ, կայ, Հայրիկ ջան, կայ... Հապա լամպէն վառիր... Թորոտն աշխատեց լամպարը վառել, բայց չկարողացաւ նրա ձեռքերն առանց այն էլ դողում էին:

— Ղէ, էլ ի՞նչ ես այդպէս վրէս կպել, տեսնում ես, չեմ կարողանում վառել, դու վառիր էլի, — վերջապէս ասաց նա:

Մարթան, սարսափից դողալով, թողեց հօրը, առաւ լուցկին և մի կերպ վառեց լամպարը: Հայրը լուսի վերայ նայեց աղջկայ դէմքին և սաստիկ վախեցաւ: Մարթայի դէմքը սարսափից ծռմռուել էր, այլանդակուել էր, աչքերը սաստիկ չռուել էին, հայեացքն անմիտ էր, երեսին դոյն չկար. նա դողում էր: Ս.Օ.Ձին նուազ Թորոտը մինչև անգամ չկարողացաւ ճանաչել, թէ դա իւր աղջկն է:

— Մարթա ջան, — ականջ բացականչեց նա իւր թոյլ դողդոջին ձայնով: — Սյդ ի՞նչ է քո հալը... ինչո՞ւ ես այդպէս դողում...

— Նները, Հայրիկ ջան, կատուները... ակն միտը քրքրում են... Թախթի տակը... Հապա տես, Հապա տես, — սարսափած ասում էր Մարթան, ձեռքով ցոյց տալով Թախթը:

— Յիսուսին ու Քրիստոսին, որդի ջան, աչքիդ է երևում այդպէս, — խաչահնքեց նրան Հայրը:

— Ձէ, չէ, Հապա տես, — պնդում էր Մարթան:

Թորոտը մտեցաւ Թախթին, կռացաւ, բարձրացրեց սպիտակ վարագոյրը և ներս նայեց:

— Հըհ, այստեղ ո՞վ է տուել շուն ու կատու, որ ասում ես, այստեղ ո՞վ է տուել միս, որ ասում ես, — ասաց նա կռացած տեղից հարցական հայեացքով ետ նայելով աղջկայ դէմքին:

Մարթան նոյն չափ աչքերով երկար ժամանակ լուռ նայեց հօրը:

— Զկայ,—Հարցրեց նա կամաց:

— Այստեղ ոչինչ չկայ:

Մարթան զլուխը բռնեց ձեռքերի մէջ, կարծես, աշխատելով մոքերը հաւաքել:

— Զէ, մեր թախթի տակը չէ,— շնջեց նա: — Նրանց թախթի տակը... Դարչոյնց թախթի տակը... Բաս զու չեմացա՞ր. այսօր Դարչոյի մայրն ինձ ասեց, որ մոզու միսը հանեմ թախթի տակիցը. հէնց վարազոյրը վեր քաշեցի, որ հանեմ, տեսնեմ շներն ու կատունները վըայ են թափել մախն ու քրքրում են... խիստ վախեցայ...

— Այդ ես չեմ իմացել,—ասաց զարմացած Թորոսը:— Յետոյ,—Հարցրեց նա:

— Յետոյ... քրքրում էին էլի... ական այն մոզին մատաղացու էր, իսկ նրանք վեր էին կալիլ ու քելիկին էին մորթել...

— Դու քո աչքովը տեսա՞ր, որ շներ ու կատուններ էին:

— Ասում եմ, տեսայ էլի, իմ աչքովը տեսայ... այնքան էին որ...

— Զէ, Մարթա ջան, աչքիւք կը լինի երևացել այդպէս. շունն ու կատունն—այն էլ այնքան շունն ու կատուն—նրանց թախթի տակն ի՞նչ կը լինէին շնեկիս:

Մարթան դարձեալ չուած աչքերով նայեց հօր դէմքին:

— Աչքի՞ս,—Հարցրեց նա երկարացնելով:— Նրանք էլ էին այդպէս ասում...:

Նա կամաց նասեց սեղանի մօտ՝ հին ձևի աթոռի վերայ և զլուխը կախեց:

Թորոսը չզիտէր ինչ անէր. խեղճը մնացել էր զարմացած և սաստիկ վախեցած: Մարթայի վարմունքն ու խօսակցութիւնը բոլորովին օտարոտի էին թւում նրան: Մարթային նա երբէք այդպէս չէր տեսել, չնայելով որ դրա օտարոտի բնաւորութիւնը նրա համար հէնց սկզբից հանելուկ

էր: Նա կամայ մօտեցաւ Մարթային, կամայ առաւ նրա ձեռքը և շօշափեց դաստակը:

— Մարթա ջան, տաքութիւն խօ չընես, — Հարցրեց նա գորովազուժ ձայնով:

Մարթայի ուսերը յնցուեցին. միւս ձեռքով նա ծածկեց աչքերը և հօր հարցին պատասխան եղաւ նրա խուլ, զսպած հեկեկանքը...

V.

Նեոտեալ օրն ամբողջ թաղի մէջ կայծակի արագութեամբ լուր տարածուեց, թէ Թորոսեց Մարթան խելագարուել է: Թաղի բոլոր կանայք և աղջիկները, մեծից մինչև փոքրը, մինչև անգամ երեխաները շտապում էին իրենց աչքով տեսնելու խելագարուած Մարթային: Թորոսեց խորճիթի ներսն և դուրսն ասեղ զցելու ասեղ չկար. միմեանց ճիւղելով, միմեանց հրելով, մէկը դուրս էր գալիս, միւսը ներս խցկվում. ամենքն էլ անհամբեր հետաքրքրութեամբ ուզում էին տեսնել Մարթային:

Այն ինչ, այդ միջոցին, Մարթան արձակ, խճճուած մտղերով նստած էր թախթի վերայ և խելագարի անմիտ, կատաղի հայեացքով նայում էր խրճիթում լցուած կանանց վերայ, որոնք միմեանց հետ փսփաւրով և անհուն կարեկցութեամբ, մինչև անգամ երկիւղով, փոխադարձաբար նայում էին նրան: Նա շրթունքները շարունակ կրծում էր և րեւիայի փեշերքը փաթաթում էր մատների վերայ, նորից ևս անում և նորից փաթաթում: Նա նստած էր լուռ և բոլորովին ձայն չէր հանում մինչև անգամ այն ժամանակ, երբ փորձում էին նրան խօսեցնել: Նրա կողքին նստած էր իրենց անկից հարևան խարաղ Պետոյի կին Սասնը և դարձեալ ուրիշ երկու հարևան կանայք: Իսկ հեռու, թախթի ծայրին, անկիւնում, կուչ էր կեկել խեղճ Թորոսը և փոք-

րիկ երեկացի նման դառն արտասուք էր թափում: Այնքան խղճալի, այնքան ողորմելի էր նա, որ ս՛վ էլ նայում էր նրան, լսում էր նրա հեկեկանքը, արտասուքը չէր կարողանում զսպել: Նատերը ներսը երկար չէին կարողանում մնալ և հեկեկելով դուրս էին գնում:

— Աղջի Նատո, ի՞նչեցն է խելագարուել,— հետաքրքրութեամբ հարցնում էր դուրսը մի կին միւսին: — Էփօն ասում է, թէ Դարչոյի հոգեհան հրեշտակը խփել է, տեսնես ճշմարիտ է:

— Մէ ես ի՞նչ գիտեմ,— պատասխանում էր Նատոն.— որն այդ է ասում, որն էլ ասում է, թէ Բօլնիսի ս. Գէորգն է բռնել...

— Ի՞, մեռնեմ նրա ողորմութենին. երանի գիտենամ Բօլնիսի ս. Գէորգն այդ խեղճին բռնում է, ի՞նչ անի... Լանդիպսի կը լինի եկած:

— Աղջի Է՛լիսո, տեսնում ես այդ խեղճ Թորոսի գլխին ի՞նչ է եկել,— խղճահարութեամբ դառնում էր մի ուրիշ կին միւսին:

— Լն, հն, էլ մի ասիր, Անան ջան,— ոչ պակաս խղճահարութեամբ և մինչև անգամ արտասուտալից աչքերով պատասխանում էր Էլիսոն: — Այն խեղճ մարդն էլ ոչ մեռած է, ոչ կենդանի մարդ, մտիկ տալով, մեղքու մսկտում է... Վ՛ոյ, Աստուած իմ թշնամուն, իմ միսը կտրողին այդ պիսի բան ցոյց չտայ,— աւելացնում էր նա կուրծքը ծեծելով և աչքերը դէպի երկինք բարձրացնելով:

— Խեղճ Սարթա... ի՞նչ լաւ աղջիկ էր... Աղջի Է՛լիսո, ճշմարիտ է՞, որ Դարչոյինց թախթի տակը շնոր ու կատուներ են երևացել աչքին:

— Լաբայ, ճշմարիտ է,— յանձնապատան և խորհրդաւոր հղանակով պնդում էր Էլիսոն: — Խեղճ աղջկայ խելագարուելու պատճառը հէնց այդ էլ հղել է, Անան ջան:

Ողորմածիկ Վարջցի այն շաշ մայրը Բօլնխուս ս. Գէորգի համար առած մատաղացու մոզնն վեր է կաշնում ու քելեխին է մորթել տալիս. մատաղացուն խաշլամի տեղ է ուսեցնում: Ապա խեղքը զլխին կնիկն այդպիսի բան կանկ, Անան ջան: Որ շաշ է, շաշ է, էլի... Քելեխին այդ մոզու խաշլամիցը որն ուտում են, ուտում, մնացածն էլ գնում են թախթի տակը, պահում: Երէկ իրիկնապահին Վարջցի մայրը Վարթին ասում է, որ միսը թախթի տակիցը հանի, պահարանումը պահի: Վարթան հէնց կուսնում, ուղում է միսը հանել՝ մէկ էլ տեսնում է, որ շներն ու կատուները հաւաքուել են մնի վերայ ու քրքրում: Իսկոյն ծիկա է տալիս.— «Վայ», ասում է, «այսբան շներն ու կատուները ո՞ր տեղից են ներս մտել, միսը քրքրում», — ու հա՛ սիրտը գնում է: Վրայ են թափում, ջուր ածում, քրքրում, գջրուտում, սիրտն ետ բերում: Ներս են մտիկ տալիս թախթի տակը,— ի՞նչ շուն, ի՞նչ կատու, միսն իւր համար անշարժ դրած է: Սյգ է լինում ու այդ,— խեղճ Վարթաս խելքիցը լինում է: Երէկ մինչև տուն գալն էլ լաւ է լինում, բայց դիշերը, երբ հօր հետ տուն է գալիս, դու մի՛ ասիր իրենց թախթի տակն էլ է աչքումը շուն ու կատու երևում: Սյգ ժամանակից նա ուղիղ որ խելքիցը լինում է: Խեղճ Թորոսին Վարթայի զլխին եկածը Վարջցինց տանը չեն խմաց անում, ի՛նչ է, պառաւ մարդ է, ասում է, չվախենայ, այն ինչ մեծ բանը այստեղ— իրենց տանն է պատահում:

Եւ Վարթայի խելագարութեան վերաբերութեամբ այդ բացատրութիւնը զանազան յաւելուածներով և զարգարանքներով ամբողջ օրը մէկի բերանից անցնում էր միւսի բերանը, միւսից— երրորդինը և այլն, և այլն:

VI.

Առաւօտ էր:

Չեռքերը խաչած և գլուխը կախ՝ Թորոսը նստած էր խրճիթի դրան շէմքին և լաց էր լինում: Արտասուքի փայլուն, խոշոր կաթիլները գլորվում էին նրա խորշումած, փափուկ այտերի վրայով և դողդողում էին սպիտակ մուրուքի փայլուն մազերի վերայ: Այնպէս աղիողորմ լալիս էր նա, նրա հեկեկանքի ձայնն այնպէս թրթռում, դողդողում էր, որ լսողն ու նայողը քար սիրա պէտք է ունենար, որ չզգայուէր և չկարեկցէր նրան: Ամբողջ չորս օր էր, ինչ նրա աղջկայ՝ Մարթայի գլխին եկել էր յայտնի պատահարը. ամբողջ չորս օր ծերունի Հօր աչքերը չէին ցամաքել. նրա խաղաղ կեանքի վերջին օրերը դառնացել, թունաւորուել էին, այն ինչ նա յոյս ունէր, որ նոյն խաղաղութեամբ կը հոլովէ այդ մնացած օրերն էլ և հանդիստ, անդորր հոգով ընդ միշտ կը փակէ իւր աչքերը: Իսկ այժմ՝ իրախի հարուած... Մարթան կատարելապէս խելագարուել էր: Ըստ երևութին, յոյս չկար, որ նա առողջանար: Նա մերթ կատաղում էր, մերթ հանդիստ էր լինում. կատաղած ժամանակ միշտ ուզում էր դուրս փախչել, խփում էր սրան, նրան, հագուստն ուզում էր պատառոտել և այլն, իսկ հանգիստ ժամանակ կամ լաց էր լինում, կամ ծիծաղում էր և կամ թէ նստում էր լուրջ և բոլորովին ձայն-ձայտուն չէր հանում, որքան էլ աշխատում էին խօսեցնել:

Օսանը, որ Թորոսի միակ օղնականն էր նրա սոսկալի թշուառութեան մէջ, դուրս եկաւ իրենց անից և մօտեցաւ նրան:

— Այ Թորոս, կարաք այդքան էլ լաց լինել կը լինի որ դու ես լաց լինում,—ասաց նա կէս խղճահարութեամբ և կէս մեղմ յանդիմանութեամբ:—Այս չորս օր է, լաց ես լինում, հա՛ լաց լինում: Ի՞նչ եղաւ քեզ: Երեխայ լսօ չես.

տղամարդ էս, սիրտդ մի քիչ էլ պինդ պէտք է պահե՛ս, թէ չէ:

— Ա՛խ, Օսան ջան, ի՞նչ ես ասում,— մըմնջաց Թորոնն առանց դլուխը բարձրացնելու.— այս բոպէիս սրտումս դանակ ցցես, արիւն չի կաթիլ... Այս ի՞նչ եկաւ զլիւիս... ո՞ր մեղքիս համար Աստուած ինձ այսպիսի մի պատիժ տուեց... Մա՛րթաս, իմ սիրուն, իմ շարմաղ բալաս...

Եւ արտասուէն աւելի սկսեց հոսել նրա ուռած, կարմրած աչքերից:

— Դէ, բաւական է լաց լինես, բաւական է, — սկսեց հանգստացնել նրան Օսանը, — լաց լինելով ոչինչ չի դառնալ: Աէտք է խելք խելքի տանք, մտածենք, տեսնենք, ի՞նչ ենք անում: այդպէս խօ չե՞ կարելի թողնել:

— Ի՞նչ անենք, Օսան ջան, ի՞նչ անենք. դէ, ասա տեսնենք է՛լի... Դու խօ զիտես, որ զլխումս էլ խելք չի մնացել ես հէնց միշտ իմ դլուխս վայ տալումն եմ:

— Դիշերս ի՞նչպէս էր:

— Ելի այնպէս. ոչ ինքն է քնել, ոչ ես եմ աչքս փակել: Ողջ գիշերը նստած էր և դէյիրայի փեշերքը փաթաթում էր մասներին, ետ անում, փաթաթում էր, ետ անում: Ես էլ նստած էի կողքին. վախում էի, թէ գուռը բաց անի, գուրս փախչի: Լուսածէզին միայն պառկեց և քնեց: Ես էլ մի քիչ քնով եղաց և շուտով էլ վեր կացայ. հանգիստ չեմ կարողանում քնել: Նա մինչև հիմա էլ քնած է:

Նա լուեց: Օսանը նոյնպէս լուռ էր:

— Դէ ասա է՛, Օսան ջան, ի՞նչ ճար անենք. դու կը գիտենաս, — վերջապէս հարցրեց Թորոսը, ազերսող հայեացքով նայելով նրան:

— Ի՞նչ ճար պէտք է անենք. պէտք է զբաղի ցոյց տանք էլի, — պատասխանեց Օսանը մի այնպիսի եղանակով, որից հասկացվում էր, թէ բացի զբանից, էլ ո՛չ մի

միջոց չկայ:—Բժշկի ասեմ, բժշկի բան չի. դա կամ խաչեց
պէտք է լինի, կամ թէ չէ՝ հանդիպուի պէտք է լինի ե-
կած... ո՞վ զիտէ, աշխարհ է հազար ու մի չար ու բարի
է խառնվում...:

— Ասա, Օսան ջան, ասա, որ զբբացին ցոյց տանք:

— Տէրտէրի փեսայ Գրիգորին շատ են գովում. ասում
են, որ նա շատերին է լաւացրել. ո՞վ զիտէ, գուցէ Մարթին
էլ է կարողանում լաւացնել... Կ'ուզես նրան կանչենք:

— Ախ, Օսան ջան, էլ ի՞նչ հարցնիլ կ'ուզես. կանչենք,
էլ լի... միայն թէ իմ ճար ու մաղաթ Մարթաս լաւանայ...
Ախ, ինչո՞ւ Աստուած նրա ակղ ինձ չէր դժուացնում...:

— Բաս հիմա ես կը գնամ և, եթէ տանը լինի, կը բե-
րեմ, — ասաց Օսանը:

— Դէ, ի՞նչ ասեմ, Օսան ջան, Աստուած քո լաւութիւնը
գետինը չի գցել... Քո որդիքն ամեն ցաւիցն ու փորձան-
քիցն ազատուեն... իմ ճարը դու ես...:

Օսանը հեռացաւ, իսկ Թորոսը՝ յոյս առած՝ վեր կացաւ,
ներս մտաւ խրճիթը:

VII.

Տէրտէրի փեսայ զբբաց Գրիգորը մեծ հոչակ ունէր նա-
խապաշարուած, տգէտ ժողովուրդի շրջանում: Չնայելով
որ նա դեռ երիտասարդ էր և շատ ժամանակ չէր, ինչ
սկսել էր իւր գործունէութիւնը, բայց և այնպէս իւր
«հմտութեամբ» և «գիտութեամբ» (ուրիշ խօսքերով ի՞նչ
պէս ասենք) կարողացել էր իւր հին և փորձուած պաշ-
տօնակիցներէր շատ շատերի առաջը կտրել (իսկ այդ վեր-
ջիններն այնքան են...): Ա՛վ դժուար հիւանդ էր ունենում,
նրան էր դիմում և զբբաց Գրիգորը ո՛չ մէկին անբաւա-
կան չէր հեռացնում իրենից: Ս.մեն օր, լինէր անձրև, ցեխ,
ձիւն, քամի, նրա «դահլիճը», «ընդունարանը» լի էին լի-

նում զանազան հաւատի (բացի ոռոսից), զանազան տարազի, զանազան հասակի և սեռի «պաշրիէնաներով»: Կրանց մէջ քիչ չէին լինում պատուաւոր մարդիկ, կանայք և օրինորդներ (հազուստով պատուաւոր ենք ասում, խելքով չէ): Իրրև հռչակուած բժ... (քիչ էր մնում՝ ասէինք բժիշկ) իբրև հռչակուած զբբաց, նրա վարձատրութիւնը, համեմատաբար, միւս զբբացներից, ի հարկէ, աւելի թանկ էր, թէև արժաններից նա հեռու չէր փախչում: Բայց թէ աղքատ հիւանդատէրը, որ իւր չարքաշ աշխատանքով հազիւ կարողանում է իւր օրական ապրուստը հայթհայթել, ինչպէս էր կարողանում նրա ազահութեանը բաւականութիւն սուլ—այդ միայն Սասունձ զիտէ: Սակայն այս ակներև էր, որ զբբաց Գրիգորը, միայն զբբացութիւնն իրեն արհեստ ունենալով, կարճ ժամանակում, եթէ ոչ ահագին, բայց չափաւոր կարողութիւն էր գեղել: այն ինչ նա, շատերի տակով, առաջ մի հասարակ կօշկակարի աշակերտ է եղել: Նա մինչև անգամ գնել էր իւր համար մի սեպհական տուն և, ամբողջ օրը գահաւորակի վերայ բաղմաճ, ապրում էր փաշայի պէս:

Օսանն ահա՛ դրան զիմեց Մարթայի համար:

Նա բացատրեց զբբաց Գրիգորին Մարթայի հիւանդութիւնը և այն, թէ ինչպէս էր առաջացել այդ հիւանդութիւնը: Գրբաց Գրիգորը, մի կարճ ժամանակ խոր մտածող գիրք բռնելուց յետոյ, ասաց, որ նախ և առաջ պէտք է տեսնէ հիւանդին, յետոյ նայէ գրքին և ապա դրա դէմ միջոցներ ձեռք առնէ:

Օսանը խնդրեց, որ, եթէ կարող է, հէնց իսկոյն և եթ գնան. բայց որովհետև զբբաց Գրիգորը շատ «պաշրիէնաներ» ունէր, որոնք «դահլիճում» սպասում էին իրենց հերթին, այդ պատճառով նա ասաց Օսանին, որ փոքր ինչ սպասէ, մինչև որ նրանց բոլորին էլ ճանապարհ դնէ և այնուհետև միասին կը դնան:

Սասնը սպասեց:

Փոքր ինչը դարձաւ մի ժամ, երկու ժամ, մինչև որ, վերջապէս, զբբայ Գրիգորն ամենքի հետ գործը վերջացրեց, վեր կացաւ և դուրս եկաւ Սասնի հետ՝ նոր հիւանդին տեսնելու, որ նրան շատ իւզալի կտոր էր թւում:

VIII.

Մարթան անկողնում պառկած՝ դեռ քնած էր, երբ Սասնն ու զբբայ Գրիգորն եկան: Թորոսը նստած էր հիւանդի կողքին և, ինչպէս երևում էր, անհամբեր սպասում էր նրանց գալուն: Գրբային տեսնելուն պէս՝ նա վեր կացաւ և պատկառանքով ու պատուաբար զլուխ խոնարհեցրեց նրան:

— Սա՞ է հիւանդը, — հացրեց զբբայ Գրիգորն, աւանց պատասխանելու նրա զլուխ տալուն և մօտենալով թախթին, ուր պառկած էր Մարթան:

— Դա է, — պատասխանեց Սասնը:

Գրբայ Գրիգորը յօնքերը փոքր ինչ կիտեց, դէմքին մտախոհ, լուրջ արտայայտութիւն տուեց և սխեց դիտել հիւանդի դէմքը: Մարթան այդ մի քանի օրուայ մէջ շատ էր փոխուել. նրա աչքերն ու այտերը ներս էին ընկել, դէմքը գունատուել, դեղնել էր, այտակրները դուրս էին ցցուել. նրանց վրայի և քթի ծայրի կաշին պլպլում էր, սև մազերն անկարգ, խճճուած թափուել էին բարձի վերայ: Նա քնած էր երեսն ի վեր պառկած, ափդոյն շրթունքները սեղմած էին միմեանց. նա շնչում էր շատ ծանր:

Մինչդեռ զբբայ Գրիգորն, ըստ երևութին, ամենայն մտառութեամբ դիտում էր նրա դէմքը, մէկ էլ տեսնես միմեանց հսկից քչիչալով և անհամարձակութեամբ սկսան ներս մանել թաղի կանայքը և աղջիկները: Նրանցից մէկը ճանապարհին տեսել էր, որ Սասնը տանում է զբբայ Գրի-

գորին, իսկոյն վազել իմաց էր արել սրան, նրան, վերջններն իրենց կողմից իմաց էին արել ուրիշներին և այդպիսով ամենքը՝ սաստիկ հետաքրքրուած՝ թողնելով իրենց բան ու գործը, թողնելով ծծի երեխաներին կամ իրենց հետ վերցնելով, շտապել էին տեսնելու, թէ ինչ պիտի ասէ երևելի գրբաց Գրիգորը Մարթայի հիւանդութեան մասին: Ներս մանելով խրճիթը, նրանք խմբուեցին դրան մօտ. ամուսնացածները, հասակաւորներն և համարձակները կանգնեցին առաջ, իսկ օրիորդներն և անհամարձակներն—ետեր:

Գրբաց Գրիգորը, վերջապէս, դարձաւ դէպի Թորոսը և հիւանդի մասին սկսեց հարց ու փորձ անել նրան: Թորոսը, լաց լինելով, սկսեց բոլորը պատմել: Ամեն բան հիմնաւորապէս տեղեկանալով, գրբաց Գրիգորը վերմակի տակից հանեց հիւանդի ձեռքը, ուշք չդարձնելով, որ նա քնած է, և շօշափեց դարկերակը: Հիւանդն աչքերը բացեց և նրա անմիտ հայեացքն ընկաւ ուղղակի գրբացի դէմքին: Նա յանկարծ ճչաց, վերմակը մի կողմը շարտեց, վեր թռաւ տեղից և ուզեց դուրս փախչել: Օսանն առաջինը վրայ հասաւ նրան և բռնեց: Նրան օգնութեան հասան մի քանի կանայք, Մարթային տարան և նորից, բայց մեծ դժուարութեամբ պառկեցրին անկողնում, որովհետեւ նա ամեն ջանք գործ էր դնում, որպէսզի խլուի նրանց ձեռքից և դուրս փախչէ: Մի քանի կանայք և աղջիկներ, որոնք երկիւղեց գուրս էին փախել տեսնելով որ խելագարը հանդրստացաւ, նորից ներս մտան և կազնեցին իրենց տեղերը:

Այն ինչ գրբաց Գրիգորն արդէն նստել էր աթոռի վերայ. թաշկինակի միջեց հանել էր «Սողոմոնի զիրքը» և՛ դէմքին մի շատ խորհրդաւոր արտայայտութիւն տուած՝ թերթում և մտքումը կարգում էր:

Հիւանդը բոլորովին հանգստացաւ: Նրա մօտ նստեցին Օսանն և երկու ուրիշ կանայք, ամեն ժամանակ պատրաստ լինելով նրան բռնելու, եթէ նա դարձեալ փորձ փորձէ գուրս փախչելու:

Խրճթում հաւաքուած կանայքը, որոնք Մարթայի անսպասելի կատաղութիւնից իրարու էին անցել, փոքր առ փոքր սկսեցին հանգստանալ երբ տեսան, որ գրբայն արդէն նայում էր գրքին: Ետտով խրճթի մէջ լուութիւն տիրեց: Լսվում էր միայն Թորոսի զսպած հեկեկանքը: Ամենքն անհամբեր նայում էին գրբաց Գրիգորին և սպասում էին, թէ նրա շրթունքներից ի՞նչ պիտի դուրս գայ:

Մօտ հինգ բուպէ գրքին նայելուց յետոյ, վերջապէս գրբաց Գրիգորը գլուխը բարձրացրեց և սկսեց անթարթ նայել ուղղակի հիւանդի աչքերին:

— Դրա փորում սատանաներ կան, — ասաց նա, հայեացքը չհեռացնելով հիւանդի աչքերից:

Ամենքը սարսափեցին. մի քանի ծեր կանայք մինչև անգամ երեսը խաչակնքեցին: Խեղճ Թորոսը խօսարսափից քարացաւ: Նա միայն բերանը բացեց և առանց այն էլ ծերութիւնից առաջ ընկած գլուխը առաջ տանելով, ապուշ կտրած՝ նայեց գրբացի դէմքին:

— Սատանաներ... — երկարացնելով ամենից առաջ հարցրեց Օսանը:

— Այո... և շատ չար սատանաներ, — խորհրդաւոր եղանակով պատասխանեց գրբաց Գրիգորը և հայեացքը դէպի նա դարձրեց: — Երեք հատ են... Նրանք ամեն կերպ աշխատում են, որ դրան փախցնեն և գեար զցին, խեղդեն... և, եթէ լաւ չնայէք, այդպէս էլ կ'անեն, անպատճառ կ'անեն... ևս ոչինչ չեմ թագցնիր: ևս ամեն բան ուղիղ կ'ասեմ:

Ընդհանուր սարսափը սաստկացաւ. ամենքի հայեացքն էլ դարձաւ դէպի հիւանդը, որ նստած էր անկողնում գլուխը կախ և, կարծես, չէր տեսնում ու չէր լսում, թէ ի՞նչ է կատարվում և ի՞նչ է խօսվում իւր շուրջը:

— Աղջի՛, ևս վախում եմ, — փսփսաց մի օրիորդ ընկերուհու ախանջին:

— Ես էլ—նոյն կերպով պատասխանեց նրան ընկերուհին:
 — Բաս ի՞նչպէս պէտք է լինի, քեզ մատաղ—վերջապէս
 կանչեց Թորոսը, որի լեզուն, կարծես, յանկարծ բացուեց:
 — Սատանաները փորկեց պէտք է հանենք:
 — Յետոյ այդ կարելի է... կարող են...
 — Բաս արհեստ ի՞նչ է, որ չը կարողանամ,—հպարտութեամբ
 և մինչև անգամ խստօրէն նկատեց զբրայ Գրիգորը:
 — Դէ, հանիր էլի, հանիր, քո ռաների հողը լինեմ...
 հանիր:

— Հանելը հեշտ է, բայց... փողն այս զլխիցն և եթ պէտք
 է տաս, որ այս գիշեր չլա նստեմ և այդ սատանաների
 հիմք ու բունքն խմանամ:

— Փողը կը տամ, կը տամ, միայն թէ դու իմ որդուն
 լաւացնես:

— Լաւացնելու մասին բոլորովին հանդիստ կարող ես
 լինել: Փառք Աստուծոյ, նոր չպէտք է փորձուեմ այդ ցա-
 լիցը մէկին ու երկուսին չեմ պրծացրել:

Եւ զբրայ Գրիգորն իւր ճարտար լեզուով միմեանց և-
 տեկց մի քանի սուտ ու մուտ պատմութիւններ շարեց, թէ
 ո՞ւմը և քանի՞ բուբլիով է պրծացրել ինքն այդ ցաւիցը:

— Բայց ես քեզանից շատ չեմ առնիլ,— աւելացրեց
 նա:— Տեսնում եմ, ծեր ես, աղքատ ես, մեղք ես: Երե-
 սուն բուբլի կ'առնեմ, աւել չէ: Կէսը հիմա կը տաս, կէսն
 էլ, երբ կը պրծացնեմ, յետոյ: Հարուստ որ լինէիր, հա-
 բիւր բուբլուց պակաս չէի առնիլ, որովհետեւ, ախր, դրա
 պրծացնելը հեշտ իս չէ... ես էլ, ախր, ահ ու դողի մէջ
 պէտք է լինեմ. սատանաներ են է՛, սատանաներ... մէկ
 էլ աեսար դրա փորիցը գուրս եկան ու իմ փորը մտան,
 յետո՞յ...

Ետեւ կանգնած մի չարածճի աղջիկ ձեռքով խթեց
 կողքին կանգնած ընկերուհուն և փութկացրեց: Ընկերուհին
 աչք ու յօնքով սաստեց նրան:

Երեսուն ըուբլու անունը լսելով, խեղճ Թորոսը յուսահատուեց. զրատեղից վճարէր այդ գումարը, ո՞վ էր տուել նրան այդքան փող: Հողեպահուստ մի քանի ըուբլի ունէր ևս գցած, այն էլ որ դրան տար, յետոյ ի՞նչ անէր, ինչո՞վ ապրէր, ինչո՞վ թաղուէր... Նա սկսեց խնդրել, աղաչել, որ պահասով ետ առնայ, չունի: Գրբաց Գրիգորն, երկար չեմ ու չեմ անելուց յետոյ, վերջապէս, կանգնեց քսան ըուբլու վերայ և այլ ևս ցած չգնաց: Ճար չկար, պէտք էր վճարել: Գողղոջինն ձեռքերով Թորոսը մի անկիւնից մի ինչ-որ փաթաթոց հանեց, ևտ արեց, ևտ արեց, երկար ժամանակ ևտ արեց միմեանց մէջ փաթաթած շորերը, մինչև որ, վերջապէս, հասաւ ծալծալուած-կոլորուած թղթազրամներին, տասն ըուբլի համարեց— վարձի կէսը— տուաւ զբոլաց Գրիգորին, իսկ մնացածը նորից փաթաթեց և պահեց:

— Թող իմ թաղմէլէս մատաղ գնայ իմ Մարթի արևին, միայն թէ այս օրիցն ազատես նրան,— ասաց նա համարեա թէ լաց լինելով:

Գրբաց Գրիգորն իւր ճարտար լեզուով ծերունուն հանգստացրեց, ասելով որ մի շաբաթում նրա աղջկան կ'առողջ ջացնէ և յայտնեց, որ այդ գիշեր ղա կը նստի, իսկ վաղուանից կը սկսի սատանաները փորիցը հանել:

Եւ, վերցնելով թաշկինակի մէջ փաթաթած իւր «Սողոմոնի գիրքը» նա քայլերը ուղղեց դէպի դուռը:

Կանանց ամբօխը ձեղքուեց և պատկառանքով ճանապարհ տուեց նրան:

IX.

Հետևեալ օրը, նախընթաց օրուայ նման, իւր «պոցիէնտներին» ճանապարհ գցելուց յետոյ, նա եկաւ: Մարթան դարձեալ պառկած էր անկողնում: Նա այս անգամ շատ հանգիստ էր. բոլորովին ձայն-ծպտուն չէր հանում. միայն շրթունքները կրճկելով, լուսամուտից շարունակ նայում էր

դէպի դուրս: Նրա մի կողքին, ինչպէս միշտ, կուչ էր եկել Տերունի հայրը, իսկ միւս կողքին նստել էր Օսանը:

Այս անգամ արդէն ամբողջ թաղը պոկուել, եկել էր տեսնելու, թէ զրբաց Գրիգորն ի՞նչպէս պէտք է Մարթայի փորից սատանաներին հանէ. սակայն զրբաց Գրիգորը հրամայեց, խրճթում, բացի հիւանդի հօրից և Օսանից, ուրիշ ոչ ոք չլինի, ամենքն էլ խկոյն դուրս գնան:

— Ի՞նչ խարար է,—ասաց նա բարկացած. մայմունն խօջին խողացնում, որ այդքան հաւաքուել էք... այսքան խալխումն աղօթք կը կարի՞... դուրս գնացէք:

Ամօթահար՝ փսփսալով և արանջելով, ամենքն էլ փասափուսէն քաշեցին և մէկ մէկու ետեից դուրս գնացին: Գուռը փակուեց նրանց ետեից: Սակայն խրճթի առաջից ոչ ոք չհեռացաւ. հետաքրքրութիւնն այնպէս չէր պաշարել նրանց, որ նրանք կարողանային իրենց աները քաշուել, մինչև որ չիմանային գործի ելքը: Ոմանք խմբուեցին դրան մօտ, իսկ ոմանք, համարձակները, շտապեցին դէպի փակ լուսամուտն և սկսեցին այնտեղից դէպի ներս նայել:

— Ե՛միկ, ի՞նչ փիս մարդ է այդ զրբացը,—ասում էր դրան մօտ խմբուածներից մէկը:

— Իբրև թէ այսքան խալխումն աղօթքը չի կտրել,— հէգնօրէն նկատեց մի ուրիշը:

— Ի՞նչ հաւատամ սուտ քրիստոսին,— ասաց երրորդը, որի ինքնասիրութիւնն, ինչպէս երևում էր, շատ էր վերաւորուել զրբաց Գրիգորի կոպիտ վարմունքից:— Երանի գիտենամ, դա ի՞նչ զիտէ, որ բերել են, տուն զցել... Սատանաներ կան փորումը, չէ մի ռաներ... Էս տարսը կնիկ եմ դառել, դեռ այդպիսի բան չեմ լսել...

Այն ինչ զրբաց Գրիգորն, ամենքին դուրս անելուց և գուռը փակել տալուց յետոյ, հրամայեց, որ հիւանդին նստեցնեն անկողնում և մի թաս ջուր բերեն: Հրամանը կատարուեց: Այնուհետև նա ասաց, որ մի փոքրիկ տղայ

բերեն: Օսանը դուռը բացեց և դուրսը հաւարուած երկ-
խաներից մէկին ներս կանչեց:

— Օսան ջան, Օսան ջան, մեզ էլ առն թողնես,— ա-
ռաջ վազելով խնդրեցին մի քանի կանայք:

Գրբաց Գրիգորը ներսից գուաց, որ ոչ ոքին ներս չթողնէ:
Գուռը կրկին փակուեց:

— Խ, հողեմ գլուխդ...

— Խ, վայ տամ գլուխդ...

— Խ, յեկա գլխիդ...

— Մասխարա գլխի՛ր...

— Խնչե՛մ, վրէպ գցեմ...

— Վայ քի...

Եւ այդպիսի շնորհալի շատ օրհնութիւններ ուղղուեցին
զբբաց Գրիգորի հասցէին:

Գրբաց Գրիգորը ներս կանչած երկխայլին նստեցնել առեց
հիւանդի մօտ, ջրով թասը դրեց նրա առաջ և ասաց նը-
րան, որ, երբ սատանաները մէջը կրնկնեն, իրեն խնայ անի:
Երեխան, ոչինչ չհասկանալով, գլուխը միայն շարժեց դա-
կանապէս: Գրբաց Գրիգորը կանգնեց երկխայլի մօտ և, շարու-
նակ նայելով հիւանդի աչքերին, սկսեց շթունքները բաց
ու խուփ անել. — նա մտքումն «աղօթքներ» էր կարդում:

Թորոսն և Օսանը՝ մի կողմը քաշուած՝ երկիւղով մէկ
նայում էին նրան, մէկ թասի ջրին և մէկ հիւանդին. նո-
րանք անհամբեր սպասում էին, թէ սատանաներն ինչպէս
պէտք է դուրս դան Մարթայի փորից և ջրի մէջ ընկնեն.
սակայն, գրբաց Գրիգորի ասելով, բացի երկխայլից ոչ ոք և
մինչև անգամ ինքն էլ չպիտի տեսնէր, որովհետև սատանա-
ներն առհասարակ, իրենից վախենալով, միշտ թափուվում են:

Անցաւ ամբողջ տասն րոպէ: Գրբաց Գրիգորը մտքումը
շարունակ կարդում էր իւր «աղօթքները»: Երեխան շարու-
նակ նայում էր թասին: Թորոսն ու Օսանը շարունակ սպա-

ստւմ էին անհամբեր: Կատարեալ լռութիւն էր տիրել խրճթում, բայց... «չար» սատանաները դուրս չէին գալիս, չէին ընկնում թասի ջրի մէջ:

Այն ինչ դրսից լսւում էին խրճթի առաջ ամբոխուած կանանց, աղջիկների և երեխաների բարձրաձայն խօսակցութիւնը, հրհուռն ու ազաղակները:

— Հը, մէջը չընկան,— վերջապէս հարցրեց զրբաց Գրիգորն երեխային:

Երեխան գլուխը բացասական կերպով շարժեց:

Գրբաց Գրիգորը շարունակեց շրթունքները բաց ու խուփանել:

Անցաւ դարձեալ մօտ տասն րոպէ:

— Հը, էլ չընկան,— դարձեալ հարցրեց զրբաց Գրիգորն երեխային:

— Աէ,— պատասխանեց երեխան:

Երրորդ անգամ կրկնուեց նոյնը, սակայն... դարձեալ անյաջող. անպիտան «չար» սատանաները շարունակում էին յամառութեամբ Մարթայի փորում մնալ:

Թորոսն ու Օսանը մի տեսակ հարցական հայեացքով միաժամանակ նայեցին միմեանց. ըստ երևութին, երկուսն էլ սկսեցին թերահաւատել:

Գրբաց Գրիգորն ՚ի ներքուստ կատաղեց իւր անյաջողութիւնից, բայց ստիպուած էր իրեն սառնասիրտ ձեւացներ որպէսզի, ինչպէս ստում են, շախը չկտորի: Նա հրամայեց, որ երեխան վեր կենայ և թասով ջուրը վերցնեն:

— Ես ձեզ ի՞նչ էի ստում,— ասաց նա.— սատանաները շատ չար են, չին ուզում դուրս գալ... Բայց ես նրանց ուրիշ հնարքով դուրս կը բերեմ. իմ ձեռքիցը չեն պրծնիլ: Նա թոկ և մաթրախ (մտրակ) պահանջեց:

Թոկն հէնց այնտեղ և եթ դանուեց, իսկ մաթրախի համար Օսանը դուրս գնաց հարեանի տնից բերելու: Դուրս գալուն պէս՝ նրան շրջապատեցին:

— Աղջի՛, Օսան, ի՞նչ է անում, — սաստիկ Հետաքրքրուած՝ համարեա թէ միաբերան հարցնում էին ամենքը:

— Ի՛, ես ի՞նչ գիտեմ, սպասեցէք մի,— զբաղուած մարդու նման պատասխանում էր Օսանը, շտապելով մաթրախ բերելու:

Տեսնելով, որ Օսանից ոչինչ չի կարելի իմանալ, նրանք վրայ թափուցին երեկային, որ Օսանի ետեւից դուրս եկաւ խրճթից: Երեկան, որքան խելքը բան էր կարում, սկսեց պատմել այն դերը, որ ինքը կատարում էր խրճթում:

Նինգ լուպէից յետոյ Օսանը վերադառնում էր՝ ձեռքին մի մաթրախ բռնած:

— Աղջի՛, Օսան, ինչե՞ համար է այդ մաթրախը, — երեկային թողնելով դարձեալ վրայ թափուցին ամեն կողմից:

— Դէ, ես ի՞նչ գիտեմ, ուզում է էլի, — պատասխանեց Օսանը և շտապով ներս մտաւ:

Մաթրախն առնելով, զրբաց Գրիգորը Թորոսին և Օսանին ասաց, որ նրանք էլ դուրս գնան, որովհետեւ այս անգամ խրճթում, բացի իրենից և Հիւանդից, ուրիշ ոչ ոք չպէտք է լինի: Նա խնդրեց, որ լուսամուտից ոչ ոքի չթողնեն ներս նայել: Թորոսն և Օսանը, մանաւանդ Թորոսը, սկզբում չէին ուզում նրան հաւատ ընծայել, որ նա Հիւանդի Հետ մենակ մնայ խրճթում, բայց տեսնելով, որ դիմադրել անկարելի է, ճարահատեալ դուրս եկան խրճթից: Նրանք լսեցին, թէ ինչպէս իրենց ետեւից զրբաց Գրիգորը գցեց զրան սողնակը: Թորոսը սաստիկ անհանգստութեամբ նստեց զրան մօտ դեանի մէջ խրուած սալ քարի վերայ, իսկ Օսանը սկսեց Հեռացնել լուսամուտից ներս նայողներին: Այս անգամ արդէն ամենքը շրջապատեցին նրան և սկսեցին հարց ու փորձ անել, թէ ինչո՞ւ նրանց էլ դուրս ուղարկեց զրբաց Գրիգորը, թէ այժմ՝ նա ներսն ի՞նչ պէտք է անէ և այլն: Սակայն Օսանն ինքն ի՞նչ գիտէր, որ նրանց ի՞նչ պատասխանէր:

Անցաւ մի կարճ ժամանակ: Ամենքն անհամբեր սպասում

էին, թէ դործը, վերջապէս, ի՞նչ եւք պիտի ունենայ: Մի քանիսնէրը գաղտնի ինչ-որ փսփսուում էր միմեանց ահանջին: Թորոսի բոլոր ուշ ու միտքը լարուած էր դէպի խրճիթի ներսը. շարունակ անհանգստութեամբ նա անթարթ նայում էր դրանք...

Յանկարծ խրճիթի ներսից կապերտը ճիւղտով թափ սալու նման մի հարուած և դրա հետ մի սարսափելի ճիչ լսուեց, որին հետևեցին սրսամաշ աղաղակներ:—Այդ ճիչն և աղաղակները Մարթայինն էին:

Դուրսը հաւաքուած կանանց մեջ սարսափելի իրարանցում ընկաւ:

— Աղջի, ի՞նչ է անում, ի՞նչ է անում,—կանչեցին ամենքը և, չնայելով Օսանի դիմադրութիւններին, վրայ թափուեցին լուսամուտին:

— Աղջի, ծե՛ծում է... ծե՛ծում է մաթրախով,—միաբերան բացականչեցին երկուսը, որոնք, ամենից առաջ ընկնելով, լուսամուտից ներս էին նայում:

Թորոսն ինքն էր չէր խմացել, թէ ինչպէս, ամբողջ մարմնով դողալով, վեր էր կացել քարի վրայից և թակում էր դուռը:

— Բաց արա՛, բաց արա՛...—կանչում էր նա դողգոջլեն, աղիտորմ ձայնով:

Սակայն ոչ ոք դուռը չէր բացում: Սրտամաշ աղաղակներն, աւելի ու աւելի սաստկանալով, շարունակվում էին լսուել խրճիթի ներսից: Եւ այդ աղաղակների հետ խառն լավում էր զրբաց Գրիգորի ձայնը, որ կանչում էր.

— Ասա՛ սատանաների անունը, ասա՛ սատանաների անունը...

— Աղջի, սպանեց, սպանեց այն խեղճին... վ՛՛՛ւյ, վ՛՛՛ւյ, վ՛՛՛ւյ, ո՛նց է թակում... քա՛, քա՛, քա՛, ձեռներն ու օտներն ել թօկով կապել է... վ՛՛՛ւյ, վ՛՛՛ւյ, վ՛՛՛ւյ, ո՛նց է թեփոխն-թեփոխն գալիս... — միսխալով կանչում էին լուսամուտի մօտից:

— Բաց արան, բաց արան...—սրտապատառ կանչում էր Թորոսը և, որքան մէջն ոյժ ունէր, շարունակում էր դուռը թակել:

Անցաւ բաւական ժամանակ, խեղճ ծերունու համար ամբողջ յաւիտենականութիւն, մինչև որ, վերջապէս, դուռը բացուեց և շեմքում երևեց գրբաց Գրիգորը:

— Էէր օրհնած, ի՞նչ եղաւ քեզ. չե՞ս կարող մի քիչ սպասել,—ասաց նա:—Իէ, ներս արի. այսուհետև աղջիկդ պրծած է:

Խեղճ ծերունին դողալով ներս վազեց. նրա ետևից շտապեց Սաննը, իսկ Սաննի ետևից ներս թափուեցին միւսները: Եւ նրանց աչքերին հետևեալ տեսարանը ներկայացաւ.—կէս մարմնով անկողնի, իսկ կիսով չափ թախտի չոր կապերտի վերայ տարածուած՝ ընկած էր Մարթան: Նրա ձեռքերն ու ոտներն ամուր կաշկանդուած էին թոկով, երկար մազերը անկարգ, խճճուած՝ ցան ու ցրիւ. էին կիկլ այս ու այն կողմը: Նա ընկած էր կողքի վերայ՝ ծեծուած, ջարդուած. նրա մարմնի բաց տեղերի վերայ կրկնում էին երկար, շերտ-շերտ կապոյտներ: Նրա աչքերը փակ էին. նա ընկած էր անշարժ և սրտաուռ հառաչանքները շարունակ դուրս էին թռչում նրա բաց ու խուփ լինող բերանից:

Անհուն խղճահարութիւնը դէպի այդ թշուառը և սաստիկ կատաղութիւնը դէպի գրբաց Գրիգորը տիրեց ամենքին: Մի քանիսը, առանց հարցնելու, շտապեցին նրա ձեռք ու ոտքը ետ անել:

— Վճէյ, վճէյ, վճէյ... աղջի, մտիկ արէք, ո՞նց է նուում...

— Աղջի, մտիկ արէք, ձեռները ո՞նց է թոկով կուլ ու կապ զցել...

— Աղջի, մտիկ արէք, մաթրախի տեղերը ո՞նց են կապ տել...

Ամենքի բերանից լսվում էին կարեկցութեան և խղճահարութեան այդպիսի խօսքեր, իսկ Թորոսն, իւր ալեղարդ

գլուխը խոնարհած աղջկայ դէմքի վերայ, շարունակ մըմընջում էր:

— Մարթա ջան, բայա ջան...

— Այս ի՞նչ խաբար է, այս ի՞նչ զայմաղալ է, — յանկարծ լսուեց զրբաց Գրեգորի կատաղի ձայնը և նա խորձթում հաւաքուած կանանց ահազին ամբոխի միջից առանց դժուարութեան առաջ եկաւ, որովհետեւ՝ նրա ձայնը լսելուն պէս՝ բոլորն է յանկարծ լռեցին և երկիւղով այս ու այն կողմը քաշուեցին, կուչ եկան: — Ա՛ր, այս ի՞նչ խաբար է, — կրկնեց նա: — Թէ որ ինձ կանչել էք սրան բժշկելու, թողէ՛ք, որ բժշկեմ, թէ չէ ու... այս ի՞նչ խաբար է... դաբախանա է՛:

Բացի հիւանդի հասաչանքներից, խրձթում էլ ոչ մի ձայն, ոչ մի ծպտուն չսուեց, երկիւղեց և կանացի ամօթխածութիւնից ամենքն էլ աշխատում էին, որքան կարելի է, թագնուել միմեանց ետևը, որպէսզի զրբաց Գրեգորը չտեսնէ իրենց երեսը: Դրան մօտ դանուածները մինչև անգամ դուրս փախան: Նոյն խակ ծերունի Թորոսը լռեց և, գլուխը բարձրացնելով աղջկայ դէմքի վրայից, երկիւղով սկսեց նայել զրբաց Գրեգորին:

Գրբաց Գրեգորը, որ սկզբում քիչ չէր վախեցել կատաղի, թէև և կանանց, ամբոխից, այժմ անանկով, որ իւր խօսքերն ունեցան յանկալի հետեանքը, խօսքն առաջ տարաւ, սակայն այս անգամ մեղմ, կարծես, կամենալով մեղմացնել իւր առաջուայ կոպիտ խօսքերի վաս տպաւորութիւնը:

— Ի՞նչ հարկաւոր է, որ այդպէս իրարու էք դիպչում: վախենալու ոչինչ չկայ... այ, առաջ ուրիշ էր, երբ սատանաները փորումն էին. հիմա, փառք Աստուծոյ, բոլորին էլ հանեցի. և եթէ մի շարաթից յետոյ դա ոտի վերայ չկանգնի, առաջինն ես կը լինեմ, որ իմ դլիին քար կը դցեմ: Աստուծում էք, թէ չէ... Արժան, գնաց:

Տեսնելով որ ամենքը հաւանողաբար լռում են, դարձաւ

Թորոսին ու Սասնին և սկսեց հետևեալ բժշկական խորհուրդները տալ.

— Հիմա դրան անկողնում լաւ լազաթին կը պառկեցնէք, առք կը պահէք և լոլորովին չէք անհանգստացնիլ: Զրի տեղ միշտ կաթ կը խմեցնէք և կ'ուտեցնէք այնպիսի կերակուրներ, որ հեշտ մարսուելու լինին:

Նա ասաց, թէ որոնք են այդ կերակուրները, յայտնեց, որ մի քանի անգամ դարձեալ կ'այցելէ հիւանդին և, իւր արժանապատուութիւնը միշտ բարձր պահող մարդու նման, դուրս գնաց խրճիթից:

Նա հէնց նոր էր դուրս գնացել երբ Մարթան, որ մինչև այդ րօպէն շարունակ և հեռզհեռէ ձայնը նուազեցնելով՝ հառաչում էր, յանկարծ ցնցման նման մի շարժում գործեց և թոյլ, կարծես, սաստիկ ուժասպառ, ճչաց, երևի, մարմնի սաստիկ մխտալուց.

— Վայ... մեռայ... ինձ սպանեցին... — այդ խօսքերը միայն լսուեցին նրա բերանից և նա շարունակեց դարձեալ հառաչել:

X.

Այդ օրից Մարթան անկողնից այլ ևս չկարողացաւ վեր կենալ. նրա մարմինն ամբողջապէս ջարդուած, ծեծուած էր, ձեռները, ոտները, մէջքը, մի խօսքով՝ ամեն տեղ, ուր էլ դիպել էր մաթրախը, կապտել և ուռել էր: Նրա բերանը հանգիստ չէր առել. նա շարունակ հառաչում էր: Ծերունի հայրը նստած էր նրա մօտ և լուռ ու մունջ արտասուք էր թափում. նա ողբում էր իւր յիմարութիւնը, ողբում էր իւր մինուճար զաւակը... Ծանր, անտանելի ծանր անցնում էին նրա համար գարնանային հրաշալի օրերը իւր սիրելի, իւր անդին աղջկայ անկողնի մօտ: Նա տեսնում էր, որ այդ չարաբաստիկ օրից յետոյ Մարթայի դրուժիւնը հետզհետէ վատթարանում է, նա տեսնում էր, որ իւր

Հանգչող կեանքի միակ յոյսն ու սէրը կամաց-կամաց գնում է իւր ձեռքից:

— Համ փողս դնաց ձեռքիցս, Համ աղջկոս է գնում, — շարունակ մրմնջում էր նա, նայելով Մարթայի բոլորովին նիհարած և կարծես թէ արդէն մեռած դէմքին:

Գրբաց Գրիգորն՝ իւր խոստման համաձայն՝ մի քան անդամ դարձեալ այցելեց Հիւանդին, սուտ ու մուտ մի քանի «Ֆոկուս-մոկուս»ներ արեց և, տեսնելով, որ չէ՛, բանը բուրդ է, այլ ևս չեկաւ:

Մարթան շարունակ պառկած էր երեսն ի վեր: Նրա աչքերը համարեա թէ միշտ փակ էին: Նա չէր շարժվում և, եթէ հառաչանքներ արձակում չլինէր, տեսնողը կը կարծէր, թէ նա մեռած է:

Սմբողջ երկու շաբաթ շարունակ Մարթան այգպէս տանջվում էր: Վերջին չորս օրը նա բերանը բոլորովին ոչինչ չէր առնում, աչքերը մի վայրկեան անգամ չէր բաց անում, հառաչանք այլ ևս չէր արձակում. միայն ծանր, շատ ծանր շունչ էր քաշում, կարծես, խեղդվում էր:

Ծանր, որ ամէն օր դալիս էր թշուառ ծերունուն օդնելու և մսիթարկու, տեսնելով բանն ի՛նչումն է, քահանայ կանչեց և զխտակցութիւնը կորցրած հոգեվարքին հաղորդել տուեց:

Իսկ մի օրից յետոյ անբաղդ Մարթան արդէն սառն դիակ էր: Հոգին փչելիս նրա բերանը բաց էր մնացել և այդ բաց բերանը, կարծես, խորին յանդիմանութեան նման ինչ-որ բան էր ասում, որ շրջապատող մթնոլորտի մէջ ո՛չ ոքի ականջը չէր մանում...
 ՆԱՐ-ԴՈՍ:



I.

ՊՕԷՏ ՈՒ ԱՍՏՂԵՐ

(Լուի Բուլիէ)

Երգչին ամբողջ օր ոչինչ չէ կերել,
 Թէպէս ամբողջ նորան մեծարել
 Հիւրասիրել է... բայց լոկ խօսքերով.
 Ի՞նչ պատշաճ կրղչին պատիւ տալ ոսկով:

Գիշերուան մթնում վշտոտ, գունաթափ,
 Ահա նա քաղցած զիմեց գետի ափ,
 Եւ այնտեղ հեռու դաժան մարդկանցից՝
 Լնչեց նա իւր վառ երգը ոգելից:

Երգում արամուլթիւն և մահ էր լսում,
 Սիրով և փառքով երգը վերջանում.
 Եւ կրղի տխուր ձայնին ունկնդիր՝
 Լսում էր միայն անտարբեր կրկիր:

Յանկարծ աստղերի մի խումբ լուսաւոր
 Կանգնեց, վերջացրեց զընացքն ահաւոր.
 Նայեցին երգչին բիւրաւոր աստղեր,
 Իբրև սիրալիր և տխուր աչեր:

Երկնահամարից հանդարտ իջնելով՝
 Թափուեցան նոքա գեափ մէջ հերթով.
 Եւ ալիքները ճերմակ, փրփրուն
 Փարեցին խիղջն ասաղերը փայլուն:

Երգիչը փութով ջրի մէջ մտաւ,
 Այդ ասաղեր էին,—նա չզարմացաւ,
 Շատ ու շատ առաւ նա այն ասաղերից,
 Կարծեց, թէ զերծաւ աղքատութիւնից:

Բարեբեր յոյսը նորան կախարդեց,
 Երդիչը խիղջն դէպ շուկան դիմեց.
 Երկնային դրամի—ինչ ասել կ'ուզի—
 Յարգն ու արժէքը երբէք չի նուազի:

Գնում էր աղքատը վեհ, վսեմ քայլով,
 Նայում էր այնպէս մի հպարտ դէմքով,
 Որ կարծես ծակոտ ջերերումն ունէր
 Երկնային շքեղ, թանկագին դանձեր:

Նա մի հացթուխի դռանը հասաւ
 «Ահա՛ քեզ ասաղեր—տո՛ւր ինձ հաց», ասաւ.
 — «Ի՞նչ օգուտ ունիմ փայլուն ասաղերից,
 «Փող գարձրու դոցա—կ'ազատուես քաղցից»:

Մի մեծ պանդոկի նա դուռն էր հասել,
 — «Տուէք ինձ ուտեստ, ասաղեր եմ բերել».
 — «Միայն Սրպոյչի փողերն են ասաղեր,
 «Դու եկ քիչ յետոյ, կըբացուին դռներ»:

Խղճուկը գնել մի շապիկ ուզեց,
 Սրազ քայլերով նա խանութ վազեց.
 — «Թէ՛ ձեր ասաղերը ձրի էլ դուք ինձ սաք,
 «Չեմ առնի երբէք, տուէք ինձ ստակ»:

Խեղճ՝ բանաստեղծը ճեմարան գնաց,
 Գիտնականների մէկ խումբ էր նստած,
 Տեսնելով երգչին՝ սկսան ծաղրել,
 — «Ոչինչ նոր ու նուրբ հետք չես բերել»:

Նա մի առիւծ էր, գորսանց մէջ ծնուած,
 Բայց, աւանդ, միւս օրն ընկած էր մեռած:
 Նա տարաւ իւր հետ երկնքի լուման՝
 Անպէսք աստղերը՝ խոնաւ գերեզման:

Երկու ընկերներ բռնած դազաղից
 Անցրին ծիծաղող ամբօխի միջից
 Սովամահ երգչին (ի՞նչ էք զարմանում),
 Ո՞րին ամբօխը յիմար չէ կարծում:

Ք՛ոնն եղիր, երգիչ, քեզ նմաններին
 Գողե բոյն-այրերն միշտ փակ կը լինին,
 Ք՛ոնն եղիր, աղքատ, զուրկ պատառ հացից,
 Բայց առատաձիր կրկնային լուսից:

Քո գերեզմանից, — այս է մեր յոյսը, —
 Շուտ կը բարձրանայ բազմաժառ լոյսը,
 Պահապաններն էլ՝ կրկիւղից սարսած,
 Կը փախչեն՝ թիւեր ձեռքերին բռնած:

Անշուք դազաղի մի օր կը բացուի,
 Եւ ինչպէս մի գետ, առատ կը թափուի
 Երկրի կրեսին՝ լուսով կենդանի
 Պայծառ արշալոյս, մարդկանց պիտանի:

(Թարգ. ռուսերէնից),



II.

Ս Պ Ի Տ Ա Կ Ջ Գ Ե Ս Տ .

Անձրգ, խայտառակ մահուան մատընուած
 Հունգարցի կոմսը շղթայակապ էր:
 Նա օգնել ուզեց իւր խեղճ հայրենեաց,
 Հպարտութիւնը խիստ վրդովուած էր:
 Նա նենգ ստրուկներին՝ հողով ստորացած՝
 Վաղուց անողորմ թշնամի դարձաւ,
 Եւ միշտ կռուելով ընդդէմ այս չարեաց՝
 Կոմսը կախուելու դատապարտուեցաւ:

Հազիւ նա եղաւ քրսան տարեկան,
 Բայց պիտի մեռնէր: Մահը չարիք չէ,
 Այլ սփոփիչ է վշտին հոգեկան:
 Բայց մեռնել անարգ, խայտառակ մահով,
 Կախահան ելած ծաղր ու ծանակով,
 Դառնալ կերակուր սե ազուաների—
 Ահա՛ նախատինք, չարիք սոսկալի:

Առաւօտը նա մօրը դրկելով,
 Ատում էր արտում՝ «մայր իմ, մնաս բարով,
 Ահաւասիկ ես միակ որդիդ եմ,
 Մատաղ հասակիս դատապարտուած եմ
 Կարձօրեաց կեանքիցս ես անջատուելուն:
 Սնհեաք պիտ կորչեն ինձ հետ իմ անուն,

Եւ իմ պատիւս: Խնդրում է որդիդ,
Մայր, որ դու փրկես քո խեղճ զաւակիդ:
Ոչ պատերազմի փոթորիկներում,
Ահ չեմ զգացել ոչ ծխում, հրում,
Բայց վաղուան օրը ելած կախահան՝
Ես պիտի գողամ, անրևի նման:

Մայրը ասում էր, մխիթարելով՝
Ոհհ չվախենաս, սիրած զաւակս,
Ես պալատ կ'երթամ և աղերսելով
Սրբունք կրթափեմ: Ես իմ լացովս
Սրբայի սիրտը, զուժը կըշարժեմ,
Եւ առաւօտը, երբ կըտաննն քեզ
Դէպի կախահան, պատշգամբի վերան
Թէ սև զգեստով կանգնած լինիմ ես,
Գիտցիր, զաւակս, անխուսափելի
Քեզ մահ կը լինի:

Ո՛չ ապաքէն դու, հսկայի նման,
Յառաջ պիտ գնաս մահից յանդիման:
Խճ քո արիւնը հունդարական է:
Իսկ թէ սպիտակ շոր իմ վերաս տեսնես,
Գիտցիր, որ մայրդ իւր արցունքներով
Զաւակի կեանքը դարձրեց սպահով:
Թո՛ղ դահիճներից դու բռնուած լինես,
Բայց երբէք, որդեակի, չգողաս, սարսևս:

Կոմսը զիշերը հանդիստ է քնում,
Եւ ամբողջ զիշեր մընում է քնած.
Իւր երազներում նա մօրն է տեսնում
Պատշգամբի վերայ սպիտակ շոր հագած:
Գուժկան զանգակի ձայնն է զողանջում,
Վազում են մարդիկ, հանդարտ քայլերով

Եւ շրջապատուած պահապաններով
 Նղթայած կոմսը առաջ է դնում:
 Քանի, քանի աչք պատուհաններից
 Սրբունք են թափում կոմսի յեակից,
 Ինչքան թափում են կանացի ձեռքեր
 Վերջին բարևի նորան ծաղիկներ:
 Բայց կոմսը ոչինչ բան չէ նկատում,
 Դէպի հրապարակ է միայն նայում.
 Այնտեղ պատշգամբում մայրն է կանգնած
 Հանգիստ, անվրդով սպիտակ շոր հազած:
 Ռհ, կոմսի սիրտը թնդաց խիստ ուժգին,
 Դէպի հրապարակ համարձակ քայլով
 Ընթացաւ կոմսը ժպիտը երեսին,
 Անտրտում վերև բարձրացաւ փութով,
 Զուարթ և ուրախ դահճի մօտ զնաց
 Եւ մինչև անգամ կախուելիս ժպտաց:

Բայց ինչ՞նչ մայրը սպիտակ հաղուել էր.
 Ռհ խաբէութիւն: Այսպէս կարող էր
 Սուա խօսել մի մայր, սոսկ բեկուած ահից,
 Որ իւր զաւակը չսարսէ մահից:

Ս. ԹԱՆԴԵԱՆ:

(Թարգ. ռուսերէնից).



ԱՐՁԱԿԱՆՔ.

Խոր ձորի մէջ գնում եմ ես,
Պարզ գիշեր է աստեղազարդ,
Բնութիւնը քնած է կարծես,
Եւ չորս կողմը լուռ ու հանդարտ:

Ոչ տխրակի երգն է լսվում,
Ոչ վայ տալիս իւր գիւնն բուն,
Ծառերի՛ մէջ հով չէ խաղում,
Չկայ մի ձայն, չկայ ծպտուն:

Ես, ընկզմած մտքերիս մէջ,
Առաջ եմ գնում, և իմ հոգին
Մտածում է կրկնի՞ վերջ
Հայոց ազգի տառապանքին:

Յանկարծ կուրծքիցս դուրս թռաւ
Էրնէկ մէկն ինձ տար պատասխան:
Արձազանքը տարաւ բերաւ
Եւ հնչեցրեց. «անպատասխան»:

Պատգամախօս անտես, անյայտ,
Մէկ հարցմունքիս լաւ ուշ դարձրու:
Արձազանքը միայն կիսատ
Կրկնում է ինձ խօսքս. «հարցրո՛ւ»:

Ի՞նչ է սպասում խեղճ Հայ ազգին,
Միթէ կորուստ, ոչ փրկութի՛ւն:
Արձազանքը որոտազին
Պատասխանում է. «փրկո՛ւն»:

ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԲ.

Ի՛նչ գեղեցիկ է իմ հայրենիքը,
 Ինչպէս կապոյտ է նորա երկինքը,
 Օգը անոյշ է և առողջարար,
 Զուրն անմահական է ինչպէս նեկտար:

Հսկայամարմին նորա լեռները
 Երկինքն ևն հասցնում սուր կատարները,
 Որոնք, պսակուած ձիւնով մշտապատ,
 Փայլում են, ինչպէս մարդւր աղամանդ:

Նորա գետերը բիւր վտակներով
 Սնունդ ևն առնում Եդեմի ջրերով,
 Եւ երկնածիժաղ կապուտակ լճեր
 Թպտում են, ինչպէս գեղեցիկ աշեր:

Կանաչ, ծաղկազարդ հովիտ ու բլուր
 Հօտերին տալիս ևն կուշա կերակուր,
 Իաշաերը ծածկած ոսկէ արտերով,
 Պարտէզն ու այգին լի պտուղներով:

Եւ զեանի տակը զանձեր անսպառ.
 Ոսկի ու արծաթ, թանկագին զոհար.
 Լի է նայաստան ամեն բարութեամբ—
 Բայց, աւանդ, լի է և թշուառութեամբ:

Իմ հայ եղբայրը ստրուկ է և զերի,
 Նա չէ վայելում բարիքն իւր երկրի,
 Նա խեղճ է, տգէտ, մերկ է ու քաղցած,
 Տանը ու զուրսը անխնայ հալածուած:

Նա չունի ոչինչ սեփականութիւն,
 Իւրը չեն որդին, ամուսին և տուն.
 Հազիւ մեռնելիս շնորհում են նորան
 Հայրենի հողում մի նեղ գերեզման:

Հայն իւր քրտնքով հանում է զեանից
 Ոսկի ու արծաթ, երկաթ ու պղինձ,
 Եւ նոյն երկաթից պատրաստում է նա
 Բռնաւորին սուր, իւր համար շղթայ:

Նա իւր արտերի առատ հունձերով
 Տաճկի ամբարն է լցնում իւր ձեռով,
 Իսկ ինքը, կարօտ կտոր չոր հացին,
 Սովատանջ մեռնում է հայ զիւղացին:

Հայ մարդ, մինչև երբ դու պիտի այդպէս
 Կեանք վարես անբան անասունի պէս,
 Մինչև երբ արդեօք պիտի ծանրանայ
 Օտարի լուծը պարանոցիդ վրայ:

Գլխիդ զարկում են—դու ձայն չես հանում,
 Տունդ քանդում են—դու չես բողբոջում.
 Ամեն բան, ինչ որ սուրբ է քեզ համար,
 Խլում, պղծում են—դու հեղ ես, խոնարհ:

Դու քո անցեալովն ես մխիթարվում,
 Մեռած քաջերի փառքով պարծենում.
 Նոքա ապրեցան ու անուն թողին,
 Դու ինչ ես թողնում քեզ յաջորդդին:

Աւերակ երկիր, ստրկութիւն, շղթայ,—
 Ռջ Աստուած չանէ, ես չեմ հաւատայ.
 Անդրանիկ պաշտպանը ազատութեան,
 Հայ ազգը, ստրուկ չի մնայ յաւիտեան:

Բայց ո՞վ կ'ազատէ քեզ ստրկութիւնից:
 Օտարը: Զ՛ուր է յոյսդ օտարից:
 Թէ վափազում ես դու ազատութեան,
 Պէտք է և ինքդ փշրես քո շղթան:

ԳԵՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ:



ՃԱՆՈՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

Դ Է Պ Ի Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն.

(Բողոնշտէդտից).

Հետեցէ՛ք ինձ դէպի այն օրհնուած երկիրն, ուր, ըստ աւանդութեան, զրախտն է գտնվում և ուր փոխադրվում էի են մտքով մինչև չհամողուեցայ որ նա քո աչքի մէջ է գտնվում, իմ նազելի էտրիզամ:

Հետեցէ՛ք ինձ դէպի Ջանգու և Սրաքս գետերի ծաղկապատ և ըստ աւանդութեան օրհնուած ափերն, ուր ես վերջապէս՝ երկար թափառական կեանք վարելուց յետոյ, հանգստութիւն էի որոնում, մինչև չտեղեկացայ, որ ոչ մի տեղ չէ կարելի հանգրստութիւն գտնել, եթէ ոչ քո սրտում, իմ նազելի էտրիզամ:

Հետեցէ՛ք ինձ դէպի այն այգիներն, ուր Նոյն առաջին անգամ որթ տնկեց իւր և իւրեան ժառանգող մարդկային ծարաւ սերնդի ուրախութեան ու զուարճութեան համար: Հետեցէ՛ք ինձ այն ապառաժոտ լեռնային ուղիով, որ տանում է դէպի Սյրարատեան դաշտավայրը, ուր կարմիր շորերը հագին, կայծակի նման փայլուն աչքերով և արևառ դէմքով, սուր դաշոյնը և Դամասկոսի երկար ատրձանակները լայն գօտիի մէջ անցրած, Բաղդադի բարակ նիզակը հմուտ կերպով ձեռքին բռնած՝ ձիու վերայ նստած, վայրենի քուրդն է անցնում, ուր Նոմադն իւր սև տաղաւարն է բաց անում, ուր ուղտերի կարաւաններն երկրիս արդիւնքներով բեռնաւորուած արթուն հետևողներով դանդաղ յառաջ են քայլում, ուր աւազակային կեանք վարող թաթարների գետնափոր բնակարաններն են գնտվում:

Հետեցէ՛ք ինձ դէպի այն պտղաբեր հովիտները, ուր Հայկի զաւակներն, հեռու քաղաքային ազմկայոյց կեանքից՝ ապրում են իրանց նահապետական սովորութիւններով, իրանց արտերն արօ-

րում, հօտերն արածեցնում և հիւրասիրութիւնը Աստուածաշնչի անարատութեամբ գործադրում: Հետեցէք ինձ դէպի Սրբատն, որ իւր արքայական ալեգարդ դադաթին ջրհեղեղից ալատուած տապանն է կրում: Հետեցէք ինձ դէպի Հայաստանի բարձրաւանդակը:

* * *

Ռուսաց ճանապարհորդական կառքը սպասում է դրան առաջ: Կառքի յետև կանգնած էին Գոնի երկու կապակ, իսկ մեր սպասաւոր առաջնորդն անընդհատ սարքում էր կառքի մէջ մեր բաները, որպէս զի առանց չարչարուելու նոցա վերայ կարողանանք նստել և մենք՝ ես և Ռ. զբաղուած էինք մեր վերջին ողջ ոյնները փոխադարձաբար տալով մեր պատուելի ուսուցիչ Միրզա-Շաֆուն: Իմաստասէրը սաստիկ շարժուած էր երևում, որ իւր աշակերտներից մի քանի ամսով բաժանվում է, բայց այնու ամենայնիւ աշխատում էր զուարճախօսութեամբ ծածկել իւր ցաւն. «Ի՞նչ է ասում թողրուլ Բէն-Արսլան՝ երեկ հիացնում էր ինձ բարեկամներին ներկայութիւնը, իսկ այսօր նոքա ինձ մենակ են թողնում»:

«Ալլահ սըլն իլլահ»։ Աստուած ձեզ հետ, բացականչեց նա հրաժեշտի ըոպէին: *Помело впереди!* որոտաց Գուկասի հրամայողական ձայնը: Միրուսաւոր կառապանը սուլեց, և խելօք ձիերը սրեցին իրենց ականջներն և առասպելական արագութեամբ սլանում էր կառքը, որին հետևում էին ձիաւորները: Շուտով մենք թողնէք այն հովիտն, ուր Տիխիսն է գտնվում իւր հանքային ջրերով և այգիներով, իւր սուլորութիւններով և լեզուներով: Այն սարերն, որ պատել են այդ քաղաքը, այնպէս չոր են, ինչպէս մի աւազուտ բլուր, և այնպէս մաքուր, ինչպէս մի մուսուլմանի սափրած գլուխ:

Մի՞ժամանակ պէտք է այս սարերն ծածկուած եղած լինէին բոյսերով և ծաղիկներով, որոնց ստուերների տակ գեղեցիկ Անահտի ու որոտման չաստուածոյ տաճարներն են գտնուել: Բայց սարսափելի ձեռքերը, — այսպէս է պատմում աւանդութիւնը, — քանդել և աւերել են սուրբ քաղաքներն և բարկացրել վրէժխնդրութեան չաստուածուն: Անահտը թողնում է այդ օրից իւր բնակարանը և սկսում է իշխել իւր սիրած Հայաստանում, ուր նորան պաշտում ու զոհեր են բերում, իսկ որոտման չաստուած Տիպար ջարդ ու փշուր է անում իւր որոտներով բոլոր ծառերն, բոյսերը և

այդ տեղից հրաբուխներ արձակում. կրակն այրում է արմատներն և չորացնում կանաչալարդ սարերը: Յետոյ անցնում է նա իւր սիրելի զաւակների մօտ, որոնք ապրում են Պոնտոսի արևելեան ափերին: Այդ ժամանակից յետոյ Տփլիսի չոր ու ցամաք սարերի վերայ այլ ևս ոչ մի ծաղիկ, ոչ մի ծառ չէ բուսնում: Բայց քանի աւելի ենք հեռանում Կիւրոսի քաղաքից և մօտենում Հայաստանի բարձրաւանդակին, այնքան աւելի հարուստ և իւր բազմակողմանի արդիւնաբերութիւններով բուսական աշխարհն տխուր է բարեւում մեզ ծանօթ: Այստեղ գտնում ենք մենք միևնոյն բոյսերն, ինչ որ Շոտլանդիայի սարերի վերայ կան, ուստի և կարիք չեմ զգում նկարագրելու նոցա: Նաւթային հանքերով հարուստ Սողանլուղ գիւղը հասնելուն պէս, իսկոյն այցելեցինք հռչակաւոր կարմիր կամուրջը (վրացիներն անուանում են գատէ խիլի - խիդի), որ Խրամի կամ Գեբրիտայի երկու ափերն է իրար միացնում: Այդ հնադարեան կամուրջը ներկայացնում է վրացական քանդակագործութիւնը: Առաջ նա ունեցել է չորս կամար, չորս երկար և մեծ սիւն, որոնց մէջ սենեակներ են շինուած եղել: միջին սիւնի սենեակների մէջ գտնվում էր նոյնպէս մի խանութ, որի երկու կողմը դէպի գետը նայող պատշգամբով է պատած եղել: Պատշգամբները քանդուած են, իսկ սենեակներում ապրել չէ կարելի, և չնայելով ժամանակի ազդեցութեան, կամուրջը ամբողջապէս մնացել է:

Արդէն Մուղանլուում, որտեղից մինչև կարմիր կամուրջը մի քանի ժամուայ ճանապարհ է, թողինք անյարմար սայլակն, հեծանք թուրքերի ձիերը և, չնայելով լեռնային ճանապարհներին, կարողանում էինք օրեկան 11 գերմանական մղոն կամ 77 վերստ անել:

Մի քանի վերստ՝ Պիպիսից ոչ հեռու, Արսլան-Բէգլու կայարանը չհասած, ճանապարհին կանգ առանք, ուր բնութիւնը իւր ամբողջ ուժով ներգործել էր մի ժայռի վերայ և նորան մի զարմանալի բուրգի ձև տուել:

Բազմաթիւ ցիր ու ցան եղած փոքրիկ սարերի միջևից բարձրանում է հազար հինգ հարիւր ոտնաչափ բարձրութեամբ Գեվարցին-Գաշը (Gewardzin Dasch), որի մասին գրուել են շատ գիտնական և ոչ գիտնական յօդուածներ և որի հետ կապուած են ամենասարսափելի աւազակների պատմութիւնները: Երբ մենք այդտեղից առաջ գնացինք, մեր բարի առաջնորդը պատմեց Ռուս Բեօրբերգ

(Böhrberg) գեներալի սպանութեան գործն, որ պատահել էր այստեղ 1844 թ. գարնանը: Գեներալը յոգնած օրուայ ճանապարհորդութիւնից՝ վճռում է գիշերել մի թրքարնակ գիւղում: Այդ նպատակով առաջ է ուղարկում իւր ծառաներից մէկին մի յարմար բնակարան գտնելու: Ինչպէս բոլոր ծառաները հպարտանում են իրանց տիրոջ բարձր պաշտօնով, նոյնպէս էլ անում է գեներալի ծառան, ահագին բազմութիւն հաւաքելով գիւղում իւր շուրջը:

— «Ուրեմն քո տէրը մեծ պաշտօն ունի տէրութեան մէջ», — հարցնում է նորան մի բարձրահասակ, թիկնաւէտ թուրք:

— «Սարգարից-փոխարքայից յետոյ, նա առաջինն է»:

— «Բազմաթիւ ուղղեկիցներով է ճանապարհորդում նա»:

— «Այո, նա ունի իւր հետ տասն և չորս կազակ և երկու ծառայ»:

— «Շօրը կը հասնի նա գիւղը»:

— «Մի ժամից յետոյ», — պատասխանում է ծառան:

— «Կարծեմ, ժամանակ կ'ունենանք յարմար բնակարան պատրաստելու»:

Թուրքն իւրաքանչիւր հարց ու պատասխանին խորհրդաւոր հայեացքներ է ձգում իրան շրջապատող ամբոխի վերայ: Մինչդեռ ծառան երկու գիւղացու հետ բնակարան էր նայում, ուսատեաց թրքերը պատրաստվում են յարձակուելու գեներալի խմբի վերայ:

Ի հարկէ նոքա աւելի հեշտութեամբ կարող էին իրանց ծրագիրն իրագործել, եթէ թողնէին գեներալին, որ գիւղը հասնի, բայց դա հակառակ կը լինէր մուսուլմանների սովորութեան. ով որ ոտը կոխեց նորա տան շեմքը, նա սուրբ է և չէ կարելի նորա կեանքը խզել. մինչև անգամ աւաղակն հիւրասիրութեան օրէնքների դէմ չի գնալ: Քանի որ թշնամին նորա չորս պատերի մէջ է գտնվում, նորա մազն անգամ ձեռք չեն տալ, բայց երբ նա արգէն հեռու է, այն ժամանակ յարձակվում են: Քսան զինուորուած թրքեր, հարց ու փորձ անող երկարահասակ թուրքի առաջնորդութեամբ ճանապարհ են ընկնում յարձակուելու գեներալի խմբի վերայ: Վայրենի ձայներով թուրքերը յարձակվում են յետևից նոցա վերայ: Պատերազմը կարճ և արիւնհեղ է լինում: Կազակներից և ծառաներից ոչ ոք կենդանի չէ մնում: Գեներալը վայր է ընկնում դաշոյնի մի հարուածից և հրացանի գնտակից:

Նոյն ժամին, երբ թաթարները զբաղուած են լինում իրանց զոհերի մինչև անգամ շապիկները հանելով, հեռուից մի կարաւան է երևում: Աւազակները բաւականանալով իրանց յափշտակութիւններով ցիր ու ցան են լինում ճանապարհի մօտ գտնուող անտառի մէջ:

Ես զարմացած էի, երբ յետոյ մի ոռւս գեներալի բերանից էլի մի այդպիսի սպանութեան պատմութիւն լսեցի:

«Այդ թշուառականներն», — ասում էր նա, — «յիշում են մանկութիւնից, որ Ռուսները իրենց հայրերին ոչխարների նման մորթել են, որպէս զի գոնէ նոցա որդկերանց օրէնքներին հնադանդեցնեն: Ուրեմն աւելորդ է զարմանալ, որ նոքա իւրաքանչիւր դէպքից օգուտ են քաղում վրէժխնդիր լինելու: Այստեղ առաջներում եթէ մի գողութիւն էր լինում, ոչ մի ժամանակ նա տեղի չէր ունենում առանց սպանութեան, որովհետև օրէնքն ասում է. «մի՛ յափշտակիլ կենդանի մարդուն»:

Սորանից յետոյ մենք հասանք Պիպիսի և Իստիբուլախի մէջ գտնուող շատրուանը, ուր Երևան գնացող կարաւանները կանգ են առնում իրանց ձիաներն կերակրելու համար:

Մենք ևս այստեղ կանգ առանք հանգստանալու և զբաղուեցանք մի «պիտակ և հասարակ քարի արձանագրութիւնը կարգաւով, որ պարունակում էր իւր մէջ բարեբար հիմնադրի անունը, ծննդեան տեղն և տոհմական ցուցակն: Գորա տակ քանդակել էր տուել տեղական երգիչներից մէկը մի երգ ևս:

Մեզանից ոչ շատ հեռու հանգստանում էր ձիաւորների մի ուրիշ խումբ, որի անդամներից մէկի հետ մեր Ղուկասը զբաղուած էր խօսակցութեամբ:

«Սա երևանցի իշխան թ. է», — յայտնեց Ղուկասը, մեզ մօտ վերադառնալով, — «նա ևս թիֆլիսից է գալիս իւր հետևողների հետ: Նա ցանկանում է ձեզ հետ ծանօթանալ և ձեզ հիւրասիրել: Թոյլ կրտսֆ, ես նորան ձեզ մօտ բերեմ»: Ես մի քանի րոպէ մտածեցի մինչև այդ ասելս, որովհետև նկատեցի, որ իշխանը ոռւսաց զինուորական հագուստով է և ես երկար էի ապրել Վովկասում վրացիներին և հայրերին ճանաչելու համար... Ես խորհուրդ տուի Ռ.ին մեզ հիւրասիրողի հետ խօսելիս մեծ զգուշութիւն բանեցնէ և ասացի Ղուկասին, թէ մեզ մեծ ուրախութիւն կրպատճառէ իշխանի հետ ծանօթանալը: Մենք վեր կացանք մեր տեղից, մի քանի քայլ առաջ գնացինք նորան դիմաւորելու:

Ահա մեզ մօտենում է մի բարձրահասակ, վայելչակալմբառասուն տարեկան մարդ: Նա գլխին ծածկած ունի հայկական ծանօթ գրտակ: Նորա լի և մաքուր երեսի համաչափութիւնը խանգարում է կարմիր քիթը. իսկ հաստ ու սև բեխերը մի տեսակ գեղեցկութիւն են տալիս նորա երեսին: Նորա ահագին հասակին համապատասխանում է և լայն կամարածև կուրծքը:

Նախ քան մեր ծանօթանալն իշխանի հետ՝ ես աւելորդ չեմ համարում յիշել, որ մի հայկական իշխան անելով պէտք չէ մի հարուստ, զարգացած անձնաւորութիւն երևակայել....

Մեզ յայտնի է, որ արիստոկրատիկական շրջանում ընդհանրապէս աւելի տոհմին են ուշադրութիւն դարձնում, քան թէ փողին և հարստութեան. գլխաւորն այն չէ, թէ մէկը մի բան է, մի արժէք ունի, այլ նորա նախահայրերը մի բան եղել են, թէ ոչ: Այս տեսակէտից կարող է իշխան թ..... իրան համեմատել եւրոպական իշխանական աների հետ, ըստ որում նա համարում է իրան Արամի ցեղից, որ Աբրահամի ժամանակ է ապրել և, ինչպէս աւանդութիւնը պատմում է, նա Աբրաբաթին իւր անունն է տուել: Բաւականացէ՛ք առ այժմ սորանով: Ճանապարհորդութեան ժամանակ յաճախ առիթ կ'ունենանք իշխանի հետ ծանօթանալու: Սովորական ողջոյնից յետոյ իշխանը հարցրեց ինձ, արդեօք մենք արեւմտից ենք և եկել ենք սարերի, բոյսերի առաքինութիւններն, ժողովուրդի լեզուները հետապօտելու: Մեր դրական պատասխանը առիթ տուաւ նորան շատ կեղծաւոր ֆրաղներ ասելու, իբրև թէ հետապօտութեան ձգտումներն, մեր առասպելական իմաստութիւնն մեր աչքերից երևում է: Առաւելապէս զարմացնում էր իշխանին Ռ-ը, որ այդ ժամանակ միմիայն 22 տարեկան էր:

«Դեռ այսպէս երիտասարդ է և այդպէս գիտնական», — բացականչում էր նա իմ բարեկամի իւրաքանչիւր նկատողութիւնից յետոյ. իսկ միւսները, թէև բարեկամնիս ասածներից ոչինչ չէին հասկանում, բայց իրանց տիրոջը ուրախութիւն պատճառելու համար, ցոյց էին տալիս իբրև թէ հալվում են զարմանքից:

Իսկապէս երևում էր իշխանին, որ մենք իմաստութեամբ և ճարտարախօսութեամբ աւելի բարձր ենք իրանից, ըստ որում նա իւրաքանչիւր խօսք արտասանելու ժամանակ հապում էր, որպէս զի լեզուն բացուի: Նախ նա աշխատում էր, որքան կարելի է գեղեցիկ կերպով նկարագրել իւր աղբեցութիւնը ժողովուրդի վերայ, իւր բռնած զիրքն և զարգացումն:

Երբ խօսակցութեան ժամանակ յանկարծ տեղի էր ունենում աւելի կեղծ, քան թէ իրական երևոյթ կամ, ինքը կարծում էր, թէ մենք չենք հաւատում, այն ժամանակ բռնում էր իւր հետեւողների մէկի թեքից և հարցնում հրամայողական ձայնով. «Ծիշտ չէ՞, դու աս», և դրան հետևում էր «վՍլլա՛հ, էլա դբո» (Աստուած վկայ, այդպէս է) պատասխանը:

«Իմ հայրենակիցների մեծ մասը ապրում է առանց ուշադրութիւն դարձնելու կրթութեան գործի և նորա յառաջադիմութեան վերայ: Նոքա ծխում են իրանց ծխամորձը, պարապում են և վերջացնելով իրանց գործերը, գնում են լողանայու, ուտում են, խմում, պսակվում, երեխաներ են ծնեցնում և մեռնում: Իսկ ես ի՞նչ եմ անում: Նս գնում եմ Տփլիս, արգէն երրորդ անգամն է, որ ես այնտեղ լինում եմ: Դիտում եմ տներն և մարդկանց, ապրուստի ձևը մեծ աշխարհում, դիտում եմ մեծ դահլիճների աթոռներն ու սեղանները, իմ ծառայութիւնն եմ մատուցանում Սարգարին: Նիստ ու կաց եմ անում ուսանների հետ»:

Նա ընդհատեց իւր զարգացման աստիճանի տարրների թուելը մի հայեացքով, որ երկու նշանակութիւն կարող էր ունենալ և մի շեշտումով, որ կարելի էր կամ ծաղրի կամ զարմանքի տեղ ընդունել:

Կեղծաւորութիւնն և խորամանկութիւնը այնպիսի կատարելագործութեամբ չեմ տեսել, ինչպէս հայերի մէջ է, որոնք վաճառականութեան շնորհիւ ոտնակոխ են արել իրանց նախահայրերից ժառանգած պարզ սովորութիւնները:

«Չէ կարելի մինչև անգամ երեակայել, թէ կրթութիւնը և զարգացումն մեր մէջ ինչպէս դժուար է արմատներ ձգում, չնայելով, որ ողևաններն ամենայն թոպէ մեզ օրինակ կարող են լինել: Չե՞ն ապրում ողև օֆիցերներն Նրևանում: Չկա՞ն արդեօք նոցա մէջ ամուսնացածներ: Տեսնում ես, մարդն իւր կնոջ հետ գնում է զբօսնելու, և կինն, որքան էլ գեղեցիկ լինի, ցոյց է տալիս իւր դէմքը բոլորին, ով ուզում է տեսնել, կամ, եթէ նա երեսին բարակ քող ունի ձգած, այդ անում է նա իւր երեսն արեգակից, ցրտից, քամուց միայն պահպանելու համար: Ի՞նչ է, ք կարծում, արդեօք մտածում են մեր կանայքը նոցա հետևել: Աւելի շուտով իրանց ջուրը կը ձգեն, քան թէ դէմքը բաց փողօցով կ'անցնեն: Մինչև անգամ իմ կնոջը չեմ կարողանում ստիպել, որ նա ողև կանանց հետևի: Իմ կնոջ հետ պէտք է ծանօթանաք, թէ և դժ-

ուարուժեամբ. մի սիրուն արարած է նա: Առհասարակ կանանց կարելի է սիրել, եթէ նորա գեղեցիկ և երիտասարդ են: Ի՞նչ էք կարծում գուրք»: Մենք գլխով արինք ի նշան համաձայնութեան, և նա գոհ էր երևում մեր համախոհ լինելուց:

«Ղայիտմաս, արի այստեղ և մի սիրահարական երգ երգիր», — կանչեց իշխանն իւր հետևողներից մեկին:

Ղայիտմասը մի գեղեցիկ երիտասարդ էր և արհեստով կօշկակար, բայց իւր գեղեցիկ ձայնով հրապուրել էր իշխանին և ձրի ճանապարհորդում էր նորա հետ: Ղայիտմասը մօտեցաւ, և խոնարհ գլուխ տալով սկսեց երգել:

Երգից յետոյ իշխանը հրամայեց, որ մի տիկ գինի բերեն: Գինու ամանը պտտում էր չորս կողմը և երբ հիւրասիրութիւնը օրհնուեց գինով, հերթը հասաւ հետևողներին և կազակներին: Ապա հեծանք մենք մեր ձիանները և սկսեցինք շարունակել մեր ճանապարհորդութիւնը: Մեր առաջ թռչկոտում էին կազակները, նոցա հետևում էինք՝ ես, բարեկամս և իշխանն, որ երկուսիս մէջ տեղն էր գտնվում, իսկ յետևից գալիս էին միւս ձիաւորները: Այս սարոտ երկիրը զովացնում է մարդկային աչքը բնութեան հարուստ փոփոխութիւններով. մի կողմից գարնանային արեգակը, միւս կողմից թռչունների ճլվուցը ծառերի վերայ և նեղ ու գեղեցիկ Աղստաֆայ գետի հոսանքի աղմուկը, որ մեր առաջ բարձրացող ձիւնապատ լեռնային շղթաներիցն է սկիզբն առնում:

Մենք անցնում ենք գեղեցիկ դիրք ունեցող Դիլիջան հայկական գիւղի միջով և հասնում ենք մութը կոխելուն պէս լեռնային գագաթը, որտեղից դէպի ցած երևում է ծովի մակերևոյթից հինգ հազար ոտնաչափ բարձրութեան վերայ Գեօգչայ (Սեանայ) լիճը: Մորա երկարութիւնը ինը մղոն է, իսկ 3 մինչև 4 մղոն լայնութիւնը, և ընդունում է իւր մէջ երեսուն և հինգ գետակներ: Լճի հիւսիս-արևմտեան կողմին գտնվում է մի փոքրիկ և սքանչելի կղզի, որի վերայ կանգնած է մի հայկական հնադարեան վանք, ուր ապրում են վարդապետներ, որոնք բացի աղօթելուց, պարապում են նաև Հաֆիզի փիլիսոփայութեամբ և այդպիսով հաստանում են ու կարմանում: Բայց դորա մասին մի ուրիշ անգամ: Մենք պէտք է շտապենք հասնել Երևան, ուստի չեմ ուզում յիշել բոլոր մեծ և փոքր դիպուածներն, որոնք տեղի են ունեցել Աւանայ լճի ափերից մինչև Երևան: Չուբուխլու և Ներքին Ախտա հասնելուն պէս մնացել էր միմիայն մի կայարան, որ Երևան հասնենք:

Էյլարում կրկին կանգ առանք: Իշխանն ուղարկեց Երևան երկու ձիաւոր մեր գաղուսոր յայտնելու, որպէս զի մեր ընդունելութեան համար պատրաստութիւն տեսնեն և ապա դիմեց մեզ, ասելով. «Եթէ դուք քաղաքումն մնաք, անշուշտ քաղաքի կոմսնդանսը մարդ կ'ուղարկի ձեր յետևից և կը խնդրէ, որ ամրոցում իջևանէք, բայց ես լիայոյս եմ, որ իմ հերասիրութիւնը չէք մերժիլ»: Ինչ պէտք է ասէ ժողովուրդն, եթէ իմանայ, որ դուք իմ առաջարկութիւնը մերժել էք, քանի որ մինչև Երևան միասին ենք ճանապարհորդել: Որքան ոյժս թոյլ է տալիս, կարող եմ ամենայն ծառայութիւն մատուցանել ձեզ: Իմ տանը մի դահլիճ ունեմ, որ բոլորովին եւրոպական ճաշակով է կահաւորուած ինչպէս կոմսնդանսի սենեակներն, եւրոպական աթոռներով, սեղաններով, փայտեայ յատակով և այլն»: Այսպէս թուում էր մեր իշխանն իւր դահլիճի վարդարանքը, մինչև որ մեր համաձայնութիւնը տուինք և յայտնեցինք, որ Երևանում մեր նպատակը չէ եւրոպական աթոռներ, սեղաններ տեսնել, այլ հայկական կեանքն և սովորութիւնները:

Էյլարում մեր ճանապարհորդութիւնը մի կարճ միջոց ընդհատելուց յետոյ, կրկին հեծանք ձիաներն և կամաց քայլերով դիմեցինք դէպի Հայաստանի մայրաքաղաքն:

Քաղաքից դուրս հաւաքուած էր հազարն բազմութիւն արևմտքի երկու երիտասարդներին դիմաւորելու. մենք ստիպուած էինք ձիաներից իջնել և նոցա քաղաքավարութեանը պատասխանել և գինի ու արևելեան պտուղներ ընդունել:

Եւրոպացու վերայ Երևանն առաջին նուաբ շատ վատ տպաւորութիւն է անում: Փողոցները նեղ են և կեղտոտ, տները փոքրիկ և ցած: Առհասարակ այնպիսի մտապատկերներ են իշխում մեզ մօտ արևելքի գեղեցկութեան և փայլի մասին, որ անկարելի է երևակայել. գուցէ ճանապարհորդը արժանի չէ գտնում երկար ճանապարհորդութիւնից յետոյ հասարակը, սովորականը նկարագրել, այլ բացառապէս երևակայութեանն է ոյժ տալիս:

Իշխանի տունը հասնելու համար պէտք էր ձիով դեռ բաւական տարածութիւն գնայինք և այդ տարածութեան վերայ գրտնուած բոլոր տներն էլ տգեղ էին, իսկ դորա փոխարէն հիացնում էին մեզ չարսաւում փաթաթուած անց ու դարձ անող հայ կանանց հասակը, գնացքը, հագուստն և այլն: Այս նկատելով իշխանը, բացականչեց հպարտութեամբ. «Իմ կնոջը պէտք է տեսնէք

Տենց այսօր» : Արեգակը մայր մտնելու վերայ էր, երբ մենք իշխանի փոքրիկ և հասարակ տնակը հասանք : Մեզ տարան կապերտներով զարդարուած մի սենեակ և մենք բաղդաւոր էինք զգում մեզ, որ կարող էինք թափ տալ մեր շորերի և կօշիկների փոշին և երկուսս միասին՝ հանգիստ, առանց արգելքի գէթ մի ժամ խօսել մեր ճանապարհորդութեան ժամանակ պատահած դէպքերի մասին և ծիծաղել :

* * *

« Գիտէ՞ք », — ասաց Ղուկասը, ներս մտնելով մեր սենեակը, — « որ մեզ մի քառորդ ժամից ընթրիքի պիտի սպասեն. գիտէ՞ք ինչու էր ցանկանում իշխանը մեզ իւր տունը հրաւիրել : Նա գտնվում է տեղական կառավարութեան ծառայութեան մէջ և այստեղ համարվում է, իբր մի կաշառակեր պաշտօնեայ, ուստի այդ պատճառով կոմենդանտը և գաւառապետն, որոնք աղնիւ մարդիկ են, իշխանի հետ յարաբերութիւն չունին, հետեաբար նորա նշանակութիւնը ժողովրդի աչքում ընկնում է : Եւ այդ հիման վերայ նա շատ ուղիղ է մտածում : Եթէ կոմենդանտին և միւս պաշտօնական անձնաւորութեանց այցելէք, այն ժամանակ նոքա էլ պէտք է փոխադարձաբար ձեզ այցելեն և նա առիթ կ'ունենայ նոցա հետ յարաբերութիւն ունենալու » :

— Բայց դու որտեղից գիտես այդ մանրամասնութիւնները :

« Ամբողջ երկիրը գիտէ, որ նա աւելի փող է մխում, քան թէ ունի և ձեռքն իսկոյն սեղմում է, երբ միջին մի բան է լինում : Բայց դժուարութեամբ կարելի է նորա կաշառակերութեան հետքերը գտնել, ըստ որում նա շատ խորամանկ է, չէ կարելի ցոյց տալ թէ մարդ նորան հետեւում է, որովհետեւ նա մեծ ժողովրդականութիւն և ազդեցութիւն ունի այս նահանգում : Բայց և այնպէս աշխարհումս պէտք է ամենալաւ մարդը լինի նա և եթէ նա ուղիղ ճանապարհով չէ վաստակում ամեն ինչ, այնու ամենայիւ բաժանում է վաստակածը արդարութեամբ. նորա տանը ամբողջ տարին ուրախ կեանք կը տեսնէք և նորա սեղանին ամեն ոք կարող է մասնակցել, եթէ զուարճախօս է և լաւ ստամոքս տէր » :

Ղուկասի խօսակցութիւնը ընդհատուեց և իսկոյն ներս մտաւ սենեակ ինքն իշխանը, որ իւր զարմանքը չէր կարողանում ծածկել, երբ մեզ գլխից մինչև ոտ զարդարուած տեսաւ :

« Ինչո՞ւ էք այդպէս զարդարուել, աղաներս », — հարցրեց նա ժպտելով :

— Որովհետև դու ճանապարհին յայտնեցիր, որ այսօր մեզ քո տիկնոջը պէտք է ներկայացնես:

«Նորա հետ այսօր ոչինչ չէ կարելի անել», — ասաց նա ներողութիւն խնդրելով: — «Նա շատ վախկոտ է, ուրիշ անգամ կը տեսնէք նորան: Մի օր, երբ բաղնիսից տուն կը վերադառնայ, մեր ծրագիրը կը իրագործենք: Իսկ այժմ, խնդրեմ, գնանք ընթրիք անելու և ուրախ անց կացնենք մեր ժամերը: Ղայիտմասն էլ այստեղ է, պիտի երգի, և բացի այդ մի քանի երաժիշտներ եմ հրաւիրել յոյս ունեմ, որ հաւանէք»:

Օրուայ ճանապարհորդութիւնից կրած նեղութիւնը և յոգնածութիւնը ակորժակներս բացել էր, ուստի սրտաբաց ընդունեցինք մեր ուրախ տանտիրոջ հրաւերը:

Մտանք սեղանատունը, որ չունէր իւր մէջ ոչ մի վարդարանք, կարասիք, բացի մի ցածր սեղանից: Սփռոցի տեղ ծառայում էր մի մեծ, բարակ էլաստիկական հաց, պատրաստած ըստ տեսակի հրէական մացայի, որին հայերն և թուրքերը չեօրագ են անուանում: Տեղական քաղցր գինին խմում էինք մի արծաթէ ամանից: Սեանայ լճի քաղցրահամ ձկները կազմում էին ընթրիքի մեծ մասը, ըստ որում մեծ պասի ժամանակ էր, և հայերը շատ խստութեամբ են պահպանում եկեղեցական սովորութիւններն: Շատ մարդիկ էին մեզ ծառայում: մէկը լցնում էր գինին, միւսն ամաններն էր փոխում, երրորդը իմաց էր տալիս խոհարարին, թէ այս կամ այն կերակուրն կերել են թէ ոչ:

Ամբողջ սենեակում իշխում էր հրհոց, ծիծաղ հանաք, ուստի լուրջ խօսակցութիւն սկսել չէր կարելի: Անգործ ծառաներն նստած ընթրում էին: Բոլորեքեան ուտում էին միևնոյն ամանից, բոլորեքեան խմում էին մեզ հետ միևնոյն թասից, որովհետև հայերը, նոյն իսկ կովկասի բոլոր ժողովուրդը չի ճանաչում տիրոջ և ծառայի մէջ այն զանազանութիւնը, ինչպէս եւրոպական ժողովուրդի մէջ է այդ:

Ընթրիք էինք անում առանց դանակի և պատառաքաղի, կրտում էինք սփռոցի տեղ ծառայող հացից մի կտոր և դորանով առնում էինք ամանի միջից կերակուր, որքան հացի մէջ տեղ էր լինում և բարաններիս մօտեցնում: Մեզ վարմանք էր պատճառում թէ ինչպէս վարժ է մեր տանտէրը գինի խմելում:

«Ղայիտմաս», — բացականչեց իշխանը, երբ ամաններն սեղանից վերցրել էին և միայն գինու կժերն էին մնացել սեղանի վերայ, —

«Ղայթմաս, ապա մի երգ երգիր գինու խաթրու» : Ղայթմասը՝ նախ քան իշխանի հրամանը կատարէր, փորձեց դադարեցնել երկու երաժիշտներին, որոնք սենեակի մի անկիւնում նստած՝ սարսափելի զուլոց էին բարձրացել, մէկը ձեռքին ունէր պարկիպզուկ-իշխանը մէջ մտաւ, և ապա միայն Ղայթմասը սկսեց երգել. երգի բովանդակութիւնը մօտաւորապէս այս էր. Լցրէք բաժակները գինով և խմեցէք բոլորէքեան: Խմելն մարդուս իմաստացնում է, իսկ պասը յիմարացնում: Ի՞նչ է նշանակում շունչ առնել, եթէ ոչ ոք խմել: Ի՞նչ է համբոյրը, նա է կրկնապատիկ խմել: Խմելը մարդուս երանելի է դարձնում, իսկ պաս պահելը յիմարացնում:

Եւ ահա գինու արծաթէ թասը շրջում է անդադար սեղանի չորս կողմը, մինչև որ գինին մեր գլուխն խփեց, և մենք անգիտակցաբար թողինք նոցա շարունակելիս և գնացինք ննջարան:

* * *

Գիտես, ասացի ես Ռ-ին, երբ առաւօտեան սուրճ էինք խմում. այս գիշեր մի զարմանալի երազ եմ տեսել:

— «Գուցէ երազումդ իշխանուհին է երևեցել»:

Ո՛չ երազումս տեսայ ես իմ հին հարևաններից մէկին: Երբ ես փոքրիկ ու չար երեխայ էի և ուսումնարան էի գնում, նա ինձ պատահելիս ասում էր. «Փրից, դու պէտք է աշխարհումս ամեն բանի մէջ չափաւորութիւն սիրես»: Ես ոչ մի ժամանակ առիթ չեմ ունեցել այդ իմաստին հետևելու, որովհետև վիճակս միշտ իմ դաստիարակչի դերն է կատարել և ինձ չափաւորութեան սահմանի մէջ պահել. բայց այս գիշեր, երբ երազումս տեսայ նորան, ձեռքին բռնած ունէր գինով լիք բաժակ....»

«Սանտիմենտալ մի՛ լինիլ», — ընդհատեց ինձ Ռ., — «Թող ես էլ պատմեմ իմ երազն: Երազումս տեսայ, իբր թէ ես կրկին Ստամբուլում եմ և իմ ծերունի տաճիկ ուսուցչի հետ նստած եմ Բուֆորի ափին. երկինքը կապած էր մի գեղեցիկ ծիածան և իմ ծերունի ուսուցիչն օգտուելով առթից, սկսեց բացատրել, թէ ինչու տաճիկները ծիածանը Աստուծոյ դօտի են անուանում: «Արեգակն, ասաց նա, Աստուծոյ աչքն է և երկինքը նորա մարմինը և ահա Աստուած ամբողջ օրը վերեւից նայում է մարդկանց գործերին, նա տեսնում է, ինչպէս առաքինի մարդիկ գինի չեն խմում, որպէս զի Աստուծուն սիրելի լինին, ինչպէս սրբերն աղօթում

են՝ որ Աստուծուն ծառայած լինին, Նորան, որ մարդկութեան այսպիսի սքանչելի բնակարան է նուիրել: Բայց Աստուած շատ խելօք է. որպէս զի չձանձրանայ և նեղանայ, նա ծիծաղում է ամեն բանի վերայ և երբ այլ ևս ծիծաղը չէ կարողանում պահել իսկոյն եօթը գունանի գօտին կապում է փորին, որ մարդկանց յիմարութեանց վերայ ծիծաղելուց չտրաքուի»: Մենք երկուսս ծիծաղից թուլացել էինք, այնպէս որ մենք ևս եօթ գունանի գօտիի կարիք էինք զգում՝ ծիծաղից չտրաքուելու համար:

Իշխան Թ-ն, որ կարճ ժամանակից յետոյ ներս մտաւ, ուրախ էր, որ առաւօտեան արդէն մեզ լաւ տրամադրութեան մէջ է տեսնում: Նա սկսեց մի ուրախ պատմութիւն, բայց իսկոյն ընդհատեց հետեւեալ խօսքերով. «սպասեցէք, ահա իմ կինը բակի միջով անցնում է. այժմ պէտք է ձեզ ներկայացնեմ, շտապէք ինձ հետեւել»: — Բայց մենք դեռ գիշերազգեստով ենք, պատասխանեցի ես ներողութիւն խնդրելով. — ինչպէ՞ս կարելի է այսպէս իշխանուհու առաջ գուրս գալ»:

«Ոչինչ նշանակութիւն չունի. հետեւեցէք ինձ, յետոյ ուշ կը լինի»: Նա մեզ թագգրեց այն դռան յետև, ուրտեղից իշխանուհին պիտի անցնէր և մեզ յայտնեց, որ նորա երեւելուն պէս, պէտք է իսկոյն դուրս գալ և առաջը կապել: Իսկ ինքը պէտք է յետևից ճանապարհը կտրէր:

Մի քանի վայրկեանից յետոյ մեր սկսած խաղը յաջողութեամբ պսակուեց. երիտասարդ իշխանուհին կանգնած էր մեր մէջ տեղ աչերն դէպի գետին ձգած: Բարակ և քնքոյշ կալմուածք ունէր նա, մաղերը սև էին, սակայն ընդհանրապէս աննշան: Նա հագին ունէր գեղին չուստեր և մի գեղեցիկ չարսաւով ծածկել էր իւր ամբողջ մարմինն: Իշխանը փորձեց ներկայացնել եւրոպական ձևով՝ «իմ տիկինը», — ասաց նա մեզ, մատնացոյց անելով կնոջը, — «երիտասարդ իմաստասէրներ Արևմտքից», — նկատեց նորան:

Ինձ համար ցաւալի էր տեսնել այդ քնքոյշ արարածին այսպիսի մի վատ դրութեան մէջ. ես մի քայլ յետ գնացի և, նա մի սիրալիր հայեացք ձգեց ինձ վերայ ի նշան շնորհակալութեան, որով ամենագեղեցիկ ներկայացումից աւելի լաւ հասկացանք իրար, և թեթև ոտներով ցատկեց իշխանուհին մեր միջից:

* * *

«Այժմ՝ եկէք», ասաց իշխանը, «ես ցանկանում եմ ձեզ իմ տունը ցոյց տալ յետոյ կը բարձրանանք կտուրն, որտեղեց հիանալի տեսարան է ներկայանում: Արարատն և ամբողջ քաղաքը»:

Նրբ մենք մի քանի սենեակ անցանք, որոնք բոլորովին նման էին իրար և որոնց մէջ ուրիշ բան չէր կարելի տեսնել, բացի սպիտակ պատերը և գոյնզգոյն կապերտները, վերջապէս հասանք եւրոպական անուանուած դահլիճը, որի մասին իշխանը արդէն ճանապարհորդութեան ժամանակ մեզ պատմել էր: Այդ եւրոպական դահլիճը ներկայացնում էր մի մեծ և երկար սենեակ, սպիտակ պատերով և հասարակ տախտակէ յատակով: Եւրոպական տարրը կայանում էր մի սեղանի և վեց աթոռների մէջ, որոնք ընկած էին մի անկիւնում, կարծես, թէ ամաչում էին առանձին դահլիճի մէջ երևել: «Սա եւրոպական չէ», հարցրեց իշխանն ինքնաճառան կերպով: Մենք գլխով արինք ի նշան համաձայնութեան: «Ահաւասիկ նայէք այս պատուհանին, սորա նմանն ամբողջ քաղաքում, մինչև անգամ կոմենդանտի ամրոցում չէք գտնիլ: Ի՞նչ վերաբերում է ամրոցի պատուհաններին, նորա շինուած են պարսկական ճաշակով, գլորած և գոյնզգոյն ապակիներով»:

«Բայց այժմ ժամանակ է հաղնուելու, այսօր աւագ ուրբաթ է և ես պէտք է եկեղեցի գնամ, որպէս զի իմ հայրենակիցներս չվճռովեցնեն: Նթէ ցանկանում էք ինձ հետ գնալ, պատրաստուեցէք»: Տիրիսում արդէն տեսել էինք հայկական եկեղեցւոյ ծիսակատարութիւնը, ուստի ներողութիւն խնդրելով, մերժեցինք իշխանի առաջարկութիւնը, որպէս զի երևանեան նշանաւոր պարսկական մզկիթը այցելենք, որ ուսաց իշխանութեան ներքոյ գտնուող նահանգներում դժուարին չէ. մինչդեռ ազատ իսլամական երկիրներում անհնարին է եւրոպացուն մզկիթ ոտ դնելը: Բացի այդ ունէինք մեզ հետ Միրզա Շաֆֆիից նամակ մուլային, որ և մեզ ուրախութեամբ ընդունեց: Նորա պաշտօնական պարտականութիւնները ստիպեցին մեր խօսակցութիւնը մի քառորդ ժամ ընդհատել, ըստ որում մինարէթի բարձրութիւնից ձայն որոտաց, որ հրաւիրում էր հաւատացեալներին արթնելու:

Այսօր Ալիի մահուան յիշատակն է, ուստի մոլլան պիտի քարոզէր: Նա խնդրեց մեզ հետը գնալ մզկիթ և հրամայեց ծառաներից մէկին, որ մեզ համար չուրուխներ տանէ այն տեղ: «Բայց

Թոյլ է տրուած մզկիթում ծխել», — զարմացած հարցրի ես մեր պատուելի առաջնորդին:

«Ինչու չէ. Աստուած չէ մտածում այդպիսի մանր-մունր բաների վերայ. առանց դորան էլ այսօրուան օրը հաւատը տատանվում է և, եթէ հաւատացեալներին փոքր ինչ էլ ճնշենք, այն ժամանակ նորա բոլորովին չեն գալ մզկիթ: Առանց քաշուելու ձեզ համար տեղ ճարէք, նստէք կապերտի վերայ և լսէք իմ քարոզը»:

Մենք մտանք մի մեծ կամարաձև առաստաղով դահլիճ: Նորա սպիտակ պատերը զարդարուած էին Ղորանի իմաստներով, աւելի աչքի էր ընկնում պատերի վերայ հետեւեալը՝ «Աստուած Աստուած է, իսկ Մահամեդը—Մարգարէ» . մենք տեղաւորուեցանք դռան մօտ: Մեր առաջ նստած էին բազմաթիւ շէխտներ, պարսիկներ, թուրքեր իրանց կապոյտ թիկնոցով և սև բրգաձև գտակներով. բոլորից վերև նստած էին բազմաթիւ պառաւ կանայք, գլխից մինչև ոտ կապոյտ չարսաւի մէջ փաթաթուած: Երիտասարդ կանայք չեն կարող մզկիթ ոտ դնել, որովհետև Ալկորանում գրուած է, թէ գեղեցիկներն ու ջահիլները պէտք է տանը աղօթեն:

Այնպիսի խորին լուսթիւն էր տիրում մզկիթում, որ թուրքերի զայլանի ջրի կլկոյցը անգամ կարելի էր լսել: Մոլլան, որ մի գեղեցիկ և վայելչակազմ մարդ էր, սկսեց իւր քարոզը բարձր ձայնով և մի ճարտարախօսի հանդարտութեամբ, որին իւր քարոզի հետեւանքը յայտնի է երևում:

Նա պատմեց Ալիի որդիերանց վիճակն, որ ծանօթ բան համարելով չեմ ուզում կրկնել: Յետոյ նկարագրեց Ալիք, Մեհապի թշնամու, Օմեյյադների գլխաւորների մարտիրոսական մահը. «Թող անիծուին Սուլիտները, որոնք Ալիին սպանեցին: Մահամեդ Մարգարէն ասաց. Ալին ինձ համար է և ես Ալիի համար: Ալին հաւասար է ինձ, ինչպէս Ահարոնը—Մովսիսին: Ես այն քաղաքն եմ, որ բոլոր գիտութեանց կենտրոնն է և Ալին այդ քաղաքի դուռն է: Այսպէս խօսեց Մարգարէն, բայց նորա շեսեցին իրանց Մարգարէի խօսքերը և սպանեցին Ալիին, նորա սիրածին. լացէ՛ք, հաւատացեալներ, աղաղակեցէք և գանգատուեցէք ձեր սրտի ցաւերն, որ եօթն երկինքը շարժուին»:

Մոլլայի քարոզին հետեւեց սոսկալի լաց ու կոծ, որի նմանը մինչև այսօր չեմ լսել. վայ, վայ, վայ, որոտաց ամեն կողմից և մենք ոռնեցինք, որքան մեր ոյժը թոյլ էր տալիս:

«Բարձր, — բացականչեց ոգևորուած մոլլան, շարժելով իւր ամ-

բողջ մարմինը. աւելի բարձր, որ երանելիները լսեն դրախտում, ուր նորա թափառում են առատաջուր այգիների մէջ»: Եւ աւելի բարձր որոտացին. վայ, վայ, վայ, բայց ինչպէս երևում էր մոլային այս սարսափելի բղաւորը ևս բաւականութիւն չէր տալիս, ուստի սկսեց նա. «այս տեղ խոցեց մահաբեր սուրը», ասաց նա, ցոյց տալով իւր կուրծքը, «և միւս կողմից երևեց սրի արիւնշաղախ ծայրը», ցոյց տալով իւր մէջքը: «Աղաչեցէք Աստուծուն, որ Նա ողորմի մեզ և բարկութիւն թափէ մեր թշնամիների վերայ, որ Նա իւր հայեացքով ջնջէ»: Եւ նորից կրկնուեց խլացնող որոտումն, կարծես, թէ կովկասի բոլոր քամիները, գայլերը, ճագարները հաւաքուել են միասին գրազի համար ոռնելու:

Կանայքը խփում էին ձեռքերով երեսներին, ծեր թուրքերը, մի կողմ ձգելով իրանց զայլանները, բղաւում էին վայ, վայ, վայ:

Ահա մոլան, ինչպէս երևում էր, բաւականութիւն էր զգում և այժմ աւելի հանդարտութեամբ շարունակեց նա իւր պատմութիւնը, վերջացնելով Ալիի որդի Հիւսսէյնի մահով, թէ ինչպէս նա իւր բոլոր որդկերանց հետ Օմէյյադի սերնդի սարսափելի Աբդուլայի, Եսսիդի բարեկամի խորամանկութեան զոհը դարձաւ: Վերջացնելով իւր ճառաբանութիւնը, մտեցաւ մեզ և հարցրեց, թէ արդեօք քարոզը հաւանեցինք: Ոչ մի ժամանակ, նկատեց Ռ-ն չէինք լսել սորա նմանը, եւ բղաւում էի զգածուած ցաւից և զարմանքից, ինչպէս մի երեսայ:

«Ի՞նչ պիտի ասենք ձեր գովասանքին, — աւելացրի եւ, — գովասանում է նոյնպէս աշակերտը իւր վարժապետին կամ թէ որդին իւր հօրը: Ինչպէ՞ս կարելի է խօսքով արտայայտել այն տպաւորութիւնը, որ գու մեզ վերայ արի»:

Նա մեծ բաւականութեամբ լսում էր մեր գովասանքը և նախ քան բաժանուելը՝ մեզանից խօսք առաւ իրեն կրկին այցելելու:

Մզկիթից դուրս գալով՝ մենք շնջեցինք նորա չորս կողմը և այցելեցինք ուսումնարանը: Եթէ ձեզ հետաքրքրում է մի պարսկական ուսումնարանի ներքինը, երևակայեցէք մի մզկիթ և մի փոքրիկ թատրոն առանց վարագուրի և կուլիսների: Մէջ տեղը ծալապատիկ նստած է ուսուցիչը, կողքին դրած է մի զայլան, որ նա վայելում է հանգստանալու միջոցին. նորա շուրջը նոյնպէս ծալապատիկ նստած են տասն և չորսից մինչև քսան տարեկան աշակերտներ:

* * *

Տանը մի թեթև նախաձաշիկ անելուց յետոյ, որոնցցինք Սբովեանցին՝ Պարրօտի առաջնորդին Արարատը բարձրանալու ժամանակ: Աբովեանը մի տաղանտաւոր հայ է, որ իւր գիտնական կրթութիւնը ստանալով Դորպատում և հիմնաւոր կերպիւ ուսումնասիրելով գերմանական ու ֆրանսիական լեզուները, վերադառնում է հայրենիք, ուր զարմանալի եռանդով գործում է հայրենիքի յառաջագիմութեան համար: Նա հաւաքում է իւր մօտ 20—30 աշակերտ, խօսում է նոցա հետ գերմաներէն, և նորա աշակերտները այնպիսի յառաջագիմութիւն էին արել, որ մենք արձակ խօսում էինք նոցա հետ մեր մայրենի լեզուն: Աբովեանը մի բարի առաջնորդ եղաւ մեզ համար քաղաքում ըստ պարտականութեան անելի այցելութիւնները վերջացնելու:

Ուրախ ընդունելութիւն գտանք գնտապետ ֆօն-Կիլի՝ տեղական նահանգապետի կողմից, որ մի գերմանացի էր Բալթիկ նահանգներից: Նա դժգոհ չէր, որ մենք չէինք իջել ամրոցում: «Այստեղ ես հազիւ եմ լսում իմ մայրենի լեզուն գերմանացու բերանից»,—ասում էր նա: Մենք պատմեցինք նորան, թէ ինչպէս իջ թուն մեզ հիւրասիրել է, և նորանից նոյնը լսեցինք, ինչ որ Ղուկասը մեզ պատմեց նորա մասին: «Բայց այսօր ինձ մօտ պիտի մնաք, պարոններ»,—ասաց գնդապետը,—«ես չեմ թողնիլ ձեզ»: Եւ իրաւ, այս գեղեցիկ եղանակին չէք կարող սորանից աւելի լաւ տեղ գտնել ժամանակ անց կացնելու համար: Մենք գտնվում ենք սարգարի պալատում, քաղաքի ամենաբարձր կէտի վերայ: Այս ամրոցումն էր ապրում Երեանայ ուժեղ չուսսէյն սարգարը, որ Ֆետտիհ-Սլիի միջոցով օրուան հացի կարօտ մուրացկան դարձաւ և իւր կեանքը վերջացրեց Պարսկաստանում, մի ախոռում: Նախ շրջենք, տեսնենք ամրոցը և ապա գնանք սեղանատուն գերմանական ապուր ուտելու: Պատերազմական հմտութիւն ունեցողները իրաւացի են արտայայտնել իրենց զարմանքը: Երեանայ նուաճումը առիթ է տուել կայսեր քաղաքը նուաճող Պասկեիչին Երեանեան մականունանել: Երեանի նուաճումից հեշտ հերոսութիւն չէ կարելի երեակայել: Երեանայ դիրքը ընդհանրապէս և նորա բերդը մասնաւորապէս շատ մեծ ստրատեգիկական դժուարութիւններ չեն ներկայացնում, հետեւաբար ժողովրդի առասպելական վախկոտութիւնը աչքի առաջ ունենալով, քաղաքի նուաճումը ամենահեշտ խնդիրներից մէկը կարելի է համարել:

Մենք այցելեցինք նոյնպէս սարդարի նախկին հարեմը, ուր այժմ ոուսաց հիւանդանոցն է գտնվում. առաջ վարաստանի ու Պարսկաստանի փափկասուն հարձերը պարկած կակուղ աղուամազէ մահիճների վերայ՝ Հաֆիզի բանաստեղծութիւններն էին երգում, իսկ այժմ մերձ ի մահ հիւանդներն են պառկած և ծանր հառաչանք արձակում: Պալատի բազմաթիւ սենեակները մի իշխանական տան համար շատ փոքր ու աննշան գտանք. մեր ուշադրութիւնը գրաւեց միայն մի մեծ կամարապատ դահլիճ, որի պատերն ու առաստաղը հայելուց էին շինած: Այս տեղ զանազան պարսկական նկարներ տեսանք, որոնք ներկայացնում էին նշանաւոր շահերին ու զօրապետներին, պարսկական աւանդութիւններն ու պատմութիւնը. ի միջի այլոց կային և Յկատերինէ II-ի և նորա որդի Պաւլոս կայսեր պատկերները: Պարսկական նկարները կուրացնում են մարդու իրենց գոյնդգոյն ներկերով, իսկ նկարչութիւնը գտնվում է արուեստի նախնական կոպտութեան մէջ: Նոյնպէս արժէ տեսնել արևելեան ճաշակով նկարած պատերը: Բայց բաւական է, որքան նկարագրեցինք մարդկութեան չզարգացած արուեստը: Հետևեցէ՛ք ինձ դէպի Արարատի լանջը, որ այն տեղից ցոյց տամ ձեզ այն ամենագեղեցիկ արձանը, որ Աստուած ինքն է ստեղծել:

Հեռուից երկու սար է երևում, որոնք զանազանվում են միևնորից իրենց բարձրութեամբ. ձախակողմեանը՝ Փոքր Արարատը, 1200 ոտնաչափ բարձրութիւն ունի, իսկ աջակողմեանը՝ Մեծ Արարատը, 1600 ոտնաչափ:

Մեր առջև տարածվում է մի դաշտ և ապա երևում է Արարատը, որ երկու կողմից սարերով է պատած: Ահա այդ դաշտի վրայ անցնում է ուղտերի կարաւանը. իսկ հեռու հոսում է Արաքսը, որ հազիւ նկատելի է մարդու աչքին: Օդում իշխում են գիշատիչ արծիւներ, իսկ մեղանից ոչ այնքան հեռու գտնվում է մի պուրակ, ուր գարնանային թարմ ծաղիկները անուշահոտութեամբ լցնում են օդը, իսկ այգու ու պալատի պարիսպների մէջտեղում հոսում է Զանգու գետը:

Խօսքերով չէ կարելի մի այսպիսի պատկեր ներկայացնել, և առհասարակ այն ընթերցողները կարող են հասկանալ վերևի նկարագրութիւնը, որոնք մի համանման բան տեսել են:

*
*
*

«Այդ ինչ տե՞ղ էիք մինչև այժմ», — հարցրեց իշխան Թ., երբ մենք երեկոցեան տուն վերադարձանք: — «Քաղաքի կեսը՝ նահանգապետը, ոռու սպաները Երևանի բոլոր մոլլաներն ու գիտնականները այցելութիւն էին եկել ձեզ: Ա. յնպէս չէ՞, դու ասա»:

— «Վ'Ալլահ էլա դըր» — Աստուած վկայ այդպէս է, — պատասխանեց անրաժան ծառան, որի հետ մենք պատիւ ունեցանք շատրուանի մօտ ծանօթանալու: Մենք պատմեցինք մեր ուրախ տանտիրոջ, որ ամբողջ օրը կոմենդանտի մօտ անց կացրինք:

«Գիտէ՞ք, ինչ կայ. ես ձեզ մի բան ասեմ», — ընդհատեց իշխանը մեր խօսակցութիւնը, — «այսօր դուք կոմենդանտի մօտ ճաշեցիք, իսկ վաղը նորան հրաւիրեցէք. խմչբի ու կերակրի կողմից պակասութիւն չենք ունենալ. իմ տունը ձերն է, ինչ որ դուք կամենաք, նոյնը իմ կամքն է. ինչպէս կամենաք, այնպէս էլ կրկատարուի: Եւ շատ լաւ կը լինէր, եթէ նահանգապետին էլ հրաւիրենք. մի և նոյնն է, քանի որ ուզում ենք ինձոյք տալ, մի անձնաւորութիւն աւել լինի կամ պակաս, նշանակութիւն չունի»:

Իշխանի նպատակը մենք իսկոյն հասկացանք, բայց և այնպէս խոստացանք կատարել նորա ցանկութիւնը: Կրկին գինու բաժակը շրջում էր սեղանի շորս կողմը, և մենք մինչև կէս գիշեր միասին էինք: Ես մի ամբողջ գիշեր պիտի գրէի Երևանում պատահած դէպքերը գոնէ համառօտ կերպով մի առ մի թուելու, բայց տեղի սղութիւնը ստիպում է ինձ կրճատել. այդ պատճառով ես կընկարագրեմ միայն, թէ ինչպէս էջմիածին գնալուց առաջ այցելեցինք Սուլէյման խանին: Սուլէյման խանը վերջին ժամանակներս ինքնյօժար կամքով ընդունելով ոռուաց հպատակութիւն, ընտրել է իրեն համար բնակութեան տեղ Երևան քաղաքը: Երևանում պատմում են, թէ կուրօրէն հետևում է իրենց կրօնական սովորութիւններին, իսկ ընդհանրապէս շատ ազատամիտ ու զարգացած մարդ է և նա մեզ ընդունեց այնպէս, ինչպէս մենք նորա մասին կարծիք էինք կազմել:

Նորա մեծ հնադարեան նախասենեակը բաժանվում է ընդունարանից սպրեշումէ վարագուրով, ուր գտնվում էին քսանի չափ գեղեցիկ հագնուած պարսիկ ծառաներ: Ընդունարանը շինած էր պարսկական ճաշակով. պատուհանները կլոր և գոյնդգոյն ապակիից, յատակը զարդարուած էր թանկագին կապերտներով:

պատի մօտ դրած էր մի հիանալի բազմոց, որի վերայ մենք էինք նստել, իսկ ինքն իշխանը նստել էր գահաւորակի վերայ: Սուլէյման խանը 25 տարեկան գեղեցիկ երիտասարդ էր և իրեն պահում էր գեղեցիկ սեռին յատուկ քնքշութեամբ: Այս թողնում եմ մեր խօսակցութեան մանրամասնութիւնները, միայն կը յիշեմ որ բաժանուելուց առաջ ի յիշատակ մի քանի ոտանաւոր գրեցինք: Դորա փոխարէն նա ընծայեց մեզ իւր սիրուհիներին սեփական ձեռքով գրած մի մի ոտանաւոր:

* * *

Երբ մենք վերադարձանք Սուլէյման խանի տանից, մեր բնակարանի առջև ահագին բազմութիւն էր հաւաքուել. պարսիկներ, թրքեր, հայեր, գնչուներ և այլն... «Ճանապարհ բաց արէք», — յանկարծ որոտաց մի բարձրահասակ զզլբաշի ձայն, — «ճանապարհ, ֆրանկատանի հաջիները գալիս են»:

Իսկոյն լայն ճանապարհ բաց արին մեր առջև: «Չգոյշ կաց», — կամացուկ նկատեցի Ռ.ին, — «այժմ իշխանական վեհութիւն պիտի ցոյց տանք, որպէս զի Արեւտքի պատիւը պահենք»:

Հանդարտ քայլերով և ուրախ դէմքով հասանք մեր տան դուռը, արեւելեան սովորութեամբ աջ ու ձախ բարեւելով: Սենեակում Ղուկասն էր, որ բացատրեց մեզ, թէ ինչու այգպիսի ահագին բազմութիւն է հաւաքուել փողոցում: «Իշխանը», — ասաց նա, — «ամբողջ քաղաքին իմաց է տուել, որ կոմենդանտն ու նահանգապետը այսօր իւր տանը պիտի ճաշեն: Բայց որովհետեւ դա ոչ լուռած, ոչ էլ տեսնուած դէպք է, դորա համար էլ ժողովուրդը հաւաքուել է իւր աչքով տեսնելու այդ: Շատերը մինչև անգամ օգուտ են քաղում դէպքից խնդիր տալու, որովհետեւ սովորական ճանապարհով խնդիրները հազիւ են տեղ հասնում, մանաւանդ եթէ ճանապարհը ոսկով չէ շինած»:

Շուտով երեւեցան մեր հիւրերը, բայց ժողովուրդը նոցա այնպէս ջնդուներեց, ինչպէս մեր կողմումն են անում, ուռաներով և աղաղակներով, այլ խորին լուռութեամբ: Ճաշը եւրոպական բնաւորութիւն ունէր, հետեւաբար կարիք չեմ զգում մանրամասնութիւնները նկարագրելու:

Կոմենդանտը, որ սիրում էր ամենից առաջ սուպ ուտել, ուղարկել էր իւր խոհարարին, որովհետեւ նա գիտէր, որ ասիական

խոհանոցի համար լաւ սուպ պատրաստելը դժուար բաներից մէկն է: Իսկ նահանգապետը մեր պատուի համար ուղարկել էր իւր տանից սփռոցներ, անձեռոցիկներ, դանակներ, պատառաքաղներ, մինչև անգամ գինու բաժակներ: Այժմ եմ միայն մտաբերում, որ անցեալ անգամ ընթրիքը նկարագրելիս մոռացայ յիշել մի սովորութիւն, որ ընդունուած է ոչ միայն հայերի, այլև վրացիների մէջ: Գինի խմողը միշտ ասում է իւր հարեանին. «Ալլահ վերդի», — «Եսխշի օլ», — պատասխանում է վերջինը: Բայց որովհետև ես շտապում եմ, պէտք է ձեր երեակայութիւնը ուրախ ինձոյբից յետոյ տեղափոխեմ Երևանից մի քանի մղոն հեռու՝ Այրարատեան դաշտում գտնուող Էջմիածին վանքը: Այդտեղ է գտնվում ամենայն Հայոց կաթուղիկոսի և ծայրագոյն պատրիարքի աթոռը և սինօզը, որ բաղկացած է 4 արքեպիսկոպոսից և ութ եպիսկոպոսից: Այդտեղ է հայկական Վատիկանը, և շատ զարմանալի աւանդութիւններ են կապուած այդ սուրբ շինութեան հետ, որի հիմնարկութիւնը տեղի է ունեցել 300 թ. Քրիստոսից յետոյ: Որովհետև ձիւնը հալում էր և Արարատի վերայ բարձրանալը անմատչելի էր, ուստի մենք ստիպուեցանք նախ քան շարունակել մեր ծանապարհորդութիւնը, ապաստան որոնել Էջմիածնի վանքում:

Նախ և առաջ կարևոր եմ համարում նկարագրել կաթուղիկոսի տեղապահ արքեպիսկոպոսի հիւրասիրութիւնը: Իրեն կաթուղիկոսի՝ ութսունամեայ Ներսիսի հետ ծանօթացել էի Մոսկուայում, երբ նա բաւականին ժամանակ այն տեղ էր ապրում: Հայերից, քրդերից ու թաթարներից բաղկացած մի խումբ ձիււորների հետ հասանք Էջմիածնի պարիսպը: Մեր առաջնորդ Աբովեանն այնքան բարի էր, որ վանքին իմաց էր տուել մեր գալը: Գերապատիւ արքեպիսկոպոսը մի քանի երիսկոպոսներով և վարդապետներով հանդերձ ընդունեց մեզ:

Ռ. Թողեց, որ ես խօսիմ:

Ես մօտեցայ պատկանելի ծերունուն, համբուրեցի աջը և ասացի. «Սրբազան, թուչունն ունի իւր բունը, նոյնպէս և վայրենի անասունն ունի իւր որջը. իսկ անօգնական մարդն ոչինչ չունի, ուր կարողանայ իւր գլուխը դնել»:

Արքեպիսկոպոսը պատասխանեց. «Ստարական, ի՞նչ է ասում բանաստեղծը. եթէ քո տունը հիւր է գալիս, լուսն նորա ոտները, փոխի կապերտները, որ նա քո հովանաւորութեան ներքոյ նստի

և հանգստանայ: Իմ տունը քոնն է»: Ես կրկին խօսեցայ. «Այո, Գերապատիւ Հայր, հիւրասիրութիւնն անապատը բուրաստան է շինու՞մ, իսկ ատելութիւնն—բուրաստանը անապատ»: Արքեպիսկոպոսը սեղմեց ձեռս և պատասխանեց ասածիս. «Պտարական, դու շատ իմաստուն ես խօսում, անհամապատասխան քո երիտասարդական տարիքին»:

— «Սրբազան, իմ իմաստութիւնը միայն քոնի արտափայլութիւնն է, որովհետև քո խօսքերը այնպէս քաղցր են ինձ համար, ինչպէս մանանան իւրայէլի զաւակների համար»: Ծերունին ծիծաղելով դիմեց միւսներին, մի եպիսկոպոսի ականջին մի քանի խօսք փսփսաց և ապա ձեռիցս բռնելով ասաց. «Երիտասարդ ուխտաւոր, բերանիցդ ծաղիկներ ես թափում»:

— «Սրբազան, ես ի՞նչ կարող եմ անել, եթէ ոչ ման գալ քո փռած ծեղիկների վերայ: Ես ի՞նչ եմ քո դէմ, ի՞նչ բան է մի կաթիլ շուրը ծովում, աւաղի մի հատիկը անապատում, մի լապտերի լոյսը արեգակի առաջ: Քո կամքը իմ կամքն է»: Այս համառօտ ճառաբանութիւնից յետոյ մի իշխանավայել սենեակ պատրաստեցին մեզ համար:

* * *

Ծովի մակերևոյթից գրեթէ 2900 ոտնաչափ բարձրութեան վերայ գտնուող IV դարում հիմնուած վանքին այցելութիւն գնալս իմ կեանքի ամենալաւ յիշողութիւններից մէկն է: Ես չեմ կարող ընդունել այն կարծիքները, որ ուրիշ ճանապարհորդներ յայտնել են վանքի հիւրասիրութեան եղանակի ու ձևի մասին: Միայն սիրալիր և ուրախ պատկերներ են ներկայանում աչքիս, երբ յիշում եմ այն օրերը, որ անց եմ կացրել քրիտոնէական ամրոցի հնագարեան պարսպի մէջ, որ շինուած է պարսիկների ու տաճիկների յարձակմունքներից պաշտպանուելու համար:

Գուցէ պարսական ենք նահանգապետի երաշխաւորութեան և Աբովեանի միջնորդութեան, որ այսպիսի ընդունելութիւն գտանք էջմիածնում, որ մենք բոլորովին չէինք սպասում:

Կայսերական տան անդամների և ուսաց զինուորական նախարար Չեռնըշեվի այցելութեան պատճառով, վանքի մի փոքրիկ մասը եւրոպական տեսք էր ստացել: Ես չեմ սխալվում, որ մեր ննջարանի պատերը պատառապատ էին: Էջմիածնում գիտեն արդէն գործ ածել սեղան, աթոռ, դանակ, պատառաքաղ, անձեռո-

ցիկ, բաժակ, գինու շիշ... Այն սեղանը, որի շուրջը մենք նստած մի քանի արքեպիսկոպոսների հետ ճաշում էինք, այնպես գեղեցիկ էր սարքուած, որ ֆարիզի ամենալաւ հիւրանոցներում գորանից լաւ չեն: Բայց մի բան կընկատեմ. «ծաղիկ ձեր ոտների առաջ» յաճախ լսելի ողջոյնը դատարկ ֆրաչ չէր, քանի որ ամեն առաւօտ մեր սենեակում և ճաշի ժամանակ մեր ամանի մէջ մի հոտաւէտ փունջ էինք գտնում: Հոչակաւոր գրագարանը մենք ամեն օր էինք յաճախում, բայց ինչ ինչ հանգամանքների պատճառով դա երկար չտևեց: Գիտնական աշխարհին ծանօթ իւր Վրաց գրականութեան մասին երկասիրութիւններով երիտասարդ Բրօսսէն հրատարակել է ֆրանսերէն այդ գրագարանի ցուցակը: Այդ չվերջացրած աշխատութիւնը ապացոյց է, որ Էջմիածնի գրագարանի գրականական հարստութիւնից օգուտ քաղելը մշտական արգելքների հետ է կապուած: Մի ուրիշ աշխատութեանս մէջ ես արդէն խօսել եմ մի զարմանալի երևութի առթիւ, որ նշմարելի է Հայոց գրականութեան մէջ: Նա հարուստ է փիլիսոփայական, պատմական, աստուածաբանական գրուածներով, բայց չունի նշանակութիւն ունեցող մի բանաստեղծական արտագրութիւն, չնայելով որ երկրի դիրքը և պատմութիւնը, նոյնպէս և ժողովրդի վաղ ծանօթանալը (Թարգմանութեան միջոցով) յունական և հռոմէական բանաստեղծների հետ, կարող էր առիթ տալ դորան: Բայց և այնպէս մեծ յոյս ունէի իմ տեղական բարեկամներիս միջոցով հայկական ու պարսկական երգերի ժողովածու ստանալու: Գլխաւորապէս ես պարտական եմ մեր բարի Աբովեանին, որ յոյս անկատար չմնաց, որովհետև ինքս անծանօթ լինելով հայ ժողովրդական լեզուին, ստիպուած կըլինէի մի քանի թաթարական և պարսկական երգերով սահմանափակել իմ ժողովածուն, եթէ Աբովեանը յանձն չառնէր կազմել ինձ համար Երևանայ սարգարեատի բոլոր ժողովրդական երգերի ժողովածուն: Եւրոպա վերադառնալուց ես իսկոյն ստացայ Աբովեանից իւր ձեռքով գրած և գերմաներէն լեզուով ծանօթաբանած մի տետր, ուր նա խոստանում է դեռ մի քանիսն էլ ուղարկել: Իմ յարգելի բարեկամ՝ Բերլինի համալսարանի պրօֆէսոր Պետերմանը կարողացաւ ժողովրդական լեզուով գրածը մի առ մի ինձ մեկնել, բացատրել: Ժողովածուն առանձին հրատարակելու համար դեռ փոքր է, իսկ այս տեղ զետեղելու համար — մեծ:

* * *

Ես թողնում եմ մեր ճանապարհորդութեան նկարագրութիւնը, որ արինք Էջմիածնի շրջակայքում, թողնում եմ նոյնպէս և մասունքների ու այն հարստութեան նկարագրութիւնը, որ Էջմիածինը ունի իւր պարիսպների մէջ: Բացի Նոյեան տապանի մի կտորից, սրբութեամբ պահպանած միւս բաները՝ ինչպէս՝ դամբը, փայտի կտորներ Քրիստոսի խաչից, առաքեալների շորեր և այլն, վաղուց արգէն այնքան շատ եմ տեսել, որ այդ բոլորից կարելի է մի նոր Նոյեան տապան շինել: Ես չեմ խօսում դոցա մասին, որովհետև աշխատութեանս ծրագրից դուրս է իմ նախկին աշխատութեանս մի բանաստեղծական յաւելուածն է դա, որի բովանդակութիւնը աւելի արգագրական, վիճակագրական և քաղաքակրթական-պատմական է:

Երբ մենք Էջմիածին էինք գնում, երկինքը պարզավճիտ էր, և արեգակի խորշակից այրվում էր գետինը. իսկ այժմ, մարտի վերջերին, Երևանից Թիֆլիս վերադառնալիս, այնպէս ցուրտ էր, որ քիչ էր մնացել ցրտին զոհ գնայինք: Չանգուն այնպէս էր սառել, որ սառցի վերայ կարելի էր վազել, խաղալ:

Արաբսի հովիտը ծածկուած էր երկու ոտնաչափ ձիւնով. իսկ պողատու ծառերը, որ մեր գալու ժամանակ ծաղկած էին, թափել էին իրենց գարնանային վարդարանքն և գլուխները խոնարհել: Թէպէտ եղանակի անսպասելի փոփոխութիւնը հաղուապատեհ բան չէ Հայաստանի բարձրաւանդակում, բայց և այնպէս վանքի ծերունի հայրերը չէին յիշում այսպիսի ցուրտ եղանակ.

Վանքին մեր հրաժեշտը տալուց յետոյ, երբ դաշտի հոտաւէտ ծաղիկների փոխարէն խօսքերի ծաղիկներ էինք գործ ածում, վերադարձանք Երևան գրեթէ սառած և իջանք մեր հայ բարեկամի տանը: Աւելի և աւելի սաստկացող ցուրտը և սոսկալի քամին ստիպեցին մեզ մի քանի օր աւելի մնալ Երևանում, քան թէ ինչպէս վճռել էինք:

Մենք ընդունեցինք քաղաքի քրիստոնեայ և մահմետական հոգևորականների այցելութիւնը, և մեր գրականական պայուսակը, բանի գնում էր, այնքան հարստանում էր յիշատակութիւններով: Վառարան չլինելու պատճառով մեր բարեկամը գինով էր տաքացնում մեզ և Աբովեանի ներկայութիւնը, որքան թոյլ էին տալիս նորան հանգամանքները, ուրախացնում էր մեզ: Հայերը

մեծ բաւականութիւն էին զգում, երբ իրենց որդկերանց գովասանքն էին լսում մեղանից և առաւել ևս ուրախանում էին, երբ նորա մեզ հետ բաւականին վարժ գերմաներէն էին խօսում: Մեր ծանօթութիւնը ընդլայնանում էր և համարեա իւրաքանչիւրը մի նորութիւն էր տալիս մեզ երկրի, կեանքի և սովորութեանց մասին:

«Հաւանում էք մեր նահանգապետին»,— հարցրեց ինձ մի ծերունի վաճառական:

— Շատ լաւ է,— պատասխանեցի ես,— ամեն տեղ նորա գովասանքն եմ լսում:

«Այո՛, մի հիանալի պարոն է»,— նորից սկսեց ծերունին,— «Աստուած տայ, որ ամեն տեղ էլ այդպիսի մարդիկ լինին: Նա սատանայի խստութիւններ է բանեցնում, բայց մի և նոյն ժամանակ ազնիւ է, որի նմանն ես կեանքումս չեմ տեսել: Նա ոչինչ չէ ընդունում, ինչպէս կամենաք, խնդրեցէք. ոչինչ չէ վեր առնում»:

Ծերունին հազար ու մի տեսակ գովասանք էր թափում նահանգապետի վերայ և ամեն անգամ էլ կրկնում էր. «նա ոչինչ չէ ընդունում»:

Ես շատ հետաքրքրուեցի և խնդրեցի, որ ծերունին բացատրէ, թէ ինչու համար է նա արժանի այդ գովասանքներին: Ծերունին երկար-բարակ պատմեց, թէ ինչպէս մի վաճառականի հետ գործ է ունեցել դատարանում մի խոշոր գումարի համար և ինչպէս մօտ էր անցալող վախճանը, բայց ճշմարտութեան զգացմունքը ստիպել է նորան դիմել նահանգապետին. սա հրամայել է հետազօտել գործը, և ծերունին արդար է դուրս եկել:

«Ես չէի իմանում,— շարունակեց շատախօս թուրքը,— թէ ինչպէս յայտնեմ իմ շնորհակալութիւնը: Վերցրի քսան ոսկի, դրի ծրարի մէջ նորան նուիրելու իբրև մի չնչին յիշատակ: Թէև շատ չէ, ասացի ես, բայց ձերդ պայծառափայլութիւնը միշտ կարող է ինձ վերայ յուսալ»:

— Ապա նահանգապետը ի՞նչ պատասխանեց,— հարցրի ես հետաքրքրութեամբ:

«Ի՞նչ ասաց. «շան որդի», ասաց, ինձ կաշառակե՞ր ես համարում: Ես քեզ իսկոյն կալանաւորել կրտամ, եթէ չհեռանաս այս տեղից»: Եւ այնպէս մէջքիս տուեց, որ գլուխս պատին կպաւ, և նա ոտներիցս բռնելով սենեակից դուրս շարտեց, ասելով. «սպա-

սի՛ր, ես կըսովորեցնեմ քեզ, թէ ում կարող ես կաշառել»: Հիանալի պարոն է,— գոչեց ծերունին,— այսպիսի մի բան մեր երկրումը չենք տեսել»: Բոլոր հարեանները հաստատեցին ծերունու ասածները, և նորա գովասանքներին վերջ չկար:

Սեղանի մօտ նստած էր տեղացի մի երիտասարդ, որ երգերով և հէքիաթներով մեզ պիտի զուարճացնէր: Նա թուրքերէն էր պատմում, որ ամենքը հասկանան. հայերը այնպէս գիտեն թուրքերէնը, ինչպէս իրենց մայրենի լեզուն: Առ հասարակ երկրի ժողովրդական երգերի մեծ մասը թուրքերէն է: Ես հաւանեցի մի հէքիաթ, խնդրեցի, որ կրկին պատմէ և ես արձանագրեցի:

Շատ տարի առաջ Արտաշատ քաղաքում եղել է մի ծերունի հայ թագաւոր իւր սիրուն կնոջ հետ միասին: Կինը օժիտ էր բերել տասն և երկու մեծ արկղ թանկագին իրեղէններով լի: Նա համարեա հարիւր տասն և երկու աղախին ունէր: Թագուհու քոյրը մի աղջիկ ունէր, որ աւելի թարմ ու գեղեցիկ էր, քան թէ ինքը, դորա համար էլ թագուհին միշտ նախանձով էր նայում նորան: Թագուհու անունը Հռիփսիմէ էր, իսկ քրոջ դստերը — Հորոշան: Այդ Հորոշանը Արտաշատի արքայական պալատի բալանիներն էր պահում. նորա իշխանութեան ներքոյ էին գտնվում թագուհու տասն և մէկ արկղի բանալիները, իսկ տասն և երկրորդինը թագուհին պահած ունէր:

Հորոշանը շատ էր ցանկանում իմանալ, թէ թագուհին ինչ է թագցրել այդ մեծ արկղի մէջ, որովհետև բոլոր 11 արկղները գտնվում էին պալատի այս կամ այն սենեակում, իսկ 12-րդ թագուհու խորհրդաւոր սենեակում: Բացի այդ ամեն տեղ պահապաններ էին նշանակուած. եթէ թագուհին իւր սենեակումն էր լինում, այն ժամանակ ոչ ոք իրաւունք չունէր ոտ դնել այն տեղ, հակառակ դէպքում մտնողը մահուան պատժի պիտի ենթարկուէր: Թագուհին օրը երեք անգամ էր առանձնանում իւր սենեակում:

Մի օր, երբ թագուհին իւր նաժիշտների հետ գնացել էր լողանալու՝ իւր մարմինը օժելու և Անահտի սուրբ ծաղիկներով զարդարուելու. Հորոշանը չկարողանալով իրեն զգալ, սկսում է որոնել բանալին թագուհու սենեակում, որ տեսնէ, թէ ինչ կայ արկղումը: Երկար որոնելուց յետոյ վերջապէս հասնում է իւր նպատակին. բանալին գտնում է Արտաշիւր արքայի սենեակում թագցած, որի մասին ինքը թագաւորն էլ տեղեկութիւն չունէր:

Ծերունի Թագաւորը այնպէս սիրահարուած էր իւր կնոջ, որ բարորդին չէր ենթադրում, թէ իւր ամուսինը անհաւատարիմ կարող է լինել: Հորոշանը շտապում է բաց անել արկղը և սարսափով յետ է քաշվում, երբ նորա առաջ դուրս է թռչում մի սիրուն երիտասարդ խափշիկ, որի մարմինը փայլուն է, ինչպէս փղոսկր և սև, ինչպէս Արաքսի ափերին Թափառող ժողովրդի տաղաւարները: Ականջներից դինտեր էին կախուած և գանգրահեր էր նա, ինչպէս Հորոշանի հօր ոչխարները, իսկ ատամները սպիտակ էին, ինչպէս Արաքսի ափին բուսնող շուշանը:

Հորոշանը փորձում է զլատուել խոյս տալով, բայց երիտասարդ խափշիկը բռնում է նորան իւր ուժեղ բազուկներով: Հորոշանը ուզում է բղաւել, բայց վախենում է, որ Թափառորն ու պալատական կանայքը կըլսեն, ուստի լուռ ու մունջ մնում է կանգնած նորա առաջ: Երիտասարդ խափշիկը հիանում է, տեսնելով Հորոշանին, որովհետև սա Թագուհուց գեղեցիկ էր ու Թարմ:

Այդ իսկ միջոցին Թագուհին անպզուշուԹիւնից ջուրն ընկած լինելով ուղարկում է իւր նաժիշտներից մի քանիսին, որ շոր բերեն: Որովհետև բանալիները Հորոշանի մօտ էին, նաժիշտները սկսում են որոնել նորան պալատի սենեակներում: Նաժիշտները չէին գտնում նորան, որովհետև նա գտնվում էր Թագուհու խորհրդաւոր սենեակում խափշիկի հետ: Երբ Հորոշանին ոչ մի տեղ չեն գտնում, չնայելով, որ բոլոր նաժիշտները նորան որոնելով են զբաղուած լինում, Թագուհին սաստիկ զայրացած՝ առանց ոտնաշորի շտապում է իւր ամուսնու սենեակը 12-դ արկղի բանալին առնելու և չէ գտնում: Բարկացած, զայրոյթից կարմրած այտերով նա շտապում է իւր սենեակը և տեսնում է, որ Հորոշանը փակում է արկղը:

Հորոշանը, տեսնելով իւր մօրաբորջ, սարսափում է, բայց խկոյն ինքն իրին զսպում է, ձեռքերը դնում կողքին և բարկացայտ հայեացք ձգելով մօրաբորջ վերայ, խրոխտ ու հպարտ առաջ է գալիս: Ո՞վ է կարող նկարագրել այն կծու խօսքերը, որ Թափվում էին Հորոշանի նազելի բերանից: «Ա՛յս է իմ արքայազն մօրաբորջ այն վեսմ առաքինուԹիւնը, որ գրուատում են և երգում Մասիսի հովիտում և Արաքսից մինչև Եփրատի ափերը: Ա՛խ, ես անբաղդ եմ, որ այս տան մէջ ապաստան պիտի որոնեմ, ուր ամօթն ու բարոյականուԹիւնն ոտնակոխ են եղած և ողջախոհուԹիւնը մի

խափշիկով քողարկուած: Խեղճ Արտաշէր, հաւատարիմ ամուսին անհաւատարիմ Հռիփսիմէի: Երկրիս չքնաղ կոյսերը քո դէմքին էին կարօտ, սակայն նորա չարժեցին քո սիրտը և դու սառնասրտութեամբ խոյս տուիր լեռնային երկրի գեղեցիկ արարածներից, որպէս զի արժանի վարձատրութիւն ստանաս սիրոյդ համար: Ա՛խ, այդ էր պակաս, որ Արտաշէր տունը թագուհու ձեռքով պղզած տեսնեմ, որին նա պաշտում է, ինչպէս մի առաքինութիւն»: Հորոշանը անընդհատ գանգատուելով, միջոց չէ տալիս թագուհուն խօսելու: Վերջ ի վերջոյ Հռիփսիմէն խնդրում է Հորոշանին, որ ոչ ոքի բան չասէ, երկիւղ կրելով թագաւորի վրէժխնդրութիւնից: Թագուհին մտածում է մի կերպ ոչնչացնել իւր քրոջ գասերը, բայց սպանութիւնը չէ յաջողվում. Հորոշանի տեղ մի անմեղ նաժիշտ է զոհվում:

Հորոշանը վախենալով, որ մի գուցէ իրան սպանեն, փախչում է մի հեռաւոր լեռնային երկիր և այն տեղից յայտնում թագաւորին խափշիկի մասին: Արտաշէրը սաստիկ է սիրում իւր մատաղահաս կնոջը և չէ հաւատում նորա անհաւատարմութեանը, մինչև որ ինքը ակնատես է լինում: Մի օր թագաւորը վրայ է հասնում այն ժամանակ, երբ կինը իւր սենեակում փաթաթուած խափշիկի վզովը՝ ասում էր. «Թող երբէք քո գլուխը չբաժանուի իմիցը»: Թագաւորը հանում է դաշոյնը, մի հարուածով կտրում խափշիկի գլուխը և փորձում է Հռիփսիմէին էլ նոյն վիճակին ենթարկել, բայց ձեռքը թուլանում է և դաշոյնը վայր ընկնում:

«Թող ցանկութիւնդ կատարուի, անհաւատարիմ կին», — բացականչում է թագաւորը, — «խափշիկի գլուխը երբէք պիտի չբաժանուի քո գլխից»: Նա հրամայում է խափշիկի գանգը ոսկով պատել, որ թագուհին, իբրև զարդ, կրէ նորան իւր գլխին:

Այդ ժամանակ Հորոշանը տրտում թափառում է անտառներում, ողբալով իւր թշուառ վիճակը: Չմերուայ ցուրտ օրերին էր. երկիրը պատած էր ձիւնով և սառցէ պատանքով: Սակայն զարմանալին այս է, Հորոշանը ուր որ դնում էր ոտը, այն տեղ իսկոյն և եթ ծաղիկ էր բուսնում, ուր նայում էր, այն տեղ ձիւնը, ասես, գարնանային արեգակի ճառագայթներից, հալում էր. ուր նա շունչ էր քաշում, այն տեղ ծառերը իւրեանց ձիւղերից թափ էին տալիս ձիւնը և ծաղկում: Մինչև անգամ նորան տեսնելիս վայրենի գազաններն ուրախութիւնից թռչկոտում էին: Ահա, թէ որքան մեծ կենսատու ոյժ ունէր նա:

Սակայն ուրախութիւնը նորա սրտից հեռի էր. նա զղջում էր իւր անցեալը և սպասում Աստուծուց, որ հոգին առնէ: Այսպէս տխուր ու կոտորած սրտով երկար ժամանակ ապրում էր, չունենալ իւր մօտ ոչ դք, բացի անասուններից և ծառերից: Խոնաւ գետինն էր նորա մահիճը, իսկ ծածկոցը—կապոյտ երկինքը: Եւ նա այդ գրութեան մէջ, սաստիկ երկունքով որդի է ծնում: Ճագարներն ու առիւծներն են երգում մանկան օրորոցի տաղերը: Որդու դէմքը արատ է ունենում և մօր համար դա մշտական վշտի պատճառ է դառնում: Այնու ամենայնիւ նա մայրական սիրով վառուած՝ խնամք է տանում որդու վերայ և կամաց-կամաց անբաղդութիւնը կորչում է. որդին գեղեցկանում է, ինչպէս մի հրեշտակ. Հորոշանը այժմ մահ չէ ցանկանում, որովհետեւ որդին մեծացել է և միակ յոյսն ու ապաւէնն է:

Հորոշանը դորանով կրած չէ լինում բազդի բոլոր հարուածները. նա ամենանեղ օրեր պիտի քաշէր. նա իւր միակ որդուն պիտի կորցնէր: Երկարատեւ հիւանդութիւնից յետոյ որդին մեռնում է, և Հորոշանին սոսկալի յուսահատութիւն է տիրում: Նա մտադիր է լինում յօժար կամբով վերջ տալ կեանքին և ահա պատրաստվում է մի բարձր ժայռից իրեն ցած նետելու. նա ահ ու դողով յետ է քաշվում, տեսնելով իւր առաջ մի լուսեղէն երևոյթ: Լուսեղէն երևոյթն ասում է, մի՛ վհատիլ, Հորոշան. ես Անահիտն եմ, սիրոյ չաստուածուհին: Գու պղծեցիր իմ տաճարը և դորա համար էլ այսբան ժամանակ կրեցիր պատիժ. սակայն հասել է ներելու ժամը: Այլ ևս երկիրը քեզ համար դժոխք պիտի չլինի: Անցեալ մեղքերդ ներում եմ, ինչպէս և Հոսիսիմէին: Իջի՛ր դաշտավայրը և դու ուրիշ կեանք կրմտնես»: Այս ասելուց յետոյ Անահիտը անհետանում է:

Հորոշանը կատարում է Անահտի հրամանը, ցած է իջնում ժայռից և տեսնում, որ դաշտավայրում մի իշխան որսորդ՝ ձեռքին բազէ բռնած, թուշում է իւր առաջ: Էլ ի՞նչ պատմեմ. սորանից յետոյ ամեն բան պարզ է. նորա ամուսնանում են և մինչև ծերութեան վերջին րոպէները իրարուց անբաժան են ապրում: Հոսիսիմէն երջանիկ օրեր էր վայելում: Եօթը տարի շարունակ նա պատիժ է կրում, բայց մի օր թագաւորը խղճալով՝ առնում է նորա դիւից խափշիկի կառափը և թաղում հողի մէջ: Յետոյ ասում է. «այս օրուանից թող թաղուի այն ատելութիւնը, որ ունէինք միմեանց դէմ»:

Երբ շատ տարիներից յետոյ այդ կանայքը տեսնում են իրար, հազիւ կարողանում են պատմել իրենց քաջած օրերը: Մարդկային վիճակը մաքրում է մոլախոտը մարդու սրտից և նորս տեղ բնքոյշ ծաղիկներ բուսցնում:

* * *

Մեր հրաժեշտը տալով Հայաստանի լեռներին, երկզքին Արարատներին ու Արագածին, վերադառնում ենք Տիֆլիս՝ իմաստութեան դպրոց:

Երևանում հազիւ մի ժամ մնայինք, բայց ահա դալիս են երկու մոլլա, որոնց ուղեկցում են երկու մարդ՝ ղայլան կրողներ, մի նամակ յանձնելու Միրզա Շաֆֆիին, որ երկրիս գիտուններից մէկն էր: Վերջապէս հասաւ և մեր անջատման ըոպէն: Երևան գնալիս թէև նեղութիւնների հանդիպեցանք, բայց վերադառնալիս աւելի ևս պիտի քաջէինք: Սեանայ լճի մօտ քիչ էր մնացել սառչէինք կամ ձիւնի մէջ թաղուէինք, ինչպէս մի քանի օր առաջ ուղտերի մի մեծ կարաւան թաղվում է: Այդ ստակալի դէպքի հետքերը դեռ չէին կորել:

Հեռացնենք մեր աչքը այդ սարսափելի տեսարանից, և, փոխանակ ճապարհորդութեան ժամանակ մեր կրած նեղութիւնների հետ ծանօթանալու, հետևեցէք ինձ դէպի մի հայ գիւղ: Այս տեղ էլ մենք տեսնում ենք նոյն կեղտոտ, կոպիտ գետնափոր տները, ինչ որ վրաստանում: Իւրաքանչիւր տան առջև դուռ կրտսնէք զգուշութեամբ շինած կոնաձև մի ըլուր՝ 12—20 ոտնաչափ բարձրութեամբ: Այս ըլուրը, որ գոյացել է տան և ախոռի ազգից, վառելու համար է: Այս Խեւառ չորացրած է արեգակի ջերմութիւնով: Երբ բլրակի մի կողմը սկսում է դարտակուել, իսկոյն լցնում են: Թէպէտ անախորժ է տեսնել, որ այսպիսի կեղտոտ բան են վառում հայ թիւերու և կերակուր պատրաստելու համար, բայց աւելի անախորժ է, երբ մարդ իմանում է, որ այդ բանով կանայքն են պարապում: Միշտ կարելի է տեսնել ինչպէս կանայք՝ գեղեցիկ հագնուած, զեղին կօշիկներով, կարմիր վարտիքով, կարճ կապսոյով և երկար չարսաւով թեկաք են պատրաստում: Այս տեսարանին մենք ականատես էինք մի գիւղում: Մե՛ծ բաղդաւորութիւն է, որ այս տեղ ձեռք համբուրելը սովորութիւն չէ:

Մտնելով մի հայ գիւղացու ընտանիք, պիտի կարծենք, թէ

Արրահամի ժամանակին ենք ապրում: Հարուստ դիւղացու տանը մի առանձին սենեակ կը գտնէք իգական սեռի համար. իսկ աղքատի տանը միայն մի սենեակ է, ուր մարդիկ բաժանուած են իրանց ընտանեկան անասուններից մի փայտէ ցանկով: Ձկայ ոչ պատուհան, ոչ ալժոռ, ոչ էլ սեղան: Սենեակի կտուրից մի ծակ կայ,— դա լուսամուտն է. յատակին փռած է խտր, իսկ վըպից ծածկած է կապերտով.— դա փոխարինում է ալժոռ-սեղանը: Կանանց սենեակի մէջ տեղում կայ մի փոս (թոնիր) հաց (լաւաշ, շեօրագ) թխելու համար:

Վերջացնում եմ այս գլուխը հայերի և շայաստանում ապրող մուսուլմանների մի քանի նախապաշարունէքը յառաջ բերելով: Նախ հայերինը.

Ով իւր ձեռը գրպանդ մտցնի, իմացի՛ր, որ կինը անհաւատարիմ է լինելու:

Եթէ մի կին մի օտար մարդու գլխարկը դնի, մինչև անգամ ինչպէս հանաք, իմացի՛ր, որ նորա մազերը թափուելու են:

Հիւանդի սենեակում միշտ հրեշտակներ են լինում, ուստի ամեն մի ներս մտնող՝ դեռ չնստած, մատներով պիտի խփէ հիւանդի կողքին դրած չունգուրին հրեշտակներին զուարճացնելու համար: Սենեակը զարդարած պիտի լինի թանգագին իրեղէններով և շալերով: Նոյնպէս սովորութիւն է հրեշտակների համար մրգեղէն և խմորեղէն պատրաստել, կամ գոնէ ցոյց տալ իրենց բարի կամքը, որովհետև հրեշտակները կարօտ չեն երկրային զըուարձութիւններին, հետևաբար բաւական է մի աման քաղցրեղէն կամ խմորեղէն դնել սենեակում. իսկ մրգեղէնի համը տեսնելու համար պէտք է սենեկի իւրաքանչիւր անկիւնում առաջօրէն ծուռկ չդրել:

Պարսիկներինը և թաթարներինը.

Երբ երկոտանի ձի ես գտնում, խնայի՛ր թշնամուդ և մի տալ նորան: Երբ մի ձի ես գտնում չորս սպիտակ ոտներով, ընծայի՛ր բարեկամիդ: Եթէ երեք սպիտակ ոտնով, տո՛ւր որդուդ, իսկ եթէ մի սպիտակ ոտնով կամ առանց սպիտակ ոտի, պահի՛ր քեզ համար:

Յ. ԲԱՐՍՈՒԴԱՐԵԱՆ:



ԹԷ ՈՎՔԵՐ ԷԻՆ

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՅ ԵՒ ՆՈՅԱ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ՍԵՐՆԴԻ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԸ:

Իւրաքանչիւր պատմական մեծ իրողութիւն, որ տեղի է ունենում մի որ և է մեծ կամ փոքր ազգութեան պատմական կեանքի շրջանում՝ նախապատրաստվում է փոքր առ փոքր կարճ կամ երկար ժամանակի ընթացքում, նայելով այդ ազգի ներքին և արտաքին հանգամանքներին:

Վարդանանց պատերազմը հայ ազգի պատմական կեանքի ընթացքում տեղի ունեցած ամենամեծ իրողութիւններից մէկն է, ուստի և չէր կարող յառաջ դալ անպատրաստից. սակայն ինչպէս նախապատրաստուեցաւ հայութեան պարծանք բերող և նորա կեանքին շարունակութիւն տուող այդ ճակատամարտը, ո՞վ նախապատրաստեց և ներշնչեց Վարդանանց և Ղեւոնդեանց և նոցա ժամանակակից հայ սերնդին այն բարոյական գաղափարները, այն հայրենասիրական և կրօնասիրական ոգին, որ արտայայտեցին այդ հերոսները հայ ազգութեան ճգնաժամի րոպէներում. կարճ ասենք, ո՞վքեր էին ս. Վարդանանց և Ղեւոնդեանց և դոցա ժամանակակից հայ սերնդի դաստիարակները: Ահա այս հարցման կամենում ենք պատասխանել սոյն համառօտ տեսութեամբ:

Հայ Արշակունեանց վերջին շառաւիղների թագաւորութեան ժամանակ Հայաստանը վաղուց արդէն կորցրել էր իւր իսկական անկախութիւնը. հայ թագաւորներն ո՛չ թէ միայն ընտրվում էին օտարից, այլ նաև հարկատու էին

երկու տարբեր և միմեանց թշնամի հզոր պետութեանց մի որ և է ազատ քաղաքագիտական ուղղութեան մասին մտածելն անգամ անկարելի էր, քանի որ հասարակական բոլոր նշանաւոր իրողութեանց համար Բիւզանդիոնից և Տիլզոնից պէտք է հրամաններ ստացուէին: Եւ այս տեղի էր ունենում ոչ թէ միայն քաղաքական գործերում, նաև հոգևոր և մտաւոր քայլերի սահմաններն որոշուած էին օտարից. իբր օրինակ յիշենք միայն, որ պարսից բաժնի նայաստանում արգելուած էր յունաց զպրութեան ուսուցումն: նայ իշխաններն ու մեծամեծները փոփոխակի սորան կամ նորան էին հնազանդվում. մէկ կողմից պատժի երկիւղ կրելով՝ պարգևատրվում էին միւսից և այդպիսով իւրեանց ապահովեցնում: Այս հանդամանքը, որ թէև ժամանակ առ ժամանակ ըստ երևոյթին օգտակար էր թւում, սակայն ունեցաւ իւր անբարոյականացուցիչ և կործանիչ հետեւանքները, որ և առիթ եղաւ հայոց քաղաքական կեանքի մնացած նշոյն ևս ողնչացնելու:

Եւ ահա, նոյն իսկ այս ժամանակաշրջանի հայ սերունդը, երբ հայ աշխարհն իւր քաղաքական կեանքի ամենագթուարին շրջանի մէջն էր, ժողովեց իւր վերջին բարոյական ոյժերն և արտադրեց այնպիսի անձնաւորութիւններ, որոնք իւրեանց հանձարով կարողացան փրկել և ապահովել հայ ազգի ներքին կեանքն՝ ազգային գաղափարներ ներշնչելով ամենուրեք և այդ գաղափարով ոգևորելով ժամանակակից սերունդը: Այս հանձարեղ և բարձր գաղափարներով զինուորուած անձինք մոլորուած ազգը մի բոլորովին նոր շաւղի վերայ զնկելով՝ ազատեցին նորան անդունդի մէջ ընկնելուց: Այդ նոր շաւղին էր ճշմարիտ քրիստոնէութեան՝ անբախտաբան ազգային դաստիարակութիւնը:

Եւ իրաւ, հայ ազգը բոլորովին ընկած պիտի լինէր, եթէ բոլոր այս նեղութեանց ներքոյ և մօտիկ ապագայի սպառնացած վտանգն ի նկատի ունենալով հանդերձ՝ մի որ և

է ձգտումն չարայայտէր դոնէ Տի ներքին Տիոֆիլոս և իրէալ
այնպէս թէլը:

Զորրորդ դարու վերջին և Հինդերորդի առաջին մասի
այդ գաղափարով տողորուած սերնդի մեծ ներկայացուցիչ-
ներն էին մեծ Պարթև և Սահակը և նորա գործակից
տաղանտաւոր և հանձարեղ և Մեսրոպը՝ Հայ ազգի
ուսուցանողը:

Մի ժողովրդի կամ ազգի անհասաների մէջ գտնուում
են յաճախ այնպիսի իդէալական դարգացումն ունեցող
անձինք, որոնք իւրեանց անձնաւորութեամբ ներկայացնում
են ամբողջ ազգը կամ ժողովուրդը. այսպէս, օրինակի համար,
Կեօթէն կարող է իւր ժամանակի զերմանական ազգի
ներկայացուցիչն համարուել, իսկ Վօլտէրը՝ Ֆրանսիական:
Եւ այսպիսի անհասաներն, որոնք իւրեանց ազգի յասկանիչ
բնաւորութիւնն են ներկայացնում իւրեանց անձնաւորու-
թեամբ, մի որոշ ժամանակի զարգացման և յառաջադիմու-
թեան իրականացնողներն են: Կոցա մէջ է միանում այդ
ժամանակի կեանքը: Միւս կողմից ևս առանձին անհասաների
զարգացումն կախուած է այն ժողովրդի կամ ազգի զարգաց-
ման աստիճանից, որի մէջ նոքա ապրում են: Այդ պատճառաւ
իսկ և Մեսրոպի և Սահակի մասին¹⁾ խօսելիս երբէք
պէտք չէ մոռանալ ժամանակակից Հայ սերունդը: Կար-
ծես Նախահնամութեան կարգադրութեամբ է լինում, որ
չորրորդ դարու վերջին մասն ունենում է ո՛չ թէ միայն
մէկ, այլ երկու մեծ ներկայացուցիչներ, որոնք իւրեանց
բարձր հանձնարով և միահամուռ ուժով ի կատար ածեցին այն
մեծ գործն, որ ժամանակակից սերնդի իդէալն էր կազմում:

1) Մեծն Սահակ և ս. Մեսրոպ, կամ թէ ս. Մեսրոպ և մեծն Սահակ—այս երկու
անձնաւորութիւններն մի հոգի են կազմում, միևնոյն ս. գաղափարների իրարործող-
ներն են. ուստի և սոցա միմեանցից բաժանելն անկարելի է. երբ ս. Մեսրոպի մասին ենք
խօսում, մեր աչքի առաջն է նոյնպէս ս. Սահակի անձնաւորութիւնը. երբ մեծն Պարթևի
մասին ենք գրտում, միշտ ի նկատի ունինք լմեծ ուսուցանողի գործակցութիւնը:

Այդ հանձարները վերականգնելով և վերանորոգելով հայոց մոռացուած գիրն և քոցա միջնորդութեամբ տարածելով ամբողջ հայ աշխարհում ազգային եկեղեցւոյ և դպրութեան հաւատարիմ մշակներ, այնպիսի ծառայութիւն մատուցին հայ ազգին այդ կրիտիքական շրջանում, որ անզուգական է մեր պատմութեան մէջ: Պէտք չէ մոռանալ, որ քրիստոնէական ուսման տարածման և ժողովրդականացման դադարը հայոց գրի վերականգման ամենամեծ շարժառիթներից մէկն էր:

Քրիստոնէութիւնը մուտ գործելով Հայաստան, իւր հետ միասին ներմուծեց նաև յունական և ասորական գիրն և հալածեց հայոց ազգային գիրը, որ ամուր կապերով շղթայուած էր կռապաշտութեան հետ, այլ կերպ ևս չէր կարող լինել վասն զի համարեա մի պատմական օրէնք է դարձել, որ իւրաքանչիւր նոր կրօնի հետ ազգերն ընդունում են նաև նոր գիր. այսպէս, օրինակի համար, տարածուեցաւ Յունաստանում փիւնիկեան այբուբէնը հռոմեական երգերի հետ զուգակցաբար, իսլամութիւնը տարածեց ամենայն տեղ — մահմեդական երկրներում — արաբական «նեսխի» կոչուած գիրը, հռոմէական գիրը տարածուեցաւ արևմտեան Եւրոպայում ս. Գրքի հետ միասին, ինչպէս նաև «գիվանդարի» և «պալի» կոչուած գրերը շնչկատանում:

Սակայն յունաց և ասորոց գրի տիրապետութիւնը երկար չէր կարող տևել Հայաստանում, վասն զի քրիստոնեաց եկեղեցւոյ եռանդոտ պաշտօնեաները, չքաւականնալով ազգային գրի ոչնչացմամբ — ձգտում էին նաև ազգային լեզուն խախտել, եկեղեցական պաշտաման միջոցին յունարէն և ասորերէն լեզուները դործ դնելով¹⁾: Այս գրութիւնն

1) Երանգի պաշտօն եկեղեցւոյ և կարգացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս Հայաստան ժողովօրոցս, յորմէ ոչինչ էին խորոյ լսել և օգտել խաղաղութեան ու յայտնի մեծ ուղիորդի յանլրսմիտեմ լեզուին տարոցս: Կես. Ղ. Փարպեցի, 52 36.

երկար չէր կարող տևել, ասացինք, որովհետև Հայ ազգը շուտով պետք է ըմբռնէր, որ եթէ այդ երկար շարունակուի և ազգային գրի հետ նաև ազգային լեզուն անյայտանայ՝ ազգութիւնը ևս պետք է լուծուի: Բարեբաղդաբար Հայ ազգը շուտով ըմբռնեց այդ և արդէն չորրորդ դարու վերջին այդ սպառնացող վտանգի առաջն առնելն իւր կենսական խնդիրը դարձնելով՝ ամեն ջանք թափեց նպատակին համակը և համար և յաջողութիւն ունեցաւ:

Թէև Հայ աշխարհը դեռ ևս չորս դար առաջ էր տեսել իւր անդրանիկ քրիստոնեայ առաքեալներին և մի դար առաջ իսկապէս քրիստոնէական վարդապետութիւնն ընդունել մեծն ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռամբ, սակայն այսու ամենայնիւ՝ ճիշդն ասած՝ քրիստոնէական ազգային եկեղեցի չունէին: մեր եկեղեցիներում ժամերգութիւնը և ծիսակատարութիւնը կատարվում էր օտար լազուներով, եկեղեցական պաշտօնականները՝ նոյնպէս օտար կամ օտար կրթութիւն ստացած մարդիկ էին: Եւ ահա՛ ս. Մեսրոպ Հանդիսանում է ոչ թէ միայն իբրև մի նոր առաքեալ քրիստոնէական եկեղեցւոյ, այլ նաև իբր հարստար զառաջ շայաստանի... Այն, Հայ ժողովուրդը վաղուց արդէն ընդունել էր քրիստոնէութիւնը, սակայն շայաստանեայց առաքելական ազգային ս. եկեղեցւոյ հիմնադիրն եղաւ ս. Մեսրոպ՝ օժանդակութեամբ ազգային քաղաքական և եկեղեցական բարձրագոյն իշխանների:

Ազգային քրիստոնէական ոգւով առգորուած Մեսրոպը՝ թողնելով թաղաւորական պալատը և հանգիստ կեանքն, իւր անձն ամբողջապէս նուիրում է իւր վեհ գաղափարների իրագործման. շրջում է ոտքով ամբողջ շայաստանը՝ հարաւից—հիւսիս, արևելքից—արևմուտք և ընդհակառակը գնալով՝ 45 տարի շարունակ և անդադար քարոզում է Աստուծոյ խօսքը, ազգային եկեղեցւոյ հետ հաստատում է ազգային ներքին կապը, բանում է ամենայն տեղ դպրոցներ.

մի կարճ ժամանակամիջոցում պատրաստում է աշակերտներ և ապա դոցա իւր փոխարէն կարգելով՝ ինքը գնում է մի այլ տեղ նոյնը կրկնելու:

Ազգային եկեղեցւոյ հաստատման և ներքին միութեան վերականգման մի նշանաւոր քայլ եղաւ ս. Մեսրոպի գեապանութեան յաջողութիւնը Բիւզանդիոնում: Այդ յաջողութիւնը պէտք է նկատուի իբր մեր պատմութեան նշանաւոր գէպքերից մէկն. եթէ այդ չյաջողուէր և ս. Մեսրոպին բոլորովին արգելուէր յունաց բաժնի նայաստանում և ստարածելու Հայկական նոր դպրութիւնն, ինքն ըստ ինքեան հասկանալի է, թէ այդպիսով յառաջացած այդ մեծ պառակտման հետեանքներն որչափ ողբալի պէտք է լինէին: Այդ գէպքում շատ կասկածելի կը լինէր ազգային եկեղեցւոյ վերականգման գործն ու այդպիսով ս. Մեսրոպի ջանքերը կիսով չափ հազիւ կը յաջողուէին:

Սակայն ս. Մեսրոպ իւր բարձր հանձնարով ոչ թէ միայն յաջողեցրեց իւր գեապանութեան նպատակին հասնելն, այլ նաև «յանդիման եղեալ մեծի թաղաւորին, առին (Մեսրոպ և Վարդան) զոր յոսայինն և զոր ոչն յոսայինն»¹⁾: Եւ ահա այդ յաջողութեամբ և պատուով դառնալով նայաստան, Մեսրոպ կրկնակի եռանդով նուիրուեցաւ իւր գաղափարների իրագործման և այդ գաղափարներով պատրաստեց մի ամբողջ սերունդ:

Միւս կողմից ս. Մեսրոպի վերանորոգած և կատարելագործած հայ դիրք պատճառ է լինում հայոց մտաւոր հորիզոնի ընդլայնման և շուտով յառաջ է բերում հայ զրահանութեան ուժը:

Այն ազգը, որ մոռացութեան տալով իւր սեպհական հին դիրք մոլորացիանութեամբ սովորում և գործ էր գնում յունաց, պարսից և ասորոց տառերը, կարճ ժամանակից,

¹⁾ Տես Մ. Բորենացի. գիրք III, էջ 381.

Հազիւ մի քանի տասնեակ տարիներ անցնելուց յետոյ, տէր հղաւ մարդկային մտքի մի նշանաւոր արատադրութեան, այն է ս. Գրքի թարգմանութեան, որ շատ եւրոպացի գիտնականների ասելով ամենաճիշդն է և դորանով կարելի է վերականգնել եօթանասնից բնագրի մի քանի տեղերը:

Այն ազգն, որ Սասունի տաճարում եկեղեցուց պաշտօնեաներից պէտք է լսէր—առանց հասկանալու—յանարհն կամ ասորի լեզուով արտասանած «չայր մերը», այժմ իւր ձեռքն ունէր յունական ամենաերևելի փիլիսոփաների՝ Սքիստոսէլի և Պլատոնի հեղինակութեանց թարգմանութիւնը:

Սմբողջ հայ ազգն ողևորուած և երջանիկ էր զգում իւրեան — պահ մի մոռանալով աշխարհային ցաւերը — լսելով եկեղեցուց բեմից և դասից իւր մայրենի բարբառի քաղցր հնչիւնը. «ամենայն անձն, ասում է Ղ. Փարպեցին, յորդորեալ փափաղէր յուսումն հայերէն գիտութեան, որպէս ի խաւարէ՛ յասորի տանջանացն գերծեալք ի լոյս խնդային»¹⁾: «Յայնմ ժամանակի, ասում է Սորէն Ստանլէյն, երանելի և ցանկալի աշխարհս հայոց անպայման սքանչելի լինէր, յորում անկարծ ուրեմն օրէնսուսոյց Մովսէս մարդարէական դասուն, և յաւազդէմն Պօղոս բովանդակ առաքելական գնդովն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի միանգամայն եկեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառս հայերէնաբարբառս: Անդ էր այնուհետև սրտալիւ ուրախութիւն, և ակնավայել տեսիլ հայելոյն»: չայ ազգային եկեղեցուց և գարութեան հաստատման ժամանակին նուիրուած մեր «սքանչելի» հօր այդ գեղեցիկ խօսքերն որչափ նմանութիւն ունին «ձուտտէն»-ի, գերմանական կրօնական մեծ յեղափոխութեան ժամանակակից և գործակից բանաստեղծի հետևեալ բացականչութեան հետ. «Ո՛վ դար, ուսմունքը ծաղկում է, ողիքն արթնանում են, ապրելն զուարճութիւն

1) Տես. Ղ. Փարպեցի. էջ 42—43.

է: Միւս կողմից բացականչում է կրկին մեր պատմաբան Ղ. Փարպեցին «... կարդեցան վաղվադակի յայնմհետէ դպրոցք հօտին ուսմանց, բազմացան դասք զըչաց երևելիս առնելով զմիմեամբք. զարդարեցան պաշտամունք ս. եկեղեցւոյ... պայծառացան եկեղեցիք, շուք առին վիպարանք սրբոց, միշտ ծագիւելով ի նոսա ուխտ կտակարանաց ընծայիւք. հանապազաբուխ հոսէին վտակք յատողայն մեկնութեանց... Լցաւ երկիրս ամենայն հայոց գիտութեամբ Տեառն... իբրև զՉուրս բազում, որ ծածկին զծովս»:

Ահա այս ոգևորութեամբ բազմութիւն հայ երիտասարդներ զիմում են Յունաստան, Եգիպտոս, Իտալիա և զիտութեան այլ կենտրոններ, իւրեանց ուսման ծարաւը յաղեցնելու և հայրենիքի յաւաջագիմութեան նպաստամատոյց լինելու: Սոքա այն տեղ «Փրանային, տքնէին, աշխատէին ուսանելով, կրթելով, վարժելով, վաստակելով, պատրաստելով զանձինս յիւրս օգտակարս և ի գործս շահաւէտս. ոմանք գտառից զծագրութիւնս շահաւորեալ, ոմանք զիմաստս հաւաքեալ՝ զուսումնականն, զերաժշտականն, զբանաստեղծականն, զբնաբանականն, զերկրաչափականն, զհամարողականն, զաստեղաբաշխականն, զքերականն և զքերթողականն, զգործնականն և զտեսական իմաստասիրութիւն: Ոմանց հաւասարէին գիտութեամբ, քան զոմանս վեհագոյնք երևէին, ոմանց զարմանալիք թուէին... ընդ ոմանս գասէին քննութեամբ, զոմանս պատասխանեց արժանի ոչ համարէին, հարցասէրք, բանասէրք, ընթերցասէրք»: Ահա հինգերորդ դարու հոյ ուսանողութեան նախանձելի պատկերը, որ իբէալ կորող է համարուել մեր այժմեան ուսանող հայ երիտասարգութեան համար:

Հինգերորդ դարու հայ սերնդի ձգտումը՝ կատարելապէս ուսանել յունաց և ասորոց լեզուներն ու գրականութիւնն, որպէս զի դոցա օգնութեամբ ծագկեցնեն մայրնի լեզուն և գրականութիւնը, կարելի է համեմատել այն շարժողու-

Թեան հետ որ տեղի ունեցաւ Իտալիայում 14-րդ և Վերմանիայում 15-րդ դարում: 14-դ դարում Իտալիայում ուսուցման գլխաւոր նպատակը նկատվում է դասական (կլասիքական) զարգացումն, յունական և լատինական դասական գրուածները լինում են ուսումնասիրութեան միակ ազդելին: Միջին դարերում Վերմանական և Ռոմանական ազդութիւնները, չնայելով իւրաքանչիւրի առանձնայատուրութեանց, ունէին մի ընդհանուր եւրոպական բնաւորութիւն. դոքա բոլորը միատեղ կազմում էին միակ աշխարհա-եկեղեցական, այն է պապական պետութիւնը: Եկեղեցւոյ կապը միացրել էր բոլորին, ուստի և թէ պապն ու թէ կայսրը լատինական լեզուն նկատում էին իբր մի ընդհանուր եւրոպական-պետական և եկեղեցական լեզու: Սմեն տեղ հոգեւորականներն խօսում ու գրում էին այդ լեզուով, ամեն տեղ եկեղեցական պաշտամունքը կատարվում էր լատիներէն լեզուով: 14-դ դարուց սկսվում է յունաց դասական գրուածների ուսումնասիրութիւնն և դոցա հետ ի միասին մայրենի լեզուով գրելու ձգտումը: Ինչպէս արդէն ասացինք, առաջին փորձերը լինում են Իտալիայում, ուր ուսումնասիրելով դասական գրուածներն՝ աշխատում էին ամեն կերպ դոցա նմանել. Դանտէ, Պետրարկա, Բոկակաչիո և այլք հարթեցին այդ շաւիղը: Սոցա մէջ արթնացաւ առաջին անգամ ոգևորուած սէր դէպի հնութիւնը և դասական գեղեցկութիւնը. այս երեք հանձարները զարգացրին մի գեղեցիկ բանաստեղծական-վիպական մայրենի լեզու և գրականութիւն:

Իտալիայի բռնած այս դասական ուղղութիւնը մեծ ազդեցութիւն ունեցաւ 15-դ և 16-դ դարու Վերմանիայի զարգացման յառաջադիմութեան վերայ. սակայն դասականի ուսումնասիրութիւնը Վերմանիայում բոլորովին այլ ողով ներչնչուած յառաջ ընթացաւ, նա՛ մանաւանդ 16-դ դարում: Իտալիայի զեղարուեստ խնկարկող սերունդը սքանչանում

էր դասական մատենագիւնրի գեղեցկութեամբ և դոցա հետեւել ճգնում: յունական դիւցաբանութիւնն առաւել հիացնում էր նորան, քան քրիստոնէական վարդապետութիւնը: Գերմանիան հետեւելով դասական ուղղութեան, ուսումնասիրում է յունարէնն և առաւել հետևում քրիստոնէական վարդապետութեան, ս. Գրոց գերմաներէն թարգմանութիւնն այդ ուղղութեան նշանաւոր արգասիքներից մէկն է: Ս. Գրոց թարգմանութիւնն է, որ առիթ է լինում նոյնպէս գերմանացու մայրենի լեզուի հետզհետէ մշակման և գրականութեան ծաղկման:

Հինգերորդ դարու հայ սերնդի բռնած ուղղութիւնը ճշտիւ համապատասխանում է Գերմանիայի դասական ուղղութեան. հայերէն դպրութիւնն ուսանում են ս. Գիրքն և եկեղեցական պաշտամունքը հասկանալու համար. յունարէն դպրութիւնն ուսանում են հայերէն ճիշտ թարգմանութեանց համար: Կարծում ենք, չենք սխալուիլ եթէ ասենք, որ հայերէն դպրութիւնն այն հսկայաբայլ յառաջադիմութիւնը չէր ունենալ Հինգերորդ դարում, եթէ անմիջապէս ս. Գիրքը չթարգմանուէր և դպրութեան նպատակը գլխաւորապէս եկեղեցական հեղինակութեանց ծանօթութիւնը չլինէր: Խօսք չկայ, որ այդ նպատակին հասնելուց յետոյ հայ դպրութիւնը կանգ չառաւ և սահմաններն առաւել ընդարձակելով՝ իւր մէջ առաւ նաև պատմական ճիւղերը:

Հինգերորդ դարու հայ գործիչներին յաջողուեցաւ կարճ ժամանակամիջոցում մի գրականական լեզու վերանորոգելու և կազմակերպելու, որ իւր արուեստական կատարելութեամբ, քաղցր հնչմամբ, իւր ուժով և առաձգականութեամբ վարմանալի է թւում: Յաջողութեան մեծ մասը հիմնվում է այն հանգամանքի վերայ, որ մեր թարգմանիչները ձեռնարկեցին մշակել ոչ թէ մի որ և է հասարակ գաւառական բարբառ, այլ արարատեան ընդարձակ երկրի

բարբառն, որ վաղուց արգէն ընդունուել էր իբր պալատական
և իշխանական շքանների մէջ գործադրուող լեզու: Այս
պատճառաւ անկասկած այդ արքունի կամ ոստանիկ
լեզուն ժողովրդականութիւն և յարգանք պէտք է ունենար:
Եւ բացի այդ նպատաւոր հանգամանքից, ոստանիկ
լեզուն պէտք է եղած լինէր և հայոց հասարակական ժամա-
նակի գրական լեզուն. և այս շատ բնական է, որովհետեւ
գծուար է ենթադրել, որ արքունիքն և հոգևորականու-
թիւնն, որ այնպիսի սերտ կապերով շղթայուած էին
միմեանց հետ, ասրբեր լեզու գործադրէին իւրեանց բանաւոր
և հրաւոր յարաբերութեանց մէջ:

Քրիստոնէութիւնը մուտ գործելով նայաստան՝ իւր
գոյութեան կուռի մէջ ոչնչացրեց մեր կռապաշտական
գիրն ու գրականութիւնը և մտցրեց ասորերէն ու յունարէն
լեզուն: Այստեղից յառաջացաւ այն անբնական դրութիւնը,
որի պէմ մաքառեց չորրորդ դարու վերջին և հինգերորդ դարու
առաջին մասի հայ սերունդը և յաջողութիւն ունեցաւ:
Այլ կերպ անկարելի է ենթադրել, որ մի այնպիսի կարծ
ժամանակամիջոցում մի Բոլորովն նոր գրականական լե-
զու ստեղծուէր և կատարելութեան այդ աստիճանին
հասնէր. ոչ մի օտար ազգի գրականութեան մէջ ևս չկայ
այդպիսի օրինակ:

Հինգերորդ դարու հայոց ազգային-կրօնական և գրա-
կանական այս մեծ յեղափոխութիւնը զարմանալի զուգադի-
պութեամբ համապատասխանում է գերմանական-կրօնական
մեծ յեղափոխութեան ժամանակի պէպքերին: Ինչպէս որ
մեր վերանորոգիչներն ազգային նոր գրականութեան յառա-
ջացման համար ընտրում են արքունի լեզուն, այդ լեզուով
թարգմանում են ս. Գիրքը և այդ լեզուն աւանդում
գարոյններում, նոյնպէս և գերմանական մեծ յեղափոխիչ
գոյտոր Մարտինը ս. Գրքի թարգմանութեան համար
ընտրում է սաքսոնական արքունի լեզուն, որ ընդունուած

էր դերմանական բոլոր իշխանական պալատներում, և դպրոցներում այդ լեզուով էին ուսուցանում:

Ինքն ըստ ինքեան Հասկանալի է, որ ս. Սահակի և Մեսրոպի յառաջ բերած եկեղեցական այդ մեծ յեղափոխութիւնը—ազգային և մայրենի լեզուն մտնելով ս. եկեղեցւոյ մէջ, արտաքսել օտար լեզւներն, որ անհասկանալի էին ժողովրդին—ազգեցութիւն պէտք է ունենար ժամանակակից դաստիարակութեան հոլթեան վերայ: Իւրաքանչիւր եկեղեցական յեղափոխութեան հետ անպատճառ կապակցուած է նաև ժողովրդի դաստիարակութեան յեղափոխութիւնը. այսպէս և յեղափոխական ոգին յերևան է գալիս նաև Հայ սերնդի դաստիարակութեան գործի մէջ:

Նայ ազգն ընդունելով քրիստոնէութիւնը, կորցրեց ոչ թէ միայն իւր կրօնն, այլ ճառագէջ նաև իւր ազգայնութիւնը. Հայոց ազգայնութեան զարգացման բնական ուղին խանգարուեցաւ: Ազգային բանաստեղծութիւններն և երգերն սերտ կապով շղթայուած էին կրօնի հետ և ահա այդ իսկ պատճառով քրիստոնէական եկեղեցւոյ պաշտօնեայք ամեն ճիզն թափեցին դոցա հետքը ջնջելու, սատանայական ներկայացնելու և տարածումն արգելելու: Եւ որպէս զի այդ զդալի չլինի ժողովրդի համար, նոքա հների տեղ նոր երգեր ստեղծեցին և տարածեցին ժողովրդի մէջ, գուցէ վերապահելով երգելու հին եղանակները: Այս շատ շուտով յաջողուեցաւ և ազգայինը հետզհետէ անյայտացաւ, վասնզի մեր եկեղեցական պաշտօնականներն, ինչպէս արդէն յիշեցինք, մեծաւ մասամբ օտարներ լինելով՝ ոչինչ զգացումն չէին կարող ունենալ Հայ ազգայնութեան դաղափարի համար, ուստի և անխնայ ոչնչացրին այն ամեն ազգային Հարստութիւնն, որ կապուած էր Հայոց հին կրօնի հետ: Այդ օտար պաշտօնեաները վանքեր և դպրոցներ հիմնելով երկրի մէջ, թէև ազգի յառաջադիմութեանը նպաստեցին, սակայն այդ ևս եղաւ ի վնաս մեր ազգայնութեան, վասն զի այդ

Հիմնարկութիւններն օտար լինելով՝ զոցա տուած դաստիարակութիւնն ևս օտար էր և տիրող լեզուներն ևս ոչ թէ ժողովրդի մայրենի լեզուն էր, այլ յունարէն կամ ասորերէն:

Միւսնոյն երևոյթը կրկնվում է նաև ուրիշ աղբերի մօտ. այսպէս, օրինակի համար, գերմանական ցեղերն քրիստոնէութիւնն ընդունելով նոյնպէս օտար պաշտօնեաներից, կորցրին այն բոլորն, ինչ որ իւրեանց ազգայնութեան յատկանիշն էր. զոցա վանքերում և դպրոցներում ևս փոխանակ ազգային լեզուի տիրում էր լատինականը:

Ս. Սահակ և Մեսրոպ ազգային նոր եկեղեցւոյ Հիմը ղնելով անպատճառ պէտք է ձեռնարկէին նաև նոր ազգային դաստիարակութեան սկզբնաւորութեան. այդպէս ևս եղաւ, և ս. Մեսրոպ ու Սահակ հանդիսացան մեր քրիստոնէական ազգային դաստիարակութեան Հիմնադիրները:

Ազգային դաստիարակութեան յատկանիշներն են՝ մայրենի լեզուն, գրականութիւնը հանդերձ պատմութեամբ և կրօնն. արդ, ազգային եկեղեցւոյ Հիմը ղնելով և ազգային գրի վերականգման շնորհիւ ազգային գրականութիւնն ու լեզուն զարգացնելով՝ այդ երկու հանձարեղ անձինքը Հայ ազգային դաստիարակութեան բոլոր տարրերը միացրին: Երկրի ամենայն մասերում Հիմնեցին դպրոցներ, «քանդի ամենայն անձն յորգօրեալ փափաղէր յուսումն հայերէն գիտութեան»,—ասում է Ղ. Փարպեցին: Դաստիարակութեան նպատակն էր ոչ միայն եկեղեցական և աշխարհական պաշտօնների համար հասկացող և գրագէտ անձինք պատրաստել, այլ նաև—և այդ էր զլիաւոր նպատակը—ազգային և քաղաքական-կրօնական գաղափարներ սերմանել ժողովրդի մէջ քրիստոնէական վարդապետութեան մեջնարդոնութեամբ. «քանդի ոչ որպէս արուեստ ուսուցանէր (ս. Մեսրոպ), այլ իբրև զհոգի առաքելաբար աշակերտելոցն տայր»: Ներկայիս գիտնական մանկավարժութեան այս ամենաէական սկզբունքը հայերէն լեզուով ոչ ոք չէր կարող այդպէս գիղեցիկ

արտայայտել, ինչպէս Հայ պատմագրութեան նախահայր Մ. Խորենացին այդ կարճ նախադասութեամբ արտայայտել է:

Արդէն յիշելոյնք այն զարմանալի զուգադիպութիւնը, որ տեղի ունի Հինգերորդ դարու Հայոց ազգային — քրահանական և Քերմանացոց կրօնական մեծ յեղափոխութեան ժամանակ տեղի ունեցած դէպքերի մէջ. ահա մի փաստ ևս: Ուսուցման պատմութիւնը ցոյց է տալիս, որ ամենայն տեղ, ուր կամեցել են ուսուցման նոր սխաւեմայ կաղնակերպիչ ամենից առաջ մտածել են յարմար ուսուցիչներ պատրաստելու: Այսպէս օրինակի համար քրիստոնէութիւնն այնպէս չէր տարածուիլ, եթէ Յիսուս Քրիստոս անձամբ ուսուցիչներ չպատրաստէր իւր Հիմնադրադասարանները տարածելու համար. դոքա էին ս. առաքեալները: Այսպէս և շարունակուեցաւ յետոյ. գերմանական մեծ յեղափոխի նշանաւոր գործակից Մելանխթոն Վիտտենբերգի համալսարանում պատրաստեց մի ամբողջ սերունդ իւր գաղափարների համար, որոնք ցրուելով երկրի ամենայն կողմերը դպրոցներ բաց արին և տարածեցին իրենց մեծ ուսուցչի հիմնադրադասարանն. այդ իսկ պատճառով Մեկանխտոնն ստացաւ „Praeceptor Germaniae“ հռչակաւոր անունը, որ կը նշանակի «ուսուցանող Քերմանիայի»: Եւ ահա ս. և երանելի Մեսրոպն ևս անձամբ պատելով Հայաստանի ամեն խորշերն, անձամբ տարածեց իւր նոր սխաւեման, նորա անմիջական աշակերտները հետզհետէ նոր դպրոցներ բանալով՝ տարածում են իրանց մեծ ուսուցչի գաղափարները, և ս. Մեսրոպ նոյնպէս ստանում է Հայ պատմագրներից «սաս-ցանող Հայաստանի» մեծ և եղախան անունը:

Մենք կարող ենք առանց մեծամոտելու պարծենալ, որ այն, ինչ որ տեղի ունեցաւ այժմեան քաղաքակրթեալ Քերմանիայում 15 և 16-դ դարերում, Հայոց պատմութեան մէջ դրոշմուկ է արդէն Հինգերորդ դարում:

Թէ որչափ ճշմարիտ էր ս. Սահակի և Մեսրոպի Հիմնարկած դաստիարակութիւնը և թէ որչափ շուտով տարածուեցան Հայ աշխարհում բարոյական-կրօնական գաղափարները, զուգակցաբար ազգային գաղափարի Հետ, ապացուցեց մօտիկ ապագան: Հազիւ թէ անցել էր միայն կէս դար և Հայ ազգն ապացուցեց, որ հաւատարմութեամբ և սրբաբար պահպանել էր իւր մեծ զաւակների գաղափարները:

Սյո՛, ս. Մեսրոպի տարածած գաղափարները և նորա դաստիարակած սերունդն էր, որ ապացուցեց աշխարհին՝ թէ Հայ ազգը պատրաստ է իւր ազգային եկեղեցւոյ համար զոհել իւր ինչքը և կեանքը. այդ սերունդն էր, որ մի կարճ ժամանակամիջոցից յետոյ հրաշքներ կատարեց: Այդ սերնդով է պարծնեում Հայ ազգը մինչև այժմ և կը պարծենայ մինչ իւր գոյութեան վերջը: Այդ սերունդն էր, որ ամենաչնչին ուժով, բայց վեհ գաղափարներով՝ յաղթող հանդիսացաւ մոզապաշտութեան և բռնակալութեան դէմ:

Ո՞վքեր էին այդ վեհ գործողութեան առաջնորդներն, եթէ ոչ ս. Մեսրոպի անմիջական աշակերտները, նորա գաղափարներով սնուած Աւետիսները և Յովսէփները:

Ո՞ւմ անունով գրոշմուեցաւ այդ իրողութիւնը Հայ պատմութեան էջերում, եթէ ոչ Հերոս քաջն Վարդանի, որ նոյնպէս աշակերտ էր ս. Սահակի և Մեսրոպի, որ Հայ աշխարհի մեծ ուսուցանողի Հետ ճանապարհորդելով գեսպանութեամբ Կ. Պօլիս և օր ու դիշեր շփուելով այդ ս. մարդու Հետ՝ մարմնացրեց իւր մեջ նորա վեհ գաղափարները, մինչև որ նահատակուեցաւ արեան գաշտի վերայ, սակայն իւր պաշտած գաղափարը յաղթող հանդիսացաւ:

Սյո՛, գուցէ երբէք տեղի չունենար Վարդանանց պատերազմը, եթէ ս. Սահակի և Մեսրոպի դաստիարակած սերունդը գոյութիւն չունենար Հայ աշխարհում:

Լ Օ Ր Գ:

«Հանդիսի» սոյն համարի սկզբում մենք զետեղել ենք հանդուցեալ Մ. Նալբանդեանի մի քանի անտիպ ոտանաւորները՝ հանելով նորա ձեռագրից, իսկ հետեւեալ անգամ լոյս կ'ընծայենք ֆուտուրիստները: Այս տեղ զնում ենք և այն յառաջաբանը, որ հեղինակը կցել է իւր բանաստեղծութիւններին: Տպում ենք նոյնպէս և նոյն հեղինակի միւս աշխատութիւնը «Հիւսիսափայլ» լեզուի մասին, որ շնորհակալութեամբ ստացանք պ. Յ. Խաչատրեանից՝ հանդուցեալ քեռորդուց, իսկ բենաստեղծութիւնների ձեռագիրը ստացանք պ. Յ. Բուղդանեանից:

I.

ԵՐԿՈՒ ԽՕՍԻՔ

Թէ ինչպէս է մեր ղայեացքը մի օրագրի պաշտօնակատարութեան մասին:

Անշուշտ, մեր խօսքը վերաբերում է այնպիսի օրագիրների, որ մասնաւորապէս նուիրած չեն իրենց գործունէութիւնը այս կամ այն յատուկ ասպարէզի կամ գիտութեան, այլ գնում են կամ ուղղում են գնալ միջին ճանփով, ընդհանրապէս: Եւ հազիւ թէ մեր ազգի մէջ կարող էր դոյանալ կամ շարունակվիլ մի այնպիսի օրագիր, կամ պարբերական հրատարակութիւն, որ նուիրված լինէր մասնաւորապէս այս կամ այն նիւթին: Այս խօսքը ասում ենք մենք, նայելով մեր ազգի ներկայ վիճակին. ընդհանրապէս և անխտիր ամեն բանի հետ գործ ունեցող օրագիրը բնականաբար պիտի և աւելի շատ ընթերցողք ունենայ, մինչդեռ այս կամ այն մասնաւոր նիւթի նուիրված օրագիրը կարող է միայն աչքի տակ ունենալ մի փոքր հասարակութիւն, որ պարապում էր մասնաւորապէս այն նիւթով կամ առարկայով, որին նուիրել էր օրագիրը իւր գործունէութիւնը: Եւ որով-

Հետևե Հասարակ օրագիրների տարածվելու վիճակը և չափը շատ լաւ յայտնի է մեզ թէ այստեղ Ռուսիոյ մէջ և թէ Տաճկաստանում, այս պատճառով էլ ասացինք թէ մասնաւոր խորհրդի նուիրված օրագիր չէ կարող գոյանալ կամ շարունակվիլ մեր մէջ ներկայումս:

Մենք չենք ելած քննելու այն պատճառները, որից առաջանումեն մեր օրագիրների տարածութեան սահմանափակութիւնը. այդ բանը պիտի ձգէր մեզ ոչ միայն մետաֆիզիկական քննողութեանց, այլև միքանի տնտեսական խնդիրների քննողութեանց մէջ, որ մեր ներկայ խորհրդին բնավ վերաբերութիւն չունի: Մեր գիտաւորութիւնը է միայն յայտնել մեր կարծիքը մի օրագրի մասին, թէ նա ինչպէս պիտի լինէր ինքը իրեն: Այս մասին, եթէ ոչ գրով, գոնէ բերանացի շատ լաւ էնք բացասական կարծիքներ, այսինքն թէ ինչպէս չպիտի լինէր ստոյգ է, որ շատ պարոններ ուրիշ օրագիրները իրենց բացասական դատողութեան տակ ձգելուց յետոյ, երբ իրենք սկսեցին Հրատարակել իրենց սեփական օրագիրը կամ թերթը, աչքե յայտնի կերպով ցոյց տուին, որ ուրիշ օրագիրների վերաբերութեամբ այսպէս կամ այնպէս պէտք չէր, այս անգոյս է, միւսը գոյ է և այլն խօսքերը լոկ խօսքեր էին, խօսքեր, խօսքեր և էլի խօսքեր. պատճառ, իրենց Հրատարակութիւնը այս պէտք չեղած, կամ անօգուտ, կամ զուր բաները աւելի մեծ չափով և դրականապէս վնասակար կերպով պաշտեց, քան թէ երբ և իցէ ունեցած էին այն պարոններից դատապարտված օրագիրքը:

Այս խօսքերը ասելով չենք ակնարկում մի որպիսի և իցէ պարոնի վրայ, այլ մանաւանդ այդպէս շատերի վրայ և թող չկարծվի թէ նոցա կարծիքները, ինչպէս այժմ, նոյնպէս և առաջ կշիռ ունէին մեր աչքում: Ի՛նչ, առաջ էլ նայել էինք նոցա վրայ որպէս դատարկ հողմարածութեան վրայ:

Որքան մեզ պատահել է լսել այսպիսի կարծիքներ, դժբա, մեծ մասով, մեր «Նիւսիսափայլի» վրայ էին և մանաւանդ

ինձ էին ասվում այդ կարծիքները, որովհետև ես «Հիւսիսափայլ» հետ էի: Սյս պատճառով, «Հիւսիսափայլ» հրատարակողի և իմ յանցանքները, որ լսում էի, գրում էի այսանդ, որ յետոյ մի քանի խօսք ասեմ դոցա մասին:

Առաջին յանցանք. «Հիւսիսափայլ» լեզուն ծանր է, արուեստական է, անհասկանալի է: Նատերն էլ որ իրենց բուն մայրենի լեզուի գիտութեան մէջ անհասարին խեղճ էին և հայ լեզուի ողուն և արամաբանութեան բնաւ իսկ տեղեկութիւն չունէին և հայերէն խօսելու ժամանակ — ամաչում եմ ասել — ուսերէն մտածելով, ուս բառերը, նախադասութիւնքը, և ուս արամաբանութեամբ և ուս բազդասութեամբ լոկ հայ ձայնով էին խօսում, այդպիսի սքանչելի պարոններն էլ իրենց չգիտութիւնը արգարայնելու համար «Հիւսիսափայլ» լեզուն գերմանական բազդասութեան և գերմանիկ արամաբանութեան ստրկացած էին քարոզում, թէ և այդ տեսակ պարոններից ԳԳՐ հարիւրից գերմաներէն էլ չգիտէին. բայց ինչ անես, առածը ասում է. «լեզուն օսիր չունի», ուստի և նորս էլ օգուտ քաղելով իրենց մարմնեղէն լեզուի ճիւղնութիւնից բլբլայնում էին այն, ինչ որ ուրիշից էին լսել կամ գէթ ինչ և իցէ մի բան ասելու համար, որ իրենք էլ հասկացող երևին. Տաճկի ասածին պէս. իչ օլտոն:

Երրորդ յանցանք. «Հիւսիսափայլ» նիւթերի ընարութիւն չգիտէ, շատ անգամ տպում է եւրոպական վէպեր, որ բնաւ Թը՝ Թը ասգին վերաբերումն չունին: «Հիւսիսափայլ» աստեղաբաշխութեան վրայ է խօսում, Ֆիզիօլոգիայի վրայ, կամ ուրիշ այս ու այն գիտութեանց վրայ, որ մեր ասգին անհասկանալի է:

Երրորդ յանցանք. «Հիւսիսափայլ» ազգային նիւթեր չունի իր մէջ, այլ ինչ կայ չկայ եւրոպական լեզուներից է առնված:

Սյս յանցանքները հրապարակումէին և իրենց դատապարտութեան վճիռն էլ քամակիցը տալիս, որ ունայնացում էր

«Հիւսիսափայլ» խորհուրդը: Ես այդ ունայն ճանաչված աշխատութեան մասնակից էի, յայտնի է, թէ մեր սքանչելի պարոնները կշամբանքի մի բաժինն էլ ուղղակի ինձ էր համուում:

Ամեն այսպիսի գիտութեան (երբեմն պատահում էր որ Հինգ-տասը հոգի միասին էին դալիս վրաս) ես խնդրում էի նոցանից ցոյց ապա ուղիղ ճանփան, կի՞ն մոլորական էր. բայց և ոչ մի անգամ լսում էի այդ ուղիղ ճանփի մասին, որովհետեւ մեր ընդդիմախօսքը ասում էին թէ ի՞նչ էլ չէր, միայն մերի մոլորականութիւնը և մեր աշխատութեան ունայնութիւնը ղխտէին!!!

Կանոնաւոր կերպով վէճ բանալ այդպիսիների հետ անհնար էր, որովհետեւ կանոնաւոր խօսակցութիւնը երկու կողմից էլ տրամաբանութիւն է պահանջում. բայց և այնպէս առանց ճշմարտութիւնը թաքցնելու ցոյց էի առելս «Հիւսիսափայլ» իրաւունքները, որ կամքի կամ ճաշակի վրայ ոչ այլ էական հիմքերի վրայ էին ամրացած. մի և նոյն ժամանակ խօստովանելով լեզուի անկատարութիւնը, թէ և «Հիւսիսափայլ» բամբասված լեզուն, նորա հրատարակողի և գործակցի բամբասված ձեւ ու ոճերը սկսում էին աննկատելի կերպով ազդել նաև մեր ընդդիմախօսների լեզուի վրայ, թերևս նոցա կողմից բոլորովին ակամայ և առանց գիտնալու:

«Հիւսիսափայլ» լեզուի թերութիւնքը, այդ լեզուով գրողների անձնական պակասութիւնք չէր, այլ մասնաւանդ նոր լեզուի մանկութեան պակասութիւնք: Եւ երբ նոր լեզուն, տակաւին անմշակ, չունէր այն յատկութիւնքը, որ անշուշտ պէտք էին հիմնաւոր և կանոնաւոր կերպով ամեն բանի վրայ խօսելու համար, երբ «Հիւսիսափայլ» գրեքը այս կամ այն զազափարի յայտարար ձեւը ժողովուրդի մէջ չդրունելով և ժողովուրդին յայտնի բառերով գործ էին դնում մի ձեւ բուն հին լեզուի ողուն հաւասարիմ մնալով, — «Հիւսիսափայլ» գերմանախօս էր դառնում!!! Զին և նոր լեզու ի

ընդգէմ մեր սքանչելի Հայկաբանների անխտիր գործ դրած բառերը և ոճերը, երբ մենք գործ չէինք դնում, «Նիւսիսափայլ» գերմանախօս էր դառնում:

Երբ Ֆրանկի *moyen*, Ռուսի *средство* և Տաճկի վաքըթ բառերը մեր սքանչելի Հայկաբանքը ընդհանրապէս և սովորաբար ճշոյց էին թարգմանում Հին ու նոր լեզուի ոգուն ընդգէմ, երբ մենք Հայկական ոգուն Հաւատարիմ մնալով նոյն բառերը թարգմանումէինք հնար, ինչպէս մեր նախնիքը գործ էին ածել և ինչպէս այժմեան սերունդը գործ է ածում, «Նիւսիսափայլ» գերմանախօս էր դառնում! !

Երբ Ֆրանկի *partager*, Ռուսի *раздѣлять* բայերը վերացական գաղափարների վերաբերութեամբ Բաժանել էին թարգմանում—օրինակ *je partage votre opinion*, и *раздѣляю ваше мнѣніе*, Ես Բաժանում եմ յեր կարծիքը և այլն այսպիսիք անխտիր և մինչ մենք Հարազատ մնալով մայրենի լեզուի ոգուն՝ գրումէինք՝ կամ ես ընդունումեմ ձեր կարծիքը, կամ Համամիտ եմ ձեզ, կամ մասնակից եմ ձեր ուրախութեան, ցաւին և այլն և այլն—«Նիւսիսափայլ» գերմանախօս էր դառնում! !

Երբ Ֆրանկի *communiquer*, Ռուսի *сообщать* բայերը անխտիր և ընդհանրապէս թարգմանվումէին հարորդել, Հայկական ոգուն ընդգէմ բազդասելով, ինչպէս լուր հաղորդել, նամակ հաղորդել և այլն և այլն, և երբ մենք Հաւատարիմ մնալով լեզուի ոգուն, չէինք գործ ածում այս օտար ձևը, այլ զորա փոխանակ տեղեկութիւն տալ մասնակից անել այս ինչ բանի և այլն և այլն—«Նիւսիսափայլ» գերմանախօս էր դառնում! !

Երբ Ֆրանկի *curieux*, Ռուսի *любопытный* բառերը անխտիր Հետաքրքիր թարգմանելով գրվումէին Հետաքրքիր բան, Հետաքրքիր գիտութիւն և այլն, և երբ մենք, Հարազատ մնալով մայրենի լեզուին, Հետաքրքիր ածականը տալիս էինք մարդուն, իսկ անշունչ առարկաների վերա-

բերութեամբ գրումէինք արժանի հարցասիրութեան, «Հիւսիսափայլը» գերմանախօս էր դառնում!!!

«Հիւսիսափայլը» հարիւրներով ունի այս տեսակ գերմանախօսութիւնք, խոստովանումներ, և ոչ միայն այսքան, այլև յայտնումներ, որ բնաւ չենք ցանկանում այն տեսակ սքանչելի հայկաբանութեան, որի մի քանի օրինակը ցոյց տուինք, որովհետև ճշմարիտը խօսելով, մենք այդ հայկաբանութեան վրայ նայումներ—ինչ էք կարծում,—ոչ աւելի և ոչ պակաս, որպէս բարելաբանութեան վրայ, եթէ միայն ներելի է *ex uso in abuso* գործ դնել այս բառը:

Մենք չենք ուզում կողմնապահ լինել նաև դէպի մեզ այս պատճառով ինչպէս առաջ, այնպէս և այս գրութեան մէջ ասացինք և խոստովանեցանք, որ «Հիւսիսափայլը» լեզուի կողմից ունէր, ունի, և պիտի ունենայ թերութիւնք: Մեր ընդդիմախօսքը իրենց վայր ի վերոյ հայկաբանութիւնը, որի մէջ ոչ համակարգութիւն կայ և ոչ ոճ, գործ են դրել միայն փողոցի խօսակցութեանց ձև, զարմանք չէ, եթէ ժողովուրդը աւելի հասկացել է նոցա գռեհի լեզուն, որովհետև այն բոլոր բաները, որի վրայ խօսել էին և խօսումէին դռքա, ծանօթ էին ժողովրդին, բայց խնդրումներ փորձ փորձել զխութիւնք աւանդել, մարդու վայելուչ կերպով խօսք բանալ և ոճով կարգով բան առաջացնել այդ իրենց սքանչելի լեզուով, կրտսններք այն ժամանակ նոցա ուժը և կարողութիւնք: Լեզու հասկանալը միայն բառ հասկանալով չէ լինում, գաղափարների նորութիւնը և անծանօթութիւնը մեծ արգելք է ժողովրդին հասկանալ մի զխանական կամ կանոնաւոր կերպով գրած բան. սորա ապացոյցը տեսնումներ մենք և կարող ենք ցոյց տալ մեր ընդդիմախօսներին նաև նոցա անոճ և խեղճուկ գրութեանց մէջ, երբ նոքա թարգմանումէին մի որպիսի և իցէ Ֆրանկի կամ ռուսի աշխատութիւն:

«Հիւսիսափայլը» միակ յանցանքը, եթէ յանցանք էր

այդ, այն էր որ նա կամենալով ուժ և զօրութիւն զնկլ մայրենի նորախօս լեզուի մէջ, զրկել էր այդ լեզուն մի ճիշտ համահարգութեան տակ. այլ և մանաւանդ 1862 թուականում ժողովրդական լեզուի բազմասութիւնը տարել զրկել էր բուն Հին լեզուի բազմասութեան տակ: Ահա այն միակ և, կրկին ասումենք, միակ սխալը «Հիւսիսափայլը» լեզուախօսութեան: Սխալ ասումենք նորա համար, որ ներկայ սերնդի իրաւունքը նոյնպէս անբռնաբարելի է, ինչպէս Հին հայոց իրաւունքը: Եւ ինչ իրաւունքով Հին հայր խօսումէր այնպէս և ոչ այլապէս, նոյն իրաւունքով այժմեան հայր կարող է խօսել այսպէս և ոչ այլապէս: Բռնադատել նոր լեզուն և մինչ այն աստիճան ստրկացնել Հին լեզուի ձեւերին, որ ազդը դժուարութեամբ հասկանայ, անխորհուրդ մաքրասիրութիւն է և մենք մեր կողմից չենք ընդունում այդ: Միւս կողմից յարգելով ժողովրդի իրաւունքը, պաշտելով նոր լեզուի իրաւունքը, այնու ամենայնիւ հարկ կայ մատենադրի վրայ խնամով և կամայ կամայ ազնուացնել ամբօխի ձև ու ոճը, որչափ կարելի է միշտ զգուշանալով, որ տարապայման ազնուասիրութեամբ բուն լեզուն անհասկանալի չգառնայ ազգին, որովհետեւ այսպիսի դիպուածում բոլորովին ոչնչանում է լեզուի խորհուրդը: «Հիւսիսափայլը» չափից դուրս հայկաբան էր, մանաւանդ 1862 ին. այդ աստիճանը տանելի չէ ժողովրդին. հազարամեայ աւերանքը մէկ օրում չէ շինվում. մնայ որ այդ աւերանք էլ չէ, այլ ժամանակի և պատմութեան ազդեցութեան տակ առաջ զնացած աճելութիւն:

Եթէ նոր լեզուն չունի Հին լեզուի ոլորուն ոճերը, եթէ չէ կարելի նորում միմեանց քամակից շարել ասիական վերուոյց հոետորութեամբ նոյնանշան բառեր, եթէ նոր լեզուն աւելի պարզ և անգարդ է իր ձեւերով, այդ չէ նշանակում, թէ նա աւերվել է, այլ մանաւանդ թէ առաջ է զնացել: Բայց «Հիւսիսափայլը» 1862-ի նոր հա-

մակարդութիւնը (նոր ասումենք տարբերելու համար 1858-1861 թվականների հրատարակվածից) զլխաւորապէս պատերազմումէ նոր լեզուի այն ոճերի և ձևերի հետ, որ ընդհանրապէս նայվումեն որպէս տաճիկ լեզուի ազդեցութիւն, օրինակ, շատ նախադրութեանց վերջադաս դրվելը, յատկացուցչի նախադաս դրվելը և այլն և այլն, բայց մենք կարծումենք թէ իրաւունք չէ, անհնար է թերևս բռնաբարել բովանդակ ազգի արամաբանութիւնը, եթէ նաև չինչականի տակ լինէր աճում: Թէ տաճիկ է, թէ սասանայի՝ խնդիրը այդ չէ, այլ այն է թէ այսօր նաև հայի սեփականն է և հայը չնայելով շատ դաւառական տարբեր բարբառներին, այնու ամենայնիւ մի և նոյն արամաբանութեան տակ է խօսում. այդ արամաբանութեան ընդգէմ անկարելի է ուղղակի պատերազմ յայտնել. մեռած կենդանու մորթը առողջ կենդանու վրայ չէ կպչում. չորացած ծառի ճիւղը կենդանի և թալամ ծառի վրայ չէ ծաղկում, կենդանի մարդը մեռելայի հետ պատանքում ամենը ունի իր իրաւունքը և սուրբ է:

Ուրբան նեղանումենք, որ ամեն քայլափոխ ստիպված ենք ծանօթարանել, որպէս և այս տեղ, թէ վերի խօսքերով չենք ուղղում որ լեզուն մնայ երեսի վրայ կամ աճէ օտար արամաբանութեան տակ, չէ՛, այլ թէ օրադրի և մտանադրի պարտականութիւնն է մշակել այդ լեզուն, յարդելով համօրէն ազգի գործ դրած արամաբանութիւնը լեզուի. այս պատուանդանի վրայ կամայ կամոց մաքրել, մշակել և կօկել մայրենի նորախօսութիւնը. մեր կարծիքով ուրիշ տեսակ անհնար է: Մնհնար է, եթէ, ինչպէս ասացինք, տարապայման մաքրասիրութեամբ սարկացինք նորան հին լեզուին. անհնար է թէ աններելի անհրդութեամբ, այդ շատ անգամ և ազիտաբար առանց բնաւ հայ լեզուն ուսած լինելու, անկարգ, անկանոն, ինչ որ մեր բերնին գալիս է, զրենք թղթի վրայ, ինչպէս մեր սքանչելի ընդ-

գիմաստաների գրութիւնքն են, որոնք, համարձակվում ենք կարծել, հազիւ թէ իրենց բոլոր կեանքի մէջ մէկ վայրկեան մտածել էին նոր լեզուի օրէնքների և պայմանների վրայ. հազիւ թէ կարող էին իրենք իրենց կամ ուրիշն հաշիւ ու համար տալ, թէ ինչ հիմքի վրայ գործ են դնում այս կամ այն ձևը կամ մի և նոյն գաղափարը տալու համար անխտիր զանազան ձևեր, որ ոչ մի կանոնաւոր լեզու չէ կարող տանել: Չկայ մէկ սող, չկայ մէկ խօսք, որ «Հիւսիսափայլ» գրիչքը գրած լինէին առանց չափելու և կշռելու. ուրիշ խնդիր է թէ ինչպէս էր այդ չափը, բայց և այնպէս կարծում ենք որ չափը, գիտակցութեան արդիւնք լինելով՝ կարող է ուղղագործվել, եթէ անյաջող էր, մինչդեռ առանց չափի, առանց մի որոշեալ համակարգութեան տակ, այսպէս ասված, կենդանական-բնական ազդեցութեամբ գրված կամ մայրենի լեզուի գիտութեան մէջ անհաստատ լինելով՝ անկարգ, անկանոն աղճատաբանութիւնքը երբէք չէին կարող հասցնել նոր լեզուի մշակութիւնը դէպի նորա ցանկալի նպատակը:

Մեր ընդգիմաստօքը օրագիր հրատարակելով կամ գիրք թարգմանելով, երբէք ուշադիր չեն ելած լեզուի մշակութեան, որպէս թէ այդ կամ հարկաւոր չէր, կամ թէ կատարեալ լինելով մշակութեան կարօտ չէ: Սասցինք որպէս թէ, որովհետև իրողապէս այդ բոլորը նոցա վերջին աստիճան մայրենի լեզուի մէջ խեղճութեան արդիւնքն է. յայտնի է թէ տալուց առաջ պիտի ունենալ իսկ այն գրիչը, որ տակաւին իր լեզուի ուղղագրութիւնը չգիտէ, որ անխտիր եւ՛ չէ տեղ է, որպէ՛ տեղ չէ և այն է գործ ածում, այդպիսի պարոնից ինչ պահանջես: Թող չկարծեն թէ մենք չենք ուզում կամ ծուռ աչքով նայում ենք նոցա դրքին կամ օրագրին, քա՛ւ. Մովսիսի հետ ենք ասում, ո՛ սայր ինձ գամենայն խրայէլ ի մարգարէս, բայց մարգարէք լինին

մարդարէի նման. Բահադի մարդարէիերի համար վաղուց պատրաստ է Կիտնի յեղճեղատը:

Եթէ «Հիւսիսափայլ» չէ կարողացել մայրենի լեզուի մշակութիւնը հասցնել իր մօտաւորապէս կատարելութեան աստիճանին, գոնէ նա միշտ աշխատել է այդ խորհրդով: Եւ ոչ ոք չէ կարող ասել, թէ բողոքովին կորած է նորա աշխատութիւնը: «Հիւսիսափայլ» գրիչքը, «Հիւսիսափայլ» առաջին անգամ երևցած օրից ուշ զննելով մայրենի նորախօսութեան, միշտ չափի ու կշռի տակ առաջ տանելով սորան, գիտցել են, այո՛, չափել և կշռել ուրիշների գրչով առաջացած նորախօսութիւնն էլ և այս վերջինի քննութիւնը վաղուց ցոյց է տուել մեզ, թէ «Հիւսիսափայլ» նորախօսութիւնը ոչ միայն չէր կորած յաւիտենականութեան անդունդի մէջ, այլ նաև ազդեցութիւն էր անում մինչև անգամ այն մարդոց լեզուի վրայ, որ գրիչ էին առնում միմիայն մեզ հայհոյելու:

Մենք նոյն այդ հայհոյութեանց մէջ, խեղճ հեղինակներից գաղտնի, ներս մտած մեր ձևերը և ոճերը տեսնումէինք միշտ և այդ բանը ստիպումէր մեզ աւելի ողորմիլ այդ տեսակ հեղինակներին, որոնք մինչև անգամ մեզ հայհոյելու համար կարօտ էին «Հիւսիսափայլ» լեզուին: Մենք թողումէնք այն անյաջող կապիութիւնները, որ մի քանի անարուեստ խեղճեր «Հիւսիսափայլ» այս կամ այն հատուածի բովանդակութեան նմանելու համար գործ գրին: Տակաւին երևումեն քանի պարբերականք, որ «Հիւսիսափայլում» երևան կլա՞ծ մակդիրքը պահումեն, ուրա՛խ ենք, եթէ այդ կերպով ևս օգուտ է բերում նոցա մեր բամբասված «Հիւսիսափայլ»:

«Հիւսիսափայլ» հրատարակութիւնը թէ լեզուի և թէ բովանդակութեան կողմից գիտակցութեան արդիւնք լինելով, երբէք մեր խեղճը չէ տանջել մեզ, երբէք չենք ցաւած, երբ ցախ աւելով հաւաքած իմաստակները հռի յարդից

«Հիւսիսափայլը» կրկնեւր¹⁾ — քննադատելու էին դուրս դալիս և աջ ու ձախ բրգում: Մեր ամենամեծ ցանկութիւնը այն է մնայն, որ միւս օրագիրքը, Հեղինակքը կամ թարգմանիչքը նոյնպէս գիտակից հաշուատուութեամբ աշխատէին նոր լեզուի վրայ և ոչ լսի բնական ազդեցութեամբ, այն ժամանակ ոչ միայն ժամանակ կորցնելու չէին անխորհուրդ զեզգէկութեամբ, այլ և օգտակար կրկնէր նոցա աշխատութիւնը լեզուի մշակութեան. մինչև այժմ նորա լեզու չին մշակած և նոր լեզուն ոչ համ է տեսել նոցանից և ոչ հոտ:

Եւ այս է մանաւանդ պատճառը, որ «Հիւսիսափայլը» լեզուի կողմից այնքան բամբասանքների տակ էր ընկնում, որովհետև նորա մէջ կար համակարգութիւն, իսկ մեր ընդդիմախօսքը սիրող չէին համակարգութեան. բայց մեր կարծիքը և սրտի հաստատ վկայութիւնը այսպէս է թէ մի օրագիր երևելով մեր ազգի մէջ, պարտական է ոչ թէ ձախ ու ծուռ թարգմանութիւնք, դարերով յետ մնացած զազափարք և խաւար Ֆանատիկոսութիւն տալ նորան, այլ մշակել նորա լեզուն, գնալ ժամանակի հետ, փարատել կոյր և մարդատեսաց Ֆանատիկոսութեան խաւարը և դորա տեղ քարոզել սէր, խղճի ազատութիւն, մարդկային բանական արժանաւորութիւն:

Ինչպէս այժմ, առաջ էլ այս սկզբունքի տէր էինք, ուստի և զարմանք չէ, այլ շատ բնական, որ «Հիւսիսափայլի» մէջ երևումէին եւրոպական այլ և այլ լեզուներից թարգմանած աշխատութիւնք, որոնց մի լաւ բաժինը հասնումէր ընտիր վէպերի: Բայց ինչպէս առաջ էլ ասացինք, մեր ոգորմելիքը ասումէին թէ այդ վէպերը թեր ազգին վերաբերուին չէին: Մենք հաւատացած ենք, որ ընտիր

¹⁾ Այս իրենց բառն է, և վերստին իրենց յետ տալու համար միայն դործ գրինք, ապա թէ ոչ հայախօսութեան մէջ այսպիսի բայ տեղի չունի:

Ծանօթ, Հեղին.

մի գրուածք, ազատ հայեցումաճքներով, ընտիր ճաշակով, գեղեցիկ բարոյականութեամբ, ինչ լեզուից և թարգմանված լինի, այնու ամենայնիւ մեծ և մեծ խորհուրդ ունի նորոգելու և կենդանացնելու թէ ճաշակը, թէ քաղաքային կամ ընկերական յարակցութիւնքը մի ազգի, որ միջնադարեան մշուշով պատած կամ ոչինչ չէ կարդում կամ թէ ժողովածու և Պղնձէ քաղաքի պատմութիւնը: Կաւ որ այս վերջին ժամանակներում հայերը երկու օրինաւոր վիպասանութիւն ստացան—«Աէրք շոյաստանի» և «Սօս և Վարդիթեր», բայց դռքա, սրտանց խոստովանելով նոցա արժանաւորութիւնը, ասումենք, ոչ միայն ինչ որ մարդկութեան հարկաւոր էր. բոլորը չստացին, չպրծան, այլ երկուքն էլ մանաւոր խորհրդով զսված լինելով բնաւ իսկ ընդհանուր հասկացողութեանց կամ ընկերական յարաբերութեանց չմտնեցան:

Այս օրվայ օրս Եւրոպայի մէջ գրեթէ թաղաւորեալ մասնազրութիւնը վիպազրութիւնն է, ինչ օրազիր, ինչ լրագիր կամ ինչ թերթ ասես, որ առանց վէպի օր անցնէ, թողումենք այն բազմահատոր վիպասանութիւնքը զանազան հեղինակների և գանազան ազերի: Սմեն մի ընտիր վաստակ, ինչ լեզուով ևս լինի գրված, այնու ամենայնիւ միշտ օգտակար է բոլոր մարդկութեան, մանաւանդ եթէ նեղսիրտ ազգական հասկացողութիւնքը հանդէս չունենան այդպիսիների մէջ, մանաւանդ եթէ աշխատութեան խորհուրդը է գեղեցիկ մի պատմութիւն կարդացողների ճաշակը և հասկացողութիւնը աղնուացներ:



II.

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Մեծապատիւ բարեկամ

Տէր Յարութիւն Քահանայ Գեորգէեան,

Ձեզ յայտնի է պատմութիւններից, որ ամենայն Ազգի գրականութիւնը սկսանում է երգերով, առածներով և տաղաչափութիւններով, կարծես թէ այս հասակը՝ համեմատելով կենդանական թագաւորութեան հասակի ընթացքին՝ տղայութիւն կամ մանկութիւնն է այն հսկայամարմին երիտասարդ, ծերացած կամ մեռած և արդէն հազարաւոր տարիների փոշիներով ծածկված գրականութիւններին, որոնք եղած են աշխարհի երեսին կամ թէ կան այժմուս:

Հայկական լեզուն ևս իբրև մարդկային լեզու ամենևին բաց առնված չէ այս կանոնից: Տեսնում ենք ամբողջի օրինակը մեր մասնաւորումը, նոյնպէս մասնաւորինը ամբողջի մէջ փոխադարձ և իմանում ենք որ Հայոց հին գպրութիւնը ևս ունեցել է երգեր, աւանդութիւններ և առածներ, որոնցից մի քանիսը խորենացի պատուական ծերունու միջնորդութենովը կամ այլ ոսկէփորիկների միջնորդութենով հասած են մեզ. որպէս. «Երկնէր երկին և երկիր», «Հատուած գնացեալ վարդգէս մանուկն», «Հեծաւ արի արքայն Արտաշէս» և այլն մի քանիսը, որոնց շատիցը բազդի անգթանալովը այժմուս զըկված ենք, և այս քիցը որ մեր ձեռքը հասած է, եղբակացնում ենք, որ պիտոյ է անհամար շատունենայինք այսպիսի երգեր մեր քաջերի վերայ, որոնք կացած էին նահապետական ժամանակներում, պիտոյ է, որ ունենայինք և մեհենական կամ նուիրական երգեր, որովհետև զիցապաշտը, արևապաշտը և կրակապաշտը էին, իսկ ինքն ըստ ինքեան զիւցարանութիւնը բանաստեղծութիւն է, և ի՞նչ հնար կար, որ անոնց նուիրական երգերի կատարուէին նոցա պաշտամունքը:

Այժմուս մեր լեզուի վերանորոգութեան դարումը կարծես թէ ամենայն կողմից պահպուսէ նոյնպէս այս կանոնը, ամենայն տեղից լավումն երգերի ձայներ, տեսնվումն առակներ, բանաստեղծութիւններ—հատուած բաներ, որոնք դարձեալ մի գալուց հսկայամարմին նոր հայախօսութեան սաղմն են (conceptus). սորանից երևումէ որ լեզուն, իբրև բնութեան այլ մարմինները, ենթարկվումէ ընդհանուր և անփոփոխ կանոնի տակ. ուր և լինէր սա, երբ և լինէր՝ միշտ մի օրինակ կատարվումն սորա վերայ բնութեան պայմանները: Լեզուի յղութիւնը, ծնունդը, տղայութիւնը, մանկութիւնը, և այլ հետեալ հասակները անհրաժարելի դաշինք են լեզուի գոյութեանը և էութեանը: Լեզուն մինչև այս աստիճանները չի անց կենաց, երբէք չի կարող կատարեալ հասակին հասանել, որ է երիտասարդութիւնն: Եղած են աշխարհի երեսին լեզուներ, որոնք հազիւ թէ մանկութեան հասակին հասած՝ արդէն ծերացել են. այս բանը տեսանումնք աչքով, բայց որովհետև մանկութենից մինչև ծերութիւն կան աստիճաններ, որոնց վերայից թռչել և անցնել դէպի ծերութիւնը անհնար է, ի՞նչպէս արդեօք պիտոյ է մեկնէինք մեղ այդ լեզուների ընթացքը. առնունք զոր օրինակ մեր հին լեզուն. նորա տղայութիւնը կամ մանկութիւնը տեսնումնք հին երգերի մէջ. նորանից յետոյ յանկարծ գալիս է մեր առաջ նորա ծերացած հասակը: Աստուածաշնչի թարգմանութիւն, պատմաբանական, և մեռած համարեալ թէ հատուկոր յիշատագրական գրուած. ի՞նչպէս է անցել այս լեզուի պատանեկութիւնը և երիտասարդութիւնը, ուր են նորա յիշատակարանքը, այս զարհուրելի փոփոխութիւնը դարձեալ կարող ենք բնութեան շօշափելի օրինակներով մեկնել: Գիտենք, որ թէ մի բուսական առանց բնութեան ներգործութեան, այլ արուեստի բռնութենով անցնելով իւր մանկութեան վերայից ծաղիլի, իսկոյն այս ծաղիկը, որ երիտասարդութիւնն է, թօթափելով կը հասնի ծերութեանը, կթօշնի կրթառամի և մեր աչքի առաջ կմնայ աւել երկար ժամանակ նորա ծերացած վիճակը, իսկ միւս հասակները հողմերի թևերի վերայ թռուցած կ'անցնեն: Չէ կարելի ասել թէ շայտց լեզուն չի ունեցել պատանեկութիւն կամ երիտասարդութիւն. այլ՝ այդ հասակը այնպէս սուղ է եղած, այնպէս կարճատև, որ չի երևում աչքի, այլ մնացել է միայն նորա մանկութեան յիշատակարանքը և ծերութիւնը: Հին լեզուի երիտասարդութիւնը հա-

մարումնմ կղիշէի քաղցրախօս վարդանանց պատերազմի նկարագրութիւնը:

Եթէ տարակոյս չունինք, որ լեզուն, ինչպէս տեսանք, իբրև բնութեան այլ մարմինները (իմանումեմ գործարանաւորք, corpora organica) ենթարկված են բնութեան առ հասարակ կանոններին, իմանումենք նոյնպէս, որ մարմինները անմահ են մնում իւրեանց յաջորդների մէջ, որ թողնումէին կամ իւրեանց մարմնի մի կտորը բաժանելով կամ բովանդակի պատկերի մի կաթիլ հեղուկի մէջ պարունակելով՝ երբեմն ևս այս հեղուկը պատած եղջերային կամ ոսկրանիւթ պատենով ուրեմն և լեզուն պիտոյ է մնայ անմահ, բայց անմահութիւնը դարձեալ գործարանաւոր մարմինների նման տեսնումէ յաջորդի մէջ և ոչ թէ իւրեան իսկ ծերութեան հասակի յախտենական շարունակութեան մէջ, որ կարող է կգիպտական մուսիայի նման գօսացած պահել միայն ձեւը և գրութիւնը, զրկուելով միւս կենդանական ներգործութիւնից, ինչպէս է այժմ մեր հին լեզուն:

Բնութիւնը զգալով մարմինների անմշտնջենականութիւնը մի անհատի մէջ, հարկադրումէ նորան թողուլ յաջորդի սերմը, այսպէս ներգործումէ լեզուի վերայ. իհարկէ խելագարութիւն է ջնջել և չբացնել որդին, որ գուցէ հօր նման կամ աւել քաջ կլինէր, պատուելով առաւել նորա հօր երեսը. թող հայրը մնայ պատուած, իսկ որդուն պիտոյ է խնամ տանել, զարգացնել ըստ որում հայրը այսօր էդուց մեռանելու է և նորա տեղը պիտոյ է որդին բռնէ. եթէ սերմերը ոչնչանային հետեւաբար մարմինների տեսակը ևս կըջնջվէր. սորա ապացոյց ունինք շատ լեզուներ, որոնց մի քանիսի միայն անունը գիտենք և մի քանիսիցը քանի մի բառեր:

Այս բաները ուսումնականաբար կամ լաւ ևս իմաստասիրաբար քննելով պարտաւոր ենք տածել ու խնամել նոր բողբոջները որ հինի սերմիցը յառաջացած՝ խոստանումէին մեզ պահել նոր անմահութիւնը, ուրեմն ջանք ու խնամ ունենալ նոր լեզուի տղայական հասակի վերայ: Վերանորոգեալ հայախօսութեան այս հասակի վերաբերած քանի մի յիշատակարանք ունելով ես իմ մօտ, կամ իմ սեպհական մտածողութեան պտուղը և կամ ուրիշից մշակած, որոնց անունը տակերումը նշանակած է, կամենումէի նորանց ջմատնել յաւերժական կորուստի, ինչպէս մինչև այսօր իմ անհոգութիւնովը իմ գրած բաներից շատերը այս կամ այն

կողմ՝ ցրուած կորած են, որոնց անունը ևս օր ըստ օրէ մոռանումեմ: Վասն որոյ ինչքան որ պիտի ձեռուամ ունիմ այս տետրակիս մէջ գրած, աւանդումեմ ձեզ, յուսալով որ ձեզ մօտ չէ կարող Սատուրնոսը մերձենալ և իմ գրածներովը իւր որկորը խճողել: Թէպէտ այս գրուածքը մի երևելի բաներ չեն, այլ նոր լեզուի տղայութեան հասակի յիշատակարանք կարող են համարուել: Ողջ եղէք:

Ձեր բարեկամ

Մ. ՆԱԼԲԱՆԳԵԱՆ.

12 մայիսի 1855.

Մոսկվա.



ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ,

Մի նամակի առիթով որ ստացած է Շամախուց:

Մի ծանր և խորհրդաւոր ժամուժ ազգային կեանքի մէջ, երբ, ինչպէս հեռուից ու մօտուց երևում են նշանները, տիեզերական արդարութիւնը սուրը ձեռքին պիտոյ է հատուցումն առնէ ժամանակի անխրատ և անարժան որդիներին և այդպէս լցուցանէ ճակատագիրը—մի այդպէս ծանր և խորհրդաւոր ժամուժ, ասես թէ Հայոց կեանքի ողբերգութեան հանդէսը ամենևին լիամասն կացուցանելու համար, պիտոյ է մեզ լսել հեռաւոր տեղերից և այն խռովեցուցիչ լուրը թէ սոգէտ և տմարդի արեղայք չկամին մի վայրկեան հանդիստ ու դադար տալ մեր սիրելի ժողովրդականներին, այլ ամենայն ճշնողութեամբ աշխատում են տարաձայնութիւն ձգել ազգի մէջ, վշտացնել նորա սիրար մի լոկ Ֆանատիկոս, մտորամիտ հալածասիրութեամբ: Մեր խօսքը այս տեղ Շամախու վիճակաւոր Մովսէս վարդապետի և շամախեցի Հայերի վերայ է: Կարծում, յայտնի կը լինի մեր ազգայիններին, որ Շամախեցիք անցեալ 1859 թուականին դանդատաւոր էին եղած զէպ ի Էջմիածնի Սիւնհոգոսը իւրեանց վիճակաւոր առաջնորդի անարժան ընթացքի վերայ, և լուռմէինք արդարև, որ Էջմիածնու արժանապատիւ Սիւնհոգոսը քննելով դանդատաւորների պատճառքը և դանելով նորանց իրաւացի, կամէր մի այլ հոգևոր անձն առաջնորդ ուղարկել զէպ ի Շամախի: Բայց ով որ գիտէ Սախայի պատմութիւնը և կարգացիլ է, թէ ինչպէս մի դատապարտած

խան կամ փաշա վերստին շնորհ է դատանում իւր փառիշահի կամ սուլթանի առաջև, և թէ մեր նայոց արեղայքը ասիական զաւազանի տակ ծնած, սնած ու դաստիարակված, վարվիլ են միշտ նոյն հոգով — ով որ անդակ է նայոց պատմութեանը վերջին դարերի մէջ, ամենևին չունի անդէք զարմանալու, թէ Մովսէս վարդապետը կրկին որպէս վիճակաւոր առաջնորդ վերադարձել է դէպ ի Տամախի, և ինչպէս լսումենք մեր նամակագրից, ոչինչ ուսած և ոչինչ մոռացած, այլ մի և նոյն կարգով, այսինքն անկարգութեամբ, ինչպէս յառաջ, վարվելով ժողովրդականների հետ և յարուցանելով սրտերի ահաճութիւնքը: Պիտոյ է այս անկ ծանօթութիւն տալ մեր ընթերցողներին, թէ այս ահաճութիւնների նիւթը մի կողմից, և գայթակղութեան պատճառը միւս կողմից վերստին դարձել է սուրբ զբքի ընթերցանութիւնը ժողովրդի մէջ, որին ընդհանրապէս — ամենևին պապական հոգով — հակառակ են մեր նոգեւորքը, և մանաւանդ թէ առաջնորդը Տամախու: Լսումենք մեր նամակագրի ծանուցմամբ, թէ Տամախու մէջ գամնվում է մի փոքրիկ բարեպաշտ զրասէր ընկերութիւն, որ ինչպէս Քրիստոսի առաքեալների օրերում եղած է, այժմ ևս շատ անդ քրիստոնէսայ ազգերի և հասարակութիւնների մէջ կայ, կազմելով մի առանին եկեղեցի, շաբաթը մի քանի անգամ հաւաքվում է միասին ընթերցասիրելու սուրբ գիրքը և քրիստոնէաբար շինուելու, առանց սորանով անփոյթ առնելու հրապարակական ժամասիրութիւնը, շաբաթ ու կիրակի յաճախելով դէպ ի եկեղեցի, և որպէս վայել է Քրիստոնէին, սահմանեալ միջոցներում մասնակից լինելով Տիրոջ սեղանին, խոստովանութեամբ և հաղորդութեամբ Քրիստոսի կենարար մարմինն ու արեանը, մի խօսքով, անթերի լցուցանելով բոլոր պահանջելիքը մի հրապարակական աստուածապաշտութեան: Փոխանակ ուրախանալու այսպիսի գրասիրութեան և լուսաւոր քրիստոնէութեան վերայ, որ

կարող է քննելով Սուրբ գիրքը աւելի մօտ ծանօթանալ Աստուծոյ բանին և պատրաստել իւր համար յաւիտենական կեանք—ինչպէս ասած կայ. «Քննեցէք զգիրս», զի սօքօք համարիցիք ունել զկեանս յաւիտենականս». փոխանակ ուրախանալու տեսանելով ժողովրդի մէջ այսպիսի սէր և ջերմեռանդութիւն դէպ ի սուրբ գիրքը, դէպ ի Քրիստոսի աւետարանը, փոխանակ ամենայն կարելի կերպով քաջալերելու և յառաջագէմ առնելու մի այդպիսի գեղեցիկ և գովանի ընթացք,—Մամախու հոգևոր առաջնորդը գործ է դնում ամենայն բռնակալ հնարներ, պօլիցիայով և աշխարհական իշխանութեամբ պատուիրումէ ժողովրդականներին չհաւաքովել տան մէջ ընկերութեամբ, ընթերցասիրելու սուրբ գիրքը և չմօտենալ միմեանց այդպիսի հոգևոր շինութեան խորհրդով: Լգիտենք թէ ի՞նչ մտածենք Մամախու առաջնորդի վարեցողութեան վերայ, որի մէջ տեսանումենք մի ակնյայտի թշնամութիւն դէպ ի սուրբ գիրքը, դէպ ի Քրիստոսաբարօղ աւետարանը, դէպ ի նոյն ինքն Քրիստոս: Ոհ, ի՞նչ տեղ է հասել մեր թշուառութիւնը, հոգևորների վայրենաբարօղ տգիտութեամբ և անամօթութեամբ. Քրիստոսը և Քրիստոսի աւետարանը այսօր հայհոյվումէ մեր մէջ որպէս հերձուածողութիւն, հալածվումէ որպէս վնասակար ուսումնի, պատժվումէ որպէս խոտորումն ուղղահաւատ քրիստոնէական եկեղեցուց: Մահմետականները ունին իշխանութիւն կարգալու իւրեանց Մահմետի Աուրանը, ժողովվելու մի տեղ իւրեանց մարգարէի անունով, բայց մէք, հայ քրիստոնեայքս, մեր աբեղաների շնորհով պիտոյ է զըկվինք այդ ավատութենից վերաբերութեամբ դէպ ի աստուածաշունչ գիրքը, դէպ ի մեր Քրիստոսի աւետարանը. Լայերը կարող չեն ժողովվել մի տեղ յանուն Քրիստոսի: Տէրութեան մէջ կարող են կլուբներ (ժողովարանք), ընկերութիւնք զանազան զբօսանքի, ուտելու, խմելու, պար դալու, թուղթ խաղալու,

խօսելու և երգելու, բայց ժողովներ յանուն Քրիստոսի ոչ չայք կարող են միմեանց տուն գնալ որպէս հիւրք, միասին հացկերութիւն, զինարբութիւն ատնել, վաճառական հաշիւ ու համար տեսանել միմեանց հետ, բայց, հոգևոր շինութեան խորհրդով, մի քանի մարդերի հաւաքվելու մի տեղ չկայ թոյլտուութիւն, արգելվումէ պօղեցիայի ձեռքով: Եթէ կայ հրապարակական եկեղեցի, կայ և առանին եկեղեցի. մինը խափան չէ միւսին, այլ մանաւանդ թէ օգնական և ձեռնաու: Եթէ Մովսէս առաջնորդը ունի որ և իցէ կասկածանք շամախեցի չայերի մասնաւոր ժողովեց քրիստոնէական շինութեան խորհրդով, եթէ նա կասկածումէ, թէ այդ տեղ աւանդվումէր մի ուսումն որ վնասակար ու ընդգէմ էր քրիստոնէական ուղիղ վարդապետութեանը, ապա կարող էր միշտ ներկայ դտանվել դորա մէջ, պատշաճաւոր վերակացութեան տակ դնել գործը, մի առողջ ուղղութիւն տալ ժողովրդի բարի և աղնիւ կամքին, բայց ոչ երբէք թիկունք առնուլ իւր համար աշխարհական իշխանութիւնը խափանելու և կործանելու առանին քրիստոնէական ընկերաժողովք, որ ոչ թէ յանցաւոր չեն, այլև թոյլ տուած և հաստատված են առաքելական օրինակներով: Բայց եթէ Մամախու առաջնորդը այն ցաւի մէջ է, որի մէջ միշտ դտանվումեն խաւարասէրքը, մի՞ գուցէ որ ժողովուրդը լուսաւորվելով սուրբ զրբի լուսով, ճանաչէ իւր առաջնորդների խարդախութիւնը, և կորուսանէ այն հաւատը որ մինչև այժմ ընծայել էր իւր հոգևոր հովեւներին, — եթէ այդ է Մամախու առաջնորդի ցաւը, ասենք պարզ և անպաճճի խօսքով, այնուհետև այդ պատուելի չայրը ինքն իւր ձեռքով գրում ու գրոշմումէ իւր մահու ահաւոր դատակիւքը:

Բայց մեր կարծիքը թէ չայոց եկեղեցու և թէ նորա սպասաւորների մասին այսպէս է առ հասարակ. Մի եկեղեցի որ սեփականումէ իւրեան անունա քրիստոնէական, բայց

Իւրեանից բացէ ի բաց հալածումէ զիսութիւնը, մի հոգևորական դաս որ մնալով դարաւոր ազիտութեան մէջ, իւր անձնապահութեան պատճառով աշխատումէ փակել և ժողովրդի համար լուսի և ճշմարտութեան աղբիւրքը, թող առ ժամանակ սպասնալիքով և դաւազանով ոտքի վերայ պահէ իւր իշխանութիւնը քրիստոնեայ խիղճերի և հոգիների վերայ, թող քրիստոնէական ազատութեան հոգին շինէ ծառայութեան հոգի. բայց այդպիսի եկեղեցին և այդպիսի հոգևոր դասը կարող չէ երկար աւելլ, այլ պիտոյ է տեղիք տայ յառաջաշարժ ժամանակի պայմաններին. և ինչ որ ազգի բուն մարդիկը պարտական էին իւրեանց ձեռքով և իւրեանց տան պահպանութեան համար առնել, բայց առանց պատասխանի աւելու անհոգութեամբ չեն արած մինչև օրս, այդ բանը կ'առնէ ժամանակը, կ'առնեն օտարք, գործ կատարելով որպէս անօթք ակեղերական արդարութեան, որպէս փոխանորդք նախասնամութեան աշխարհիս վերայ: Այդ ժամանակը հսկայական քայլերով մտանումէ ահա, լցուցանելու տխուր ձախատաղիւրը: Մեր նայելով, թէ աշխարհականք և թէ հոգևորք շուտով կը հնձեն իւրեանց ձեռքի սերմանածը, չար և անմիտ սերմանածը. պատմութիւնը կարող չէ փոխել իւր բարոյական և բանական կարգը, որպէս թէ շնորհ ցուցանելով մի թոյլ և սկարամիտ ազգի, մի ազգի, որ պատմութեան ծանր և խոհրդաւոր խրատները անիցթ առնելով, որ զիսութիւնը մինչև այսօր, մի ժանտախտի պէս, բացէ բաց մերժելով իւրեանից, որ անմտութիւնը նախամեծար պաշտելով քան թէ հասկացողութիւնը, հասկացողութիւնը աշխարհական և մարդկային կարգերի, քանի որ ժամանակ ունէր, հոգացել չէ իւր պիտոյքը, պատրաստել չէ իւր ազգային տան պաշտպանող հնարները: Մտախոհ քննելով ներկան և ապագայն, կարող ենք միայն ասել, որ գոքս, ինչպէս որ կերպարանված ու դրած են մեր աչքի առաջը, երևում են

մեզ որպէս պատճառք և ներգործութիւնք, որպէս մեզք
և քառութիւն տիեզերական արգարութեան ձեռքով:

Կարող չենք վերջաւորել մեր յաւած սրտի նկատողու-
թիւնքը, ազաչելով ազաչելու մեր սրբազնակատար, մեծ
քահանայ Մատթէոսից, անյապաղ հոգաբարձութիւն գոր-
ծել վերացնելու տհաճութեան և տարածայնութեան. ա-
ռիթքը ազգի մէջ, սաստելու և սանձահարելու Մովսէս
վիճակաւոր վարդապետի բռնակալ ընթացքը Նամախու-
ժողովրդականների հետ, այլև չխախտելու այն ազատու-
թեան օրէնքը, որ ինքը Քրիստոս պարգևել է մեզ իւր
աստուածեղէն աւետարանով ¹⁾:



¹⁾ Ծանօթ. Տեղի տալով հանդուցեալ Ստեփանոս Նազարեանցի թղթերին, մենք
անպայման կերպով չենք ընդունում՝ նորա յայտնած խրաբանչիւրը միտքը: Լոյս
ընծայելով նոցա, մեր նպատակն է նիւթ մատակարարել քննադատութեան համար:
Ս. Բ.

II.

Ն Ո Ր Հ Ա Յ Կ Ա Ջ Ե Ա Ն Օ Ր Ա Գ Ի Ր

„Լ Ա Պ Տ Ե Ր Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի“

Մ Ե Ծ Ա Պ Ա Տ Ի Ի Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ե Ա Ն Հ Ա Յ Ո Յ

Ա Ջ Դ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն .

Ահա չորս տարի է, Հիւսիսափայլ օրագրի ձայնը չէ հնչում ազգի հրապարակի մէջ: Թէ ի՛նչ ցաւով հիւանդացած, դէպի մահ ննջեց այդ օրագիրը զկնի վեցամեայ կենդանութեան, նա չկամի այս րոպէիս յիշեցնել մեր պատուելի հասարակութեանը. բայց հրատարակողը երբէք յուսահատուած չէ, բաջ գիտելով որ մի մարդ կամ ժողովուրդ երկարաժամանակեայ քնով պաշարուած, թէև մի սաստիկ թնդիւնից զարթնուր, սկսանէր փոքր ինչ վերան ժողովել ուշը, յետ ու առաջ նայել. այնու ամենայնիւ, կարող չէ երկար միջոց արթուն մնալ, նոր լուսացած աշխարհի սաստիկ տպաւորութիւնքը իւրեանց բազմութեամբ և բաղմորինակութեամբ հեղեղի պէս թափուելով նորա վերայ, անտանելի են նորան. նոքա պիտի ճնշեն, բթեցուցանեն, թմրեցուցանեն նորա թոյլ ջեղերը, դարձեալ դէպի քուն գլորեն նորան: Այնու ամենայնիւ ուսուցիչը, բարոյիչը, ազգային մատենագիրը պարտական է ժամանակ առ ժամանակ ձայն տալ, հնչեցուցանել, բարձրացնել իւր բարբառը, քնածները դուրս խլելու այդ վիճակի միջեց, որովհետև չափազանց երկարաձիգ քունը վնասակար է առողջութեանը, ապականումէ մարդուս կենդանական հիւթերը, մանաւանդ երբ որ արեգակը բարձրացած հորիզոնի վերայ մօտենումէ միջօրէական շրջանին: Չափազանց երկար քունը վնասակար է. ուրեմն և մեզ չայերիս ժամ է արդէն զգաստանալ և զօտին պնդած միջքին դիմել դէպի դաշտը, ուր սպասումն մեզ վար ու ցանք, վաստակելու մեր օրավաստակը, մինչև երեկոյացած չէր մեր կեանքի օրը:

Այսպէս է մտածում աղբի մատենագիրը. նա կամի յուսալ, որ և շատերը մասնակից էին նորա մտածութեանը: Բայց նա չկամի լոկ մտածել և խորհել. նա շտապում է իւր մտածութիւնը և խորհուրդը իրագործել. նորա տարիքը օրէ ցօր յիշէցնումն նորան, թէ անտեղի էր յապաղել: Եւ այսպէս այդ մատենագիրը գարձեալ հանդէս է մտնում գործելու և մշակելու Հայկազեան լեզուի և դպրութեան անդաստանը, մանաւանդ այս բոլորէս, երբ որ դա մշակների անհոգութեամբ լցուած է արդէն ամենայն տեսակ վայրենի մոլախոտներով և տգեղ աւերածքով: Ցաւալի է ասել, որ հայերէն շարագրողքը այս կամ այն անուն ամառորի և շաբաթագրի, ներկայումս, բոլորովին անտես առնելով այն խնդիրը, թէ որ և իցէ աղբային լեզու, գրաւոր մշակութեան մէջ ձգուելով, պիտի առաջնորդ առնուր ինքեան մի քանի կարևոր հիմնական կանոններ և դոցա վերայ հաստատուած, յառաջ դիմեր, օրստօրէ յարդարուելով, կատարեալ կերպարանք ստանալով և դառնալով ազնիւ գաղափարների ազնիւ անօթ.—այդ հայերէն շարագրողքը մինչև այսօր իւրեանց բոլոր զօրութիւնը գործ դրեցին ապականել և աւերել նոր հայախօսութեան գեղեցկածիլ բողբոջները: Դոքա բայ թողնելով հայկական լեզուի հարադատախօսութիւնը, կամ թէ բոլորովին տգէտ լինելով դորան, սկսան հայ բառերով, բայց ուս ոճերով խօսել և ուսուցանել հայ ժողովորդը. սկսան գրել և թարգմանել, ինչպէս գրողի և թարգմանողի նիւթքը ձևակերպուած էին օտար լեզուի մէջ. բայց ոչ որպէս անհրաժեշտ պիտի ձևակերպուէին փոխուելով դէպի բուն Հայերէն: Ոմանք կարծեցին ևս, թէ կանոնաւոր և գեղեցիկ. յրստակ հայախօսութիւնը անգործադրելի էր, խօսելով անկիրթ ժողովրդի հետ. հարկաւոր էր գոհակարանել գոհճիի հետ, որ նա իբրև թէ բան հասկանայ. բայց թէ նա պիտի խօսել, ուրեմն և մտածել ուսանէր, այդ կարևոր խնդրին ոչ ոք ուշադիր է եղած: Մեր դարումը ամենայն Եւրոպական մատենագիր գրում է ժողովրդի համար և ոչ թէ մի քանի առանձնական ուսումնականների. նա ջանագիր է, որքան կարելի է, պարզ խօսել, բայց կանոնաւոր լեզուով. սակայն չկամէր նա, իբրև թէ ամենեցուն հասկանալի լինելու համար — որ մի անկարելի բան է, որովհետև ժողովրդի մէջ կան անգրագէտ մարդիկ շատ, հարիւրաւոր այլևայլ բարբառներով խօսողներ, ամենեին անկիրթ մարդիկ, որ թէ գիտէին փոքր ի շատէ ընթեռնուր, բայց մտաւորաբար զարգացած չէին — ոչ մի

առողջամիտ եւրոպական մատենագիր, ասուեմք, չկամք, ժողովրդի հետ խօսելով ստոր իջանել նոյն ապականութեան մէջ, որոյ մէջ նա տեսանումէր ամբողջ, այլ սորա ջանքը և ճգնողութիւնը միշտ այն է, որ ժողովուրդը, որչափ կարելի է, վեր բարձր դէպի իւր կողմը, խօսելով նորա հետ պարզ, բայց միշտ անարատ պահպանելով խօսքի պնդութիւնը և գեղեցկութիւնը: Հայերէն շարագրողք բոլորովին ընդդէմ ընթացան այս կանոնին, վայրենացած ժողովրդի հետ և ինքեանք վայրենանալով: Մի՞թէ այսպէս է աշխարհաշինութեան օրէնքը, հարցանումք: Մարդս ոտք կոխելով մի անշէն, ամայի, վայրենի բնութեան մէջ, մի՞թէ չպիտի հոգաբարձու լինէր այդ անապատ բնութիւնը բարեկարգել, մացառները, փուշը և տատակը արտաքսել, դոցա տեղում պիտանի բոյսեր տնկել ու սերմանել, գետերի անկարգ ընթացքը փակել թմբաշէն սահմանների մէջ, թանձրախիտ անտառները անօսացնել, փնասակար գաղանները բնաջինջ առնել, ճահիճները ցամաքեցնել, փողոցներ և ճանապարհներ բանալ — մի խօսքով, վայրենի բնութիւնը քաղաքագործել, վայելչացնել և պտուղաձեցնել մարդկային պիտոյքին: Բայց ո՛չ, այսպէս շտաձեցին հայերէն շարագրողքը. դոքա ընտանի վայրենութեան վերայ բարդեցին, կուտակեցին այլ տեսակ անպտուղաձութիւնք, այլանդակելով հայկական խօսքը ամենայն տեսակ օտար, անհասկանալի ոճերով: Այդ աւերագործ հայագրի վանդալների ընդդէմ պիտի զինուորուի «Վապտեր Հայաստանի» օրագիրը և ամենայն զօրութեամբ պատերազմէ — բայց սիրոյ և խաղաղութեան զէնքով, որովհետև այլ զէնք չունի նա ընդդէմ իւր սիրելի, թէև արգարև մոյրորւած Հայերին:

Հրատարակողը կամի և մի այլ բան, որ կարևոր է երևում նորան այժմուս հայկական խօսքին կատարելութիւն տալու մասին: Ոչ նորութիւնք, նոր կէտագրութիւն, նորանշան շէշտեր և նոր կանոնք, կամ ուղիղ ևս ասել, անկանոնք յարմարագրութեան, որպիսի անօգուտ, փնասակար իսկ բաներ էին, հաւանեցաւ այս կամ այն անձը օտարուտ ներս մուծանել հայկական լեզուի մէջ, այլ վերանորոգութիւն: մի քանի հին ձևերի, որ տալու էին աշխարհարաւին աւելի համաուտութիւն, աւելի որոշութիւն և ճշգրտութիւն — աւելի պատուականութիւն: Հրատարակողի միակ խորհուրդն է, որ հայկալեան լեզուն դառնայ արժանաւոր գաղափարների արժանաւոր անօթ, մի քաջ և աջողակ գործի բանագէտ

մատենագրի ձեռքում: Հրատարակողը և այսօր մնում է իւր հիմնական կանոնի վերայ ամուր և հաստատ, թէ այն ազգը և մայրը, որ չգիտէ խօսել, նա չգիտէ և մտածել, և առանց ուղիղ մտածելու անկարելի է որ և իցէ յառաջադիմութիւն: Թէ հրատարակողի առաջարկած վերանորութիւնքը որպէս էին. նա մանրամասնաբար կըլուսաբանէ օրագրի ճակատում: Հրատարակողին ցանկալի էր նոյնպէս տալ մեր լեզուին փոքր ինչ ընդհանրութիւն, ընտրութեամբ ընդունելով մի քանի ձեւեր հայկական բարբառի ճաճկաստանում, որ առանց խախտելու Ռուսաստանի հայախօսութեան հիմքը, օգտակար կըլինէին նորան: Մի բան մնում է անհաշտելի երկու հայկական բաժինների մէջ. խօսքս ու՛ վերջաւորութեան վերայ է, բայցրի ներկայ ժամանակը կազմելու համար. որչափ ևս տգեղ և անախորժ լինէր այդ ու՛ ճաճկահայի ականջին, այնու ամենայնիւ հասարակ կիրառութիւնը սրբացուցել է դորան Ռուսահայերի մէջ, թէպէտ պիտոյ է խոստովանել, որ իրական ճշմարտութիւնը առաջինների կողմն է, և երբեմն հանդիպում է մեզ լսել, զոր օրինակ Թիֆլիզի բարբառում ներկայ ժամանակի կազմութիւնը էլ կամ է՛ մասնիկներով, որովք սովորաբար զինվում են բայցրի ապառնի ժամանակները Ռուսահայերի մէջ: Բայց թէ, համեմատելով միմեանց հետ երկու զխաւոր աշխարհիկ բարբառքը Հայոց ճաճկաստանում և Ռուսաստանում, ի՛նչ պիտոյ էր ասել նոցա խօսքի քերականութեան կազմութեան վերայ առ հասարակ, կըլսեն մեր Հայերը օրագրի ներածական ճառում:

Այժմ մնում է մեզ ծանուցանել պատուելի հասարակութեանը այն պաշտօնը, որ ունի լցուցանելու «Լապտեր Հայաստանի» օրագիրը: Գորա պարունակութիւնը լինելու են այսպիսի ճառեր.

ՅՕԴՈՒՄԾ ԱՌԱՋԻՆ.

Պատմական, աշխարհագրական և վիճակագրական ճառագրութիւնք վասն ծանօթացնելու Հայերը Ռուսաստանի քաղաքական զարգացմանը և աճելութեանը, Ռուսաստանի հողի բնական պայմաններին և նորա քաղաքագործութեան (ցիվիլիզացիայի) ներքին վիճակի:—Պատկերացոյցք տիեզերական պատմութեան պէս պէս դարերի: Կենսագրութիւնք մեծամեծ արանց որ գործունեայ են գտանուած տիեզերական պատմութեան հրապարակի մէջ, այլև բարերարների հասարակաց մարդկութեան: ճառագրութիւնք յա-

ղագս զանազան ճիւղերի բնագիտութեան. յաղագս նորանոր յայտնագործութիւնների և գիւտերի թէ բնութեան և թէ ճարտարութեան մէջ: Գործագրութիւն այժմեան բնաքննութեան արդիւնքի ի վերայ հասարակ կեանքի, ի վերայ դաստիարակութեան մարդու և ի վերայ պահպանութեան առողջութեան նորա: Նկարագրութիւնք բնութեան հոյակապ տեսարանների, արժանի հարցասիրութեան ճանապարհորդութիւնք աշխարհի չորս կողմովը:— Նկարագիրք բարբի ու սովորութիւնների զանազան ազգերի երկրագնտիս վերայ:

ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

Այժմեան վիճակը Հայոց ազգի. նորա նիւթական, մտաւոր, կրօնական ու բարոյական կացութիւնը թէ Ռուսաստանում և թէ այլ թագաւորութիւնների մէջ: Հայոց ազգի պատմութիւնը անցեալ դարերում: նորա քաղաքական բարդաւաճանքը և անկումը օտար տէրութիւնների իշխանութեան լծի տակ:— Հին հայկազեան լուսաւորութեան և դպրութեան հանդէսը քրիստոնէական ազդեցութեան ներքոյ: Այժմեան մտաւոր և բարոյական պիտոյքը և կարիքը Հայերի, իբրև մի ազգի, որ կոչուած էր մասնակից լինել եւրոպական գիտութեանը և քաղաքագործութեանը:

ՅՕԴՈՒԱԾ ԵՐՐՈՐԻ.

Ճառագրութիւնք յաղագս ընդհանուր պեղագօգիկայի: Առաջնորդական կանոնք այժմեան պեղագօգիկայի (դաստիարակութեան արուեստի) եւրոպական ազգերի մէջ: Մտածութիւնք և հայեացք դաստիարակութեան գործի վերայ, որ հանդիպումն եւրոպական փիլիսոփայ մատենագիրների զանազան գրուածների մէջ: Վիպասանութիւնք և պատմութիւնք:— Նկարագիրք և կացութիւնք ընտանեկան կեանքի: Եւրոպական դպրութիւնք. Ռուս, գերմանական, ֆրանսիական և անգլիական մատենագրութիւնք հայերէն թարգմանութեամբ: Քրիտիկական ճառեր:— Նամակագրութիւնք:

Հրատարակողին խոստացած են իւրեանց գրաւոր աշխատակցութիւնը ազնիւ Պարոններ. Գէորգ Քանանեանց, տեսուչ Լազարեանց ձեմարանի արևելեան լեզուաց, կարապետ Եղեան աւագ պաշտօնակալ ներքին գործոց նախարարութեան մէջ, Մսեր Գրի-

գորեան մագիստրոս և Սմբատ Շահազիզեան վարժապետ: Յոյս ունիմք գտանել մեզ աշխտակիցք և այլ քաղաքներում, որ արգէն խոստացել են մեզ իւրեանց հանդիսակցութիւնը օրագրի գործի մէջ:

Իրբըլ օրագրի լինելու է մեծ, փառաւոր ութածալ. իսկ բովանդակութիւնը չորս թերթ ամսամէջ. տարեկան 12 տետրակների գինը—8 մանէթ հանգերձ ճանապարհի ծախքով, իսկ Մոսկուայում 7 մանէթ: Եթէ օրագրի ստացողների թիւը 300-ից անց կենայ և հասանէ 400-ին, հրատարակողը կը տայ ազգին 5 թերթ ամսէ ամիս: Եթէ Աստուած պարգևէ, որ մեր սիրելի հայ հասարակութիւնը մի փոքր արթնացած ու զգաստացած, աւելի մեծ թուով ընկերագիր գտանուի մեր հրատարակութեանը, այնուհետև թերթերի քանակութիւնը կ'աճէ մինչև 6 թիւը:

Գործակալք «Լապտերին Հայաստանի» զանազան քաղաքներում կը կարգուին իւր ժամանակին: Ընկերագիր լինել կամեցողքը կարող էին նոյնպէս 10, 20 մարդ միաբանուիլ, կամ թէ առանձին առանձին յուղարկել իւրեանց պահանջողութիւնը արծաթի և հասցէի հետ միասին, այսպէս ուղղելով նամակը և այլն...

Ս. ՆԱԶԱՐԵԱՆՅ:



* * *

Արհողդ ըզլոյս իբր օթոց,
 Արոյ աթոռ քերովեհք,
 Ա՛ւր քո շանթիք հուր և բոց,
 Աւր թուխ զոտիւքդ ամպ և մեգ:

Ահա՛ խուժան վատշըւէր
 Լուտանս զհետ արձակէ.
 Կաս գոռոզաց աննըւէր
 Խոժոռ ընդ իս ակնարկէ.

Զի ես ըզքեզ այն Աստուած

Ի խանձարրիդ դաւանեմ,

Ար ի Գորէք որոտաց,

Պընդեաց զալիս քան ըզվէմ,

Ար ըզՍողոմ և զԳոմոր
 Լափէզ կբարձ յաշխարհէ,
 Ի աստեղց շաւիղ անխոտոր
 Յանհուն երկինս յարդարէ:

Արի՛, Տէ՛ր, ե՛լ ի մերոյդ,

Բազմեաց ի զահ վեհափառ.

Եւ վրէժինդիր ի զայրոյթ

Զայս արձակեա՛ դու բարբառ.

«Տեսցես, տեսցես, ո՛վ անմիտ,
 Զարդարութեան իմ հանդէս,
 Ար ոչ առեր ցարդ ի միտ
 Ըզլափ սիրոյս իմ առ քեզ»:

ԳԱԲՐԻԷԼ ԵՊ. ԱՅՎԱԶԵԱՆ:



ՅՈՒՅԱԿ ԱՏԱՅԵԱԼ ԱՂԽԻՑ ՏԱՆ ԻՄՈՅ Ի ԾԱՅՐԱԳՈՅՆ ԿԱՌԱՂԱՐՉԷ
ԱԹՈՌՈՅՍ. Ի 1833 ԱՄԻ 1):

Երբ որ ինձ վարժապետ դրին
Արարատեան ձեմարանին
Տուին օժախիս թախումը
Բոլորն էլ նորածև իքմին.
Վարժապետիս յաջողութեան
Միրասուն մանկունք Թորգոմայ
Ասացէք միաբերան
Տուողի տունը շէն կենայ:

Դոանս վրա փակ չկէր.
Զրգէն էլ իսպառ կոտրած էր.
Տասն օրէն յետ դժիլ տուին.
Զրգէն էլ Աստուծոյ թողին:
Երեք գազ օժախիս կէսը
Ծածկում այ փնթի խսիրը.
Իսկ միւս կէսն գազուկէս
Մտեւորտի հին կարպետը:

Տուին ինձ մին երայ խալի
Էնքան հին էնքան աղտեղի
Որ քիցը բիր մեռելի
Տակ ընկած զնա կարծեցի,
Որ չէ թէ անտաշ էր և հին
Այլ և ծուռ մանգաղի նման.
Հէնց երեկ եկաւ իմ օտէն
Մեծ Աբրահամ վարդապետը
Թաշրեֆ բերելով Զուղայէն
Էջմիածնայ սուրբ Ամոռը:

Սա երբ էս ծուռ խալին տեսաւ,
Խելքը զլիսից, թէ կար, կորաւ.
«Վր՛ւյ լալման, ասաց, վարժապետ,

Մոնթիդ խտուր խաղաս ըման».
«Ձէ՛ վարդապետ, ասացի ես,
Ի՞նչ սապապով ես դու կարծում,
Որ ես մոնթիս խտուր խաղամ,
Երբ դու տեղս մոնթ չես տեսնում»:
«Բ՛ա խի՛ աս ծուլ խալիչան».
Ձեռքն առաւ, որ դրստի,
Երբ չկարաց, դարձեալ ասաց,
«Վր՛ւյ լալման, էս ծուռն այ գործած»:

Մին կառավար բարձր ոտքով,
Տոր վեր կելնի նարտիվանով,
Այլ սորա ես թարն տեսայ
Խառատի մուննաթ քաշելով.
Կառավարիս բարձր ոտքը
Բաց ա թողնում էս անտէրը.
Խալիչիս զեօրայ ոտներս
Մեկնելը ըստեղ սովորեցի:

Թող էս մնայ, դեռ բան շատ կայ,
Ինձ մին երայ կիւկում տուին,
Որ թէ տասը թայ իլղուն զնայ
Տաք ջուր չի հասցնիլ չային:

Երեք ջուխտ չանկալ դանակ,
Մմէն մինն մին մին բարակ,
Որ իրանց օգկեայ ձեւերով
Ըլնում են իմ տան զարդարանք.
Թէ օխտը Բուրդ, օխտը Եզըղի
Մին բրդած մածնում ժողովին
Մմէնն իր պոչիկ գտալը
Էսքան զանազան չի տեսնի:

1) Տպագրում ենք առանց որ և է փոփոխութեան: Մ. Բ.

Տասն և հինգ օրէն ևտրը
 Ինձ նոր ուտելիք ղրկեցին.
 Լիտր ու կէս բակլայ ղրկեցին,
 Բակլայ չէր բալայ էր զլիսին,
 Որ ոչ տաք ջրով ոչ սառնով
 Կրթըջէր կ'եփէր գարշելին.
 Կէս լիտր բրինձ տուին
 Զիբել էր սորա կէս փայլն:

Տուին մին իբրուդ, մի լակեան.
 Մինն էր ծակ, մինն ժանկոտ,
 Այս աղտեղիքս երբ տեսայ ես,
 Համարիք թէ զահլէս զնաց:
 Անդ լառացին զիշերում
 Երբ նրանք եկան իմ տունն,
 Եղբ մեձ Քաղկեդոնին
 Տեսայ իմ երազումն.

Որդի ասաց մի լուացուիք
 Էղ ժակոտած լակեանումն
 Դրանք իմն են և շատ իստակ
 Երբ ես ի իմ լԱճոռումս.
 Բայց երբ մեռայ ես,
 Էջմիածնայ միաբանքն լկեանք
 Անիծեցին ոչ զիս միայն և զիմ
 Այլ և բոլոր իմ կարասիքն:
 Յառաւօտուց երբ վարժնեցի,
 Կլէկչուն մին գիր գրեցի.
 «Ուստա՛յ աղայ քեզ մին լակեան
 Գրաբերովս ղրկեցի.
 Թէ կարաս ժանկն կլէկիր,
 Եւ անէձքի գիրն ջնջիր
 Մին ապասի քո կլէկին,
 Չորս ապասի ժամուց գտիր:
 Կլէկչին երբ տես լակեանը
 Եւ լսեց անէձքի բանը,
 Բարկանալով ինձ գիր գրեց

Դուրս տուեց եակաշի եամանը.
 «Տճ ես քու վարժապետի հէրը,
 Տճ քու կարգողի մեռելը,
 Թումբէ թում անեմ ամէնը
 Օրէսայ իմ փէշակիս խէրը,
 Որ սաբահից սվժայ չարած
 Անէձքը ղրկես իմ տունը.
 Քեօփայօղլի ես տէրտէր եմ
 Որ անէձքի գիրը ջնջեմ
 Էղ լակեանդ էլ կլէկել չեմ:

Երեք օր ծղան փէտ տուին
 Ներսիսը բերում էր տղէն
 Չորրորդումը դնչին տուին
 Առանց ցախ դուրս արին խեղձին.
 Թային արին պիղձ իլղունին
 Եւ նորա գարշելի հոտին,
 Որ ամէն օր գլխացաւից
 Թուա խեղձ Մեսրոպիս հողին:

Ծայրագոյն կառավարչից
 Խնդրեցի ծղան փէտ տայ ինձ.
 Կուզես ասեց մեր ցախանոցից
 Ուղարկեմ քեզ քսան բեռը.
 Ենորհակալ եմ, ասացի,
 Թէ միայն չորս բեռն ղրկես,
 Էս օր ահա մին ամիս այ
 Չորսից մէկն էլ չի տեսայ.
 Ումն ասում եմ, պատասխանեն.
 «Էղպէս կ'ըլնի, վանքի բան այ»:

Նախշուանայ կարանտինը
 Օժախիցս թամուզ տեսայ:
 Էսքան ներկայ գրեցի,
 Որքան մտքովս զօրեցի
 Թէ էլ բան կայ ուր մոռացայ,
 Էն էլ լետոյ լայս գիր անցցի:

Մ. ԹԱՂԻԱԴԵԱՆ:



ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻԻՆ

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի Գ Ի Ր Ս Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ա Ն

ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏԱՐՕՆԵՑԻՈՅ

ԱՍՈՂԻԿ ԿՈՉԵՑԵԼՈՅ.

ՎՍԵՄԱԿԱՆ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏ ԵՂԵԱՆՅ,

Տարւոյս փետրուարի 4-ին Հաճեցաք նուիրել ինձ օրինակ մի ի պատմութենէ Սահփանոսի Տարօնեցւոյ, Ասողիկ կոչեցելոյ, զոր յամին 1885 Հրատարակած է Թիֆլիսի Հայեր. գրքերի Հրատ. ընկերութիւն ի Պետրբուրգ՝ ծախուք բարեյիշատակ Յովսէփայ Իգմիրեանց: Ասողկայ երկրորդ Հրատարակութեանս—(առաջինն Հրատարակեալ է ի Պարիս յամին 1859 ջանիւ ՆաՀնազարեան Կարապետ վարդապետի)—յորդոր եւ պատճառ եղած է Ձեր Վսեմութիւնն, այլ եւ սատար, առաջնորդ ի ձեռն տալով Տ. Ստ. Մալխասեանցի զձեռագիրն գրեալ ի Տիգրանակերտ ի Թուին Ռձժէ (1668):

Ընդհանրապէս կը Համարուի թէ ձեռագրի մի պատուականութիւնն իւր գրչութեան Հնութենէն կը կախուի.— թէ երկաթագիր օրինակ մի նախամեծար է միշտ քան զնօտրագիր, եւ նոյն իսկ քան զբոլորգիր.— թէ բազմագոյն ձեռագրաց ընթերցուածն է ընտրեկագոյն քան զսակաւագունից: Ես չեմ կարծեր: Ձեռագրի մի արժէք տուողն ոչ

այնչափ իւր թուականին հնու-թիւնն է ըստ իս, ոչ այնչափ երկաթագիր կամ բոլորգիր գրչու-թիւնն, որչափ գաղափարողին հմուտ-թիւնն, հաւասարմութիւնն եւ մտնաւանդ ուշադրութիւնն, թէպէտ ձեռագիրն ըլլայ ժՁ դարու, թէպէտ ժԷ դարու: Յետին ժամանակաց ուշադիր մտադիր գաղափարողն աւելի մեծարոյ է յաչս իմ քան թէ ժԱ-երորդ կամ ժ-երորդ դարու անուշադիր գաղափարողն. եւ երբ հնագոյն չորս հինգ ձեռագիրք կը միաբանին այնպիսի քերականական սխալի վերայ, այնպիսի բառի վերայ, զոր մասնագիրն (օրինակ իմն Մ. Խորենացի) ըստ ինքեան չէր կրնար գրել՝ քննադատօրէն խորհելով, ես կը բաժնուիմ չորս հինգ հնագոյն ձեռագրերէն եւ կը հետեւիմ երկու երեք նորագունից՝ որոց ընթերցուածն համեմատ է մատենագրին գրութեանն, օճոյն, եւ դարուն յորում կը գրէր:

Արդ Ձեր Վսեմութեան Աստղիկն, թէպէտ եւ զրեալ յժԷ դարու, ընտիր ձեռագիր մ'է: Ապաքէն կան ի նմին մանր մանր թերութիւնք, — (ո՞ր ձեռագիրն բոլորովին ազատ է ի թերութեանց). — բայց այդոքիկ չեն նուազեցնելու գառաւելութիւն օրինակին, որոյ ընթերցուածոց ընտրութիւնն անկերեւ կը տեսնուի բազմաանելով յիւրաքանչիւր երեսի զտարբերութիւնս Կահնազարեան տպագրին:

Տ. Ստ. Մալխասեանց աւելի յարգի ընծայած է զնորատիպ Աստղիկն՝ ընդարձակ յառաջաքան զրեւով եւ խիտ առ խիտ ծանօթութեամբք լուսաբանելով եւ մեկնելով զքանս պատմագրին, ամենայն շնորհակալութեան արժանի է իւր աշխատութիւնն: Սակայն մեր Նախնեաց մատենաք առ հասարակ՝ որչափ ալ քննուին, որչափ ալ լուսաբանուին, տակաւին կան մնան բազում մթութիւնք, բազում խնդրականք, բազում ինչ արժանի ստուգելոյ եւ պարզելոյ: Ես զԿահնազարեան Աստղիկն հազիւ վեր ի վերոյ թղթատած էի ի վանս Ս. Ղազարու քսան տարի յառաջ. այժմ պարսպով ընթերցայ զնոր հրատարակութիւնն եւ

նշանակեցի ինչ ինչ իմ ՆԱԽՆԻՔ մատենիս համար, մասամբ ուղղութիւնս ընթերցուածոց, մասամբ պատմական, հաստատական եւ ստուգաբանական ծանօթութիւնս:

Վսեմական Տէրդ փափագեցաւ որ ի լոյս ընծայեմ զիմ տեղեկութիւնս. աւասիկ յօժարակամ կը հաղորդեմ Ձեզ զայնոսիկ, յուսալով որ հմուտք արժանի կը համարին լուծանել զիմ երկբայութիւնս՝ ուր ուրիք կարծեօք կը խօսիմ, լրացնել զիմ թերին՝ ուր ուրիք զագիտութիւն խաստովանած եմ պարզապէս, ուղղել նաեւ զայն մասունս՝ յորս հաստատութեամբ կը խօսիմ, բայց սխալելով յանգէտս եւ յանիմայս: Միայն հարկաւորեալ եմ ծանուցանել որ իմ գիտաւորութիւնս չէ ամբողջական եւ հիմնական ուսումնասիրութիւն մի հրատարակել Ասողկայ պատմութեան վերայ. օրինակ իմն յերես 141 Ասողիկ կը շփոթէ զՅուստինիանոս առաջին՝ որ զսուրբն Սոփիա նորոգեաց՝ ընդ Յուստինիանոս երկրորդի որ ապաւինեցաւ առ Խազրաց թագաւորն. չկամեցայ մտնել ի խորս այդպիսի խնդրոց, զի անդր քան զչափ կ'երկարէր առաջեկայս գրութիւն: Զբովանդակն կը պահեմ ՆԱԽՆԻՔ մատենիս:

ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻԻԶԱՆՏԱՅԻ:

Ստորհրդ՝ 10 նոյեմբեր 1888.



(Ի դիւրութիւն ընթերցողաց դնեմ նախ զյայտարարութիւն մատենից՝ զորս ի վկայութիւն կը կոչեմ ի գրութեանս ի մերայնոց եւ յօտարաց, զանց առնելով զայնոսիկ ի հայերէն գրեանց՝ որ միանգամ տպեալ են եւ քաջածանօթ ամենեցուն, որպիսի են Չամչեան եւ Ինճիճեան Մխիթարեան բազմադիւն Հարց երկասիրութիւնքն.

- Առաքել Թաւրիժեցի, Պատմութիւն. տպ. Էջմիածնի, 1884.
 Աստուածաշունչ գիրք. տպ. Ս. Ղազարու, 1860.
 Դաւիթ Անյաղթ. Մատենագրութիւնք. տպ. Ս. Ղազարու, 1833.
 Եւսերիոս Կեսարացի, Քրոնիկոն. տպ. Ս. Ղազարու, միահատոր, 1818.
 Զաքարիա Սարկաւազ, Պատմութիւն. տպ. Էջմիածնի, 1870.
 Թովմա Արծրունի, Պատմութիւն, տպ. Կ. Պոլսի, 1852. — տպ. [Գ. Պատկանեան] Պետրբուրգի, 1887.
 Հաբուրնեայ, Թուղթ Աբգարու. տպ. Ղազարու, 1868.
 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն. տպ. Ս. Ղազարու, 1865.
 Ղեւոնդ երէց, Պատմութիւն. տպ. [Կ. Եղեանց] Պետրբուրգի, 1887.
 Մատթէոս Ուռայեցի, Ժամանակագրութիւն. տպ. Երուսաղեմի, 1869.
 Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն. տպ. Երուսաղեմի, 1871.
 Մխիթար Անեցի, Պատմութիւն. տպ. [Բ. Պատկանեան] Պետրբուրգի, 1879.
 Մովսէս Խորենացի, Պատմութիւն. տպ. Ս. Ղազարու, 1865, 1887. — Աշխարհագրութիւն. տպ. Ս. Ղազարու, 1881.
 Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն. տպ. [Շահնազարեան] Պարիսի, 1860.
 Յակոբ Կարինեանց, Բաղդատութիւն Պատմութեան Մ. Խորենացւոյ տպագրելոյն ի վենետիկ ընդ երկուց Ձեռագրաց. տպ. Տըփղեաց, 1858.
 Յոհան Կաթողիկոս Գրասխանակերտեցի, Պատմութիւն. տպ. [Ս. Էմին] Մոսկուայի, 1853.
 Ուխտանէս, Պատմութիւն. տպ. Էջմիածնի, 1871.
 Պատմութիւն Վահանայ Գողթնացւոյ, գրեալ յամին 745. Սոփերք Հայկականք, Հ. ԺԳ. տպ. Ս. Ղազարու, 1854.

- Սերէոս, Պատմութիւն. տպ. Կ. Պոլսի, 1851. — տպ. [Բ. Պատմ. կանեան] Պետերբուրգի: 1879.
- Ստեփանոս Ուոպելեան, Պատմ. տպ. [Մ. Էմին] Մոսկուայի, 1861.
- Վարդան Արեւելցի, Պատմութիւն. տպ. Ս. Ղազարու, 1862.
- Math. Christophe, Dictionnaire pour servir à l'intelligence des Auteurs classiques grecs et latins, 2 vol., Paris, 1805.*
- Dezobry et Bachelet, Dictionnaire général de Biographie et d'Histoire, 2 vol., Paris, 1857.*
- Édouard Dulaurier, Chronique de Matthieu d'Édesse, Paris, 1858.*
- Victor Langlois, Collection des Historiens anciens et modernes de l'Arménie, 2 vol., Paris, 1867, 1869.*
- Lebeau, Histoire du Bas-Empire, édition de J. Saint-Martin et de Brosset Jeune, 21 vol., Paris, 1824—36.*
- F. Lenormant et E. Babelon, Histoire ancienne de l'Orient, 6 vol., Paris, 1881—88.*
- E. Littré, Dictionnaire de la Langue française, 4 vol., Paris, 1876.*
- J. Saint-Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, 2 vol., Paris, 1818, 1819.*
- Payne Smith, Thesaurus Syriacus. Okford, 1868—1886. Այս ամենապատուական Ատրերէն — լատիներէն Բառարանին 7 Պրակքն (գղ. Fascicule) միայն հրատարակեալ են ցարդ. կը մնան հրատարակելի այլ եւս 3 Պրակք):*

1. «Բանդի յիշատակեն Գիրք ի սկզբան թագաւորութեանն Սաւուղայ զերից որդւոցն, զՅովնաթամ եւ շեառէ (կամ ըստ ձեռագրին շիառէ) եւ զՄելքիսաւէ». երես 11:

Յերես 299, ի 16-դ ծանօթութեան, ի մէջ կը քերտէ Ե. Գիւլոսիէի զխոտորութիւնն, թէ «Անուն երկրորդ որդւոցն Սաւուղայ Ամինադար կոչի ի ս. Գիրք (Ա. Թագ. գլ. լա. 2), եւ ոչ Եառ, որպէս ընթեռնումք առ Ասողկան, առանց գիտելոյ զընդէրն եւ զընարդն»:

Ասողիկ Սաւուղայ թագաւորութեան սկզբանն վերայ կը խօսի, եւ կ'անհարկէ Ա. Թագաւորութեան ժողովոյն 49 տան, ուր գրեալ է. «Եւ էին որդիք Սաւուղայ Յովնաթան եւ Յեառէ եւ Մելքիսաւէ»: Եառէ կամ Իառէ (եւ

Թերևս ուղղագոյն Եսսէ, Իսսէ) Ասողկան նոյն է ընդ Յէսսսի:

ՅԱստուածաշունչ զիրս կը կարգանք Յէսսսի. այլ զի յոյնն կ'ըսէ Իէսսսի, եւ վուլգատայն ս. Լերոնիմեայ *Jessui*, կը համարիմ թէ եւ ի հայ թարգմանութեանն գրեալ է Յէսսսի, որ վրիպակ ընթերցմամբ փոխեալ է ի Յէսսսի: Ի եւ Ր նշանագիրք բազում ուրիք այլ ընդ այլոյ ընթերցեալք են ի զիրս Նախնեաց:

2. «Առ որով Մատաթիա՝ քահանայ Երուսաղեմացոց, Աճոփայ որդի». երես 15:

Ի նմանութենէ Մ եւ Ս նշանագրաց յերկաթագիր գրչութեան՝ վրիպած է յաչաց զաղափարողին Ա. սկզբնական վանին, որով Ասածոփայ կը ճատեալ է յ'Աճոփայ. իսկ յերես 17 ուղիղ գրի. «Առ այսու Անտիոքաւ՝ Մատաթիա, ուստր Ասածոփայ, նախանձ վանն հայրենի կրօնիցն առեալ՝ լինէր զօրավար ժողովրդեանն»:

3. «Արսէս՝ Ովբայ ամն չորս». երես 16.—Արսէս՝ Ովբոսայ ամն չորս». երես 28:

Զեռագիրն կը գրէ յառաջին անգամուս «Արսոս Եքոս» (որ ուղղելի է «Արսես Ոքոս»), եւ յերկրորդին «Արչէզ Ովբոսայ»: Արսէս կամ Արչէզ (*Arsès*) է անուն որդւոցն եւ յաջորդին Արտաշէս Գ Ովբոսայ, ինչպէս կը գրէ միշտ նաեւ Եւսեբիոս ի Քրոնիկոնին. («Արսէս» Մանն Ա. երես 50, 93. «Արսէս Ովբայ» եր. 106, 113. եւ Մանն Գ, եր. 19, 126): Նոյնպէս ի Վարդան Արեւելցի, երես 27, «Արսաշէս Ռոսս ամն չորս», ուղղելի է «Արչէս Ռոսսայ ամն չորս»: Իսկ Միխայէլ Ասորի յերես 71 զյաջորդ Արտաշէս Գ. Ովբոսայ կը կոչէ Արսէսի:

4. «Դարեհ Արսայ ամն վեց». երես 16.—Դարեհ Արչէսայ ամն վեց». երես 28:

Այս Դարեհ է Դարեհ Գ. Կողոմանն, զերջին թագաւորն Աքեմենեան հարստութեան Պարսից, զորոյ բանակն խորտակեց

Աղէքսանդր Մակեդոնացի ի դաշտին Գաւգամելայ (Gaugamèle) յամին 331 նախ քան զՔրիստոս: Սա, որ էր Թոնորդի¹⁾ Դարեհ Բ-ի Հարձորդոյ կամ Նոթոսի, յաջորդեց Արշէսի, որդոյն Արտաշէս Գ-ի Ուլքոսայ. իւր հայրն կը կոչուէր Արսան²⁾, եւ մայրն Սիսիգամբիս³⁾: Ասողիկ երբ առաջին անգամ կը գրէ «Դարեհ Արտաշէս ամս վեց», կը հետեւի Եւսերեայ («Դարեհ Արտաշէս ամս վեց». Քրոն. Մասն Բ. երես 19), եւ ըսել կ'ուզէ անշուշտ «Դարեհ որ էր որդի Արսանայ» (Arsane). Իսկ երկրորդ անգամ գրելով «Դարեհ Արշէսեայ ամս վեց», կ'երեւի թէ ըսել կ'ուզէ «Դարեհ որ էր յաջորդ Արշէսի»: Ուխտանէս յառաջին հատուածին, յերես 34, կը գրէ. «Դարեհ Արտաշէսեայ ամս վեց», փոխանակ գրելոյ Արտաշէսայ. (այս շփոթութիւն յառաջ եկած է Մ, Ս, Տ նշանազրաց նմանութենէն): Իսկ Միխայէլ ասորի կը գրէ յերես 71. «Դարեհ որդի Արտաշէսի», զոր չկարեմ մեկնել:

5. «Յովդայէ որդի Յասերայ. Յովհաննէս որդի Յովհայ: Յեյոս որդի Յովհաննու». երես 19:

Ինձ թուի ընթեանի. «Յովհաննէս որդի Յովհայեայ: Յովդոս որդի Յովհաննու»: Յոյոս լաւ եւս գրի Յասերոս առ Եւսերեայ, Քրոն. Մասն Բ, երես 120. «Եւ փոխանակ զՅովդայէ Յովհաննէս որդի իւր եւ Յասերոս լեալ առ Աղէքսանդր Մակեդոնացով»:

6. «Աղէքսանդրոս Մարեայ ամս չորեքտասան». երես 23:

Ուղղելի է Մաճեայ ըստ Եւսերեայ, Քրոն. Մասն Բ. երես 164. «Աղէքսանդրոս, Մաճեայ որդի, ամս երեքտասան»:

1) «Darius III Codoman, arrière-petit-fils de Darius II Nothus» F. Lenormant et E. Babelon, *Hist. anc. de l'Orient*. Հատոր 2, երես 56:

2) «Darius III, surnommé Codoman, dernier roi de Perse, était fils d'Arsane et de Sisigambis, et descendait de Darius Nothus. Math. Christophe, *Dictionnaire* եւ այլն. Հ. Ա, երես 283 ա.

3) Ըստ Սուտ-կալլիսթենեայ (Պատմութիւն Աղէքսանդրի) Դարեհ Գ-ի մայրն կը կոչուէր Հոդոգունէ:

Յուլիա Մամէ (Julia Mammea) էր մայր Ալեքսանդրոս Սեւերոս կայսեր:

7. «Եւ զգեցուցանողս զՅէրէ» ի զաւակէ Քանանացոց» . երես 33:

Ասողիկ կ'առնու զայս ի Մ. Խորենացոյ, Բ. Է. «Եւ զգեցուցանողս իւր (կարգէ Վաղարշակ) զՅէրէ» ի զաւակաց Քանանացոց» . (տպ. Ս. Ղազարու, 1865): Բայց վերջին տպագիրն ս. Ղազարու (1881) իբր յատուկ անուն կը գրէ զՅէրէ» յերես 167, ինչպէս արդէն Լ. Ղուկաս Խնձիճեան իմացած է յ'Բ հատորի Լնախօսութեանն («Ձէրէ» է անուն մարդոյ» . երես 159, ծան. 1), որում հետեւած է նաև իտալերէն թարգմանութիւնն Խորենացոյ (տպ. Ս. Ղազարու, 1841), որ յերես 107 կը գրէ Zerès.

Ի Նախնեաց կարծեմ միայն Ստեփանոս Ուռպելեան որոշակի յատուկ անուն մարդոյ իմացած է զՁեռէս. «Եւ ապա կարգէ ընդ սմա զՁէրէ» (Մ, Էմին կը գրէ զՅէրէ») ի զաւակէ Քանանացոց, ի ցեղէն Գնթունեաց, զգեցուցանողս ինքեան, եւ գնէ ի վերայ արքունի հանդերձիցն», երես 9: Եթէ ամենայն զըչազիրք Խորենացոյ բազմաբար կը գրեն «զգեցուցանողս», կրնայ կարծուիլ թէ Ձեռէք (յորձնակի հայցական զՁեռէս) է անուն ազգատոհմի, եւ ոչ միոյ մարդոյ:

8. Մասն մի ի նոցանէ (Եւրիացոց) յաջակողմն Պոնտոս ծովուն տարեալ բնակեցուցանէր (Նաբուգոդոնոսոր): Եւ է վերջոյն անցեալ յեղբոս երբք յարե՛ճո՛րս: Եւ ի հովտին մեծի Բասենոյ կարգէ (Վաղարշակ) նախարարութիւն զՈրդունին անուանեալ, որ ի զաւակացն Զայկայ» . երես 35. (Եւ 47-դ ծան. յերես 326—327):

Զայս եւս ի Մ. Խորենացոյ առած է Ասողիկ, եւ ինքն Խորենացի կ'առնու ինչ ինչ ի բանից Աբիւղենեայ, զորս ի մէջ կը բերէ Եւսեբիոս ի Քրոնիկոնին, Մասն Ա, երես 29: Խորենացի կ'ըսէ. «Եւ զմասն մի ի նոցանէ (ի Վերիա-

յւոց) յաջակողմն¹⁾ Պոնդոս ծովու յարեւմտաւ սարեալ
 բնակեցուցանէր (Նաբուզոզոնոսոր). իսկ ի հովտին մեծի
 Բասենոյ կարգէ (Վաղարշակ) նահապետութիւն զՈրդունին
 անուանեալ որ ի զաւակացն Հայկայ. (բ. ր.) Այսպէս Ս.
 Ղազարու կրկին տպագիրքն (1865 եւ 1881), որ թերի
 գրչազրաց հետեւած են՝ Սրբեղնոս կ'ըսէ պարզապէս.
 «Եւ զմասն մի ի նոցանէն յաջակողմն (տպ. յառաջակողմն)
 Պոնտոս ծովու տարեալ բնակեցուցանէր: Ծշղիւ ըստ
 այսմ եւ մի օրինակ Խորենացւոյ, (տես Յակոբ Կարինեանց,
 Բաղդասարոս-Միւսն եւ այլն, էրես 64), ուր չից յարեւմտաւ
 բառն: Խորենացւոյ վերոյեկեալ հատուածն լրանալի է
 հետեւեալ օրինակաւ, ըստ տպագրին Վիստոնեան կղբարց
 (Լոնդոն, 1736), ըստ Ուխտանիսի, եւ ըստ Ասողկայ.
 «Եւ զմասն մի ի նոցանէ յաջակողմ Պոնտոս ծովու տարեալ բն-
 կեցուցանէր: Եւ է վերին այն յեղբ երբեք յարեւմտաւ. իսկ ի հովտին
 մեծի Բասենոյ կարգէ» եւ այլն. տպ. Վիստոնեանց, էրես 95.—
 «Եւ զմասն մի ի նոցանէ յաջակողմն Պոնդոս ծովու տարեալ
 բնակեցուցանէր, ասէ Պատմագիրն: Եւ է վերին այն յեղբ երբեք
 յարեւմտաւ». Ուխտանէս, Հատուած Բ. էրես 34—35.— որով եւ
 Ասողկայ բանն «Եւ է վերին այն անդեալ յեղբս երբեք յարեւմտաւ», կ'ուզ-
 ղուի «Եւ է վերին այն յեղբս երբեք յարեւմտաւ»:

Աւասիկ այս վից բառերն Եւ է վերին այն յեղբ երբեք
 կը պակասեն ի տպագրութիւնս ս. Ղազարու, եւ եօթնե-
 րորդն յարեւմտաւ խախտեալ յիւր տեղւոյն՝ կը ֆիայ կղզե-
 ացեալ եւ չհասկացուիր թէ ինչ ըսել ուզած է Խորե-
 նացի: Մեր Պատմահայրն յետ ի մէջ առնելոյ զբանս
 Արիւղնեայ թէ Նաբուզոզոնոսոր ընդ ձեռամբ նուաճեաց

¹⁾ «Յարեւմտեան Պոնտոս ծովու» գրեալ է յԵւսեբրիոս. այլ ու-
 ղիղ է խորենացւոյն յարեւմտեան, համեմատ յոյն բնագրին: Թուի ինձ
 թէ եւ ի գիրս Կիրողի Երուսաղեմացւոյ Կուլանի Բնագրութեան (տպ.
 Վիեննայ, 1832), ճառ ժՆ. էրես 334, Յարեւմտեան կուսէ անտի
 գտանիցիս Քրիստոսի, ուղղելի է Յարեւմտեան:

զ' իրէացիս եւ զԻվերիացիս (Սպանիոյ Հին անունն էր Iberia) եւ թէ զմասն մի Իվերիացեոց ածեալ բնակեցոյց յաջակողմն Պոնաոս ծովու, յորոց սերեցաւ ազգն Վրաց¹⁾, կը յաւելու յանձնէ իբր տեղեկութիւն թէ «Վերին այն (կամ Վերիայն, այսինքն Iberia, Սպանիա) է յեզր երկրի յարեւմուտա»։ Յայտնի է թէ Հիներն եղբ երկրի Համարէին զկողմանս Սպանիացեոց, ուր էին նաեւ արձանքն Հերակլի:

9. «Ըստ պարսկական լեզուին Դուին, որ թարգմանի Բլուր» . երես 67. (առեալ ի Մ. Խորենացոյ. Գ. Ը):

Ի Պատմութեան Ղեւոնդ Երիցու, յերես 175, յ' 8-դ ծանօթութեան, յառաջ կը բերուի Տ. Ք. Պատկանեանի դիտողութիւնն, թէ «Մ. Խորենացի եւ այլ պատմագիրք մեր ըստ նմանէ վկայեն, թէ Դուին ի Հին լեզու Պարսից նշանակէր Բլուր. սակայն չէք բառ այսպիսի ի լեզու Պարսից, ոչ ի Հուլմն եւ ոչ ի նորումս»։ Յառաջ քան զՏ. Պատկանեան՝ գաղղիացին Յ. Սէն-Մարտէն այսպէս զրաժ է զստուգարանութենէ Խորենացոյն յերես 119 Ա. Հատորոյ իւր Mémoires եւ այլն մատենին. «Այս քաղաքս (Դուին) կոչուեցաւ այսպէս, ըստ Մովսիսի Խորենացոյ, վասն զի բլրոյ վերայ էր դերքն. եւ Դուին, ըստ Մովսիսի Խորենացոյ, նշանակէ ի պարսիկ լեզու լեւանի, Էլուր: Այս ստուգարանութիւն որպիսի ինչ եւ իցէ, չէք բնաւ յարդի պարսկերէնի բառ՝ որ ձայնիւ կամ նշանակութեամբ մերձենայ յայն. թերեւս կարելի ըլլայ գտանել ի Հին պարսկերէնի»²⁾:

¹⁾ Հին մատենագիրք ոմանք, յորոց եւ Խորենացի, կարծած են թէ Վիրք սերեալ են յԻվերիացեոց, այսինքն ի Սպանիացեոց: Արդի գիտունք չեն ընդունիր զայս: Տես Վարդան Արեւելցի, երես, 31, ծան. 1, եւ Ա. Մ. Գարագաշ, Քննական Պատմութիւն Հայոց (տպ. կ. Պոլսի, 1880) երես 154, 251, 252:

²⁾ Կամ մանաւանդ ի Պահլավիկ լեզուի, ասելի էր: Իսկ Սէն-Մարտէնի բանքն այս են. «Cette ville fut ainsi appelée, selon Moysse de Khoren, à cause de sa situation sur une colline; et Tovin (գրելի

Յարդ եւ ինձ իսկ գլխովէն չեղել հոար գտանել Վրացի
 ի Պարսկերէն Բառարանի. այլ գտի Կեղտաց բարբառոյն
 մէջ Վրացի, որ է հայերէն Բլուր. յայտնի է թէ կեղտերէնն
 է յազգատահմէ Հնդկեւրոպական լեզուաց ընդ սանսկրիտ,
 հայ, յոյն, հռովմայեցի, սլաւական եւ գերմանական բարբառու:
 Իհարէ ի զազղերէն Բառարանին կը գրէ ի ստուգաբանութեան
*Dune բառի. «Latin dunum, en grec dounon. mots signifiant hauteur, et donnés comme celtiques par les auteurs anciens; ils existent encore dans le celtique moderne: kymri, irlandais et gaëlique dun, tertre; bas-breton tun, colline. «Նոյնպէս եւ ի Բառարանին
 Dexobry et Bachelet. «Dun, en celtique colline, d'où le français dune, et la terminaison latine dunum. Augustodunum, Autun; Dunkerque, église des dunes, etc».*

10. «Եւ ի խնդրոյ նախարարացն՝ ետ (Վրամ) նոցա կաթողիկոս
 շաքիւնոյ մին ասորի յակոբիկ չարագործ... Աքիւնոյ եւ Շմուէլ
 ոչ թուեցան (ի թիւ կաթողիկոսաց)» . Երես 76:

Յերես 33 , ի 66-դ ծանօթութեան, կը գրէ Է. Դիւլօրիէ,
 թէ «Չայրս զայս ասորի Մ. Խորենացի կոչէ Բեդէս» բայց
 ուղղագոյն եւս է ընթերցուածն Աքիւնոյ, որպէս ունի Առղիկ
 որ նշանակէ Մարտի 31-ը»:

Դիւլօրիէ կը սխալի: Այլ է ասորերէն Արդիշոյ (որ
 թարգմանի Մարտի 31-ը), եւ այլ Բրքիշոյ (որ թարգմանի
 Օրհնակ Յիսուս): Payne Smith յիւրում ասորերէն-ըստի-
 ներէն Բառարանին կը գրէ յԲ պրակին յէջն 611.
 «Բեդէս»¹⁾ (ասորի գրով), *Benedictus Jesus, nomen viri.*

էր Dovin), selon lui, signifie en persan, un monticule, une colline. Quoi qu'il en soit de cette étymologie, il n'existe pas, dans la langue actuelle de la Perse, un seul mot qui lui ressemble de son ou de signification; il serait peut-être possible de la retrouver dans l'ancien persan».

¹⁾ Եւրոպացիք զԱրդիշոյ կը գրեն Ebedjesu. իսկ զԲրքիշոյ Brichjesu. Ի Սեւան, Երես 159 բ, Բեդէ—յե— գրել է Բեդէ—յե— կամ լաւ եւս Բեդէ: Անդ, Երես 303 ա, Թորոս ուշա՞ս գրել է Թորոս Ռոմոյ, Touro Oukomo, որ նշանակէ յասորի լեզու Լեան Սեւա.

այսինքն «Բրեւեղ», Օրհնակ Յիսուս. անուն մարդոյ: Իսկ Յ. Սէն-Մարտէն կը թարգմանէ զբրեւեղ՝ «la bénédiction de Jésus», Օրհնութիւն Յիսուսի, (տես Labeau, Հ. 9. էրես 34), որում կը հետեւի եւ Վիկտոր Լանզլուս. (տես Collection եւ այլն, Հ. Բ, Lazare de Pharbe, էրես 272 բ, ծան. 2):

Ոչ միայն Խորենացի Բրեւղ կը կոչէ զեկամուտ կաթողիկոսդ, այլ եւ Ղազար Փարպեցի, Թովմա Արծրունի, Յոհան կաթողիկոս, Ներսէս Ենորհայի (ի Վիպասանութեանն), Վարդան Արեւելցի, եւ այլք: Իսկ Հ. Միքայէլ Զամէան (Պատմ. Հայոց, Հ: ա. էրես 516) խառն կը գրէ «Բրեւղ կամ Արգիշոյ», որպէս թէ երկանուն ըլլար Ասորիդ:

Զգիտեմ թէ Ասորիկ ինչպէս յարբէլի կ'անուանէ զԲրեւղոյ: Առ մեզ Յակոբիկք (ըստ գաղղիացւոց Jacobites) կ'ըսուին հետեւողքն մոլարամիտ Յակոբ Ծանծալոսի, որ էր Ասորի աբեղայ եւ ընտրեցաւ յԵւտիքականաց եպիսկոպոս Եղեսիոյ յամին 541 եւ մեռաւ յամին 578: Բրեւղոյ, որ կ'ապրէր յառաջին կէս հինգերորդ դարուն, չէր կրնար յակոբիկ

(տես Payne Smith, Պրակ Ա. էջ 182, ի բռնն Oukomo). Իսկ Յ. Սէն-Մարտէն իւր Mémoires եւ այլն մատենին Ա. հատորոյն յերես 18 կը կարդայ Toura oukama: — Դարձեալ ի Լաբուրենայ թղթին Աբգարու, յերես 1, յ' 2-դ ծանոթութեան, գրեալ է թէ «Ասորիք փոխանակ Արշամայ՝ Ուշամ կամ Ուտամ ասեն, եւ իմանան Սեւ»: Զնջելի են բռնքն «Ուշամ կամ»: Ասորիք զԱբգար՝ առաջին քրիստոնեայ թագաւոր Ուոհայի՝ կը կոչեն Աբգոր Ուտոն, Abgor Oukomo, որ թարգմանի Աբգար Սեաւ. այսպէս անուանած են զնա, ոչ վասն զի բորոտութեամբ սեւացեալ էր մորթն Աբգարու, ինչպէս կարծած է Միքայելիս (Michaelis) արեւելագետն, այդ ընդդիմասութեամբ (par antiphrase), վասն զի բորոտութեամբ սպիտակացեալ էր մարմինն. (տես Payne Smith, Պրակ Ա. էջ 182, ի բռնն Oukomo): — Բրեւեղ եւ Ուտոն, ասորերէն Կոփ (koph) նշանագրաւ կը գրուեն, եւ ոչ շին:

ըլլալ մինչդեռ չկայր աղանդ յակորեկաց: Յակոբի բառի առաջին գործածութիւնն ի գիրս մեր՝ Տանթթէ է ինչ յութիւրդ դարէ, ի գրութեանց Խոսրովկայ, եւ ի Պատմութենէն Վահանայ Գողթնացւոյ, երես 44 եւ 52:—Սմբատ Պատմիչ յերես 135 (տպ. Եահնազարեան) թուի Հանել զՅակորեկս ի սրբոյն Յակորայ Մծքնացւոյ, զոր եւ նոյն կը Համարի ընդ Յակորայ Ծանծալոսի:

11. «Առջեալն իմաստնական Հանձարով երանելի Հայրապետն ջովհան Մանդակունի, որ զկնի տեառն Գիւտի պաշտեաց զաթոռ Հայրապետութեանն ամն վեց: Նշխարք սորա [Հանգուցան] ի Շիրակ գաւառի, ի գիւղն՝ որ Բեռնաւես¹⁾ կոչի, յեկեղեցւոյն՝ որ Տեառնթագ ասեն: Յայսմ ժամանակի երանելին Տեառնթագ, որ էր ի գաւառէն Արշարունեաց ի կալոց (կամ ըստ ձեռագրին՝ կողոց) գեղջէ, վկայեալ վասն Քրիստոսի քաջութեամբ՝ կատարեցաւ ի Զառմիհրն Հաղարաւուխոց ի զօրավարէն Պարսից»։ Երես 80:

Այսպէս ունի Ասողկան Զեռագիրն: Բայց արդոյ Հրատարակին Տ. Ստ. Մայրասեանց զիտած է թէ շփոթութիւն կայ ի Զեռագրին, եւ գեղեցկապէս տեղափոխած է զհաստուածն «Նշխարք սորա... որ Տեառնթագ ասեն» կցելով զկնի բանից «ի զօրավարէն Պարսից: Նշխարք սորա (այսինքն Տեառնթագայ)... որ Տեառնթագ ասեն»։ որով Շիրակ գաւառի Բեռնաւես կամ Բեռնաւս գեղջ՝ Տեառնթագ կոչեցեալ եկեղեցւոյն մէջ զետեղեալ նշխարքն կ'ըլլան նորին ինքեան Տեառնթագ նահատակի, եւ ոչ թէ Յովհաննու

1) Թուի թէ ի ձեռագրին Մխիթարեանց Վենետոյ Բեռնաւս գրեալ է անուն գեղջս, եւ ոչ Բեռնաւես. «Իսկ յիշեալն յԱսողկայ Բեռնաւս գիւղ Շիրակայ, մարթի լինել Բեռնա գիւղ Վանանդայ»։ Հ. Ղ. Արշեան, Շիրակ, երես 172 Բ: Զամչեան (Հ. Բ. երես 218) կը գրէ Բեռնաւս. եւ Ինձիձեան (Ստորագր. Հին Հայաստանեայց, երես 429) Բեռնաւս:

Մանդակունւոյ¹⁾: Ճշդութիւն ուղղութեանն Տ. Մալխասեանցի յայտ է եւ անախ՝ որ Ասողիկ յերես 81 կը յիշէ զմահ Յովհաննու Մանդակունւոյն. «Եւ ինքն Հանդեաւ ի կամն Աստուծոյ». Հետեւաբար անտեղի կ'ըլլար յերես 80 խօսել զնշխարաց Մանդակունւոյն յառաջ քան զմահ նորին. Թող որ Տեառնթագ կոչեալ եկեղեցւոյ աւելի պատշաճապէս կը յարմարին Տեառնթագ մարտիրոսի նշխարքն, քան թէ Յ. Մանդակունւոյ:

Ասողկայ պատմութեան մէջ կան ամին նման եւ այլ աստանդական մանր Հատուածք, յորոց զերկուս տ. Ստ. Մալխասեանց տեղափոխած է Հետեւելով Եահնազարեան տպագրին. (տես յերես 95, ծան. 4.— յերես 177, ծան. 4): Թուի ինձ թէ Ասողիկ ի լուսանցս իւր պատմութեան բնագրին յաւելուածներ գրած է, եւ ոմանք ի զաղափարողաց չկարենալով ստոյգ իմանալ զտեղիս պատուաստման յաւելուածոցը՝ գրած են խառն ի խուռն ի կարգի պատմութեանն: Նշանակեմ եւ այլ չորս Հատուածս՝ որ տեղափոխելք են ըստ իս:

Ա. «Սա (Յովհան Մայրոզոմեցի) գրեաց երիս գիրս, եւ զանուն իւր ոչ վերագրեաց ի նոսա, վասն չնդունելոյ ժողովրդեանն.

¹⁾ Զամչեան (չ. Բ. երես 218) թուի թէ նկատած է զայս շփոթութիւն Ասողկայ ձեռագրին. բայց առ ի լուծանել զգժուարութիւնն՝ թէ՛ զՏեառնթագ եւ թէ՛ զՄանդակունի ի նմին Բեռնաւս գեղջ թաղեալ կը համարի, եւ կը գրէ. «Յովհան Մանդակունի... թաղեցաւ ի գիւղն Բեռնոս ի Շիրակ գաւառի, ուր թաղեալ էր սուրբ վկայն Քրիստոսի՝ Տեառն թագ»: Իսկ Ինձիձեան (Ստորագր. երես 429) ուղիղ իմացած է թէ տեղափոխելի է Հատուածն Ասողկայ, որ բնաւ չվերաբերիր Մանդակունւոյ, վասն զի կը գրէ. «Նշխարք սորա (ասէ Ասողիկ, այսինքն Տեառն թագայ, որ վմարտիրոսականն ընկալաւ պսակ յաւուրս Յովհաննու Մանդակունւոյ, է) ի Շիրակ գաւառի, ի գիւղն՝ որ Բեռնաւս կոչի, յեկեղեցւոյ՝ որ Տեառն թագ ասեն»:

անուն միոյն՝ խրատ վարուց. Ի Մբեն ղէկեղէցի « շնեաց. (Տ. Ստ. Մալխասեանց զայս հինգ բառս զուրս թողած է.) եւ անուն միւսոյն՝ Հաւատարմատ, եւ անուն միւսոյն՝ Նոյեմակ». երես 87:— Գիտենք ի Յովհան կաթողիկոսէ, երես 46, եւ ի Կիրակոսէ Կանձակեցւոյ, երես 30, եւ ի Վարդանայ Արեւելցւոյ, երես 62, թէ Մրենոյ եկեղեցւոյն շինողն է Կաւիթ Սահառունի ի սկիզբն եօթներորդ դարու. (տես եւ Նիքակ, երես 137: Ուստի վերոյիդեալ հինգ բառերն յ' 87 երեսէ փոխադրելի են յերեսն 86, այսպէս. Ի ինդրոց նախարարացն իշխան հաստատէ Հայոց Ղրաւիթ Սահառունի, որ կայաւ զհազարապետութիւն Հայոց ամս երեսուն հրամանաւ Որմզգի, որոցն խորովու Պարսից արքային: Ի Մբեն ղէկեղէցի « շնեաց»: Այսպէս խմացած է նաեւ Ինձիձեան (Ստորագր. երես 259):

Բ. «Յաւուրս սորա (Յովհաննու կաթողիկոսի Պատմագրին) երեւեցաւ Սմբատ՝ Թոնդրակաց առաջինն՝ ի Զարեհաւան գեղջէ, ի Մաղկոտն գաւառէ, հակառակ ամենայն քրիստոնէական կարգաց: Սա կալու զՍտրանն Տալկաց, եւ շահ էր արանել իբրեւ արջիման ամենայն Տաճկաց: Սա կալու էսա զՆախարարն Ափխազաց, եւ Տարբիանն իսպառաց զայն, ժամն զի գողտ էին, եւ անտանեցաւ (լաւ եւս անտանեցան) Ափխազ». երես 160—161. (Ստ. Մալխասեանց զամբողջ նօտարգիր հաստուածդ զուրս թողած է):— Անշուշա ձերբակալողն զՍուլտանն Տաճկաց եւ զԹաղաւորն Ափխազաց՝ ոչ է Սմբատ Թոնդրակեցի աղանդապետն: Զգիտեմ թէ ով է այդ Սուլտանդ¹⁾ Տաճկաց ի ժամանակս Յովհաննու Կրասխանակերտեցւոյ: Այնպէս կ'երեւի Ափխազ բառի տրուած (անհիմն) ստուգաբանութենէն՝ թէ Ատողկայ խօսքն մեր Բազրատունի Թաղաւորաց միոյն համար է. խուզեցի ի պատմութեան հ. Միքայիլի Զամչեան, բայց ոչ ինչ գտի:

¹⁾ Վարդան Արեւելցի Ստրանն կը կոչէ զամիրապետն Ոմար Բ. (717—720) որ էր յաւուրս Յովհաննու կաթողիկոսի Օձնեցւոյ. «Որք եւ գնացեալ առ աշխարհակալ «Ստրանն» Օմար, գովէին առ նա զայրն փառաւոր (զՅոհ. Օձնեցի)... սպա սրտապնդեալ զինքն «Ստրանն» բանայր զերեսն իւր», տես Արարար ամսագիր Էջմիածնի, 1888, երես 584, 585:

Գ. «Էր շինեալ թագաւորին (Աբասայ) զկաթուղիկէն սուրբ ի քաղաքին կարուց... երկնանման խորան: Սա շինէ է գփոքր կաթուղիկէն Անուց է գտարքն Գրեթոր է Քաղաքոյրաշին» . երես 172. (Ստ. Մալխասեանց նոյնպէս եւ զայս նօտրագիր բառս դուրս թողած է): — Ասողիկ յերես 88—89 կը գրէ թէ Ներսէս Գ կաթողիկոսն Տայեցի շինեաց «զհրաշապածառ եկեղեցին զսուրբ Գրիգոր ի Վաղարշապատու առապարին» . եւ յերես 282 թէ Գագիկ Ա. յամի Տեանն 1000 շինեաց յԱնի քաղաքի զեկեղեցիսրբոյն Գրիգորի՝ նոյնաձեւ չափով եւ յօրինուածով՝ որով կառուցեալ էր (ի ձեռն Ներսեսի Գ-ի Տայեցոյ)» մեծաշէն եկեղեցին՝ որ է Քաղաքուգաշախ՝ անուամբ սրբոյն Գրիգորի: Զգիտեմ որն համար է յերես 172 Ասողիկն ըսելն թէ «Սա շինէ... եւ զսուրբն Գրիգոր ի Քաղաքոյրաշախին» . (Քաղաքոյրաշախ կամ Քաղաքուգաշա է Վաղարշապատ, կամ «չըջակայ ոլորտ Վաղարշապատ քաղաքի» . տես Իսախանն, Ստորագր. երես 471—472): Նոյնպէս չգիտեմ թէ զինչ է «Փոքր կաթողիկէն Անուց»: Հ. Ա. Ալիշան վարդապետն կը նկարագրէ «Անուց կաթողիկէն յերես 64-73 Նիրակայ տեղագրութեանն. այլ չգտի ի նմին զյիշատակութիւն Անուց Փոքր կաթողիկէն: Կրգրէ, եւ Մխիթար Անեցի յերես 9, թէ «Աշոտ Աղորմածն, որգի Աբասայ, թագաւորէ յԱնի ամս քսան եւ հինգ, եւ շինէ գփոքր քաղաքն»: Սրգեօք այս հատուած Անեցոյն ունի՞ աւրնչութիւն ընդ Ասողկայ հատուածին, ուր կը յիշէ փոքր կաթողիկէն Անուց եւ Քաղաքոյրաշախ ս. Գրիգոր եկեղեցին:

Գ. «Եւ Գագիկայ յամենայն զօրացն Լայոց հատեալ զգունդ վեց հազար յընտիր ընտիր վառելոցն՝ գումարէ ի ձեռն իշխանաց իշխանին վահրամայ՝ որքուց Գրեթորոյ, է Սմբատայ Տաթիսարտախ՝ որքուց վահրամայ, է Տարգլանին Աշոտայ Սահառանուց, որ զՄարտաշէն շինեաց, որ զԲրթնեքն շինեաց» . երես 270. (Ստ. Մալխասեանց կ'ուզէ զՁեռագիրն հետեւեալ օրինակաւ. «... գումարէ ի ձեռն իշխանաց իշխանին վահրամայ, որքուց Գրեթորոյ Սահառանուց, որ զՄարտաշէն է Բրթնեքն (այս. զԲրթնեքն) շինեաց, է Սմբատայ Տաթիսարտախ, որքուց վահրամայ» .

բանայ, Է- Տարդդանին Աշոտայ) : — Հ. Ղ. Ալիշան կը յիշէ համարա-
նօտիւ զայս բանս Ասողկայ ի Երբակ, երես 111 ա եւ
երես 147 ա, եւ խառնակ կը համարի, վասն զի Մար-
մաշինու եւ Բրգնկրի (կամ Բագնայրի, Բգնայրի) շինու-
թիւնն վերադրեալ է մարզպանին Աշոտայ Պալհաւունուայ,
մինչդեռ «Մարմաշինու կանգնողն յայանի է՝ Վահրամն,
եւ Բգնայրի՝ ըստ այլ պատմչաց՝ Մագիստրոնն Սմբատ» :
Ես այսպէս կ'ուղղեմ զհատուածն Ասողկան... «գունարէ
ի ձեռն իշխանաց իշխանին Վահրամայ՝ որդոյ Գրիգորայ
Պալհաւունուայ, որ զՄարմաշին շինեաց, Է- Սճբարայ Տա-
ժիարտան՝ որդոյ Վահրամայ որ զԲրգնկրն շինեաց, Է-
Տարդդանին Աշոտայ» : Կանգնողն Մարմաշինու է իշխանաց
իշխանն Վահրամ՝ որդի Գրիգորի Պալհաւունուայ, զորոյ
տես զարձանագիրն ի Երբակ, երես 148. տես եւ Կիրակոս
Գանձակեցի, երես 50, եւ Վարդան Արեւելցի, երես 97 :
Իսկ կանգնողն Բրգնկրի է Սմբատ մաժիստրոս. «Շինեաց եւ
Սմբատ մագիստրոնն զփափագատեսս վանքն՝ որ Բագնայրն
կոչի». Կիրակոս Գանձակեցի, երես 50. — «Թուին ՆԾԹ՝¹⁾
(1010) Սմբատ մագիստրոնն զԲգնայր Դրւնայ (տպ. զբգնայր
Դրւնայ) շինեաց». Առաքել Թաւրիժեցի, երես 480 յորմէ
կ'առնու եւ Չամչեանն. «Սմբատ մագիստրոս Թոռնեցի շինէ
Բագնայր վանքն Դրւնայ». Հ. գ. ի ցանկին յատուկ
անուանց : (Չգիտեմ որով ապացուցիւ Չամչեաննոյնացուցած
է զՍմբատ մագիստրոս ընդ Սմբատայ իշխանին Թոռնե-
ցոյ, զոր չը յիշէ Մատթէոս Ուսհայեցի յերես 21 եւ 33) :

¹⁾ Սիւալ կը համարիմ զտպագրին ՆԶԹ (1040) : Ժամանակագիրն
Անեցի յամի 1009 կամ 1010 նշանակէ զշինութիւն վանիցն
(Բագնայրի). այլ այս համարելի է աւարտն. քանզի Ասողկի տանն
ամալ յառաջ նշոյնպէս գրէր. եւ զի չլաւելու գրուատ ինչ զշին-
ուածոյն՝ ի դէպ է առ իւրեւ անկատար համարել զնոյն». Հ. Ղ.
Ալիշան, Երբակ, երես 111 Բ :

12. «Գաւիթ աշակերտ Մովսիսի, ի Հարք գաւառէ, ի Հերեան գեղջէ». երես 80—81:

Յայսմ Հատուածի երկու բան կայ որ կը տարակուսեցնէ զիս: Նախ թէ ով է այս Գաւիթ՝ որ Մովսիսի (Խորենացւոյ) աշակերտն կը կոչուի: Երկրորդ՝ ուղե՞ղ է Հերեան անունն թէ պէտք է կարգալ Հերեան:

Եթէ Ասողկի կ'իմանայ զԳաւիթ Անյաղթ փիլիսոփայն, զմատենագիրն Սահմանայ Իմաստասիրութեան եւ զԹարգմանիչն Պորփիւրի եւ Արիստոտելի, սա չէր աշակերտ Խորենացւոյ, այլ աշակերտակից, յԵրկրորդ Թարգմանչաց դասէն, եւ թուի թէ զրած է զՍահմանսն նախ քան զԽորենացւոյ պատմութիւնն եւ զաշխարհագրութիւնն. վասն զի յետինս՝ ուրիշ ի պատմութեան իւրում եւ ուրիշ յաշխարհագրութեանն՝ երկու փոքրիկ պատասիկս փոխ կ'առնու ի Սահմանայն: Գաւիթ Անյաղթ յիւր մատենագրութիւնս Ներգինացի կը կոչուի երկիցս. «Գաւթի փիլիսոփայի Ներգինացոյ Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիւրի». երես 251.—«Թարգմանեալ եւ մեկնեալ ի Գաւթէ Ներգինացոյ (Ստորագրութիւնք Արիստոտելի)» երես 458: (Գարեգին Վ. Սրուանձտեանց «Ներգեվանցի շինական») կը կոչէ զԳաւիթ Անյաղթ, չգիտեմ ուստի՞ առեալ. տես Ընոյ է— Նորոյ, երես 32):

Ճառընտիրք սոյն Գաւթի Անյաղթ փիլիսոփայի կը վերադրեն եւ Ներբողեան մի ի սուրբ Խաչն աստուածընկալ որոյ սկիզբն է «Բարձրացուցէք զՏէր Սասուած մեր, մարգարէն ձայնէ», եւ զոր մեկնաբանած է Ներսէս ԵնորՀալի: Ի զլուս Ներբողենին կը կցեն նոյն Ճառընտիրք եւ Նախագրութիւն մի, յորում կ'ըսուի թէ «Գաւիթ փիլիսոփայ... (էր) ի Հարք գաւառէ ի Հերեան գեղջէ, աշակերտ Սահակայ եւ Մեսրոբայ, զոր ասկն քուերորդի Մովսիսի Քերթողհօրն»: Թէ որչափ վատահելի են Նախագրութեանդ առեած անգրեկութիւնքն, որ աղիտի գրուած կ'երևի, չկամիմ այժմ

քննելու եւ ոչ թէ Հարք գաւառի Հերեթ գիւղին մէջ ծնածն ինչպէս Ներգինացի կրնայ կոչուիլ: Հէրեան թէ Հէրեան, զայս պիտի քննեմ:

Ինձիճեան (Ստորագր. երես 120) կը գրէ՝ թէ «Ենորհայնն է մեկնութեան Բարձրացոցեւ ճառին՝ զգիւղն ուստի էր Գաւիթ՝ կոչէ Հէրե, զոր եւ եզիտ նշանակեալ ի Հին յիշատակարանս զրեալ ի ժամանակս Թարգմանչաց»: Զունեւրվ զձեռագիրս Ենորհալոյ մեկնութեան Բարձրացոցեաց Ներբողենին, չկարեմ ստուգել զբանս Ինձիճեանի. բայց կը տեսնեմ որ Հէրե եւ Հէրեի հազիւ կը տարբերին: Ուստի՞ է ապա ուրեմն Հէրեան. պարզապէս ի նմանութենէ ա եւ ք նշանագրաց ի գրչութիւնս ինչ. եթէ կարգանք Հէրեան, կը նոյնանան Հերե, Հերեի, Հերեք (զի ն սառն զիմօրոշ յօդ է): Ի ՆԱԽՆԻՔ մատենիս Երկարօրէն պիտի խօսիմ զչփութութեանց ա եւ ք նշանագրաց. սառ անցնիմ համառօտիւ: Ստողիկ կը գրէ յերես 107 «Կարբճ, Գարգմանայ իշխան». իսկ Յոհան կաթողիկոս, երես 71, «ղիշխանն Գարգմանայ Կարբճ», երկիցս. նոյնպէս եւ Վարդան Սրեւելցի կը գրէ Կարբճ: — Ստողիկ յերես 175 ունի անուն մի Կարբէրք, զոր Նահնապարեան կարգացած է Կարբէրք: Ինձիճեան եւս կը կարգայ Կարբէրք (Ստորագր. երես 59) եւ կը նոյնացնէ ընդ Խարբերդ. բայց ինձ սխալ թուի զի ըստ Ստողիկայ Կարբերդ (կամ Կարբերդ) էր գաւառ ի Լիկանդոն¹⁾ աշխարհին. իսկ Խարբերդ էր Բերք ի Հանձիթ գաւառի Զորբորդ Հայոց, ինչպէս կը կոչէ զայն Կեղրնոս, եւ ի մերօրս՝ Մատթէոս Ուռհայեցի յերես 443: (Նոյնպէս սխալ կը համարիմ եւ զգրել Չամչեանի, Հ. Բ. երես 824. «Խարբերդ գաւառ ի Լիկանդիոն աշխարհի»): —

¹⁾ Լիկանդոն էր յարեւելեան Հիւսիսային ծայր Կիլիկիոյ, սահմանակից Կապադովկիոյ եւ Կոմագենիոյ. տես վարդան Արեւելցի, երես 115, ծան. 3, եւ Սիւսան, երես 168 Բ:

ՅՈսկեբերանի Մատթէի մեկնութեանն, Հ. Գ. երես 46, գրեալ է. «Յաճուցանէ զնոսա անբնասաբար». իսկ Նոր Հայկազեանն Բառզիրքն կը կարգայ. «Յաճուցանել զնոսա կամեցաւ անբնասաբար»:— Ի Խորենացոյ աշխարհագրութեանն երես 37 կը գտնեմ Ռաշաֆնա քաղաք Միջագետաց, որ եւ ի գաղղիերէն թարգմանութեանն յերես 49 կը զրուի *Rhastina*, փոխանակ զրելոյ Ռաշաֆնա, *Resena*. (Սեբէոս կը գրէ Ռաշաֆնա, տպ. Կ. Պոլսի, երես 122, եւ տպ. Պետրոբուրգի, երես 77: Այս քաղաք ըստ արաբացոց կը կոչուի Բէէ—Ի—Ս, այսինքն գլուխ Աղբեր. տես Ինճիճեան, Նոր Հայաստան, երես 337):— Բայց աւասիկ ամենէն զարմանալին. Սէն-Մարաէն իւր *Mémoires* եւ այլն գրոց Բ. Հատորոյն 406-452 երեսներուն մէջ Հրատարակած է զաշխարհագրութիւն Վարդանայ վարդապետի Հանդերձ գաղղիական թարգմանութեամբ եւ ծանօթութեամբ. յերես 446 կը կարգամ. «անդ (այսինքն յերուսաղէմ) եւ բոլոր անօրէն—Բէ—նն Քրիստոսի կատարեցաւ. գաղղիերէն «*C'est aussi là que J. C. a détruit l'impieété.*» Քրիստոսի անօրէն—Բէ—նն փոխանակ անօրէն—Բէ—նն:

13. «Ի սորա (Մեծեժայ Գնունոյ) եօթներորդ ամին եկաց կաթողիկոս Հայոց տէր Ներսէս ի գաւառէն Բագրեւանդայ ի գեղջէն Աշտարակաց, ամս ինն: Սա ի չորրորդ ամի Հայրապետութեան իւրոյ եւ ի տասներորդ ամի իշխանութեան Մեծեժայ արար ժողով ի քաղաքին Դուին... եւ կարգեցին զԹուական Հայոց ի շրջապատներոցն Յուստիանոսի (իմն Յուստինիանոս Ա, *Justinien I-er*) կայսեր, որ զսուրբ Սոփիա շինեաց, եւ ի քսաներորդ չորրորդն խորովայ՝ որդոյ կաւատայ Պարսից արքայի». երես 82-83.— «Յուստիանոս (Յուստինիանոս Ա) ամս երեսուն եւ եօթն: Ի սորա շրջապատներոցն կարգեցաւ Թուական Հայոց ի Դունայ ժողովին». երես 141:

Նոյնպէս եւ Վարդան Արեւելցի կը գրէ յերես 57-58 թէ Թուականն Հայոց եղաւ ի շրջապատներոց ամի Յուստիանոս (Յուստինիանոս Ա.) կայսեր. «Զտէր Քրիստափոր

յաջորդէ աէր Աեւոնդ ամն երկու: Եւ ապա աէր Ներսէս (Բ. Աշտարակեցի) ամն ինն: ... Զինի Ներսիսի՛ աէր Յոհաննէս (Բ. Գաբեղենեցի) ամն Հնգեասանն (եօթնևտանն, ըստ Յոհաննու կաթողիկոսի պատմագրի, երես 38): Եւ յեա նորա աէր Մովսէս Եղեվարաց ամն երեսուն: Սա ի տասներորդ ամի Հայրապետութեանն իւրոյ, եւ յերեսներորդ առաջներորդ ամին Խոսրովու՝ որդւոյ Վաւառայ, եւ ի շրջեփառաներորդն Յուստիանոսի (Յուստինիանոսի Ա.-ոյ), որ զսուրբն Սոփի շինեաց, եղիւ Թուական Հայոց եւ սոմար): Ի Ճանօթութեան գրեալ է թէ «ոչ ի շրջեփառաներորդի, այլ ի Կասեբերդի շրջորդի ամին»: Ու զղաղոյն եւս է կարծեմ ասել յամին Կասեբերդի հինգերորդի Յուստինիանոսի առաջնոյ, որ է ամ Տեառն 552: Սոյն տարին եւ Խոսրովայ առաջնոյ Անուշըռուանի թագաւորութեանն Կասեբերդ առաջներորդն էր, ոչ Կասեբերդ շրջորդն ըստ Ասողկայ, եւ ոչ Երեսներորդ առաջներորդն ըստ Վարդանայ:

Բայց ո՞վ էր կաթողիկոս յամին 552 որ Հաստատեաց զՀայ թուականն: Տեսնեք որ Ասողիկ կը գնէ զՆերսէս Բ. Աշտարակեցի, եւ Վարդան զՄովսէս Բ. Եղեվարացեցի, որում կը միաբանին եւ բազմագոյնք ի պատմաց մերոց. (Յոհան Մամիկոնեան, 8, — Յոհան կաթողիկոս, 38, — Ուխտանէս, Հատուած Բ., 6, — Ստեփանոս Ոււպեղեան, 69, 332, Հանդերձ այլովք,) որք առ Հասարակ Մովսեսի Եղեվարդեցոյ կ'ընծայեն զղիւր Հայ տոմարին: Զամէան (Ն. Բ. երես 498, եւ 509-516) երկար բանիւք կը ձգտի ցուցանել թէ Հայոց Թուականն Հաստատեալ է ի Մովսես Եղեվարդեցոյ, եւ ոչ ի Ներսես Աշտարակեցոյ, եւ մինչև ի վերջին ժամանակս՝ ընդհանուր կարծեօք Մովսէս Եղեվարդեցի կը Համարուէր նորոգիչ Հայ թուականին: Ն. Ա. Ալիշան եւս իւր առաջին գրուածոց մէջ զսոյն կարծիս ունէր. օրինակ իմն ի Բագճափայի 1848 տարւոյն, յերես

216 ա, սապէս կը գրէ. «Թուականն Հայոց, Հաստատեալ առ Մովսէսիւ Բ. կաթողիկոսիւ. յամի Տեառն 552». այլ կ'երեւի թէ նորանոր քննութեամբք ստուգած է թէ Ներսեսի Աշտարակեցւոյ է այս արդիւնքս, քանզի Հակառակ իւր առաջին գրուածոց, Հակառակ Զամէանի, Հակառակ մեր բազմազոյն պատմաց եւ յիշատակագրաց, Հակառակ ընդհանուր կարծեաց, կը գրէ ի Ներսէս յերես 37, ծան. 3. «Անտոյդ կամ ազաւաղեալ Համարիմ զյիշատակարան Մնացորդաց գրոց՝ զոր Զաքարիա պատմիչ (մասն Գ. երես 6) ընդօրինակէ, իբրու գրեալ յամի տեառն 554 ի Մանկիկ Պէտրդէ Անեցւոյ. քանզի թուականն Հայոց ասի անդ երեալ ի Մովսիսէ կաթողիկոսէ, որ է Ներսէսէ Երաս»:

Եւ սակայն բան մի կ'ապշեցնէ զիս: Աշխան վարդապետի Ներսէս Հրատարակեալ է յամին 1881. յետ Հինգ տարւոյ մի ոմն ի Մխիթարեանց Վենեակոյ ի պատմութեան Հայերէն դպրութեան կը պնդէ եւ դարձեալ կը պնդէ թէ Հայ Թուականն Հաստատողն է Մովսէս Եղիվարդեցի, եւ ոչ Ներսէս Աշտարակեցի. (տես անդ յերես 393, 394-395, 589): Արդեօք Դպրութեան Հրատարակիչն կարգացած չէ՞ զվերոյիցեալ ծանօթութիւնդ Ներսէս, արդեօք կարգացած՝ բայց իւր ինքեան մանրատոյդ մանրակրկիտ քննութեամբք սխալ գտած է զկարծիս Լ. Աշխանի: Եթէ ըստ դպրութեան Հրատարակչին ստոյղն սցն է՝ որ Մովսէս Եղիվարդեցի նորոգեաց առմարն, ի՞նչպէս այլուր ի նմին մասննի՝ հետեւեալ մեծ Հակասութիւնն կը գրուի. «Կաթողիկոսն Յովհաննէս (այսինքն Յովհաննէս Բ. Քաթողիկոսն)՝ որ էր յերկրորդ կէս վեցերորդ դարու, 557-574». երես 210: Յովհաննէս Բ. Քաթողիկոսն, որ էր նախորդն Մովսիսի Եղիվարդեցւոյ, էթէ կաթողիկոս նստած է ընդ ամնն 557-574, ապա ուրեմն Հայ առմարն վաղուց երեալ էր ի կաթողիկոսութեան Ներսեսի Աշտարակեցւոյ՝ որ էր

նախորդն Յովհաննեսի Գարեղենեցւոյ¹⁾: Որ՞ զխառնն պիտի տայ մեզ վերջապէս զհաւաստի ժամանակըրութիւն ազգային պատմութեան:

14. «Եւ Աշոօ ոմն առաքեալ յարքայէն Պարսից խոսրովու, եւ հարեալ զՅոյնն՝ էառ զԿթութի՝ քաղաք Հաշտենից, նոյնպէս եւ զքաղաքն Կարնոյ, եւ գերեաց զՅովհան կաթողիկոս». երես 86:

Աշոօ կը զրէ եւ Յոհան կաթողիկոս պատմազիր, յերես 43. «Իսկ Աշոօ ոմն հրամանաւ Խոսրովայ հասեալ ի Հայս, եւ զիմեալ ի վերայ՝ խորտակէր զզօրսն Յունաց»: Նոյնպէս եւ Վարդան Արեւելցի յերես 60. «Եւ ընդ առաջ կրթեալ Աշոօ, հարկանէ անչափ կոտորմամբ հրամանաւ Խոսրովու»: (Չամչեան եւս կը զրէ Աշոօ, եւ կը յաւելու յանձնէ թէ էր որդի Սմբատայ Բագրատունեոյ, սիրելոյն Խոսրով Բ. Ապրուէզի եւ մարզպանին Վրկանայ, տես Ն. Բ. երես 300, 308-310, 324):

Ստոյիկ այլուր կը զրէ Աշոօօօ, «Եւ զԱշոօօօ (առաքէ Խոսրով Բ. Ապրուէզ) ընդ սահմանս Հայոց, որոյ եկեալ՝ պատերազմեցաւ ընդ զօրսն յունաց, . . . եւ առնու զքաղաքն Կարնոյ, եւ գերէ զկաթողիկոսն Յովհանն». երես 114: Ահա այս Աշոօօօ է ուղիղն, եւ ոչ Աշոօ որդի Սմբատայ Բագրատունեոյ, ըստ Չամչեանի: Սերէոս կը զրէ մանրա-

¹⁾ Հին Յիշատակարան մի, զոր ի մէջ կը բերէ Գարեգին վ. Սրուանձտեանց (Հնոց եւ Նորոց, երես 87), կը հաստատէ թէ Հայոց թուականն եղեալ է նախ քան զՅովհաննէս Գարեղենեցի. «Բայց զարմանալի է ի նախկի յիշատակի գրոցս այսմիկ, եթէ գրեցաւ գիրքս այս Եսէօ՝ թարգմանեալ ի Յունաց ի հայս՝ հրամանաւ տեսան Յովհաննիսի (տպ. գրեցաւ գիրքս այս Եսէօ՝ հրամանաւ թարգմանեալ ի Յունաց ի Հայս Տեսան Յովհաննիսի) Հայոց կաթողիկոսի Գարեղենեցւոյ ի քսաներորդ եօթներորդ թուականին Հայոց»: Հայոց թուականին քսաներորդ եօթներորդ (կամ թերեւս լաւագոյն՝ հինգերորդ) տարին է Քրիստոսի 578 (կամ 576):

մաննաբար. «Եւ ընդ կողմանս Հայաստանի արձակէր (Խոսրով Բ. Ապրուէզ) զԱշոտայ զՅեզդայար զօրու մեծաւ... իսկ Աշոտայ Յեզդայար եկն ի սահմանս Հայոց... եւ ինքն զուճարեալ բանակեցաւ շուրջ զԿարնոյ քաղաքաւ... եւ կալաւ զքաղաքն Հաշտենից Կիթառիճ¹⁾». երես 121-123, տպ. Կ. Պոլսի. — երես 76-77, տպ. Պետրբուրգի: Աշոտայ պարսիկ անունն է, որ ի զրաբաշտական կիշաին «բարի հրեշտակ» կը նշանակէ ըստ Տ. Ք. Պատկանեանի, Սեբէոս, երես 200): Կայ եւ առ Ղազարայ Փարպեցոյ Աշոտայ, ի Միհրան տանէ, հայր Յրզատվնասպայ զայեկորդոյն Պերոզի. տես յառաջին տպագրութեանն Ս. Ղազարու յերես 186-187, 197:

15. «Յովհան Մայրաբոմեցի, որում զխաղիչութիւնն հաւատացեալ էր կոմիտաս». երես 87:

Թերեւս զխաղիչութեանն: «Յովհան՝ վարդապետ Կախուղիչութեանն», կը գրէ Վարդան Արեւելցի յերես 62:

16. «Եւ ժողովեցան ամենայն եպիսկոպոսուքն... առ բարեպաշտ իշխան աշխարհին եւ զօրավարն Հայոց Թէոդորոս Սահառունի պատրիկ, որ էր Ռշտունեաց տէր». երես 91:

Ի ծանօթութեան նշանակեալ է թէ ձեռագիրն ունի «Թէոդորոս ապոստոլիկ»: Սահառունի ընթերցուածն բոլորովին սխալ կ'երեւի ինձ, զի Թէոդորոս էր Ռշտունի. «Թէոդորոս, որ էր յազգէն Ռշտունեաց», կը գրէ Աեւոնդ երէց յերես 7: Իսկ ձեռագիրն ապոստոլիկն է ապոստոլիկն:

¹⁾ Այնպէս գրեալ է ի կրկին տպագրութիւնս Սեբէոսի. այլ ուղիղն է Կիթառիճ, կամ ըստ Ասողկայ Կիթառիճ: Չորրորդ Հայոց Հաշտենից գաւառին մէջ նշանաւոր էր այս բերդաքաղաքս, զոր բաղում անգամ կը յիշատակեն նաեւ Ստորին Կայսերութեան պատմագիրք Citharizon անուամբ: Ըստ Պրոկոպիոսի՝ Կիթառիճ հեռի էր ի Թէոդոսուպոլսոյ (ի Կարնոյ) չորեք աւուրբք. տես Lebeau, շ. Թ. երես 76, ծան. 2: Մենանդր պատմագրի (որ էր ի

հիպատ. (Հետեւեալ պատրիկ բառի պատճառաւ զաղափարողն մոռացած է զվերջին վանկ բառիս. ինչպէս եւ յերես 98, ծան. 8, պրած է «Հրամանաւ մտայ», փոխանակ «Հրամանաւ Ս.մնուայ», այսինքն Օմնուայ): Ըստ այսմ եւ յՈւխտանէս, Հատուած Ա. երես 109, «Շապհոյ՝ որդւոյ (տպ. որիոյ) Աշտոյ սպր-հի պատրիկի (տպ. ապահի պատրիկի)», ուղղելն է. ապուհիպատ պատրիկի: Յերես 144 Ասողկայ ուղղւ զրեալ է. «Տուեալ զհիւպատաւորութեան պատիւն, այսինքն սպր-հի-պատ պատրիկութիւն, Աշտոյ՝ որդւոյ Շապհոյ»: Մ. Կազանկատուացի կը զրէ սպր-հի-պատ պատրիկ, սպր-հի-պատ պատրիկութիւն. Հ. Ա. երես 300, 333, 360:

Ի Ստորին Կայսերութեան Սպր-հի-պատ (յունարէն սփ-ի-ֆարոն կամ սպր ի-պարոն) կը կոչուէին պատուակալ հիւպատոսներն, զաղղիերէն Consuls honoraires. (տես Payne Smith, Thesaurus Syriacus, Պրակ Ա. էջ 330): Տեսնոք ի վեր անպր որ Ասողիկ զԱպուհիպատ պատրիկութիւն կը կոչէ Հայերէն բառիւ Հիւպատաւորութիւն. որով եւ Ապուհիպատ կ'ըլլայ Հիւպատաւոր:

17. «Նա եւ հրեապետն եւս իւրովք համազգեօրն յառաջ մատուցեալ՝ առնէր ամբաստանութիւն ըստ իւրեանց բնիկ սովորութեանցն. «Մի՛ կոչեսցի, ասեն, Աստուած այրն այն». երես 94:

Ի ծանօթութեան նշանակեալ է թէ Շահնազարեան սպազիրն փոխանակ հրեապետն ունի հայրապետն, եւ յերես

վախճան 9 դարուն) լատին թարգմանիչն՝ կարծելով թէ Citharizon նոյն է ընդ Citharizo բայի, որ կը նշանակէ «կիթառ հարկանել», երաժշտաց եւ քնարահարաց վերայ առած է զբանս յոյն մատենագրին, տես Lebeau, Հ. Ժ. երես 149, ծան. 4: Տես Կթառիճ եւ յինճիճեան, Ստորագր. երես 45:—Ի Խորենացւոյ Աշխարհագրութեանն, յերես 30, յիշի նա եւ Լուսաբանիճ քաղաք ի Չորրորդ Հայս:

348-350 յ'75 ծանօթութեան Ստ. Մալխասեանց ցոյց կու տայ զթիւր իմացուած Տ. Մ. Էմինի:

Այս հրէապետ բառն զրեալ է հայրապետ նաև առ Սերէոսի (տպ. Կ. Պոլսի, Երես 190.—տպ. Պետրբուրգի, Երես 121), յորմէ կ'առնու Ասողիկ: Ինձ եւս «վէմ գայթակորութեան» եղած էր (ըստ բացատրութեան Ստ. Մալխասեանցի) Սերէոսի հայրապետն, զոր անկարացած էի հասկանալ, թէ պէտք գիտէի հրէապետ ի պատմութեան Ասողիան, վիպութեամբ Նոր Հայկազեան բառարանին. այլ այնչափ համոռօտ է կոչումն (գլ. Citation), որ զհայրապետն հրէապետ ուզել էի մտաբերած:

Զիք երկբայութիւն թէ հրէապետ ընթերցուածով պայծառագէտ կը պարզին եւ Սերէոս եւ Ասողիկ: Սակայն հարկ կը համարիմ ծանուցանել թէ եւ այլուր ի ժողովրդեան գերս մեր կայ զրեալ Հայրապետ երբ կրօնական զուրկ չըէից: Զաքարիա Սարկաւագ ի պատմութեան իւրում (Մասն Բ. Երես 113) կը գրէ. «Կոչեցին եւ զլիսաւորս հաւատոյն իւրեանց (չրէից), որ ասի Սախամ, որ է հայրապետ»: Եթէ ասա եւս հայրապետ սխալ զրեալ ենթադրենք փոխանակ հրէապետ, ընդդէմ կ'ենէ մեզ զազգիներէն Patriarche (Հայրապետ) բառն, որ նոյնպէս չրէից հոգեւոր առաջնորդին համար ըսուած է: Lebeau կը գրէ ի 2. Ե. Երես 137. «Le patriarche, chef de toute la religion judaïque qui résidait en Orient, exigeait chaque année un tribut de toutes les synagogues.» Կայ ի նմին հատորի, Երես 136, եւ ծանօթութիւն մի Սէն-Մարտէնի (թիւ 5-դ), յորում կ'ըսուի. «Les patriarches des Juifs portaient le titre d' illustres, comme les premiers officiers de l'empire.»

18. «Իսկ որք զՔաղկեդոնին իվէրն» է- Աղուանից կաթողիկոսն, որ էր ի Փայտակարան, ի գրան արքունի». Երես 96:

Այս եւս առեալ է ի Սերէոսէ, որ կը գրէ. «Իսկ որք զՔաղկեդոնին է- զՎրաց է- զԱղուանից կաթողիկոսն».

(տպ. Կ. Պոլսի, երես 191.— տպ. Պետրբուրգի, երես 122): Սերէոս չունի զբանն «որ էր ի Փայտակարան, ի դրան արքունի»:

Ստ. Մարտասեանց կը նշանակէ ի ծանօթութեան, թէ ձեռագիրն Ասողկայ փոխանակ Իվէրոյ անուան ունի Վերոյ: Այս է ըստ իս հարադատ ընթերցուածն. «Վերոյ, Աղբանից կաթողիկոսն, որ էր ի Փայտակարան, ի դրան արքունի»:

Մ. Կաղանկատուացի կը պատմէ (Լ. Ս. երես 259-261) թէ յապտամբել իշխանացն Աղբանից յԱպրուէզ Խոսրովայ Բ-է, յանցաւոր կը գանուի եւ կաթողիկոսն նոցա Վերոյ իշխանքն կը պատժուին, ոմանք զլխատութեամբ, այլք խղրութեամբ, եւ կէսք տարագրութեամբ. իսկ Վերոյ, բարեխօսութեամբ Պարսից թագուհւոյն (որ թուի Ներին), կ'ազատի ի մահուանէ. բայց Խոսրով կը դատապարտէ զնա ի մշանջնաւոր բանտարկութիւն յարքունի դիպահոջ, մինչեւ որ Կաւատ Բ. (որ եւ Ներոյ) յետ սպանանելոյ զհայր իւր Խոսրով կ'արձակէ զՎերոյ ի կալանաց եւ կը յուզարկէ յիւրական աշխարհն յԱղբանս յամին 627: Կերեւի թէ բանտարկեալն Վերոյ՝ հրամանաւ Խոսրովու Գի՝ մասնակից եղած է եպիսկոպոսաց ժողովոյն, որ գումարեցաւ յամին 615 կամ 616 ի դրան Պարսից թագաւորին: Այլ զբանն Սերէոսի եւ Ասողկայ «Իսկ սրտ զԲաղիկեոսին» չկարեմ մեկնել. թուի ինձ թէ աղաւաղութիւն կամ թերի ինչ կայ ի հատուածից:

Ի Մ. Կաղանկատուացոյ կ'առնու եւ Կիրակոս Գանձակեցի զոր ինչ կը գրէ Աղբանից Վերոյ կաթողիկոսին համար. «Յետ Խոսրովու (Բ-ի) Պարսից արքայի՝ առնու զթագաւորութիւնն Կաւատ (Բ., որ եւ Ներոյ), սա արձակեաց ի դերութենէ զՎերոյ կաթողիկոսն Աղբանից, զոր ի բանտի եղեալ էր հայր նորա». երես 30. — «Տէր Վերոյ, ամս երեսուն եւ երեք. սա բազում ամս ի դիպահոջ լեալ ի դրան Խոսրովու Պարսից արքայի, եւ յետ մահուան նորա ազատեալ եկն յերկիր իւր». երես 98:

19. «Որոց զբնութիւնս իսկ հրամայեաց տալ». Երես 96:

Առեալ է նոյնպէս ի Սեբէոսէ, որ կը գրէ. «Որով եւ զբնութիւնս իսկ հրամայեաց տալ» (տպ. Կ. Պոլսի, Երես 191.—տպ. Պետրբուրգի, Երես 122):

Ի ծանօթութեան կը նշանակէ Սա. Մալխասեանց թէ Աստղկայ ձեռագիրն ունի զբնութիւնս, եւ Շահնազարեան տպագիրն զփաբարն: Յօրինակի միում Ս. Ղազարու զտածեմ զբնութիւնս, զոր մարթ է ընթեռնուլ եւ զբնութիւնս կամ զբնութիւնս, բառ բոլորովն անծանօթ ինձ:

Իսկ այն որ կը գրուի յայլում ձեռագրի (Երես 351-352, ծան. 78-դ), «Որոց զբնութիւնս է արեւոյ արեւնսն իսկ հրամայեաց տալ», խառնեալ է ի բանից Աստղկայ «Որոց զբնութիւնս իսկ հրամայեաց տալ», եւ ի ծանօթութեանէ գրելոյ ի զաղափարողէն կամ յայլմէ ումէքէ ի լուսանցին. «Ծան. է տեղոյ (ս) արեւնսն (օրինակն)». այսինքն թէ զբնութիւնս աղաւաղեալ բառ է:

20. «Ներսէ՛՛, Շիրակայ տէր, կոմս Կապոյտիւրոյ, Հայոց իշխան». Երես 101:

Ի ծանօթութեան նշանակեալ է թէ ձեռագիրն ունի Կապոյտիւրոյ, իսկ Շահնազարեան տպագիրն Կապոյտիւրոյ: Թերեւս ուղղագոյն ըլլայ Շահնազարեանի Կապոյտիւրոյն թերեցումն. վասն զի եւ Մատթէոս Ուռհայեցի կը յիշէ յերես 125 «Կապոյտիւրոյ բերդ, ի տեղին որ Արջովիս ասի», զորոյ գաւառն կամ զնահանգն կանգիտանայ Ինձիձեան (Ստորագր. Երես 510-511): Ե. Իւլըրիէ ի ծանօթութիւնն Մատթէի Ուռհայեցոյ (Երես 403-404) կը գրէ՝ թէ եւ Կեղրնոս կը յիշէ զբերդն Kapetrou. Կապոյտիւրոյ կամ Կապոյտիւրոյ կրնայ եւս ուղղուիլ Կապոյտիւրոյ, որոյ համառօտեանն թուի Կապոյտիւրոյ:

21. «Քաղերեկ ծաղկեալ մորուսն արեւմտեան կաղմեալ (Յովհանն Օձնեցի)». Երես 104:

Աստղիկ կ'առնու զայս ի Յովհանն կաթողիկոսի պատ-

մուծենէն, երև 58. «Ջաղերեկ ծաղկեալ մորուսն ոսկեփռնը (այսպէս է տպագիրն ոսկեփռնը, եւ ոչ ոսկեփռնը կամ ոսկեփռնը) կազմեալ: Ինչ թուի գրելի ոսկեփռնը զի վերագոյնն ասէ Յոհան պատմագիր. «Եւ ոսկի մանր խարտիւ աղացեալ եւ իւրովք անուշիւք յայն ընդխառնեալ՝ փէր ընդ ծաղկեալ ալեօք մորուսն»: Ոսկի փէր. ապա ուրեմն ոսկեփռնը

Կայ եւ Դերասփռն ի Թովմա Արծրունի. «Գու յարդ, եւ մեք հոգմք դերասփռնը» (տպ. Կ. Պոլսի, երև 201.— տպ. Պետրբուրգի, երև 179):

22. «Քրիստոսն քո եւ աշակերտքն նորին զգծուծն եւ զչնչինն պարտեցին». երև 104:

Թէպէտ եւ պարտեցին ընթերցուածով իմաստ կ'ելնէ, այլ լաւագոյն է կարծեմ պարտեցին, ինչպէս կը գրէ Յոհան կաթողիկոս յերև 58. «Քրիստոսն ձեր զպարկեշտ եւ զչնչին զգեստ պարտեաց, եւ զնոյն արարին աշակերտք նորա»: Նոյնպէս եւ առ Կիրակոսի Գանձակեցւոյ, յերև 37, կ'ըսէ ամիրապետն ցՅոհան Օձնեցի. «Որ նոցա (քրիստոնէից) առաջնորդք են՝ զաղքատութիւն եւ զգձձութիւն առաւել ձեծաբն քան զմեծութիւն եւ զփարթամութիւն. իսկ դու ընդէր՝ այդպէս զարդարեալ ես»:

23. «Որ եւ ՂԱարքան, որդի Խոսրովու Գողթան տեառն, փոքր մանուկ, տարեալ սնուցին, եւ ուսուցանէին անօրէն օրէնագրութեամբն իւրեանց». երև 125:

Գաղափարողն սխալ գրած է անշուշտ ՂԱարքան փոխանակ ՂԱհան, զի Ասողիկ կ'անկարկէ ի Վահան Գողթնացի՝ որ նահատակեցաւ յԱրաբացւոց յամին 738:

24. «Եւ եղբայր նոցա (Սահակայ եւ Համաղասպայ Արծրունաց) Գագիկ՝ ապատմրեալ յամայելացւոցն՝ ամրանայ յամուրն Ողկան». երև 133:

Այս Ողկան եւս թուի սխալ զաղափարողին, փոխանակ գրելոյ Նկան: Ասողիկ ի Ղեւոնդ Երիցուէ կ'առնու զպատմութիւնդ, եւ Ղեւոնդ կ'ըսէ երկիցս ցամրոցն՝ որում

Նկանն կոչեն» երես 133.— «Եւ զայլնն փախստական ընկե-
նոյր յամուրն Նկան»: երես 134: Ալական ամբոցն էր ի դա-
ւառին Տարօնոյ առ Եփրատ դետով (Փ. Բիւզանդ. երես
131). իսկ ամբոցն Նկան էր ի Թոռնաւան գաւառի Վաս-
պուրական աշխարհին Երասխայ մօտ (Բազմազէպ, 1863,
երես 181 ա), զոր յաճախ յիշէ եւ Թովմա Արծրունի:

25. «Մաւրիկ (Թագաւորեաց) ամս քսան, Զսա սսն ընեւ յեր-
կրէն Հայոց յԱրագածոտն գաւառէ, ի գեղջէ՛ որ Աւշականն կոչի.
որ ի Կոստանդնուպօլիս խնամ՝ ածէր գեղջն իւրում. եւ այս ար-
գարացուցանէ զառասպելին՝ որ սսն. «Աստի յԱւշական խունկ
առլի». երես 141:

Թերեւս առաքի:

26. «Եւ ի նոյն ամի եմուտ Թէոփիլոս (կայսր) յԱսորիս, եւ
էառ զբազարն Ուրբելի, եւ պատերազմեցաւ ընդ Տաճկաց Սըն-
ապ, եւ յաղթեաց». երես 144:

Թուի յԱշնո-չապ. զի Ինճիճեան (Ստորագր. երես 59)
կը յիշէ հատուած մի Յայսմուսուրաց ի սեպտեմբերի 23,
Թէ կայսրն Թէոփիլոս «Եւ ի Հանճիթ եւ յԱշնո-չապ, եւ
աւերեալ կոտորեաց եւ գերեաց»: Նոյնպէս կը գրէ եւ Մի-
խայէլ Ասորի, երես 371. «Եւ Թէոփիլոս հպարտացեալ
նոքօք եւ առեալ զօր՝ եկն ի Զուպատրա եւ քահեաց զնա,
եւ կոտորեաց հաւասարապէս զտաճիկան եւ զքրիստոնեայն:
Եւ սպա զնաց ի Մելտենի, եւ գերեաց. եւ կլաւ յԱշնո-չա
եւ ի Հանճիթ, եւ գերեաց զբազումն եւ զնաց»: Lebeau
(Հ. ԺԳ. երես 135) կը պատմէ զառումն Սոզոպետրա
(Sozopetra, ըստ Արաբաց Zobathrah, Զուպատրա) քաղաքի
ի Թէոփիլոս կայսերէ. կ'ըսէ նաեւ Թէ կայսրն «էառ եւ
աւարեաց զՍամուսատ» (prend et pille Samosate,) բայց
չիշխեր զԱշմուշատ: Սամուսատ եւ Աշմուշատ անուանց
չիոթութիւն մի կայ կարծեմ՝ աստ, բայց չկարեմ՝ ստուգել.
այսչափ միայն զիսեմ՝ Թէ այլ է Սամուսատ, եւ այլ Աշ-
մուշատ: Ըստ Ինճիճեանի (Ստորագր. երես 60)՝ Աշմու-

շատ է ի Զորրորդ Հայս, եւ է Հոռփմայեցի եւ յոյն պատմրչաց Arsamosata (Արշամուշատ) կոչած քաղաքն: Ի նոյն կարծիս է եւ Զամֆեան (Հ. Ս. երես 276): Desobry et Bachelet Բառարանն կը գրէ թէ Arsamosata կը կոչուի այժմ Schemschath (Տեմշաթ), իսկ Samosate կը կոչուի Semisat (Սեմիսատ): Մ. Խորենացի կը գրէ (Բ. իս.) թէ Անտոնինոս էառ զքաղաքն Տաճկաս: Ամենայն թարգմանութիւնք մեր Պատմահօրն, զորս ունիմ արդ ի ձեռին (լատիներէնն Վիստոնեանց, իտալերէնն Ս. Ղաղարու, գաղղիերէնն Վ. Լանդլուայի) Samosate կ'իմանան. նոյնպէս եւ Զամֆեան (Հ. Ս. երես 261): Կարելի՞ որ ըլլայ Arsamosata.

27. «Անու (Թէոփիլոս կայսր) զԾմու բերդն Հայոց, շԱւղն, եւ զՄեծկերտ, եւ զԱլբերդ ի գաւառին Գեղամայ». երես 144:

Թուի զՊաղին, ինչպէս կը գրէ Սամուէլ Անեցի նոյն Թէոփիլոս կայսեր Համար. «եկն եւ ի Հայս, եւ էառ զամուրն զՊաղին, եւ զՄեծկերտ». տես յինձիճեան, Ստորագր. երես 60:

28. «Յայսմ ժամանակի Աբուտրուփ՝ Գողթան ամիրայն՝ ըն հետեւախառնով խաղիօքն գայ յաշխարհն Վասպուրականի». երես 189. (եւ 113-դ ծան. յերես 381):

Քանզի ձեռագրին ընթերցուածն է «Ձե հետեւախառնով խաղիանօքն», ես կարծեմ թէ ուղղելի է «զեհետախառնով խաղիանօքն (կամ խաղիօքն)»: Զ, Լ, Ղ, Տ, Զ, Զ նշանազիրք դիւրաւ կը շփոթին ի գրչագիրս:

Զեհետախառնով բարգեալ է յարաբերին զանիս բառէն, որ նշանակէ 1-Ուժեղ, քաջ. 2. ձգնաւոր, Կրօնաւոր. 3. Ժուժկալ, բարեպաշտ, Աստուածապաշտ, եւ ի Հայ բառէն ժողով: Զեհետ կայ եւ այլուր երկիցս առ մասնազիրս մեր: Ն. Տնորհալի կը գրէ ի Հանելուկն «էջ» բառի.

Նա Բրիստոսի եղև ի պէտ.

՚դ Բաղամ ասաց՝ Յէտ ի ծամբէտ.

Հետ կու կանցէ գետ ըզգեհետ.

Թուրքնր, ձեզ վա՛ր, կորեաւ Մահմէտս:

Եւ ի պատմութեան Միխայելի Ասորոց յերես 334 գրեալ է. «Եւ (Մսիմ) զօրագլուխ զՈմար, եւ երդուաւ քակել զՎոստանդինուպօլիս, եւ կային ընդ նմա զԵհեթ+ երեսուն Հազար. եւ եղևն երկու բանակ, մինն ընդ ծով, եւ միւսն ընդ ցամաք»: Հրատարակիչքն Միխայելի կըսեն ի ծանօթութեան թէ «ԶԵհեթ» նշանակէ աստ կանաւոր զինուոր»։ Բայց ի Հ. Յակոբոս Պօղաճեանի Տաճկերէն-Հայերէն Բառարանին (տպ. Վիեննայ) չեք այսպիսի նշանակութիւն: Տ. Ստ. Մալխասեանց, որմէ խնդրեցի անդեկութիւն Զահեթ բառի նշանակութեանց վերայ, գրեց ինձ զհետեւեալն՝ իւր մայիսի 30/յունիսի 11 նամակաւն. «Զահեթ. իմ պարապմանցս մէջ այս բառը պատահել է՝ «Ճղնաւոր, միայնակեաց, անապատական», եւ իբր սոցանից հետեւութիւն՝ «Բարեպաշտ, աշխարհային վայելչութիւններից ժուժկալ» նշանակութիւններով: Յէնկէրի Բառարանն եւս նոյն նշանակութիւններն է սալիս. «Զահեթ (յոզնակի Զի-հեթա եւ Զի-հեթա, abstinent, dévot, ermite, moine, homme mystique, fanatique.» կանաւոր զինուոր նշանակութիւնն ամենեւին չկայ այստեղ ինչպէս աննում էք»: Թէ՛ Ստողիկ, թէ՛ Ենորհայի եւ թէ՛ Միխայէլ ԶԵհեթ բառն՝ կրօնաւորի կամ կրօնամոլի (fanatique) նշանակութեամբ գործածած են կարծեմ, որու հետ կրնայ համեմատուիլ նա եւ Մուղթ բառն. (տես աստէն ի թիւն 36):

Իսկ Խաղկանբ+ կամ Խաղթ+ թուի գործիական հոլով Խաղկանք կամ Խաղիկք անուան, որով կոչն ազգ մի Թուրքայ: Սյս անունս կայ եւ յՈղբս Եղեախոյ ի Ն. Ենորհայի.

«Ալլը ի չարին արբանեկայ,
Որոց Խաղիկք անուանին,
Իբրն ըզոնբս կատարիս՝
Յորսոց վերայ յարձակէին.
Զարինս անեալ զբայանելոցն՝
Զանձինս իրեանց օճանէին,

Եւ զորովայնսն հերձուին,
 Զլեարդսն հանեալ խածատէին,
 Եւ ըզզըլուխսն քերթէին
 Ու ի Խորասան դալն տանէին,
 Զի ի նոցունց վարձս ընկալցին
 'ստ ըսպանելոցն համարին»:

Նոյնպէս եւ ի պատմութեան Ստեփանոսի Ուուպելեան երկիցս կը գտնուի Խաղկէ՛. «Զայն տուեալ միմեանց (Հազարածին Իսմայելացիքն) ի Խորասան, ի Խորազմաստան, ի Խուժաստան աշխարհի, եւ ի Փարս, եւ ի Քրման, եւ ի Բուխարա, ի Մազանդարան, յԱրաղ, ի Բաղդատ, եւ ի Բարսա, յԱռան եւ ի յԱտրպատական, եւ ժողովեցան անհուն բազմութիւնք Պարսկաց, Խաղկաց, Խորազմաց եւ Արաբացոց, եւս եւ սկիւթացի Թուրքաստանեաց, եւ եկեալ բանակեցան ի դաշտին Կարնոյ», երես 273: Էմինեան տպագիրն ունի Խաղրաց. այլ ես եղի Խաղկաց ըստ տպագիրն Սէն-Մարտէի (*Mémoires* եւ այլն, Ն. Բ. երես 66), որ եւ կու տայ զհետեւեալ տեղեկութիւնդ (անդ, երես 219, ի 64 ծանօթութեան). «Խաղկէ՛ Թուրք ազգ մի են, որ ի սկիզբն ժՄ. դարուն անցին ընդ ձիհուն դեա՛ միաբանութեամբ Ղոզաց կամ Ուզաց, եւ մտին ի Պարսս՝ ընդ առաջնորդութեամբ Սելճուկեան իշխանաց: Որովհետեւ Խըղըզք եւս սոյն Խաղկէ՛ անուամբ կրկոչուին, Խաղկէք ձիւզ մի են [թերեւս այս զօրաւոր ժողովրդեան՝ որ ի վաղուց տարածեալ էր յափանց Կասբիական ծովուն մինչեւ ի սահմանս ձեւաց՛]»: Եւ յերես 255 կը գրէ զարձեալ Ստեփանոս Ուուպել-

4) «Les Khazaks sont une des nations Turques qui, au commencement du XI-e siècle, passèrent le Djyhoun avec les Ghozz ou Ouzes, et entrèrent dans la Perse sous les ordres des princes Seldjoukides. Comme les Kirghiz portent aussi ce nom, les Khazaks ne sont peut-être qu'une division de ce peuple puissant, répandu des longtemps depuis les bords de la mer Caspienne jusqu'aux frontières de la Chine». Եւ այլն:

լեան. «Սա նեղեալ յանիծեալ եւ ի պիղծ բերդապահէն
 Հրասեկայ, որ էր Խաղիկ Խորասանի, եւ որայս սպանանել
 զսուրբ եպիսկոպոսն»: Աստ եւս էմինեան ապագիրն չի զնոր
 Խաղիկ, այլ Խաղրիկ. անշուշտ վասն զի հրատարակիչն զՍա-
 ղիկ ուղղելի կրկարծէ Խաղրիկք (տես ի 113-դ ծանո-
 թութեան Ասողկան, եր. 381), բայց Շնորհաւոյ զՍա-
 ղիկք եւ զՍորասան զոյգ յիշելն, եւ Սէն-Մարտէնի ձե-
 ոագրին Խաղկայ ընթերցուածն փոխանակ Խաղրայ, կը
 վստահացնեն զիս թէ եւ ի սին հատուածի Խաղիկ է
 ուղիղ գրութիւնն, եւ ոչ Խաղրիկ:

29. «Եւ խոստանայ տալ նմա զիւաղտոյաոիճ Կղէսո-բաւն, զՊոր-
 մայրի, եւ զԿարին, զԲասեան, եւ զՍեւուկ Բերդակ, որ է Մար-
 դաղի». երես 192:

Այս բառ Կղէսո-բ կայ եւ ի պատմութեան Մ. Խորե-
 նացոյ, Բ. ք. «Եւ զՇարաշան ի տանէ Սանասարայ հաս-
 տատէ (Վաղարշակ) բգիշխ մեծ եւ կուսակալ յարեւմտից
 հարաւոյ, յեզեր (ս) սահմանացն Ասորեստանի, առ ամն
 Տիզրիս դետոյ, գաւառս պարգեւելով զՍրձն, եւ որ շուրջ
 զնովաւ, եւ զԷնան Տաւրոս, որ եւ Սիմ, եւ զԿղէսո-բն
 ամենայն»: Չամչեան (Հ. Բ. երես 438) կը կարծէ թէ
 Կղէսո-բ է նոյն ընդ յունականին Կելէսի-բիա (Célesyrie),
 որ հայերէն ասի Ստորին Ասորիք (եւ Խոր կամ Խորին Ասո-
 րիք): Ինձիճեան (Ստորագր. երես 86-87, 531) կը համարի
 թէ Վաղարշակ զերկիրն Ստորին Ասորոց առւած է իւր
 Շարաշան բգիշխին: Նոյնպէս եւ Նոր Հայկազեան Բառարանն
 (ի բառն Կողմն եւ Ստորին), եւ Ա. Մ. Գարագաշ
 (Քննական պատմութիւն Հայոց, երես 254) նոյն կը զնն
 զԿղէսո-բ եւ զCélesyrie. Միայն Վիստոնեան եղբարք, թէ-
 պէս եւ Coele-Syria կը թարգմանեն զԿղէսո-բ Խորենացոյ,
 այլ ի ծանօթութեան կը յաւելուն (յերես 97) թէ թերեւս
 յունարէն Clisora բառն է Կղէսո-բ, ըստ կարծեաց
 Լակրոզի, եւ ոչ Coele-Syria. Յետ Լակրոզի՝ Սէն-Մարտէն

ևս *Clisora* կ'իմանայ ոչ միայն զԿլեոփոսը Խորենացւոյն, այլ և զԼեոփոսը՝ բառն Թոզմացի Արծրունւոյ (տես Ինձիճեան, Հնախօսութիւն, Ն. Գ. երես 329), որում կը հետեւի և Ն. Ղ. Արիշան (Բաղճախ, 1869, երես 99):

Տեսնենք այժմ զնշանակութիւն յունարէն *Clisora* բառին: Նախնարար *Clisoria* (և նորարանութեամբ *Clisoura*) կը կոչուէին այն բերդերն՝ որ շինեալ էին ի կիրճս լեռանց և կը համարուէին իբր փականք (*clio*) լեռանց (*oros*) յարդիւր զարշաւանս թշնամեաց. (տես Ե. Alexandre, Dictionnaire grec-français, 21-ème édit. Paris, Hachette, 1884, երես 789 ա): Ի Ստորին Կայսերութեան *Clisurae* կ'անուանէին գոր եւ իցէ կիրճս կամ կապանս լեռանց (գլ. *gorges des montagnes, défilés, passages*), որոց պահպան զօրագլուխքն կ'ըսուէին Կլիսուրապետ (*Clisurarque*) և Կլիսուրապազ (*Clisurophylax*): Յետ ժամանակաց սովորութիւն եղաւ Կլիսուրա (*Clisurae*) անուանել զլեռնոտ և զգլխարամատոյց զաւառս յունական կայսերութեան սահմանաց. (տես Lebeau, Ն. Թ. երես 199. Ն. ԺԱ. երես 402. Ն. ԺԲ. երես 48, 251, 301, 314, և այլն): Ուրեմն Խորենացի և Ստոզիկ Կլեոփոս բառիւ կ'իմանան Վեռնազաւառ ի սահմանազրուխս». մինչդեռ Թոզմաց Արծրունւոյ Լեոփոսն թուի նշանակել «կիրճք, կապանք»:

Իսկ Ստոզիաց ասելն «զՍեւուկ Բերդակ, որ է Մարդաղի», թուի ուղղել «որ է Մարդաղի», կամ «որ է է Մարդաղի»: Ինձիճեան (Ստորագր. երես 114, կը գրէ. «զՍեւուկ Բերդակ, որ է Մարդաղի». երկաթագիր է Ի ընթերցեալ թուի եւի:

1) «Խոյս տուեալ գնաց (Վարդան Մամիկոնեան) զկողմամբն Մոկաց, ի խոխոն Տորոսական լեռինն, ի Լեոփոս Ջերմածորոյ, և ընակէ յամրոցին». տպ. Կ. Պոլսի, երես 81.—տպ. Պետրոսբուրգի, երես 75:

30. «Յաղագս անցուցանելոյ թագաւորին վապի ի շողովարանէ-
Հայոց յաշխարհն Մակեդոնացւոց». երես 201:

Թուի ժողովորենէս:

31. «Քանզի հաւատք յայժմու ժամանակիս լրումն բանին է,
ասէ շք սասցն». երես 227:

Ի ծանօթութեան նշանակեալ է՝ թէ ձեռագիրն ունի
որ այս է ուղեղն: Տես եւ ի յաջորդ վկայութիւնսդ.
«Ճանձք գարշեցուցանեն զիւղ, ասէ՛ որ սասցն»: Գրիգոր
Նազիանզացի, Առ որս. ԺԳ. (տես Ասեմ ի Նոր Հայկա-
ղեան Բառարանն).— «Ի վախճան ժամանակիս երեւեալ նմա,
եւ խօսեալ ընդ մեզ նովաւ, ասէ ուրեմն որ սասցն».
Գրիգոր Մագիստրոս, Թուղթ է. (տես Ուրեմն ի Նոր Հայ-
կաղեանն):

32. «Մինչ շէ Ասորո՞նչ ձայն ձեզ առնել՝ Իմ է ոսկի եւ իմ է
արծաթ». երես 236:

Ուղղելէ է. «Մինչ զԱսորո՞նչ ձայն՝ ձեզ առնել. Իմ է»
եւ այլն: Իսկ վկայութիւնդ ի մէջ բերեալ՝ է յԱնդէոսի
մարգարէութենէն, զԼ. Բ. 9. «Իմ է արծաթ եւ իմ է
ոսկի, ասէ Տէր ամենակալ»:

33. «Ի խոնուրդս Յոր եւ Դան աղբերացն Յորդանանու».
երես 237:

Ուղղագոյն թուի Յոր: «Ոմանք ի նախնեաց համարեցան
եթէ յերկուց վտակաց, միումն Յոր, եւ միւսումն Դան,
անուանելոց սկիզբն առեալ՝ կոչեցաւ զետս Յորդանան».
Հ. Յովհ. Զոհրապեան, ի զիրս Պիտոյից (տպ. Ս. Ղազարու,
1796), երես 347, ծան. 9:

34. «Գիտորդ համարձակեցայք կանանց տալ (գբահանայութիւնն).
եւ զԸՆՀ ասեմ՝ կանանց,—զի այն ստեղծուած Աստուծոյ է,—
այլ Կրօնչն, զոր դուք ստեղծիք իբրեւ զիշակէս[ս], արտաքոյ
սահմանաց եւ ստեղծուածոց Աստուծոյ, զորոց Մովսէս ասէ, եթէ
«Գձեռին գործի արկեր ի վերայ նորա, պղծեալ է». եւ կանոնա-
կան սահմանն արտաքոյ Եկեղեցւոյ հրամայէ առնել զայնպիսին
ընդ այնպիսին համարեալ». երես 239:

Նշանակեալ է ի ծանօթութեան թէ Նահագարեան տապաղիրն փոխանակ ղեզոտացն ունի ղըխանանց: Ինձ թուի թէ ի բնագրին գրեալ է ղո-լէնաց, որ ի գաղափարողաց ոմանց ուղղեալ է յանդէպս ղըխանանց, եւ յայլոց՝ փոխեալ ի ղեզոտաց, որ է մեկնութիւն Զո-լէն բառի: Ի Քերթողական Բառս, (որոց հաւաքիչն է կարծեմ Արիստակէս Գրիչ ԺԳ. դարու,) գրեալ է. «Զո-լէն. կանացի, որ է բորձ, կամ տապգէ»: Եւ դարձեալ. «Զէզոք. որ ասի տապգէ, ոչ արու եւ ոչ էզ»: Բորձ է պարսկերէն քէ-լո-ճ, զոր կը յիշեմ գտեալ ի Պարսկերէն-Նայերէն Բառարանի Քէրդայ Տէր-Յովհաննիսեան (տպ. Կ. Պոլսի. 1826),

Բանն Մովսէս մարգարէի, որ ի մէջ կ'առնուի ի վերոյեղեալ հատուածից, կը գտնուի ի գիրս Ելից, դւ. Ի. 25. «Ապա եթէ սեղան ի քարանց առնիցես ինձ, մի շինեսցես զնոսա կոփածոցս. քանզի զձեռին գործին քո մերձեցուցիր ի նա, եւ պղծեալ է»: Ուր գիտելի է զի անանուէն Նայ վարդապետն, որ զրաժ է զայն նամակ առ Սերաստիոյ մետրապոլիտն, չքսեր ըստ սովորական թարգմանութեան հայերէն Աստուածաշունչ մատենին «Ձձեռին գործին քո մերձեցուցեր ի նա, եւ պղծեալ է», այլ կը հետեւի Մ. Խորենացոյ թարգմանութեան. «Ձձեռին գործին արկեր ի վերայ նորա, եւ պղծեալ է». (տես Փիլոն, մեկն. Ելից, Բ. գլ. ա. կրես 468): Իսկ միտ բանին է՝ թէ ինչպէս պիղծ էին առ Աստուած կոփածոց քարերն, վասն զի ձեռին գործի (մուրձ) զպաժ է անոնց, այսպէս պիղծ են ներքինիք, վասն զի ձեռին գործի (դանակ) զպաժ է ի նոցա մարմինս:

«Չայնպիսիսն ընդ այնպիսին համարեալ», ուղղելի է այսպանն. քանզի եկեղեցական կանոնք, եւ նոյն իսկ աշխարհական օրէնք, մարդասպանաց հաւասար կը դնեն զայնոսիկ՝ որ զայլս կը ներքինացնեն. Lebeau կը գրէ ի Հ. Բ. կրես 126. «Գոմետիանոս, թէպէտ եւ անգութ մարդ էր, արգելած էր զանօրէնութիւնն ներքինացուման. կոնստանդիանոս (Մեծն) եւ Լեոն (Ս.) կայսերք՝

մարդասպանաց պատիժ սահմանած էին ներքինացուցողաց (Constantin et Léon l'avaient puni (cet attentat) comme un homicide):

35. «Եւ երկիր ի հաստատութեան իւրում շուրջ գալ թուի թմբրելոցն եւ արբեցելոցն, իսկ շուրջ եղելոցն՝ կալ մնալ հաստատուն»։ Երես 241:

Ուզղիկն է լուրջ: Արբեցելոցն (զինովին) հակապրեալ է լուրջ սյսինքն որոյ խելքն ի գլուխն է, զինովցած չէ:

36. «Եւ զկնի երկրորդ (երկու) ամի՝ նոյն ամիրայն (Եգիպտացուց, որ կոչէր Ազազ) զամենայն ճախարակն եւ զզօրսն Երուսաղեմի եւ Լիբէացուց առաքէ յաշխարհն Յունաց, ի նոյն կողմանս Անտիոքու»։ Երես 262. (Եւ 142-դ ծան. յերես 391):

Թուի թէ յԱսողկայ առած է եւ Մատթէոս Ուռհայեցի, երես 50. «Յայսմ ամի զօրքն Եգիպտոսի, որ Մախր Արապիկէ կոչին, մտին յաշխարհն Անտիոքայ քաղաքին»։ Եւ երես 24 կը զրէ նոյն Ուռհայեցին. «Եւ վասն ամբարտաւանութեանն եւ հպարտութեանն Սմիր-էլ-մոմնոյ իշխանին Սփրիկիցուց, զորս Մախր Արապիկէ կոչին»։ Ե. Դիւլորիկն ի գաղղիական թարգմանութեան պատմադրիս զՄախր Արապիկէ եւ զՄախր Արապիկէ կը թարգմանէ Arabes Magrébins, Arabes occidentaux (երես 17, 35). եւ յերես 382 ի 4-դ ծանօթութեան կը գրէ. «Il y a dans le texte Makh'r Arabes, c'est-à-dire les Arabes Magrébins. Ce mot, d'où les Arméniens ont tiré l'adjectif m o k h r a g a n (մոխրական), employé par S. Nersès Schnorhali dans son Élégie sur la prise d'Édesse, ainsi que m o u g h ' r i (մուղրի), est une altération de l'arabe m a g h r é b i, occidental, dénomination qui s'applique aux Arabes de l'Afrique occidentale, et en particulier à ceux Maroc. Un peu plus loin, et ailleurs dans la chronique de Matthieu, ils sont nommés A p h ' r i q u e t s i k (Սփրիկիցիք), Africains. Par cette double appellation, il entend ici les Égyptiens». Ի Դիւլորիկայ կ'առնուն եւ հրատարակիչքն Մատթէի Ուռհայեցուց, յերես

550, ծան. 19. «Մախըր Արապէի Մախըր է բառ Արաբացոց, որոյ հարազատ հնչումն է Մղըրդ կամ Մաղըրդ, եւ նշանակէ կամ Արեւմուտք կամ Արեւմտեան, եւ խօսի աստ պատմին զարաբացի ժողովրդոց եկրին Մարոզայ եւ Ափրիկոյ»:

Ստոյգ է թէ Ասողիկ եւ Մասթէոս Ուռհայեցի Մախրարայի եւ Մախր Արապէի ըսելով կ'իմանան զԱրաբացիս Եգիպտոսի բայց ստուգաբանութիւնն, զոր կու տայ Ե. Կիւլօրիէ զբառէդ, ինչպէս նաեւ Ենորհալոց Մախրական բառին համար գրածն, եւ Մաղրի բառին ընծայած նշանակութիւնն, այս ամենայն անընդունելի է ինձ: Աւասիկ իմ պատճառներս.

Աւաջին.—Եթէ Ասողիկ եւ Ուռհայեցի Մաղըրդի Արաբացի ըսել կամենային, չէին գրեր Մախրարայի, այլ Մղըրդ Արապի, եւ լաւ եւս Մղըրդ Արաբի: Մխիթար բժշկապետ (որ անշուշտ Հերացին է յ'ԺԲ դարու), Մղըրդի կը կոչէ զԱրաբացիս Մաղըրդի իւր «Վասն Քարանց եւ յատկութեանց նոցա եւ բժշկութեանց Ականց» փոքրիկ գրութեան մէջ. «գտանի սա (այսինքն զմրուխտ ակն) ի Մղըրդիաց աշխարհն. եւ իւր խասիաթն է՝ որ օձահարի եւ կորահարի (այսինքն կարճահարի, գղ. Piqué du scorpion) օգտէ, եւ զազանաց կատղածի»:

Երկրորդ.—Մախրական բառն Ներսեսի Ենորհալոց յՈղբն Եգիպտոյ անստոյգ բառ է: Զոհրապեան տպագիրն (Պարիս, 1828) կը գրէ յերես 27.

«Յայնժամ պատեաց շուրջանակի
Զիս պաշարեաց զօրօք նորին,
Արաբացոց մոխրականին.
Որ ըստ անուանն իսկ ոչ թըլին».

անդ յերես 96 ասի ի ծանօթութեան թէ այլ օրինակ

ունի ճշխրականին: Իսկ ի ձեռագրի միում՝ Ս. Ղազարու մատենադարանին զրեալ է.

«Յայնժամ պատեալ շորջանակի
Զիս պաշարեաց զօրըր նորին,
Արաբացոց մոխրակուտին,
Որ ըստ անուանն իսկ ոչ թրին»:

Այսպէս եւ նոր Հայկազեանն ի բառն Մոխրակոյտ:

Երրորդ.— Մոզքի արդարեւ «ճաղրչալը, ճաղրչալի, Մովրիտանացի» մեկնեալ է յՍ. շխարհաբար-զրաբար Բառարանի Հ. Մկրտչի Անանեան (տպ. Ս. Ղազարու). նոյնպէս եւ ի Ճանութութիւնս Միխայելի Ասորոց (երես 372, 446). եւ ի զանազան Հրատարակութիւնս Միխիթարեանց Վինեակոյ Մոզքի զորձածուած է իբր Մաւխտանացի. այլ ես ոչ ուրեք գտած եմ զայս նշանակութիւն ի մեր մատենագիրս ստորին դարուց: Մոզքի (ինչպէս Ճանոցց ինձ. Տ. Ստ. Մաւխտեանց իւր յունիսի 17/29 նամակաւ¹) է արաբերէն ճոգքի բառն, որ կը նշանակէ «ընթերցող Կուրանի», եւ է ներկայ դերբայ գո-րա բայի, որ կը նշանակէ «ընթեռնուլ»: Սոյն բայէն կը ծագի նա եւ գո-րան, որ կը թարգմանի «ընթերցումն», եւ է անուն մահմետականաց նուիրական մատենին (Կուրան, Coran). եւ ճոգքի կամ ճոգրո-անցեալ դերբայ, որ կը նշանակէ «ընթերցեալ». եւ գո-րի գոյական (յոգնակի գո-րրա), որ կը նշանակէ նոյնպէս «ընթերցող Կուրանի»: Այս գո-րրա բառն է զոր Ղեւոնդ Երեց կը գրէ Կուրայ, յերես 115. «Իսկ Համատոհմ հախարարացն տե-

¹) «Արաբերէն Բառարանի մէջ գտայ Ղո-րա բայը եւ նորա ներկայ ընդունելութիւնը ճոգքի: Ղո-րան նշանակում է «ընթեռնուլ». սորանից է եւ զո-րան ընթերցմունք. իսկ ճոգքի նշանակում է «ընթերցող, ընթերցող զուրանի եւ ուսուցանող»: Ուրիշ նշանակութիւններ չունի»:

սեալ զգործ իշխանին իւրեանց (Վլթի Բի), զի վարէր անպիտան զազրալից պղծութեամբք, հարցին ցհաւատարիմն հաւատոյն իւրեանց, որ անուանին ի նոցունց կոչուի, եթէ որպէս խորհեցին վասն նորա». (ի Աւետեղէ կ'անունն եւ Ստողիկ, երես 130. Վարդան Արեւելցի, երես 74). տես Կուռայ եւ ի Գրիգոր Երէց, շարայարողն Մատթէի Ուռհայեցոյ, երես 518: Ահա ճիշդ սովին մտօք կը զրին Մոզրի կամ Մոզրի եւ Ստորին Հայերէնի մասեմագիրք. «Եւ լուեալ զայս Աբուսահայն՝ էջ յերկիրն Նոմայեցոյ երկու բանակօք, որ կային ընդ նոսա երեսուն հազար ճոզրի (համեմատէ ընդ զէհեք բառին. տես աստէն ի թիւն 28), եւ երեսուն հազար վաճառական, եւ յիտուն հազար ուղա եւ քսան հազար ջորի՝ բարձեալ ուճիկս». Միկայէլ Ստորի, երես 371-372.—«Եւ բազումք ի նոցանէ աղօթակոչօք իւրեանց, զոր ճոզրի անուանեն, ապաստանեալք էին յաղօթարանն իւրեանց (Ս. Բաւալի)»: Կիրակոս Փանձակեցի, երես 92.—«Եմք ճոզրի զենիւ». անդ. երես 202.—«Բառնայ (զգագազան) ի յուսս ճոզրեաց, եւ բոկոտիւք տայ տաննէ մինչեւ ցճփիխա». Վարդան Արեւելցի, երես 127.—«Ասայ նմա բերել առ ինքն մօլլայ եւ ճոզրի». Առաքել Թաւրիժեցի. երես 430. եւ այլն եւ այլն: Սոյն նշանակութեամբ է կարծեմ եւ Գրիգորիսի Աղթամարցոյ կաթողիկոսի ըսելն յիւրում տաղին «Մաքուր պատկերով».

«Իու նազուք տաուս եւ մուղրի թուժար,
Կարկաչօյ կարաւ, զարնան ծիծրոնակ».

այսինքն կարգապաշտ, խօսող թուժակ (զգ. Perroquet):

37. «Պագիկ (Ա) արքայ Հայոց խորհուրդ բարի ի յանձին կալեալ զմեծաչէն եկեղեցին՝ որ ի Քաղաքապետի, անուամբ սրբոյն Գրիգորի շինեալ, որ էր փլեալ եւ կործանեալ, կամեցաւ նոյնաձեւ չափով եւ յօրինուածով յարդարել ի քաղաքին Անդ».
երես 282:

Ասողիկ ըսել կ'ուզէ թէ Գազիկ թագաւոր կամեցաւ շինել յԱնի քաղաքի եկեղեցի՝ չափով եւ յօրինուածով նման Ս. Գրիգորի եկեղեցւոյն որ էր շինեալ ի Քաղաքուզաշարի (տես զանուանէս աստէն ի թիւն 11, Գ), եւ յայնժամ էր աւերակ: Զայս Ս. Գրիգորի եկեղեցի ի Քաղաքուզաշարի կանգնած էր կաթողիկոսն Ներսէս Գ Տայեցի, ինչպէս կ'ըսէ Ասողիկ յերես 88—89: Ըստ այսմ եւ Մովսէս Կաղանկատուացի, Լ. Բ. երես 43. «Տէր Ներսէս... էր հայրազիր նորին Կոստանդնի (այսինքն Կոստանդ Բ կայսեր), եւ զանձիւք նորա շինեաց զբազմապայծառ փարախն բանաւոր հօտի ի Քաղաքուզաշարի՝ զսուրբն Գրիգոր. եւ ի նաւահատին կոչեաց զթագաւորն Հռոմոց»:

Բայց ձեռագիրն Ասողկան, զոր ունին Մխիթարեանք Վինեակոյ, ի վերջեղեալ հատուածիդ փոխանակ Քաղաքուզաշարի կը գրէ Քարուզաշարի. (տես Ինճիճեան, Ստորագր. երես 421, 478, եւ Լ. Ղ. Ալիշան, Շիրակ, երես 51 ա): Ուղիղն Քաղաքուզաշար կ'երեւի ինձ, եւ ոչ Քարուզաշար: Արժան է հետազօտել եւ յայլ ձեռագիրս:

ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻԻԶԱՆԴԱՅԻ:



ԲԱՆՔ Ի ՊՕՂՈՍ ԿՐՈՆԱԻՈՐԷ ¹⁾:

Պարտ է պատմել զբան աղէտիս՝ զգառնութենէ ժամանակիս,
 Որ գործեցաւ յեաին գարիս՝ որ և գրեցաւ բան սուրբ տառիս:
 Ահա եղև խաւար երկրիս՝ Ղարայ ԻւսուՅի չար համբաւիս,
 Բը է պարոն Թուրքստանիս՝ խրոխտ և անյաղժ յայս աշխարհիս:
 Ի իւծեալ բեկէ զմէջս ամենիցս՝ ի Մէրտնայ սկսեալ բերդիս,
 Մինչ ի քաղաք Թաւրէժ տեղիս՝ ոչ որ ընդդէմ կայ այս չարիս:
 Ղեղի արբոյց գառն վտիս՝ գնալով ի տուն Վրաց ալգիս,
 Լցաւ թունովք նման իժից՝ մահացոյց զալգն քրիստոնէից:
 Ուստի առեալ բազում գերիս՝ հնգետասան հազար ի թիւս,
 Եւ հինգ հազար սպանեալ անդիս՝ չարչարանօք ալգի ալգիս:
 Սուր մերկացաւ վաղակաւոր՝ խոցեաց զսիրտս մեր բոլոր,
 Քանչի հեղին արիւն յորդոր՝ զսուրբ մանկանց Միոնի նոր:
 Ի յարկի Տեառն փառաւոր՝ յեկեղեցի խորհրդաւոր,
 Բորբոքեցին հուր զօրաւոր՝ որք այրեցան կտոր կտոր:
 Ամուր բերդեր արձանաւոր՝ և քրիստոնեայք անդ փառաւոր,
 Ի միասին բոցով յորդոր՝ այրեալ եղեն որպէս փայտ չոր:
 Ղամբարապէս նմանաւոր՝ լուցաւ հրով երկիրն բոլոր,
 Որպէս գառինք եղեն մոլոր՝ ի մէջ գայլոցըն պատառօղ:
 Ելեալ հրաման նեռինն նոր՝ բղխեաց զբանն որպէս զբոր,
 Որ սպանանէ բան է շնոհոր՝ երթայ առ Հաղըն փառաւոր:

¹⁾ Այս պատմական սուղաչափութիւնն հանուած է հին յիշատակարանէ մը:

Բամբ հաւատով սուրբ միաւոր՝ բազում բարի գործովք աղւոր,
 Սիրուալ եղեր յաշխարհս մոլոր՝ խնդրեն զգերիս որք խոցեալ խոր:
 Սիրտ չմանայ զիրաց այս որ՝ զե՞նչ գործեցաւ բան ահաւոր,
 Չկարէ պատմել ճառս բոլոր՝ զխեղճ և զաղէտ կսկծաւոր:
 Իսկ ի յերկիրս Հիլանայ՝ նոր Հուաքելի ձայն գուժոյ գայ,
 Որ ի յազգէն Իամայէլայ՝ արիւնախանձն զօրանայ:
 Վաղիւն չննայեն մարդոյ զինչ կայ՝ չասեն թէ կին և թէ սոգայ,
 Զամեն խոցեն ի յանինայ՝ որ ցաւ վերին չառողջանայ:
 Վայ և եղուկըն շատանայ՝ քրիստոնէից ազգին որ կայ,
 Հացրն մոխիր համոյ զառնայ՝ զջուրն արտասուօք ըմբեն նորա:

Գրեալ ԳՄԶ (856) թուին.

Գ. Վ. ՓԻՐՂԱԼԷՄԵԱՆ.



Ա Ղ Գ.

Թէ որքան դժուար է այստեղ, Մոսկուայում, կանոնա-
 ւորապէս տարին երկու անգամ Հրատարակել «Հանդէսը»,
 բաւական է, եթէ յայտնենք ընթերցողին, որ անցեալ
 1888 թ. դեկտեմբերին սկսած տպագրութիւնը միայն այժմ
 ենք կարողանում լոյս ընծայել՝ հակառակ մեր յանկու-
 թեան և առած խոստման: Ներկայ 1889 թ. «Հանդէսի»
 երրորդ գիրքը չէ կարող լոյս տեսնել, քանի որ հանդա-
 մանքները չեն ներում. յետագայ Հրատարակութիւնների
 մասին կը լինի ծանուցում իւր ժամանակին, իսկ առ այժմ
 կամենում ենք աւելի բարեյաջող պայմանների մէջ շարու-
 նակել մեր ձեռնարկութիւնը:

Հրատարակիչ

ՌԿՐՏԻՉ ԲԱՐՔՈՒԿՍԻՆ:



* * *

— Տպարանական և ուրիշ մի քանի հանդամանքների պատճառով չխրոզացանք պահպանել նիւթերի պարս ու պատշաճ դասաւորութիւնն, ուստի և ինչպէս հնէ ընթացողների ներդամաութիւնը:

— Մեծ. պ. Սմբատ Տահազիզեան յանձնելով մեր անօրինութեան «Հանդիսի» I գ. հինգ օրինակ և II-ից վեց օրինակ, մենք ուղարկեցինք հետեւեալ տեղերը. 4 օր. Աշտարակ, 2 օր. Լազարեան Ճեմարանի աշակերաններին, 2 օր. Զարթաթալա, 1 օր. Ղարսի ծխական ուսումնարանին, 1 օր. Էջմիածնի Ճեմարանին և 1 օր. Ն. Նախիջևանի Ս. Խաչ վանքի գլխոջին:

— Մեծ. պ. պ. Ժամհարեան եղբայրները դրուելով «Հանդիսի» II-դ դրքին, 2 օր. էլ թողին մեր անօրինութեան, որ ուղարկուած ենք Նուշու ծխական ուսումնարաններին:

— Ամն պ. թողնելով մեր անօրինութեան I դրքից հինգ օրինակ, ուղարկուած ենք հետեւեալ տեղերը. 1 օր. Մարաղա, 1 օր. Մեղրի, 1 օր. Ադուլիսի հասարակաց ընթերցարանին, 1 օր. Թաւրիզ և 1 օր. Ռաշա:

Յայտնուած ենք մեր խորին շնորհակալքը վերոյիշեալ մեծ. պարոններին:

Ի միջն այլոց ուղղելի են և հետեւեալ

ՎՐԻՊԱԿՆԵՐԸ.

67	եր.	5	տ.	ներ.	11	պէտք է 17.
124	»	4	»	»	եկտորքը — երկտորք	
127	»	2	»	»	վախելչութեան — վայելչութեան	



ՎԱՐԺԱՊԵՏ.

Անորները մէքամ ծերկէկ, էսլի մարթ նես կուսուտնէ—
առջի տեսած մարթըս էր: Մուք-կապուտ, աղտոտ, պուռ-
նութիի լէքէներով եալըխի մէջ փաթտած կուլօր պան
ուէնէր խօլթըխին տակը: Պարօվ-Ս.սծու պարին:

— Ի՞նչ կուզես:

«Քեզի մէկ խընթըխը ունիմ, վարժապետ», ասաց:

— Ասա՛նայինք, ի՞նչ է խընթըխըս, ասի:

Մեր տեղի առէթօվ՝ Հրամեցէքի չինայած, մարթը ա-
թօռքը քաշեց, նստավ ու չօխտանվա փարեկամիս պէս-
նակ, լաֆի պրոնրվեցավ: Մինք, Հայերըս, աթթիաց պէ-
թէր փոսթի մարթիք ինք. մէկզմէկու Հետ ցէռէմօն,
պատիվ-պան չիտինք. ան՝ խազախի, ես՝ մէկ ուրուշ օտար
մարթու Հետ է վօր՝ մեզի շէքօվ պրոնել կիտինք. Հայի
ուսթ քանք նր—վօվ կուզէ թօլա—չուղած տեղերէս, ինք-
նիրէն պերաններէս փիրփիրի, Հօվարտա խօսկերը ճուրի
պէս կրվազէ. մէկզմէկու Հետ նըստած-էլլածներըս խախօ-
լէն պէթէր կըլա. «Ի՞նչ վ, ճիւննապէթ, զէվզէկ, անասընր,
մարրտ-Հարրտ ասպէս, ամպէս անիմ» աս մեր ավուրական
խօսկերն է, մեր լաֆին ու սէօՀպէթին աղ ու տաքտեղն
է, ատ ալայը—ես չօխտան տէյէմիշ արիլ իմ—մեր փոսթի
եղածէն է, ասել է քի՛ մինք մէկզմէկու պէթէր քիտրինք
ու պատիվ կուտանք, չունքի, ուսուսին պէննակ, սուտ-մուտ
ցէռէմօններ չինք պանեցնուր, մէկզմէկու չինք խախիր. ինչ-

պէս օր նեսերէս թէմիզ ինք նը՝ ամպէս ալ թէմիզ տուսերէս քրցուցնունք... Է՛յ- շտէ, ինչ ալ լանը՝ խօսկըս ան էր, վօր իտա նես մտնօղ մարթը, առանց հրամեցէք ա- նելու, աթօռք առավ նրստավ: Քէ՛ճըս հարցուց, պապայիս, մամայիս, սայիսխլըիս, տուղոցըս «ինչ անելները» իմացավ. հեռավօրներըս աղէ՛կ ին, ըռի՛նտ ին, չօխտան կիր չիմ առնուլ: Պէս - պելլի էր, վօր մարթը, առչի ռաստ էկածն ալ լար նը, կէնէ պէթէր քըսիրէր եղել է ինծի: Ասկէ եթկը կրնաս, խատի՛ր իս ասելու քի՛ մինք, հայերըս, մէկըմէկու սիրտացավ, բարի-կամեցօղ չինք:

«Վարժապետ, ես քեզի մէկ խընթրինքի էկիլ իմ, ասաց նօրէն:

Ես ալ նօր-նօրսէն «ի՛նչ է խընթրինքըս», հարցուցի:

«Խընթրի՛նքըս», ասաց, խօսքը էրկընցնելէն, «խընթրի՛նքըս»...: Էրկու մատովը քիթին ծարը պրռնից, էրեսը քօշային տառցուց, պօռաղանի ծան հանելէն, էփպէյի պուռնութիօս խլինք ապուլ տուվից տահանօր լըվացած կէտինին, ամպէս օր թամամ խազի... Եթքէն փէշօվը քիթը պըրըլը սըրփից... «Խընթրի՛նքըս, ասաց, խընթրինքըս աս է, լսօղաց իմ, Փէթռէպուռքէն եղել է կնտուալ ախպարըս էկիլ է... ան չէ ամա՛ տուն կնտուալ ախպար ունիս-ինչ, լրած չէի»:

— Հա՛, ունիմ, էտէվ, ասի սիրտըս նեղանայէն:

«Մեղա՛. առչի լրսածըս է. աս վօրն է, Իվանուշը չի լա».

— Ձէ՛, Իվանուշը չէ՛, ասի:

«Հապա վօվ է, Ավաքը չի լա».

— Ձէ՛, չէ՛, ան իմ խտիր ախպարըս չէ՛, էմճէյիս օրթին է:

«Վօր էմճէյիս, ինս մէքամ օլմաղ Վէվօրք էմճէ ունէիր նը—նարս՞ օրթին չի լա».

— Ձէ՛, ասի, տէր Պետոսիինն է:

«Ստամ վնգ արի, ինս Սթառափօլի՞ տէր Պետոսին

օրթին է... նայիս նր, չիտէի, մեղա. պռնվա տէր Պետոս, օրթին կնտուալ էղավ—Համ...

Փիրէս էլլավ:—Ստամ, խտա ինչ ասելու իս նր, ասա՛, շինտըն մեղը՞ արբիլ ին ուրուշներուն կնտուալ օրթիքը Համարելու: Ստի ու էլլա տեղէս, վօր խօսքը կարճ կրտուէ, ամա միսաճիրիս ումուռին ալ չէր. չունքի մտածը Հայի տուն էր. Հայի տունը ալայը մէկ է, վօր իրին սօփանի տունն է: Մինք մէկգմէկու Հիտ ախպօր պէս պան ինք. ցէռէմօն մարթավարութիւն-պան Հային հէչ կրվայլի՞... խատիր է նր մէկը մեր հին վանցաններուն, ատէթներուն չի Համարի, ես Հակառակ էրթա՛ մինք նարան «քսօվկցնուք» ալ չարած պաներըս չի մրնալ, չասած պաներըս չի մնալ, ճիրմակը սեւ կանինք, լուն տեպէ քրիսօրթինք՝ ամպէս ապուլ կուտանք. մեր պիրանին մէջը միսի կուտօր չէ վօր՝ լիւզիւ է, ան ալ՝ Հայի լիւզիւ է, անկից ալ աղէկը կուզիս նր՝ նաչլուվանցի Հայի լիւզիւ է.....

«Մն չէ ամա, ասաց միսաճիրըս, վարժապետ, հրամանքըս ատէթ ունի՞ս ուսի խմելու»:

— Զէ, ասի, ուսի եալ չիմ խմիլ, կինի եալ չիմ խմիլ, փունճ ալ չիմ խմիլ....

«Հապա ի՞նչ քրիւրմիս», հարցուց:

Միրտըս Հայհայ խաթլամիշ կրլար. ամա կէնէ ինքս ինծի պրոնեցի:

— Ինչ պիտի խմիմ, ասի, շտէ—ինչ օր մարթիք քրիւրմին՝ չայ, խաճէ:

«Խահվէ՞. նիչէփօ, ան ալ քէշ չէ»....

— Կուզիս-ինչ, հարցուցի:

Ինծի ճուղապ չի սուվից. տուռին քօվը օրթիս կայնած էր. «Հածէ՛, պրզտիկ, ասաց օրթուս, կնա կանկային ասա՛ մէմէկ կավաթ խահվէ թօ խրրիկէ... պատին քօվը պամալ մէկ չէրէն կօվի... տեսա, պիլլի է վօր կօվ կրպայիս, կաթի-մաթի ստակ չիս տար... Հածէ պրզտիկ, կանկային

փարէզ վարա, ասա վոր, Թաթիոս-ան փարէզ վարավ, ասա, խաչվէն ճիւղի կաթով չի տաս, ասաց, տոտ, ինա միտա-
Ֆիրի Համար չինիով Հաստ խայմախ պայեաժ ունիս նը,
ասա, ան խրիէ, ասաց, ասա, կը լըսի ինա. էյ-չտէ, կնա,
ատպէս ասա... խէ խէ խէ խէ»...

Ուժէ տտէնը Հասիլ էր աս տէնքսըղին ձիվէն պրոնե-
լը ու մաՀլային տուռը ցուցնելը. ամա կէնէ ինքս ինծի
պրոնեցի. ինչ մեխքըս պայիմ, Հայի լիւզիւէն վախցա:

— Ան չէ ամա, ասի, Թաթիոս-ա, տուն կիտիս քի մօռ-
ցիլ իս ինչի Համար էկածըտ:

«Չէ, ինչի պիտ մօռնամ օր, Հէչ ալ մօռցած չիմ. ես
քեզի մէկ խընթրիքի էկիլ իմ»:

— Իսա ինչ տտենէ՝ կասիս կասիս, չիս ասիլ, ասի:

«ՍիՖթէ թօ խաչվէն պէրին, սէՖայով կասիմ: Որնչպէր
ալ լամ նը—ինչ մեխքըս պայիմ—աղէկ աղէկ պաներ պէ-
թէր քիսիրիմ... մեխք մեխք, զավեանի արած չիս տու-
նըտ կինի ես ոսիսի պայելը, ան ինչ Հօրըս ցափն է վօր,
մէկ-երկու քափիկի պան կառնում, քովի կրտրնիմ, տօլա-
պին քօչան թօ էրթա, թօ կենա... մարթ իս, աշխարք է:

— Թաթիոս-ա, քեզի մէկ խօրթ պան ասիմ, ասի—ուժէ
տանակը օսկօռին Հասիլ էր—ես թէզօվ տունէն պիտ էլլիմ.
ինչ ասելու իս նը՝ ասա, խալսէ. ես քօրծի տէր մարթ իմ:

«Է ինչ ատխատար աճէլէ. քօրծը քեզիմէն պիտ փախչի՞
ինչ. ան քօրծը եփ ալ լա նը՝ կըլա, քօրծին խալսելքը կա՞
վօր...: Սմէն օր քօրծիտ Հեա իս, մէկ օր ալ իմ Հեստ էղեր-
տա, ինչ կըլա վօր»...

— Իսա ասելիքս միւճէրէթ ասօր պիտ ասիս, ուրուշ
օր չի՞ լալ-ինչ, ասի, ամա միթիս ասպէս էր «մէմը ես
քեզի շընարի կուլսէս ցանիմ, մէմալ էրեսըս տեսնուս նը՝
էրկուս թօ լա»: Սմա Հարամ սատկելու փէզէվէնկին զա-
վակը միթկըս Հասկըցավ:

«Մէմալ քեզի վօվ տունը պիտ կուանէ, տանՀալաթ մէ-

մը սասոր թափը ցըքեցի, ան ալ կուզես պօջ խաղցունելու, տուն կիտին, քանի՛ օր է էտէվէտ ինկիլ խմ սասպահթան քուքամ, կասին «Սապլինին Ակօփճանին» կընացիլ է—նարա տուղօցը կըկարթացնուս-ինչ է — իրիկվուվան սէմթ քուքամ, կէնէ կասին հօն կընացիլ է, սաէն ատէն արապա-խափսիտ քօվը կէս սաաթ նա՛ֆիլէ պէքլէմիշ արածս էղիլ է, ամա չիս էրէվնալ, պէլլի պան է վօր ուշի կըմընաս»....

Մարթը, վըայէն պէլլի էր, եախայէս վազ քալու միթի չունէր, մէկ ծարէն լաֆի կըպօնէր ինծի: Շատ չափալա-միշ էղա սս պօշպօղաղին եախայէս քակելու, ամա տուղը չի կտա, նա իրեն ուզեցածը արավ, ես իմըս չի կրցա ա-նելու:

Արալըխտա խաֆէն ալ առօք փառօք նես պերին, ճանըմ՝ ճանըմ հաստ խայմանն ալ վօր հօրիթա անուշ սիրիլի մի-սաֆիրներու համար հազիր արած էր, փատնօցին օրթան տըրած էր — կինիմարթիք ի՞նչ կիտնան էիօղը վ՛օվ է — կիացիլ ին քի անուշ սիրական միսաֆիրներէս մէկն է, ա-նիսէ փըռնավելօվ փախ տալու լաս նը՝ փոնավիլին ալ էնկ փէռատը պիտի փնտուխ ատսօյ միսաֆիրին համար:

Եփօր չէչակ Թաթիօս-ան պաշլայից ծանարո պարակ, ինչպէս օր ինքը սասց՝ սէ՛խայօվ խաֆէն կու՛մ կու՛մ խը-մելու նը, մէմալ նայիս քիթէն մէկ պուտ պուռնութիօա ճուր կաթեցավ կավաթին մէջը. տեսա նը, մազ մընաց փրի-սան փրիսան պիտ քայի... Ծը՛յ... փրնթի կղածօվըտ, սաի միթիկիս մէջը. ամա Թաթիօս-ային հէջ ումուռին ալ չէր. մօրը կաթին պէնակ հէլալ հէլալ խըմից աղլի քափիթօվ խա-ֆէն, ու խըմէէն էտէվ աճըռմանք պը՛րըսը պաշլայից լը-ղելու՝ լիւղիւին ծարը չափ քիթին ծակին հասցունելէն.....

Մեր տեղը սս սաէթն ալ կըիմարթօցրս մէջ պէթէր փըռված է. ինչ ալ լա նը կէնէ պան է իրեն համար, ճէպի Ֆայտա է. ճուրի, սապօնի շատ ստակ չի էրթալ. չէնէ Ասվածըտ քիսիրիս, խընչիլ ուղինաս նը՝ փրթօքիտ մէջը

իմիշ խընչէ, քիթ ու պուռունկ սրփելու լաս նը՝ փլաթօ-
 քով-իմիշ սրփէ՛. աա ի՛նչ խօլայ պան. ատօր, Ասվաճըտ
 քիսիրիս, ճուր ու սապօն կօքտէ, ատխատար խուլամիշ
 լայուն փլաթօք կրտմանա, աո՝ սապօնը, ճուրը, փլաթօ-
 քը պէտիհավա՞ է ինչ... տուն պանըտ նայէ՛, մինք հայ
 ինք, մեզի՛ առպէս ցէռեմօններ շատ չի վայլիր. հինութ
 առէթներէն հէջումասա, խտիվունք ալ լա նը ամուր պայ-
 ինք... Ասվաճըտ քիսիրիս խարճերըս քանի կնաց, շատցավ-
 մանէթի առած պարին կրպէրինք տօխասն հինկի կուտանք,
 չափալաման ալ մեզի քեար, ատօր ստակ կրտմանա. հա
 նայէ, խանաթը տռօկէն վազ էկաւ Ֆայէթօն եա լինէյքա
 փէյտահ արավ, խատի՞ր իս տուն ալ չանելու, հալըս
 տանը հինկ-քան մանէթնօց քուչու կրպրոնէ, առանը
 էրկ-էրկու ռիսաք ծի կրպայէ, խատի՞ր իս տուն ալ առպէս
 չանելու, հալին սայեախլըն, ախէկը պուլվաութ կէրթա
 մուզիք լըսելու—մուզիքն ալ մուզիք լա պարէմ, Մօքօվ
 ինա ազպարները մուրայու քրքային նը՝ թամամ ինա խա-
 րէր պան—անխորա եալ քասթիւմ պէթք է նացա, խա-
 տի՞ր իս տուն ալ տիրացինէտ ետ մընայու. հալըս....
 ատամ, ատ օր վօր մէկը սսիւմ, շընտրիվա թանթանակին
 չէչիտը շատ... Էյ-շտէ, անօր ալ փաւք, վօր հէջումասա
 մեր խօլօք էրիմարթիքը տուռը կրտիլ ին սապօնին ու
 փլաթօքին հէսապը ամուր պրոնելու: Փլաթօքը ճէպէրըս
 թէմիզ սօտուն մընա տեյին, մեր մարիթիթը նաչըւվան-
 ցին մէկ ուրուշ Ֆէնտ ալ կրտիլէ. նէֆէսօվ քիթէն աղլի
 ավուճ-ավուճուկէս խըլինքը քրքաշէ, պերանը կրպէրէ,
 անկից ալ լօփ կանէ, վար քութուքնէ. քիչ մը կանելու
 պան է ամա, կէնէ նիչէվօ, ճէպի Ֆայտա է. աո զավէտէ-
 նին—ես քեզի ասիմ՝ տուն մարթու չասիս—[թէկարան մեր
 քէոթիկ կինիմարթիքն ալ ունին. աշթօթ, նիչէվօ, շէն
 կենան, պէլլի է վօր էրիմարթօց աշխատանքը էմէկը կը-
 մեխկընան...

— Էտէ՞վ, ասի Թաթիօս-ային, եփօր պարապ կավաթ-ները ես տարին նը, կիտիպքի տուն մէկ խընթրինք ունէիր....

«Ա՛, խընթրի՞նքըս.... ես քեզի, ճաննըս վարժապետ, զահ-մէթ ալ լա նը, իսա պանը պիտ խընթրիմ. կնտուալ ախ-պօրըս համար կասին քի Փէթուէպուռքի Էնկ-վերի նէվէռ-սէթնիը տղաք կրկարթացունէ.... ամպէս է չէնէ չէ»....

— Է՛, էտէվ, ատպէս թօ լա, ի՞նչ կուզիս ասելու:

«Ես ալ մէքամ օրթի ունիմ»....

— Էտէ՞վ:

«Պէթէր կարթուժի հավէս է. անխատար կարթուժի չէ՛, ինչխատարօր կրելու, շարաթրելու. ա-վե-լի՛ քըսիւէ իտա շան-էրեը կրել, ասաց ու աղլի փլաթօքօվ փաթտած կուլօր պանը պաշլայից կամոց կամաց քակելու, մէկ ծա-րէն քըքակէր, մէկ ծարէն ալ կասէր. «ասպահթանէն չախ ինչը իրիկուն թուխթը, տիվիթ-խալէմը առչէվը ճ՛րո ճ՛րո ճ՛րո կրկրէ, կրկրէ, կրկրէ ու՛ եթկէն կրպաշլայէ աղլի շարաթրանքը կարթալու. ամպէս անուշ էզկիօվ կրկարթա փօր շունին զավակը՝ մարթուս հօշին քուքա. մէմը արի՛, մրաի՛կ արա՛ պէթէր քըհամիս»:

— Էյ ի՞նչ կրկրէ, կրնամ՞ մէմը աչքէ անցնելու օր-թուս կրրածը:

«Հապա, հապա, եօրիթա հետս առիլ իմ պէրիլ իմ ո՛ւ, իսա տէսթէ թուխթը նայէ՛», ասաց, խօրթմուտէն մէկ տէսթէ ծարէ ծար կրրած թուխթ հանից. «խախատար պանը նարա կրրածին հարուրում փային մէկ փայն է. տունը տահա շասասա, ալայ տօրապնէրըս, թարաքնէրըս. սէքիին հաշչէքնէրը պէրնէ-պէրան կրուածին»....

— Պէ՛ր մէմը նայիմ. ի՞նչ պան է իտա, ասի:

«Մա՛», ասաց ու աղլի տէսթէ թուխթ ծեռքըս տուվից:

Առի ու պաշլայեցի աչքէ անցունելու:

Առջի կրէսին վրան ասպէս կրրած էր.

«Փառաւորեալ, օրթնափանեալ, ժամանակեալ»

«Քրիստոսի ծառա թօրօս թօխմախօսւս+ամէն»:

Ասկից պան չի հասկըցանք: Մէկալուժ էրեսը տառցուցի,
անկից ալ առջինէն ավելի պան չի հասքըցաւ. անտեղն ալ
ասպէս կրրած էր.

«Զժամանակ, զթաքավօր, զբազմամեղ,

«Զքօխքօթա, զփիլիպօս և զառաքեալ,

«Զավետարան, զաստվածաշունչ և զնարեկ,

«Զհօրթանան, զմկրտեալ և զովանէս.....»

Մէկքանի էրես ապուլ տուվի ու եթիլը աս խօսկերը
կարթացի.

«Եւ ետես զաստված, զի քրնացեալ է,

«Զցեոին և զօտին համիուրեալ է,

«Զմախթան վերին նա ասացեալ է,

«Զհեթնոց, զվերջնօց նա կօրծանեալ է,

«Համիառնամ քառին վասն մեր մեղաց,

«Օծուժեամբ քիստօսի և հոյժ տանչանաց,

«Մեղա՛ երօրթուժեանըթ առաջի սեղանին

«Փազմամեղ մարթոյս զաթամա վօրթին.....»

Քանի վօր ես աչկէ կանցունէի աս խէնթ կրրվացքը, հարը
կիտէր քի կարթացածս մէկ թէյֆէ պան է, պէրնէն շօ-
ղինքը վազելէն, աչկերը ճուրտած, խունտուժ-խունտուժ
էրեսըս կրնայէր, կիտիս քի կուզէր ասելու «էտէ՛ վ, տեսա՛ր,
ասածըս խօրթ էլավ. ինչպէս կիտուն օրթի ունիմ. սո՛ւտ
կասէի քի օրթիս իմաստուն է»:

Տէֆթէրը քօվի արրի ու ասի Թաթիօս-այլին «ի՛նչ տէ՛լին
աս տէֆթէրը ինձի պէրիլ խ»:

Մարթը խայթ էզավ. հէչ միթկէն չէր անցունէր քի՛
ես ատպէս հարցմունք անելու քամարցակիմ:

«Հէ՛», ասաց, կէս հարցունելէն, կէս արմրննայէն:

— Ես քեզի կասիմ, ասի, ի՞նչ տէ՛յին խառ տէ՛խթէրը
ինձի պէրիլ խա:

«Զի համնեցար-ինչ է», ասաց Թաթիօս-ան, առարդ առ-
արդ վրաս նայելէն. պուհուշի աչքերը ամպէս չըլայջով վրաս
տընկիլ էր վօր, կիտիս քի, հում հում ուտել կուզէր ինձի:
«Ի՞նչ է, չի համնեցար-ինչ», հարցուց նօրէն:

— Աստեղ համնելու պան կա՞ վօր, ասի:

«Ի՛, ի՛ծրթ, ասաց, մըսընը անելէն, առ սալթը ծեր կը-
րածը— շատ կըրած պան, պէրէքէթ վէրսին, չունիք խօմ—
պանի սըրա կըլս, տոօվ անուն պատէվ, չին-պան կառ-
նուք, հայխինը պանի սըրա չի լալ... ինչէ՞ն է տտ...»

«Օրթուս կըրածը, ինչխատար կրտեսնուս նը՝ ամխատար
է ինչ տուն մէմը արի՛նձի նայէ, աօլպաները տեղ մը-
նացի՛լ է վօր, ալայը իլնիքցուցիլ է մախտումը. տուն
տահա չիս համնիլ... ես հօս էկա-նը, մախտումըս, տահա
կըկըրէր... չիս հավատար-նը, իրիկվան սէմթ, մէկ զէմպիլ—
պան օրթուս շալակը տընիմ խրկիմ. աչքօվըտ տեսիր»..

— Վօվ կասէ, ես քըհավատամ օր՝ օրթիտ կըրիլ է ու-
կըկըրէ եալ, ամա...»

«Քըհավատաս-նը— շտէ, հօս նայէ, մէկ աղէկութին արան,
ախպօրըրա կըրէ, իտա նեվեոսէթ է, ինչ հօրս ցամն է, առ-
նէ օրթուս, եա վարպետ, եա վէրէկացու թօ տընէ... շտէ
ան ատէնը կիմանանք օր տուք ալ մարթումէ ծեռքերէտ է-
կած աղէկութինը պեամիչ չիք անիր...»

Տեսա վօր տա մարթուն հետը աղէկութինով պան ա-
նել չիս կընալ. պէթի էր տարան տիւփ-տիւզինա պանին
էղէնը ասելու:

— Ես քեզի մէկ պան պիտ հարցունում, ասի:

«Նայինք ի՞նչ պիտ հարցունուս», ասաց Թաթիօս-ան:

— Զօխտան է օրթիտ ասպէս պաներ կըկըրէ:

«Սխար-ութը տարի պիտ լա թահմինօվս, ամա տեղով
միթկըս չէ. ի՞նչ է վօր»..

— Օրթիւս վճռաէկա սօրվել է:

«Մէտօմը առէն խօնախ կրնաց-էկավ. անկից քաշեցի Հանեցի, տիրացու Ասվատուրին տուվի. Հօն ալ շատ շատ՝ իրեք-չորս ամիս մնաց ու ալ վազ էկաւ վարպետ էրթալէն: Ես քեզի մէկ արմըննալու պան ասիմ. օրթիւս ասլը կարթումի Հավէս չէր, միթէն ալ պէթէր կուլ էր. ամն ինչ-վօր կիտէնը, ալայը իրմէն է. Սաճու-շունօրքն է. կիրք ասած պանըտ շընտըն ալ խըթ կըկարթա. նարա զէնեաթը քը-շեր-ցօրեկ կըրել-շարաթիւ է. ինչ վօր իտա կարթացիր նր, տօլապնիրուս, թարաքնիրուս մէջի ալայն ալ միթէն ուշ-տուրմիշ արիլ է: Չիմանաս վօր ուրուշնիրուն պէննակ ես սօրված պանը կէկրէ, ես կիրքէ սերտած պանը, չէ՛, ամե-նէ-վին. ինս ինչ կըկրէ նր՝ ալայն ալ իրէն սօփանի կօլօխէն կըկրէ, կըկրէ, կըկրէ՝ քըթաթօի, մէտօմը խալէմին ծարէն կըկրծ է, նօրէն կպաշայէ կըրելու. — շտէ ասպէս օյինճախ պան է օրթուս պանը. ես քեզի խաշօվ ավետարանօվ կրնամ էրթում անելու վօր օրթուս կըրածը ալայը սօփանի իրէն միթէն է... Հասպա տուն ի՞նչ կիտէիր: Ես քեզի կասիմ-նէ, ամպէս իմաստուն տղայ է վօր՝ Հագարի կօլօխ է»:

— Քանի՞ տարու է, Հարցուցի:

«Օրթիւս», ասաց Թաթիօս-ան, աչքը առեքին վերուց ու պաշայից Համպրելու, «եփ, ասաց, ախացքը քա նր, քսան չորսէն կէլէ, քսանհինկը կումուսնէ... աս ի՞նչ-տէյին Հարցուցիր օր»:

— Ես կօրեա կուզէի ասելու քի՛ օրթիւս պէքիմ տահա պզտիկ է, խայրէթ անէինք աղա Լաղառօվին վաժատունը խօթելու, չունքի Հօն, լսողաց իմ, աս սօյ տղաքը մախպուլ ին. Հօն մէքամ վարժապետ կար, նա եալ, կասին, աս սոյ տէֆթէրնէր չէրէն չէրէն կըրիլ է. շինտի, սէօզաէ, միթէ ունին տպելու, ստակ թօփ կանին...»

«Մըցըր, սախըն», ասաց Թաթիօս-ան, «օրթիւս ամպէս

մեծ-քիթ է վոր, թամամ ինծի էլլել է. նա՞, էրթա՞, մարթում է պան սորվի, չէրթա՞ր պարէմ... Նարա ուղեցածը ատ չէ ու... Մինք լըսողայ ինք, Փէթէուպուռք, կասին, մէքամ տուն կա, ան քու ախպորըտ նիվէուսէթէն տահա՞ վեր, անունը լիւղիւիս վրան է ամա՞ չիմ կուտնուլ, էյ եալ, թաքավոր-կայսերին հրամանքով հօն նոմայ ատպէս շարաթրող մարթիք թօի էղել ին, չինէն, պատիվէն մատտէ, վօրը չորս հազար մանէթ կառնէ խազնայէն, վօրը հինք հազար,— շտէ-հօն կուզէի օրթուս տեղավօրցունիլու, վօր իրեն ժալօվնին կիտնար, ու քըշեր-ցօրեկ իրեն թուխթին-խալէմին մուխայէթ լար... աղեկուլթին անել կուզիք նը՝ շտէ իտա տեղը խօթեցէք օրթուս, ի՞նչ կըլա, հօքուներուս վարցք է:

Նօր հասկըցա վօր տացա իշտահը Փեթեուպուռքի կայսերական ճեմարանին վրան պացվիլ է: Օրթին խէվ է, խէվ է ամա, աճափ հարն ալ անկից պէթէր չէ: Սրթըն առաէն էր աս պանին վերջը անելու:

— Ես քեզի մէկ պան սաթիմ, ասի. խօրթ է, օրթուս Փեթեուպուռք պիտի խրկրվի, ամա քու ասած տեղըտ չիկիտնաս. քաղաքէն տասվիրէք վէուսթ հեռու, մէքամ ուրիշ պալապան տուն կա, կունը տեղին, ատօր-համար անունը «տեղին տուն» է. շտէ օրթուս հարձ տեղ, հէմ պէտիհավա, հէմ ալ նարան Փայտալը:

«Հօնի հախը քանի՞ է»:

— Հօն հախ չի քա, չունքի հօն օրթուս պէնսակ հիվանաներուն ճար կանին:

«Օրթիս հիվանտ է ինչ. մախսուլին հէչ մէկ տեղն ալ չի ցավիլ, պօխքի պէս սաղլամա տղայ է»...

— Օրթիտ չէքի հիվանտ է, հապա ալայ-մալայ, վօթկէն կօլօխը խէվ է...

«Է՛, օրթիս, Թօրօսըս, Թօրօսըս խէվ է... սուս կասիս, պէրանըտ պրոնրվի, տուն ինքըտ իս խէվա... Մարթը կատ-

ղեցավ: Պանր ան տէրէճէն հասավ վօր՝ քուչուռիս ծան տուվի, կրտեղէն կրտկրտեղէն Թաթիօս-ային մահչային տուռէն սօխախ ապուլ տուվի:

Հօն ալ մարթուն սիրտը չնչավ մէկ ալայ մը հալի թօփ արավ կուլիսուն ու սասթ-սասթուկէս քրքից, ա-նիծից ինծի:

Վրա անցավ մէկ շափաթ:

Մէկ օր, էկէնճէյի համար, պազար էլլել էի: Հէռուէն *** ժամին իրիցփօխանը առչէվըս էլլավ ու խընտալէն ասաց:

— Տուն, էղել է, Թաթիօս-ային օրթուն, Թօրօսին, ի՞նչվ է ասիլ իս էղիլ է:

«Հա՛, ասիլ իմ. ի՛նչ է վօր»:

— Փամիլըյ, իտա մարթն ալ խէվ լա նը՝ մեզիպէսնե-րուն խօմ՝ ալայ-մարայ զինճիլամիշ պիտ անին:

Սուս կեցա, պան չասի:

— Ատպէս մարթ մինք շատ ունի՞նք օր. փամիլըյ, մախտումը հէչ պան սօրված չէ, ամա միթկէն ամպէս պա-նիլ ուշտուրմիշ կանէ վօր, մարթ փոօսթը կարմըննա կը-մընա. շարաթրութինն ալ թամօմ Նարեկին ես շարա-կանի Ֆասօնօվ է. խօսկերը հալիս քոափառնակ՝ խրթի՛ն, հէչ պան չիս հասքընար. միթք փանին ալ ալայը տավա-ծափանական է... Չէ, ինչո՞ւ մարթուն սիրտը ցավցուցիլ իս վօր. փամիլըյ, մարթը իրեն համար կաշխատէ-շտէ, թօ էրթա, թօ կըրէ. անկից զարար չի քա՛ Ֆայտա չի-լանը: Ատպէսնեկուն ուսթ քանք նը, մինք խայթա սիրտ պիտի տանք, առաչ քաշինք, հացի տէր անինք, չէքի ա-նունը խէվ հանինք, քանճուղ անինք օղօրմէլին...: Ես նարան իմ ժամիս թուպրօցին մէջը վարժապետ արրի: (Ան առաջվանին, միթկըտ է, ինս տուսեցիլին-տա, տուս արի: Կիտուլթիսին թիաց, մէխքը առնել չուզիմ, նիչէվօ,

քէշ չէր, աղէկ էր, եփպէժի պան կիտէր, ամա ինա ազի-
աթսքի պուլաշըն մանեռը պէթէր խուլամիշ կրլար տու-
ղօցը հեա. քանի վօր ուտոպնի վարժապետ չէքարնը՝ վի-
րայէս չի հասկըցօղըս կըլայի, ամա իսա Թօրօսին ուսա
էկանը՝ համան Ֆէլան մունտառ ատէթը մահանա պերի
ու փախ տուվի: Աս Թօրօսըն, տուն ինչ կասիս, չէղած
վարժապետ է: Թամէն տասվերկու մանէթ տալէս մատտէ,
ճէպէս ալ հինկ մանէթ պաշխա կուտամ. թօ էրթա, թօ
աշխատէ, մախսումը: Ամպէս ալ կաշխատէ վօր, իրիկուն
ցօրեկ վօթիը վարժատունէն տուս չի տնիլ, փիւթիւն օրը
հօն է: Ավէլի հօշիս անօր էկավ վօր, չօքաիլ վօր ինքը
քըշարաթիւէ, տահա աշխերտներուն ալ աս Փասօնի ոխի-
մաներ սօրվեցուցիլ է կըրել. աղաքը քերքերը թարաք
հանիլ ին, ուժէ քերք չին կարթալ, փիւթիւն օրը ոխի-
մա կըկըրին. իսա իստար — ծեռքը վար արավ, պիպտի
սղու պօյ ուզաց հասքըցնելու — շան լախտները Նարեկի
Փասօնով քուսիտունակ ոխիմաներ կըկըրին... Զէ, նիչէվօ,
աղէկ մարթ է իսա Թօրօս վարժապետը: Նա՛Ֆիլէ մախ-
սումին սիւսը ցավցուցիլ իս:

ԱՒՏԱՄԵՐԿԵԱՆ:



ՎԱՐԹԷՎՕՐ.

(խաֆաֆ Օվանէսին պատմածը):

1.

Ես ան մարթոցմէն չիմ, որ, չունքի ինքս պառվիլ իմ, հինցիլ իմ նը, հին մարթիք, հին ատէթ ու հին վանցաններ կօզիմ ու ամէն նոր պանի նոր մարթու վըայ մէմէկ փութ կուտնում. չէ, ես ատպէսներէն չիմ. աղէկին աղէկ կասիմ, կուզէ հին ըլա, կուզէ նոր, ամպէս ալ՝ քէշին քէշ կասիմ, կուզէ պապերուս պապաներուս ատէնվայ պան ըլա:

Մեր Նախչուվանը տաՀա քանի՞ տարվա քաղաք է վօր, թահմինովս հարուր տարի տաՀա անցած չիպիտի լա նարա թէմէլ ցըքած օրէն. (մէմը խելքըս վրաս, աղէկ մը համ պրիմ նը՝ տեղով կիմանանմալ. թի՛-ֆ թի՛-ֆ, հետս թէզ պէՀս առած չիմ. չէնէ անօր հէսապը կուտնելը խիսա խօլայ էր. ինչ ալ լանը): Նախչուվանը՝ հայի քաղաքներուս մէջ էնկ նորն է. Թի՛ֆլիս, Աժաէրխան—ան շատ հին քաղաքներ ին. նացա խօրթօղ թաքաւորներուն անունը, պէքիմ, կորցըված մոռցըված ալ է. չունքի նացա թէմէլ ցըքօղները, սէօզտէ, ես՝ Հայկին, ես՝ Տրթատին օրթիքն ին. Հայկ ու Տրթատին մեռնելը, հէջօմասա, հինկհարուր տարի կըլա, պէքիմ աւելի եալ. նացա քերեզմանին քարերը չօխտան փըրթիլ ին, եօխ էղիլ ին: Անատէնները կիր ռախամ լայը պէթէր իշկիլլէ է: Մինտի Ասվածտ քիսիրիս, առանց կիրի, առանց ռախամի խիվօր հէսապը ի՞նչպէս կուկուտնուն մարթիք... մելքիտ տէրը լամ, որ խտա շնտիվա՝ հին ատէնվա վըայ պատմութին կըրօղները ալայը փորերէն ույտուրմիշ չանին նը,—ինծի հարցունուս նը՝ նացա չըզմըզածը ալայը սուտ է, ալայը ույտուրմաճա պաներ ին:

Ամնա՝ առպէս չի կիտնաս ասվածաշունչ-աւետարանը. ան՝ տեղով տեղով կրթած պաներ ին. կիրքի մէջ ալ կրթած է որ՝ մէկ օր Ասված նստիլ էր պուռլէկէնին մէշալը ին մէջը, պուռլէկէնին մէշալընն ալ կէրվէր կէրվէր՝ չէր վճարիլ. Ասված ասաց «Մօւէս Մօւէս» ասաց: Մօւէն ալ ասաց «Հրամէ՛ Տէր իմ»: Ասված ասաց. «Ինն, իմ պատմութիւնս պատմէ՛ իմ ժողովուրթին»: Մօւէս ասաց «Ի՞նչ պէս պատմիմ օր՝ լիւզիւս թլվատ է», ասաց: Ասված ալ ասաց «Լիւզիւս թլվատ թօ լա տա, մինք անօր եօռուլը չի՞նք կուտնուլ-ինչ, ասաց. պերանտ մէմը պանց, նայիմ»: Մօւէսը պերանը պացից. Ասված ալ նարա պերանը իրեն տունչը փրչից՝ խրզղըն էրած քէօմիւրի նմանակ:

Սունչ որ կասին նր՝ քիրոց խօսկ է, որ նէֆէս ասել է: Է՛յ շտէ, ինչ ալ լանր: Եփօր Մօւէսին փորը Ասծու-նէֆէսով իլինքցավ նր՝ Մօւէսն ալ Ֆսէռափսօ իմաստուն-կիտունի պէս մէկ պան էրաւ (սիֆթէ նա պայլըսձի, ծուկ պրունող էր), անցածն ու քալիքը մէկ մինուլթվա մէջ սօրվեցավ. առավ, ճանրս, էրկուստ քարէ տախտակ ու անոնց վրայ պաշայից կրելու, աշխրքիս էրեսը ի՛նչ կայ, ի՛նչ չի կայ՝ ալայը կրից, Տրթասն ալ Հոն է, Քիրքօր լըսավօրչէն տասվերկու չարչարանքն ալ Հոն է, Պիղատոսին մասնուլթիւնն ալ Հոն է, Տէրն մեր Յիսուսին Քրիստոսին տանձանքն ալ Հոն է, առաքիլոցներուն Հրեղէն լեզվով քարողութիւնն ալ Հոն է, կարձ՝ էվէլքի Հինուլթ ալայ պատմութիւնը Հոն է, ատ Մօւէսին տախտակներուն վըրան կրթած: Մօւէսն ալ, ճանրս, ինքը ճուհուտ էր ամա՝ չունքի ան ատէններ, մատտէ Հայերուս, ուրուշ մէկ ասք կիր-կարթոււմ չունէր նր—նօղայի պէս մէկ պան էին— առաւ ու, սէօզտէ, ատ ամէն պատմութիւնները Հայի խօսկով կրրից, ամմա՝ ան ատէնվա Հայի լիւզիւն շընտրիվա պէս խառմախառըչ պուլաշըն չէր. ան ատէնվանը քրափառնակ, քիրոց կասվէր: Վենետիկի ծուկ-ուտող վարդապետները, սէօզտէ, կրտիլ ին

ատ տախտակները, մաքաղարթի վրայ սիւրբեթը հանիլ ին ու եթէկէն արպիլ ին, տպելէն եաքն ալ ժամէ ժամ պատ-նիլ ին: Նաէ—ատ տպած քիրքերն ին, որ աւետարան, աս-վածատունչ կասպին.....

Ամնա, ես կիտիս քի թէկարան խօրունկցայ, միթքըս պան կար, կուղէի ասելու՝ մոռցայ ու ուրուշ պան պաշ-լայեցի.....:

2.

Հն, շաէ ատ կուղէի ասելու. խօսկի վրայ՝ ասօր վար-թէվօր է. հալար շաէ, ինչպէս կիտիս նը, սիւրիւ-սիւրիւ՝ որը Փանթօնով, որը խանաթըլը տօսինկրով պաղարի վը-ուսսթօյ տօսկով, որն ալ եայեան դէպի սուրբ խաչ պիտի քաշվին. ինչպէս օր շընտրիս է նը, էվէլքի ատէնն ալ, նմին նման անպէս էր, անխատար օր, սուտ չէ, ան ատէնները շընտրիւվա պէս թանկնոց ծի եքիփաժ չեքար. իմ կէնճուլթս էնկ թանկնոց ծին էռտունհինկ ուուպի ացինացի էր, ու էնկ վերի իշվական աղան մէքամ պոխչքա կունննար, մէ-կարնը, ատէթը, փռասթօյ արապա ես թարիքէ կունե-նային ու ատով կէրթային Սուրփի Խաչ ու Սուրփի Կարա-պետ.... ամմա, շընտրիս, ճանրս, փռասթօյ արապան, թա-լիքէն ու պուխչքան մօտէ էլան. տուն ան ի՞նչ կասիս, տօռօշքան ալ մօտէ էլլաւ. տօռօշքան, խորթ ասիմ, ինքս ալ պէթէր չէր հաւնէի. էնկ-սիֆաէ տօռօշկային մօտը մեր չիչակ Մառեա Կօռօվնան ու Կուսիկին Թօթայը մուտ-ցուցին, — տաքա էրկուսը Նախըւվանի էվէլքի մօտնի-ցաններն էին. էյ-շաէ, ինչ ալ լանը: Առաջները վարթէվօրը ուրիշ չէշիտ կրկատարէինք.... Հն, ատ պիտի հարցունէի. իտա վարթէվօր կասին նը՝ աճափ իտիվօր թարքրմանութիւնը ի՞նչ ասել է, ճոուր փիւսկիւլէմիշ անիլ չի լա՞. չունքի մեր տեղը, շախա անելէն, մէկմէկու վրայ քառեցով, փարչով, ա-տէն ատէն ալ չէլէքով ճոուր կուլուն նը՝ վար-թէվօր կու-

սին ու խնտալէն կը մեռնին, աս մերոնց էնկ սիրած շախան է, ինչպէս որ պարկէնթանքին՝ էթէբը առշակի ես պարցի կարելը, ես մարթուս միամիտ կեցած տեղը «եանդըն» կանչելը ու լեղին պատուելը: Պէթէր Հօճային մեր տեղի հալեր:

Շտէ ատ կասիմ. Սուփ Խաչ կէրթայինք նը — պրզ-տիկ էի՝ ամն միթքս է, — կերթայինք պաշան, մէմէկ հատ հասակէկ խու շուշան քփետէինք ու չախուոյով ճուրիչաթ քրխորթէինք ու Սուփ Խաչին ճուրին քովը, խամրշլը խին հտեր կրպօհօավէինք ու չաթով չաթով անցնող-տառցողին վրան ճուր փխակիւլէմիշ կանէինք ու «վարթէվօր» կասէինք: Ս.ս՝ պրզտիկներըս կանէինք: Մեծերն ալ մեղիմէն պակաս չէին. էրխմարթ, կինխմարթ, լէվէնտողայ, կէնձ-ախչիկ, ալայն ալ, ատէթը, ճեռքերը մէմէկ աման կունենային, հա՛ ինա սազոտ աղոտոտ ճուրը կառնէին, հա՛ մէմէկի վրայ կուլէին «վար-թէվօր» տէին: Ստէն ատէն ալ մէկգմէկու կրկտկտէին, իլլայի մարթուս՝ քէօփիւրին վրան կայնած ատէն ու ճօմի կանէին, ճուրը քրքրէին: ճուրը իյնօղն ալ անխատար թըրըվելէն չէր, ինչխատարօր վրան կօլօխը չամուռոտվելէն կրվախնար, չուէքի Սուփ Խաչին ճուրին մէջը ճուրէն աւելի չամուռու կայ. մէջը իյնիս նը՝ իշկիլ է որ ինքըտ քեզի կրնաս էլելու, քանի կէրթաս մէջը խօրունկ կպաթիս. չամուռն ալ հոտաամծ, մէջը իլինք խուռպազաներ, սօղըլճաններ, սիւլիւկներ ու չէշիտ-չէշիտ կանելու ճանավարներ — պաթաի է նը...:

Սապէս էր էվէլքի ատէնը: Ինչ ալ լանը՝ մելք մեր անատէնվա Սուփ Խաչը: Խօրթ է, շընտխվա պէս շիփ-շիտակ ու մէջքիս հաստութիւնով ճառեր չէքային ու էղածն ալ ճուռ-մուռ, պորպրսնած, վրաները մանթառ փրսած, թուրթուրոտ ճառեր էին, ամն՝ կէ՛նէ, ի՛նչ սուտըս պալիմ, մէջը շինտխվանէն շէն էր:

Ս.տէն առէն միթիկէս կանցնի քի՛ ինչո՞ւ մարթս իրեն կէն-
ճութին ատէթները աւելի քիսիրէ ու նոր պաներուն վրան
աչք չունի նայելու. աճափ անոր համար է, որ հինութ
պաները աղէկ էին, չէնէ՛ իրեն անցած կէնճ՝ օրերը միթկը
պերելէն, անոր հետ կապված ամէն խաղերը ու քէթերը
սիրտին աղէկ քուքա, — չիտիմ. անա՛ ինձի ամպէս քուքա
որ՝ աշխարքս քանի՛ կերթայ՝ քրքէնայ...

Հէպէթ, աս նոր ատէններս շատ աղէկ-աղէկ պաներ
հրնճարվեցան, ամմա տուն ինչ կուզես ասա՛, ինա փակ-
ված թրնչըս վակօնով տեղէ տեղ քալելը էնկ չիսիրած
պանս է: Աչիր սիրիմ էվէլքի թոջքա-արապային. խօ-
ճատէնէկ հինի-վեց հոքի մէջը մայպալըսիի պէս քըսխմը-
վէինք կրնտէինք, ծիներուն վեղը մէմէկ, էրկէրկու աղի
ճրնկլթավուխները «ժանկուռ ժոնկուռ» ասպէս ճամփա
կէլէինք. ճամփան ալ ճուր, ես կանանչ արօտ, ես ծառի
սալըն տեսնք իսէ՛ «տղւնք, իսա չէլիս օրթան մէկ-էրկու
կավթ չային հետ ինչպէս իք», կասէինք ու ծիները թու-
վարմիշ կանէինք, արօտին ապուլ կուտայինք, մինք ալ
սամավարին հետ կըլայինք. փամիլըյ, ասիկից ալ աւելի
սէթա պէ՞թկ էր օր. ինա ատէնվա պողած միսը, ես հա-
ւին պուտը կուծելը, վրայէն ալ պուլաշըս ճուրով էփած
չայը՝ փշրած, թօղ կըտուած ու խաթուանի հոտ առած
լօխումով խմելը, Սսված հաւատա՛ որ՝ շընտրիվա մառօ-
ժինին ու փլօմպիռին հետ չիմ փոխիլը... Ձէնէ Սսվածրա
քիսիրիս աս ինչ տիւլիք է. վախտ-պէվախս քանտուքթօ-
ռին հրամանքով մաշինը կրկայնեցունուն, քանտուքթօռին
հրամանքով վակօնին տուռերը կըպանան, տուս ապուլ
կուտան, քանտուքթօռին հրամանքով աշրիմիշ լայէն պիտի
ուտիս, լիւղիւտ, պէրանտ էրելէն մէկ սթաքան չայ պիտի
խմիս ու խոփօր համար կըսկի կին տաս, — թո՞ւքնում ես
ասպէս ճամփա քալելուն վրան. էտե՞, ասոր անունը ես
ճամփորթութի՞ն կասիմ. ատ խօմ մարթուս կաշիքը

կրօած պարիի պէս քրքայցունուն, չէքի ինքը իրեն քէ-
Ֆին քրքայէ: Իտա նոր ատէնվա ուշտուրմաճա պաները
կս հալ՝ ալայը մեզի պէս խաղերուս տանձիլ ու քէսա-
ներս պարպելու համար հնճարված ին: Ամա ի՞նչ պիտ
անիս, ճարրս ի՞նչ է, ատէնին կօրա պիտի ժաժկրտիս որ՝
ինտայու չիլաս:

Խօսկս կէնէ էվէրքի վարթէվօրին ու Սուփ Խաչին վե-
րան է: Ան ատէնները շքնախվա ոթթօնտը ու պուֆէթը
չիկար, ու ուխտաւորներս ալ ամենս մեզի համար ինչօր
պէթիկէր նը՝ տունէն հետերըս կրպերէինք. ատէթը քըշեր-
վանէ չէրէն չէրէն սամսաներ, հացտապահներ, խավուրմա,
տափկած ճիփճա քըհաղերէինք. չայ, շաքար, չիլիմ-ճուկ,
խայվար, պէնիր, ոօմ, կինի, ռախի, քէպապի միս, քէօմիւ-
րէն ու ճըղըլէն թէք կաննէինք հետերս: Սուփ Խաչ քու-
քայինք նը, խօճատէնէկ, որըս ծառերուն սալխընին չատըր
խուռմիշ կանէր, որըս ալ՝ չատըր չունենար նը, մատղաշ
արօտին վրան խալի ու քիլիմ քըվրօէր, հինուլթ վար-
քով, էրիմարթ կինիմարթ, պատաշ խուռմիշ կաննէինք,
որըս ալ կօլօնը պարցին խօճ. խօճ քուն կըլար. ատ ա-
րալըլը կէնճերն ալ փօկոէպէյներէն սթաքանները, պի-
լութները, չայնիքը ու ռոմին շիշան քըհաննէին, սամավարը
կրարնէին, քէպապին կրակը քըհաղերէին. եփօր սամավարը
խըփըռ խըփըռ թալմիշ կըլար ու քէպապին խօռին մուխը
էրկինք կետին մէկ կանէր, (իտա կուծու մուխը սիւրվիսի-
նէքին ու քոռ ճանճին պէթէր չըթն է) մինք ալ հոս նայէ,
քուններէս կըզարթէինք ու կըպաշլայէինք մեր քէֆը. փա-
մլըյ, արքավուլթին էր որ կար, ատկից աւելի ի՞նչ քէֆ
պէթիկ էր աթամօրթուս:

3.

Թուքնում ես մարթոց շքնախվա քէֆին վրան: Ասվածտ
քիսիրիս, իտա ի՞նչ պան է, պաշճային էսկ-օրթան մէ-

քամ փաստէ տուն խօրթիլ ին, անունը ութօնա արդիլ ին. մէջը մէկ-ալայ մը խաղախ լաքէյնիւր խօթիլ ին—աս ալ պուֆէթ է, կասին. տունին չորս քովն ալ ծառերուն սալ-խընին ճրղիլէ քիւմէսնիւր շարիլ ին, աս ալ պէսէթքա է, կասին, սթաքան չայ մի սիրտըս կուղէ խմելու՝ տասը-տանըհինկ քապիկըս կառնուն: Մէտօմը քէպապ ուտիմ, կասիս, փալթիննիքէտ հա մանէթէտ պիտի պաժնըվիս. օյմախի խատար ուումքայով ուխի հա կինի կուտան՝ քսանէնսուն քապիկըս կիոխին կառնուն... Հայ ծեր պուֆէթին ալ, ութօնաին ալ, լաքէյնիւրուս ալ... աս խօմ էփ-էշկեարէ հարամիութին է տայա արածը:

Հա, սուս չէ. տուն կէնէ քեզի համար կրկրնաս, հնութ վարքով, արօտին վրան սամավար տնել, պան-անել, ամա, տուն մէմը նայէ, լաքէյնիւրը պահը մէմը քովէտ անցնէլէն ինչպէս քիթ ու պուռունի կանին, քրինտան վրատ. մէկալ սեմթէն մօանի հաքված ախշիկա նազեր կծախէ, «պապա, շահ-հալիւր չի անիլ՝ մինք ինչո՞ւ պիտի անինք. շահ հալիւր մեր վրայ լիւզիւ կէլէ» չիտիմ ինչ, չիտիս ինչ... Տուն ալ պէզմիշ կըլաս, քութիւքնուս ու հալսին վարքով կըժաժկըտիս. կըժաժկըտիս, ամա արի նայէ որ՝ ամէն մէկ Սուփ Խաչ էրթալըս իննը-տասը մանէթին տունն է. ան քէֆին ինչ ասիմ, որ քանի մը սաաթվա մէջ իտաստար ստրկէն քըհանէ մարթուս: Իտա պուֆէթը ու ութօնտը հնձարած օրէն սատանայ կըտեսնում աղլի մեր Սուփ Խաչին պահան — անխարէր աչկէս ինկիլ է:

4.

Իտա ութօնտը ու պուլվարը խօրթած ու Ռաստովին սատը մէյտան էլլած օրէն մեր քաղաքին խարճը մէկըմէկով էղաւ, պէքիմ տահա աւելի հալ: Քըհաւատմա, ինա վերջին արապաճիին ախշիկը մօտէ հա մնալ չուղէ. խայիլ է

տունը քախցած ուռելու, հալխին կար-կարկատէն աչիին չուար խավըրցնելու, թէք որ պուլվարին տեղը, եւ Սուփ Խաչին պահան, ինա աղլի էրկան պօշով փլաթին հաքած, ճանցվոր ակաչիկներուն հետը խօլթուխ-խօլթուխէ մըտած Ֆօլթա անէ, ինչ է որ լէվէնտներուն սիրտը դէպի իրեն խըղտըրմիշ անէ. քիչ մը վեր մարթոց համար խօմ ասել ալ չուղիմ. նաքա չօխտան խաղախ փամէշ չեցաներէն կոխիլ ին-անցիլ ին. Մոսկով չտեսածա հոս կըտեսնուս ասիմ նը՝ սուտ ասած չիմ լալ:

Առաջները մեր կանկատը կինի մարթոց փլաթիցունին խասին ու թանկին վրան էր. ինչ ալ լանը՝ տօտօվելէն, պամպասելէն, խընտալէն՝ թանկնոց փլաթիցուններէն վաղ պերինք. շինտի փլաթիցուն աժաննոց է ամա՝ կարելչէքը պէթէր թանկցաւ. առկից ալ մատտէ՝ առաչվա մէկ փլաթիին տեղը, շինտը հինկը-վեցը քըհաքնին, կէնէ կղաւ ան:

Նէպէթ, ինչպէս որ շինտըն, ամպէս ալ առաջները, ատ ամէն Ֆէնտերը էրիկցու խըմախլամիշ անելու համար էրալ. ամմա, միթիխ մէջը կասիմ, աճափ էվէլքի մարթոց էրիմարթ էղիլ է, կինիմարթ էղիլ է—խըճմտանքը, նամուսը, էրեսներուն մեռոնը թէկարան աւելի չէր շնտըն-վանէ....:

5.

Մախչուվանին մէջը էրկու քէֆի տեղ կայ. մէկը, խրառէլէղին օրը սուրբ Կէփօրքին աղպարը ու պաշճան (ես պաշճա կասիմ, տուն քերեղմաննոց հասկըցի՛ր), մէկալն ալ սուփ Խաչին պաշճան. էրկուսն ալ—խօսիլը մեր մէջը մնա—աղօթիկի ու ուխտի մահանայով՝ տունի աղապ ակաչիկան համար փեսացու փընտըռել է: Չունքի խօսկերըս վարթէվօրին վրան էկաւ նը՝ արի՛ ես քեզի մէկ պատմութիւն ասիմ՝ վարթէվօրին օրը էղած. լսողաց իմ՝ տուն պէթէր քիսիքիս էվէլքի պաները լըսել ու թուխտի անցունել. ատ

աղէկ պան է, քէշ պան չէ՛. պատմութիւնը աղէկ պանէ նը թօ մեր օրթիքը մեզիմէն օրինակ առնուն. քէշ պանէ նը թօ նաքա մեր արած հանլըշէն մուխայէթ ըլան: Մեխք օր մեր հալխը կը վախնա իրեն պակասութիւնը մէյտան հանելէն. ի՞նչ կըլար հիւանդին հալը, եփօր հէքիմէն կաղտուկ պայէր կօվտային եարա-փարաները ու նետութին ցաւ ու հիւրնտութիւնը:

6.

Պապաս—Ասված օղորմի հոքուն—խանութը ալայ մալայ ինծի թէսլիմ արիլ էր. ալ ծախսիս հէսապիս մէշ չէր խառնըվիլ. փիթուն օրը ես խաֆէն կնատէր, էկէնճէի համար. քօնչինա քըլնաղար, ես պազար կէլէր ու իրեն պօյտախ մարթոցը հետ սաաթներով լաֆի կըլըռնըվէր—մեր սեղի լաֆն ալ ի՞նչ է՛ տէրտէր վարթապետի պամպասանք,—անալ չէղաւ՝ սէքիին վրան եան քուքար, կէս օրերով խօռըլամիշ անելէն քուն կըլար. շատ խըթ կըլար, որ խանութս մըտնէր. մըտնէր ալ՝ մէտօմը առէն կըլինար, խանութի սուղոցը հետ շախա-մախա կանէր ու կէլէր կէրթար իրեն պանին: Ասը տինճ փունութք ունէր պապաս, Ասված օղորմի հոքուն:

Ինչպէս ասի նը, ծախսիս, տէֆթէրիս մէշ հէշ չէր խառնըվիլ: «Քեար կանիս, կասէր տայմա, քեղի համար կանիս, զարար կանիս, ան ալ քեղի համար կանիս. շինտէն կէրի ես քու վրատ հա կամ, հա չէ, իմ պանըս արթըլս լըմընցիլ է. ալըրս մաղիլ իմ, մաղըս պատէն կախիլ իմ. կէնճութըս էփպէի չափալամիշ էղայ, չարչըկկեցայ, իսա ծերութիս, հէջօլմասա, քանի մը տարին ինծի համար ռաաթ անցունում: Ունիմ չունիմըս ալայը քեզի տուվի. անաէնը առչլս պէրին, եփօր քեզիմէն մէքամ փասլօտած կօնօշ պայիլիմ նը. մէքատիկ վաւակս չիս մի, քեզիմէն պայիմ որլն պիտ տամ, անթի աշխարք հէ՞տս պիտ տանիմ-ինչ...»

Եփօր իմ ու մօրքա կուլիսուն ճերմակ մագերը կրմեխկը-
նաս ու տուռ տիրացինի էզթիած չիս անիլ խօմ՝ շէն
կենաս, չէնէ ան ալ տուն կիտիս, մեխկը-վարցքը վեղեա-
լի՛նչ ասիմ, պալաս:

Մինչև աս տարիքտ խեղք սորվել իս նը՝ սորվել իս, չէնէ,
այսօրէտև սորվենալը տիժար է. խրատ կասին նը՝ ան ատ
տարիքիս Համար չէ՝ (ան ատէնը ես կըլայի քսանչորս-քսան-
Հինկ տարու), արս՝ ինչ որ խեղքտ կըկառէ, կընէ, ծախէ՛,
ան, տոնը, վրատ թատաւոր չի քա. անխատարօր՝ իյնիս նը՝
նորէն ոթիլի էլըլու ճահթ արս, կորցունուս նը՝ նորէն
վասարկելուն տուռը կըտիլ, չի լա որ իմէարտ կըտոիս,
էրփէվարի կինիմարթու պէսնակ անճրկիս..... Մ. մմս, եփօր
քեղի Համար ստեախը կուզիս ընտուելու նը՝ աւանց ինծի
ու մամայիտ մի՛ ընտուիլ. Հէպէթ, մինք ալ աս տարիքս
որ էկիլ ինք՝ խոտ ու թօպան կերած չինք, կնիկ արմատ
ատած պանէտ մինք ալ քիչ ու միչ պան քըհասկընանք.
կուզիմ ասելու քի՛ կարքըվելու միթկ ունենաս նը՝ մեղի
Հեա խօրուրթ չարած՝ մարթու խօսկ չի տաս. ամա չէ,
չուզենաս նը՝ ան ալ տուն կիտիս, չունքի սայեախըտ քեղի
Հեա պիտի ծերանայ, չար ու պարին քեղի Հեա պիտի քաչէ,
ուրախուրթին ու տուրամուրթին մէկ տեղ պիտի տանիք:
Ստելլս ան է, որ տուներս Հարս պերելու լաս նը՝ մէքամ
վայլացք պեր, որ մինք ալ էրեսը նայինք ու խունատմ
ըլանք»...

7.

Խօիթի Համար ամէն տարի, ծունունթին ատենները,
տայմս Մոսկով կըրթայի: Եփօր խօիթըս կանէի քըխալ-
սէլի՛ ու կընած պարիս սէլամթ ճամփա կըտընէի նը, անկէ
էտև մէկ-էրիու շափաթ, քէֆիս Համար, Մոսկով կըմնայի.
ատպէս մէմը ատէթ արիլ էի: Պէթէր սիրած պանս էր
մոսկովցի պաղերկեաններուն սայեախըններուն ու կէնճ ախ-

չիկներուն հետ նըստել-էլլել, լաֆ անել, ատէն-ատէն ալ հետերը թխաթիր, պալ մասքառաթ կէրթայի. մէխկա ի՞նչ պայիմ, վայց, էքասէս, քիչ մը եթէր քատուէլ ալ քըխաղայի հետերը, ու հօրերէն, էրեկներէն կաղտուկ, ատէն-ատէն քաչաթի ալ կէլլէինք ու ինչ ասիս մանտրո-մունտրո պաշխիշներ ալ կուտայի: Ասլը տէյեմիշ արած է, որ կինիմարթը շախայի, էսկէնձէի համար պէթէր հօրիսլը է: Է՛հ, կէնձութին կէնձութին...»

Տոէ-ատպէս տայմա հետերը շախա ու լաֆ կանէի. ամա, մեր խօսկը ինչի վրա եալ պաշլայէր, հնարը չէքար օր վերջը վերջը փասկի կալաձին մէյտան չէլլէր: Ուռուս կինիմարթիքը տայմա մըսիւրը կանէին ինծի, որ պապաս, մամաս անկաձէս պիտի պըռնին ու զօռով պիտի փսակին, իմ կամքս հէչ հարցունելու չին. որին ինքերը հաւնիլ ին նը՝ նարա վըան ալ պիտի փսակին, չունքի, կասէին, առ ծեր ազիաթներուտ ատէթն է: Ես ալ կէլլէի ու կասէի նացա. «Ուրուշ պաներու մէչ մամայիս, պապայիս խօսկէն չէլլինն ալ՝ կարքըվելուս մէչ հէչ լըսելու չիմ նացա հրամանքը ու կամքերը հարցունելու չիմ»: Կինիմարթիք ալ տահա պէթէր էրէշմիշ կըլային հետս ու կասէին՝ «Էէչ խատիթ իմ ծունօխքիս կամքէն էլլելու, նաքա չէքի կանիծին ինծի, հնպա վըաս թաքավօրին կիր կուտան, քի ասպէս անառակ օրթի ունինք ու սալտաթ կուտան», ու ասպէս խօսկերով ան տէրէձէն հասուցին ինծի, որ ես ալ մէկ օր էլա ու ասի նացա՝ «Ես մարթ չելամ, աշխարքիս էրեսը օր չի տեսնում, ունենալու զաւակներէս չի խնտամ, եփօր ես ինքս իմ կուլխուս, նացա հէչ չիմացուցած չի նշանվիմ»:

Իսաղախ կինիմարթոց էրէշմիշ էղածներուն սէպէպը պէսպէլլի էր. նաքա պերանս փորցել կուզէին՝ աճափ նացամէն մէկին վըան չիմ կարքըվիլ մի, չունքի մեր հայը ասլը իրեն հաւատին մօտիկ է, օտար հալխէ ախչիկ առնելը, ես իրեն ախչիկը օտար հալխի մէչ ցքելը չէքի ամօթ, մէխկ ալ կըձանչնայ:

8.

Վարժէվօրին կիրակին էր: Մամաս, պապաս, Հայքրիստոնայի ատէթով, վարժէվօրին պասը պրոնած, նաւակատիք կէլլին նր, շաբաթ օր իշտահով կուտին չէլէքծուկով կուպաթի, վրայէն ալ մէմէկ պալապան չինի կաթնապուրը անուշ կանին, վրայէն ալ մէկ թաւա ճրովըրան որ կըճրֆին՝ անէ որ քէֆէրը կաւրին, կիրակին տընքալէն կըլուսացնուն, հօրցուկու ասէն թամամ հիւանտ կըլան ու եաթախ կումուտնուն:

Չունքի ես ան տարի միթկըս արիլ էի վըսակվելու նը՝ պէթէր կուզէի ատ կիրակին սուփ Խաչ էրթալ, պէքիմ, միթի կանէի, էրկնաւոր Տէրըս խըսմէթս առչես կըպանայ: Վրայէս պէլլի էր, որ սիրախ մէջը մէկ օրօս ունիմ մամաս, Աստված օղորմի հօքուն, տէյէմիշ կանէ ու, Հիւանտ ալ լանը, կասէ ինձի՝ «Խնչ խտա մեզի համար վիզըտ ճրկած քըքալիս տուն կէնձ իս, արապան լծիլ տուր, կնա սուփ Խաչ ու քէֆրա նայէ. մեզի համար մի մնալ, մինք, ինչպէս ալ լանը, մէկ օր կանցունունք ու Աստուծով պէքիմ վաղը ոթքի կէլլինք, կնա, պալաս, սիրաըթ թօ պացվի իրիկվան սէմթ, տուն քաս նը պէքիմ մէկ խունտում խապէր ալ կասիմ քեզի»: Իմ ուղեցածս ալ ատ էր. համան պոխքան լծիլ տուվի: Սմա պապաս, վրայէն պէլլի էր, հաղ չարաւ մօրս խօսկերուն: «Խնչ է խտա ասածըտ, ասաց մնամայիս. տղին ինչո՞ւ, զօռօվէն քովէտ քըքշիս, պէքիմ չուզէ մասսումը, զօռ արածըտ վօրն է: Հալան ալ, նայէ, թաթապի է. էրէկ քշերվա պահարները ան ի՞նչ էր ան. կօլօխ կուտամ՝ ասօր սաղանախ չի քա նը»: Սմա ես նարա խօսկերը չխխելու տրի, կնացի օտաս, աճէլէ Մոսկովի կարել տուված սէնթուքս, ժէլէթս ու պիլուքս հաքա, վըրայէն ալ ինտ էվիլքի խաթ խաթ վառաթնիքով շինելը հաքա, նիփ-նոր շափա կօլօխս տրի, նստայ պոխքան ու ճամփա էլլա:

9.

Սուրբ Խաչ Հասա նը՝ սասաթը արթըն մէկը կըլար: Վանքին ազպարը իլինք էր պոխքաներով, թոջքաներով, արապաներով ու թալեքէներով, օտաները ալայը զաթթ էղած էին. հազար տեղ կրակ վառած էր. որին վրան խայկին կախած էր չէշտ-չէշտ կերակուրներով, որի վրան ալ քէպապով շիշերը ման քուքային, վառած փատին, թէղաքին, խօռային ու նոցա վըայ կաթկըթած եղին Փոտը աշխարք վըրովի էր: Զիններուն, էկիզներուն ծաները (կեղացիները ան ատէնները աւելի էկիզ-արապա խուլամիշ կըլային), հարփած կեղացիներուն կոխ-շամաթան, ախրացուներուն տաղերը—ալայը մէկտեղ խառնըված, մարթս ամպէս թահ-մին կանէր օր՝ եառմայրխին էնկ օրթան ինկիլ է: Եառմայրի էր կար նը:

Ես սիթթէ, ինչպէս օր ատէթն էր նը՝ մոայ ժամ, Հինկվեց սուրբի առչև մէմէկ մոմ վառեցի, քանի մը տապրա էրեսս խաչ հանեցի, երկրպաքութին արի, աղի Անիէն պէրած քարէ Սուրբ Խաչն ալ պանալ տուվի, համիուրեցի ու աղօթկըս լըմընցուցի. նորէն էլլա ազպար ու, չունքի տարի առաչ ժամին քովը թաղված էր օգորմած հոքի Սրութին վարթապետը ու նարա իշատակը, շընտըխլա պէս, էլլած չէր հալխին միթկէն, մէկ-էրկու ժոււմ նարա քերեզմանն ալ համիուրեցի, հայրմերկինք ասի, եթկէն ինչայ պահչան: Վերտիվնէն ինչիլ էի ու մէկ ոթկըս քէօփիւրին վրան էր, որ տիմացս էրկուատ ախչիկ էլլան, էրկուսն ալ ճիրմակ փլաթի հաքած, էրկուսն ալ մէկ պոյ, ամա նացամէն մէկը հրեշտակի պէս տեսօք էր ու մէկալը — հէռի տունէ տեղէ — սասանայի սիւրէթ ունէր՝ սև, չիւքին ու չուպառ, քիթը պէթէր էրկան ու ծուռ, պերանը պալապան, չախ անկաճքօքք քրհասնէր, վիզը պարակ ու էրկան թամամ թուռնա: Սչքիս ծարովը էփպէի ատէն նայեցայ

տեսօքին վրան. քանի որ ես տեսօքին վրան կնայէի՝ չըբխիր աչքերը պատրուակէն վրաս կընայէր ու, կիտիս քի, հում հում ուտել կուզէր ինծի: Կանկուռ պան էր: Միթքս մէջ կասէի՝ «Տէր Ասվաճ, սիպէս ալ հովչ ալէվալէ ճանավար կըլայ էղել է. վայ տարա էրկանը իշտահին»:

10.

Եթկէն միթկըս մէկալին տառցնելով, ինքս ինծի ասպէս կասէի.

«Էրնէկ քու խրամէթին. ոթկէտ կօլօխըտ օսկիի ու ճվայիլի մէջ թաթխէ նը՝ կէնէ քիչ է ու շատ չէ՝. աճափ ո՞ր Ֆօղեղէն արարածին պիտի կըրկին իտա հրեշտակի խանութին պէսնակ նազուք ծեռքերըտ, ո՞րին էրեսին թուշին աճափ պիտի կըպչին իտան կիւկիւլի պուռունկներըտ. վո՞վ աճափ պիտի համկուրէ—պաքնիլ ասելու չէր խըյմրէն— իտա աթլաս մախմուր թուշերըտ ու աթխի պէս ցոլուն աչքերտ... Պահտ որ կասին՝ շտէ պահէթը, ասպէս կնիկ ունենալն է պահար».....

Սխչեկները մինչև վերտիվէնին կեսը՝ հասիլ էին—զայէր ժամ կէրթային, ես ալ քէօիլուրին վրան կայնած վրաները կընայէի աչկըս պաղած: Մէմալ նայիմ, էտուէս մէքամ մարթ անուերս տուվից ու ծեռքը օմուզին վրան արից. էտու տառնամ նայիմ՝ խութուռճի Ասվատուրն է: Մարթը աղէկ քէ՛ծի էր: Պէլլ էր, որ եահնիին մէջը սօխ ու սըխտօրը պօլ էղել է, վըայէն ալ քէպասպը կէնէ առանց սոխի էղած չէ՝. չուքի պահը մէմը քէքէթլէմիշ կանէր նը՝ հօտը պիւրիւմ պիւրիւմ քիթիս կըզարնէր ու սէրսէմ սէրսէմ կըլայի: Թի՛ւհ, պէթէր չի սիրած պանս է իտա մերոնց ամուր-ամուր, խոզի խոխուալուն նմանակ քէքէթլէմիշ անելը, ամպէս օր ապմա մուխայէթ կըլամ հացէն նոր էլած մարթու հէտ կալաճի աներու. հեռի հարկինքէ՛

պէրներէն մէկ ծարէն .քէշ Փոտ .քուքա, փէճօճ: Էյ, ինչ
ալ լանը:

«Որի՞ն վրան է խոտ նայեաճըտ», Հարցուց Ասվատուրը:

Սչիբա վերուցի վէրտիվէնին վրան ու երկու ճէրմակ
փլաթիով ակչիկներուն վրան ցուցուցի:

«Ի՞նչ է, հաւնի՞լ իս ինչ է», ասաց Ասվատուրը:

— Ձի հաւնելու պարի՞ է-որ, ասի ես:

«Քու հաւնաճըտ՝ ան հէշ, ան քապիկ չածէ, նայինք
պսպատ, մամատ ալ քըհաւնի՞ն մի»:

Համան միթիբա ինկաւ աղլի Մոսկոթցի խաղախ կինի-
մարթոց խօսիկըր ու փիրէս էլլաւ:

— Ես հաւնիմ չէնէ՛ պսպայիս մամայիս հաւնաճը կու-
զի՞մ օր. նացա պա՞նն է իմ խըսմէթիս մէջը մատ խառ-
նելը. սիրտըս թօ չի հանին չէնէ՛ առանց նացա եալ կըլամ
պէհ տալու..... Սն չէ ամա՛ տեղով կիտիս որին ակչիկն
է, ասի:

«Հապա չիտի՞մ. ես ալ չկիտնամ՝ նը՛ վով պիտի կիտնայ»,
ասաց Ասվատուրը:

— Էտե՞, որինն է, ասի:

«Որի՞նը պիտ լայ. հէ՛ պէթ իմնն է», ասաց Ասվատուրը:

— Ի՛, խօրթ կասիս, Ասվատուր-ա, չէ՞նէ շախա կանիս:

«Աա ի՞նչ հօրս ցաւին շախան է, որ խալինն ակչիկը
իմնն է, ասիմ հէ՛ պէթ իմնն է. Անուշս է-տա՛, չիտիս ինչ»:

— Առչի ժու՛մ լաճս է, ասի, անունն ալ ինչպէս վայ-
լաճք անունն է Անուշ... Թամամ վարթէ կիւլէնկիին պէս
անուշ է: Հապա մէկալը, հետը քալօղը,—քաշվեցայ չիրկի-
նը ասելու որին ակչիկն է:

«Հետը քալօղը, ան աղայիս,..... ին ակչիկն է»:

— Հէշ լաճ չէի ատպէս տեսօք ակչիկ ունենլլա, ո՞ւյ
մունճ կըռիմ մարթ իս, էղիլ է. շընտրիս տեղը չէ՞ քեզմէն
մախտուիչ կօխիլ անունելը...

«Ատոր Հէսապը եթկէն կընայինք, ասայ Ասվատուր-ան. շինտը էրթանք մեզի Հանթիպինք, կուզին, խուլթուուր Հեուու չէ՛. քալէ, թալիքէս նատինք, մէկ պահը քը Հասնինք»։— Ես խայիլ էղայ:

11.

Խօրթ օր՝ խուլթուուր Հեուու չէր. մէկ մինուլթվա մէջ Հասանք: Ասվատուր-ան հրամայից պերելու ինչ-ասիս գաքուսքա՛ չիլեմ, տունի էրեշկիկ, տունի պէնիր, կարաք, խայմաս, տիլիմ-տիլիմ կուուտած պուլից Հեսն ալ մէկ փիթիլքա կարմիր կինի ու էրկու ոոււմքա:

Ես կաւաթին մօտիկ չէի ամն՝ ան օրը, Անուշին ազիլ խաթոնի Համար էփպէյի պան խմեցի. շիտիմ օխտնո՛ւմ փիթիլքան էր որ պարպիլ էինք, չէնէ ուլթնոււմ օրը արթըն մուլթնելու վըայ էր. խելքըս աղէկ սոյն պաշլայիլ էր ման քալու: Օրիս մէջ տահա ատպէս քէֆիլ էղած չէի: Իտա արալըխը ազպարէն պամալվա էրկու ախչիկը անցան ու մէկ ուրուշ տուռէ նես մտան, պէլլէ էր որ սուրփ Խաչէն քուքային: Խըփրո-խըփրո սամավարն ալ պանվօրը նես պերեց, չունքի չայի ատէն էր: Աղապալեին Հանած խաղը միթկըս էկաւ:

Չայ ասածըտ խիստ աղէկ պան է,

Պէհէզուր մարթուն ոահաթ կանէ:

Մէմալ նայիմ, տուուր կամացուկ պացվիցաւ ու շէմքին վըան, չայով փատնոցը ծեռքը. աղլի տեսօք անուշը երեցաւ ու շիտակ դէպի մեզի քուքար. ամօթէն էրեսը ալ վարթ կրտուիլ էր, խանճըխը տահա աւելի տեսօքցել էր: Ի՛նչպէս առի չայը, ի՛նչպէս առչելիս սթօլին վըան տրի՛ շիտիմ. անխատար կիտիմ օր՝ ինա մինուլթին խելի պէս պան էի: Չայը տըվից ու կնաց ախչիկը:

— Ասվատուր-ա, ասի, իտա Անուշը խօթթ քու խատիր ախչիկըս է:

«Նածէ՛ խե՞ իս, չէնէ մարթ քրիսեցունուս», ասաց Աս-
վատուր-ան. «իմրս չելար նր, ինչո՞ւ պիտ ասէի քի՛ իմնն
է. Հէպէթ իմնն է, որի՞նը պիտ լա-որ»:

— Ինձի կուտաս, ասի, ամրնչնայէն:

«Ինչո՞ւ պիտի չիտամ օր, տունն որիմէ՞ն պակաս լէվէնտ
իս, Հէպէթ կուտամ. ամա՛՛ էրկու-իրեք կաւաթ փունձ՝
չիխմած՝ ատօր կալաճին չուզիմ անելու»:

Երկու-իրեք կաւաթ փունձին տեղը տասը-տասնըՀին-
կական զարկինք. օտան պաշայից չորս-քովս ման-քայու.
կուլխուս մէջը տո՞ւվ տո՞ւվ կանէր. անկաճ-քօքիս ու ճակա-
տիս տամարները մատիս Հաստութինօլ ուռիլ էին:

Ինս, խապախէն էլլած, աչիը շաշի-մաշի նայելէն, քէն-
թէո-մէնթէո քայելէն մոճիքը տեսի՞լ իս, որ կերթայ
կերթայ՝ վար կիյնի, կերթայ-կերթայ՝ վար կիյնի, ու կայ-
նած տեղը քուն կըլանը՞, — ես ալ թամամ ինիվօր կըլմա-
նէի ան իրիկունը:

Սէօզտէ միսափիրներ ծան տրվիլ ին, տէրտէր տիրացու
էկիլ ին ու աղէկ սօյէն նշանս, ինչպէս որ ատէթն է նը՝
կատարվիլ է, ու եթէկէն մեղաւորիս առօք-փառօք, իրիկու-
նով, տուն ճամփիլ ին: Ամնա ես մէկ պանէ խապէր չիմ:
Իտիպէս ալ փատլէցութին կըլա՞յ:

12.

Մէկտըւմ օրը կըլիմ օր՝ ի՛նչ լըսիմ. աղլի չերքին
ախչիկան Հեո է եղիլ է նշանվածս: Ուռուճ կըլամ: Պա-
պաս մամաս մէյտան կէլին, աէր էլլօղըս կըլան, Հօքուր
դատարան, մայիսրաթ խընթրինք կուտան. ամա մէկալ
սէմթէն ալ խութուռձի Ասվատուրը կըլանկրվի քի՛ «օրթիտ
ինքը էկաւ, ախչիկանը իրեն աչկով տեսաւ, պէթէր Հաւ-
նեցաւ. մարթ նարան զօռ արած չէ՛, պէՀն ալ իրեն կամքով
տուվից (տաքա մի ասիլ օր իմ անուևովս տէլլայէ էլմաս

մասնի առիլ ին ու ախջիկանը մատը հաքուցիլ ին). հէ կըլլա՞ շինտէնկէրի Ասծու անուշով էղած պանը ետ անելու... պէհը ետ էղած ախջիկան վո՞վ պիտի առնէ... մախսումին առանց տանակի մորթել կուզինք... պէհը կէս փսակ է... Ասին շտէ իրենց ասելիքը: Ես ատ ամէնը կ'օջի չէր առնէի ու պէհը ետ անելուն ճուր-ճարակը կուկուտնէի ամա՛ իտօր ճէմը իրեք հարուրնոց մէքամ փաքէթ չէր մի—մէ՛ իք օր պանին մէջը պան մտաւ:

Պէհէս իրեք օր անցիլ էր. խանուլթս նստիլ իմ մէմալ նայիս՝ իրեք կող պոյը մէքամ մնալալը, փալապըրի մարթ, ծեռքը խալմուխի խամչի պոնած՝ խանուլթս կումուտնէ. «ես, կասէ, Անուշին ախպարն իմ—սիրտըս շըրլ՞ վ արաւ—ինձի երլխըձի Կէօրք կասին, կասէ: Տուն էղիլ է պէհէն ետ քաշվելու միթկ ունիս. ամա իսա խամչիս տեսա՞ր. կասէ ու շնոթ շնոթ պատին կըզարնէ, իսա խալմուխի խամչիս կըռնրկիտ վրան ուսկուլի պէս կըզկըզ կանիմ, ամա կէնէ եախայէտ վազ չիմ քալ. նայէ՛, մէկ շափաթ քեզի վատէ կուտամ. փսակվեցար՝ փսակվեցար, չի փսակվեցար՝ եախայէտ կըպըռնիմ, խամչիլամիշ անելէն ժամ կըտանիմ քրփսակիմ, ու խամչիլամիշ անելէն ժամէն տուն կըպերիմ, քըհանվեցնում ու քուրօջ ծոցը կըպառկեցնում. կըլաիս: Ինձի երլխըձի Կէօրք կասին»:

Երլխըձի Կէօրքին վերայէն պէլլի էր, որ չէքի ասօղ անօղ ալ էր: Երնտըրիս ես ո՞ր քարին, ո՞ր պատիմ տամ կօրիս: Լայլա՞ճ, մէկ շափաթէն, սուս փուս՝ հարսնիք արինք, փսակվեցանք. աս օրվան օրս ալ ուլթը դաւակի տէր իմ, հինքատ ալ թաղիլ իմ: Երեքքը ան չէ, որ ես աշխարքիս էրեսը Էնկ-չիրքինին, Էնկ-ալէվալէին, Էնկ-չիսիրածիս վրան փսակվեցայ. էրեքքը ան է որ՝ վարթէվօրին իրիկունը, եփօր ես Սուփ Խաչ էի ու Ասվատուրին տունը ինքս իմ ծեռքովս խըամլթս քրփակէի, մամաս, հիւանտ-հիւանտ ինամի քըլսրկէ** աղային տունը ու նարա ախջիկանը Մարթային

(իմ տեսածս նա էր էղիլ է) ինձի համար կուզենայ, ու
 խնամին խունտում-խունտում խապեր կրպերէ քի՛ խայլիլ
 ին: Էրէցքըր ատ էշտէ: Է՛յ, ինչ ալ լանը: Երնտի անցիլ է,
 կնացիլ է տուն կուխուտ հազար վայ ալ կարթաս՝ ի՞նչ
 Ֆայտա: Նէտէն սորա:

Ատ օրվանէն էտե վարթէվօրին անունը որ կըլտիմ՝ կի-
 տիմ քի մահրս կըլտիմ:

ԱԽՏԱՄԵՐԿԵԱՆ:



ՍԱՏԱՆԱՅԻ ՕՋԻԼ.

Թիֆլիս եղած-լքէնրս, մէկօր հոնի վարի սօխախներէն կ'անցնէի: Մէմալ նայիս քիթիս մէկ պէթէր քէշ Փոտ կ'պաւ՝ Թամամ հոտած հաւկիթի, ես մեր տեղի արապա-խախսիներուն տակէն վազած չերքինային Փոտը, — քովը մօտկրնալու բան չէր, մարդուս խաֆային կըզարնէր, սէր-սէմէմիչ կանէր: Իսա արայլիւր քովէս մէքամ կուռճի է, չէնէ խըզըլպաշ է, չէնէ ի'նչ հօրս ցաւն է՝ կանցնէ, անխա-տար որ հայ չէ՝ գէրէ հոնի հայը ամեն բանով ալ կուռ-ճիին ու խըզըլպաշին կըլմանի, անխատար որ՝ ասոնց աչ-քերը կատղած կալերու աչքի կըլմանին, ամա հայինը, ինչպէս կիտիք նր, Թեկարան օշտարի աչքի կուգայ — եու-վաշ, վախկոտ: Ա՛յ, ի'նչ ալ լանը:

«Իսա ի'նչ բան է, հարցուցի. իսա գէշ Փոտը վճռտիսէն կուգայ»:

— Ի'նչ գէշ Փոտ, ասաց աղլի մարդը, աստեղ գէշ Փոտ կ'սո՞ որ. աս մեր պաղնիքին Փոտն է. Թիֆլիզի կոված պաղ-նիքի ջուրին ջուր կհասնի՞ որ, աւելցուց նա. աս ան Ասծու օրթնած ջուրն է, որ աղամօրդուս ամեն ցաւը, ամեն եարա-փարան կ'աղէկցունէ, անարատ կանէ:

Ես ջօխտան լսիլ էի Թիֆլիզի պաղնիքներուն ջուրին գովասանքը, ամա, ի'նչ մեղքս պայիմ, տահա հէ՛չ փօսպ արած չէի. «հօտած ալ լանը, ասի միտքիս մէջը, մէմը էրթամ՝ նայիմ՝ ի'նչ սոյ պան է»: Քսան քապիկ տուվի, նես մտայ. նօմայ մարդիք կային, ալայն ալ ազիաթներ. հանվիլու օտան պէթէր ծանտո. Փոտ էր՝ չիտիմ իսա

աղտոտ մունտառներուն կօվտաներէն էր, չիտիմ ջուրէն էր, պահը-մէմը սիրտս ետ կուզէր գալու, թուքըս կուլ-տալէն տառհալաթ կրցայ փըխարս ետ տանելու: Ալըշմիշ չեղողին պէթէր կանելու բան է: Ինչ մեր հայլին տապահաններուն քովէն կանցնիս նը՝ ինչ Ֆոտս կուգայ քիթիդ, թամամ ատ հօտին կուգար. մեր աեախօրներու, ետ մեր սալկաններու Ֆոտը փառք է տարա տիմաց: Ախպար՝ սուտ կալաճի պէտ չէ՝ կէ՛նէ մեր Նախջուվանը, կէ՛նէ մեր Նախջուվանը. մէջը մէկ քանի եօռըխարզ բան, մէկ քանի եօռըխարզ մարդիկ չելային նը՝ մեր աեղին աեղ կհասնէր: Կըհաւատա՞ք, մէկ-էրկու շաբաթ որ կեցայ խա կոված Թիֆլիս քաղաքը՝ ալայ-մալայ եապանի մարդ կտուեցայ: Փամբլը՛, մեր նախջուվանցիին պէս հալի կայ որ աշխարքիս էրեսը, տառըմ մէկ քանի ճիւնապէթներ դէշ կասին մերոնց, ետ նացա ասածը կուզիմ որ:

Եբոր լըւացվելու օտան մտայ-նը՝ առջի մէկութ հէջ մէկ պան չի կրցայ տեսնելու. ջուրին պուվը ու լըվացուողներուն քրտինքը սաղ աշխարք փովել էր. ուստաներուն ու հալին շամաթան մարդուս անկաճը կըխուլացնէր. «փիւ-իւ-իւ—թա-ա-ան, փիւ-իւ-իւ—թա-ա-ան» կըլսվէր պահը մէմը. աա կօյեա ասել է քի՛ Ֆոթան հաղիբ արէք՝ մարդ պիտի էլէ պաղնիքէն: Հավուղին քովը մէքամ պարսպ տեղ կար, առի չէլէքը ու դնացի նստայ: Ուստաները ալայը բանի վըայ էին, իմ վըաս նայող չի կար, մէկմէքամ ճանչլոր չի կար. հավուղէն չէլէքովս ջուր առի ու պաշայեցի կօվտայիս վըան ուլելու: Իտա արալըխը մէքամ մարդ մօտըցաւ ինձի ու տահա բարե չի տուված հարցուց.

— Տուն Նախջուվանէ՞ն իս:

«Հա», ասի ու սուս կեցայ. չուղէի աս չըճանչըցած մարդուս հետը խօսքի պըւնըվելու: Մարդը եախայէս վաղ չեկաւ:

— Չօխտան է հոս խ, ասայ:

«Ձէ», ասի, և նորէն Հաժուղէն ջուր առի ու պաշլայեցի վրաս ուղևորու, ու հէջ չի նայեցայ աղլի մարդուն վրան, որ թէկ քակվի ինծիմէն. ղէրէ, վճով գիտէ, ակապար, ատ սոյ մարդիք մեզի պէս խաղեր կրվինտուն, որ խանաթներս փետին, ապուլ տան. վրայէն ալ կերևար, որ ատ սոյէն էր, ղէրէ պէթէր լաֆազան էր ու ինծիմէն վազ դալ չուզէր:

— Թէ՞զ պիտի էրթաս տեղդ, Հարցուց:

Ես չի լսողս էղայ ու վերս ջուր կուլում վրաս:

— Թէ՞զ պիտի էրթաս Նախջուվան, Հարցուց նորէն: «Նայինք», ասի, էլլա տեղէս, ղընացի մծակրցայ ուստային, սանքի լուվանալ տալ կուղևմ ինծի:

Մարդը հտեէս էկաւ: «Մեղայ-եասծու-մեղայ, ասի միտքիս մէջէն. աս ի՞նչ պէլայի Հանդիպեցանք, աս մարդ չէ, տիղ է». ամմա՛ հաքէն տեսայ որ՝ տիղէն ալ պէթէր է էղել է:

Խօսքս տառցուցի ուստային ու «Հաճէ՛, ասի, թէ՞զ պիտի խալխս. ինչխատար ատէն է կեցիլ իմ, քեզի կրնայիմ. նէ-պէթը կ՞ը ինծի պիտի Հասնի»:

Մարդը կռեղի պէս վրաս նայեցաւ. պէլլի բան էր, որ ասածս Հասկրցած չէր, ղէրէ նացա կալաճին մերինէն մեծ ֆառղ ունի, ևս ալ նացա լուզուն չիտիմ. Հայնակը ձգեցի, պաշլայեցի ոռւնակ ասելու. ճիւնապէթը ոռւնակ ալ չիտէ. թուքի, գնացի տեղս: Նայիմ՝ աղլի լաֆազանը կէնէ էտեէս կուզայ: Էրեսըս ամուրցուցի, տառձայ տարան:

«Ռ՛վ մարդ, ասի, տուն ինծիմէն ի՞նչ կուզես, վա՞զ արի, փաժալըսթա, եախայէս»:

— Ախպար, ասաց ինծի, ինչո՞ւ սիրտդ կելլէ վրաս. Ես ալ Հայ իմ, տուն ալ Հայ իս, տուն ինչո՞ւ ինծի կըքշես քովէդ, մինք մէկըմէկու խայթայ պիտի մծակրնանք, մէկըզմէկու եարտրմ անինք ու պաշլայեց կալի շարականները:

Մենք գիտինք ատ սոյ սուտ-Հայութինը, որին վերջը աս էրկուսէն մէկը պիտ լայ ևս փոխ պիտի ուզինայ մէմալ

ես չի տալէն 25—50 մանէթ, ես դիմացող մէքամ չէ-
ղած ու չըլլալու վարժատունի ստորագրութեան թուխթ
պիտի դնէ: Ատ Փէնտերէն չխտան պէզմիշ էղիլ ինք նախ-
ջուվանցիներս:

Ես սուս կեցայ, բան չասի, «պէքի՛, միտք արի, կասէ,
կասէ ու ետքէն ինքնիրէն վազ կուզայ ու կերթայ բանին»:
Ամնա՛ Հէսապս եօռբիւի չէիսւ, աս ուրուշ սոյ ճանապար էր:

— Նախջուվան, ասաց, շմտ հայ կայ:

«Համպրած չիմ», ասի կարձ:

— Վո՞վ է ձեր կօլօվան, հարցուց:

«Անունը միտքէս էլլիլ է», ասի:

— Եստ ժամ ունիք, ասաց:

«Վեց, չէնէ օխտը, տեղովը չիտիմ», ասի:

— Քանի՞ տէրտէր ունիք, հարցուց:

«Վո՞վ նացա համպրիլ է, կայ-շտէ էփպէյլ»:

— Սղէկ վարժապետներ ունի՞ք, հարցուց:

«Ունինք», ասի:

— Անունները կրնամ ասելու, հարցուց:

«Զառըխեան ունինք, ասի, Գալստեան ունինք, Մարտիրո-
սեան ունինք, Զարիֆեան ունինք, ես ի՛նչ կիտնամ, պէտք
էղածին խտտար կան, պէքիմ աւելի ար:

— Զեր տղաքը նացա կրսիլի՞ն, ժողովուրդը կրսիլի՞,
աղէկ կրսորվեցնուն նաքա:

«Աս ի՛նչ է, ասի, փիրէս էլիլէն, տուն ինձի տափո՞ս
կանիս- ինչ է. ինչ՞ու է իտա հարցումներդ. չէնէ՞ միտք
ունիս».....

— Հապա՛, հապա՛, ասաց մարդը, խօսքըս կրտուլէն, ես
հեքս թէզով Նախջուվան պիտի դամ:

«Գաս նը՛ ի՛նչ պիտի անիս», հարցուցի, աչքիս ծարով
վրան նայելէն. շիտակ նայել չուզէի, զէրէ պէթէր դանելու
էր դունչ ու պուռունկը. աչքերն ալ ինա թէզ թէզ կրփա-
կէր-կրբանար-նը՛ ախանչ, սուտ չիմ ասիլ, կեցած տեղը

մէքամ շէպէք - մայմունն էր, — ագամօրթու սիւրէթ չէր սիւրէթը: «Գասնը՝ ի՞նչ պիտի անիս», ասի:

— Ե՛ս, ասաց:

«Հա՛, տուն, ասի, կերո՛ւ վարժապետ լալ կուզիս նը՝ նա-
Ֆիլէ կուզաս, գէրէ մեր տեղը վարժապետները շունէն
չատ ին»:

— Ես տտ սոյ վարժապետներէն չիմ, ասաց:

«Տուն ի՞նչ փռէամէթ պիտի սորվեցնուս», Հարցուցի:

— Փռէամէթ ի՞նչ ասել է, չիմ Հասկընալ, ասաց:

«Ծիննապէթ, ասի, չիտիս - ինչ փռէամէթ ի՞նչ ասել է,
շտէ խօսքի վրայ՝ սթօռիա, առիսամէթիք, եակուաֆիա,
պուլկալսթեռիա»:

— Կէնէ ասածդ չի Հասկըցայ, ասաց:

«Ատ ի՞նչ վարժապետ իս տուն, որ քու սորվեցնելու
բաներդ չիտիս, ասի. ան այբ-բեն-դիմ-դան մեր կինիմար-
դիքն ալ կըսորվեցնուն մեր մանտո տուղոց»:

— Պարզ ասա՛, ասաց, ի՞նչ կուզիս ասելու:

«Ասկից ալ պարզ բան կըլայ որ, ասի. քեզի փռեամը
Հայնակ կասիմ ու տուն տուղոց ի՞նչ պիտի սորվեցնուս»:

— Ե՛ս, ասաց:

«Հա՛, տուն», ասի:

— Ե՛ս ինչ պիտի սորվեցնում, Հարցուց մէմալ:

«Մեղայ-եասծու-մեղայ, ասի, հէլպէթ տուն, իսս ուս-
տան չէ՛ իսմ».

Խօրդքի ատ արըլըիը ուստան մօտկըցաւ ինծի՝ ծեռքը
պոնած սասօն, քէսա, ճամթաս, ինծի պտուկեցուց ու պաշ-
լայից իրեն բանը: Քանի որ ես մէ՛մը մէջքիս, մէ՛մը փորիս
վրան ուսհաթ սոյէն պառկած՝ պահնիքին քէ՛ծը կանէի նը,
աղլի մարդը ասպէս ասաց.

— Իմ կիտցած բանիս հէսապը կայ որ. ես կըկրնամ սոր-
վեցնելու Հայնակ լուզու, զիրոց լուզու, Հայի պատմութիւն,
ասվածաբանութիւն, տրամաբանութիւն, ժամի պատմութիւն,

Ճարտասանութիւն, թուաբանութիւն, աշխարհաբանութիւն —
հէջօրմասա տասը-տասը հինկ չէշիտ բանութիւններու անունն
տուվից:

«Մատխատար բանի անունն որ տուվիր, ասի, մսխը լի առ-
նելէն, վո՛ւտեխ, որի՞ն քովը ու ե՞ք սորվիլ իս, և կամ խա-
խատար բան խմացողը, Ասվածդ կրսիրիս, իտա դունչ ու
պոռունկը կունենայ, ինչպէս որ տուն ունիս նը», — սիպէս
փռեամը էրեսին ասի. գէրէ ինա ահէքսրդութիւն կասին նը,
մեղայ-եասծու մեղայ, չքփ, չքփ կրկաթէր իտա հէրկէլէին
էրեսէն:

— Տուն կասիս քի-խիշ, վուաելսէ՛ն ես ե՞ք, ես ո՞րին
քովը սորվիլ իմ: Ինձի պէս մարդուն սորվինալ պէ՞տք է որ,
ատ ալայը աւանց խելք մաշելու ու սորվենալու հոս է,
ասաց ու մատովը ցուցուց ճակատը: Ու քիչ մը ատեն սուս
կենալէն ետքը, նորէն կցից. — խօրք մարդուն սորվինալ
պէ՞տք է ինչ. խելքը որ կայ՝ ինքը իրեն ուսում ու գիտու-
թիւն է: Ես կեանքիս մէջ մէկ վարժատուն էղած չիմ ու
մէկէն մէկ բան սորվեցած չիմ, իմ ալայ գիտցածս հոսէն
է, ասաց ու նորէն մատը տարաւ ճակատին: Մէկ բան կայ
աշխարքիս էրեսը, որ ես չիմանամ. ես գիտիմ տղաք մեծ-
ցրնել, ես գիտիմ Ֆայտալը խրատներ տալ հալիին ու
խելք սորվեցնել, ես գիտիմ Ֆողադործութիւն, ես գիտիմ
ցան ու օրախ անել, ես գիտիմ կաթ կլթել ու պէնիր, մա-
ծուն, կարագ խորդել, ես գիտիմ չրախ թափել, ես գիտիմ
սահաթ խորդել, ես գիտիմ հիւանդ ազէկցնել, ես գիտիմ
տուն խորդել, ես գիտիմ պողչա ու պօսթան մէյտան
բերել, ես գիտիմ խալի կործել, ես գիտիմ մեղու ու էպր-
շումի ձուձու պէսլէվիշ անել. տահա՞ կուզես, — ես մէքամ
գիրք շարագրիլ իմ (աճա՛փ կրկրանում մէկ միամիտ մարդ,
որ աունէ տպէ), ատ գիրքովը հային կըսորվեցնում ինչպէս
պիտի անէ, որ հէ՛մ ինքը տօխսան տարի ապրի, հէ՛մ ալ
1200 հոգի օրգիք, թոռեր, ծոռեր ու ծոռին թոռերը աչ-
քովը տեսնէ: Է՛նա ինչպէս մարդ իմ ես:

Պաղած պուզ կտոած էրեսը կընայիմ, չիտիմ ինծի՞ խե
կիտէ, չիտիմ ինքը զինձիլ զարնելու խե է: Չէ, ես ծեղի
կըհարցնուամ՝ անկաճ՝ ներովդ որ մէկին պերնէն սիպէս բա-
ներ լսէիք՝ ի՞նչ կասէիք, ես ի՞նչ միտք կանէիք: Նառլա-
թան կասին նը՝ շառլաթանին էնկ պաշը աս ճիւնսուպէթն
էր: Երեսը նայեցայ՝ աճափ, կասիմ, շախա՞ կանէ, աճափ
մսխըլը՝ կառնէ ինձի, ամմա չէ՛. էրեսին վոսայ ու աչքերուն
մէջը խնդալ չէր էրենայ, զաթօ չտրմիշ արած, խաղցու-
ծաց խեքը պէս-պէլլէ կերևար: Իմացայ որ առջևըս կայ-
նած է խէնդուլիկին մէկը, որ ասօր չի լայ՝ վաղը, միւճէ-
րէթ, խեանոցը պիտի տեղաւորցուի: Գլչ մը ատէն սուս
կենալէն ետքը, հարցուցի.

«Տուն ի՞նչ գվանի ունիս»:

— Զիմ հասկընայ, ասաց:

«Զվանի ալ որ չի հասկընաս նը՝ ի՞նչի պէտք պիտի գայ
քու գիտցած բաներըդ», ետքէն դարձայ իրեն ու «Ղոյեա
ասել կուզիմ, ասի, տուն պաղիւրկեան իս, չէ՞նէ զէնեաթի—
տէր իս, չէնէ՞ տէրտէր ես տիրացու իս, չէնէ՞ վայեննը՞ իս»:

— Հա՛, կոյեա կուզիս իմանալու քի՛ ի՞նչ կոչումն ունիմ—
հա՛: Ես խարապաչ իմ:

«Ասպէս է նը, ասի, արապայիդ արիշները դէպի ես տառ-
ձուր, Նախջուվան մի՛ դալ, չէնէ քաղցած կըսատիխ. զէրէ
հոն մէքամ Եփիփան-աղա ունինք, որ իրեն համար գէ-
նիաթ արիլ է՝ չորս ամիսը մէմը խարապաչներուն կոլօխը
պատուելու ու քաղաքէն ճառէղով փախ տալու»:

— Մինք աս վերջը կընայինք, ասաց խարապաչը, սի՛թթէ
տուն ինձի ասա՛՝ ձեր տեղը թիթե խեքով հայեր չի
կա՛ն-ինչ:

«Քանի՛ հաղարը կուզես, եբոր Նախջուվան թիթե խե-
քով մարդ չիլայ՝ հապա վուտե՛խ կզանրվին նաքս»:

— Ձեր տեղը կօիւ, շամաթա չի՞ սիրիլ ինչ հալիւր, հար-
ցուց նորէն խարապաչը: Եբոր ասպէս է նը՝ Նախջուվանին

մէջը ես չէքի հաց, հապա փառաւոր տուն ալ, անհէսապ բարեկամներ ալ, փառք ու պատիւ ալ, հարկինք ալ ու սիրտիս ամեն ուզեցած բանն ալ կրկանում, թէք որ, ինչպէս ասիր նը, Նախջուզանին մէջը անպակաս ըլլային թեթե խելքով մարդիք ու կռիւ-շամաթա սիրողներ, ու չէքի ազա Նփիփանըդ իմ կօջիս կըպատուէ, հապա ես նարա կօլօր փորէն կակող կանիմ. իսա խօսքս միտքդ պայէ, ասածս ասած է:

Ասաց ու դնաց: Ես ալ հազվեցայ, դնացի օտաս, պառկեցայ:

Մէկալում օրը, իրիկվան սէմթ, դնացի Ալէքսանտօօվսքի պողչան, նօմայ մարդ՝ էրիմարդ, կինխմարդ, հայ, կուռճի, խրզըլպաշ, ոռուս, առաջ ու ետ վօլթա կանէին: Մէմալ նայիս մեր Նախջուզանցի Պ. Ս. որ հոն հայնակ կաղէթ կըզրէ նը՝ տիմացս էլլաւ:

Պարւ—Ասծու պարին:

«Ձեր տեղը ի՛նչ կայ, ի՛նչ չիկայ»:

— Փնօք Ասծու, ասի, սող սէլամէթ, կապրինք շտէ մեզի համար:

«Ի՞նչ կանէ մեր Օվանէար», հարցուց:

— Ի՛նչ պիտի անէ, ասի, քիթին մէքամ կապուտ կէօզլիւք թախմիշ արիլ է, ատէն-ատէն կռիւ-շամաթա կըվերցունէ, ատէն-ատէն ալ ամըռմանք խապերներ կըհազիրէ կաղէթիդ համար:

«Եէն կենայ, շէն կենայ, ասաց Պ. Ս. մէքատիկ իւմէտս նարա խաղէմին վրան է... Ան չէ ամա, լսի՛լ իս, մէքամ խարապաշ պիտի գայ Նախջուզան»:

— Հապա, հապա, ասի, էրեկ ուստ էկայ նարան պողչինքին մէջը: Ի՞նչպէս մարդ է, իրէն ասածէն՝ ամէն բան զիտէ. խոբդ է իտա: Ուտեխէն էկիլ է:

«Նարա կիտցածին համար քեզի իսախատար ասիմ՝ կօզաէ:

ինա չինիի խանութը որ եանդըն իյնի ու խանութպանը, լեզին պատռած, պաշայէ մէջե պարին վերա տանելու ու տուս թապելու, ետքէն ի՞նչ կերպարանք կունենայ նարա պարին. փորը՝ պատռած կռափին, քիթը կտռած չայնիք, փշրած ստաքան, կոթը էլլած ոււմքա, ճաթած փլապաթին, կէամակէս էղած սուփնիք,—ամէն չէշտէն կայ ամա՛ մէկն ալ սաղ չէ՛, մէկն ալ եարարի բան չէ՛: Թամամատպէս է խարապաշին գիտցածները. շատ բան պաշայիլ է, ամա հէչ մէկն ալ կօլօս բերած չէ՛. առանց ծարի, առանց կօլօսի, անկատար, ծուռ-մոռու, եանլըշ ու մեծ փայն ալ ալայ-մալայ սուա: Սապէս է ձեզի գալու խարապաշին զիտութիւնը: Երնտրին նարա վով էղածը կուզես իմանալու. հանա նարա պատմութիւնը: Խամազութիւնով, պամպասանքով Երուսաղէմի փիթուն հայ ժողովուրդին ոտքի հանից հոնի պատրիարքին դէմ ու քաղաքին մէջը մեծ շամաթա վերցուց: Պատրիարքը շատ համբերից, շատ համբերից, ամա վերջը-վերջը, ճարը հատած, կանկատվեցաւ փաշային. փաշան ալ սալտաթներ խրրկից, ոտքերէն, ծեռքերէն, կօլօսէն պռնած, պաճախ-պաճախ վերուցին տարին Եաֆա. Եաֆայէն ալ կէմիի մէջ նստեցուցին, քշեցին: Աղլե կէմին մեր ըռճան խարապաշին բերից, Ստամպոլ ձգից: Ստամպոլ ուտելի հազար չէշտ մարդ իրեն համար ուհաթ կկենայ ու ու մէկն ալ նարան աչքիդ վրան ունք ունիս չի ասիլ մէտօմը ատէն մընալէն ետքը, մեր խարապաշը պաշայից իրեն կըովոտան բնութքը մէյտան հանելու. աս որ տեսան, հարուրաւոր ու հաղարաւոր մարդիք թօփ էղան, կատղած թափեցան մեր շամաթաճի խարապաշին վրան, եռմրուկներով, թէքմաներով աղէկ մը տրօրեցին (հոնի համալները պէթէր սիրտոտ ու զօռպա մարդէք ին, կիտիս) ու փախ տուվին քաղաքէն. «մէմալ քեզի տեսնինք-նը, ասին, ոտքերըդ կըկոտաինք ու կօլօսըդ կըպատռինք»: նստեցուցին մէքամ էչէկի վրայ ու Եջմիածին ճամվեցին: Եջմիածին ալ տեղը

Հանդարտ չի մնաց մեր խարապաշը. Հոնի աշկերաներուն Ֆիս-տալէն, Ֆիս-տալէն ոտքի հանից տեսուչէն դէմ, եպիս-կոպոսները իմացան ու ըստվէն ճամփայ դրին դէպի ձեր Նախջու վանը, Թահմին անելով, որ ձեր Եփիանն աղան նարա հախէն կուգայ: Սապէսով-շտէ ատ Թէօյֆէ պարին ձեր կուլիուն փաթթեցին: Գանը՝ կրտեսնուք ի՛նչ ճանա-վար է. առաջուանէ քեզի ի՛նչ ասիմ»:

Մէտովը տահա կալածի արինք. ուշկէկ ստէն էկայ օտաս, պառկեցայ:

Շաբաթ մը մնացի Թիֆլիս ու դարձայ Նախջու վան:

Մէկ կիրակի, սապահթան, ժամ էրթամ, ասի, զէրէ չօխտան զնացած չէի: Գնացի Լըսաւորիչ: Նես մըտած-չի մտած, ի՛նչ տեսնում՝նը աղէկ է, մեր չիչակ խարապաշը վրան փիլոն առիլ է, կուլիուն հալի Թօփ արիլ է ու նացա քա-րող կասէ ու խրատներ կուտայ: Խօսքը խօսքին հանա նարա քարողը, անխատար որ՝ ես ծարին չի հասայ:

Օրթնեալ ժողովուրդ՝ իմիշ, ձեր տէրտէրները ժամ գալու Թէմպէլ ին, ատպէս բան կը լայ մի, դուք մի վախնաք, աղէկ սոյէն ճիծեցէք նացա ու փախ տուվէք ժամէն:—

Օրթնեալ ժողովուրդ՝ դուք կուղիք լիւպիլէ անելու մէկ շարադրողի, ամա ես տեղով կիտիմ, որ նա, Աստուած վերը վըկայ, ինքը շարադրած չէ, հապա ալայը արասնակէն Թարգմանիլ է ու ձեզի կրխաբէ, ատպէս բան կը լայ մի. չի լայ որ դուք ատ մարդուն լիւպիլէ անիք, ստակներդ մեղք է:

Օրթնեալ ժողովուրդ՝ ձեր սայեախընները խանութէն Թանկնոց Թուռնիւռներ կըդնին ու տեսօքնալու համար էտեներուն կրկալին. ատպէս բան կը լայ մի: Ես ձեզի սորվե-ցընում աժանկէկ ունենալու ձեր կնիկներուն զարգարանքը. խասապ խանութէն մէկ-էրկու քապիկ տուվէք ու առէք կովի փուշտուկ ու տուվէք նացա. Թող էտեներուն կապին

պազարէն զնաժ թանկնոց թուռնիւռին տեղը: Էէմ բնական
զեղեցիկութիւն կուտայ նացա, Հէմ ալ աժան կրնտի ձեղի:—

Օրթնեալ ժողովուրդ՝ դուք զէշ ատէթ արիլ իք էրթալ
կլիւպ ու կլիւպին մէջը թուղթ խաղալ, Հարուրներ տար-
վել և ատպէս էկէմիշ ըլալ. ատպէս բան կը լայ մի: Ես
ձեզի սորվեցնում աժան կերպով էկէմիշ ըլալու. զնեցէք
մէկ-էրկու օխայ քէչկպուշնուգ, իրէն կէրէք ու կուտը ճէ-
պէրդ լըցէք: Եփոր սիրտերդ նեղանայ նը՝ ավուճ-ավուճ
Հանեցէք կուտը ու թէք մէճիթի խաղացէք, ամա ստակով
չիլայ ձեր խաղը, Հապա տարողը տարուողին իրէք տապաւա
քիթէն թօքաշէ՛, ատալ չուղեք-նը՝ տարվողը օտային օր-
թան էրթայ կայնի մէկ ոտքի վրայ ու խօռոզի պէս կու-
կուռիկու թօ կանչէ: Էէմ էկէմիշ կը լաք, Հէմ ալ ստակը
ճէպէրդ կմնայ:—

Օրթնեալ ժողովուրդ՝ դուք ինչո՞ւ Ֆունթին 60 քապիկ
կուտաք ու խանութէն կանուք կարմիր կօր պէսիրը. ատ-
պէս բան կը լայ մի: Լսեցէք ու կատարեցէք իմ խրատը,
չեք փոշմընալ առէք կաթը, մէջը մայեա ապուլ տուվէք.
Եփոր աղի կաթը կրմակըրդվի-նը՝ ձեռքերուդ մէջ աղէկ
մը կըտըրցուցէք, կարմիր Ֆունթնի փաթիլիճանը ճըզմեցէք,
ջուրը աս պէսիրին վրան քսեցէք, էղաւ քեզի խանութի
թանկնոց պէսիր: Ստոր Համար տունեսային ստակ վօթել
պէտք է որ:—

Օրթնեալ ժողովուրդ՝ ինչո՞ւ ձեր կեանքը կարճ է ու ձեր
զաւակները քիչ ին. կուղիք ես ձեզի տօխսան տարի սպ-
րեցնում ու Կուք ձեր աչքովը տեսնուք Հէմ ձեր օրդոց,
Հէմ ձեր թոռերուն, Հէմ ծոռերուն, Հէմ ալ ծոռին թոռին
պսակը, ամպէս որ՝ մէքատիկ մարդը, տօխսան տարու էկած,
1200 Հոդի օգըւշախ ունենայ: Ես մէքամ զիրք ունիմ
շարադրած. եփոր ձեր մէջէն մէկ աստվածասէր և ազգասէր
մարդ էլլէ ու աս զիրքը իրեն ստրկով տպիլ տայ՝ քանի
մը տարվան մէջ Լայոց ազգը Հարուր միլիծնի կըՀամնի:—

Օրթնեալ ժողովուրդ՝ ինչո՞ւ դուք ձեր տունին մէջը քուչուռ ու պանուր կրպայիք, եփոր տուն ինքդ էրթաս առան, քու ձեռքովդ ձիւդ ու կովիդ տակը սրբիս, ու նայա ինքդ խոտ ու ջուր տասնը, մէկալ սէմթէն սայեախըւղ ալ իրեն ձեռքով՝ գետինը ալվէ, լուացքը անէ, կերակուրը էփէ, պեախ - չանախը լըւանայ, տուն մէմը նայէ՛ էրկուսդ ալ ի՞նչպէս տիրի ու առողջ կըլաք, ու քաղաքս 20,000, պէքիմ աւելի ալ, շահ կունենայ:—

Օրթնեալ ժողովուրդ՝ ինչո՞ւ քու որդիդ պահը մէմը Ռաստով կէրթայ. անոր աղէկը ան չէ՞, որ տուն նարան թէզ կարգիս, որ մախսուամը Ռաստովն մէջ անելը բանը իրեն տունը անէ, ու ատով Հէմ գէշ ցաւերէ ազատվի, Հէմ ալ ստակը օտարին ճէպը չե՛ մուսնուլ:—

Օրթնեալ ժողովուրդ՝ դուք ինչո՞ւ տունիային ստակը կըփօթիք ու խանութէն սթէառին չբախ կրկրնիք: Կուզե՞ք, ես ձեզի ատօր ալ խօլայ ճամփան սորվեցնում: Խասապէն առէք կովի, ամա աակէց ալ աւելի աղէկ՝ ածի եղ, լցէք խալկինին մէջը ու հալեցուցէք, վրան ալ նօմայ աղ ցանեցէք. ետքէն առէք խնապ ու մէկ ծարէն խօթեցէք հանեցէք աղը եղով խալկինին մէջը, մինչև անքան, որ եղը թօփըլայ խընսպին վրան: Ետէ՛ քեզի չըրախ, — Հէմ աժան, Հէմ աղէկ: Մեղք չէ՞ ստակներդ:—

Օրթնեալ ժողովուրդ՝ շտէ տայմա ժամ գաք նը՝ ասպէս աղէկ-աղէկ խրատներ կըլաիք ինձիմէն, Հէմ շահ կունենաք, Հէմ էկլէմիշ կըլաք, Հէմ ալ ասլաճահաճոյ գործ կատարած կըլաք:—

Եւ նմա փառք յաւիտեանս ամէն:

Եփոր ժամէն էլլան նը՝ մեր խարսպաշը թէզպէհը ձեռքը, աղը իրեն քաղաքի քիվեռը քովինա, տառեացիի փասօնով կուլխուն տըրած կէրթար, սաղին - սօլին նայելէն՝ սանքի

մեզնի ամպէս խօլօք, խելքի պասկելու, Ֆայտալը բաներ խրատիլ է, որ եփոր նարա սասճները կատարինք 'նր' մի-նուլթ-սահաթվայ մեջ հարուրների ու հազարներ պիտի վաստրկինք:

Նարա բարեկամները՝ Մարկոսներ ու Կիրակոսներ, Կարապետներ ու Հայրապետներ, Օվանէսներ ու Վարդաններ, Դանիէլներ ու Մանիէլներ, Ասվատուրներ ու Խաչատուրներ, Պօղոսներ ու Նիկողոսներ, չորս քովը թոփ էլած՝ հայ հայ կրկրտրուտէին մարդուն:

— Հայրիկ, կասէր մէկը, արի՛ էրթանք մեզնի, սպեախլուս հասելէթտէն քեզնի համար քո-սիրած սամսաները խորդիլ է—եղճա, կակո՞ղ, համո՞վ:

— Հայրիկ, կասէր մէկալը, մեզնի արի՛, ասոր, մեր կինիմարդը յատուկ քեզնի համար նշաստա ալուրէ, համով-ուհահամով, ճուրոտ պէրէհիներ խորդիլ է պերանդ արըրի խէ՛ կըհալն ու վար կէրթայ:

— Իրիկվանէ, կասէր իրեքումը, կինիմարդըս հասելէթտէն խղմէթքեարլին Ռաստով խրկիլ էր ու Ֆունթը 65 քապիկնոց ասէթուս կնել տուվիլ էր: Քօնեաք, շաթօ իքէմ, շաթօ լաճիթ, խայմախ, էմպիէի խայվար—ալայը, ալայը, քեզնի կընային:

Աս խօսքերը լսելէն, մեր խարապաշին թուքերը վազեցան բերնէն:

— Զարուքայէն ետքը խաճէ ալ կըլլայ, ասաց կէս մը շախայով, կէս մը խորգմուտէն:

— Կըլլայ, կըլլայ, ալայ բանն ալ կըլլայ, հայրիկ, ասաց բարեկամը:

Վեց մանէթնոց հալես Ստամպօլն թիթին ալ կը լլայ, ասաց խարապաշը:

— Կըլլայ, կըլլայ, հայրիկ, ալայ բանն ալ կըլլայ:

— Իրիկվան սէմթ պարապար, ես խաթունիդ հետը թապուռէթի կընատի՞նք, հարցուց սուտ հայրիկը:

— Հապա չի՞ս նստիլ, ասաց բարեկամը, ատ սայիախլուբիս էնի սիրած բանն է ու:

— Ատպէս է՛նր, ասաց խարապաշը, հայտէ էրթանք քեզի: Ետքէն տառձաւ ու մէկալոնց ասաց՝ վաղն ալ ծեղի կուգամ եւ՛ յօրձուկու հացի, եւ՛ իրիկվան չայի:

— Համեցէ՛ք, համեցէ՛ք, բարով էկար, ասին քէստ ինկած բարեկամները:

Հալին ալ, ժամին ազպարը թօփ էլած, մեր խարապաշին լաֆը կանէր. «Տոէ՛ մարդ, շոէ՛ քարոզիչ, կասէր, շոէ՛ հայի իսկական բարեկամը, հէ՛մ խոնար, հէ՛մ կառավարող, հէ՛մ կիտուն-իմաստուն, հէ՛մ ալ Փայտալը: Պերնէն էլլած ամեն-մէկ խօսքը ճէվայիր ու մարգըրիտ է: Ատպէս մարդ հէչ տահա տեսնըված չէ՛ Նախջուվանին մէջը:

— Մէկ ուրիշը աւելցուց՝ ինչո՞ւ սալթը Նախջուվանին մէջը, կասիս, սաղ Հայաստանին մէջ. ասա՛-տա, ի՛նչ կը վախնաս:

— Իրէքումը ասաց՝ «Աննետիկ ալ էլած չէ՛ ասպէս իմաստուն մարդ»:

— Զորսումը, որ Լազարովին ճեմարանին էրկուտում քլասէն էլլած ու ծխական դպրոցներէ մէկին մէջը վարժապետ դրած էր, կուզէր ցուցունելու քի՛ ինքն ալ բան ու ման կիտէ՛ «Աննետիկն ալ ի՛նչ հօրս-ցաւն է որ, ասաց, համան մեր հինգերորդ դարու հեղինակներէն վեր է ասիմ՛նը՝ սուտ ասած չիմ լար»:

— Հինկումը հարցուց՝ «Իտա մարդը գրած գիրքեր ունի՞»:

— Վեցումը պատասխան տուվից՝ «Հապա չունի՞, հէյպէթ ունի, նա, կասին, ղէմպիլներով շարադրութիւններ գրիլ է ու քովի դրիլ է. մէկ օր ազգասէրներ գտնէ նը՝ ալայը պիտի սպէ»:

— Մէջի գրածը ի՛նչ փռէտմէթի վրայ է, հարցուց հինկումը:

— Լազարովի ճեմարանին էրկուտում քլասէն էլլածը

ասաց՝ «Ռազնրոյ փռէտմէթներու վրայ է, վերլն փիլիսոփայութիւն, վերլն ասվածաբանութիւն, ամպէս որ՝ տէկմէ հարով նարան հասկրնախն ալ շատ խօլայ բան չէ»:

— Մարդուն մէկը հարցուց՝ «Իսա մարդը վճռտելս վարժովիլ է»:

— Աէնէ մեր մոսկոֆցի ուսեալը պատասխանից՝ «Ատ սոյ մարդիք, ատէթը, վարժատունի մէջ ու վարժապետի քով չին սորվինալ, նաքա մօրէ ծունունդ ասվածային շունորք կունենան ու աշխարքիս ամէն գիտութիւնները չի սորված կրդիտնան»:

— Էէչ ամպէս բան կը լայ, իշկիլէմիշ էղաւ հարցունողը:

— Հապա չն՞ լալ, ասաց պարծրնալով հալխին վրան նայելէն մեր մոսկոֆցի ուսեալը, հապա մարգարէներո՞, հապա առաքեալներո՞, հապա մեր նախնի նահատակ սուրբ հարքը:

— Հա ա ս, ստ Ֆասօնի մարդ է մեր խարապաշը, ասաց, խօսքի պառկելէն, իշկիլէմիշ էղողը ու ծանր կտուից:

Ասպէսով հալխը իրեն ոէշնեան տուվից, որ մեր տանդալախ խարապաշը հէ՛մ գիտուն է, հէ՛մ իմաստուն է, հէ՛մ շնորհալի է, հէ՛մ ալ սուրբի սրա մէկ մարդ է, քիչ մնաց, որ հրաշագործ անէին պօշ-պօղազին:

Ատ մինութիւն, եբոր հալխը նարան ասպէս աթեսթաթներ ու տիպրմիսր կուտար-նը, մեր խարապաշը, աղլի աղային տունը, վրայի հալաւը հանած, թեւերը վեր քաշած, թէկարան քէֆլի (ղէրէ մալասօնի խայվարէն, չիլմէն, սառտինքայէն առաջ— հինք ոխմքա քօնեակ զարկիլ էր, զաքուքայէն ետքն ալ՝ օխտը ոխմքա շաթօ իքէմ ու շաթօ լաֆիթ ծծիլ էր), փափիռօսը ծեռքը, կէնճ տանախկինին տիմացը նստած՝ թապուռլէթ կրխաղար ու արալխտա եալ Պամպօ ճրքնաւորին փորձութիւնը կը պատմէր, որը լսելով կէնճ եանկային աչքերէն կրակ ու կայծակներ կթափէին: Ասլը տէյէմիշ արած բան է, որ կիմարդ ասածըդ զուպա

էրիմարդիք կհաւնի, իլլայի նաքա, որոնց էրիկները վատուժմատուժ, հիւանդոտ մարդիք ին: Մեր խարապաշին բարեկամներուն ալ, փախիլ սատանայ, մեծ փայլ առ Փասօնի չոր-մոր մարդիք էին:

Ես ծեղե մէկ բան պիտի ասիմ, որ շատ մարդ չիտէ: Արիմարդոց մջ անկաճէ անկաճ մէկ խօսք կը քալէ քի՛ խարապաշին ոտքը սայախլուին օղուռ է, նարա տիմաց խաղացող տղան, կասին, պէթէր պահթաւոր ու պէթէր ղէնկին կըլայ տէյին, ղէրէ մէքամ ասպէս սլուչի էղիլ է չօխտանները: Տօղուտու՛ ո՞ր կինի մարդ չուզէ պահթաւոր որդու մար ըլլալու: Աս տուն բանի տեղ մի՛ ղնիլ ալ, խօսք էր, շտէ, արալըխտա ասի, բան չունիս:

Մէկ օր, իրիկվան չանկերուն ատէն, էլլել իմ պաղարէն տուն կուգամ, նայիմ՝ հեռուէն մեր չեչակ խարապաշը, թէղպէհը ծեռքը, քաթթառ պառպօսի աչքերը չորս-սէմթ ման բերիլէն՝ շետակ դէպի ինծի կուգայ: Կարաճիլի չի պրոնրվելու համար՝ չիտեսնողս էղայ, ճամփաս ծռեցի ու, իմ խեղքէս, հեռուէն պիտի անցնիմ ու էրթամ իմ բանիս, ամա անիծածը միտքս հասկըցաւ, չափաատինս ճամփաս կըտուից: Լայլաճ բարև պիտի տրվէր:

«Աւակի կէրթատ», հարցուց:

— Տուն կէրթամ, ասի: Ամա թէղ խօսքս փոխեցի, ղերէ վախցայ, որ չասէ «հայտա», քեղի էրթանք չայի». տունը շատ մնալու չիմ, ասի, ծան տուված տեղ ունիմ ասօր:

«Ե աղէկ, աղէկ, ասաց, մէկ ուրուշ օր կը հանդրպիմ քեղե իրիկվան չայի. ղիշերն ալ կընստինք, թապուռլէթ կխաղանք»:

Ես սուս կեցայ, բան չասի:

«Մն չէ՛ ամա, ասաց, միտքդ է Թիֆլիզին պաղնիքը»:

Ես վրայէս ամպէս ցուցուցի, սանքի մոռցիլ իմ:

«Միտքդ բեր մէմբ, ասաց խարապաշը, դուն չէի՞ր, որ ինձի սովէթ չէր տեսնէիր Նախջուզան դալու, իմի՞ջ քաղցած կըսաստկիս: Եհնարլիս ասա՛ նայինք՝ մեղիմէն վնով է քաղցածը՝ ես, չէնէ դուն:»

Պատասխանի տեղ ես ինտացի:

«Ես չօխտան կիտէի, ասաց խարապաշը, որ պահէթըս Նախջուզանին մէջը պիտի կուտնոււմ. դէրէ ինձի մէքամ չինկէնէ Ֆալճի ասիլ էր՝ «Հածէ խարապաշ, տուն թէվէ-քելի տեղ տիրլեք չիս անիլ. մարդիք ապամ քեզի կանպատվին, կըծեծին ու փախ կուտան քովերէն: Եբոր տուն ռահաթ կեսնք կուզիս-նը՝ ամպէս մէկ քաղաք կըտիր քեզի համար, որ մէջի ժողովուրդը հէմ միամիտ ըլլայ, հէմ ալ կուլ-շամաթա սիրող. ու բարեկամ ալ ընտռելու լաս նը՝ սալթը էրկու չէշիտ ունեցիր՝ ես՝ ճրվրայ խկլքով, ես պէթէր քիւլհանի»: Կնչպէս որ ասաց չինկեանան, ես ալ ամպէս արի:»

«Նախջուզան կասին նը չեկտնրվելեք քաղաք է. իրեք ամիս չի անցնիլ, որ հալխին մէջ մէկ կուեւ ու շամաթա չի ծագի: Քաղաքն ալ իփ-իլինք է ես՝ թէնթէքնեքով, ես՝ նամլը խալպերով. արդար, շիտակ մարդ շատ խըթ կըկուտնուս. ան ալ՝ ես խօսքը հալխին մէջը անցուկ չի լայ, ես՝ ճէպիրը տարին տասվէրկու ամիս պօշ կըլլայ:»

— Ատ՛ ինչ որ կասիս-նը՝ նոր բան չէ. տուն ինձի ամպէս բան ասա՛, որ բանի լմանի:

«Ինչ կուզիս, ասաց խարապաշը, ասա՛ նայինք, պէքիմ՝ կասիմ ար:»

— Ես քեզի էրկու բան ունիմ հարցնելու, ասի, ամա խօսք տուր, որ սուտ չիս ասիլ:

«Է աղէկ, խօսք կուտամ, ասա՛ նայինք՝ ի՞նչ է հարցնելուդ:»

— Առջի հարցմունքս աս է, ասի. ինչու՞ տուն ստակրդ մէկին-մէկալին կըպաժնիս. քեզիպէսները, ատէթը, ստրկի

տամազի կրքան, տուն ինչու՞ թօփ չիս անիլ նեղ օրիդ համար, առ խօմ հէջ բանի սրբայ բան չի՛:

«Ա՛մ հա՛մ հա՛մ հա՛մ, խնդաց խարապաշը, շտէ առ է սա իմ մարիօթէթս, ասաց նա, ատով է որ ճիւղնապէթնեբուն կրխարիմ-տա: Ասվածի կրախրիս, կբոր ես ամիսը 5-10 մանէթ, որ ծեռքս կիշնի, իմ վրաս խարճելու լամ նը՝ հալիս պիտի՛ ստէ քի, ես ալ ուրիշ խարապաշներուն պէսնակ ստակ սիրող իմ, տամազ իմ, չիտիմ-ինչ, չիտիս-ինչ, ու ինծի չիպիտի սիրէ, ինծիմէն հեռու պիտի քալէ. ամա որ ծեռքիս ստակը (ան ալ քանի՞ քապիկ է որ) հոս-հոն պաճնիմ նը՝ հալիս կրպաշայէ ինծի համար ատկու քի՛ ես սորկի տամազ չիմ (որ պէթէր խրթ բան է իմ գէնիաթիս մարդոց մէջը) ես օղորմած իմ, ես մարդասէր իմ, ու անիէ էտքը կրպաշայէ գէպի ինծի սէր ու հաւատ ունենալու. ինչպէս որ ես իմ ունեցածս պիտամիշ չիմ անիլ մարդոց համար, ամպէս ալ մարդիք իրենց ունեցածը ինծի համար պիտամիշ չին անիլ: Սլա-օրն ամիսը 5-10 մանէթ պիտի տամ եղել է որնչպէրներուն ու խարիպներուն, ամինս ամին օր հալիին տուն փոր-քաղցունեկէն, ես որ սասը, որ քանն, որ քատտուն, որ հարուր, համան ատկու լամ քի՛ ես կիանքս կանցնում ամասկան էրկու հարուր մանէթ խարճողին պէս՝ սուս ասած չիմ լալ: Ասվածային-իր-օրը, ինչ խատար որ սիրտս կուզէ ու փորս կտեղուոր-ցունէ՛ թանկնոց քօնեաք, թանկնոց զաքուսքա, թանկնոց հաց ու ուժին, թանկնոց կիւնիներ, չայ, խա՞թէ, ատոր վրան ալ աւելցու՛ր՝ շէնքով մարդոց հետ լա՞թ ու կալաճի, աղպի ֆասօնով թանկնոց մէպիլներուն վրան փրո՞ված, արա՛լըխաս՝ փափեռօսը քաշէ՛ ու ճրոթ արա՛, թո՛ւք թանկնոց խալիներուն վրան, փամիլը՛յ, առ ինծի պէս մէքամ օջիլտա տանդալախին, հարած-վարած խարապաշին համար—ատիէ էտքը ինծի անգլիի արքաուլթին պէ՞տք է որ, ես իմ արքաուլթինս հոս Նախջուլանին մէջը կրախլ

իմ ու: Ենտար Հասկրցամբ մարիֆէթա: Թիֆլիզի պաղնիքին մէջը ասածիս Հեա ինչպէս իս: Միտքըդ է, ան օրը տուն ինծի ծաննալ չուզէիր, աս օրվայ օրս ամպէս մարդիք կրնասին-կէլլին Հեաս, որ նացա օղունկին չիս աժիլ: Ետէ քու առջի Հարցմունքիդ տառք: Աստ, նայինք, որն է հրկուսում Հարցմունքդ:

— Էրկուսում Հարցմունքս աս է, ասի: Ասինք որ տուն թեթե խելքով մարդոց հար աշնաուսթին կանիս, պէլլի բան է, նացա քու Ֆայտայիդ խուլամիշ ըլլալու Համար, աս Հասկրցամբ: Հապա ինչո՞ւ բարեկամութիւն կանիս քիւլՀանի, պամպարակ, խալպ, պոշ խաղցնող մարդոց Հեա, ննցամէն ի՞նչ պիտի շահվիս, նաքա ինքերը սատիած էշ կրվնտոին, որ ոտքէն նալը Հանին: Ատ շտէ ինծի Հասկրցո՞ւր:

Ատ ալ իմ Ֆէնաս է, ասաց խարապաշը: Մէմը որ աս սոյ, կոյեա քիւլՀանի, խալպ, պոշ խաղցնող մարդոցը ես չիմ մօտկրնար Հապա՝ նաքա ինծի կրմօտկնան, անխտար որ՝ ես քովէս չիմ քշել նացա, ինչպէս որ տուն, միտքդ է, ինծի Թիֆլիզին պաղնիքին մէջը քշեցիր: Դուն կիտիս ինչո՞ւ քաղաքիս անշահ, քիւլՀանի մարդիքը ինծի կրմօտկրնան. Հանա, լսէ պատճառը: ՔիւլՀանի մարդը, ինչպէս կիտիսնը, սուտով-խորդով, Հէլալ-Հարամ էփպէյի սերմեա թօփարիլ է, տուն տեղ, էքիփաժ-բան թախրմ արիլ է, մէկ խօսքով՝ ամեն բանը թամամ է, կմնայ մենակ, որ Հալիսէն ալ պատիւ ունենայ: Ինչո՞ւ չէ՛, Հալիսը նարան պատիւ տալ կուտար, նարա անցած խալպութիւնները ու շալվէրութիւններն ալ կրմոնար, եբոր նա մէկ խոշոր սումի բան պաշխէր եւ՝ ժամին, եւ՝ Հասարակին: Սամնս մեր քիւլՀանին աս պաշխիշը անելու խատար քափիթալ չունի, ունի ալ՝նը՝ պեամիշ կանէ. ամնա սիրար կուզէ մէյտանի մարդ ըլլալու, խօսքը անցուկ անելու, մէկ քամիսի չլէն, ես տումայի կլասնի ըլլալու: Ի՞նչ անէ շնտը աղլի քիւլՀանին. Նա կամացուկ ինծի կը մօտկրնայ, ամն

չիմանաք որ ինծի սիրածէն, եւ խօսքիս հաւնածէն, հէջ
 չէ՛. ես տեղով կիտիմ, որ նա սիրտին մէջը տայմա ինծի
 զէշ կասէ, ինչպէս որ ես ալ նարան, հասպա՛ նա կուզէ իմ
 աչքիս աղէկ մարդ էրևնալու ու ինծի հետ մէկտեղ՝ քովիս
 մարդոց աչքին ալ, ու չունքի ես հաշվէ սաղ քաղաքին
 պատիւը կրվայելիմ-նը՝ իմ պատիւէս աս քիւլհանիին ալ
 փշրանք կըհամնի: «Հապա, կասէ հալիւր, Մարկոսը եւ Կիրա-
 կոսը, Կարապետը, եւ Հայրապետը, Օվանէսը եւ Վարդանէսը,
 Գանիէլը եւ Մանիէլը, Ասվատուրը եւ Խաչատուրը, Պօղոսը
 եւ Նիկողոսը, շտէ խարապաշին հետը աղէկ է, տայմա
 նարա հետը կընտէ-կիւլէ, նարամէն խելք կըսովրենայ, ես
 ի՛նչ կիտնամ՝ շտէ սիպէս աղէկ աղէկ բաներ ասել կուտայ
 իրեն համար ինծի հետ նստել-էլէլէն: Արալըստա հալիւր
 կըմոռնայ նարա անցած խալպ գործերը ու շալվէրի կա-
 լածինները, նա եւալ կըպաշայէ կամաց-կամաց սըրայի մոնե-
 լու: Մինտը հասկըցա՛ր ինչի՛ համար քիւլհանի մարդիք
 ինծի բարեկամ ին: Մէկալ սեմթէն ես ալ կըցածիս խատար,
 նացա կռնակէն իմ Փայտաներս կռնուում: խօսքի վրայ, աս
 քիւլհանիները ինծի մօտիկ չի լային նը՝ ես ի՛նչպէս պիտի
 Ֆելան տեղէն աղլի հրամանը բերել տալու, որն ինծի
 մէկ մինուլթվան մէջ օրինաւոր մարդոց սըրան անցուց:
 Ետէ քեզի պատճառը ինչու՞ ես քիւլհանի մարդոց հետ
 աշնաւուլթին կանիմ: Աս մէկ, էրկուսումն ալ ան որ՝ ո՞ր
 շէնքով մարդը, Ասվածգ կըսիրիս, ինծի եարտըմ պիտի
 անէ չէշիտ-չէշիտ թանցեր խաղալու, խօսքի վրայ՝ մէկ
 օրինաւոր տեսուչի ոտքին տակը ծմբուկի կճեպ դնելու,
 հիլալ մարդուն անունը գող տնելու, վարժատուն խորդովին
 նարա խորգած վարժատունէն փախ տալու, մէկ օղորմելի
 հոգեսէրի 30-40 տարվայ էմէկը մատնուլթինով ու չարախօ-
 սուլթինով մէկ մինուլթվայ մէջ եօխ անելու: Քիւլհանի
 բարեկամներ չունենայի նը՝ աս բաները կօլօխ բերել կը-
 կրնայի ես, ես որ ինքս ամեն տեղ թուքած-մուրած ու ամեն
 տեղէ հարած-վարած իմ»:

Ալ չի կրցայ համբերելու. ասպէս տէնքսրդ բնութք, ասպէս հաստ կաշիով էրես, ասպէս քարէ սիրտ, ասպէս սաղայելի հողի կեանքիս մէջ առջի տեսածս էր: «Իս եալ մէկ նոր Նիկօլ էղաւ մեր կուլխուն» . ասի միաքիս մէջը:

Անօրնկրը ի՞նչ տեսնելի-նը աղէկ էր: Մեր ժամին տուռը, ինչպէս աթատան-պապատան ատէթ էղիլ է նը, սրբայով աղքատներ կայնած կըլան, օղորմութիւն կըմուրան ու ասով կապրին: Աստեղ ես չուզիմ յիշելու, որ աղքատին օղորմութիւն տալը յատկապէս Քրիստոսէն սահմանած է ու մեր հաւատին էնկ պէտքական կուտորն է. աս ամեն մարդ ալ զիտէ:

Մէմալ նայիս մեր շաշերն խարապաչը ժամէն էլաւ ու տուակիլի պէս պաշայից աղքատներուն ծեծելու ու ժամին տուռէն փախ-սալու:

Աղքատին ժամին տուռէն փախ տալը Նախջուվանին թէմէլ ձգած օրէն լսված բան չէր: Ասվածդ կըսիրիս, վայցուն-եթմիշ տարու ծերը, քիտոր, ծեռքը չօրխը, ոտքը թօփալը, մունձը, անկալը, անդամալուծը ինչով պիտի սպրվին, թէ որ օղորմած մարդիք նայա քապիկներով ու կռօշներով կարտրմ՝ շանին-նը:—Սաղ Հայաստան փնտուեցէք, հայոց ալայ պատմութիւնը քրքրեցէք, նայիմ, դահա մէկ ուրիշ տապուա կալ կըկուտնո՞ւք ժամին տուռէն ծեծելէն աղքատ փախ-տուող: «Յնա՛, աշխատէ՛» իմիշ: Որի՞ն է խտա ասածդ. ծեր անկալի՞ն, հիւանդ քիտօ՞ն, ձեռքը չօրցածի՞ն, մօրէ ծնունդ խուլ ու մունձի՞ն Օղորմելին ճօրովէն շալակին տուպուն կըվիցցունէ, աս մեր շաշերնըս «Յնա՛, աշխատէ՛» իմիշ: Լէրկէլէ շուն, տուն ինչո՞ւ մէմը վրագ չիս նայիլ. աս տարիքդ որ էկիլ իս՝ հալխին օղորմութիւնովը սպրած չիս ինչ ի՞նչ Փառը կայ աղքատին տրված չոր տիլիմ հացին ու քու փաթլամիշ-կղած թօութիւն մէջը. կա ի՞նչ Փառը կայ աղքատին առած

փասլտած տէնիշքէյին ու քեզի տրված տասը մանէթնոց ժամուցին մէջը: Տառղը, ես քեզի ասխհ, ասէ՛ «Մուրացկանը պզտիկ աղքատ է, տուն խոշոր աղքատ-իս»: Մուրացկանը կաղաչէ ու կառնէ, տուն կխաբիս ու կառնուս»: Հասկըցար:

Տուն, էղիլ է, տուղոցը ասվածաբանութի՛ն կրտրվեցնուս: Ռ՛վ մարդ՝ տուն կիտի՛ս-ինչ ասվածաբանութի՛նը ի՛նչ ասել է, տուն Ասված կրճանչնաս ինչ ասված ճանչնայիր նը՝ Հէչ աղքատին կրճեծէ՛ր ու ժամին տուռէն փախ կուտայիր:

Կըլսինք որ՝ ասս զիսց կոյեա՛ աղքատ փախ տալը, մէկ քանի քեզի մտտիկ շաշխրններ քեզիմէն օրինակ առիլ ին: Դուն շիտի՛ս, որ Հայի ժամէն աղքատ փախ տալը Հայի ժամին թէմէլը զըջիլ ասել է: Վայ ան տուղոցը, որ քեզիմէն բան պիտի տրվենան. վայ ան ժողովուրդին, որ քեզիմով պիտի խրատվի: Դուն ճէլաթներ ու հարամիներ կըհաղերիս մեր քաղաքին համար, չէքի շէնքով ժողովուրդ:

Սուտ չէ՛, խորդ է, Ֆռանցուզն ալ, ինկլիզն ալ ապուլ չին տալ իրենց ժամերուն տուռը աղքատներուն, կայներու մուրալու, ամմա՛ նաքա ասպէս կանին նը՝ առաջվանէ անկալ աղքատին ապրուստը հաղեր արիլ ին. ամեն քաղաքի մէջ պալապան-պալապան աղքատանոցներ, անկեանոցներ, որբանոցներ խորդիլ ին ամեն չէշիտ աղքատին համար: Գո՛ւ ծեծված աղքատդ ուտելի թօ էրթայ, փորին քաղցածութի՛նը ինչո՞վ թօ մարէ ու չպախ կովասն ինչո՞վ թօ ծածկէ:

Մաս զէշ բան է, շատ զէշ բան է խարապաշը, ամմա՛ անկէց ալ պէթէր բան կայ, աս՝ Սատանային օջիլն է. դուն աստանայի-օջիլ իս: Ամա ինչո՞ւ քեզի աս անուներ կուտամ՝ աս ալ ինքդ հասկըցիր:

Ս Ի Ի Լ Ի Ի Կ.



Խ Օ Ռ Թ Լ Ա Խ

(Պարկենդանքի Նախընթաց) ¹⁾

Մէկ զրշեր, սահաթը սասկս տասվերկուսներուն, քըւ-
պէն էլլայ, տուն պիտ գամ: Ատ տասպան քըւպէն էլլող-
ներէն հաշվէ վերջինն էի: Նվէցասը, աթոսքի վրայ նստած,
քուն կըլար, լամիները մութ կըվառէին. պարսպան տունը
պարսպ էր, ծան-ծուն չէր լսվի: Երկըթէ վերաիվէներէն
ինջած ատէնս ոտքիս ծանը վարէն մինչի վեր ամուր-
ամուր կըլսվէր, սանքի քալողները հարուր հոգի էին. պա-
լապան շուքս, աժտհհարի լման, վերաիվէի պասամախ-
ներուն վրայէն թոչտելէն, ինծիմէն առաջ կըվազէր: Նվէ-
ցասը, քունը կըլօխըր, աչքերը ճըմուժիկէն, փայլէթօս ու
կասկս տուվից ինծի, տուօր պայից ու էտէս ամուկս
ամուր փակից, որ ես հարբած, ուշ ատէն խսպախէն տուս
ձգած մարդու լմանեցայ: Սօխախ մտայ-նը՝ հոն ալ մարդ
չըտեսայ. իրենց տուները պառկած, նաքս չօխտան խօղը-
տաթմիշ կանէին: Տուններուն փէնճէրէներէն լուս չէր էրե-
վար. ֆէնէոները վառած չէին, զէրէ օրացուցի հէասպով
լուսինկան արդըի մէյտանը պիտի լար. ամա ինչ սաղիս
կերևար, ինչ սօլիս. կըլօխ պատուելու խարէր մութ ալ
չիլար-նը՝ լուս ալ չէր, ամուկս որ՝ տասը-տասներհինկ ա-
պութէն աիժար էր կիտնայը—առջևէս կիտցողը մարդ է,
չէնէ էկիզ-արապայով խոտ:

¹⁾ Այս վերնագրով հեղինակը պիտի հրատարակէ մի օր մի շարք կեանքից ա-
ռած կենդանի գոյներով նկարած պատմածները:

Ինչպէս կիտիք-նր՝ տունս քաղաքիս աղէկ սօխախննրէն մէկին մէջն է ամա, քլուպէն հիպէի Հեռու է, վէռսթ ալ չիլայ-նր՝ անկէ շատ պակաս չի լայ: «Իզօշչիք», կանչեցի, ու ծանա մնասկ ինքս լսեցի. իզօշչիք չէքի՝ շուն պիլէ չէր էրեվալ: Լեռույէն, շատ Հեռույէն, պէլլի չէր, պուհույի՞, չէ՞նէ շունի ունալու, չէնէ՞ մի հարամիի սանակին տակը պառկած մարդու խղճալի ծան կրլսվէր... Սիրտս շքվվլ արաւ. ինքս ալ չիտիմ ինչու պաշլայեցի տողալու: Լողիս մալին կանէր, որ կուլիտուս գալիք կայ: Մէքամ հարբած խաղախ, մէքամ խարափուլ, մէքամ պասեաք-կող չի կար, սանքի ալայը խօսք-մէկ էղիլ էին ծակէ ծակ պողօտվելու ու ինծի մէս-մնասկ ձգելու սօխախննրուն մէջը, փիթուն քաղաքը մեռել-կոխ էգածի պէս պան էր... «Ծա՛ պահթ, ի՛նչ կրլայ-կրլայ», ասի ու կնացի գէպի տունիս սէմթը: Ա՛լ ինա X լինփային մօտիկցիլ էի՝ նայիմ—աղլի ինա նոր խորգած թուլայէ տունին (տունին տէրերը սահա մէջը կրված չէին) տունին փենճէրէններէն լուս կերևայ: Պէթէր խունտում էգայ ու պաշլայեցի թէղ-թէղ քայելու: Տունին մօտկրցայ-նր՝ նայիմ, ի՛նչ կընայիս. փենճէրէններուն վըրան ու օտաններուն մէջը ի՛նչ չըտիս կայ, ի՛նչ լամփ. լուսն ալ չըտիս, ես լամփի լուս չէր, ուրիշ սոյ պան էր, տէյէմիշ արի՛լ իք ինա պէթէր տուման սիս օրը, որ էրկու ապուլթ տէղէն պան չիս տեսիլ-նր, ու կիտիս քի էրկինք-կիտին ամպէս է, ինչպէս որ ճերմակ փառ քաշած լըսաւորված մարդու աչքը. ես, սակէ եալ աղէկ՝ մուլթ քօշան հէչ նէմ մասերուտ մէջը տորոլի՛լ իս սէռնիքին կօլօխը ու մատու-լուտ վըան նայի՛լ իս,—լուս ասիս՝ լուս չէ, մուլս ասիս՝ մուլս չէ, պղտի աղաքը տարան սատանայի-կրակ կասին. թամամ իտա սատանայի կրակով իլինք էր աղլի թուլայէ պարապ տունը. նեսը պան չէր էրևալ—ի՛նչ աթօռք, ի՛նչ սիւրէթ, ի՛նչ շամտան, ինչ պատ, անխատար որ լուսի ու շուքի պէս մէկ պան կրտեսնէի: Աս ալ ի՛նչ չէշիտ պան

է), ասի միտքիս մէջը, աչքերս դէպի մէկալ սէմթը տառ-
ցուցի, որ չի տեսնիմ, ու պաշայտցի շուտ-շուտ էրթալու,
որ անցնիմ—խալսիմ իտա սատանոցէն, զէրէ ատ տունին
տէրը, որ շատ նոր տուն—շատ-ապրիս էղել էր, անշահ
քիւլհանի մարդ կրճանչըցվէր քաղաքիս մէջը: Մէմալ
նայիս անկաճիս ծան էկաւ «Սավատո՛ւր, Սավատո՛ւր»: Ծանը
ադամորդու ծան չէր, հապա՛ թէլէֆօնի, եա տուտուկի
մէջէն էլլած ծանի կրմանէր: «Աս ալ ի՛նչ նոր պան է»,
նորէն ասի միտքիս մէջէն ու աւելի թէզ կնացի: Մէմալ
նայիս, էտէս ոտքի ծաներ էկան. «վարիսա ինծի պոնե-
լու կուզին», միտք արի. Սուբ Կէորգ՝ տուն հասնիս, ասի
ու կուզէի վագելու: Իտա արալըխը ոտքիս ի՛նչ ոսստ
էկաւ-չիտիմ, ուուուսիշ էղայ ու վար ինկայ: Էտէս իյնու-
ները հասան ինծի, խօլթուխէս մտան, վերուցին ու քաշ-
քաշ տարին դէպի աղլի տունը: Ի՛նչ տեսնիմ, արարի՛չ
Սավաճ. տունին փառասներ՝ տուուր պացած, մէջէն հալի
կէլէ, հալի կէլէ, հալի կէլէ որ՝ հեսապը-համպընքը
չիկայ. հեռուէն-ալ շա՛ս հեռուէն, հայ-հայ Պապուկ-ային
տունին քովերը, պալտախինով մեռել կրտանին: Տէրտէր-
ները, աիրացուները, նամայ հալիը ծիւքիւփաժները, ալայը-
ալայը, կիտիս քի իրենց յատուկ մարմինովը չին, հապա՛
աղլի սատանայի-կրակէն ստեղծած: Աղլի տունին օրթայի
փէնճէրէին մէջն ալ մէքամ չըռ-չըպլախ, ծերկէկ մարդ
կայնած է, չափ զարնելէն կրինտայ ու կասէ հալիին՝ «՛նայ
խուեր, հայ շաշլըններ, կիտին քի ինծի կրտանին թաղելու,
անիսէ մեռելի-տունտուկին մէջը սալթը հալաւներս ին,
ինքս մէջէն էլլել իմ ու հոսկ էկիլ իմ»: Աչքերս ճնճիմ ու
աղէկ նայիմ, արարի՛չ Սավաճ, ի՛նչ տեսնիմ՝նը աղէկ է,—
աղլի չպլախը մեր տուն-շատ-ապրիս էղող Թիքիմօֆէ է:
Կօվտաս — վըրաս փուշ փուշ էղաւ: Տէր Սավաճ, ասի,
աս ի՛նչ սատանոց է, որ ես ոսստ էկայ:

— Հաճէ Սավատո՛ւր, սասց Թիքիմօֆը, կէնէ ան տու-

տուկի ծանոթը, նևս արի, քեզի ասելու շատ պան ունիմ:

Վուզիմ փախչելու, տուն էրթալու, ամա խօլթուխէս մը-
տած մարդիքը, կիտիս քի քէլիէթիններով պրոնիլ ին
թեւերէս, Հնար չունիմ ծեռքերէն խարսելու: Ամպէս ալ
տարին նես ու կայնեցուցին չըպլախ Թիքիմովին տիմայր:

Թիքիմովը, ինչպէս որ ասի-նը, ոտքէն-կօյօխ չըպլախ էր.
ինքը ամպէս վատուժ, չորցած որ՝ ամեն մէկ օսիօսը մին-
քին էր համարելու: Մարմինին կունը չիտիմ կանանչ էր,
չիտիմ տեղին, չիտիմ մօռ, թամամ ատ կունը կըլայ չել-
լէին ատէնը օխտը-ուժը օրվայ ճուճու զարկած միսը: Էնկ
արմըննալու պանը ան էր, որ տուն-շատ-ապրիս էրողին
աչքերը կոյ էին ամա՝ կոպին տակէն կերևար աչքին պէ-
պէքը, որ ճրլթ-ճրլթ վրաս կընայէր ու պիզի պէս սիր-
տիս մէջը կըմտէր: Սասանակա՛ն պան:

— Ասվատուժ, ասաց մեռելը, ճանչըցա՛ր ինձի:

— Հասպ չիճանչըցա՛յ, ասի Թիքիմովն խ-տա:

— Հա, ասաց մեռելը, սաղուժս ինձի ատպէս կրտէին.
ամա շինտի կիտիս ես վով իմ:

Ես սուս կեցայ, պան չասի:

— Սրգըն ես էվէլքի ծեր ճանչըցած Թիքիմովը չիմ.
ալ ես ան մարզը չիմ, որի չար լուզուն ամեն թէմիզ ա-
նուն կաճըռէր, կըմուտէր, կըմուրոտէր, որ ամեն խաղաղ
սիրտերու մէջ իշքիլ տէրտ ու վախ կըձգէր. ալ ես ան
զէնկիներ չիմ, որիմէն ամենքը կըտողային, կուռքի պէս ա-
մենքը երկիրպագուժին կանէին ան իւմէտով, որ պէքիմ
նացա նեղ օրին տէմ գամ. անիսէ ես միաբիս մէջը տայմա
կըննապի վրանկը քի՝ պուղայէն կաթ կըթելու կընաք-
նը՝ ինձիմէն ալ փշրանքի խատար Փայտա կըտանիք: Ես
չընարիս Խօւթլախ իմ. կիտիս-խօւթլախ ասածդ
ինչ է—աս աշխարքիս կետինին տակը ուսհաթուժին չի-
կտնող ու մարդոյ բերանը անունս անէճքով թաթախված,
անպի աշխարքի թէմիզ հողիները ինձի իրենց մէջէն փախ

կուտան: Շինտի ես անձաշակ մեռածներու, ինքնիրեն զարնող-մեռցնողներու, չուվանէ կախովոգներու, չապաշխարած գողերու, Հարամներու հետն իմ դուժոխքին մէջը ու հուր-յաւիտանական կրակով կէրվիմ, կրփսթոթիմ, ամա՛ կէնէ սաղ իմ, կէնէ սաղ իմ, որ մեկալում օրը նոր-նորտէն էրվիմ, տանջըվիմ, չարչարվիմ, ու ասպէս մինչև գալ աս-դաստանին օրը: Ա՛խ, մի՛ Հարցնուլ ինձի քի՛ ի՛նչ տանձանքներ կը քաշիմ անդի-աշխարհքը... եբոր մէկ ինսան արարած ծնած օրէն մինչև խորունկ ծերութիւր, պարաաւորված ըստ խզղըն էրկաթին վրան բոբիկ ոտքով քայլելու, եբոր մէկին պերանը սաղ կեանքը հալած խուռչին ուլէին, եբոր մէկին ճիկէրը կտուտէին ու վրան քայցախ ու լեղի փիսկիլէմիշ անէին — աս ամենը չէր հաւասարէր ան տանձանքին, որ ես մէկ մինութիւց մէջ կը քաշիմ դուժոխքին մէջը: Եբոր ես կրնայի մէմէկ-մէմէկ պատուելու ան չարչարանքը, որ ամեն օր կը քաշիմ, հաւատա՛, կէնձ լէվէնտին ծուծի պէս սև մազը մինութիւց մէջ կը ճերմըկէր ու ասանըվեց ասարու ազջըկայ վարդ թուշիրը պառաւքաւ թառի թուշիրուն պէս կը թումէր սիրտին վախէն: Ամա՛ն, ամա՛ն, մի՛ Հարցնուլ ու մի՛ խմանալ դուժոխքին ասանձանքները. եբոր կը կրնաս ծովի ձուրը ցամախով պարպելու, պերանի խօսքով ալ կը կրնաս դուժոխքին ի՛նչ էղած մարդուս հասկրցնելու. ծեր թուլա էփելու ու էրկաթ հալեցնելու սօպաները դուժոխքին սիմաց ան ին, ինչ որ մէկ պուսգուց խումը ծովի քէնարի խումին ախմացը:

Ի՞նչ-տէին հոգիս սատանային ծախեցի ու ասքան խաղնայի ու միլքի տէր եղայ, ատով ի՛նչս աւելցաւ: Սունտուկիս մէջ թօփ արած ստակս աս օրվայ չարչարանքէս ինձի կազատէ՞. անաչառ եկնաւոր Բատուարին դատաստանը կը փոխէ՞. դժոխքին պատերը կը զօջէ՞, նարա մէջի սատանաներուն օղընկին ծարերը կը կտուտէ՞: Արի՞ն սիրտը խունտումով լըցի. որի՞ն աչքի արտըսունքը դագուեցուցի.

որի՞ն ետարալու սիրտին վրան մէհլէմ արի, ո՞ր չալլախ էքսի-
զին մէջ քը տաքցուցի, ո՞ր քաղցածին փորը կուշտացուցի:
Ինչո՞ւ կուզէի ես ստակ ունենալու, որ իմ ամբաշթ դրա-
ցինիս աչքին աւելի մե՞ծ էրեցնում նարա ամպահատութիւնը,
որ տուռըս էկող խարիպ - խաղարին և էրփեվարիին քիւ-
ֆիւրո՞վ փախ տամ շէմքէս, որ ետարամի կարօտ օգրումե-
լիներուն պօշ իւմէաներով տասը-քսան տարիներ խարիմ,
մալորցունում, որ նաքա ինծիմէն իրենց պատիւը, կօլօխ-
ները առջևս ճիկը ինծիմէն անպակամ անին: Ինչի՞ն պէտք
էր օսկին — որ մէջս խճմասանք չունեցած՝ հալխին դա-
տաւորը ըլամ, կիր - կարգում չիմացած՝ վարժատուններու
հոգաբարձո՞ւ ըլամ, կուլտուս մէջը խելք չունեցած քաղաք
կառավարիմ, անպատիւ տեղովս՝ փառքի ու պատիւի՞ հաս-
նիմ ու վիզս մետա՞ններ կախիմ: կող, աւազակ տեղովս՝ էք-
սիզներուն կայիքին ափէքո՞ւն ըլամ: Ատո՞ր համար ինծի
պէտք էր ստակ ունենալ, զէնկին ու աղա ճանցըրվիլ, որ
աւելի խօլայ կրնամ, առանց անոր ալ, ամպահթ հալխին
աւելի ամպահթունել: Ինչի՞ն պէտք էր հալխին կրնըրիով
վաստրիած, հալխին քրտինքով ու արտասունքով թաց ա-
րած օսկին, քանի որ սաղ էի ու ծեր մէջը կըքայէի՝ ինքս
մէկ անմեղ-խունտում օր ունեցի՞լ իմ, ես մէկին խնտա-
ցուցի՞լ իմ, — չէ. էտեէս բարի անուն թողուցի՞լ իմ, — չէ.
խարիպ - խաղարը օրթնէնքո՞վ կ'իշէ անունս, — չէ: Ետե,
ի՞նչ արած էղայ. հապա ո՞ր օրվան համար թօի արիլ էի
ատխատար ստակը, միլքը ու պարին, ի՞նչ շահ ունեցայ:
Մահս ան էղաւ, որ հէ՞մ իմ օր-արես խաւարցուցի, հէ՞մ
ալ զաւակներուս, զէրէ քաղաքս թէ՞մէլ ձգած օրէն տահա
տեննրված չէ՞, որ հօրը ձգած միրատովը մէքամ պահ-
թաւոր օրդի ըլայ մէյտանը: Մեր կերպով զաւակներուս
ձգած ստակը նացա համար աղու ու զէհիր է: Քանի՞
քանի զաւակներ, աս օրվայ օրս, միաքերուն մէջը, իրենց
զէնկին հարերուն կանիծին: Աւելի աղէկ կըլար, երոր մեր

Ֆասօնի պապանները իրենց օրդոցը մէմէկ կախվելու չուզան ձգէին, որ նաքա խրղրվէին խալսէին, չէքի մեր ձգած հարամ ստրկովը սիֆթէ անդործ, թէմուկէլ, առասպել կեանք անցունէին ու ետքը հալսին մէջը օլմաղի ու քիւլ-հանիի անուն փռէին:

Կաղաչիմ, կրպաղատիմ քեզի, կնա, ասա իմ պարեկամներուն՝ Պապուկներուն, Գարուէներուն, Սարգիսներուն, Ակորճաններուն, Օվակէմներուն, Սաեփաններուն, Կարապեաններուն, Մարգարներուն, որին որ տահա կիտիս-նը, որ խելքի գան, քանի որ առջևները ժամանակ կայ: Իմ կուլ-խուս էկածը միւճէրէթ նացա կուլխուն ալ կուգայ՝ խելքերը կօլօխները չի ժողոտին-նը:

Ախրը խել չէի-նը, հապա ի՞նչ հօրս ցաւն էի. ինչո՞ւ խա պալպան, թանկնոց տունը խօրպեցի, որ անցնող տառցող վրան նայելէն, «օխտը-պորտը չորնայ, քիւլհանի շո՞ւն» ասելու համար: Տեսա՞ր որ՝ խելքը ստակ վաստկելուն մէջը չէ, հանպ նարա խարճելուն մէջն է:

Տահա մէկ ուրիշ ինդրինք ալ ունիմ: Տեսնուս-նը՝ ասա իմ սայեախլուիս ու իմ ժառանգներուս, որ ձգած ստրկէս հէջօլմասա մէկ տասը-ասանըհինկ հազար մանէթ փայ հանին խարիպ-խաղարին օրդոց համար... պէքիմ Ասված կողորմայ և շնասլայ քաշած տանճանքիս թեկարան թեթեւութին կուտայ... Ամա ի՞նչ հէջ ըլլալու պա՞ն է, որ իմ չար խրատներով մեծցած օղլուշախին ծեռքէն ատպէս բարի պան դայ... Լայ վախ, ինչ որ երկրաւոր աշխարքի մէջ ցանկ իմ-նը, լայլաճ, կօլօխս պիտի ճկիմ ու երկնաւորի մէջը պիտի հնճիմ....

Ա՛մմա՛ ինճի աս օրվան օրը հասցնողը ան փէղէվէնկ, խալպ, սուտ-վարժապետ, հալսին տունները փոր-քալցնող Մէքքէյէն էկած տէրվիշն է, որ տայմա ինճի կըհաւատացնէր քի՛ ալայ իմ ասածս ու արածս օրինաւոր ու խօրք մարդու խօսքեր ու գործեր ին... Լազար մեղք, որ

ևս Սիւլիւկին խօսքերուն չի հաւատացի և փիթոն կհանքս նարա տուշման ճանչըցայ. անիսէ՛ տուշմանս Սիւլիւկը չէր էղիլ է, հասկա՛ սա քիւլհանի, շալվէր Մէքքէցի աերվիշն էր... Սմա ի՛նչ, նէտէն սորա.....

Տահա խօսքը պերանն էր, որ մեմալ նայիս ինս կատրղած սաղանաս - փոււշախի պէննակ տուռերէն ու փէնձէրէներէն կանչվաւէն, օռնալէն ու ուփուլտամիշ անելէն նես թափեցան միլիօնաւոր տւեր, ճիներ, մեղմէն-աղէկներ, սատանաներ, սալսայէլներ, խօթթախներ, եղիատիներ, տփտէհարներ, պօղօճներ, ծովի-մարեր, խօնձօղղներ, տունի - տէրէր, ալքեր, ալպաստիներ, ճակատ - կրողներ, ճատուներ, հօղէաւներ, որը կօտօշներով, որը չէնկէլի պէս օղունկներով, որը պօշով, որը մարմինը խոււպաղայի՛ կուտուցը ուրուրի, որը կէճէխուշի խանաթով, որը օձի կօլօխով ու խաղի թաթերով, որին կօլաան քէրթէնքէլի ու կօլօխը մարդու օսիօւէ խաֆայով առանց միսի ու մաղի: Սասանական պան: Ծան, կանչ, քիւֆիւրներ, ամուր ամուր խնտուր, սատանայական տաղէր: Սլայը մկտեղ թափեցան մեռելին վրան, պաշայեցին խաճեղու, ճանկուտու, լղելու, ճակծկելու, քերթելու ու միսը կռծելու..... առին, հավալաթմիշ արին ու խայխպ էղան....

Ի՛հ սիրտս անցաւ..... Եբոր այմիշ էղայ՝ էրկինքը արգրի պաշայիլ էր կապրահելու, ասթխերը էտւ էտւէ կրմարէին: Նայիմ՝ ևս սօխախին մէջ, արապա-ճանփուն վրան փալած իմ: կուլխոււ տակն ալ կօլ արուն. զայիլ՝ վար ինկած իքէս սուր քարի կպիլ է: Տառհալաթ տուն հասայ, էրկու շարաթ ևսթախէս չէլայ. ճօրով-մօրով մահին ճանկէն խալսեցուց ինձի — Ասված պանն աջողէ — մեր Քէէկին Ասվատուրը:

ՍԻՒԼԻԻԿ:

Նոյեմբերի 27. 1888.



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

Ըստ կտակի Բարեյիշատակ Յովսէփայ Իզմիրեանց՝ Գործադիր-Մնայուն Յանձնաժողովս պատիւ ունի հրաւիրել այն հեղինակներն ու բանասէրներն՝ որ Ազգային Դպրութեան և Պատմութեան վերաբերեալ ո՛ր և է աշխատութեամբ կրփափաքին մասնակցիլ Սահակ-Մեսրոպեան Գրական մրցանակաբաշխութեան, հաճին իրենց աշխատութիւններն յուղարկել մինչև յառաջիկայ 1890 տարւոյ Յունուարի վերջը, առ Ս.մէն. Սրբազան Պատրիարք Հայրն, Յանձնաժողովոյս հասցէին, ի Պատրիարքարանի Հայոց, Կ. Պոլիս:

Թիւ 76

(Տ. Կ.).

Ի Պատրիարքարանի Հայոց, Կ. Պոլիս, 1 յուլիս, 1889.

ՆՈՐ-ԴԱՐ Քաղաքական-Գրականական անմեծօրեայ թերթը հրատարակվում է Թիֆլիսում (Վեցերորդ տարի): Տարեկան զինն է 10 ռ. վեց ամսուան՝ 6 ռ. հատով՝ 5 կ. Օտար քաղաքներից զիմում են խմբագրութեան՝ *Тифлис, въ редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ»* կամ *Tiflis (Caucase), Rédaction du journal «NOR-DAR»*.

Խմբագիր-հրատարակիչ Սպանդար Սպանդարեան:

„ԱՐՉԱԳԱՆՔ“ (VIII տարի) շաբաթաթերթը հրատարակվում է Թիֆլիսում:

Տարեկան բաժանորդագինն է 5 ռ. Կէս տարուանը 3 ռ. Օտարաքաղաքացիք զիմում են՝ *Тифлис, въ редакцію «АРІАГАГАНКЪ»*. Արտատահմանից՝ *Tiflis, Rédaction du journal «ARDZAGANG»*.

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում:

Խմբագիր հրատարակիչ Աբգար Յովհաննիսեան:

ՄՈՒՐՃ, քաղաքան, Հասարական, զրական ամսագիրը
Հրատարակվում է Թիֆլիսում: Տարեկան բաժանորդագրինն
է 10 ռ. կէս տարուանը— 6 ռ. մի զրբոյկը— 1 ռ. 50 կ. Խմբա-
գրութեան գիմնում են այսպէս. *Tuф.лucэ, вэ рeдaкцiиo жыр-
на.ia «МJРYЛ».*

Խմբագիր-Հրատարակիչ՝ Ա. Եպիստոլանեան.

ԱՂԲԻԻՐ, միամետայ պատկերազարդ Հրատակութիւն
երկիսաների և դաստիարակիների Համար: Առաջիկայ յու-
նուարի մէկից «Աղբիւրի» հետ կը Հրատարակուի և «ՏԱՐԱՁ»
գեղարուեստական - զրական - երգիծաբանական Հանդէսը:
Տարազին և Աղբիւրի գինը միանուագ 5 ռ. է, իսկ իւրաքան-
չիւր առանձին 3 ռ. Հասցէն. *Tuф.лucэ, Рeд. «АГБИОРЪ»,*
իսկ արտասահմանից. *Tiflis (Caucase), Rédaction du journal
«AGBUR».*

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ, բարոյական, ուսումնական, ար-
ուեստագիտական: Հրատարակութիւն Վիէնայի Մխիթա-
րեան Միաբանութեան. կը Հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը.
Բաժանորդագրութեան գինն է՝ Տարեկան 8Փ—4 ռ.
վեցամետայ՝ 5Փ—2 ռ. 50 կ. կանխիկ վճարելի:

Իւրաքանչիւր թիւ առանձին՝ կ'արժէ 1Փ—50 կ.

Հասցէն. à la Rédaction de la Revue «HANTESS».

Au Couvent des RR. P.P. Mechitharistes.

à VIENNE (AUTRICHE). VII. Mechitharistengasse 4.

ԱՐԱՐԱՏ ամսագիր կը Հրատարակուի ամիսը մի անգամ.
բաժանորդագրութիւնը տարեկան է և սկսվում է Յու-
նուար ամսից. բաժանորդագրինն է Ռուսաստանում՝ 4
րուբլի, Տաճկաստանում, Պարսկաստանում և Եւրոպայում՝
5 րուբլի, Հնդկաստանում 6 րուբլի: Հասցէն. *Ծ.и.и.а.д.з.и.т.э,
Tunogp. Kо.л.ч.и.т.э.*







